

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՋՐԱԿԷՆ

هايكازيان
مجلة الدراسات الأرمنية

HAIGAZIAN
ARMENOLOGICAL
REVIEW

Volume 44/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ Առաքելութիւն եւ Տեսլական

Հրատարակել հայութեան անցեալի ժառանգի, այժմու կենսագործունէութեան եւ ապագայի տեսլականին վերաբերող գիտական հիմքերով, կարծիքի ազատութեան վրայ կառուցուած բազմաուսմունքային եւ բազմալեզու աշխատութիւններ:

Այժմէականացնել հայագիտութեան վաղեմի ասանդը. գիտական նորագոյն իրագործումներով ամրապնդել հայագիտութեան տեղն ու դերը համաշխարհային հասարակագիտութեան քարտէսին վրայ:

Կարելիութիւն տալ զարգացնել հայագիտութեան ռազմավարական նշանակութիւնը, քանի որ ան կը նպաստէ ազգային ինքնաճանաչողութեան եւ հաւաքական յանձնառութեան բարձրացման: Համագործակցական ամբիոն դառնալ՝ Միջին Արեւելքէն, եւ սատարել երիտասարդ ուժերու, ինչպէս նաեւ՝ գիտական հայերէնի, մանաւանդ արեւմտահայերէնի զարգացման:

Հայկազեան հայագիտական հանդէսի հատորներուն թուայնացած տարբերակը կարելի է ունենալ հետեւեալ կայքէջերէն.-

<https://www.haigazian.edu.lb/research/publications/armenological-review/>

<https://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html>

<https://www.flib.sci.am/journal/haigazian/Frame.html>

<https://arar.sci.am/dlibra/publication/308657#structure> .

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW Mission Statement

To publish research articles related to the heritage, current output and future prospects of the Armenian nation. These multidisciplinary papers should be based on freedom of thought and can be written in diverse languages.

To revisit past accomplishments of the Armenian Studies; to consolidate the place and role of Armenian Studies on the map of world social sciences through modern technological means.

To drive forward the importance of Armenian Studies and develop its strategic role, as it contributes to national identity and the promotion of collective commitment.

To be a forum of cooperation in the Middle East; to support young scholars and to stimulate the development of Western Armenian scientific language in particular.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:

<https://www.haigazian.edu.lb/research/publications/armenological-review/>

<https://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html>

<https://www.flib.sci.am/journal/haigazian/Frame.html>

<https://arar.sci.am/dlibra/publication/308657#structure> .

ԱՐԽԻԻԸ՝ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՏ ՀՈՒՄՔ

Հայագիտության զարգացման ու յառաջընթացին համար փաստագրական անփոխարինելի աղբյուր է արխիվը, ուր կը մէկտեղուին ու կը պահպանուին ազգային, հաւաքական եւ ընտանեկան յիշողութեան գրաւոր եւ ոչ-գրաւոր նիւթեր: Արխիվը ունի ընդհանրական արժէք. ան լոյս կը սփռէ հայ կեանքի այլազան երեսակներուն վրայ ու կը ծառայէ անցեալը անելի լաւ ընկալելու եւ մեկնաբանելու:

Սփիւռքի տարածքին կը գտնուին բազմաթիւ եւ այլաբնոյթ արխիւային նիւթեր, որոնք կը յստակեցնեն ընկերաբանական, մտադրոյթի, ազգագրական, մշակութային, պատմաքաղաքական եւ այլ զարգացումներ: Յիրաւի, արխիւի համակողմանի ու մասնագիտական ուսումնասիրութիւնը կ'օգնէ չբացայայտուած տեղեկութիւններու ի յայտ գալուն ու թերի հայեցակարգերու եւ դատումներու վերամշակումին:

Այս փաստէն մեկնելով է որ լուսարձակի տակ կ'առնենք Սփիւռքի մէջ գտնուող եւ օրէ օր գոյացող արխիւը ոչ միայն ազգային կազմակերպութիւններու, այլեւ անհատներու, ընտանիքներու եւ տարատեսակ հաստատութիւններու:

Յարդ որոշակի պատկերացում չկայ սփիւռքեան կառոյցներու քով մէկտեղուած արխիւային նիւթի քանակին ու վիճակին մասին: Միւս կողմէ, կարելի չէ անտեսել ոչ-հայկական արխիւներու մէջ հայութեան վերաբերող նիւթերը, համացանցին վրայ անհատական կամ հաւաքական նախաձեռնութեամբ հայերու եւ ոչ-հայերու կողմէ հրապարակուած մեծաքանակ նիւթը, ինչպէս նաեւ տասնամեակներու ընթացքին Սփիւռքէն Հայաստան դրկուած ու այլազան գիտական հաստատութիւններու մէջ պահպանուող նիւթերը՝ որոնցմէ ոմանք մասամբ մշակուած ու հանրայնացուած են:

Եթէ ուզենք ըստ վիճակի դասակարգել Սփիւռքի մէջ գտնուող արխիւը, ապա կը կազմուի հետեւեալ պատկերը.-

Ա. Որոշ հաստատութիւններ եւ կազմակերպութիւններ հոգատար են իրենց սեփական եւ կամ իրենց վստահուած արխիւներուն նկատմամբ եւ կը մշակեն զանոնք: Կան նաեւ առցանց կայքեր, անհատ հաւաքորդներ, ուսումնասիրողներ, որոնք մասնագիտական կամ սիրողական մակարդակով որոշ աշխատանք կը տանին մէկտեղելու եւ ուսումնասիրելու Սփիւռքի արխիւային նիւթը: Սակայն, էական է, որ մէկտեղումի, մշակումի, թուայնացումի ու հանրայնացումի աշխատանքները յաւելեալ թափով շարունակուին:

Բ. Արխիւային մեծաքանակ անմշակ նիւթեր կուտակուած են ազգային զանազան կառոյցներու մէջ. սակայն արխիւի կարելորութեան գի-

տակցութեան ու համապատասխան մարդկային եւ նիւթական միջոցներու բացակայութեան ու այլ պատճառներով, անոնք կը մնան անխնամ՝ ենթակայ քայքայումի եւ փճացումի: Ժամանակն ու ապահովական եւ այլ գործօններ իրենց ակերը չգործած, հարկ է զանոնք պահպանել թուային աշխարհի մէջ:

Գ. Անորոշ քանակով արխիւային նիւթ կը գտնուի հայ թէ օտար կազմակերպութիւններու եւ ընտանիքներու քով, ինչպէս նաեւ գործելէ դադրած ազգային կառոյցներու եւ հաստատութիւններու պահեստներուն մէջ: Համազգային մակարդակով պէտք է կազմակերպել փնտռողի աշխատանք, կորուստի ենթակայ այդ հարստութիւնը յայտնաբերելու եւ փրկելու:

Դ. Դժբախտաբար առարկայական պատճառներով, տգիտութեան հետեւանքով կամ դիտումնաւոր կերպով ժամանակի ընթացքին ամբողջովին փճացած է արխիւային նիւթերու հսկայական քանակ մը, որ այլապէս կրնար ճանաչողական մեծ դեր ունենալ:



Արխիւը ազգային ինքնագիտակցութեան զարգացման կարեւոր ատաղձ է: Անոր կորուստը ազգային-հաւաքական յիշողութենէն կը ջնջէ ահագին բան: Ուստի անոր պահպանումն ու հանրայնացումը ռազմավարական նշանակութիւն ունին: Արխիւային նիւթերու հանդէպ գիտական կողմնորոշում ունենալու համար պէտք է մշակուի համապատասխան հայեցակարգ, ի հարկին օգտուելով միջազգային չափանիշներէ:

Արխիւի գոյացումը տեսական գործընթաց է: Հետեւաբար մեծապէս կը կարեւորենք արխիւին տեղին ու դերին հանդէպ յաւելեալ գիտակցութեան հետետողական յառաջացումը, նիւթական լուրջ ներդրումներու կատարումը այդ ոլորտին մէջ, որպէսզի ան դառնայ ազգային յանձնառութիւն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Անդրանիկ Տագէսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Արշալոյս Թոփալեան, Արմէն Իւրնէշլեան, Սիլվա Փափագեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Սիլվիա Աճէմեան, Նանօր Գարակէօզեան, Երուանդ Երկանեան, Արտա Էքմէքճի, Հրանտշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Զիլինկիրեան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գրասենեակ

THE ARCHIVE: A VAST SOURCE FOR ARMENIAN STUDIES

Archives are an irreplaceable documentary resource for the advance and growth of Armenian Studies. They are the places where written and unwritten materials concerning the collective memory of the nation, the community and the family are gathered and preserved. They have a generalizing power and shed light on the diverse aspects of Armenian life and serve for the better grasping and interpreting of the past and enrich it further.

There are numerous and various archival materials in the Diaspora, which further elucidate social, transitional, ethnographic, cultural, historico-political and other developments of the Armenian space. Indeed, the extensive and professional study of archives helps to bring to light undisclosed information and enables the revision of partial frameworks and judgements.

This is why we focus on the existing archives of Diaspora institutions, individuals, families and diverse associations, which are growing day by day.

Currently there is not a full picture of the quantity and condition of the archives gathered in Diaspora bodies. On the other hand, we cannot be indifferent towards Armenian-related documents found in non-Armenian institutions. Furthermore, we cannot disregard the abundance of materials published on the internet by Armenian and non-Armenian individuals and/or groups, Nor can we ignore the archival materials sent from the Diaspora to the diverse archival institutions of the Republic of Armenia, some of which are partly cataloged and accessible.

A classification of the Armenian archives in the Diaspora displays the following picture.-

a) Some institutions and organizations are careful towards their archives and the archives they have been entrusted with and catalogue them. There are, as well, webpages and individual collectors/researchers who collect in a professional manner or as a hobby diverse items of Diaspora archival materials and study them. Nonetheless, it is essential that further concerted efforts are made in gathering, cataloging, digitizing and facilitating access to these endeavors.

b) There are large amounts of neglected archival materials piled up in various Diaspora institutions, yet due to ignorance about the importance of

the archives, as well as the absence of corresponding human and financial resources and for other reasons, these are left unattended and prone to disintegration and loss. It is high time to preserve them in the digital space before time, security and other factors ruin them.

c) An uncounted number and quantity of archival materials are found in Armenian and non-Armenian organizations and families as well as in the warehouses of extinct Diaspora institutions and centers. determined pan-Armenian search should be made to trace this richness, which is subject to loss. Archival materials should be located and salvaged.

d) Unfortunately, in the past, a large number of archival materials have totally vanished for various reasons, due to ignorance or on purpose. These could have played an elucidating role in the better understanding of diverse events within the Armenian space.



The Archive is raw material for the development of national self-recognition. Its loss eliminates much and leaves large gaps in the collective memory of the nation. This is why making people aware of its preservation and accessibility has a strategic significance. An adequate framework should be developed for a scientific approach and attitude towards national materials, with reference to international practice.

The formation of the archive is a continuous process. This is why it is necessary to consistently develop awareness of the role and place of the archive, and to invest additional resources in this field so that it becomes a national commitment.

EDITOR-IN-CHIEF

Antranik Dakessian

EDITORIAL BOARD

Silva Papazian, Arshalouyse Topalian, Armen Urneshlian

CONSULTATIVE BODY

Sylvia Agemian, Megerditch H. Bouldoukian, Seta Dadoyan, Arda Ekmekji, Murad Hasratian, Nanor Karageozian, Hranush Kharatian, Susan Pattie, Hratch Tchilingirian, Yervand Yerkanian

HAR REPRESENTATIVE IN ARMENIA

AMAA Yerevan Office

ՅՕԴՈՒԱԾ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԸ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ

karine.rafaelyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Դերենիկ Դեմիրճեանի արխիւը լի է տարատեսակ անտիպ նմուշներով, որոնց հանրայնացումը անհրաժեշտութիւն է թէ՛ Դեմիրճեանի, թէ՛ նրա արժէքը գիտակցող անձանց համար:

Անտիպների մասին խօսելիս մենք նկատի ունենք դասականի՝ ոչ միայն գրական երկերը, այլև գծանկարները, մասնաւորապէս՝ Դեմիրճեանի տարբեր տարիներին արած երգիծանկարները¹:

Յայտնի է, որ Դեմիրճեանը դեռեւս Արտահանի դպրոցում ուսանելիս աչքի է ընկել կերպարուեստի եւ երաժշտութեան ոլորտներում ունեցած ծիրքերով, թէեւ, ինչ խօսք, դրանք էապէս զիջել են գրական օժտուածութեանը:

1892ին Գէորգեան ճեմարան ընդունուել պատրաստուող իրենց շրջանաարտ սանին Արտահանի դպրոցի հոգաբարձութիւնը տալիս է հետեւեալ բնութագիրը.-

Աշակերտ Դերենիկ Դեմիրճօլեանը² ամենայն յաջողութեամբ եւ պարգեատրութեամբ ասարտել է Հոգաբարձութեանս խնամոց յանձնած դպրոցը, ջանասէր է վերին աստիճանի, օժտուած է աստուածատուր բնածին ծիրքերով, ունի նախանձելի ընդունակութիւն եւ զարմանալի ձգտում դէպի կրթութիւնը եւ լուսաւորութիւնը: Թէ իր օրինակելի վարք ու բարքով, թէ իր համեստ բնատրութեամբ, թէ իր բազմաթիւ նախանձելի յատկութիւններով միանգամայն գրաւել է թէ իր ուսուցիչների, թէ հոգաբարձութեան եւ թէ բոլոր հասարակութեան ուշադրութիւնը... Շնորհալի երգիչ է, նկարիչ, եթէ դատի տակ առնել նրա գրածները, ոտանատրները, չենք սխալուի, որ նա ապագայում հայ գրականութեան մէջ լինելու է մի փայլուն աստղ³:

¹ Դեմիրճեանի երգիծանկարները պահպանում են Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Դերենիկ Դեմիրճեանի եւ Յուշային գրական ֆոնդերում, պատճենները՝ Դեմիրճեանի տուն-թանգարանում:

² Դեմիրճեանի տոհմական ազգանունը եղել է Դեմիրճօլեան: Յետագայում նա, իր ազգանունն անելի բարեհունչ դարձնելու նպատակով, հրաժարուել է «օլլի» արմատից ու ստեղծագործութիւնների տակ, ինչպէս եւ գրքերը տպագրելիս հանդէս եկել Դեմիրճեան ազգանունով:

³ Հրայր Մուրադեան, *Դերենիկ Դեմիրճեան*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 12:

Նկարչի եւ երաժշտի ձիրքերը չլքեցին գրող Դեմիրճեանին ողջ կեանքի ընթացքում: Նա նուազում էր ջուրթակ եւ նկարում մինչեւ կեանքի վերջը: Ուշագրաւ մի պատմութիւն կայ այն մասին, թէ ինչպէս է *Վարդանանքի* հեղինակը կտափ վրայ, իւղաներկով պատկերել Ասարայրի ճակատամարտը⁴:

Ինչպէս գիտենք, *Վարդանանք* պատմավէպը գրուել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Առաջին հատորը լոյս է տեսել 1943ին, երկրորդը՝ 1946ին: Երբ խորհրդային երկիրը փոքր-ինչ թօթափել է աղէտալի պատերազմի տնտեսական հետեւանքները, որոշուել է Դեմիրճեանի գլուխգործոցը վերահրատարակել պատշաճ տեսքով, նկարազարդումներով: Եւ 1951ին վերահրատարակուել է *Վարդանանքը*՝ մէկ գրքով⁵: Այն ամենաշքեղ հրատարակութիւնն է մինչ օրս եղածների մէջ: Գիրքը նկարազարդելու պետական պատուէրը տրուած էր այն ժամանակ երիտասարդ գեղանկարիչ Էդուարդ Իսաբէկեանին⁶: Դեմիրճեանը, նրան ուղղորդելու նպատակով, ինքն է նկարել Ասարայրի ճակատամարտը կտափ վրայ: Ապա ցոյց է տուել իր նկարը Իսաբէկեանին եւ պահանջելու պէս առաջարկել, որ այդ ոճով ու ոգով նա անի իր վէպի նկարազարդումները: Այս մասին մեզ պատմել են գրողի եւ նկարչի ժամանակակիցները:

Փաստօրէն, ոչ միայն մանկութեան, պատանութեան, երիտասարդութեան, այլեւ խոր ծերութեան շրջանում էր նկարում Դեմիրճեանը: Եւ հենց այդ շրջանի գեղանկարչական գործերն են այսօր յայտնի հանրութեանը: Ոչ միայն «Ասարայրի ճակատամարտը» կտաւը, այլեւ շատ ուրիշ իւղաներկ աշխատանքներ եւ մատիտանկարներ Դեմիրճեանի տուն-թանգարանի ցուցադրութեան կարեւոր մասն են կազմում այսօր: Դրանց մէջ կան այնպիսիք, որոնք մինչեւ վերջերս անյայտ էին անգամ դեմիրճեանագէտ եւ դեմիրճեանասէր շրջանակներում: Այդ գործերը հիմնականում երգիծական բնոյթի մատիտանկարներ են, որոնք գրողն արել է թէ՛ առանձին թերթիկների վրայ, թէ՛ իր նամակների, ձեռագրերի էջերում: Դրանցից մի քանիսը եւս ներկայում համալրել են Դեմիրճեանի տուն-թանգարանի հիմնական ցուցադրութիւնը:

Գրեթէ բոլոր նկարներն ունեն որոշակի մեկնաբանութիւն-ենթագրութիւններ: Այդ նկարներում մենք հանդիպում ենք Դեմիրճեանի անուանի ժամանակակիցներին: Այս մասին նա գրում է նաեւ իր յուշերում:

⁴ Գեղանկար՝ Դ. Դեմիրճեան, Ասարայրի ճակատամարտը, նիւթը՝ իւղաներկ, կտաւ, չափը՝ 65:0-27:0 սմ, 1943: Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի ֆոնդ, հաշուառման նիշ՝ ՄՄ-24:

⁵ Դերենիկ Դեմիրճեան, *Վարդանանք*, Հայպետհրատ, Երեւան, 1951: Նկարազարդումը՝ Էդուարդ Իսաբէկեանի:

⁶ Էդուարդ Իսաբէկեան (1914-2007), պատմանկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ:

Անդրադառնալով «Վերնատուն» գրական խմբակի⁷ հաւաքներին՝ գրողը պատմում է.-

Մենք սկսեցինք քննադատական վերաբերմունք ցոյց տալ մեզանից դուրս եղած գրականութեանը եւ քննադատութեանը: Ես զանազան թերթիկներ էի կազմում յատուկ այդ երեկոյի համար, ուր երգիծանկարում էի զանազան անձնատրոպիաների: Մի անգամից անելի Լէօն դառել է իմ նկարների հերոսը⁸:

«Վերնատան» հաւաքները միտուած էին ոչ միայն գրական, մշակութային հարցերի քննութեանը, այլեւ հայ ազգի առջեւ ծառայած կենսական, ընկերաքաղաքական խնդիրներին: Հիմնադիրները մտահոգ էին ԺԹ. դարավերջի եւ Ի. դարսկզբի հասարակական, քաղաքական, աշխարհաքաղաքական փոփոխութիւններով, որոնք ուղղակիօրէն եւ դաժանօրէն ծառայել էին հայ ժողովրդի առաջ ու հերթական անգամ դրուած էր մեր ազգի լինել-չլինելու խնդիրը, ինչպէս, ցաւօք, այս օրերին:

Դերենիկ Դեմիրճեանը ոչ թէ սոսկ գծանկարում էր, այլեւ իր վերաբերմունքն էր արտայայտում այդ նկարներում իր ժամանակի անցուդարձերի առնչութեամբ: Նրա երգիծանկարներում զգացում է որոշակի վերաբերմունք իր նկարների հերոսների հանդէպ: Բնականաբար, բանավէճերի պակաս չկար խորագէտ մտաւորականների քննարկումների ընթացքում: Միակարծիք չէին այդ վեցեակն ու նրանց հիւրերը՝ տիրող վտանգաւոր անցուդարձերի վերաբերմամբ: Դեմիրճեանը, որ դժգոհ էր այս կամ այն մտաւորականի կեցուածքից, այդ դժգոհութիւնն արտայայտել է նաեւ իբրեւ երգիծանկարիչ: Ինչ խօսք, նա իր տեսակէտերը յայտնել է նաեւ խօսքով, սակայն ասեւ դա բաւարար չհամարելով՝ նաեւ դիմել է գծանկարի ժանրին:

Նրա երգիծանքի թիրախում յաճախ յայտնուել է ժամանակի մամուլը, մասնատրոպալէս՝ *Մուրճ*, *Մշակ* պարբերականները: Ինքն էլ, լինելով մամուլի աշխատակից, ներսից է իմացել, թէ ինչ անցուդարձեր կան խմբագրութիւնների պատերից ներս:

Չէ՞ որ մամուլը ժամանակի պատկերն արձանագրող հզօր միջոց է. եւ եթէ այն վատ է աշխատում, աղաւաղում է ժամանակի պատկերն ու այն այդպէս աղաւաղուած էլ փոխանցում է յետագայ սերունդներին, դառնում պատմութեան տուեալ ժամանակի ծուռ հայելին, խեղաթիւրում իրականութեան մասին պատկերացումները: Ահա այս մտածողութեանն ենք հանդիպում Դեմիրճեանի երգիծանկարներում: Դրանք, թերեւս, անելի անաչառ եւ լիարժէք պատկերացում են տալիս մեզ այն օրերի մամուլի իրական նկարագրի մասին, քան դրանց պահպանուած համարները:

⁷ Հիմնադիր վեց անդամներն էին՝ Յովհաննէս Թումանեան, Ղազարոս Աղայեան, Դերենիկ Դեմիրճեան, Աւետիք Իսահակեան, Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան:

⁸ Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 հատորով, հպր. 14*, ՀՍՍՀ ԳԱ, 1987, Երեւան, էջ 247:

Երգիծանկարներից մէկում նաեւ նկատելի է Դեմիրճեանի ծաղրը օտարամոլութեան նկատմամբ: Խօսքը Ալեքսանդր Ծատուրեանին պատկերող երգիծանկարի մասին է մասնաւորապէս:

Իր համար սիրելի երկու անձանց՝ Թումանեանին եւ Պերճ Պոռշեանին նա ներկայացրել է անքէն ու հարազատական հումորով:

Մենք կը ներկայացնենք նրա տասնմէկ երգիծանկարները, որոնք որոշակի լոյս կը սփռեն Դեմիրճեանի նկարչական ճիրքի եւ գրական, հասարակական-քաղաքական դիրքորոշումների վրայ:

Երգիծանկարներին կցուած գրառումներում առկայ անընթեռնելի բառերի տեղում դրուած է <...> նշանը:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՎԵՐԾԱՆՈՒԱԾ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Երգիծանկար 1, Լէօ



Սա Լէոյին պատկերող երգիծանկարներից է, որին կցուած չէ Դեմիրճեանի որեւէ գրառում-մեկնաբանութիւն՝ ի տարբերութիւն յաջորդիւ ներկայացուողների:

Երգիծանկար 2, Լէօ



Այս երգիծանկարի հերոսը եւս Լէօն է: Նկարի տակ Դեմիրճեանը գրում է. «Եւ այսպէս, Բաքիին մեռաւ անժառանգ, թողնելով դրա տեղ էլքեր, գայլեր ու աղջիկ, որոնք ոչ մի կապ չունեն գրականութեան հետ:

Եւ այսպէս, պարոններ, վերջացնելով մեր խօսքը հին գրականութեան մասին, մենք կ'անցնենք (արջաբար) նոր գրականութեան:

Լէօ»:

Երգիծանկար 3, Ժամանակի մամուլ



Այս գծանկարում դասականի երգիծանքն ուղղուած է այն օրերի պարբերականներին եւ դրանց էջերում տպագրուող ու տպագրուել փափաքող հեղինակներին:

Նկարի ձախ կողմում երկու հոգու դիմանկար է՝ «Մուրճ», «Մշակ» գրութիւններով:

Դրանցից ներքեւ մի մարմնեղ զինուած մարդ է, հաւանաբար՝ Մուրճի խմբագիրը, քանի որ նրա սենեակի դռան զանգի կոճակը եզերուած է «Մուրճի խմբագիր» գրութեամբ: Խմբագրի թիկունքին կարծես գաղտնագրուած է «Լէօ»: Փակ դռան առջեւ շարուած են հեղինակները՝ համապատասխան գրութիւններով՝ «Պոլեզի», «Վեպ», «Հասարակական գիտական», «Տնտեսական», «Մանկավարժութիւն»: Իսկ նկարի աջ անկիւնում մէջքով շրջուած մարդու ուրուագիծ է՝ «Հին մուրճ 2500» գրութեամբ:

Երգիծանկար 4, Ժամանակի մամուլ

Այս երգիծանկարում Դեմիրճեանի երգիծանքի թիրախը դարձեալ ժամանակի մամուլը եւ, իհարկէ, նրա ուշադրութեանն ամենաշատը արժանացած Լէօն են:

Մենք փորձել ենք վերծանել չափազանց մանր տառերով արուած նրա գրառումներն այս նկարի վրայ, սակայն ոչ բոլոր բառերն են ընթեռնելի:

Եւ այսպէս, ստորեւ ներկայացնում ենք վերծանուած ձեռագիրը:

«ՄՇԱԿ

Մեր ինտելիգենցիան ընկած է: Լէօ

ՄԱՍՈՒԼ

Բովանդակություն

Պետք է առաջադիմել: Նամակ Երեւանից: Մտրակողական ուղղություն:

Մեր աղքատիկ գրականությունը: Մի պատասխան էր <...> - Լէօ:

Մի անանուն լրագրի դիմակը: Պատասխան պ. Լէօին- <...>:

Պատասխան Հ. <...>- Լէօ: Բանասիրական: Հ. <...> նամակի առիթով - Լէօ:

Մանրանկար - վրձին:



Մեր ընթերցողներին

«Մշակ»ը այս տարի եւս մնում է իր հին ուղղութեանը հաւատարիմ: Այսինքն՝ դարձեալ կը լինի մտրակողական եւ ամենքին ռոզգի⁹ կը տայ. իսկ ով կը յանդգնի ծայտուն հանել նրա ... կը դադի հրաշէկ կայծակներով: Իսկ ով կը համարձակուի բողոքել դրանից յետոյ, կը հրապարակուի պատերազմական պառոզիան, եւ մեզնից կը տրուի «Մանրանկարը»:

Երգիծանկար 5, Պերճ Պոշեան



Այս գծանկարում դասականի երգիծանքն ուղղուած է Պոշեանի դէմ, որը նրա կրօնի ուսուցիչն էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում: Դեմիրճեանը Պոշեանին «Հայրենասիրութեան գրողը, լաւ մարդը» յուշագրութեան մէջ այսպէս է բնութագրել. «Ամենաբարի դասապարտ էր նա. յաճախ էր շեղում դասի առարկայից եւ հայրենասիրութեան մասին գրուցում. այնպէս որ՝ նրա աւանդած կրօնական առարկան մոռացուեց յետագայում, եւ մեր յիշողութեան մէջ մնացին հայոց պատմութիւնը եւ հայրենասիրութիւնը»:

Եւ ահա, տարիներ անց Դեմիրճեանը այսպիսի երգիծանկարով է անդրադարձել իր ուսուցչին:

Այս նկարում յիշատակուած են Պոշեանի երկերը՝ Հացի խնդիր, Կոռածաղիկ, Շահէն, Բողէ, Սօս եւ Վարդիթեր: Գրուած են նաեւ երկու լատինատառ անուն՝ Saco եւ ARTUR LEIST:

⁹ Մտրակ (ռուսերէն):

Ենթադրում ենք, որ առաջին անունն ակնարկում է *Հացի խնդիր* վէպի հանրայայտ հերոսին՝ Միկիտան Սաքոյին, մանաւանդ որ երգիծանկարի մէջ այդ վէպի վերնագիրը զբաղեցնում է զգալի տեղ:

Իսկ Արթուր Լիսթը (1852-1927) գերմանացի գրող է, թարգմանիչ, ապրել է Թիֆլիսում: Նա Պոռտեանի եւ Դեմիրճեանի ժամանակակիցն էր, յայտնի մարդ գրական միջավայրում: Գերմաներէն է թարգմանել հայ եւ վրացի դասականներին: Հաւանաբար, ինչ-որ առնչութիւն է ունեցել Պոռտեանի կամ գուցէ՝ Դեմիրճեանի հետ: Չի բացառում, որ երգիծանկարելու պահին մասնակցել է «Վերնատան» հաւաքոյթին. չէ՞ որ խմբակի հիմնական կազմից բացի, Թումանեանի տանը լինում էին նաեւ ժամանակի այլ նշանաւոր դէմքեր՝ մշակոյթի եւ հասարակական-քաղաքական ոլորտներից:

Եւ Դեմիրճեանի թողած վկայութիւնն էլ համոզում է, որ համաշխարհային գրականութեանը, օտարալեզու գրքերին ծանօթանալը եղել է «Վերնատան» սկզբունքներից մէկը: «Վերնատան» մասին շատ է գրուել, ճիշտը՝ յիշուել, եւ կարծեմ փորձեր էլ են եղել նաեւ մեկնաբանելու նրա էութիւնը: Գրել է Դեմիրճեանը. - Պէտք է նշեմ, որ հեղինակուկ բաներ ասուել են երբեմն: «Վերնատան» սկզբունքն էր՝ շարժում, դուրս գալու ազգային սահմանափակութիւնից, ժողովրդական ազգային կուլտուրա, համամարդկային գաղափարներ, համաշխարհային կլասիկա: Սրտեղծել ժողովրդին մօտ գրականութիւն, որը պէտք է ունենայ նաեւ գեղարուեստական մշակում եւ կենդանի, գրաբարից գերծ լեզու»¹⁰:

Բայց սա չի նշանակում, որ վերնատնականները տուրք են տուել օտարամոլութեանը եւ վերամբարձ մօտեցում ունեցել հայ ազգային մշակոյթին ու գրականութեանը: Ճիշտ հակառակը՝ այս միջավայրում խիստ քննադատութեան են ենթարկուել օտար արժէքներով չափից անլի տարուելու երեւոյթները, եւ այս մասին լաւագույնս վկայում է յաջորդ ծաղանկարը:

Երգիծանկար 6, Ալեքսանդր Ծատուրեան

Դեմիրճեանն այս երգիծանկարում անդրադարձել է Ալեքսանդր Ծատուրեանին: Ինչպէս յայտնի է Ծատուրեանի կենսագրութիւնից, 1902ից նա ապրել եւ աշխատել է Մոսկուայում, եղել ուսուցիչ մոսկովեան մեծահարուստների ընտանիքներում, ապա զբաղուել գրական-հրատարակչական գործունէութեամբ:

Երգիծանկարի հերոսներին, ինչպէս սովորաբար անում էր Դեմիրճեանը, կցուած են երգիծական գրութիւններ: Ներկայացնում ենք դրանք՝ վերից վար:

«Մոսկուայի համակրողներ

¹⁰ Դերենիկ Դեմիրճեան, *Անծանօթ էջեր*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1974, էջ 289:



Քիրակն
Գլուխներէն վեր պիտի որոնենք գեղեցիկ արուեստը
ՄՇԱԿ

Կոյսի մեջ գեղարուեստ չկայ, բայց նրա գլխարկի մեջ մեծ գեղարուեստագետ կայ:

Հրաշալի գլխարկ, Ալեքս. Ծատուրեանի»:

«1903ին ես գնացի Մոսկուա,- կարդում ենք Դեմիրճեանի Թումանեանի հետ գրքում,- այնպեղից վերադարձայ Թիֆլիս, ուր «Վերնատան» աշխատանքները շարունակեցինք, մանաւանդ, որ բաւական նիւթ կար: Վաղուց հրատարակուել էր «Երգերն ու վերքերը», ես գրել էի «Կեանքի տեսիլը», Շանթն սկսել էր հետաքրքրուել դրամատուրգիայով, իսկ որ ամէնից գլխատուն է՝ Թումանեանը հրատարակում էր իր «Բանաստեղծութիւնների» ստուար հատորը: Մեր գրական զրոյցների նիւթը մի փոքր փոխուել էր: Թումանեանը օրատուր ատելի էր այնդում, որ պէտք է մօտենալ ժողովրդին: Պէտք է ունենալ իր սեփական ժողովրդի կապը»¹¹:

Կարծում ենք, որ 1902ից Մոսկուայում՝ մեծահարուստ ռուսների միջավայրում, իր գործունէութիւնը ծաւալած Ծատուրեանը եւ Դեմիրճեանը հանդիպել են այնտեղ, եւ խորաթափանց Դեմիրճեանը նկատել է Ծատուրեանի վարքագծում օտարամոլութեան անհարկի դրսետրումներ, որն էլ դրդել է նրան անել այդ գծանկարը եւ մեկնաբանութիւններում արտայայտել ռուսամոլութեան հանդէպ իր վերաբերմունքը:

Երգիծանկար 7, Երգ երգոց

Դեմիրճեանի յուշերը «Վերնատան» հաւաքների մասին շատ սրտառուչ ու բովանդակալից են: Թէ՛ խմբակի անդամներին, թէ՛ դրա շուրջ համախմբուած անձանց Դեմիրճեանը նուիրել է բազմաթիւ, բազմաբնոյթ ստեղծագործութիւններ: «Վերնատան» ստեղծման մասին նրա յուշերում կարդում ենք.


Թումանեանը ապրում էր հինգերորդ թէ վեցերորդ յարկում, Բեհբութեան փողոցի վերին մասերում, բուսաբանական լեռան ստորոտին: Այդ բարձր բնակարանի սենեակներից մինը մեր հաւաքատեղին էր եւ տեղի բարձրութեան պատճառով, նաեւ Քրիստոսի աշակերտների «Վերնատանը» հաւաքուելու եւ Սուրբ Հոգուց շնորհք ստանալու կատակով արած նմանութիւնը մէջ բերելով՝ կազմակերպութիւնը կոչեցինք «Վերնատուն»¹²:

Ինչպէս նկատում ենք, աստուածաշնչեան նիւթին անդրադարձը առկայ է անգամ խմբակի անուան մէջ, ուստի զարմանալի չէ, որ իր երգիծանկարներից մէկին դասականը հաղորդել է հոգեւոր բովանդակութիւն. պատկերել է իրօրինակ կերպար, որն ակնյայտօրէն ուխտատուրի է նման: Նա ոտաբոբիկ է, ձեռքին՝ գառնուկ, ուսից վեր ուղղուած սլաքները, կրծքավանդակին, քթին պատկերուած շինութիւնները՝ եկեղեցու գմբէթ յի-

¹¹ Դերենիկ Դեմիրճեան, *Թումանեանի հետ*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1969, էջ 19:

¹² Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 հատորով, հպր. 12*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1985, էջ 170:

շեցնող տանիքներով, ակնարկում են Թումանյանի տան՝ վերին յարկում, բարձունքի վրայ գտնուելու հանգամանքը: Նկարի մակագրությունը եւս աստուածաշնչեան է՝ «Երգ երգոց»: Թէ յատկապէս ուն՛ եւ ի՛նչ է նկատի ունեցել այս երգիծանկարում Դեմիրճեանը՝ միանշանակ պնդել հնարաւոր չէ, սակայն իրաքանչիւրս կարող ենք զարկ տալ մեր երեւակայութեանն ու անել մեր սեփական եզարակացութիւնները:



Երգիծանկար 8, Յովհաննէս Թումանեան



Այս անգամ Դեմիրճեանը երգիծանկարել է Թումանեանին:

Երգիծանկարի վերնուում կայ այսպիսի գրառում. «Հոգուս մէջ տհալտե-սիլ ձեւեր դանդաղորէն կը տարտամին ծուլութեան ճամփին վրայ... Ու ես կը տոկամ՝ ի քուն ընկղմած, գանգիս մէջ «Բլբուլն հազարան», որո թողթն գնած պատրաստ է արդէն: Սպասեցէք, ո՛վ եղբայրներ, քնես յոգ-նելէն եւ այդ յոգնութիւնն նորէն քնով հանգստացնելէն ետքը... սակայն քունս կը տանի, ծառայութիւն»:

Իսկ Թումանեանի երգիծանկարի շուրջ Դեմիրճեանը նկարել է նրա հերոսներին, նշել ստեղծագործութիւնների վերնագրերը, գրառում արել նաեւ քնած Թումանեանի վրայ գցուած ծածկոցի հատուածում: Ահա այդ գրառումների վերձանումը.


- «Նոր գրուելիք եւ չգրած հին գրուող բաներ
- Պոէտն ու մուսան
- Դէպի անհունը
- Լօռեցի Սաքօն
- Թմբկաբերդը
- Անուշ
- Հազարան բլբուլը
- Սասունցի Դաւիթ»:

Երգիծանկար 9, Յովհաննէս Թումանեան

Դեմիրճեանն այս երգիծանկարում, կարծում ենք, պատկերել է Թու-մանեանին: Այս եզրակացութեանն ենք եկել՝ հիմք ընդունելով Թուման-եանին պատկերող նրա նախորդ երգիծանկարը: Դրանցում պատկերուած կերպարը նոյնն է, ըստ մեզ:



1.
 Այս Աստոծ, մէջէ խոյսս սեղով փեր,
 փրստի



Հ. Խ. Ս. Ն. ԳՐԱԿԱՆ
 ԱՐԽԻՎ
 ԹԱՆԳԱՐԱՆ


2.
 = մէջէ յա զայ զարի, Աստոծ...

Երգիծանկարը երկու մասից է բաղկացած: Վերին հատուածում Դեմիրճեանի երգիծանկարի հերոսը պառկած է խոտի բարձր դէզի վրայ: Հատուածը մակագրուած է այսպէս. «Այս Աստոծ, մէկին կու տասս սելով փեր, <...>»:

Ներքեւում հերոսը պառկած է կոշտ թախտի վրայ, մակագրութիւնն էլ շարունակութիւնն է վերեւում սկսուած մտքի. «մէկին չես տալ ցախ, Աստոծ...»:

Ահա այսպէս. Դեմիրճեանը շարունակում է կատակել:

Երգիծանկար 10, Նամակ Յովհաննէս Թումանեանին



Դեմիրճեանը, ինչպէս նշել ենք, նկարում էր ոչ միայն կտաւի կամ առանձին թերթիկների վրայ, այլև իր ստեղծագործությունների, նամակների էջերին: Ասումս մի վկայություն է վերետում ներկայացուող նիւթը՝ Թումանեանին ուղղուած նամակը:

Այս անթուակիր նամակը Դեմիրճեանը Թումանեանին գրել է Սանահինից: Նամակը տպագրուած չէ ո՛չ Դեմիրճեանի, ո՛չ էլ Թումանեանի երկերի ժողովածուներում:

Դեմիրճեանը Սանահին էր մեկնել կազդուրուելու:

Ինքն իրեն նկարելով սարերի գլխին՝ բնաձայնական վանկարկումներով դիմում է Թումանեանին՝ տեղեկացնելով, թե ինքը նրա ծննդավայրում է եւ բարձր սարերի գագաթից ողջոյն է յղում Թումանեանին, նրա կնոջը՝ Օլիային, երեխաներին:

Նամակի բովանդակութիւնը՝ ստորեւ:

«Օհաննէ՛ս, ա՛յ տղայ,

(հ) ռա՛ւել տու,

(յ) ռա՛ւել տու

ա՛յ տղայ

ռաւել տու,

հա՛յ, հա՛յ, հա՛յ հ ա՛ա՛ա՛ա՛

ա՛ ա՛ ա՛ ա՛ յ...

(այ քու տունը քանդուի ոջ),

բարեւ արա Օլիայի՛ն,

երեխեքա՛նց, է՛յ, հէ՛, է՛, է՛յ՛,

ես էլ ըստի եմ, Սա՛նահին,

Սա՛նահին, Սա՛նահին...

այ հա՛յ, հա՛ա՛յ

ա՛ա՛...յ

(Դերենիկ)»:

Երգիծանկար 11, Նամակ Աւետիք Իսահակեանին

Ահա եւս մի երգիծական գծանկար, ատելի ճիշտ՝ երգիծական մակագրութիւն ունեցող գծանկար՝ արուած նամակի մէջ:

Այս գծանկարը 1898 Մարտի 15ին Թիֆլիսից Իսահակեանին գրած նամակում է: Նամակը, իհարկէ հրատարակուած է¹³, սակայն նամակի վերջին էջում արուած գծանկարն ու մակագրութիւնը անյայտ են լայն հանրութեանը, եւ այն միայն կարող են տեսած լինել Դեմիրճեանի տուն-թանգարան այցելած մարդիկ:


Սաղարթագուրկ ծառի եւ լճակի գծապատկերի տակ Դեմիրճեանը գրել է. «Այվազովսկին եթէ սաղ է, կարող է հանգիստ գերեզման մտնել, իսկ եթէ գերեզմանում է՝ կարող է հանգիստ շուռ գալ միւս կողքին»:

Նշենք, որ Յովհաննէս Այվազովսկին մահացել է 1900ին: Այսինքն՝ այս գծանկարն անելու ժամանակ նա ողջ էր:

Ինքնին հասկանալի է, որ Դեմիրճեանի երգիծանքն այս դէպքում ուղղուած է հենց իրեն, եւ ոչ՝ Այվազովսկուն: Նա ինքնահեզնանքով նկատել է իր նկարած փոքրիկ լճակի եւ Այվազովսկու շքեղ ծովանկանների տարբերութիւնն ու նկարի մակագրութեամբ խոստովանել իր նկարչական ձիրքի խելճութիւնը մեծ ծովանկարչի տաղանդի համեմատութեամբ: Ջարման-

¹³ Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 հատորով, հպր. 14*, էջ 293-96:

ալի չէ, որ մեծ գրողը տեսել եւ հասկացել է իր նկարչական ծիրքի անկատարութիւնը եւ չի վախեցել խոստովանել դա այսպիսի հակասական մեկնաբանութեամբ, որը ոչ-խորաքնին ընթերցողին կարող է թուալ յանդգնութիւն Այվազաւսկոյի հեղինակութեան, տաղանդի հանդէպ, այնինչ իրականութիւնը բոլորովին այլ է. այն պէտք է տեսնել Դեմիրճեանի գրի տողատակերում:



Այսպիսով ինչ որ է առաջին և երկրորդ
 գրքերում ըստ էության, այսինքն չի կարող
 լինել որևէ մեկի համար ինչ որ է
 ինքնին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս յօդուածը հնարաւորութիւն է տալիս ճանաչելու Դերենիկ Դեմիրճեանին նոր տեսանկիւնից եւ հասկանալու, թէ որքան խորաթափանց, բազմաշնորհ անհատականութիւն է եղել նա: Իրաքանչիւր տաղանդաւոր գրող չէ, որ իր գրական երկերից գատ, նաեւ աչքի է ընկել արուեստի այլ ոլորտներում, փայլել ոչ միայն գրական, այլեւ ուրիշ ձիրքերով: Դեմիրճեանն այս իմաստով բացառութիւն էր: Նրա կերպարուեստը, որ մասնակիօրէն ներկայացուեց այս ուսումնասիրութեան մէջ, ասուածի խօսուն վկայութիւնն է: Ասել է թէ՛ մեծերի կեանքն ու ստեղծագործութիւնն ուսումնասիրող մասնագէտներին միշտ էլ սպասում են անակնկալներ, որոնց բացայայտման համար երբեմն բաւական չեն տասնեակ հարիւրաւոր տարիները: Վերջին տարիներին մեզ յաջողուել է Դեմիրճեանի արխիւում գտնել նման անակնկալների մի ամբողջ շարք, որը գուցէ եւ դեռ սպառուած չէ, եւ անակնկալները դեռ կարող են լինել շարունակական:

THE CARICATURES OF DERENIK DEMIRCHIAN (SUMMARY)

KARINE RAFAYELYAN
karine.rafaelyan@mail.ru

The archival legacy of the renowned Armenian novelist Derenik Demirchian is full of samples of diverse unpublished documents. These include not only his literary works but also the drawings he made during his lifetime.

The current article highlights Demirchian's hitherto unpublished eleven pencil drawings, which are caricatures. Most of these caricatures are done on separate papers, while others are drawn either on the manuscript pages or the letters of the author. Almost all the drawings have write-ups by Demirchian, which sound more like comments and explanations.


In fact, Demirchian was not only caricaturing but also expressing his views and attitude towards the figures he was drawing. Furthermore, these comments, about the renowned figures he was drawing, reflect as well events of the time. The set of caricatures published in this article belong to Hovhannes Toumanian, Leo, Berdj Broshian, Alexander Dzasourian, Hovhannes Aivazovsky, and the most famous Armenian periodicals of the time, specifically *Mourdj* (hammer) and *Meshag* (peasant, cultivator)

These eleven caricatures shed light on Demirchian's drawing talent and his literary and socio-political position concerning a number of critical issues of the time. It helps us to see Demirchian from a different, unexamined perspective and to recognise how deep and piercing a multitalented personality he was.

In this regard, Demirchian is a rare case as very few Armenian writers have been able to produce wonderful literary works (the *Vartanank* novel in his case) as well as shine with other talents.

ARMENIANS IN JÓZEF ŁOBODOWSKI'S *THE UKRAINIAN TRILOGY*

GRZEGORZ PEŁCZYŃSKI
grzegorz.pelczynski@uwr.edu.pl



ABSTRACT

The article analyses the image of Armenians and their fate in the novel cycle of the Polish emigratory writer Józef Łobodowski (1909-1988). This cycle, called the "Ukrainian trilogy" (*Komysze*, 1955; *W Stanicach*, 1958; *Droga powrotna*, 1960), is based on experiences of the author, who spent his youth in Kuban during World War One and the period shortly after the Bolshevik revolution. In this trilogy, Armenians do not constitute only an oriental decoration. Writing about these people, Łobodowski realised a more serious intention. He seems to indicate that friendship between the novel's hero, Staś Majewski, and the Armenian boy, Grisha Ashvajanc, means not only incredible adventures but primarily the effective alliance of the weak against threatening powers. This alliance is not only individual but also unites even whole nations.

In works classified as Polish literature,¹ we read primarily about Poles. Of course, there is nothing extraordinary about this, because the literature exists to deal with their affairs. However, representatives of other nations very often participated in Poles' affairs, so they can be found among the protagonists created by Polish writers. When creating them, Polish authors use knowledge acquired during contact with non-Poles. But knowledge about them may also

¹ Cz. Miłosz, *The History of Polish Literature*, 2nd ed., Berkeley, 1983, University of California Press, 1983.

come from archival research or carefully selected reading material. And sometimes what writers know about other nations is nothing more nor less than a stereotype. A historian will probably most appreciate works in which the characters are modeled on people living in a specific time and place. However, it is not the writers' task to create historical sources, so it does not matter where the material they use comes from.

Armenians rarely appear in novels and short stories by Polish authors. It is true that throughout history Poles have had the opportunity to come into contact with Armenians, especially with merchants and craftsmen working in Polish cities and towns, but they were not in conflict with them, so, one could say, there was nothing to write about. However, there were writers who created interesting Armenian characters in their works. Undoubtedly, many of them are worth remembering. They certainly make Polish literature more interesting and enrich it with many fascinating topics.

Perhaps for the first time, Zbigniew Kościów drew attention to Armenians in Polish literature.² In his pioneering sketch, he lists and briefly discusses various works in which the "Armenian motif" can be found. It is worth quoting his conclusions:

Already from the data presented, it can be concluded that the Armenian motif had quite a significant impact on the work of a large number of Polish writers. The use of this motif ranges from an oriental ornament with an episodic function to a widely developed element with an important meaning. Most of our authors attributed positive characteristics to Armenians and took a sympathetic stance on Armenian issues. Interest in Armenian themes was mainly expressed by authors of historical novels whose action takes place either in the eastern areas of former Poland or in oriental countries. For understandable reasons, Polish writers mainly emphasized Polish-Armenian relations, but they also often noted the contacts of Armenians with other nations that once lived in the Polish-Lithuanian Commonwealth. This motif is less common in Polish novels with contemporary or close to contemporary themes, and in some of them we can notice a tendency to "de-brown" Armenians. However, the positives prevail, they are the proverbial rule confirmed by exceptions. This does not result from a courtesy idealization of Armenians, but from the realities known to the authors from their own experience or written documents.³

However, Kościów does not mention the works of Józef Łobodowski. This by no means brings discredit to this outstanding expert on Armenian issues. Kościów published his article during the communist era, and probably avoided mentioning Łobodowski, who was a fierce anti-communist living in exile. For this reason, Łobodowski's work was virtually unknown in the country. This, of

² Z. Kościów, "Motyw ormiański w literaturze polskiej" [The Armenian motif in Polish literature], *Opole* 8:1987, pp. 22, 28.

³ *Ibid.*, p. 28.

course, changed after the fall of communism in Poland, but the novels making up the so-called “Ukrainian trilogy”, in which there are numerous Armenians, were published in the country only in 2017.

It is difficult to ignore the Armenians in Łobodowski’s trilogy. One of them – Grisha Ashwajanc - is one of its main characters. This fact itself is extraordinary because in general Armenian characters in Polish literature are, although often distinct, usually episodic. However, there are plenty of them in this trilogy.

It is necessary to write about the creator of these Armenian characters⁴ in order to fully understand his literary achievements, as he wove numerous autobiographical threads into the stories he told.

Łobodowski was born in Purwiszki in the Suwałki region in 1909 into a landowner’s family. Shortly after his birth, the family sold their estate and moved to Lublin. When World War I broke out, the future writer’s father, Władysław Łobodowski, a colonel in the tsarist army, left for Russia, taking his family with him. Until the outbreak of the October Revolution, the Łobodowski family stayed mainly in Moscow.

The years 1917-22 were exceptionally difficult for the minor Józef. At that time, he lived with his parents and two sisters in Kuban, Yeysk, a small port city on the Sea of Azov.⁵ Although he started his studies at a Russian gymnasium, he soon had to leave it. The civil war completely prevented him from leading the life of a young man from the intelligentsia. His father, unemployed and harassed by constantly changing authorities, could not provide for his family. This task fell to Józef, who specialized in the cigarette trade. During this difficult period, the hope of returning to Poland was reassuring. But it was not certain whether he would be able to make it. His father did not make it and died a few weeks before leaving. One of the sisters had died earlier. In mid-1922, Józef left for his homeland with his mother and older sister.

He spent most of the next years in Lublin. There he obtained his secondary school leaving certificate and began to study law at the Catholic University of Lublin; however, he did not complete his studies. He also began his literary activity as a poet in this city.

In the first half of the 1930s, he had left-wing, even communist, views, and he associated with people with similar views. This caused him numerous

⁴ I. Szybowska, *Łobodowski ‘Od Atamana Łobody’ Do ‘Seniora Lobo’* [Łobodowski. ‘From Ataman Łoboda’ to ‘Senior Lobo’], Warsaw 2001; J. Zieliński, *Leksykon Polskiej Literatury Emigracyjnej* [Lexicon of Polish Emigration Literature], Lublin, 1990, pp. 82-84.

⁵ There were small concentrations of Poles in this region at that time (A. Sielickij, *Поляки на Кубани: Усторические очерки* [Poles in Kuban. Historical monograph], Krasnodar 2008, pp. 103-30).

problems, including short prison sentences. But in the mid-1930s, he realized that he was going the wrong way, converted and even became an implacable anti-communist.

In 1938, Józef married Jadwiga née Kuryłło. The young couple lived in Łuck for a few months and then moved to Warsaw.

Łobodowski fought in the September Campaign⁶ and was interned with his unit in Hungary. From there he managed to escape to France, where he intended to continue the fight. He was arrested and placed in a camp for demobilized Polish soldiers. He left it only after France was occupied by Germany. He then attempted to get through Spain and Portugal to England, to the Polish military units stationed there. Arrested by the Spanish police, he spent two years in the Figueras camp.

He spent the remaining years of his life in Madrid. From 1949, he hosted Polish anti-Soviet and anti-Communist programs broadcast by Radio Madrid. These were the first radio programs broadcast from the West to Poland. Due to this activity, the communist authorities forced his wife, who was living in Poland, to divorce him. In addition to working on the radio, he was involved in literary work and published his works in emigration publishing houses and magazines. He died in 1988. His ashes were buried in the family grave in Lublin.

Till today, Łobodowski is appreciated as a poet. His poetic works, published in Poland, have been discussed many times.⁷ However, he is not known as a prose writer, or at least only to a small extent.⁸

His prose is largely autobiographical. *Żywot człowieka gwałtownego* [The Life of a Violent Man], published in Poland in 2014, is the writer's memoir. But he also included many of his memories, artistically processed, in two novel series. To begin with the second one, *Dzieje Józefa Zakrzewskiego* [History of Józef Zakrzewski], the four volumes it comprises were published between the years 1965 and 1970 in exile, and in Poland in 2018. The author uses his experiences from the 1930s. The earlier cycle, called the "Ukrainian trilogy", consists of three novels on which Łobodowski worked in the first half of the

⁶ Poland's reknowned defensive war, against German invasion on September 1, 1939, as well as against the Soviet invasion on September 17.

⁷A. Jakubowska-Ożóg, *Poezja Emigracyjna Józefa Łobodowskiego* [The emigration poetry of Józef Łobodowski], Rzeszów, 2001; L. Siryk, *Naznaczony Ukrainą: O Twórczości Józefa Łobodowskiego* [Marked by Ukraine: about the work of Józef Łobodowski], Lublin, 2002.

⁸P. Libera, *Na Marginesie 'Dziejów Józefa Zakrzewskiego' (uwagi historyka)* [On the margin of 'The History of Józef Zakrzewski' (historian's comments)], in J. Łobodowski, *Dzieje Józefa Zakrzewskiego, Część Pierwsza, Rzeka Graniczna* [The story of Józef Zakrzewski, Part One, Border River], Warszawa, 2018, p. 243.

1950s, when he was undergoing treatment for tuberculosis,⁹ and then published in the London-based Polish publishing house Gryf: *Komysze* [Thicket] in 1955, *W Stanicy* [In the Outpost] in 1958, *Droga Powrotna* [The Way Back] in 1961. The Test publishing house published them in Poland in 2017, and they were published again by the Instytut Literacki in 2020. In this Ukrainian trilogy, Łobodowski reaches back to what he experienced in the years after the October Revolution, which he spent in Yeysk. It is in the novels that make up this chronologically earlier cycle that interesting Armenian characters can be found.

The protagonist of these three novels is Staś Majewski. Like Łobodowski, he lives in Yeysk with his parents and two sisters. His father is a colonel in the tsarist army, but now he does not practice his profession. The family earns its living by making cigarettes, which Staś sells on the streets. Although he is less than twelve years old, he already has a girlfriend - a Russian girl, Szura. (When Józef was still attending junior high school, he was in love with Nina, and in defense of her he fought with a friend who was harassing her.) Due to the ongoing civil war, life even in provincial Yeysk is becoming more and more dangerous. Young Majewski, together with Szura, moves to the thicket, hard-to-reach areas stretching outside the city, right by the sea. He also intends to bring his family to this place. But it turns out that it is not safe in the thicket at all. During a shootout between rival gangs, he is hit by a random bullet.

Thanks to the help of his friends, he is taken to a Cossack station to recover. Then he lives among the Cossacks for several months, fully accepted by them. He has a new girlfriend - Katia. One day, a strong unit of Bolsheviks attacks the station. Despite the brave defense, the enemy enters the village and massacres its population. His beloved does not avoid death either.

Having survived the attack on the outpost and then numerous adventures, Staś returns to Yeysk. The father has just died in the Majewski house. The boy has an affair with Szura again. There is a possibility of returning to Poland. The Majewskis are preparing for their journey. Staś tries to persuade Szura to go with him, but she refuses. On the day of his departure, he comes to her to say goodbye. Then he goes to the port where the ship for the repatriates is supposed to depart from. He learns that the ship sailed an hour earlier than it should have.

Left alone in the city, he does not know what to do. Finally, the police lock him up in an orphanage where the teachers brutally abuse the children. Nina, whom he fell in love with in high school, is also there. Once raped by her teachers, she commits suicide. Then a rebellion breaks out at the orphanage, allowing the young prisoners to escape.

⁹ Szypowska, p. 145.

Staś is hiding in Yeysk. Then he goes to Rostov-on-Don with Szura. There they are hiding among the Armenians, waiting for the opportunity to go to Poland. Suddenly, Szura catches typhus and dies. Staś, accompanied by another girl, sets off on foot for the country.

The trilogy is full of adventures. In this respect, it brings to mind the novels of the famous Polish writer, winner of the Nobel Prize in 1905, Henryk Sienkiewicz.¹⁰ Probably not all the adventures described in these three novels, only some of which are included in the above summary, were personally experienced by their author or one of his friends. In any case, he lived in the same place and time as Staś Majewski, so it is difficult to completely question his credibility. He certainly does not let his imagination run wild when describing the atrocities of the Bolsheviks and the chaos that reigned in Russian society after the revolution. His descriptions of Kuban, an area of the northwestern Caucasus adjacent to the Sea of Azov, are also credible. Kuban is multinational, with numerous stations of Zaporozhian Cossacks speaking Ukrainian.¹¹ Maybe that is why these three novels are called the “Ukrainian trilogy.”

Kuban is a land where Armenians had been settling for a long time. Images of representatives of this nation can be found in Łobodowski’s work.

First of all, we should mention Grisha Ashwajanc. He is a friend of the main character of the series. The young Pole survived the greatest difficulties only thanks to him because both of them were *kunaks*, i.e. special friends whose friendship was preserved by a special ritual that involved cutting veins and drinking the blood of the person with whom they had a *kunak* relationship. In the latest edition of the novel, an editorial footnote informs readers that such an arrangement in the North Caucasus is usually established between men belonging to two different nations.¹²

The very appearance of Ashwajanc was extraordinary. The writer describes it this way, introducing it for the first time into his novel:

Despite the summer, he was wearing a sleeveless sheepskin coat, rags made of sacks on his legs, fastened with straps, a wide belt and a Cuban cap with a red bottom on his ruffled black head (...). He had a face burnt dark brown, huge eyes, and a nose shaped like a curved cucumber. Long monkey arms ending in powerful hands

¹⁰ A. Danilewicz-Zielińska, *Szkice O Literaturze Emigracyjnej* [Sketches on emigration literature], Wrocław, 1999, p. 264.

¹¹ Szypowska, p. 192.

¹² Łobodowski, *Komysze* [Thicket], Cracow, 2020, p. 53; cf. T. Kaliściak, „Pobratymstwo w świetle źródeł historyczno-etnograficznych z przełomu XVIII i XIX wieku” [Kinship in the light of historical and ethnographic sources from the turn of the 18th and 19th centuries], *Konteksty*, 4:2020, pp. 209-17.

completed the look. A Caucasian bandit, a half-wild chaban from the Stavropol steppes, an escapee from forced labor – every description suited Grisha Ashwajanc.¹³

Here is another description of Ashwajanc, which the author puts into the mouth of one of the novel's minor characters: “One thug asked about you. Not one of ours, Ormiashka, I mean... Karapiet... Nose like a cucumber, eyes like a wolf's. They call him Grishka”.¹⁴ The term “Karapiet” used here is a popular Armenian name, which is used in Russia to call, in a rather negative way, all Armenians.

This Ashwajanc is most often called Grishka, which is the Russian diminutive of the name Grigory. This is probably due to the fact that he lives among Russians or Russian-speaking people. In Armenian his name is Krikor or Gregory. It is also a popular Armenian name. However, Łobodowski never calls him that.

Ashwajanc met Staś Majewski in junior high school. It seems they attended the same class, although he was three years older than the Pole, because he repeated classes many times. Perhaps they were attracted to each other by their minority status; after all, both of them were not Russians, and Russians sometimes showed distrust and even contempt for them. You can guess that happened also at school. However, the action of the novel does not take place during junior high school, but at a time when former junior high school students had to take care of themselves, and often also of their loved ones. The Armenian is doing great. He becomes an important figure in criminal circles. However, the name of a bandit does not suit him at all. He is a very noble man, although he is capable of cruelty, but only towards those who seem to deserve it, who harm the weak and defenseless. As a rule, these are people created by the revolution.

Ashwajanc is aware of being someone extraordinary. On the pages of *Podróż powrotna* he says about himself: “I am a Caucasian eagle, the strongest policemen run away from me.”¹⁵ And in another place: “Griska Ashwajanc, Armiashka,¹⁶ Caucasian bandit and avenger of human wrongs”.¹⁷ And again: “I don't recognize anyone; I live as I want, with my own head, with my own industry.”¹⁸ As such, he largely resembles romantic protagonists.¹⁹

¹³ Łobodowski, *Komysze*, Warsaw, 2017, p. 16.

¹⁴ Łobodowski, *Droga Powrotna* [The Way Back], Warsaw, 2017, pp. 102-3.

¹⁵ *Ibid.*, p. 122.

¹⁶ *Armiashka* is the Polish diminutive of the word Armenian. In Polish, some ethnonyms have diminutives.

¹⁷ *Ibid.*, p. 122.

¹⁸ *Ibid.*, p. 127.

¹⁹ M. Ursel, *Romantyzm* [Romanticism], Wrocław 2000, pp. 165-66.

He also resembles them in his oriental provenance. He comes from an ancient eastern people. Moreover, he knows other eastern peoples living in the Caucasus, and his knowledge about them makes him stand out among his Russian friends, who are to some extent fascinated by them. One of the heroes, a Russian, Kolya, saying goodbye to the company, turns to Ashwajanc:

- You, Grishka, a specialist in your Caucasian ceremonies. What do you say when someone says goodbye to a *kunak*? Salem-aleikum.

The Armenian smiled with satisfaction and put his hand to his heart, mouth and forehead.

- Aławendy... Mahomet Rassul Ałta... Faticha!

- Wałtabałta! Inszach!

- Ałtasechłta!"²⁰

Ashwajanc is undoubtedly an Armenian patriot, although he lives far from his homeland. In a conversation with Awdiotenka, a disappointed revolutionary whom he helps hide, he says: "*The mountains are beautiful, and the most beautiful here in Armenia. There are streams everywhere, greenery abounds, vineyards on the slopes, and herds of lambs roam. A shepherd next to them plays on a duduk.*"²¹ From time to time, he gets fed up with life in the underground and then makes plans to return to his homeland: "*to settle in the mountains, not having to hide from the militia and changing hiding places all the time.*"²² Another time, Armenia is a place where you can take refuge when your current lifestyle becomes impossible: "*It will get too crowded, I will go to the mountains, to our Armenian region, to the Turkish or Persian border.*"²³ Staś persuades him to go with him to Poland, where Armenians also live: "*If I leave this place,*" he says, "*I will go to my country, to our Armenian mountains.*"²⁴

The reader does not learn what happened to Ashwajanc. Łobodowski allows him to take care of his *kunak* one last time and sends him on his way to Poland.

Other Armenians also appear in the novels discussed, but none is as extensively covered as him. He is one of the main characters of the novel. The other Armenians are episodic and not as interesting as Ashwajanc, although all of them are positive. However, Staś's father did not have a very good opinion of them and other nations involved in trade: "*Bribers, fraudsters! If not an Armenian for a Greek, then a Greek will trade an Armenian for a few cents.*"²⁵ In this connection, "*he told an anecdote about a storm at sea that immediately*

²⁰ Łobodowski, *Komysze*, Warsaw 2017, p. 79.

²¹ Łobodowski, *Droga*, p. 127.

²² *Ibid.*, p. 132.

²³ *Ibid.*, p. 235.

²⁴ *Ibid.*, p. 419.

²⁵ Łobodowski, 2017, p. 114.

calmed down when a Jew, a Greek and an Armenian were thrown from the ship into the stormy waves. After some time, a whale was caught, and when it was cut open, it turned out that all three of them were sitting in its belly and playing cards. The Jew lost everything, even his clothes and underwear, even his personal freedom, and just at the moment of catching the whale, the Greek and the Armenian were playing fools over the Jew."²⁶

It is a fact that Greek and Armenian merchants competed with each other. In *Komysze* there was a Greek merchant, Zabagos, who managed to obtain a license to establish a spa and exploit some hot springs. The Armenians also tried to get it. Not having obtained it, they hated their rival.

Armenians are credited with wealth. During his several-month stay in the Cossack station, Staś sometimes teased a girl named Odarka. Once, jokingly of course, he accused her of laziness: "*You should have married an Armenian merchant, and now you would be sitting on an ottoman and drinking sorbets.*"²⁷

In the first novel of the series there is a scene with the merchant Czacharian. Staś goes to him to buy earrings and a brooch for Szura, and he bargains skillfully. "*Czacharian was wearing (...) a velvet jacket and a black silk scarf on his head. Between a luxuriant mustache and a wedge-shaped beard, there were full, almost crimson lips. At one time, the Armenian was accused of painting his lips, but repeated attempts with a handkerchief dipped in spirit did not produce any results.*"²⁸ Czacharian runs a shop, which is both an antique shop and a pawn shop, and which continued to prosper even under Bolshevik rule. Staś misses someone like that in the station. Having fallen in love with another girl there, he wants to buy her a gift, but he has nowhere to go. "*If in Yeysk or Dołzhansk, you would go to any Armenian you come across and there would be no problem.*"²⁹

But the times of Armenian merchants seem to be coming to an end. Staś and Katia find out about this when they go to the fair, which is much poorer than in pre-revolutionary times, because there are no Armenians, or Greeks and Persians.

It should also be added here that Ashwajanc himself is also a very rich man. However, it is not known how he managed to earn so much money. His dealings were certainly not always legal.

Armenians are also very well-informed people. The above-mentioned Odarka, who became the lover of Hassan, a Persian merchant, learned from him about the planned attack on the outpost. "*He's trying to figure things out*

²⁶ Ibid., p. 115.

²⁷ Łobodowski, *W Stanicy* [In the Outpost], Warsaw 2017, p. 11.

²⁸ Łobodowski, *Komysze*, 2017, p. 256.

²⁹ Łobodowski, *W Stanicy*, p. 254.

*with the Armiashki (...),” he says, “and they’re always the first to sniff it out.”*³⁰ Of course, Grisha is unrivaled in this respect. Because he knows everything about everyone, he saves his Polish *kunak* many times.

When Staś got out of the orphanage, he couldn't stay in Yeysk, even in hiding, because sooner or later he would be captured again. An Armenian helped him escape and hide in [Nor] Nakhichevan.

Nor Nakhchivan is the Armenian district of Rostov-on-Don, which Staś had the opportunity to get to know well. “*After half an hour of walking, he entered the thicket of streets of a populous district. Small, mostly brick houses, lots of shops, most of them closed, boarded up here and there. Clouds of swarthy, black-haired and black-eyed children. On the benches there are shrunken figures of old men and women, lazing sleepily in the warmth of a summer evening.*”³¹ Armenians seem to be quite numerous in Rostov. Even though these are post-revolutionary times, merchants, thanks to their resourcefulness and solidarity, are somehow coping. You can see them trading in the local bazaars. In the novel there is a scene of an attack by *bezprizorny* - children without any care - on a meat seller. Or maybe it is the beginning of a good period for them, because it is just the beginning of NEP, i.e. the New Economic Policy, partially allowing capitalism in the first socialist country.

Staś and Szura are hiding with Tina, a hunchbacked Armenian woman who sometimes reads cards. She predicted to them that “*the black cloud is getting lower and lower (...), whoever does not escape from the black cloud in time will be overwhelmed and absorbed*”,³² which unfortunately came true.

There is a lot about Armenian history in *Droga powrotna*. Therefore, we need to recall Grisha Ashwajanc again, because he is the greatest expert here. In a conversation with the above-mentioned Awdiotenka, he explains the entire history of his nation:

You call us: [Karapiety], [Soleni] - and we just laugh at you. We Armenians have a different idea and way (...). If you read the books, you would see for yourself. The Armenian state existed vast and rich even before Moscow was founded and even much longer. We ate shish kebab and drank good wine while you climbed trees and smoked birch bark. Only then did various misfortunes begin to befall us. These are various Agarian Araps, and the Tartar horde, Persians, Turks... These are the worst. Others, Tatars, for example, came, robbed people, beat up people, kidnapped the prettiest women, but then they went to hell, only to find dust behind them. So the Tatars weren't that bad because they came and went. And in the end, all their power was taken to hell because they couldn't keep it together, they spread around the world like lice after your RSFSR. That's why today Tatars mean nothing. They either

³⁰ Ibid., p. 423.

³¹ Łobodowski, *Droga*, p. 315.

³² Ibid., p. 312.

shine shoes on the street or sell carpets. This is what they came up with in their old age. And the Turks settled nearby, built fortresses, and placed their own bashas and *aghas*. And bad times came for the Armenians. They also sent Kurds against us, and this wild tribe knows so much that it murders and robs people. Later still, the white tsar began his rule in the Caucasus. He was acting cunningly. That a Christian supposedly defends and frees them from the unfaithful *bisurman*.³³

Staś himself, however, “*once read in a history book that Armenians have been living in Poland for a long time, mainly in Lviv.*”³⁴ Ashwajanc also knows this: “*We were scattered all over the world.*”³⁵

Podróż powrotna included at least a mention of the Armenian Genocide in Turkey in 1915; the action of the novel takes place only a few years after these events. Ashwajanc alludes to them in his lecture. But they also appear in the story of Czubar, a Cossack from the station where Staś stayed. During WWI, this Czubar was on the Turkish front, among the mountains behind Yerevan, in the town of Igdir. “*There were a handful of Armenian women left there who managed to hide themselves in the mountains in time*”³⁶ and that is why they were not murdered by the Turks. When the Russians were stationed there, they could feel relatively safe. They provided them with various services in exchange for food. Girls gave themselves to soldiers for a piece of bread.

Ashwajanc reminded them that Armenians in Russia are called not only “*Karapiety*”, but also “*Salty*”. The same Czubar explains where this second nickname comes from: Because “*when the priest baptizes them, he throws a handful of salt into the water.*”³⁷

The quite numerous Armenians and the issues concerning them on the pages of Łobodowski’s trilogy certainly make you think. Where did the writer get the information about Armenians that he used to create Armenian protagonists and to raise various Armenian issues? Why did he include them in his novels, which were devoted to the Polish fate?

As stated above, in his novels he included a lot of what he knew from personal experience. Therefore, when describing Kuban and Yeysk, inhabited by representatives of various peoples, he could not omit the Armenians. Similarly, Stefan Żeromski’s³⁸ novel, *Przedwiośnie* [Early Spring], contains a description of the massacre of Armenians in Baku in 1918 while narrating the

³³ Ibid., pp. 125-127.

³⁴ Ibid., p. 96.

³⁵ Ibid., p. 234.

³⁶ Łobodowski, *W Stanicy*, p. 350.

³⁷ Ibid., p. 350.

³⁸ Stefan Żeromski’s (1864-1925), was a Polish novelist and dramatist belonging to the Young Poland movement at the turn of the 20th century. He was called the “conscience of Polish literature”

story of Cezary Baryka, who lived in Baku at approximately the same time as Staś Majewski in Yeysk, and took into account the issues of the local Armenians.³⁹ But Łobodowski could only name them. However, Armenians are much more present in his trilogy. The Łobodowski family probably had some contacts with local Armenians during their stay in Yeysk. In *Żywot człowieka gwałtownego*, the writer, recalling his father's death, writes: "an Armenian priest blessed the body."⁴⁰ However, in the novel *W Stanicy*, he mentions Christmas spent in this city two years before, when "he was with his parents at a service in an Armenian chapel, because Father Dobrzański had just fallen ill with typhus, so there was no Polish shepherdess (...). He remembers how an Armenian priest, tall, very slim, with a dark face and fiery eyes, approached a group of Poles and broke the wafer with them, which is still a Polish custom during Christmas."⁴¹ If this event - a very ecumenical one - is not just literary fiction, but was experienced by the Łobodowski family, it could have made the future poet a lifelong friend of the Armenians.

It is also important to note that Łobodowski was erudite. He was well versed in the history and culture of Eastern European countries. In his letter to Stefania Kosowska, editor-in-chief of *Wiadomości*, one of the most important magazines of Polish emigration, he criticizes Waław Zbyszewski, who claims that the nations of the Ottoman Empire lived together in exemplary harmony.⁴²

Moreover, it should be noted that in the second half of the 1930s Łobodowski was associated with the Promethean movement.⁴³ This movement, supported by the state authorities, aimed to establish the best possible ties with all nations oppressed by Soviet Russia.⁴⁴ This was achieved, among other things, by popularizing their artistic achievements. Łobodowski was particularly interested in contacts with Ukrainians. But the peoples of the Caucasus were also close to him, as evidenced by the fact that he translated Shota Rustaveli's poem *Vepchis Tkaosani*, in which he was significantly helped by Georgian emigrants.⁴⁵ He remained faithful to the ideals of the Promethean movement even when he himself became an emigrant, as evidenced by a large part of his work. There is a lot about Armenians in the discussed trilogy, although the

³⁹ *Ararat* 124:1990, pp. 51-52.

⁴⁰ J. Łobodowski, *Żywot Człowieka Gwałtownego* [The Life of a Violent Man], Warszawa 2014, p. 37.

⁴¹ Łobodowski, *W Stanicy*, p. 307.

⁴² Łobodowski, *Listy Do Redaktorów „Wiadomości”*, Toruń, 2015, p. 306.

⁴³ Łobodowski, *Żywot*, pp. 107, 189-90, 274-75.

⁴⁴ L. Wyszczelski, *Polska Mocarstwowa. Wizje I Koncepcje Obozów Oolitycznych II Rzeczypospolitej* [Power Poland. Visions and concepts of political camps of the Second Polish Republic], Warsaw, 2015, pp. 198, 201, 214, 219.

⁴⁵ Łobodowski, *Żywot*, p. 190.

Prometheans had some problems with them because of their pro-Russian nature, present even among political exiles.⁴⁶

Undoubtedly, Armenians in the discussed novel series are not “oriental decorations”. When writing about them, Łobodowski was probably pursuing a more serious idea. It seems to suggest that the friendship between Staś Majewski and Grisha Ashwajanc is not only about incredible adventures, but above all an effective alliance of the weak against the powers that threaten them, that such an alliance does not have to be isolated but can even unite entire nations. Unfortunately, this suggestion did not reach many people who read Polish for several decades. However, arriving now, it remains fully relevant.

ՀԱՅԵՐԸ՝ ԵՈՂՔՖ ԼՈՊՈՏՈՎԱՔԻՒ ՈՒՔՐԱՆԱԿԱՆ ԵՌԱԳՐՈՒԹԵԱՆ
(THE UKRAINIAN TRILOGY) ՄԷՋ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ԿՐԵԿՈՐ ՓԵԼՉԻՆՍՔԻ
grzegorz.pelczynski@uwr.edu.pl

Յօդուածը նուիրուած է լեհ արարական գրող Եոզէֆ Լոպոտովսքիի (1909-1988) “Ուքրանական եռագրութիւն” անուանուած վիպաշարքին մէջ հայկական ներկայութեան: Եռագրութիւնը - բաղկացած երեք վէպերէ - *Komysze (Մացոնուք, 1955), W Stanicy (Յառաջագոյն դիրքը, 1958), Droga powrotna (Վերադարձի ճամփան, 1960)*, հիմնուած է փորձառութեան վրայ հեղինակին, որ իր պատանութիւնը՝ առաջին համաշխարհայինի եւ յաջորդող համայնավար յեղափոխութեան առաջին տարիները անցուցած է Քուպանի մէջ:

Այս վէպերը լոյս տեսած են նախ արտասահմանի մէջ, 1955-61 տարիներուն, եւ միայն վերջերս - Լեհաստանի ապախորհրդայնացումէն ետք - Լեհաստանի մէջ, 2016-20ին:

Յօդուածագիրը կը վիճարկէ թէ եռագրութեան մէջ հայերը լոկ արեւելեան յարդարանք մը չեն: Այլ, Լոպոտովսքի աւելի խորունկ նպատակ մը հետապնդած է ընդգրկելով հայերը, ջանալով հաւաստել թէ վէպին հերոսին՝ Սթաշ Մայեւսքիին եւ հայ Կրիշա Աշվայեանցին միջեւ հաստատուած բարեկամութիւնը չ'ենթադրեր լոկ անհաւատալի արկածախնդրութիւններու շարք մը, այլ կ'արտացոլացնէ տկարներու դաշինք մը՝ սպառնացող ուժերու դէմ: Այս դաշինքը միայն անձնական-անհատական բնոյթ չունի, այլ՝ հաւաքական ու ընդհանրական:

⁴⁶ P. Libera (ed.), *II Rzeczpospolita wobec ruchu prometejskiego* [The Second Polish Republic and the Promethean movement], vol. IV, Warsaw 2013, pp. 54-55.

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԱՂԹ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՀԻՆԵԱՆ
shahinyan_90@mail.ru

ՄՈՒՏՔ

Ներկայ ընկերաբանական ուսումնասիրությունը խարսխուած է երիտասարդների աշխատանքային գաղթի հարցի վերաբերեալ որակական հետազոտությունների ու վերլուծությունների վրայ: Հիմնահարցը դիտարկուել է վերջին երեք տարիների (2021-23)՝ սեռով, տարիքով ու ընկերային վիճակի սրացումներով յառաջացած խաւարկումներով, աստիճանակարգութիւնով, գաղթելու տրամադրութիւն ունեցող երիտասարդների ընտրանքային հետազոտութեանը՝ Հայաստանի Հանրապետութիւնում առկայ գիտական, հասարակական եւ պետական-ոլորտային կառոյցների փորձագէտ-մասնագէտների շրջանում:

Յօդուածի հետազոտութեան շրջանակներում քննութեան ենք ենթարկել «միգրացիա/գաղթ» եւ «զարգացում»¹ հասկացութիւնները, մասնաւորապէս երիտասարդների զարգացման գործընթացով պայմանաւորուած, կարելուել երիտասարդների զբաղուածութեան հարցերը, որոնք ՀՀ-ի երիտասարդների արտաքին աշխատանքային գաղթի պատճառ են դառնում:

Անդրադարձել ենք նաեւ աշխատանքային գաղթի բացասական ազդեցութիւններին, դիսկերին՝ երիտասարդների ինքնիրացման գործընթացում, ինչպէս նաեւ մասնագիտութեան ընտրութեան ու նպատակակէտ երկրների ընտրութեան հարցերին: Դիտարկել ենք նաեւ անվտանգ տեղափոխութեան հարցերը՝ նկատի առնելով համապատասխան փորձագէտների խորհուրդները՝ հիմնախնդրով զբաղուող կառոյցների մասին:

¹ **Միգրացիա.**-(լատիներէն migratio, migro - անցնել, վերաբնակուել, հայերէն՝ գաղթ) բնակչութեան, մարդկանց տեղաշարժ՝ մշտական կամ ժամանակաւոր բնակավայրը փոխելու նպատակով: Ընդգրկում է բնակավայրից հեռացողների (եմիգրացիա՝ արտագաղթ) ու եկողների (իմիգրացիա՝ ներգաղթ) խմբերը: Դրանց գումարն արտայայտում է գաղթի ընդհանուր, իսկ տարբերութիւնը՝ զուտ մեծութիւնը): «**Զարգացում**» հասկացութիւնը եւ «միգրացիա»ն, մասնաւորապէս «աշխատանքային միգրացիա»ն, գտնում են սերտ կապերի մէջ: Գաղթի միջոցով տեղի է ունենում քաղաքակրթութիւնների երկխօսութիւն, նոր գիտելիքների, կարողութիւնների եւ հմտութիւնների ձեռքբերում, կրթական աստիճանի բարձրացում, տեղեկատուական արհեստագիտութիւնների տիրապետում, ինչպէս նաեւ գումարների ներհոսք: Ետ վերադառնալով՝ գաղթողները վերոնշեալ հմտութիւնները ներդնում են հայրենիքի **զարգացման եւ շէնացման** գործում:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սոյն որակական հետազոտութեան իրականացման հիմնանպատակն է գաղթի հասկացութիւնների գարգացումը, ընկերային երեւոյթների որակական երեսակների ըմբռնումը առաւելապէս՝ բնական՝ ոչ-փորձարարական պայմաններում: Հետազոտութեան տուեալների վերլուծութեան գործընթացը միտուած է նշանակութիւնների, գաղթի կենսափորձի եւ մօտեցումների վերհանմանը: Մասնաւոր վերլուծութեան նպատակները տարբերում են՝ ըստ մեր կողմից իրականացուած հետազոտութեան նպատակներից. վերլուծութիւնը միտուած է գաղթի ենթախորքի հասկացմանը, օրինակ՝ ինչպէ՞ս են տնտեսական, քաղաքական, ընկերային, մշակութային եւ կազմակերպական գործօնները ազդում երիտասարդների աշխատանքային գաղթի երեւոյթի վրայ: Այն ուղղուած է մարդկանց պատկերացումներին, մօտեցումներին, փորձի բացայայտմանն ու խնդիրների հասկացմանը:

Յօդուածի շրջանակում առաջադրուած գիտական վարկածներն էին.-

- 1) Գաղթի դիմող անձանց պատճառները հիմնականում հոգեբանական են՝ պայմանաւորուած յետպատերազմական վախերով եւ բացասական սպասումներով,
- 2) Երիտասարդների զբաղուածութեան հարցերը ՀՀում ունեն կազմակերպական բացթողումներ, որն էլ դառնում է երիտասարդների արտաքին աշխատանքային գաղթի (ԱԱԳ) դիմելու առանցքային պատճառներից մէկը,
- 3) Երիտասարդութիւնը հիմնականում նախընտրում է մեկնել ԱՄՆ եւ եւրոպական երկրներ, քան Ռուսաստանի Դաշնութիւն՝ պայմանաւորուած վերջին շրջանում պատերազմական գործողութիւններով:

Վերլուծութիւնն իրականացրել ենք հիմնուելով մեթոդների միջոցով հաւաքուած տեղեկատուութեան սղագրման վրայ: Այս իմաստով, իրաքանչիւր տուեալ վերածել ենք գրութեան, այնուհետեւ՝ ենթարկել վերլուծութեան: Հարցագրոյցների, նաեւ խմբային ու ընտրովի խմբի քննարկումներից ստացուած ձայնագրութիւնները սղագրել ենք բառ առ բառ, այնուհետեւ սկսել վերլուծութեան գործընթացը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ընդհանուր առմամբ, վերլուծական գործընթացը իրականացրել ենք յառաջբերական/հետեւական (ընդհանուրից մասնաւոր, deductive) եւ մակաձական (մասնաւորից ընդհանուր, inductive) մեթոդներով:

- Ո՞րն է ստացուած տուեալների հիմնական «հաղորդագրութիւնը», տուեալները ի՞նչ են «ասում/պատմում»,

- Ինչպիսի՞ն է հիմնական տեղեկատուների մօտեցումը, ի՞նչ ընկալումներ, դիրքորոշումներ են արտայայտուել,

- Որքանո՞վ է շեշտադրում իրական, առկայ իրավիճակը կամ իդէալական իրավիճակը:

Մենք՝ 1) Սղագրել ենք տուեալները, մաքրել, դասատրել, ձեւաչափել, տող առ տող համարակալել սղագրութիւնը, 2) Կարդացել ու վերընթերցել ենք բոլոր սղագրութիւնները, ստացուած ամբողջ նիւթը մշակել այնքան, մինչեւ որոշակիացուի վերլուծութեան շրջանակը՝ բացատրական (երբ վերլուծութիւնը պատասխանում է հետազօտական հարցին) կամ հետախուզական (երբ վերլուծութիւնը հնարատրինս մանրամասն ներկայացնում է ստացուած տուեալները): Այս փուլում վերլուծաբանը ուրուագծում է տուեալների կողատրման իր յատակագիծը:

Աղիսակ 1. Փորձագիտական հարցման մասնակիցների տուեալները		
Փորձագէտի անունումը	Կառոյց	Պաշտօն
N1	ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ	Էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ
N2	ՀՀ (ներքին գործերի նախարարութեան Միգրացիայի եւ քաղաքացիութեան ծառայութիւն, ՆԳՆ ՄԲԾ)	Աշխատանքային միգրացիայի եւ մշտադիտարկման բաժնի պետ
N3	ՀՀ (Վիճակագրական կոմիտէ, ՎԿ)	Շիրակի մարզային վարչութեան պետ
N4	«Առաքելութիւն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպութիւն ՀԿ	Թիմի ղեկավար, վերահսկիչ (աշխատանքների կազմակերպող, յարաբերութիւնների կարգատրող, խորհրդատուութիւն տրամադրող մասնագէտ)
N5	«ԿԱԶԱ» շուէյցարական մարդասիրական հիմնադրամ	թէժ գծի պատասխանատու
N6	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպութիւն	գաղթի փորձագէտ, շահերի պաշտպան

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ստորեւ քննուում են «Երիտասարդների աշխատանքային միգրացիայի հարցի շուրջ փորձագիտական սոցիոլոգիական ուսումնասիրութիւն» թեմայով հետազօտութեան արդիւնքները:

Հարց 1.- *Ըստ Ձեզ՝ ի՞նչ վիճակում է սեռով, փարիքով ու խաւարկման աստիճանակարգութիւնով պայմանաւորուած գաղթի միտումնաւորութիւնը ՀՀում: Ինչորում ենք ներկայացնել վերջին երեք փարիքների փուեալները:*

Պատասխան.- Գաղթի միտումնաւորութիւնը սեռով, տարիքով ու խաւարկումների աստիճանակարգութիւնով պայմանաւորուած հարցի առնչութեամբ՝ փորձագէտները շեշտել են, որ ԱԱԳ գործընթացներում ներգրաւուած են

ե՛լ մասնագիտություն ունեցողները, ե՛լ բարձրագույն կրթություն չունեցողները: Ըստ նրանց տեսակետերի՝ բարձրագույն եւ յետբուհական կրթություն ունեցողներից շատ քչերն են ետ վերադառնում (մօտաւորապէս 2 կամ 2,5 տոկոս): Այդ նոյն բարձրագույն եւ յետբուհական կրթություն ունեցող գաղթականները կազմում են մօտաւորապէս գաղթողների 15 տոկոսը: Սեռատարիքային կազմի առումով, սովորաբար երեք խումբ ենք առանձնացնում՝ երիտասարդ (22-33), միջին տարիքի (35-45) եւ ասագ (45-55): ՀՀ-ից մեկնողները հիմնականում միջին տարիքի են, որոնց մէջ գերակշռում է նաեւ երիտասարդութիւնը: Ըստ սեռի՝ հիմնականում տղամարդիկ են մեկնում, մեկնողների մէջ կանայք կազմում են 10 տոկոս:

Փորձագէտները նաեւ նշել էին, որ որպէս աղբիւր պէտք է ընդունել ՀՀ ՎԿԻ եւ որակական հետազօտութիւնների տուեալները, որոնք հիմնականում համադրում են: Ըստ թուաքանակի՝ նախկինում ՀՀ-ից տարեկան (երեք տարուայ ընթացքում՝ 2020, 2021, 2022) 30-40 հազար ԱԱԳ ենք ունեցել: Երբ որ համեմատում ենք գաղթական ասանդոյթներ ունեցող տարածաշրջանների հետ, մասնաւորապէս՝ Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու մի հատուածի: Իսկ այժմ դա ընդգրկում է ամբողջ ՀՀ-ն, քանի որ այժմ ՀՀ-ի բոլոր բնակավայրերից են արտագաղթում:

Հարց 2.- *Ըստ Ձեզ՝ ի՞նչ կապ կայ «միգրացիա» եւ «գարգացում» հասկացութիւնների միջեւ, մասնաւորապէս երիտասարդների գարգացման գործընթացով պայմանաւորուած:*

Փորձագէտների պնդմամբ, ուղիղ կապ կայ «միգրացիա» եւ «գարգացում» հասկացութիւնների միջեւ, քանի որ ԱԱԳերը հիմնականում ձեռք են բերում մասնագիտական նոր գիտելիքներ, նոր հմտութիւններ եւ, իհարկէ, դրամական միջոցներ: ԵՄ երկրներ մեկնող եւ ապաստանի դիմում ներկայացնողների 80%ը կորցնում է իր աշխատելու հմտութիւնը, քանի որ ԵՄ երկրներում ապաստան հայցողները աշխատելու իրաւունք չունեն, եւ որքան երկար է տեւում դիմումի քննութիւնը, այնքան այդ մարդիկ վերածում են մարդասիրական օգնութիւն ստացողների եւ յետագայում դժուար վերահամարկուողների:

«Միգրացիա» եւ «գարգացում» հասկացութիւնների առնչութեամբ, այլ փորձագէտներ նշում են, որ գաղթողների մասնագիտացում չունեցող խումբը վերադառնալով ՀՀ կրկին առաջացնում է տնտեսական, ընկերային մի շարք խնդիրներ, քանի որ շատերը նախքան մեկնելը վաճառում են բնակարանները, իսկ վերադառնալիս ունենում են կացարանի խնդիր: Այս դէպքում բնակարանների ձեռքբերման, վարձավճարի փոխհատուցման, տեղաւորման, պատշաճեցման, աշխատանքային ծրագրի կազմման եւ հետեւողական մշտադիտարկման աշխատանքի իրականացման անհրաժեշտութիւն է առաջանում: Իսկ բարձր որակաւորում, մասնաւորապէս յետբուհական կրթութիւն, ունեցողների պարագայում այլ է դրսեւորումը,

որովհետև վերադարձած մարդիկ իրենց հետ բերում են անլի զարգացնող մշակոյթ, իրականացնում են նաև ներդրումներ, որ եւ վերադարձի, հայրենիքում հիմնաւորուելու նպատակներից մէկն է: Իսկ նմանատիպ նպատակները (գլխաւորապէս՝ գործարք) հիմնականում իրագործում են: Այդ դէպքերից մէկին առնչուած մի փորձագէտ բերել է մէկ օրինակ, երբ Սինիքի մարզում, գիւղատնտեսական բարձրագոյն կրթութեամբ անձը, ժամանակաւոր ԱԱԳից վերադարձել է եւ տեղում յաջողութեամբ օգտագործել մեղուաբուծութեան զարգացման իր հետ բերած նոր մոդէլը եւ արհեստագիտութիւնը: Վերադարձած գաղթականը նախկինում նմանատիպ հմտութիւններ չի ունեցել:

Փորձագէտների կարծիքով, այն երկրները, որտեղ մեկնում են գաղթողները, այդ երկրներում օգտուում են գաղթողների մարդկային աղբիւրներից, հնարաւորութիւններից, որպէս աշխատուի: Այս առումով հարկաւոր է հաշուի առնել ուղեղների արտահոսքի խնդիրը, այն երիտասարդներին, որոնք իրենց ներդրումներն են ունենում այդ երկրների զարգացման գործում: Բնականաբար հարց է ծագում, թէ ի՞նչ են ստանում այն երկրները, որոնք գաղթողներ են ստանում, մասնաւորապէս արտահանող երկրների տնտեսութեան զարգացման առումով: Հիմնականում՝ ընդունած երկրում եղած ժամանակ ձեռք բերած հմտութիւններն են, որոնք վերադառնալուց ներդնում են երկրի տնտեսութեան զարգացման մէջ: ՀՀի պարագայում մի փոքր այլ է, քանի որ ՀՀից գնացողների մեծ մասը զբաղուում է ֆիզիկական աշխատանքով. արհեստաւորներ են, գիւղատնտեսութեան ոլորտով զբաղուողներ: Գաղթի այս խնդիրը որակական զարգացման չի բերում, այլ ընկերային վարընթաց շարժունութեան է տանում, քանի որ նրանց մէջ լինում են նաև բարձր որակաւորում ունեցողներ, որոնք եւս ցածր որակաւորում պահանջող աշխատանք են անում: Գաղթ եւ զարգացում խնդիրը ՀՀի պարագայում դեռ ամբողջական զարգացում չի ապահովում:

Հարց 3.- *Ինչպէ՞ս է իրականացում ՀՀ աշխատուի ներքին եւ արտաքին տեղաշարժերի կարգաւորման միասնական պետական քաղաքականութիւնը:*

Մեր փորձագէտները նշեցին, որ ՀՀ պետական քաղաքականութեան ոլորտում եւս դրական տեղաշարժ է նկատուում, քանի որ մասնաւոր ոլորտների հետ պետութիւնն առաւել սերտ հաղորդակցութիւն է սկսել ցուցաբերել: Դրանք վերաբերում են ե՛ւ աջակցութիւնների տրամադրմանը, ե՛ւ ծառայութիւնների մատուցմանը: Իրականացուող գործակցութիւնները նախկինում երբեւէ այս չափերի չեն հասել: Դրանք միտում ունեն ծառայութիւնների եւ աջակցութիւնների վերածածկոյթի բացառման, ինչպէս նաև պետական եւ հասարակական ոլորտներում աշխատատեղերի հետ կապուած մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստումների եւ

նոր մասնագիտությունների ձեռք բերման: Մասնագիտացման դասընթացները, որոնք ՀԿներն են կազմակերպում պետական ոլորտում, փորձում ենք փոխարինել այլ մասնագիտացումների դասընթացներով, որոնք արդիանալետ են լինում:

Համաձայն փորձագետների **միասնական տեսակետի՝** ԱԱԳի վերաբերեալ դեռևս չկայ յատուկ օրէնսդրական դաշտ, այսինքն՝ չկայ օրէնք, որը կարող է կարգաւորել այդ խնդիրը: Այս առումով ՀՀն ունի պայմանագրեր որոշակի երկրների հետ՝ գաղթի հարցերի կարգաւորման համար (ընդունելու, վերադարձի): Հիմնականում ՌԴի հետ է, որ պայմանագրեր կան, երբ գործատուն կարող է ընդունել, որոշակի հարցեր քննարկել, առցանց հարթակում էլ է հնարաւոր գրանցուել գործատուի մօտ, այնուհետև որոշակի ընթացակարգեր անցնել, յետոյ նոր անցնել աշխատանքի: Բայց ընդհանուր առմամբ ՀՀ արտաքին եւ ներքին գաղթի քաղաքականութեան վերաբերեալ մշակուած ամբողջական հայեցակարգ դեռևս չկայ: Իսկ այսօր բոլոր ներքին գործընթացները մարզերից դէպի Երեւան կամ միւս կենտրոններ, տեղի են ունենում բուն թափով:

Հարց 4.- *«Միջազգային ինչպիսի՞ պայմանագրեր են կնքուել եւ կնքուում են արտագնայ աշխատանքների կազմակերպման, ինչպէս նաեւ աշխատանքային գաղթողների շահերի պաշտպանութեան հարցերով»:*

Այս հարցին պատասխանել են, որ ամենամեծ թւով գաղթողներին առնչուող պայմանագիրը ԵԱՏՄ պայմանագիրն է, որը վերաբերում է բացառապէս անդամ երկրների աշխատանքային գաղթողներին եւ նրանց ընտանիքի անդամներին: Չնայած որ ՌԴ գաղթի օրէնսդրութեան խստացումները, որոնք վերաբերում են նաեւ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիներին, ԵԱՏՄ պայմանագիրը որոշակիօրէն խախտում են, բայց դա ռուսներին չի խանգարում: Յաջորդը 2018 Փետրուարի 12ին ՀՀի եւ Բուլղարիայի միջեւ կնքուած «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետութեան եւ Բուլղարիայի Հանրապետութեան միջեւ աշխատանքային միգրացիայի կանոնակարգման մասին» համաձայնագիրն է, որը, սակայն, առայժմ չի գործում: 2023ին աշխատանքային գաղթի համաձայնագիր է ստորագրուել ԱՄԷի հետ, որը դեռևս չի վաւերացուել: Փորձագետները որպէս նշուած հարցին պատասխան ասում են նաեւ, որ դաշտում կան պայմանագրեր, մասնաւորապէս Եւրոպա արտագաղթած ՀՀ այն քաղաքացիների հետ, որոնք այնտեղ ապրում եւ աշխատում են՝ ունենալով աշխատելու օրինական իրաւունք: Բացի դրանից՝ նաեւ տուեալ եւրոպական երկիրը ՀՀ վերադառնալու պարագայում որոշակի գումար է տրամադրում այստեղ ներդրում իրականացնելու համար, որը վերաբերում է ոչ միայն մէկ անձի, այլ նաեւ նրա ընտանիքի անդամներին: Այդպիսի հնարաւորութիւն կայ նաեւ ԱՊՀ երկրների պարագայում, եթէ հարազատը սերտ ազգակցական կապ ունի:

Շահերի պաշտպանութեան հարցերով միջանի երկրներ կան, այդ թում եւ ՌԴն. առողջապահական հարցերով որոշակի ապահովագրութիւն կարող են տրամադրել գաղթողներին, ինչպէս նաեւ կարգաւորել գրանցման եւ այլ հարցեր: Սակայն աշխատանքը աշխատանքային ստաժ համարում է, թէ ոչ՝ յայտնի չէ: Այն մի ժամանակ քննարկում էր, սակայն փորձագէտները յստակ տեղեկութիւն չեն հաղորդում:

Հարց 5.- *Ըստ Ձեզ՝ ինչքանով են կազմակերպուած երիտասարդների զբաղուածութեան հարցերը, որոնք պատճառ են դառնում ՀՀ-ից երիտասարդների արտաքին աշխատանքային գաղթի դիմելուն:*

Փորձագէտները երիտասարդների զբաղուածութեան խնդիրը համարեցին ամենալուրջը, քանի որ ՀՀում գործազուրկների ճնշող մեծամասնութիւնը երիտասարդներն են: Դպրոցը եւ բուհը ամառուց յետոյ յատկապէս գիւղական բնակավայրերի երիտասարդների շրջանում ձեւաւորում են աշխատանքային գաղթի մեկնելու դրդապատճառները, մանաւանդ որ նրանք ՀՀում աշխատուժի իրացման այլ ոլորտներ չեն տեսնում: Այստեղ խնդիրն այլ է. փորձագէտներից մէկը անդրադարձաւ ունեզրկութեան տեսութեանը, մասնաւորապէս նշեց, որ օրինակուող խմբերի խնդիրներ կան, որտեղ մէկը տեսնում է, որ իրենց բնակավայրից որոշ մարդիկ բռնել են աշխատանքային գաղթի ուղին, եւ դրսից գումարի որոշակի փոխանցումներ են կատարում, այդ ընտանիքի կենցաղային վիճակը որոշակիօրէն սկսում է լաւանալ, ինքնաշարժ են գնում, բնակարան են կառուցում, վերանորոգում: Այս օրինակուող խմբերի վարքագիծը սկսում է ազդել մնացածի վրայ եւ նրանց մօտ ձեւաւորում են աշխատանքային գաղթի դրդապատճառ: Բացի այս ամէնից՝ գաղթը երիտասարդների մօտ կարգավիճակի փոփոխութեան խնդիր է առաջացնում: Աշխատանքային գաղթի մեկնելը, յատկապէս բանակից յետոյ, դարձել է անցումային ծէսի նման բան. յատկապէս ծնողներից անկախ լինելը, առանձին ապրելը, այնուհետեւ սեռոյթի որոշակի խնդիրներ լուծելը: Երիտասարդը, որը տանը երբեք ճաշ չի պատրաստել կամ սենեակը չի մաքրել ու յարդարել, գաղթի վայրում ստիպուած է այդ բոլորն անել, ասել է թէ՛ որոշակի նոր դերեր է վերցնում իր վրայ: Այսպիսով, տուեալ երիտասարդը դառնում է կերակրող ձեռք, աշխատանքային գաղթի մեկնելուց մէկ-երկու տարի յետոյ ընտանիքի ընկերային վիճակը սկսում է բարելաւուել: Համայնքը արդէն այդ անձին վերաբերում է որպէս հասուն եւ ընտանիք պահող մարդու: Համայնքի համար աշխատանքային գաղթն ընկալում է որպէս հասունացման կարեւոր պայմաններից մէկը: Տեղի է ունենում փորձի եւ գիտելիքների ձեռքբերում, ճաշակի փոփոխութիւն են.:

Հարց 6.- *Աշխատանքային գաղթի առաջացրած բացասական ազդեցութիւնների եւ դիսկերի առնչութեամբ, փորձագէտները նշեցին, որ այդ խնդիրները եւ դիսկերը հիմնականում մասնագիտական աճին խոչընդո-*

տող երեւոյթներն են, քանի որ արտագնայ աշխատանքի մեկնած քաղաքացին առաջին հերթին հացի խնդիրը լուծելու մասին է մտածում եւ ւաւելի քիչ հնարատրութիւն է ունենում մասնագիտական աճի, անձի զարգացման: Ինքնադոտրութիւնը հնարատրութիւնները ւաւելի քիչ են լինում: Մեզ յայտնի է, որ երիտասարդների մասնագիտական կրթութիւն ունենալու դէպքում այդ խնդիրը եւս առկայ է: Շատ յաճախ երիտասարդը ընտրում է ոչ այնքան մասնագիտական աշխատանքի հնարատրութիւնը, քանի որ երկրորդ տարբերակը ւաւելի մեծ հնարատրութիւններ է ընձեռում: Արտերկրում եւ ՀՀում այդ մօտեցումները նոյնն են:

Որպէս ԱԱԳի բացասական ազդեցութիւն, փորձագէտներից մէկը նշեց, որ այն երբեմն բերում է ամուսնութեան տարիքի բարձրացմանը, որովհետեւ, ըստ հետազօտութիւնների, երիտասարդները, աշխատանքային գաղթի դիմելով, իրենց առջեւ նպատակներ են դնում. «Այս անգամ գնամ, կը գամ բնակարանը կը վերանորոգեմ, յետոյ նոր կ'ամուսնանամ»: Այսպէս շարունակ գնում են, ապա վերադառնում եւ այլ խնդիրներ են լուծում: Իսկ այս շարունակական գործընթացը յանգեցնում է ամուսնութեան տարիքի բարձրացմանը: Բացի սրանից՝ երիտասարդ ընտանիքների վրայ այն բացասական է ազդում քանի որ ընտանիքը ազգագրական եւ ընկերային շղթայական փուլերից կազմուած մի ամբողջութիւն է, որը սկսում է ծանօթութիւնից, այնուհետեւ՝ ամուսնութիւն, երեխաներ...: Ըստ նոյն փորձագէտի հետազօտութիւններից մէկի՝ վերցրել են երկու խումբ ընտանիքներ՝ գաղթածներ եւ ընկերային կայունութեան խնդիրներ չունեցող ընտանիքներ եւ այնպիսիք, որոնք ունէին ԱԱԳեր, որտեղ փորձ են արել հասկանալ ընտանիքների կայունութեան եւ ռիսկերի խնդիրը: Այդ հետազօտութիւնը ցոյց է տուել, որ գաղթողների մօտ 10 տոկոսը ամուսնութիւնից մէկ-երկու ամիս յետոյ դիմում է ԱԱԳի, որը ամուսինների պատշաճեցման հետ կապուած որոշակի խնդիրներ է առաջացնում: Դէպքեր են եղել, երբ երեխան ծնուել է գաղթած ծնողի բացակայութեան: Բազմաթիւ նման խնդիրներ կան, որոնք իրենց ազդեցութիւնն են թողնում ընտանիքի վրայ:

Այս ամէնից բացի՝ գաղտնիք չէ, որ երիտասարդները սեռահասունութեան հետ կապուած փորձը եւ հմտութիւնները ձեռք են բերում դրսում: Սա եւս որոշակի ռիսկեր է պարունակում այն առումով, որ ձեռք են բերում որոշակի հիւանդութիւններ, որոնք բաւականին տարածուած են: Այնուհետեւ հիւանդութիւնների որոշ մասը նոյնիսկ սկսում է տարածուել ընտանիքում եւ ողջ ՀՀում:

Հարց 7.- Ըստ Ձեզ՝ երիտասարդութեան զարգացման գործընթացում ւաւելի շար դրական, թէ՞ բացասական ազդեցութիւն է գործում աշխատանքային միգրացիան:

Այս հարցին ԱԱԳ փորձագետները պայմանաւորել են առաջին հերթին երիտասարդի անհատական առանձնայատկութիւններով: Հնարաւոր է, որ փորձի փոխանակման տեսանկիւնից բաւականին դրական է, սակայն ԱԱԳն որոշապէս ՀՀի տեսանկիւնից ունի մի շարք բացասական հետեւանքներ՝ անվտանգային, ժողովրդագրական են.: Իսկ արտերկրում որոշակի գիտելիքներ եւ փորձառութիւն ձեռք բերած երիտասարդները շատ դէպքերում հրաժարոււմ են այդ փորձով այստեղ կիսուել, վերադառնալ եւ այստեղ շարունակել իրենց մասնագիտական գործունէութիւնը: Մնացած շատ մեծ եւ նկատելի հատուածը հազիւ է կարողանում տնտեսական եւ անձնային որոշակի կայունացման հասնել:

Այնուամենայնիւ գաղթն ունենում է որոշակի բարեբեր ազդեցութիւն եւ, որովհետեւ գաղթածները կարողանում են յաղթահարել մեկուսացուածութիւնը եւ դուրս են գալիս մէկ ուրիշ այլազգային տարածք, այնտեղ ձեռք են բերում որոշակի նոր փորձառութիւն, նոր արժէքներ, վարուելակերպի նոր ձեւեր: Երբեմն այս դրական փոփոխութիւնները գաղթածը բերում է իր համայնք: Բազմաթիւ են օրինակները, մասնաւորապէս երիտասարդների պարագայում, երբ այնտեղ արտաքին տեսքին այնքան էլ ուշադրութիւն չեն դարձրել, բայց երբ վերադարձել են ՀՀ, գաղթածները նշել են, որ սափրուելը, օձանելիք օգտագործելը, աւելի պատշաճ տեսքով հանրութեանը ներկայանալը դարձել են սովորութիւն:

Հարց 8.- Փորձագետները երիտասարդների ՀՀում բարձր վարձատրութեամբ աշխատանք գտնելու առումով նշել են, որ արտերկրից եւ երրորդայից վերադարձած երիտասարդները ունենում են լեզուի բարձր իմացութիւն: Հիմնականում ծրագրաւորման ոլորտում միջանկի փոքր դասընթացներ անցնելով հեշտութեամբ մուտք են գործում այդ ոլորտ: Ի տարբերութիւն այն երիտասարդների, որոնք այստեղ յենքային լուրջ կրթութիւն են ստացել, սակայն լեզուի բարձր իմացութիւնը այնուամենայնիւ դառնում է առաջնահերթութիւն եւ միջանկի քայլ առաջ է բերում տուեալ անձանց: Եթէ գնացած անձը հիմնականում հայաբնակ տարածաշրջանում է տեղակայուել եւ ոչ-մասնագիտական որեւէ բանով զբաղուել, տաքսի է վարել, մաքրման, կանաչապատման աշխատանքներում է ներգրաւուած եղել, լեզուի կատարելագործման չի հասել, վերադառնալուց յետոյ մրցունակութեան տեսանկիւնից հաւասար է - եթէ ոչ աւելի ցածր - տեղի բնակիչների հետ յարաբերակցութեամբ:

Հարց 9.- «Մասնագիտութեան ընտրութիւնն արդեօ՞ք կարող է պայտճատ հանդիսանալ երիտասարդների աշխատանքային գաղթի դիմելուն»:

Այս հարցին ի պատասխան՝ փորձագետները նշել են, որ կան նման մասնագիտութիւններ, որոնք, ճիշտ է, որակի տեսանկիւնից բարձր են, սակայն ՀՀում ժամանակավրէպ են համարոււմ, ուստի թողնում հեռանում են: Մարդասիրական բնոյթի մասնագիտութիւններ են հիմնականում՝ հո-

գեբաններ, ընկերային աշխատողներ, ընկերաբաններ, իրաաբաններ, այդ թույլ նաեւ ծրագրատրողներ, որոնք դրսում առաւել բարձր են վարձատրուում անգամ ժամավճարային հիմունքներով, քան այստեղ բարձր ծանրաբեռնուածութեամբ ու ոչ-ճկուն ժամանակացոյցով աշխատելու դէպքում: Կան դէպքեր, երբ ծրագրատրողը վերադառնում է, սակայն առցանց հիմունքներով զուգահեռ աշխատում է արտերկրում, որի դիմաց մեծ գումարներ է վաստակում՝ ելնելով այնտեղի ազատ ժամանակացոյցի ստեղծած հնարատրութիւններից:

ԱԱԳերի մէջ շատ քիչ են նրանք, ովքեր բարձր որակատրուում ունեցող մասնագէտներ են: Մասնագիտութեան ընտրութեան հարցն ամենայն հաւանականութեամբ առաւելապէս առնչուում է տեղեկատուական արհեստագիտութիւններին, որովհետեւ վերջիններիս զարգացումը ՀՀում բաւականին լաւ հիմքերի վրայ է դրուած, եւ այստեղ աշխատավարձի խնդիրն է, որը հնարատրութիւն է ընձեռում, որ գնան եւ դրսում աւելի բարձր վարձատրուող աշխատանք գտնեն:

Հարց 10.- *Մերօրեայ երիտասարդներն ինչպիսի՞ երկրներ են առաւել նախընտրում արտագաղթել, ո՞րն է հիմնական դրդապատճառը...*

Մերօրեայ երիտասարդների համար ամենանախընտրելի երկիրը, ըստ փորձագէտների, ԱՄՆն է, դրանից յետոյ եւրոպական երկրներն են եւ վերջում նոր, ի տարբերութիւն վերջին տարիների, ՌԴն: Աւելի քիչ են ցանկութիւն յայտնում ներկայիս ՌԴ գնալ հենց երիտասարդները:

Փորձագէտներից երկուսն էլ նշել են, որ իրենք այդ առումով յատուկ հետազոտութիւն չեն իրականացրել, ուստի չեն կարող ամբողջական պատասխան տալ, սակայն նշել են, որ ՀՀից հիմնական գաղթածների 50 տոկոսը ուղեւորուում է ՌԴ, ապա յաջորդում են եւրոպական երկրները եւ ԱՄՆը: Քանի որ լեզուական, սահմանների հատման, գաղթային պայմանների առումներով ՌԴն աւելի մատչելի է, ուստի գաղթողների հիմնական մասը մեկնում է այնտեղ:

Հարց 11.- *Ընկերայնացման գործընթացի հիմնական բարդութիւնների խնդիր:*

Այս մասին խօսելով՝ փորձագէտները նշեցին, որ առաջնայինը տնտեսական խնդիրներն են: Յատկապէս փախստականների կարգավիճակով գնացածները՝ ճամբարների բնակչութեան հետ ունեցած խնդիրները, դժուարութիւնները շատ դէպքերում չլուծած ետ են վերադառնում: Դրանք շատ յաճախ կարող են լինել ամենաառաջնահերթ կենցաղային հարցերի ապահովման, բնակարանի վարձը տալու հետ կապուած խնդիրներ, այլեւ այնտեղի աշխատաշուկայում մրցունակ չլինելու կամ այստեղից միքանի աստիճան ցածր աշխատանք գտնելու փաստով պայմանաւորուած, որը ընդվզեցնում է մեկնած երիտասարդին, քանի որ նա գնում է աւելի բարձր

ակնկալիքներով, բայց սովորաբար անելի ցածր աստիճանից է ստիպուած լինում մեկնարկել իր գործունէութիւնը, քան մեկնարկում էր իր բնօրրանում:

Փորձագէտներից մէկն էլ յարմարման գործընթացի առումով նշեց, որ ըստ 2021ի մի հետազոտութեան (որի թեման է եղել «Յետխորհրդային Հայաստանի բնակչութեան արտագաղթը գաղթային ցանցի ենթախորքում») յստակեցուել է, որ ընկերային ցանցերը բաւականին լաւ ընկերային աղբիւր են, ազդում են մասնատրապէս աշխատանք գտնելու, բնակարան վարձակալելու հարցերում: Բայց ամէն դէպքում գաղթածները խնդիրներ ունենում են յատկապէս մշակութային պատշաճեցման առումով, որովհետեւ արժէքային համակարգի փոփոխման, լեզուական, կենցաղային եւ այլ խնդիրներ են առաջանում: Այստեղ հարկատու է հաշուի առնել այն, որ, օրինակ, գաղթածների պատշաճեցումը ՌԴում հատուածային բնոյթ է կրում (կարող է լինել մշակութային, ընկերային կամ հաղորդակցման՝ նոր հմտութիւնների), քանի որ նրանք անդրազգային գաղթածներ են, այսինքն՝ նրանք միաժամանակ ե՛ւ նախկին հասարակութիւնում են (ծագման երկրի հասարակութիւն), ե՛ւ միաժամանակ նոր՝ ընդունող հասարակութիւնում են:

Հարց 12.- *«Ի՞նչ ապակութիւններ են հարկատու երիտասարդին գաղթի դիմելու համար, եւ ի՞նչ ապակութիւններով է երիտասարդը վերադառնում մեկնման երկրից, որոնք օգտագործում է ՀՀում ու հարազատ մարզում»:*

Այս հարցին ի պատասխան՝ փորձագէտներից մէկը նշեց, որ այդ դաշտը համեմատաբար կանոնակարգուած է ՀՀում. երիտասարդները մեկնում են ուսումնական ծրագրերով կամ աշխատանքային պայմանագրերով միջպետական պայմանաւորուածութեամբ, այսինքն՝ ոչ թէ անձի մակարդակով է տեղի ունենում, այլ կառավարութեան: Այս դէպքում համատարած վերադառնում են եւ վերադարձի դէպքում կարողանում են անելի մրցունակ լինել աշխատաշուկայում եւ շատ անելի հեշտօրէն են կարողանում իրենց կայացնել: Ամենակարեւոր ու դրական արդիւնքը հենց այն է, որ գնալու ցանկութիւն այլեւս չեն ունենում: Պատճառը ոչ թէ այն է, որ այնտեղ նրանց լաւ չեն վերաբերուել, այլ այն, որ վերադարձից յետոյ այստեղ առաւել լայն հնարաւորութիւններ են բացում նրանց առաջ: Նրանք հիմնականում արհեստաւորական մասնագիտութիւնների տէր մարդիկ են, բայց որոշակի մասն էլ ընդհանրապէս մասնագիտութիւն չունի, ուղղակի սեւագործ աշխատանք կատարելու համար են գնում: Արհեստաւորական ոլորտի հետ կապուած որոշակի հմտութիւններ են նրանք ձեռք բերում, բայց երբ վերադառնում են, դրանց կիրառութեան շրջանակները շատ փոքր են՝ ընտանիք, համայնք: Լինում են նաեւ յաջողակներ, որոնք որոշակի գումարներ են զուգահեռաբար վաստակում՝ այստեղ իրենց

մասնագիտությամբ փոքր *բիզնեսներ* ստեղծելով կամ արհեստանոցներ բացելով, որոնք, ըստ հետազոտողների, շատ չեն, միքանի դեպքեր են:

Հարց 13.- *«Աղջի՛կ, թե՛ փոքր երիտասարդներն են առաել շար արտա-գաղթում»:*

Այս հարցադրմանը փորձագետները պատասխանել են, որ տղայ ար-տագաղթողների թիւը շատ անելի մեծ է, քան աղջիկներինը: Սա ՀՀում պայմանաւորուած է ոչ միայն ընկերային կամ տնտեսական, այլեւ ան-վտանգային հարցերով, ծառայութիւնից խուսափելու փաստով: Պէտք է նշել, որ ծառայութիւնը վերջացրած քաղաքացիների առջեւ եւս ծառայել է նորից զօրակոչուելու հարց: Աղջիկների պարագայում տարածուածութիւնը 30ից բարձր տարիքային խմբում է: Բուին ամարտած աղջիկները միտում ունեն իրենց այստեղ կայացնելու, իսկ երեսունն անց կանայք միտուած են տեղափոխուելու կա՛մ ընտանիքի վերամիաւորման, կա՛մ խնամքի կազ-մակերպման ոլորտում ներգրաման համար: Դրանք երեխաների խնամքի կազմակերպումն են, տարեցների խնամքի կազմակերպման հարցերը, տնային տնտեսութիւններում աշխատելու հնարաւորութիւնները: Լինում են դէպքեր, երբ ՀՀից նմանատիպ աշխատանքների գնում են նաեւ անելի վաղ գնացած եւ որոշակի կայացուածութեան հասած ընտանիքներում աշ-խատելու:

ՀՀից արտագաղթելու դէպքում, բացի աշխատատեղերի բացակայու-թիւնից, ցածր աշխատավարձից, կան նաեւ սպասելիքների, մասնաւորա-պէս ինքնակայացման առնչուած խնդիրներ, որոնք ծննդավայրում տեղի չեն ունեցել, ուստի մտածում են, որ կարելի է դրսում լուծել: Բացի դրանից՝ տղաների զինուորական ծառայութեան խնդիրն է բարձրացում, ուստի եւ մինչ այդ տարիքը մեկնում են: Աղջիկների պարագայում առհասարակ կրթական կամ ամուսնական գաղթ է: Կրթական գաղթն աղջիկների հա-մար յարմար խողովակ է՝ յետագայում արտերկրում հաստատուելու: Աղ-ջիկների համար կայ նաեւ ընտանիքի վերամիաւորման խնդիր: Այսպի-սով, աղջիկները կա՛մ մեկնում են որպէս ընտանիքի անդամ, կա՛մ ուսում ստանալու նպատակով: Գաղթի հոսքերի մէջ աշխատելու մեկնող երիտա-սարդ աղջիկների թիւը թերեւս չի գերազանցի 5-7%ը: Նրանք մեծ մա-սամբ մեկնում են հարագատների կամ բարեկամների մօտ աշխատելու:

Հարց 14.- *«Արդե՞ք կապ ունի ՀՀում փրորող պատերազմական իրավի-ճակը երիտասարդների աշխատանքային գաղթի դիմելու առումով»:*

Այս հարցին՝ փորձագետները նշեցին, որ միանշանակ կապ կայ, եւ հենց դրանով է պայմանաւորուած նախկինում ՌԴ, իսկ այժմ ԱՄՆ եւ եւրոպական երկրներ մեկնելու փաստը: Վերջերս բախուել ենք նմանա-տիպ խնդիրների, երբ այստեղի ընտանիքները, զինուորական ծառայու-թիւնից խուսափելու համար, այնտեղ կարգավիճակ էին ձեռք բերել, նո-րից ետ են եկել ու այստեղ նոր կարգավիճակ ձեռք բերելու հարցեր են

փորձում կարգաւորել: Այդպիսի ընտանիքներում ոչ միայն զինուորական տարիքի երիտասարդները նման միտում ունեն, այլև ողջ ընտանիքն է հակուած գաղթի:

Փորձագէտները այս առնչութեամբ միանշանակօրէն ընդգծեցին, որ ՀՀ-ում տիրող պատերազմական իրավիճակը երիտասարդների աշխատանքային գաղթի դիմելու առումով իհարկէ կապ ունի: Փորձագէտներից մէկը նշեց, որ բազմաթիւ են դէպքերը, երբ հենց այդ պատճառով են դիմում գաղթի: Կայ նաեւ հակառակ երեւոյթը, երբ վերադառնում են յատկապէս իրենց սահմանամերձ բնակավայրը պաշտպանելու: Պատերազմական իրավիճակը իրապէս ազդում է, սակայն ունի երկու դրսեւորում, երբ մի խումբը մնում է, չի մեկնում: Կան դէպքեր, որ մարդիկ ուղղակի պատերազմից խուսափելու համար փորձում են մեկնել արտերկիր՝ իրենց ընտանիքները եւս հանելով այդ իրավիճակից:

Հարց 15.- *«Արդեօ՞ք երիտասարդները աշխատանքային գաղթի դիմում են բանակում ծառայելուց խուսափելու պատճառով, թէ՞ գաղթի դիմում են ծառայութիւնից զօրացրուելուց յետոյ»:*

Այս հարցին՝ փորձագէտների կողմից հնչել է հետեւեալ պատասխանը. մինչեւ վերջին տարիները ՀՀ-ից մեկնող երիտասարդները մեկնում էին հիմնականում ծառայութիւնից յետոյ, վերջին ժամանակներում դա տեղի է ունենում շատ ւաւելի վաղ: Սակայն պէտք է նշել, որ դա ոչ միշտ է յաջողում, քանի որ 14 տարին լրացած լինելու պարագայում արտերկիր մեկնելու դէպքում պետութիւնը օրէնսդրական խնդիրներ է ստեղծում: Այսպիսով, ցանկութիւնը՝ մինչեւ զինուորական ծառայութիւնը ւաւելի մեծ է, սակայն իրականում իրողութիւնը ծառայութիւնն աւարտած լինելու դէպքում ւաւելի իրատեսական ու մեծ է:

Հարց 16.- *«Հից արտաքին աշխատանքային գաղթի դիմելու ռիսկեր»:*

Այս մասին՝ փորձագէտներից մէկը նշեց, որ 21րդ դարում ամենամեծ աղբիւրը մարդկային ներուժն է, եւ արտագաղթելը պետական տեսանկիւնից լուրջ անվտանգային ու ժողովրդագրական խնդիրներ է առաջացնում:

Անձնային տեսանկիւնից առաջնային ռիսկերը վերաբերում են աղջիկներին, մեծանում է մարդու շահարկման (trafficking) վտանգը, մասնաւորապէս նրանց պարագայում, որոնք մեկնում են ամուսնական կարգավիճակ չունենալով: Հիմնականում արաբական երկրներ տեղափոխուած կանայք են, ապա նաեւ՝ Թուրքիա, Միացեալ Արաբական Էմիրութիւններ, Եգիպտոս:

Նշուեց, որ ռիսկերը բազմաթիւ են, այն էլ լուրջ ժողովրդագրական խնդիրներ առաջացնող: Առաջինը այն է, որ մարդկային աղբիւրները ՀՀ-ի համար շատ կարեւոր են, որովհետեւ այդ ներուժը լուծելու է սահմանամերձ բնակավայրերի խնդիրը: Երկրորդը տնտեսական խնդիրն է, երբ

շատ համայնքներ գրկում են երիտասարդ, աշխատունակ տարիքի բնակչութիւնից, ուստի եւ ընկերային ծրագրերի իրականացումը դառնում է չափազանց բարդ: Երբ ուզում ես ինչ-որ գործ նախաձեռնել, տեսնում ես, որ այդ ներուժը՝ երիտասարդութիւնը, որի շնորհիւ միայն հնարաւոր է այդ ծրագիրը կեանքի կոչել, գտնում է արտերկրում: Ճիշտ է, արտասահմանից գումարների փոխանցումը որոշակիօրէն նպաստում է, որ ՀՀում աղքատութեան խնդիրը մեղմացուի, բայց նաեւ ընկերային առումով այդ սեռատարիքային կազմի միջեւ որոշակի խզումներ է առաջացնում:

Հարց 17.- *«Որո՞նք են այն կառոյցները, որ խորհուրդ էք տալիս դիմել գաղթի միտքով ունեցող քաղաքացիներին, որպէսզի տեղափոխութիւնը առաւել անվտանգ կազմակերպուի»:*

Այս հարցին՝ փորձագէտները պատասխանել են այսպէս. ՀՀում հիմնական այդպիսի գործունէութիւն ծաւալողը «Ամբոր Հայաստան» բարեգործական հիմնադրամն է, որը միջազգային ֆինանսաւորում ունեցող հասարակական կառոյց է: Այն մարդու չարաշահման ռիսկերի կանխարգելման ուղղութեամբ բաւականին լայնածաւալ աշխատանքներ է իրականացնում ոչ միայն գնացող, այլեւ այնտեղից վերադառնալու ցանկութիւն ունեցող քաղաքացիների հետ, ովքեր այնտեղ արդէն իսկ ենթարկուել են չարաշահման:

Փորձագէտները անվտանգ տեղափոխութիւնների կազմակերպման վերաբերեալ նշեցին նաեւ, որ հիմնականում ներքին գործերի նախարարութեան ստորաբաժանում համարուող *Միգրացիոն կոմիտէի* քաղաքացին կարող է ստանալ տեղեկատուութիւն՝ ինչպէս մեկնել աշխատանքային գաղթի, ո՞ր երկրում գաղթի ի՞նչ պայմաններ են գործում, սահմանը հատելու ժամանակ ի՞նչ պէտք է անել: Նաեւ նշուեց, որ կան հասարակական կազմակերպութիւններ, որոնք նոյնպէս զբաղւում են այդ հարցերով եւ կարող են աջակցել նմանատիպ հարցերում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վերլուծելով յօդուածի շրջանակում իրականացուած հետազօտութեան արդիւնքները, առաջարկում ենք բարձրացնել կրթական մակարդակը, քանի որ անձնային դաշտի ռիսկերով է պայմանաւորուած ե՛ւ չարաշահման ենթարկուելը, ե՛ւ պետական շահերը վնասելով արտագաղթելը, ե՛ւ անձնային մակարդակում վնասներ կրելը: Դրանք հիմնականում ցածր կրթական մակարդակ ունենալու եւ իրազեկուածութեան ցածր մակարդակի հետ են կապուած, քանի որ ՀՀ դպրոցներում նման աշխատանք չի իրականացում, թէ՛ ո՞ր պարագայում եւ ի՞նչպէս է պէտք արտագաղթի երեւոյթին մօտենալ: Որոշապէս չարաշահման յաճախ ենթարկւում են անչափահասները, որոնք, ընկերային խնդիրների բերմամբ, ընդունում են ե՛ւ իրենց անձին, ե՛ւ պետութեանը վնաս հասցնող առաջարկներ:

Առաջարկում ենք նաեւ, որ պետութեան կողմից նշանակուի լիազօր մարմին, որ զբաղուի աշխատանքային գաղթաձներով, նրանց խնդիրներով, իրազեկմամբ, իրաւունքների, շահերի պաշտպանութեամբ եւ այլ հարցերով, որպէսզի աշխատանքային գաղթը պետութեան կողմից կառավարելի եւ վերահսկելի լինի:

Առաջարկում ենք նաեւ աշխատանքային գաղթի առումով պայմանագրեր կնքել ՌԴից տարբեր այլ երկրների հետ եւս, եւ եղանակային գաղթի գրեթէ 100% կախուածութիւնը ՌԴից նուազեցնել: Սա միայն կը նպաստի ՀՀից երկարաժամկէտ եւ մշտական գաղթի կրճատմանը, գաղթաձներն աւելի պաշտպանուած կը լինեն եւ ՀՀ մտնող դրամական հոսքերը կ'աւելանան:

THE ISSUE OF YOUTH LABOR MIGRATION
(EXPERIMENTAL SOCIOLOGICAL RESEARCH)
(SUMMARY)

ANDRANIK SHAHINYAN
shahinyan_90@mail.ru

This article reviews a sociological examination based on qualitative research and analysis on the issue of youth labor migration. The issue under consideration was considered during a study of a sample of young people with a migration trend and related it to gender, age and social status, as part of a scientific study conducted in the Republic of Armenia. Among the experts are specialists of public and state-branch structures. As part of the research of the article, we examined the concepts of "migration" and "development", in particular, in connection with the process of youth development, and emphasized the importance of youth employment issues, which are the cause of foreign labor migration of young people from the RA.

In the framework of the research, we also addressed the negative consequences of labor migration and risks in the process of self-realization of young people as well as issues of choosing a profession and choosing destination countries. We also considered the issues of safe movement, taking into account the advice of experts regarding the structures dealing with this problem.

ՀԱՅԵՐԷՆԻ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՐՔԵՐԷՆԷՆ¹

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

armenag@gmail.com

ՄՈՒՏՔ

Մարդկության ծանօթ չէ լեզու մը, որ անելի կամ պակաս չափով փոխառություններ կատարած չըլլայ այլ լեզուէ կամ լեզուներէ: Հայերէնը չէր կըրնար բացառութիւն կազմել ու չի կազմեր:

Ամէն լեզու ունի փոխառութեան ուրոյն աղբիւրներ, որոնք կրնան ըլլալ մարդկային ուղղակի շփումները, կրօնական ազդակները՝ մասնաւորաբար հոգեւոր հասարակաց գրականութեան իւրացումը, այլեւ տնտեսական եւ մշակութային սերտ ու երկարատեւ շփումները եւ այլն:

Հայերէնի հնագոյն փոխառութիւնները արդիւնք են մասնաւորաբար միջժողովրդային ուղիղ շփումներու, ինչպէս է պարագան պարսկերէնէ, ասորերէնէ եւ արաբերէնէ փոխառութիւններուն, ինչպէս նաեւ մշակութային յարաբերութիւններու, ինչպէս է պարագան մասնաւորաբար յունարէնէ, որոշ չափով ալ լատիներէնէ եւ եբրայերէնէ՝ մատենագրական ճամբով տեղի ունեցած փոխառութիւններուն:

Փոխառութեանց այս հիմնական օժիտով հայերէնը կերտեց իր Ոսկեդարը՝ մեկնակէտ ունենալով Աստուածաշունչի թարգմանութիւնը դասական հայերէնի եւ շարունակեց իր ուղին մինչեւ ԺԱ. դար, ուր առաջին անգամ թուրք-թաթարական ցեղերը ոտք դրին Հայաստանի հողին վրայ՝ հետզհետէ կլանելով ամբողջ Արեւմտեան Հայաստանը եւ հասնելով մինչեւ Կոստանդնուպոլիս:

Այս համատարած նուաճումը ստեղծեց միջցեղային յարաբերութեանց բոլորովին նոր որակ մը, որ կը բնորոշուէր երկու (եւ ոչ միայն) ժողովուրդներու՝ նուաճողի եւ ենթակայի համակեցութեամբ իրենց պատմութեան ողջ տեւողութեան, ընդհուպ մինչեւ Եղեռնը ու անելի անդին՝ մինչեւ մեր օրերը՝ անոր մէկ կտորակին հետ:

¹ Այս աշխատութեան համար, ի միջի այլոց, օգտագործած ենք հետեւեալ աղբիւրները.- Հրաչեայ Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, բ. հատոր* (Երեւան, 1951), Հրաչեայ Աճառեան, *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառերուն* (Թիֆլիս Մոսկրա-Վաղարշապատ, 1902), Յակոբ Սիրունի, *Պոլիս եւ իր դերը, բ. հատոր* (Պէրթոյֆ, 1930), Elias Riggs, *A Vocabulary of Used Words in Modern Armenian But Not Found in the Ancient Armenian Lexicons* (Smyrna, 1847), Sevan Nişanyan, *Sözlük: Çağdaş Türkçenin Etimolojisi* (Liber Plus Yayınları, Türkiye, 2023), Zeyneb Korkmaz, *Türkiye Türkçesinde Yazı Diline Girmiş Günlük Yaşamla İlgili Alinti Sözcükler ve Ekler* (Ankara, 2023), Robert Dankoff, *Armenian Loanwords in Turkish* (Otto Harrassowitz, Wiesbaden, 1955):

Ճ.Խ.- Բացառաբար պահպանած ենք հեղինակին ուղղագրական մօտեցումները:

Գոյակցութեան այս նոր որակը իր կարգին ծնունդ տուաւ լեզուական ազդեցութեան բոլորովին նոր ու աննախադէպ տարողութեան մը՝ անշուշտ միշտ ի նպաստ նուաճողի լեզուին եւ ի վնաս հայերէնին, ինչպէս նաեւ Փոքր Ասիոյ մէջ խօսուող բազմաթիւ ուրիշ ազգային լեզուներու:

Չկայ, որչափ գիտենք, ծանօթ լեզուաց մէջ լեզու մը՝ որ այնչափ օտարութեանց անձնատուր, այնչափ կերպարանափոխ եղած, վերջապէս այնչափ ինք զինքն ուրացած ըլլայ, ինչպէս մեր վերջին դարերուն Հայերէնը... լեզուի մը այս աստիճան հասնիլը՝ ճաշակագէտ զգացողութեան առջեւ անզգայութիւն եւ բանականութեան ատենաին առջեւ անտարակոյս ոճի՛ր մը համարուելու է²:

Այս ազդեցութիւնը ունի իր այլազան աստիճանները.

--Տեղ-տեղ լեզուական ամբողջական թրքացում,

--Երբեմն հազարաւոր բառերու եւ ասոյթներու ներթափանցում,

--Այլուր ազգային աղաւաղեալ խեղճուկ բարբառներ:

Հայերէնը այս բոլոր վիճակներէն մին, կամ բոլորը, կը պարզեր՝ նայած թէ ան կ'ապրէր Կիլիկիո՞յ, Պոլսո՞յ, թէ՞ գաւառներու մէջ:

Թրքերէնի տիրապետումին կը նպաստէին մշակութային անկախութեան, յատկապէս դպրոցներու բացակայութեան այն մթին դարերը, որոնք յաջորդեցին Անիի, ակելի ուշ՝ Կիլիկիոյ թագաւորութեան անկումին եւ բնիկ հայերու մեծ տեղաշարժին, որ զիրենք տարտղնեց Փոքր Ասիոյ, Ռուսիոյ ու Եւրոպայի զանազան ափերը՝ պարպելով կամ նօսրացնելով հայրենի հողը եւ զրկելով զանոնք համախումբ ապրելու եւ տոկալու պատեհութենէն:

Այսպիսին էր կացութիւնը յատկապէս Արեւմտեան Հայաստանի ու արեւմտահայերէնի մինչեւ ԺԸ. դարու կէսերը, երբ ծնունդ առաւ Մխիթարեան ուխտը³, որուն յաջորդեց ԺԹ. դարու առաջին կէսին Թուրքիոյ մէջ յառաջացած լուսաւորութեան շարժումը, որ հաւասարութեան նշան կը դնէր Թուրքիան բաղկացնող բոլոր ազգութիւններու եւ կրօնքներու միջեւ. այս շարժումը դռները լայն կը բանար հայատառ թերթերու, այլազան հրատարակութիւններու եւ դպրոցներու հիմնադրութեան առջեւ:

Ազգային բարենորոգութիւնը, որուն հիմնաքարը մեր ազգային լեզուի... վերահայացումն էր, կեդրոնացած էր մասնաւորաբար Պոլսոյ մէջ, որ ամէնէն շատ հայերով բնակուած ոստանն էր ամբողջ Թուրքիոյ: Եւ անշուշտ ասկէ ալ ան տարածուեցաւ հայաբնակ երկրորդական քաղաքներն ու գաւառական շրջանները յատկապէս Փոքր Ասիոյ մէջ, բայց նաեւ անկէ դուրս:

² Արսէն Այոընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Նախաշաւիղ*, Մխիթարեանց տպարան, Վիեննա, 1866, էջ 232:

³ Մխիթարեանները մեզ վերահայացուցին. հազիւ Վենետիկ հաստատուած՝ քանի մը տասնամեակ անց լոյս ընծայեցին Մխիթար Սեբաստացիի *Բազմիք հայկազնեան լեզուի* բառարանը (1749), որ այսօր ծանօթ է «Հին հայկազեան բառարան» անունով եւ որ մայրն է *Նոր Հայկազեանին* (1836-37): Այս երկուքը յստակ արձանագրեցին մեր բառազանձի հարազատութեան սահմանները՝ ի բաց վանելով ամէն օտարաբանութիւն, յատկապէս՝ թրքաբանութիւն:

Այս վերահայացումը թիրախ ունէր ամէն բանէ առաջ այն թրքացած բա-
ռամթերքը, որ շնչահեղձ կը դարձնէր խօսակցական հայերէնը. գրաբարը
զերծ էր այդ չարիքէն, սակայն գրաբար իմացողները կը կազմէին մէկ չնչին
համեմատութիւնը հայութեան: Թող որ նոյնիսկ այս վերջինները իրենց աշ-
խարհիկ շփումներուն մէջ հարկադրուած էին դիմելու այն խառնակ հայերէ-
նին, որ ռամիկինն էր եւ տիրական էր իր բանաւոր թէ գրաւոր տարբերակ-
ներուն մէջ: Հայր Ղուկաս Ինճիճեանի դարասկիզբի հրատարակութիւննե-
րը⁴, որոնք ակնդէտ կը սպասուէին Պոլսոյ ու գաւառներու մէջ, բաւական
յստակ գաղափար մը կու տան այդ բարբառի որակին մասին:

Ա. ԲԱՌԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Այտընեան եւ Աճառեան հաւասարապէս կը շեշտեն մասնաւորաբար
բառային փոխառումներու պատճառած մեծ չարիքը: Ըստ Աճառեանի՝ ե-
ղած է պահ, երբ անոնց թիւը հասած է մինչեւ 4000-ի. արդ, այս թիւով փո-
խառութիւնը կ'ենթադրէ բոլորովին ինքնակորոյս լեզու մը, եւ այդպէս ալ ե-
ղած է հայերէնը իր կարգ մը կիրարկութեանց մէջ այն աստիճան, որ մինչեւ
անգամ թուրքերը դիւրաւ հասկցած են իրենց շուրջ խօսուող հայերէնը⁵:

Բայց ահա նմանապէս Աճառեանն է վկայողը. «*Թրքական զօրեղ ազդե-
ցութենէն, ինչպէս բնական օրէնքը կը պահանջէր, ծնաւ զօրեղ ալ հակազ-
դեցութիւն մը. թրքական բառերով ու ոճով գրուածները ծաղրելի ու զգուելի
դարձան հայ ականջներուն*»⁶:

Թրքերէն բառերու թօթափումը կը կատարուի յօգուտ գրաբարեան բա-
ռերու, որոնք կ'իրացուին նոյնութեամբ. ասով ալ կը բացատրուի այն ար-
տասովոր հարազատութիւնը, որ կը գտնենք գրաբարի եւ աշխարհաբարի
բառապաշարներուն միջեւ, հարազատութիւն, որ կը բացակայի մեր աշ-
խարհաբարին ժամանակակից եւրոպական այլ ազգային լեզուներու եւ ա-
նոնց ծնունդ տուած մայրերուն՝ յունարէնի ու լատիներէնի, այլեւ ասորերէնի
ու ղպտերէնի եւ այս վերջիններու հեռաւոր մայրերուն միջեւ:

Լեզուին բառազանձը հայացնելու մտասեւեռումը այնքան խոր ու հետե-
ւողական կ'ըլլայ, որ ան կը տարածուի նաեւ եւրոպական բառերու վրայ, ո-
րոնց առթիւ ճիգ կը դրուի հայացնելու բոլորը անխտիր. «*Այս բնական օրէն-*

⁴ *Ամարանոց Քիզանդեան* (1794), *Տարեգրութիւն* (1799–1802), *Եղանակ Քիզան-
դեան բազմավէպ* (1803–1820), *Ղարապապում* եօթը հատոր (1824–1827):

⁵ Այս առումով բարացուցական է Չապէլ Եսայեանի վկայութիւնը, թէ ինչպէս մի քա-
նի հայ կիներ, շոգենալին մէջ թուրք կիներու հետ վեճի մը ընթացքին «*հայերէ-
նով*» իրարու կ'ըսեն «*Ասանկներուն հախէն մոսկովին խըլըճը կու գայ*», որ պարզ
է, դիւրաւ կը հասկցուի թրքուիներուն կողմէ եւ վեճը աւելի կը բորբոքի:

⁶ *Հրաչեայ Աճառեան, Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ
փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ
Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն*, հրտկ.՝ Լազարեան ճե-
մարանի արեւելեան լեզուաց, **Թիֆլիս**-Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 10:

քով,- կը շարունակէ Աճառեան,- բառակերպութեան գործն ալ չափազանցութեան հասաւ. ամէն մի բառ օտար էր, անխտիր թարգմանուիլ սկսաւ, հոգ չէր եթէ մինչեւ իսկ նոր թարգմանութիւնը աւելի անհասկնալի եւ ւրագեղ դառնար»⁷:

Այս սրտցաւ ախտաճանաչումները անշուշտ տեղին են, այսուհանդերձ լեզուի վերահայացման այն աշխատանքը, որ ժԹ. դարու երկրորդ կէսին համատեղ տարին հայ դպրոցը, մամուլը եւ մտաւորականութիւնը, իսկական սխառնք մը, չըսելու համար դիւցազներգութիւն մըն է, որուն նմանը ծանօթ չէ մեզի ոչ մէկ այլ ժողովուրդի տարեգրութեան մէջ: Կը բաւէ կարդալ օրուան մամուլը կամ այլ հրատարակութիւններ՝ անդրադառնալու համար այս եզակի պատուաբեր իրողութեան:

Աճառեան իր գործի ասարտին կը հաստատէ, որ յիշեալ 4000 բառերէն ընդամենը 170ը կենսունակ մնացին, եւ կու տայ ասոնց ցանկը⁸: Ուշի-ուշով կարդալով այս վերջինները կը նկատենք, որ այդ բոլորէն ընդամենը հազիւ քսանեակ մը բառեր անցած են Մեծ Եղեռնի սեմը ու նուիրականացած ըսփիւռքահայ գրական արեւմտահայերէնի մէջ⁹:

--Ալոճ – alıç/ալիչ

--Առնուիլ – arlanmak/առլանմաք. խպնիլ, ամչնալ

Մեր բառարանները այս բայը կը նկատեն **առնելի** կրաւորականը, մինչդեռ ան ոչ մէկ առնչութիւն ունի այդ բային հետ. սա կազմուած է պատճէնումովը թրքերէնի **ar** արմատին, որ կը նշանակէ ամօթ, խիպ: Հոմանիշ է **քաշուիլ**-ին (տեսնել աւելի անդին): Այս **ar** արմատով թրքերէնը ունի **arsiz/առսըզ** աճանցաւոր բառը, որ նոյնութեամբ փոխառած ենք եւ կը նշանակէ **ar/առ** չունեցող, **ar**-է զուրկ, անկիրթ:

--Արզուլամիշ ընել – arzulamak/արզուլամաք. կարօտնալ, փափաքիլ, ցանկալ

--Աանակ – avanak. իբրեւ յիմար, տխմար, պարզամիտ

--Բաբան – պարիսպներ քանդելու քարարձակ սարք: Մեր մատենագրութեան մէջ ասանդուած է իբրեւ թրքերէնէ փոխառութիւն, որ սակայն չենք գտներ թրքերէն բառարաններու մէջ:

--Բուխերիկ – buxari/բուխարի

--Ելակ – çilek/չիլեկ

--Երշիկ – erişgi/երիշկի. գաւառական բառ է, գրական թրքերէնը կ'ըսէ «սուջուխ»:

--Զիլ – հայերէնը այս բառը սկզբնապէս պարսկերէնէն առած է «զիր»

⁷ Նոյն:

⁸ Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, Բ. հատոր, Երեւան, Հայպետհրատ, էջ 175 եւ յաջորդք:

⁹ Ի տարբանչիւր փոխառութեան կից կը դնենք թրքերէնը եւ անոր հայերէն արտասանութիւնը, երբ հարկ է:

արտասանութեամբ, ապա թրքերէնի ազդեցութեամբ ան հետագային դարձած է **զիլ**:

--**Չմրուխտ** – պարսկերէն zumurrud բառն է, որ թրքերէն դարձած է zümürüt/ զիմրիւթ. հայերէնը այս վերջինէն առած է իր արտասանութիւնը:

--**Թաղար** – պարսկական հնագոյն **տակառ** բառն է, որ թրքական լեզուներ անցած է **թաղար** արտասանութեամբ, եւ ասոնցմէ՝ հայերէնին:

--**Թաս** – tas. գաւաթ, բաժակ: Ծագումով պարսկական է՝ taşt, որմէ անցած է արաբերէնին՝ tass, ասոնցմէ թրքերէնին, այս վերջինէն՝ հայերէնին: Այս բառը այնքան լաւ իւրացուած է, որ մեր եկեղեցին չէ վարանած **թասակ** կոչել կուսակրօնի յատուկ գլխարկներէն մէկը, որ... թասի կը նմանի: Արդեօ՞ք մեր «տաշտ»-ին հետ կապ ունի: Այնճարցին «տեշտիէ» կ'ըսէ արտի որոշ տարածութեան համար:

--**Խամաճիկ** – kuklacik/քուլլաճիք: Kuma/գաւառական «ղումա» կը նշանակէ պոռնիկ: Արդի թրքերէն դարձած է **kukla**. Իսկ **cik** փաղաքշական փոքրացուցիչ մասնիկ է:

--**Խորոտիկ** – xärätik թաթարական բառէն, որ կը նշանակէ գեղեցիկ, սիրուն:

--**Խոֆիլ** – ծագած է xerif/խեռիֆ բառէն, որ կը նշանակէ ցնդած, ցնորած. ուրեմն բայս կը նշանակէ ցնդիլ, զառամութենէ ցնորիլ: Հետագային թրքերէն այս բառը հնչիւնափոխուեցաւ եւ դարձաւ **herif**. մեր փոխառութիւնը տեղի ունեցած է վաղ անցեալին, երբ **x/խ** հնչիւնը առկայ էր թրքերէնի մէջ: Արաբերէն ալ կայ այս բառը՝ «խարաֆ»:

--**Մասուրայ** – masura, որ մագոզն է:

--**Վառօդ** – barut/բարուտ

--**Տոպրակ** – torba/տորբա

--**Քաշուիլ** – çekilmek/չեքիլմէլ: Այս բային միայն փոխաբերական՝ **ամչնալ**, **չհամարձակիլ** նշանակութիւնը ձեւաւորուած է թրքերէն համապատասխան նշանակութեան վրայ:

--**Քոչ** – göç/գէօչ. գաղթ, տեղափոխութիւն: Բայը՝ göçmek/գէօչմէլ. **քոչել**, տուած է նաեւ՝ **քոչուոր** ածականը:

--**Քուրթէշ** – kurd-eşni/քուրտ-էշնի: Կը նշանակէ շառատենդ՝ scarlatine: Ըստ Աճառեանի՝ ասանդուած է նաեւ **քուրթէշ** ուղղագրութեամբ: Արդի թրքերէնը զայն փոխարինած է **kızıl hastalığı** բառակապակցութեամբ, որ բառացի կը նշանակէ «կարմիր հիւանդութիւն»:

Կարգ մը աղբիւրներ չեն վարանիր թուելու նաեւ **թոռն**, **չուան**, **փեթակ** բառերը, որոնք, ճիշդ է, առկայ են թրքերէնի մէջ, եւ որոնց երեքն ալ, սակայն, ոսկեդարեան՝ թէկուզ պարսկերէնէ փոխառեալ մաքուր հայերէն են եւ կիրարկուած են Աստուածաշունչի մէջ: Ուրիշներ ասոնց վրայ կ'աւելցնեն թրքերէնէ հայերէն փոխառեալ մեծաթի գաւառական բառեր, որոնք ունեցած են տեղական կիրարկութիւններ եւ որոնք չեն անցած միասնական գրուոր հայերէնին, նոյնիսկ եթէ անոնցմէ ոմանք շարունակեն գործածու-

թեան մէջ պահել իրենց այդ մասնակի կիրարկութիւնը: Այսպիսիները բանասիրական-պատմական արժէք կրնան ունենալ, ինչպէս կը գտնենք Աճառեանի յիշեալ աշխատութեան մէջ, եւ որոնց սակայն չենք անդրադառնար այս էջերուն մէջ:

Անդին, բանաւոր հայերէնի մէջ որոշ հետետողականութեամբ քաջքշուեցան կարգ մը ուրիշներ եւս, որոնք շիջեցան սերնդափոխութեամբ, ըսենք՝ մօտաւորապէս Ի. դարու աւարտին¹⁰:

Բայեր կազմուած թրքական արմատով կամ հիմքով եւ հայերէն վերջաւորութեամբ. օրինակ՝

պաքլայել	սպասել	bekle(mek)
ազարել	կշտամբել	azarla(mak)
խարճել	ծախսել	harcamak
պարըշիլ	հաշտուիլ	barış(mak)
էզմել	ճմլել	ezm(ek)

Այսպիսիներէն ոմանք ի վերջոյ... հայացած են, ինչպէս՝ **զօրել/zormak, թալլել/talamak, թխմել/tikmak, խայնիլ/ayip, խաշել/haşlamak, նախշել/nakişlamak, ճաթիլ/çatlamak** եւ այլն:

Մակբայներ, որոնց արմատը հայերէն է, ածանցը՝ թրքերէն

չըսածտան	ըսելէ առաջ	demeden
ուտելնիքէն	ուտելու ատեն	yeriken
չ-պաշլա-յած	սկսելէ առաջ	başla-ma-dan

Յատուկ ուշադրութեան արժանի է վերջինին պատճէնումը թրքերէնին. թրքերէնը այս մակբայը կազմած է իր սկսիլ բայի արմատով՝ başla, որուն վրայ աւելցուցած է ma ժխտական մասնիկը, ապա՝ dan ժամանակային ածանցը: Հայերէնը քայլ առ քայլ կրկնած է թրքերէնը՝ չ ժխտական մասնիկ, սկս՝ բայարմատ, ած՝ ժամանակային ածանց (յարակատար):

¹⁰ Յատկանշական է, որ այս նոյն միջոցին բոլորովին հակոտնեայ ընթացք ունեցաւ արեւելահայերէնը, որ այդ նոյն ժամանակամիջոցը հատեց 4000 խորհրդանշական քանակութեամբ օտարաբանութիւններու կուտակումով, մասնաւորաբար ռուսերէնէ, բայց նաեւ, անկախութեան հաստատումով՝ արեւմտեան լեզուներէ փոխառութիւններով. անդին անփոփոխ պահելով նախախորհրդային շրջանին փոխառուած թրքերէն բառերու բեռը՝ հաւանաբար հազար միաւորի չափ, զանազան անուանումներով՝ ժողովրդախօսակցական, բարբառային եւ այլն, առանց երբեւէ յիշատակելու այդպիսիներու թրքական ծագումը: Այս տուեալներով՝ արեւելահայերէնը կը գործէ մօտաւորապէս 5000-է աւելի օտարաբանութիւններով, որոնց թիւը յարատեւ աճելու ընթացքի մէջ է մեր աչքերուն առջեւ: Յիշենք այդ 5000-էն մէկ հատ, նորագոյնը, որ **ուտիլիզացնել** բայն է՝ իբրեւ **գործածել, կիրարկել, ի կիր արկանել**. մարդ կ'ապշի պարզապէս, թէ ինչո՞ւ տեղի կ'ունենայ նման փոխառութիւն մը, երբ մայրենի լեզուդ հազարամեակներէ ի վեր զայն ծածկող լոյսի նման հոմանիշներ տրամադրած է:

Մակբայակերտումի այս ոճը գրեթե անսահմանափակ է. նոյն սկզբունքով կարելի է կիրարկել լեզուի որեւէ բայահիմք՝ դրական կամ ժխտական, ստանալու համար կառույցներ, որոնք խօսքի մէջ կը կատարեն ժամանակի պարագայի պաշտօնը:

Թուականներու պարագային շատ սովորական էր վաթսունէն սկսեալ չորս տասնորդականները անուանել թրքերէն, միաւորները՝ հայերէն. օրինակ՝

ալթմիշ մէկ	altmış bir	վաթսունմէկ
եթմիշ չորս	yetmiş dört	եօթանասունչորս
սէքսէն հինգ	seksen beş	ութսունհինգ
տոխսան եօթը	doksan yedi	իննսունեօթը

Այս թուարկումը շատ սովորական էր ու տարածուն արեւմտահայոց մէջ: Յատկանշական է, որ **հարիւր** թիւը միշտ ալ հայերէն արտասանուած է եւ թրքերէն **yüz** “հարիւր” արտասանութեան կամ գրութեան ոչ մէկ պարագայ կը յիշատակուի:

* * *

Բառային փոխառութիւններու ծիրէն ներս գոյութիւն ունի յարադրաւոր բայերու բաւական լայն շերտ մը, որու թօթափումը յարաբերաբար աւելի դժուար եղաւ եւ պահանջեց շատ աւելի երկար ժամանակ. ան գոյատեւեց սփիւռքահայ առաջին սերունդներու մասնաւորաբար ժողովրդախօսակցական բարբառին մէջ՝ դանդաղօրէն շիջելու համար անցած դարու վերջերուն: Այսպիսիներէն շատերը ունէին իրենց գրական հայերէն մաքուր տարբերակը, որ սակայն այսպէս կամ այնպէս կը խուսափէր միջին հայուն առօրեայ բարբերէն:

Ասոնք այնպիսի բայեր են, որոնք կազմուած են թրքերէն դերբայակերպով մը, որ կը կրէ **miş** ածանցը եւ կը յարադրուի **ըլլալ** կամ **ընել** բայերէն մէկուն՝ նայած թէ ստացուած բայը չէզոք է, թէ՛ ներգործական¹¹:

Գրեթէ բոլորն ալ ունին իրենց գրական տարբերակը, որոնց ընդհանրապէս ծանօթ չէ խօսողը եւ կամ որոնք մաս չեն կազմեր իր գործուն բառաթերքին: Ասոնց կիրարկութեան պատճառներէն մէկն ալ խօսակիցին՝ տուեալ բառի չիմացութեան գիտակցումն է, որով խօսողը կը փորձէ ենթարկուիլ խօսակիցի լեզուական բարբերուն¹²:

¹¹ Թուրքը ինք նման դերբայակերպները կը խոնարհէ առանց օժանդակ բայի: Ուրեմըն հոն ուր հայը կ'ընտէ՝ «Թորոսը **ազարլամիշ ըրաւ**», թուրքը կ'ընտէ՝ «Թորոս **ազարլամիշ**»՝ զեղջելով օժանդակը. սա բոլորովին թրքերէնին յատուկ ոճ մըն է, որ յետին հայը թրքերէն խօսելու առթիւ կը յարգէ, սակայն երբ կարգը կու գայ հայերէնին, իսկոյն կը կիրարկէ օժանդակը:

¹² Մեր տան մէջ հինգ քոյր ու եղբայր, մեր խօսքը ուղղելով մեր գեղջուկ ու անգրաճանաչ մօր ու մեծ մօր, կ'ընտէինք՝ «**Փաթաթէսը պաթմիշ էղեր է**» կամ «**Օսանմիշ էղայ**», նոյնը մեր հօրը ուղղելով պիտի ընտէինք՝ «**Գետնախնձորը փճացեր է**» կամ «**Ձանձրացայ**». նկատել **էղեր է** եւ **էղայ** ձեւերը եւս, որոնք յատուկ էին անոնց, եւ

Ստորեւ օրինակներ՝ յատկապէս **ա** տառով սկսող.

Կը դնենք հայերէն յարադրաւոր ձեւը եւ թրքերէն համադիր բայը՝ հայերէն նշանակութեամբը հանդերձ:

--**ազարլամիշ ընել** – azarlamak/ազարլամակ. սաստել, նախատել

--**ազմիշ ըլլալ** – azmak/ազմակ. բորբոքիլ

--**աթեշլէնմիշ ըլլալ** – ateşlenmek/աթեշլէնմել. տաքնալ, գայրանալ, խռովիլ

--**ալըշմիշ ըլլալ** – alışmak/ալըշմակ. վարժուիլ

--**ալտըրմիշ ընել** – aldirmak/ալտըրմակ. կարելորութիւն տալ, նկատի առնել

--**այըպլամիշ ընել** – ayıplamak/այըպլամակ. այպանել, ամօթանք տալ: Հայերէնը հեռաւոր անցեալին առած է արաբերէն **ayb/այպն**՝ ամօթ եւ կազմած **այպանել** բայը. իսկ նոյն արմատը կրող թրքերէն **ayıplamak**-ը ժողովրդախօսակցական ճամբով տուած է **այըպլամիշ ընել** տարբերակը:

--**այըրմիշ ընել** – ayırmak/այըրմակ. բաժնել

--**այրըլմիշ ըլլալ** – ayırmak/այրըլմակ. բաժնուիլ

--**աշտըրմիշ ընել** – aşdırmak/աշտըրմակ. մէկ կողմէ միւսը անցընել, գլխովը մէկ տալ

--**աշլամիշ ընել** – aşlamak/աշլամակ. պատուաստել

--**առլանմիշ ըլլալ** – arlanmak/առլանմակ. առնուիլ, խպնիլ: Ուրեմն սա իր կարգին տուած է ժողովրդախօսակցական, իմա՝ յարադրական եւ գրական զոյգ տարբերակներ՝ **առլանմիշ ըլլալ** եւ **առնուիլ**:

--**արանմիշ ըլլալ** – aranmak/արանմակ. փնտռուիլ: Այս բայով, որ թելադրուած է թրքերէնէ եւ բոլորովին պատճենուած է թրքերէնի վրայ, կը հասկնանք մէկուն հետ ինչ-որ բախումի մը, ընդհարումի մը հետամուտ ըլլալ. կը ձեւացնէ **փնտռել** բայի կրաւորականը, սակայն ոչ մէկ առնչութիւն ունի այս բային հայերէն նշանակութեան հետ. կիրարկուած է բոլորովին փոխաբերական իմաստով եւ բաւական կենսունակ է տակաւին արդի հայերէնի մէջ՝ գրական թէ ժողովրդախօսակցական:

--**աւլամիշ ընել** – avlamak/աւլամակ. որսալ

--**էզմիշ ընել** – ezmek/էզմեք. ճմլել

--**շաշմիշ ըլլալ** – şaşmak/շաշմաք. ապշիլ

--**ոյմիշ ըլլալ** – uymak/ոյմաք. համեմատիլ, ներդաշնակիլ

--**տալմիշ ըլլալ** – dalmak/տալմաք. տարուիլ

Կը գոհանանք այսքանով, որովհետեւ ասոնց թիւը շատ մեծ է եւ անհամատեղելի է այս յօդուածի սահմաններուն հետ: Աւելին ճանչնալ ուզողները

մենք կ'իւրացնէինք, մինչդեռ այդ նոյն օժանդակները **եղեր է** եւ **եղայ** են, երբ կը դիմէինք մեր հօրը, որուն հետ մեքենաբար գրական ընթացիկ հայերէն կը կիրարկէինք:

կը յղենք Աճառեանի յիշեալ աշխատութեան, որ տրամադրելի է «Գրահավաք» կայքի մէջ:

* * *

Շարունակելով մնալ բառային փոխառութեանց ծիրէն ներս՝ հայերէնը ձեռք բերաւ ածականներու որակական ուժնացումը՝ սաստկացումը արտայայտող ռճաբանական հնարք մը, որ բոլորովին նոր էր ու յատուկ է թրքերէնին եւ կը կատարուի՝ թրքերէնի թէ հայերէնի ածականներուն առաջին երկու հնչիւններուն կցուած բաղաձայնով մը:

Ստորեւ օրինակներ¹³:

- bambaşka**/բամբաշկա – **ուփ-ուրիշ**, բոլորովին տարբեր
- bembeyaz**/բեմբեյազ – **ճեփ-ճերմակ**
- bomboş**/բոմբոշ – **պաս-պարապ**
- bosbüyük**/բոսբիւյիւք – **խոփ-խոշոր**
- dosdoğru**/դոսդոյրու – **շիփ-շիտակ**
- kipkirmizi**/կըպկըրմըզը – **կաս-կարմիր** կամ **կափ-կարմիր**
- kopkoyu**/կոպկոյու – **թափ-թանձր**
- koskoca**/կոսկոջա – **խոփ-խոշոր**
- kupkuru**/կուփկուրու – **չոփ-չոր**
- simsiyah**/սիմսիյահ – **սեփ-սեւ**
- tepteze**/տեպտեզէ – **նոփ-նոր**
- yapyakin**/եպի-եպքըն – **մոս-մօտիկ**
- yapyas**/եպի-եպշ – **թափ-թաց**
- yepyeni**/եփ-ենի – **նոփ-նոր**
- yepyebil**/եփ-եշիլ – **կափ-կանաչ** կամ **կաս-կանաչ**
- yupyumuşak**/եպիեումուշակ – **կաս-կակուղ**

Այս պարագային բնաւ պայման չէ, որ հայերէնը գոհանայ միայն այն բաներով, որ ունի թրքերէնը. հայը, ընդօրինակելով հանդերձ թրքերէնի ունեցածները, կը յաջողի անդին ուժնացնել նաեւ իր կարգ մը սեփական բառերը՝ առանց թելադրուելու թրքերէնէն.

- թփ-թթու** --**ծուփ-ծուռ** --**կփ-կծու** --**կս-կլոր**
- հափ-հաւասար** --**մես-մերկ** --**միս-մինակ**

Բարացուցական է **փամ-փաք** թրքերէնէ փոխառութիւնը, որ կը նշանակէ շատ մաքուր եւ չունի թրքերէն համարժէքը:

Այս բառը թրքերէնի մէջ ունի միայն **pak**/փակ – մաքուր կիրարկութիւնը. հայը ոչ միայն փոխառած է զայն, այլեւ կազմած է անոր ուժնացեալ տարբերակը, չհաշուած համապատասխան բայը՝ **փաքլայել**:

Բառային այս կառոյցները ընդհանրապէս դրական նշանակութիւն ունին եւ կը բովանդակեն ինչ-որ գոհունակութեան զգացում մը. **kupkuru** ը-

¹³ Ասոնց տառադարձութիւնները կատարուած են մետրոպեան՝ արեւելահայ արտասանութեամբ:

սող թուրքը կամ **կաս-կարմիր** ըսող հայը ի մտի ունի դրական յատկանիշ մը, ինչպէս **կաս-կարմիր այտը, խնձորը, կերպասը, շիկացած երկաթը**. թրքերէնէ ոճը փոխ առնող հայը այդ զգացողութիւնը միաժամանակ առած է եւ ճիշդ տեղին ալ կը կիրարկէ զայն:

* * *

Բառային փոխառութեան մէկ ուրիշ տարբերակն էր մեծաթիւ բայերու կազմութիւնը թրքերէն արմատներով եւ հայերէն լծորդներով. օրինակներ՝

--**ազարել** – azarlamak/ազարլամակ. կշտամբել, յանդիմանել, պարսաւել, նկատողութիւն ընել

--**արայել** – aramak/արամաք. փնտռել

--**զայիֆնալ** – zayıflanmak/զայիֆլանմակ. նիհարնալ, հիւծիլ, թուանալ, տկարանալ: Թրքերէնը իր արմատը առած է արաբերէնէ:

--**ղալայել** – մենք այս բառին առաջին անգամ **قلعي/ղալայ-կալայ** (=անագ) արտասանութեամբ հանդիպած ենք արաբական տիրապետութեան շրջանին եւ զայն տառադարձած ենք **կլայեակ** եւ **կլայեկ** ձեւերով: Մեզմէ ետք թրքերէնը իր կարգին փոխառած է **ղալայ** գոյականը նոյնութեամբ, որմէ կերտած է **ղալայջի/կլայագործ** եւ **ղալայլամակ/կլայեկել** բայը: Ուրեմն՝ **ղալայել** եւ **ղալայջի** փոխառութիւն են թրքերէնէ նախքան այս վերջիններուն *kalay, kalayci* եւ *kalaylamak* արտասանութիւնը արդի թրքերէնի մէջ: Գրական հայերէնը իր կարգին հետագային հրաժարեցաւ **ղալայ/կալայ** արտասանութենէն ու նուիրագործեց **կլայեկ** ձեւը՝ իբրեւ հոմանիշ **անագ**-ին:

--**պաշլայել** – başlamak/բաշլամակ. սկսիլ

--**պօքլօյել** – beklemek/բեկլեմեկ. սպասել

Հայերէնը բառս փոխառած է, երբ ան թրքերէնի մէջ կ'արտասանուէր երկու քմային *ä-ով*¹⁴. արդի թրքերէնը զոյգ **e/ե** կ'արտասանէ:

--**սալլայել** – sallamak/սալլամակ. շարժել

--**սախլայել** – saklamak/սակլամակ. պահել. օրին ան կ'արտասանուէր *saxlamak*, եւ ասոր վրայ պատճենուած է մերը:

--**փաքլայել** – paklamak/փակլամակ. մաքրել

Շարքը շատ երկար է, ուստի կը գոհանանք այս նմուշներով, որոնք իրենց խայտաբղէտութեամբ կ'ընդգրկեն մնացեալները:

Աւելցնենք, որ Աճառեան բառային փոխառութիւններու շարքին չէ անդրադարձած այս վերջիններուն, որոնք անհամեմատ աւելի երկար կեանք ունեցան հայերէնի մէջ, ընդհուպ մինչեւ անցած դարու կէսերը, թերեւս քիչ մըն ալ աւելի՝ ընդմիջտ անհետանալու համար այնուիտեւ:

Բառային փոխառութեան շատ կենսունակ շերտ մըն էր թրքերէնի յարադրաւոր բայերու բառացի թարգմանութիւնը հայերէնին մէջ:

¹⁴ Համարժէք է արաբերէնի *ալեֆին*:

Թրքերէնը աղքատ է բնիկ բայերով. այս թերութիւնը դարմանլու եւ իր կարիքները հոգալու համար ան մեծաթիւ յարադրաւոր բայեր կը կազմէ սովորական համադիր բայերէ. օրինակ՝ թրքերէնը չունի **շնչել** համադիր բայը, փոխարէնը կ'ըսէ՝ **շունչ առնել**: Հայը, իր տրամադրութեան տակ ունենալով հանդերձ **շնչել** բայը, իր կարգին կ'ըսէ «**շունչ առնել**», եւ այսպէս հայերէնի մէջ յառաջացած են թրքերէնէ փոխառեալ մեծաթիւ յարադիր կառոյցներ՝ հայերէնի բնիկ համադիր կառոյցներու կից, ձեւով մը՝ իբրեւ հոմանիշ այս վերջիններուն:

Ստորեւ օրինակ մը **առնել/almak** բայով.

--շունչ առնել	nefes almak	շնչել
--գրի առնել	kaleme almak	արձանագրել
--կրակ առնել	ateş almak	բռնկիլ
--երես առնել	yüz almak	շփանալ
--լուր առնել	haber almak	տեղեկանալ
--աչք առնել	göz almak	համարձակիլ
--օրինակ առնել	ibret almak	խրատովիլ
--սիրտ առնել	yürek almak	համարձակիլ
--առաջքը առնել	önünü almak	կանխել
--խոնաւութիւն առնել	nem almak	խոնաւնալ
--դաս առնել	ders almak	խրատովիլ
--վրան առնել	üstüne almak	առնչովիլ
--ծախու առնել	satun almak	գնել
--ձեռք առնել	ele almak	ստանձնել
--տակը առնել	dibi almak	այրիլ ¹⁵
--սիրտը առնել	yureyini almak	ողոքել
--հոգին առնել	canini almak	նեղել, սպանել

Այլուր կրկնուողը բայական յարադիրն է. տեսնենք **yüz/երես**-ը.

--երես առնել	yüz almak	շփանալ
--երես տալ	yüz vermek	շփացնել
--երեսին զարնել	yüzüne vermek	մեղադրել
--երես դարձնել	yüz çevirmek	սրդողիլ
--երես գալ	yüze gelmek	բացէ ի բաց խօսիլ
--երեսը բռնել	yüzü tutmak	համարձակիլ
--երեսէ իյնալ	yüzden düşmek	վարկաբեկիլ
--երեսէ ձգել	yüzden brakmak	քամահրել
--երեսին խնդալ	yüzüne gülmek	շողոքորթել
--երեսը թթուեցնել	yüzünü ekşitmek	դժկամակիլ
--երեսը պատռել	yüzünü yırtmak	լկտիանալ

¹⁵ Եփի դրուած սանի համար կ'ըստի:

--ի՞նչ երեսով
թեամբ

ne yüzle?

ի՞նչ համարձակու-

Երբեմն ալ կը պատահին ապշեցուցիչ հանգիտութիւններ. օրինակ **բուն հարկանել-el furmak/էլ ֆուրմակ-ձեռք զարնել**: Աշխարհաբարը այս դարձուածային յարադրութիւնը առած է գրաբարէ՞ն, թէ՞ թրքերէնէն: Կամ թէ գրաբար՝ **գան ըմպել**, թրքերէն՝ **dayak yemek**/դայակ եմեկ, աշխարհաբար՝ **ձեծ ուտել**, ուր աշխարհաբարը **ձեծ ըմպել** ըսելու փոխարէն՝ բառացի հետեւած է թրքերէնին:

Պէտք չկայ հաստատելու, որ այսպէս գոյացած յարադրատր քայերը, հակառակ իրենց ժողովրդախօսակցական ծագումին, շատ լայն կիրարկութիւն ունին նաեւ արդի գրական հայերէնի մէջ:

Բ. ՇԱՐԱՀԻՒՍԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ասոնք խօսքի կազմութեան ծառայող տարրեր են, որոնք ցոյց կու տան լեզուական փոխառութեան անելի յառաջացած որակ մը, քան բառային փոխառութիւններն են եւ որոնք բաւական այլազան են. սկսած բառաձեւերէ, անցնելով պարզ բառակապակցութիւններէ՝ հասնելու համար մինչեւ շարահիւսական այլազան տարողութիւն ունեցող հատուածներու եւ ի տարբերութիւն ժողովրդախօսակցական փոխառութեանց՝ թափանցած են գրական հայերէնի մէջ եւս, ունեցած են եւ կը շարունակեն ունենալ համահայկական ազատ կիրարկութիւն:

Այս թափանցումները կարելի եղած են փոխառութեանց աննկատելի ու սքողուած նկարագրին հետեւանքով, ինչ որ թոյլ տուած է անոնց խուսափելու աշխարհաբար ուղղափառ լեզուամտածողութեան պատուարներէն: Այլ խօսքով՝ անոնք իրացուած ու հայացուած են:

* * *

1. Կցականութիւն

Շարահիւսական փոխառութեան ամէնէն աչքառու յատկութիւնը կցականութեան երեսոյթն է, որուն մեծ ախոյեանն է թրքերէնը, մինչ հնդեւրոպական լեզուներուն մէջ հայերէնը ճանչցուած է իբրեւ միակ կցական լեզուն:

Առ այս՝ լեզուները կը բաժնուին երկու խումբերու՝ **կցականներ**¹⁶ եւ **անջատականներ**¹⁷:

Կցական կը կոչուի այն լեզուն, որուն բառերը կրնան թեքիլ - մասնաւորաբար հոլովուիլ - միւս կողմէ՝ իրենց կցել ձեւաբանական այլազան կարգեր արտայայտող զանազան մասնիկներ ու տարրեր. օրինակ՝ **յաղթականներ-ու-ն-ը**¹⁸. այս մէկ հատիկ բառին մէջ խտացած են նախ բառար-

¹⁶ Agglutinant.

¹⁷ Isolant, amorphe:

¹⁸ Նաեւ՝ **մերիներունինը, ձերիներունինէն** եւ այլն:

մատը՝ **յաղթ**, ապա ածականակերտ ածանց մը՝ **ական**, ապա յոգնակերտ մասնիկը՝ **ներ**, հոլովական մասնիկը՝ **ու**, ծայնակապ մը՝ **ն** եւ յօդը՝ **ը**։ ուրեմն բառի մէջ համադրուած են վեց ձեւոյթներ։ Ան կ'ակնարկէ ինչ-որ «յաղթանակ տարած ծանօթ անձերու մէկ ունեցածին»։ Ամէն լեզու, օրինակ՝ ֆրանսերէնը, անգլերէնը, իտալերէնը, չի կրնար մէկ բառով արտայայտել այս բոլորը, այլ կը կարօտին քանի մը բառերու։ Ուրեմն աշխարհաբար հայերէնը, յարաբերաբար յիշեալ լեզուներուն, օժտուած է կցականութեամբ. անցողակի ըսենք, որ հնդեւրոպականներուն մէջ յատկանշօրէն ան մի'ակ կցականն է՝ սկսած գրաբարի օրերէն, ուր ան օժտուած էր շատ համեստ կցականութեամբ մը բաղդատած լատիներէնին եւ յունարէնին, եւ շատ աւելի՝ աշխարհաբարի մէջ։

Իր կցականութեամբ, ինչպէս ըսինք, համբաւաւոր է թրքերէնը, որուն բառերը կրնան կրել մինչեւ 10–15 մասնիկներ։ Կան կցականութեամբ օժտուած ուրիշ լեզուներ եւս։

* * *

Թրքերէն կցականութեան նմուշներ

Avrupa Եւրոպա

Avrupali Եւրոպացի

Avrupalılar Եւրոպականացի

Avrupalılar Եւրոպականացու

Avrupalılarım Եւրոպականացներ

Avrupalılarımın Եւրոպականացնել

Avrupalılarımın Եւրոպականացումներ

Avrupalılarımın Եւրոպականացնել

Avrupalılarımın Եւրոպականացնել

Avrupalılarımın Եւրոպականացնել

Avrupalılarımın Եւրոպականացնել

Ինչպէս նկատելի է, հայերէնը բաւական տեղ քայլ կը պահէ թրքերէնին հետ. յատկանշական է, օրինակ, **չեւրոպականացածները**, որ գումարն է եօթը ձեւոյթներու. արեւմտեան ոչ մէկ լեզու կրնայ նման սխալներ իրագործել։

Հիմա հարց կը ծագի. թրքերէնը դեր մը ունեցած է՝ հայերէնի ցուցաբերած կցականութեան մէջ։ Կարելի՞ է ըսել, որ հայերէնը թրքերէնին կը պար-

¹⁹ Թրքերէն ամենաերկար բառը՝ **muvaḫḫak**iyetsizleştiricileştiriveremeyebileceklerimizdenmişsinizcesine, օժտուած է **muvaḫḫak**՝ յաջող-յաջողած, արմատով եւ 15 ածանցով։ Ունի եօթանասուն տառ։ Կը նշանակէ՝ «Իբրեւ թէ դուք մէկն էիք անոնցմէ, որ մենք ի վիճակի չենք դիւրաւ այլափոխելու եւ դարձնելու մէկը որ ձախողութիւն կը բերէ»։

տի իր այս յատկութիւնը: Սակայն թրքերէնը ուրիշ ժողովուրդներու՝ արաբներու, յոյներու, ասորիներու հետ ալ շփուեցաւ այնքան, որքան հայերու հետ, երբեմն ալ աւելի, ինչո՞ւ անոնք կցականութեան ոչ մէկ յատկանիշ վաստակեցան, եւ միայն հայերէնն է, որ քայլ պահեց թրքերէնի հետ: Այս կը խօսի ինչ-որ ներունակութեան մը մասին, որ թաքնուած ունէր հայերէնը եւ ի յայտ եկաւ ու զարգացաւ թրքական խայծով, թրքերէնին նմանելու մարմաջով: Առանց նման ներունակութեան ստեղծած պարարտ ենթահողին՝ այդ կցականութիւնը չէր կրնար ինքնակոչ պատուաստուիլ հայերէնին:

2. Բառակապակցութիւններ. ասոյթներ եւ դարձուածքներ

Բառակապակցութիւնները կը կազմեն շարահիւսական փոխառութեանց առաջին աստիճանը եւ առ այս անոնք կը սերտուին շարահիւսութեան մէջ: Ասոնք ձեւով մը խօսքային հատուածներ են: Աշխարհաբարը իր լաւագոյն օրերուն ալ մեծապէս ներթափանցուած էր այսպիսիներով, որոնց բոլորն ալ իւրացուեցան գրական հայերէնէն:

Ստորեւ օրինակներ.

--անոր երեսէն ²⁰ (պատճառով)	onun yüzünden
--իմ կռնակէս (շնորհիւս)	benim sirtimdan
--հասակին չնայելով (արհամարհանք)	boyuna bakmayarak
--այս էր ըլլալիքը (ձախողութիւն մը)	bu idi olacağı
--վաղը տօն ըլլալով (պատճառ, հիմունք)	yarin bayram olarak
--եկուր տես որ	gel bak ki
--մնաց որ	kaldi ki
--կը բաւէ որ	yetiştir ki
--ուր մնաց որ	nerde kaldı ki
--եթէ ինծի հարցնես (ինծի հարցնես նէ)	bana sorarsan
--եթէ ինծի մնայ (ինծի մնայ նէ)	bana kalsa
--պարապ տեղը (ի զուր)	boş yerde
--գլխուս վրայ (սիրով)	baş üstüne
--մարդու տեղ դրինք (անարժանաբար յարգեցինք)	adam yerine koduk
--այսքան բարիքի դիմաց	bu kadar iyilik karşısında
--ասոր վրայ (ասոր մասին)	bunun üzerine

²⁰ Գրաբարը ունէր **յերեսաց** նախադրութիւնը, որ բառացի կը նշանակէ «երեսէն» եւ կրնայ աշխարհաբարի նոյնանուն բառի մայրը ձեւանալ, սակայն ճիշդ չէ. ան կը նշանակէ «տեսքէն».

--Հանին զնոսա **յերեսաց** փարաունի (Ելք, 10/11):

--Եւ զիինն **յերեսաց** նորոյն հանիչիք ի բաց (Ղեւտացիք, 26/10):

--Մի՛ ընկենուր զիս, Տէր, **յերեսաց** քոց եւ զիոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն (Սաղմոս, 50/13):

Աշխարհաբարի երեսէն-ը կը նշանակէ **պատճառով** եւ յառաջացած է թրքերէնի թելադրանքով:

3. Որակական բաղդատութեան աստիճան

Գրաբարը երկու առարկաներու որակական բաղդատութիւնը կը կատարէր.-

--երկրորդը օժտելով **քան** նախադրութեամբ եւ հայցական հոլովով. օրինակ՝ պատիժ իմ **մեծ է քան** զյանցանս²¹ իմ:

--Յաճախ նախադրութեան կցելով **աւելի/նուազ, ի վեր/ի վայր** սաստկացուցիչները, օր.՝ պատիժ իմ **աւելի մեծ է քան** զյանցանս իմ կամ Պատիժ իմ **ի վեր է քան** զյանցանս իմ:

Աշխարհաբարը ասոնք աւելի կամ պակաս պահելով հանդերձ օժտուեցաւ առանց նախադրութեան բաղդատութեան այլ միջոցով մը, որ բացառական հոլովն է. օրինակ՝

ա. Առաւելական աստիճան

--Պատիժս **յանցանքէս** մեծ է: Cezam **kabahatimdan** büyük.

--Պատիժս **յանցանքէս աւելի** մեծ է: Cezam **kabahatimdan daha** büyük.

բ. Նուազական աստիճան

--Վարձք քո նուազ եղեն քան զվաստակ քո:

--Վարձքդ վաստակէդ նուազ եղաւ: --**Kerin emekinden eksik oldu.**

Ինչպէս կը նկատենք՝ երկու պարագաներուն ալ աշխարհաբարը բոլորովին պատճենուած է թրքերէնի վրայ:

Ունինք բաղդատական աստիճանի ուրիշ ցուցիչ մը եւս, որ շատ լայն կիրարկութիւն ունեցած է յատկապէս արեւմտահայերէնի մէջ. **էն** բառն է այդ, որ ցոյց կու տայ ածականի գերադրական աստիճանը. առաւելական՝ **էն մեծ**, կամ նուազական՝ **էն պզտիկ**: Ազատօրէն կը դրուի նաեւ փոխանուններու վրայ **էն մեծը, էն լաւը, էն աղուորը**. սա ընդօրինակութիւնն է թրքերէնի համանուն մակբային՝ **en** büyük, **en** iyisi, **en** güzeli:

Մասնաւորաբար ժողովրդախօսակցական ոճին յատուկ՝ ան յաջողած է թափանցել կարգ մը գրողներու գործերուն մէջ: Գրեթէ անհետացած է այլեւս, սակայն մերթընդմերթ գլուխ կը ցցէ չակնկալուած անկիւնէ մը:

* * *

Բացառականով աշխարհաբարը կը ձեւաւորէ բայական շարահիւսական պաշտօն մը, որ է պատճառի պարագան. սա իր կարգին բնորոշ է թրքերէնին. օրինակ՝

Seni çok sevdiğimden vazgeçemeyorum²² senden.

²¹ Ուշադրութիւն. այս բառի վերջի **ս** բաղաձայնը ստացական յօդ չէ. գրաբարը ստացական յօդ չունէր. ան պարզապէս յոգնակի հայցականի **ք** մասնիկի **ս**-ի վերածումն է՝**յանցանք-զյանցանս, վերք-զվէրս, ձեռք-զձեռս** եւ այլն:

²² Այս մէկ բայը հարազատօրէն թարգմանելու համար չորս ձեւոյթ կիրարկեցինք հայերէն:

Քեզ շատ սիրելիս²³ չեմ կրնար կոր հրաժարիլ քեզմէ:

Նաեւ՝

--Ամօթէն գետնին տակ անցաւ:

Ayipindan yer altına girdi.

--Գինիէն գլուխս դարձաւ:

Şarapdan başım döndü.

--Անօթութենէն կաշի-ոսկոր մնացած է:

Acliğından deri-kemik

kalmış.

Գրաբարի բացառականը, ինչպէս տեսանք, այս յատկութիւնը չունէր. նոյնը տրականով եւ **առ** նախդիրով կը ստանար ան.

--**Նա փախեաւ առ երկիրդի** “ան վախէն փախաւ”:

--**Նորա առ տխմարութեան կարծեցին** “անոնք տխմարութիւննէն կարծեցին”:

Գրաբարը որեւէ յօդ չէ գործածած, մինչդեռ աշխարհաբարը դիմորոշ յօդով օժտած է եզակի վախէն-ը եւ զոյգ՝ դիմորոշ եւ որոշիչ յօդերով օժտած է տխմարութիւն-նէն-ը. երկուքն ալ տառացի պատճէնուած են թրքերէնին վրայ:

4. Յօդեր

Գրաբարը ունէր **ս, դ, ն** յօդերը, որոնք ցուցական էին՝ **այս, այդ, այն** դերանուններու համազօր:

Քաղաքս կը նշանակէ «այս քաղաքը»: Ուրեմն՝ **այս քաղաք** կամ **քաղաքը**: Բացառուած չէր, որ դերանունն ու յօդը միաժամանակ հանդէս գային. օրինակ՝ Այսպէս խառնեալ են **տարերքդ այդ**: Աշխարհաբարը անշուշտ իւրացուց այս կիրարկութիւնը. օրինակ՝ **Աշխարհումս** ախ չիմ քաշի... (Այս աշխարհի մէջ...), **օրերս քաղաքս** ժամանեց Աբիսողոմ աղան... (Այս օրերը այս քաղաքը...), **օրերս** նոր միջադէպ մը պատահեցաւ:

Աշխարհաբարի մէջ այս նոյն յօդերը օժտուեցան նախ եւ առաջ ստացականութեամբ՝ ենթադրաբար թրքերէնի թելադրանքով, միւս կողմէ՝ «ն»-ին կից, որ յատկացուեցաւ ձայնատրայանգ բառերուն, աւելցաւ «ը», որ յատկացուեցաւ բաղաձայնայանգ բառերուն.

--Տուն**ս**, տուն**դ**, տուն**ը**... Evim, evin, evi: Որդի**ս**, որդի**դ**, որդի**ն**... Yavrum, yavrun, yavrusu²⁴:

²³ Նկատել **սիրելիս** մակբայական կառոյցի կցականութիւնը, որ պատուով կը մրցի թրքերէն համապատասխան կառոյցին հետ եւ որուն ոչ մէկ հնդեւրոպական լեզու կրնայ հաասարիլ:

²⁴ Նկատել հետեւեալը. բաղաձայնայանգ բառի ետին թրքերէնը դրած է **i** ստացական յօդը, որ փոփոխական է ըստ թրքերէնին յատուկ ձայնատրոներու ներդաշնակութեան քառածեւ կանոնի մը, իսկ ձայնատրայանգ բառի ետին դրած է **su** յօդը, որ նմանապէս փոփոխական է ըստ նոյն քառածեւ կանոնին: Թրքերէնը ստացականէն զատ ուրիշ յօդ չունի:

Իրարու կը համապատասխանեն՝ առաջինին մէջ **ս/մ, դ/ո, ը/ի**, իսկ երկրորդին մէջ՝ **ս/մ, դ/ո, ն/ս**:

5. Պատմողական բայեր

Հայերէնը իւրացուցած է բայի նշանակութիւնը պատմողաբար արտայայտելու եղանակ մը, որ կ'օգտագործէ **եղեր** եղանակիչը. ան կ'աւելնայ սահմանականի բոլոր բայածեւերու վրայ՝ **կը տեսնէ եղեր, կը վազէի եղեր, պիտի բողոքէ եղեր, կերած է եղեր** եւ այլն: Ասոնք կ'անուանեն լսովի եւ բազմանշանակ գործողութիւններ, որոնց նրբութիւնները կը գիտակցուին, զգալի կը դառնան խօսքի հնչերանգէն. անով կարելի է ակնարկել հաստատ, ստոյգ գործողութիւններու, միւս կողմէ կրնան մատնել խօսողին որոշ վերապահութիւնը, երբեմն ալ հեզնանքն ու ծաղրը կիրարկուած բայի գործողութեան կամ անոր ենթակային հանդէպ: «**Գիտէ եղեր**» ըսողը միշտ համոզուած չէ, որ տուեալ անձը իրօք գիտէ. ուրիշներ ըսած են, ինք ալ կը տեղեկագրէ՝ վրան աւելցնելով իր վերաբերումը: Ահա այս կառոյցը մաքուր թրքերէն է եւ կը ստացուի անոր **imiş** ձեւոյթով. **severimiş** – կը սիրէ եղեր, **isterimiş** – կ'ուզէ եղեր եւ այլն:

6. Թուական

Գրաբարի, – ինչպէս նաեւ մեզ շրջապատող հին ու նոր այն բոլոր լեզուներուն մէջ, որոնց հետ շփուած է հայը, իմա՝ պարսկերէն, յունարէն, ասորերէն, արաբերէն, այլեւ արդի լեզուները՝ ֆրանսերէն, անգլերէն, ռուսերէն եւ այլն, – մէկէն վեր թուականները կը պահանջէին յոգնակի որոշեալ. օրինակ՝ **երկու ամբ, հինգ պատառք, տասն մասունք** եւ այլն:

Միայն թրքերէնն է որ ասոնք եզակի կը կիրարկէ, այնպէս ալ աշխարհաբար հայերէնը՝ արեւելահայ թէ արեւմտահայ. օրինակ՝ **iki sene** – երկու տարի, **beş lokma** – հինգ պատառ, **on kisim** – տասը մաս...

Երբ որոշեալ գոյականը կը ստանայ երկրորդ որոշիչ մը, թրքերէնն ու հայերէնը կը շարունակեն ներդաշնակ ընթանալ. օրինակ՝ **iki dar seneler** – երկու նեղ տարիներ, **beş lezzetli lokma** – հինգ համեղ պատառ, **on müsavi kisim** – հինգ հաւասար մաս:

Արդի գրողները շատ յաճախ յոգնակի կը կիրարկեն այսպիսիները՝ ազդուելով այն օտար լեզուներէն, որոնց քերականութեան շատ աւելի ժամանակ յատկացուցած է ան, քան հայերէնին, եւ ուրեմն շատ աւելի ազդուած է անոնցմէ: Հայերէնի դասաւանդութեան առթիւ այս կանոնին գրեթէ չ'ակնարկուիր, ակնարկուի իսկ՝ ապա բաւականաչափ ճիգ չի թափուիր ամրապնդելու համար կանոնը. բոլոր պարագաներու մէջ օտար քերականութիւնը աւելի խոր կ'իջխէ արդի հայուն լեզուամտածողութեան վրայ, որովհետեւ աւելի հետեւողականութեամբ կ'ուսուցուի ան մեր դպրոցներուն մէջ: Շեղումները անհաւասար են գրողէ-գրող, իսկ երբեմն ալ նոյն գրողը կը շեղի իր ուղղութենէն եւ խառնակ կը կիրարկէ որոշեալ գոյականին թիւը:

Հայերէնը թրքերէնէն կը շեղի եւ անշեղօրէն յոգնակի կը կիրարկէ որոշ-եալը այն պարագային, երբ ան կ'օժտուի **ը** որոշիչ յօդով. օրինակ՝ երկու նեղ **տարիները**, հինգ համեղ **պատառները**, տասը հաւասար **մասերը**:

Թրքերէնը սովորութիւն մը ունի առարկաները համրելու առթիւ թուականին ու առարկային անունին միջեւ ւեւցնելու քանակ ցոյց տուող զանազան բառեր. օրինակ՝ «երկու խնձոր» ըսելու փոխարէն՝ ան կը նախընտրէ ըսել՝ «երկու հատ խնձոր». հայերէնը շատ հեզասահ հետեւած է այս ոճին, ուր այդ բառերը բոլորովին ւեւրդաբանութիւններ են. ուրեմն՝ երկու **հատ** խնձոր (iki **tane** elma), հինգ **գլուխ** ոչխար (beş **baş** koyun), տասը **կտոր** գորգ (on **parça** halı):

Շատ սովորական էր վաթսունէն սկսեալ չորս տասնորդականները անուանել թրքերէն, միաւորները՝ հայերէն. օրինակ՝

ալթմիշ մէկ	altmış bir	վաթսունմէկ
եթմիշ չորս	yetmiş dört	եօթանասունչորս
սէքսէն հինգ	seksen beş	ութսունհինգ
տոխսան եօթը	doksan yedi	իննսունեօթը

Այս թուարկումը շատ սովորական էր ու տարածուն արեւմտահայոց մէջ: Յատկանշական է, որ **հարիւր** թիւը միշտ ալ հայերէն արտասանուած է եւ թրքերէն **yüz** “հարիւր” արտասանութեան կամ գրութեան ոչ մէկ պարագայ կը յիշատակուի:

7. Նախադրութիւններ եւ յետադրութիւններ

Գրաբարը ունէր միայն նախդիրներ եւ նախադրութիւններ:

ա) Նախդիրներ՝ **առ, գ, ընդ, ըստ, ի/յ, ց**: Գրաբարի մէջ ասոնք միշտ դրուած են բառին սկիզբը՝ կից կամ անջատ. աշխարհաբարի մէջ կը շարունակեն նախադաս մնալ հոն, ուր կը կիրարկուին. օրինակ՝ **առ այժմ, ընդ միշտ, ըստ հասակի, սարն ի վեր, յաւուր պատշաճի, ցկեանս** եւ այլն:

բ) Գրաբարը ունեցած է նախադրութիւններու բաւական ճոխ օժիտ մը. ինչպէս՝ **առանց, առընթեր, բաց/բայց** (բացի), **դէպ** (դէպի), **զատ, զհետ** (հետ), **ընդդէմ, ի մէջ** (միջեւ), **ի միջի** (մէջը), **ի վերայ** (վրան), **ի վեր, ի տեղի** (տեղ), **կից, հակառակ, համաձայն, համեմատ, հանդէպ, մինչ, մինչեւ, մօտ, յաղագս, յանդիման, յետ, յօգուտ, նման, ներքոյ, պատճառաւ, պէս, վասն, փոխանակ, փոխարէն, քան** եւ այլն: Ասոնց գրեթէ բոլորը անցած է աշխարհաբարին, հաւանաբար բացառութեամբ **յաղագս**-ի եւ **ներքոյ**-ի, ընդհանրապէս անփոփոխ կառոյցով կամ երբեմն թեթեւօրէն փոխուած (տե՛ս՝ փակագծերը):

Շարադասութեան տեսակէտէ նախադաս մնացած են՝ **առանց, զերդ, դէպ, մինչ, մինչեւ, յետ, յօգուտ, վասն, փոխանակ, քան**: Նախադաս ու յետադաս կը կիրարկուին՝ **բացի, ընդդէմ, հակառակ, յանդիման, փոխարէն**: Յետադաս դարձած են մնացեալ բոլորը, որ է մեծամասնութիւնը:

Իսկ ասոնց վրայ աշխարհաբարը իր կողմէ անլցուցած է յետադրութիւններու կամ իբրեւ յետադրութիւն կիրարկուող բառերու պատկառելի թիւ մը, ինչպէս՝ **անունով, առաջ, առթիւ, դուրս, երեսէն, զուգընթաց, ընթացքին, ժամանակ, կողմ, կողմէ, համեմատ, հաւասար, հետեանքով, հիմամբ/հիման վրայ, ձեռքով, միջոցին, ներս, ներքեւ, նկատմամբ, նպատակով, թափ, պատճառով, վար, վերեւ, տարբեր, օգտին, օրօք** եւ այլն:

Ասոնց դիմաց մէկ հատիկ նախադրութիւն չէ հնարած ան. այս ալ ցոյց կու տայ, որ լեզուական ամբողջ կարգ մը անհետացած է աշխարհաբար լեզուամտածողութենէն:

Կարելի՞ է ըսել, թէ այս բոլորը տեղի ունեցան թրքերէնի ազդեցութեամբ, – փաստօրէն ուրիշ ոչ մէկ ազդեցութիւն կարելի չէ ակնկալել, քանի թրքերէնը մեր շուրջը խօսուող միակ լեզուն էր, որ միայն յետադրութեամբ կը կազմէր իր խօսքը, միաները՝ ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն, արաբերէն՝ բոլորը օժտուած են միայն նախադրութեամբ:

8. Ժողովրդական առածներ ու ասոյթներ

ա) Ժողովրդական առածներ

Համատեղ կենակցութեան երկար դարերուն հայերէնը հետեւողականօրէն որդեգրած է թրքերէնի ժողովրդական առածները, որոնց ծագումը որեւէ հայու մտքով դժուար թէ վերագրուէր թուրքին կամ թրքերէնին, այնքան հարազատ կը հնչեն անոնք. տեսնենք մէկ քանին.

լեզուն ոսկոր չունի	dilin kemiği yok
ծուռ նստինք, շիտակ խօսինք	eğri oturalım doğru konuşalım
երես տուինք, աստառն ալ կ'ուզէ	yüz verdik astarinida istiyor
անձրեւէն փախանք, կարկուտի բռնուեցանք	yağmurdan kaçtik doluya tutulduk
շունը կը հաջէ, կարաւանը կ'անցնի	it havlar kevrân geçer
ծուկը գլխէն կը հոտի	balik baştan kokar
կճուճը գլորեցաւ, իր խուփը գտաւ	tencere yuvarlandı kapağını buldu
մեծ էշը ախոռը մոռցանք	büyük eşeyi ahirda unuttuk
անուշ լեզուն օճը ծակէն կը հանէ	tatlı söz yilani deliğinden çıkarır
էշը հեծեր՝ էշ կը փնտռէ	eşeğe binmiş eşek arıyor.
քիթէն ինկողը հազար կտոր կ'ըլլայ	burnundan düşen bin parça olur.
կարճ օրուան շահը պզտիկ կ'ըլլայ	kısa günün kârı az olur.

բ) ասոյթներ²⁵

գլուխդ որջ ըլլայ	Աստուած տայ
անցած ըլլայ	ասոր ալ փառք
աչքդ լոյս	շատ տարիներու

²⁵ Թրքերէնը չեմ տուած՝ չճանրաբեռնելու համար յօդուածս:

նպատակիդ չհասնիս
քիթէդ-բերնէդ գայ
օճախդ մարի
մարդ գլուխ
գրպանը ծակ
քաշելիք ունինք
խօսքս անոր
գործիս կու գայ
մեր մէջը մնայ
հոգիդ սիրես
համը փախաւ
խելքիս պիտի գայ

եղած չըլլայիր
Աստուծմէ գտնես
Աստուած պելադ տայ
կրակի գին
շուքէն կը վախնայ
ա՛յս էր ըլլալիքը
մեղքը վիզդ
Աստուած խելք տայ
տակը չեմ մնար
ըլլալիքը եղաւ
եղբօրս ըսեմ
բերանս բանալ մի՛ տար

Ասոնք իրենց կարգին այնքան համարկուած են մեր արդի աշխահաբարին՝ գրական թէ ժողովրդախօսակցական, որ մարդ պիտի դժուար հաւատար, թէ եկուոր փոխառութիւններ ըլլային այսպիսիները:

գ) փոխաբերութիւններ

Ստորեւ կը բերենք այդպիսիներու շատ երկար շարքէն նմուշներ, որոնք, հայերէնի թէ թրքերէնի մէջ, իրենց բուն նշանակութեան կողքին՝ կը կրեն փոխաբերական նո՛յն նշանակութիւնը եւս.

կանչել	çağirmek	երգել
կոխել	basmak	տպել
հանել	çikarmak	հնարել
նստիլ	oturmak	արժել
քաշել	çekmek	կշռել
քշել	sürmek	առաջնորդել
խօսքը բռնել	sözünü tutmak	յարգել, գործադրել
ինքզինք բռնել	kendini tutmak	ինքզինք զսպել
պարսպ տեղը	boş yerinde	ի զուր

9. Յարաբերական-յարաբերեալ

Թրքերէնը յարաբերական դերանուն՝ բառիս իսկական առումով, չունի, եւ բարդ միտքեր արտայայտելու համար այս բացը կը լրացնէ այլազան դերբայներով ու դերբայակերպներով²⁶:

ա) Դերբայակերպի տիպարն է **diğim**²⁷/**տըլըմ** ածանցով կազմուածը. օրինակ՝ almak – **aldığım** – առած(ս): Բաւական բարդ կառոյց մըն է այս, ո-

²⁶ Ներ-ով կը կազմենք յոգնակին, քանի ասոնք ունեցողի նշանակութիւն ունին. «Դերբայի կերպ ունեցող»:

²⁷ Կ'առնէ զանազան փոփոխութիւններ՝ ըստ թրքերէնի ծայնատրներու ներդաշնակութեան օրէնքին:

րուն բաղադրիչներն են՝ **almak**/առնել բայի արմատը՝ **al**, **diği**/տըլը, որ կառուցյին կու տայ յարակատարութեան իմաստը, որով կը ստանանք **awnad** հասկացութիւնը, **m** ս. դէմքի ստացական յօդը, որ նաեւ դիմորոշ է բայերուն ետին: Ուրեմն ամբողջութիւնը բառացի կը թարգմանենք՝ **awnadu**:

Եւ այսպէս, թրքերէնը չկարենալով ըսել **նամակը, որ առի, մխիթարեց զիս**, որ բարդ ստորադասական նախադասութիւն մըն է, կ'ըսէ՝ **Aldigim mektup sevindirdi beni**, որ կը նշանակէ՝ **Առած նամակս ուրախացուց զիս**, որ կցական կառույց մըն է, որ հայերէնը որդեգրեց թրքերէնէն եւ որը կը պակսէր գրաբարին. գրաբարը եւ հնդեւրոպական միւս լեզուները նման բան չեն կրնար ըսել: Գրական թրքերէնի նախասիրած կառույցն է այս:

Անցնելէ առաջ նկատել տանք, որ թրքերէնը դիմորոշ յօդը կը դնէ դերբային վրայ, մինչ հայերէնը խնդիրին վրայ: Սակայն մեր գրողներէն շատեր չեն վարանիր բոլորովին հետեւելու թրքերէնին ու ըսելու՝ «**awnadu նամակը**», ճիշդ ինչպէս կ'ըսէ թրքերէնը:

բ) Թրքերէնի՝ յատկապէս ժողովրդախօսակցական տարբերակի մէջ մեծ դերակատարութիւն ունի **ki** բազմարժէք ձեւոյթը, որ զանազան դերերու կարգին, կը կատարէ նաեւ յարաբերական դերանունինը: Սակայն ան ունի միայն ուղղական եւ հայցական հոլովները, իսկ մնացեալ հոլովները գոհացնելու համար կը դիմէ այլանդակ միջոցերու, որոնք յատուկ են թրքերէնին, բոլորովին խորթ են հայերէնին, ուր սակայն լայնօրէն թափանցած են՝ նմանապէս ժողովրդախօսակցական տարբերակին մէջ. այլ հարց թէ անվարժ գրողներ զայն յաճախ կը փոխադրեն գրաւոր հայերէնի տիրոյթէն ներս եւս:

Օրինակ՝ **O adam ki evine gittik**. Այն մարդը, **որ** տունը գացինք: (Այն մարդը, **որուն** տունը գացինք): **O adam ki ayrildik**. Այն մարդը, **որ** բաժնուեցանք: (Այն մարդը, **որմէ** բաժնուեցանք): **O adam ki barışdik**. Այն մարդը, **որ** հաշտուեցանք: (Այն մարդը, **որուն հետ** հաշտուեցանք):

Հայերէն բառացի թարգմանութիւնը, որ այնքան խորթ է մեր լեզուին հիմա, սակայն այնքան տարածուած էր իր օրին, առանց ներկայիս ալ բոլորովին շիջած ըլլալու: Այս **ki** ձեւոյթը թրքերէնի իսկական փրկօղակն է շնորհիւ այն այլազան դերերուն, որ ան կը խաղայ, որոնց կ'անդրադառնանք ստորեւ եւ որոնց բոլորը ատելի կամ պակաս ներգործած են աշխարհաբարի վրայ:

1) Անկայացում

Bugün **hayatimdaki** en iyi gün. առանց **ki** բառին՝ այս նախադասութիւնը բառացի կը նշանակէ. «Այսօր կեանքիս մէջ (ի կեանս) ամէնէն լաւ օրն է»: **Ki**-ն այս նշանակութեան վրայ կ'աւելցնէ **եղող** դերբային համարժէք նշա-

--ա. դէմք եզակի՝ **diğim-diğim-duğum-düğüm**:

--բ. դէմք եզակի՝ **diğim -diğim -duğum -düğüm**:

--գ. դէմք եզակի՝ **diği -diği -duğu -dügü**:

նակութիւն մը՝ ատելի տպաւորիչ ու համոզիչ դարձնելով, ձեռով մը նիւթակա-
նացնելով օրուան կարեւորութիւնը խօսողին կեանքին մէջ: Այս է առկայա-
ցումը:

Կրնայ դրուիլ զանազան հոլովներու վրայ.

benim-benimki (իմ-իմինս), **benden-bendenki** (ինձմէ-իմինէնը²⁸),
benle-benleki (ինձմով-հետինս), **bende-bendekeki** (իմ քովս-իմ քովինս): Այս
յարացոյցը ի զօրու է որեւէ գոյականի. առնենք պատահական *baş* “գլուխ”
բառը.

başinki (գլուխինը), **başdanki** (գլուխէնինը), **başlaki** (գլուխովինը),
başdaki (գլխամէջինը):

2) Շաղկապում

Ki-ին հիմնական դերը շաղկապումն է, որով թրքերէնը, յատկապէս ժո-
ղովրդախօսակցականը, կը ջանայ դարմանել շաղկապական բառերու ծայ-
րայեղ աղքատութիւնը:

****Իբրեւ յարաբերական դերանուն*

--Bu o bildiğin çocuk **ki** şimdi boyuna yetişmiş (dir).

Այս այն գիտցած մանուկ(դ) է, որ հիմա հասակիդ հասեր (է):

--Çok sevdim o kitabı **ki** dün senden aldım.

Շատ սիրեցի այն գիրքը, **որ** երէկ քեզմէ առի:

****Իբրեւ ստորադասական շաղկապ*

--Sende biliyorsun **ki** en iyi cerrahimiz sensin.

Դուն ալ գիտես կոր, **որ** լաւագոյն վիրաբուժնիս ես դուն:

--Eminim **ki** yarın geleceksiniz.

Վստահ եմ **որ** վաղը պիտի գաք:

Նկատել, թէ որչափ ներդաշնակ ու համաչափ կը զուգադիպին բառերու
կարգերը:

Վերջին օրինակը մեզ կը լուսաբանէ առողանութեան երեւոյթի մը մա-
սին. թրքերէնը բացայայտօրէն դադար մը կ'առնէ **ki** շաղկապէն **ետք**. հա-
յերէնը հաւատարմօրէն ընդօրինակած էր այս առողանութիւնը, եւ մինչեւ
այսօր ալ շատ սովորական է հանդիպիլ մեր **որ/թէ** շաղկապէն **ետք** ստո-
րակէտ դնողներու:

****Իբրեւ թերի նախադասութեան շաղկապիչ*

--Uyandım **ki**, kimse kalmamış.

Արթնցայ (եւ...տեսայ), **որ** որեւէ մէկը չէ մնացած:

--Baktım **ki** herkeş işine çabalanıyor.

Նայեցայ (եւ...տեսայ), **որ** ամէն ոք աշխատանքին կը տաժանի կոր:

****Իբրեւ ժամանակային շաղկապ*

--Güneş batmıştı **ki** köye vardık.

Արելը մայրը մտած էր, **որ** գիւղին հասանք:

²⁸ Բառացի՝ բոլորովին հարազատ թարգմանելու փորձ է հայերէնին խորթ այս ձեւը:

--Daha yeni oturmuşdum **ki** kapi zilinini üst üste çalındığını duydum.

Դեռ նոր նստած էի, **որ** դռան գանգին վրայ-վրայի հնչելը լսեցի:

****Իբրեւ անհրաժեշտության ցուցիչ*

--Bu dil kalkmali **ki**, başlayabilelim Ermenice düşünmeğe.

Այս լեզուն պետք է վերնայ, **որպէսզի** կարենանք սկսիլ հայերէն մտածել

****Իբրեւ վերապահութեան, թերահաւատութեան ցուցիչ*

--Bu borcun altından kalkabilir mi **ki** ?

Այս պարտքին տակէն կրնա՞յ մը ելլել **որ**...

--Bu darda ahli başında insan var mi **ki** ?

Այս գաւառակին մէջ խելքը գլուխը մարդ կա՞յ մը **որ**...

Վերջին երկու օրինակները խորքին մէջ իրենց վերջին բաղադրիչը կորսնցուցած բարդ նախադասութիւններ են. օրինակ, առաջինին մէջ խօսակիցը չվիրաւորելու համար, խօսողը չէ ուզած շարունակել միտքը ու ըսել «վստահինք իրեն պարտք տալ»: Իսկ երկրորդին մէջ յապաւումը գուշակել կու տայ աւելի ծանրակշիռ դատողութիւն մը, որ խնդրոյ առարկայ կը դարձնէ գաւառակի ողջ բնակչութեան մտային կարողութիւնը:

****Իբրեւ ցուցիչ խօսողի վերաբերումին՝*

Խնդրոյ առարկային հանդէպ խօսողին վերաբերումը կ'արտայայտուի բառային կրկնութեամբ՝ յապաւումով բոլոր ուրիշ բառերու:

Başbakan söyledi – Başbakan ki başbakan–: (Վարչապետը ըսաւ: - Վարչապետ **որ** վարչապետ -): **Vapurumuz geliyor – Vapur ki vapur –.** (Նաւերնիս կու գայ: - Նաւ **որ** նաւ -), **Ayni okulda okudu. – Okudu ki okudu –.** (Նոյն դպրոցին մէջ կարդաց: - Կարդաց **որ** կարդաց -): Խօսքէ դուրս նըման յապաւումներ կրնան շատ թելադրական չըլլալ ընթերցողին կամ լսողին, որ դժուար թէ կողմնորոշուի կրկնուող բառերու նշած առարկային առնչութեամբ: Պարագան տարբեր է խօսակիցներուն համար, որոնք այլապէս տարբեր իրազեկութիւն ունին. կը ճանչնան վարչապետն ու նաւը, որոնց կ'ակնարկուի:

10. Շարադասութիւն

Մերկ աչքով կարելի է նշմարել, որ գրաբարի եւ աշխարհաբարի շարադասութիւնները խորապէս կը տարբերին իրարմէ, ընդհուպ՝ կը հակադրուին իրարու: Թէ որքա՞ն էր այս շրջումին մէջ թրքերէնի դերը, եւ որքա՞ն էր ժամանակինը, – հաւանաբար երբեք ալ պիտի չգիտնանք:

ա) Ենթակայ-ստորոգիչ շարադասութիւնը

Գրաբարի մէջ ասոնց շարադասութիւնը ազատ էր, սակայն գերիշխողը յայտնապէս **ստորոգիչ-ենթակայ** շարադասութիւնն էր: Ծննդոցի միայն առաջին գլուխի քանի մը համարներուն մէջ կը գտնենք՝

արար Աստուած ասաց Աստուած մեկնեաց Աստուած

կոչեաց Աստուած ետես Աստուած²⁹ անջրպետեաց Աստուած
 Նոյն հատուածին աշխարհաբար թարգմանութիւնը՝ 1853-ին, տուած է՝
Աստուած ստեղծեց Աստուած ըսաւ Աստուած բաժնեց
Աստուած կոչեց Աստուած տեսաւ Աստուած անջրպետեց

Ինչպէս կը նկատենք, բոլոր օրինակները առանց բացառութեան շրջուած են՝ ստանալու համար **ենթակայ-ստորոգիչ** շարադասութիւնը: Անշուշտ սա իր կարգին բացարձակ չէ, սակայն յստակօրէն բարացուցական է. աշխարհաբարին նախընտրածը գրաբարին հակառակն է, այսինքն՝ այն, որ տիրական է թրքերէնի մէջ, ուր բացարձակապէս ոչ մէկ շեղում կը նկատուի:

բ) Ենթակայ-ստորոգիչ-պարագայ շարադասութիւնը

Գրաբարին նախընտրածը այս պարագային հետեւեալն է. **Եկն հայր իմ ի տուն:** Աշխարհաբարը կ'ընտէր **Հայրս տուն եկաւ**, որ բառացի կը զուգահիսի թրքերէնի **Babam eve geldi** նախադասութեան շարադասութեան:

գ) Որոշիչ-յատկացուցիչ-որոշեալ շարադասութիւնը

Սա իր կարգին գրաբարի մէջ ազատ էր. կարելի էր հանդիպիլ նախադաս որոշիչի ու յատկացուցիչի, ինչպէս նաեւ յետադաս որոշիչի եւ յատկացուցիչի՝ սա տարբերութեամբ, որ երկուքին ալ յետադաս տարբերակները անհամեմատօրէն աւելի շատ էին. այլ խօսքով՝ գրաբարի նախընտրածը յետադաս որոշիչն ու յետադաս յատկացուցիչն էր:

Տարբեր է կացութիւնը աշխարհաբարի մէջ: Արձակի մէջ եւ պատմողական երանգով՝ ասոնք գրեթէ բոլորը նախադաս են. օրինակ՝ **մեր յաղթական** երթը, **իմ սուրբ** հայրենիք, **աշնան տխրամած** հողմերը, **ձեր արջի խառնակ** ցեղերը եւ այլն:

Ինչպէս կը նկատենք նախ կու գայ յատկացուցիչը, ապա որոշիչը, ի վերջոյ լրացեալ գոյականը, որ թէ՛ յատկացեալ է, թէ՛ որոշեալ:

Թրքերէնը պիտի ընէր ճիշդ նոյնը. օրինակ՝

Benim çiçekli bağlarım – Իմ ծաղկաւէտ այգիներս

Թքերէնը ոչ մէկ շեղում կը հանդուրժէ այս շարադասութենէն. եւ այս երկաթեայ կանոնն ալ ժամանակին հետ իշխած է հայուն լեզուամտածողութեան վրայ:

Եթէ այս կառոյցներուն վրայ աւելցնենք ցուցական դերանուն մը, ապա պիտի ստանանք հետեւեալը՝ **Իմ այս ծաղկաւէտ այգիներս – Benim bu çiçekli bağlarım:** Այս պարագային ալ համապատասխանութիւնը կատարեալ է: Աւելցնենք թուական մը. **Իմ այս երկու ծաղկաւէտ այգիներս – Benim bu iki çiçekli bağlarım:**

Կը թուի, թէ ոչ մէկ տարբերութիւն կայ, բայց թրքերէնը բերուած կարգերէն ոչ մէկը կրնայ նուազագոյն փոփոխութեան ենթարկել. լեզուն ինք չ'ընդունիր այդ, չի թոյլատրեր, որ խօսողը շեղի կարգէն: Դժբախտաբար

²⁹ Ծանոթ, Ա/1-8:

պարագան նոյնը չէ մեր գրողներուն, ուր խախտումները շատ յաճախական են:

Ընթացիկ խախտումներն են՝

- Այս իմ երկու ծաղկաւէտ այգիներս
- Իմ երկու այս ծաղկաւէտ այգիներս
- Իմ ծաղկաւէտ այս երկու այգիներս
- Իմ ծաղկաւէտ երկու այս այգիներս
- Իմ այս ծաղկաւէտ երկու այգիներս...

Պէտք չէ զարմանալ, եթէ հարցնող ըլլայ, թէ ի՞նչ է տարբերութիւնը: Տարբերութիւնը ըստ իս որոշակի բառի մը շեշտադրումն է՝ իւրաքանչիւր պարագայի:

* * *

Շարադասական ամենաճնշիչ ու ընդվզեցուցիչ կացութիւնը, որ ժառանգած ենք թրքերէնէն, դիմաւոր բային՝ նախադասութեան վերջը արձանագրելն է: Ասոր անդրադառնալու համար՝ ացքի առաջ ունենանք ստորեւ բերած թրքերէն հատուածը, որուն սերտողութեան հետեւիլ կարենալու համար բնաւ պայման չէ թրքերէն գիտնալ: «Կազեթէճի Ճենկիզ Չանտարըն Քիւթիւր պաքանը Մեհմետ Նուրի էրսոյա ետօնլենտիքտիքի սորու էօներկեսինտէ. 2015 երլընտա ՌԻՆԷՍԲՕ թարաֆընտան Տիւնյա քիւթիւր միրասը քալաքք թեստիլլենէն վէ թարիհի քենթին քալպի օլան Տիյարպաքըր սուրլարը երքըլմա թեհիլթեսիլլէ քարշըր քարշըլատըր:

Տիյարպաքըր սուրլարը 6 Շուպաթթա մեյտանա կելլեն տեփրեմլերտէ ճիտտի հասար կէօրմիշթիւր: Անճաք նէ եազըք քի, արատան կելլեն եէտի այա ոաղմեն Տիւնյա միրասը քապու կտիլլեն վէ պինլերճէ երլտըր այաքթա քալմայը պաշարա պիլմիշ օլան Տիյարպաքըր սուրլարընըն քորունմասը վէ օնարըմըր իչին եէթերլի չալըշմալար եափըլմամըշթըր: Ամէտին գալպի ատեթա քատերինէ թերք էտիլմիշթիւր...:

Քիւթիւր վէ Թուրիզիմ Պաքանընա սորույորուզ. «Թարիհի էն էսքի եափըլարընտան օլան. Տիւնյաքիւթիւրել միրասը քապու կտիլլեն վէ թարիհի քենթին քալպի սայըլան Տիյարպաքըր սուրլարընըր քորումաք սորումլուդունուզ ալթընտատըր: Սորումլուդունուզուն կերեղի օլարաք, սուրլար իչին տերիալ պիր աճիլ էլլեն փիւնըր պաշլաթաճա՞ք մը սընըզ» տիլլէ սորտուս:

Հայատառ թրքերէն հատուած մըն է այս, որ առնուած է Պոլսոյ Ալլօսի 1/9/2023-ի թիւէն³⁰, որ կը բաղկանայ երեք պարբերութենէ, որոնց առաջինը կազմուած է մէկ պարզ նախադասութենէ, երկրորդը՝ երեք պարզ նախադասութենէ, երրորդը՝ երկու բարդ ստորադասական նախադասութիւն-

³⁰ Ճիշդ ի՞նչ նպատակով խմբագրութիւնը օրինակելի հետետողականութեամբ կը դնէ այսպիսիները թերթի հայկական բաժնի սուղ էջերուն մէջ՝ չեմ հասկցած, քանի որ անոր էջերուն 20-ը արդէն լիարժէք թրքատառ թրքերէն է:

ներէ, որոնք իրենց կարգին կազմուած են՝ մէկական հեղինակային խօսքէ եւ մէկական մէջբերուած խօսքէ:

Այստեղ կը գտնենք թրքական ասանդական ոճի հիմնական յատկանիշերէն հետեւեալները.-

1) Բոլոր դիմաւոր բայերը, այսինքն՝ ստորոգիչները, առանց բացառութեան դրուած են համապատասխան նախադասութեանց վերջը՝ այստեղ նշուած **թաւատառով**:

2) Նման շարադասութիւն մը տնտեսել կարենալու համար՝ գրողը նախադասութիւնները խճողած ու ծանրաբեռնած է դերբայական բազմաթիւ դարձուածներով, որոնք այստեղ տրուած են **ընդգծումով**:

3) Հատուածը յագեցած է կցականութեան այլազան տեսակներով:

Եւ այս, տակաւին, ներկայիս գրուող թրքերէնէն է, որ փարսախներով հեռու է այն մէկէն, որ կը գրուէր արաբատառ օսմաներէնով՝ յատկապէս պետական-վարչական գրագրութեան, ինչպէս նաեւ մամուլի մէջ, ուր նախադասութիւն մը կրնար մինչեւ մէկ էջ, երբեմն ալ ամբողջ ծաւալ ունենալ: Մերոնց օրին կիրարկածը ահա այդ լեզուի հայատառ տարբերակն էր:

Արդի հայուն ենթագիտակիցին մէջ այս բոլոր յատկութիւնները դրոշմուած են եւ ամբողջ կամ պակաս կը դրսեւորուին անոնք:

Այս դրսեւորումի գլխաւորն ու ամենաշատ ցայտնողը դիմաւոր բայի շարադասութիւնն է. օրինակ՝ *«Ամերիկեան փոխարժէքի միացեալ սակ մը պէտք է ճշդուի, ինչպէս նաեւ փուրքերու դրութիւնը կանոնաւորուի, այլ խօսքով՝ փուրքերու նոր քաղաքականութիւն մը որդեգրուի»* (Ազդակ): Նաեւ՝ *«Իսրայէլեան օդուժը բուռն յարձակումներ գործելով Կազայի մէջ բազմաթիւ բարձրայարկ շէնքեր քանդեց»* (անդ):

Ասոնք կը նմանին մութ փապուղիի մը մէջ արտասանուած միօրինակ ու ծանծաղ դամբանականի, որ ականջող կը սրածէ, ուր բոլոր դիմաւոր բայերը դրուած են նախադասութեան վերջը՝ ճիշդ *Ալլօսէն* բերուած թրքերէն նմուշին հետեւողութեամբ: Եթէ ասոնք գրողը ունենար հայեցի շարադասութեան ճաշակը, ապա պարտէր գրել. **«Պէտք է ճշդուի ամերիկեան փոխարժէքի միացեալ սակ մը, ինչպէս նաեւ կանոնաւորուի փուրքերու դրութիւնը, այլ խօսքով՝ որդեգրուի փուրքերու նոր քաղաքականութիւն մը»**, նաեւ *«Իսրայէլեան օդուժը, բուռն յարձակումներ գործելով Կազայի մէջ, քանդեց բազմաթիւ բարձրայարկ շէնքեր»*:

Այսպէս գրած են օրին մեր սուրբ թարգմանիչները իրենց սրբագոյն լեզուն: Օրինակ. *«Առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրպսերն ի նոցանէ ցհայրըն. «Հայր, փորն ինձ բաժին, որ անկանի լընչիցը»:* Եւ նա **բաժանեաց նոցա զկեանսն: Յեւ ոչ բազում ատուրց՝ ժողովեալ զամենայն կրպսեր որդւոյն՝ զնաց յաշխարհի հեռի եւ անդ վարդնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ**»: Մարկոսի ամետարանէն պատահականօրէն առնուած այս փոքրիկ հատուածին մէջ, որմէ լոյս կը ճառագայթէ՝ ականջող շոյող մեղմ երաժշտութեամբ մը հանդերձ, չկայ բաղադրիչ մը, որուն դիմաւոր բայը դըր-

ուած ըլլայ նախադասութեան վերջը: Ա՛յս է հայերէնն ու հայեցի շարահասութիւնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այսու եղաւ համեստ փորձ մը, որ կը միտէր սերտելու աշխարհաբարի կամ արդի հայերէնի այն ոլորտները, որոնք աւելի կամ պակաս ազդուած են թրքերէնէն եւ անդառնալիօրէն իրացուցած են անոր այլազան տարրերը: Պէտք չէ զարմանալ, որ այսպէս ստացուած է. լեզուական ազդեցութիւնները կը հետեւին օրէնքի մը, որ կը խուսափի մեր կամքէն եւ կ'իրացուի բոլորովին բնական ճամբով: Թրքերէնը չէր կրնար տարբեր ըլլալ պարսկերէնէն, յունարէնէն, ասորերէնէն, այլեւ արեւմտեան այլազան լեզուներէ, որոնցմէ ազդուած է հայերէնը՝ առանց խախտելու իր հազարամեակներու վրայ հիմնուած քերականական ամուր շէնքը, որ ըստ ամենայնի մնացած է կանգուն ու աներեր:

Պէտք է աւելցնեմ, որ այս աշխատութիւնը ենթադրաբար շատ հեռու է ամբողջական ըլլալէ. ան հագիւ նախաճաշակ մը կրնայ հանդիսանալ փոխառութեանց օժիտի այն իսկական տարողութեան ու ծաւալին, որոնց սերտողութիւնը կը կարօտի աւելի ձեռնհաս աշխատողներու:

Միւս կողմէ՝ այս յօդուածը կը միտի խայծ մը հանդիսանալու, որ նոր սերունդէն թեկնածուներ նուիրուին թրքագիտութեան, որ կը կարծեմ շատ թերի է մեր, յատկապէս՝ արեւմտահայերուս մէջ, թերեւս «ըմբռնելի» պատճառներով: Սակայն լեզուն պէտք չէ շփոթել անոր տիրոջ եւ անոր հանդէպ մեր ունեցած զգացումներուն հետ: Մանաւանդ պէտք է գիտնալ, որ ամէն նոր թրքագէտի հետ քիչ մը աւելի լաւ պիտի ծառայած ըլլանք մեր դատին ու բերան մը աւելի պիտի պաշտպանենք զայն:

Չմոռնանք, Թուրքիոյ եւ Ազրպեյճանի մէջ հետզհետէ թափ կ'առնէ ու կը զարգանայ հայերէնագիտութիւնը՝ վայելելով պետական ամէն նեցուկ, եւ բոլորդ ալ գիտէք, թէ ինչի՛ պիտի փորձեն ծառայեցնել անոնք իրենց այդ գիտութիւնը: Այլ խօսքով՝ թրքագիտութիւնը, իր իմացական արժէքէն բացի, ունի նաեւ մարտավարական արժէք մը, որ պէտք չէ անուշադրութեան մատնուի:

Ուրեմն բարի երթ բոլորիդ:

ARMENIAN LEXICAL BORROWINGS FROM TURKISH
(SUMMARY)

ARMENAG YEGHIAYAN
armenag@gmail.com

The study focuses on diverse sorts of lexical borrowings of the Armenian language (particularly Western Armenian) from Turkish.

The author groups these borrowings into two categories: a) word borrowings, and b) grammatic-syntactic borrowings.

Regarding the word borrowings, the author considers several different sorts of word borrowing, like verbs, nouns, adjectives and numbers; verbs borrowed from Turkish but Armenianised by adding an Armenian correlative affix; partly Turkish juxtaposed verbs, where one of the words is Turkish and the other Armenian. Last but not least the author notes that in expressing superlative adjectives, Armenian has copied the Turkish mode by repeating the word, yet changing a letter, for instance *ship-shidag*, where the original word *shidag* has changed one of its letters.

As for the syntactic borrowings, the author groups them under a number of headings and discusses each, for example, agglutination, word-groups, utterance, idioms, degrees of qualitative comparison, articles, narrative verbs, numerals, prepositions and postpositions, popular proverbs and sayings, relative-antecedent and word order.

The author notes that most of these borrowings have become an irreversible part of the Armenian language, and argues that borrowings are not willed and are being practiced via a very natural route. The author, however, stresses that these borrowings do not shake the pillars of Armenian grammar and further research is needed to complete such an avenue of research.

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մասն Թ. – Ճապոներէն¹

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
armen_michaelian@yahoo.com

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար լեզուների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը², որի սոյն՝ իններորդ մասը, նուիրում ենք ճապոներէնի յատուկ անուններին:

Ինչպէս շարքի նախորդ յօդուածներում, այստեղ վերանայելու ենք գոյութիւն ունեցող իրավիճակը, փորձելու ենք գիտական հիմքերի վրայ դնել ճապոներէնի տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել դրա մի շարք նրբութիւններ: Մեր այս մօտեցումը բնականաբար չի ենթադրում վերջնական լուծում: Այն միեւնոյն ժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռել խնդրի վրայ:

Յօդուածները չճանրաբեռնելու եւ միեւնոյն բանը միքանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները լինելու են հակիրճ: Այդուամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնաւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

¹ Մեկնելով յօդուածին տրամաբանութենէն եւ ուղղագրական առաջարկներէն, յօդուածին ուղղագրութիւնը բացառաբար կը պահենք հեղինակային վիճակով:

² Տե՛ս՝ Արմէն Միքայէլեան, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ա. – մերձաւորարեւելեան լեզուներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Խ:2020, էջ 341-64. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Բ. – դասական լեզուներ, հին յունարէն եւ լատիներէն)», *Բազմավէպ*, ՃՀԸ:2020, էջ 304-36. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Գ. – ֆրանսերէն)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԱ:2021, էջ 443-66. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Դ. – անգլերէն)», *Հանդէս ամսօրեայ*, ՃԼԵ:2021, էջ 197-246. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ե. – գերմաներէն)», *Բազմավէպ*, 1-2 (ՃՁ):2022, էջ 277-303. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Զ. – իտալերէն եւ սպաներէն)», *Բազմավէպ*, 3-4(ՃՁ):2022, էջ 271-300. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Է. – ռուսերէն, համեմատութեամբ սլաւոնական այլ լեզուների)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ/2:2022, էջ 169-98. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ը. – չինարէն)», *Բազմավէպ*, 1-2(ՃՁԱ):2023, էջ 272-305:

Երկար տարիներ Հայաստանում գործող *Տերմինաբանական կոմիտե* (Եզրաբանական յանձնաժողով) կամ *Լեզուի պեղական տեսչություն* անունը կրող զանազան մարմինները չեն անդրադարձել ճապոներենի սկզբունքային խնդիրներին, այն է՝ գիտական հիմքերի վրայ դնել ճապոներենի տառադարձությունը, կարգավորել դրա կանոնները եւ մասնաւորապէս՝ ուսումնասիրել այդ լեզուի հնչյունաբանությունը՝ գիտական հայկաբան տառադարձություն մշակելու նպատակով³: Ճապոնական անունների հարցում՝ ռուսերենի անսացողութեան տակ գտնուող սովետահայերէնը⁴ յարել էր ռուսերենի միջնորդութեամբ ժառանգություն ստացած սկզբունքներին, իսկ արեւմտահայերէնը Սփիւռքում յենուել է անգլերենի կամ ֆրանսերենի ասանդական տառադարձությունների վրայ:

Հայերս ու հայերէնը մինչ այսօր անմիջական քիչ յարաբերություններ ենք ունեցել ճապոներենի հետ: Սակայն ճապոներէնը աշխարհի կարեւորագոյն լեզուներից է, եւ մենք համարում ենք, որ հայերենի տառադարձութեան տեսակէտից՝ այդ լեզուն մեր յօդուածաշարքի մէջ անպայման պէտք է իր տեղն ունենայ: Ճիշտ է՝ ճապոներէն տառադարձութեան պատմական ու աշխարհագրական շրջանակները բաւական «սահմանափակ» են՝ ամփոփուած Ճապոնիա⁵ երկրի եւ նրա պատմութեան մէջ, սակայն դա չի նշանակում թէ ճապոներէն անունները մենք կարող ենք այլ լեզուների (օր.՝ անգլերենի կամ ռուսերենի) միջոցով տառադարձել:

ՃԱՊՈՆԵՐԷՆԻ ԳՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԳՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ (ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ) ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճապոներենի գրութիւնը իրաւամբ համարում են աշխարհի ամենաբարդ գրութիւններից մէկը (նոյնիսկ անլի բարդ քան չինարէնինը): Եթէ չինարէն բառերը գրում են հազարների հասնող ճենագրերով, ապա ճապոներէնը ոչ միայն գործածում է այդ նոյն ճենագրերը, այլեւ դրանց անելացնում է երկու տեսակի վանկարան, իսկ վերջին տասնամեակներին

³ Տե՛ս՝ *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկագրու (1956-2006)*, Յ.Խ. Բարսեղեանի խմբ., «Զրդ հրաշալիք» հրատ., Երեւան 2006:

⁴ «Սովետահայերէն» ասելով նկատի ունենք արեւելահայերէնի՝ 1920-30ականներից Հայաստանում հաստատուած մի լեզուավիճակը, որը մինչեւ 1990ականներ ռուսերենի անմիջական, իսկ այժմ՝ ասանդական ազդեցութեան տակ է եղել եւ է: Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիւսակական օտարաբանութիւններով յագեցած եւ հայերէնի հարազատ տարրերին խորթ լեզուի մասին է (առաւելապէս տարածուած վարչական, հրապարակախօսական եւ իրաւաբանական խօսքի ու գրականութեան մէջ):

⁵ Երկրի անուանման վերաբերեալ այստեղ որոշակի կարծիք չենք արտայայտում: Ճապոնիա («իա» վերջաւորութեամբ) կամ Ճապոն (առանց այդ վերջաւորութեան). երկու ձեւերն էլ կարող են ընդունելի լինել: Թէեւ արեւմտեան լեզուների մեծ մասը «իա» չունի՝ անգլ. եւ գերմ. Japan, ֆրանս. Japon, սպան. Japón, պորտուգալ. Japão, իտալ. Giappone, սակայն՝ յունարէն Ιαπωνία, ռուսերէն Япония:

նաեւ լատինական այբուբենը: Ասել է թէ՛ ճապոներէնի ուղղագրութեան մէջ իրար են միահիւսուած երեք, նոյնիսկ չորս տեսակի գրելակարգ:

Գրութիւնը ճապոնիայում մուտք գործեց Չինաստանից եւ տարածուեց Ք.Յ. Դ.-Ե. դարերից սկսած: Սկզբնական շրջանում այն միմիայն չինարէն էր: Դարերի ընթացքում այդ նոյն ճենագրերով սկսեցին գրել նաեւ ճապոներէն, իսկ Ը.-Թ. դարերում ճենագրերից առաջացան նոր՝ պարզեցրած նշանագրեր, որոնք այդուհետեւ արտայայտում էին ոչ թէ բառը կամ արմատը ամբողջութեամբ (ինչպէս չինական գիրն է) այլ լեզուի հնչիւնները՝ անկախ նրանց նշանակութիւնից (հնչիւններն առանձին նշանակութիւն չեն էլ կարող ունենայ): Կազմաւորուեցին այսօր յայտնի *քանա* կոչուող երկու վանկարանները՝ *հիրագանան* եւ *քալականան*: Երկուսն էլ վանկարան են, այսինքն՝ ամէն նշանագիր արտայայտում է մի վանկ, որ ճապոներէն կարող է կազմուած լինել միայն կա՛մ մէկ մաքուր ձայնաւորից, կա՛մ մէկ բաղաձայնից ու ձայնաւորից: Միակ բաղաձայնը որ կարող է վանկ փակել, «ն/մ» բաղաձայնն է: Հիրագանան ու քատականան հարիւր տոկոսով նոյնը չեն: Թէեւ դրանք սկզբունքօրէն նոյն վանկարաններն են (ամէն մէկը նշանագրերի ի՛ր գծագրութեամբ), նրանց ուղղագրութիւնների մէջ կայ աննշան մի երկու տարբերութիւն:

Այսօր ճենագրերով (ճապոներէն՝ *քանջի*) գրում են բառերի իմաստալից մասերը, այսինքն՝ արմատները (թէ՛ չինական փոխառութիւններ, որ ճապոներէն բառապաշարի կէսից ասելին են, թէ՛ բնիկ ճապոներէն բառեր), որոնք կարող են լինել զոյական, բայ, ածական, կամ մակբայ: Հիրագանայով գրում են բառերի քերականական մասերը, ինչպէս նաեւ բնիկ ճապոներէն բազմաթիւ բառեր: Քատականայով գրում են բոյսերի ու կենդանիների բազմաթիւ անուններ, ճապոներէն բնածայն բառեր (ծիւծիւ, ճոճո-ալ, չխկչխկ-ալ...), նոր օտար բառերը (յատկապէս անգլերէնից փոխ առած), ինչպէս նաեւ շ(ե)ղագրի նպատակով (առանձին ուշադրութիւն հրաւիրելու համար):

Իւրաքանչիւր ճենագիր (քանջի գիր) ունի իր ուրոյն իմաստ(ներ)ը եւ դրանց արտասանութիւն(ներ)ը, որոնք կախուած են բառից ու խօսքաշարից: Ճապոնացի աշակերտները սովորում են երկու հազարից ասելի ճենագիր: Դրանց ընդհանուր թիւը տասնեակ հազարների է հասնում. առօրեայ գրի մէջ սակայն մօտ տասը հազարն է առաւել գործածական: Ճապոնական հրատարակութիւնները երբեմն հազուագիւտ ճենագրերի կողքին քանայով գրում են բառի արտասանութիւնը, ընդ որում հիրագանայով գրում են բնիկ ճապոներէն բառերի հնչումը, իսկ քատականայով՝ չինարէնինը (այն որը տուեալ գրուածքի մէջ պէտք է ընթերցել):

Վերջին տասնամեակներին տարածուել է նաեւ լատինագիր մի ճապոներէն, որն օգտագործում են զանազան բառեր գրի առնելու նպատակով. լատինագիր յապաւումներ (NATO, CIA, FBI, CD, DVD, km), համակարգիչներով ճապոներէն գիրը մուտք անելու համար (գրում են լատինագիր,

այնուհետև փոխարկում քանջի կամ քանա գրի), երբեմն օտարերկրացիների անուններ թողնում են լատինագիր են.:

Գրաշարուածքի մէջ քանջին ընդհանուր առմամբ մօտ 40 տոկոսն է, հիրագանան դրանից մի քիչ ւելի պակաս, քատականան շատ ւելի պակաս, իսկ լատինագիր հանդիպում են հատ ու կենտ բառեր:

Ճապոներէնը լատինական տառերով գրի առնելու փորձեր եղել են դեռևս եւրոպացիների հետ առաջին շփումների ժամանակ (ԺՁ. դարից): Այսօր գոյութիւն ունի լատինագիր երկու համակարգ, որոնք առաւել յայտնի են ճապոնագէտների շրջանում: Առաւել տարածուածը ամերիկացի բժիշկ, թարգմանիչ ու քարոզիչ Ջեմս Կուրտիս Հեփբուրնի (James Curtis Hepburn) 1867ին հրատարակած ճապոներէն-անգլերէն բառարանի գրադարձութիւնն է: Այն մի քանի անգամ ոչ էական փոփոխութիւնների ենթարկուեց եւ այսօր գործածութեան մէջ է դրա բարելաւուած տարբերակը:

Երկրորդ կարեւոր գրադարձութիւնը՝ *նիհոնշիկին* (日本式ローマ字, Nihon-siki (Nippon-siki) rōmazi [նիհոնշիկի (նիպպոնշիկի) ռոմաշի], «ճապոնակերպ» լատինագիր), առաջարկել է ճապոնացի բնագետ Այիկիժու Թանակադատէն (Aikitsu Tanakadate) 1885ին, ի հակադրութիւն Հեփբուրնի համակարգի: Սրան 1937ին յաջորդեց Ճապոնիայի նախարարաց խորհրդի գրադարձութիւնը՝ *քունրեշիկին* (訓令式ローマ字, Kunrei-siki rōmazi, [քունրեշիկի ռոմաշի], «հրամանագիր» լատինագիր), որը նախորդի թեթեւակի ձեւափոխ տարբերակն էր: 1954ին Ճապոնիայի կառավարութիւնը վերահաստատեց քունրեշիկին իբրեւ պաշտօնական գրադարձութեան սկզբունք, սակայն մինչ այսօր էլ իրավիճակը բաւական խառն է Ճապոնիայում. որոշ հաստատութիւններ գործածում են պաշտօնական քունրեշիկին, ուրիշները՝ Հեփբուրնի փոփոխուած գրադարձութիւնը: Թէեւ Հեփբուրնինը շատ ւելի մեծ ճանաչում ունի աշխարհում, այն միահանգոյն չեն ընդունում ամէնուրեք: Երկրորդ աշխարհամարտից յետոյ ճապոնացի բոլոր դպրոցականները զուգահեռ սովորում են լատինագիր մի ուղղագրութիւն, որն այսօր ւելի յաճախ պաշտօնական քունրեշիկին է:

Մեզ՝ հայերիս, հետաքրքրական է նաեւ ռուսական սլաւոնագիր տառադարձութիւնը, որի անսացողութեան տակ է զարգացել սովետահայերէնը եւ որի գերակայութիւնը Հայաստանում զգացում է առ այսօր: Այն առաջադրել է ռուս լեզուաբան Եւգենի Պոլիանովը 1917ին եւ մինչեւ այժմ էլ ռուսերէն պաշտօնական գրադարձութիւնն է:

Յօդուածի վերջի Ա. յաւելուածում վանկ առ վանկ բերում ենք նշեալ չորս գրադարձութիւնները:

Ուշադրութիւն. Հեփբուրնի, ճապոնական պաշտօնական, ինչպէս նաեւ ռուսական գրութիւնները ւելի շուտ գրադարձութիւն են քան տառադարձութիւն. դրանց նպատակը ճապոներէն բառերի հնչումը լատիներէն կամ սլաւոներէն տառերով հաղորդելն է, նոյնիսկ եթէ գրութիւնը երբեմն խորթ է գալիս անգլերէն կամ ռուսերէն լեզուներին: Մեր յօդուածաշարքի նպա-

տակը այլ է. մեզ համար կարելի է առաելագոյնս հարագատօրէն հետեւել ճապոներէնի ուղղագրութեանը (այլ կերպ ասած՝ հայատառ ճապոներէն յօրինել), այլ հայ ընթերցողին օտար՝ ճապոներէն, անունները հայերէն տառերով լատագոյնս մատուցել:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՁԻՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս ամէն յօդուածում նշում ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրարկել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Յիշեցման կարգով՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ մեր առաջին երեք յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուածները չձանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեանն անդարդառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին, առանց որոնց դժուար է ըմբռնել մեր տեսակէտները:

Ա. Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաշփական («ջ-ճ-ջ», «ծ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայկաբան տառադարձութեան ողնասիւններից մէկն է: **Բ.** Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառավերջին, կամ այլուր՝ ձայնաւորից առաջ: «Ե»ը հայերէնի [e] հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «ե»ը պարտադիր չէ [յէ] արտասանել. օտար անունների մեծ մասում այն գերադասելի է իր մաքուր հնչումով՝ [e] արտասանել: **Գ.** Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամէնուր արտայայտում ենք մերոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ: **Դ.** Բառամիջում եւ բառավերջին խուսափում ենք «ը» գրելուց: **Ե.** Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»: Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ո»: **Զ.** Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»ն պարզուում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [ի] չէ: Աւանդական անուններում այն [ի] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [j] արտասանենք: **Է.** Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, ւո, եայ, եաւ (եօ), ւոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելի է յարգել սրանց գրութեան կանոնները

եւ չյօրինել նոր կապակցութիւններ: Ը. Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառակգբի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»ի գրութիւնը «ն»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ⁶:

Այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մետրոպեան (կամ հայկաբան), կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան) սկզբունքները: Մենք դէմ ենք ե՛ւ սովետահայ, ե՛ւ կիլիկեան տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մետրոպեան կանոնները զանց առնելու հետեանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

ՃԱՊՈՆԵՐԷՆԻ ՀՆՉՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՉԻԻՆՆԵՐԸ

Քանի որ Հեփբուրնի գրադարձութիւնը առաւել տարածուածն է աշխարհում եւ հենց դրանից են կատարում իրենց տառադարձութիւնները լրագրողներն ու քաղաքագէտները, դա լինելու է հայերէնի տառադարձութեան մեր հիմնաքարը, այսինքն՝ տառադարձութեան ելակէտ ենք ընդունելու Հեփբուրնի լատինատառ գրութիւնը, այն հնարաւորինս ճշտելով ճապոնագիր քանայով, կենդանի հնչողութեամբ ու ստուգաբանութեամբ (երբեմն էլ ռուսերէնի գրադարձութեամբ):

Այստեղ բերում ենք *Հնչիւնաբանութեան միջազգային ընկերութեան* (IPA⁷) այբուբենի նուազ ծանօթ նշանագրերից մի քանիսը (որ ստորեւ մեզ պէտք են գալու): Հնչոյթի կամ հնչիւնի⁸ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ՝ [ա], [բ], [գ], իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ՝ «ա», «բ», «գ» եւն.:

IPA [ա]ն հնչում է մօտաւորապէս ինչպէս հայերէնի [ը] հնչիւնը: IPA [թ] հնչումը համապատասխանում է հայերէն [շի] հնչմանը շատ փափուկ [շ]ով, որը համարեա թէ [ս] է լսում: IPA [թի]ն նման է հայերէնի փափուկ

⁶ Հիմնարար այս սկզբունքների մասին ւելի մանրամասն տե՛ս՝ մեր առաջին երեք յօդուածների համանուն բաժիններում (*Հայերէն քառադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները*):

⁷ International Phonetic Association, *Հնչիւնաբանութեան միջազգային ընկերութիւն*, որի հնչական նշանագրերով է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները: Միջազգայնօրէն ընդունուած է կա՛մ ֆրանսերէն (API), կա՛մ անգլերէն (IPA) յապատումը:

⁸ «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբանութեանը: Տե՛ս՝ Յ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարազիլեան, *Լեզուաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ., Երեւան, 1975:

[չի] կամ [ճի] հնչմանը: IPA [ɕ]ն հայերէն [ի]ի եւ [ֆ]ի միջեւ շրթնաշրթնային մի հնչիւն է, նման լուցկի փչելու ձայնին: IPA [ɕ]ն նոյն հնչիւնն է ինչ եւ հայերէնի ոնգային «ն»ն «անգամ» բառի մէջ:

Եթէ հաշուենք միայն ասանդական հնչոյթները (ըստ ճապոնական քանա վանկարանի եւ ըստ պաշտօնական լատինադարձութեան), ճապոներէնն ունի 10 ձայնաւոր (5 կարճ եւ 5 երկայն), 2 կիսաձայն եւ 12 բաղաձայն, ընդամէնը 24 հնչոյթ⁹: Եթէ հաշուի առնենք իսկապէս գոյութիւն ունեցող հնչիւնները, ապա պէտք է հաշուենք 17 բաղաձայն. վերի 12ին անլացնելով «sh», «ch», «ts», «f», «j» տառ-հնչիւնները (ըստ Հեփբուրնի գրադարձութեան):

Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ՝ 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Ստորեւ անդրադառնում ենք ճապոներէն տառադարձութեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

Ճապոներէնին եւ մանաւանդ հնչիւնաբանութեանը անլի մօտից ծանօթանալու համար, ընթերցողին ներկայացնում ենք միքանի աշխատութիւն¹⁰:

ՃԱՊՈՆԵՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ա) ճապոներէնի կարճ ձայնաւորները

Ճապոներէնն ունի հինգ կարճ ձայնաւոր՝ «a», «e», «i», «o» եւ «u», որոնցից առաջին չորսը համապատասխանում են հայերէնի «ա», «ե», «ի» եւ «ո» տառերին ու հնչիւններին: Սրանց տառադարձութիւնը դժուարութիւն չի ներկայացնում:

Ինչ վերաբերում է վերջին՝ «u» տառին, ապա դրա արտասանութիւնը միջին դիրք է գրաւում հայերէն [ու]ի եւ [ը]ի միջեւ: Ճապոներէն «ու»ն արտասանում է առանց շրթունքները կլորացնելու: Եթէ լինէր արտասանական միայն այս առանձնայատկութիւնը, մենք «u» տառը աներկբայօրէն

⁹ Այստեղ բնականաբար հաշուի չենք առնում օտար լեզուները տառադարձելու համար վերջին տասնամեակներին անլացրած «հնչիւնները» (որ առկայ են միայն քատականա վանկարանում):

¹⁰ Laurence Labrune, *La Phonologie du japonais (version électronique)*, Peeters, Leuven–Paris 2006. նաեւ՝ Seiichi Makino and Michio Tsutsui, *A Dictionary of Basic Japanese Grammar*, The Japan Times, Tokyo 1994. նաեւ՝ Kunio Kuwae, *Manuel de japonais, vol. 1, 13^e éd.*, L’Asiathèque, Paris, 2010. նաեւ՝ Hugh Clarke and Motoko Hanamura, *Colloquial Japanese*, 2nd ed., Routledge, London & New York 2005. նաեւ՝ Yasuko Kosaka Mitamura, *Let’s Learn Hiragana, First Book of Basic Japanese Writing*, Kodansha International, Tokyo and New York 1988. նաեւ՝ Yasuko Kosaka Mitamura, *Let’s Learn Katakana, Second Book of Basic Japanese Writing*, Kodansha International, Tokyo and New York 1989. նաեւ՝ Б.П. Лаврентьев, *Самоучитель японского языка*, Изд. Наука, Москва 1982 [B.P. Lavrentyev, *Teach Yourself Japanese*, Nauka Publ. House, Moscow 1982].

կը տառադարձէինք «ո», քանի որ, ինչպէս արդէն դրա մասին բազմիցս խօսել ենք, «ը» գրելը յարմար չէ բառամիջում: Սակայն այս «ս» տառը ունի մի առանձնայատկութիւն (դրա մասին կը խօսենք ավելի ուշ), ինչ եւ հայերէնի «գաղտնավանկ» [ը] հնչիւնը, այն է՝ օտար անունների մէջ լրացնել ծայնաւորների պակասը եւ այդպիսով ներդաշնակութիւն ապահովել վանկերի հերթագայութեան մէջ:

Այդուամենայնիւ, որքան էլ այս վերջին կէտը գայթակղիչ լինի (այն է՝ հայերէն գրել «ը», կամ չգրել ու արտասանել [ը]), մեր միակ լուծումը «ո»ով տառադարձումն է, մանաւանդ որ ո՛չ քանա վանկարաններում, ո՛չ էլ լատինագիր կամ սլաւոնագիր գրադարձութիւններում այդ երեւոյթը գրով չի արտայայտուի, ուստի տառադարձողը պէտք է այնքան լաւ ծանօթ լինի ճապոներէն անուններին եւ բուն լեզուին, որ կարողանայ որոշել թէ ո՞ր դիրքում կարող է այդ «ո»ն վերածել գաղտնավանկ «ը»ի: Մեր կարծիքով դա անյաղթահարելի դժուարութիւն է եւ իմաստ չունի այդ աստիճանի նրբութիւնը արտայայտել հայերէն տառադարձութեան մէջ:

Օրինակներ. **Abashiri Աբաշիրի**, **Amagasaki Ամագասակի**, **Ebina Եբինա**, **Edogawa Եդոգաւա**, **Akune Ակունէ**, **Higashine Հիգաշինէ**, **Ibaraki Իբարակի**, **Inamura Ինամուրա**, **Okinawa Ոկինաւա**, **Obama Ոբամա**, **Uruma Ուրումա**, **Utada Hikaru Ուտադա Հիկարու**, **Ueda Ուեդա**, **Kurume Բուրումէ**, **Tsurumi Յուրումի**:

բ) «ս» եւ «i» ծայնաւորների խլացումը

Ճապոներէնի «ս» եւ «i» ծայնաւորները, խուլ բաղաձայնների որոշակի շրջապատում, կարող են խիստ թուլանալ: Այն աստիճան որ ականջի համար դրանք գրեթէ անլսելի են դառնում¹¹. օր.՝ **gakusha** «գիտուն» (կենդանի արտասանութիւնը՝ [գակ(ը)շա]), **tsuki** «լուսին» (կենդանի արտասանութիւնը՝ [g(ը)կի]), **sukoshi** «սակա» (կենդանի արտասանութիւնը՝ [ս(ը)-կոշի]), **futa** «կափարիչ» (կենդանի արտասանութիւնը՝ [ֆ(ը)տա]), **shikashi** «սակայն» (կենդանի արտասանութիւնը՝ [շ(ը)կաշի]), **sakura** «(ճապոնական) բալենի» (կենդանի արտասանութիւնը՝ [սակ(ը)րա]), **musuko** «որդի» (կենդանի արտասանութիւնը՝ [մըս(ը)կո]): Հարց է՝ հաշուի առնել՝ այդ թուլացումը եւ այդ դիրքերում ոչ մի ծայնաւոր չգրել (տեղը համարել գաղտնավանկ «ը»), թէ՞ անտեսել այդ երեւոյթը: Տառադարձութիւնը պարզեցնելու նպատակով՝ մենք գտնում ենք, որ այդ թուլացումն արտայայտելը անիմաստ ճոխութիւն կը լինի, մանաւանդ որ գրութիւնը ոչ մի կերպ այն չի արտայայտում եւ տառադարձողը չի կարող գուշակել երեւոյթը:

Օրինակներ. **Asakuchi Ասակուճի**, **Hakusan Հակուսան**, **Kakuda Բակուդա**, **Hasuda Հասուդա**, **Ibusuki Իբուսուկի**, **Hiratsuka Հիրաճուկա**, **Shikotsu Շիկոճու**:

գ) երկայն ծայնաւորներ

¹¹ Labrune, *La Phonologie du japonais*, էջ 46 եւ յաջորդները:

Ճապոներէնի իւրաքանչիւր ծայնաւոր կարող է լինել նաեւ երկայն, այսինքն արտասանուել կրկնակի ամանակով: Ծապոներէնի համար դա իմաստորոշ դեր ունի: Հայերէնի տառադարձութիւնը սակայն չի հետեւում օտար լեզուների այդ երեւոյթին (որ մենք հանդիպել ենք հին յունարէնում, անգլերէնում եւ այլուր): Ուստի՝ ճապոներէնի տասը ծայնաւորները մենք վերածում ենք հինգ պարզ ծայնաւորի:

Ծապոներէնի հիրագանա գրութիւնը երկայնութիւնը արտայայտում է երկու տարբեր գործիքներով. «aa», «ii» եւ «uu» երկայնների համար գրում են մի երկրորդ տառ (նոյն տառից): Իսկ «ee»ի եւ «oo»ի համար երբեմն «ei» եւ «ou», երբեմն՝ նոյն տառը կրկնակի (կախուած է բառի ստուգաբանութիւնից): Մեզ պէտք է չլիթթեցնեն «ei» եւ «ou» գրութիւնները («կեղծ» կոչուող երկբարբառներ). դրանք ոչ թէ [եյ] եւ [օու] երկբարբառներ են, այլ պարզապէս երկայն ծայնաւորներ: Այլ հարց է թէ օրինակ «ei» երկայնը ստուգաբանօրէն եղել է երկբարբառ (եւ այժմ էլ ճապոնացիների մի մասը կարող է դա իբրեւ երկբարբառ արտասանել): Բայց քանի որ մետրոպէան հայերէնը չունի [եյ] երկբարբառ, մեր միակ տառադարձութիւնը «ե»ն է:

Լատինագիր գրադարձութիւնները կա՛մ կրկնում են ծայնաւորը, կա՛մ հետեւում են քանայի գրութեանը, կա՛մ ծայնաւորի վրայ երկայնի նշան դնում («oo, ou, õ, ô» – տե՛ս՝ Յաւելուած Բ.): Քատականայի վանկարանը երկայնացումը արտայայտում է միակերպ, ծայնաւորից յետոյ դնում է երկայնի նշան («—») (եթէ իհարկէ երկու ծայնաւորները ստուգաբանօրէն զատ միաւորներ չեն):

Միջազգային տառադարձութիւնների մէջ երկայնութիւնը սովորաբար չեն արտայայտում:

Օրինակներ. **Tōkyō** Թոկյո, **Kyōto** Քիոտո, **Ōsaka** Ոսակա, **Anjō** Անջո, **Honshū** Հոնշու, **Kyūshū** Քիուշու, **Kitaakita** Քիտակիտա, **Masaaki Sakai** Մասակի Սակայի, **Iizuka** Իձուկա, **Niigata** Նիգատա, **Meiji** Մեյջի, **Chikusei** Չիկուսէ, **Neishi** Նեյշի, **Keisuke Honda** Քեսուկէ Հոնդա:

դ) երկբարբառներ

Քերականութիւնների մեծ մասը ճապոներէնում երկբարբառներ իբրեւ այդպիսիք չի արձանագրում, դրանք համարում է մէկը միսին յաջորդող երկու ծայնաւոր՝ ամէն մէկը մէկական ամանակով: Կարող ենք միայն հարցը դնել «ai» կապակցութեան համար, որը կարող է ե՛ւ «այի»ի, ե՛ւ «այ»ի տեղ անցնել¹²: Արեւելահայ աւանդական տառադարձութեան մէջ (ռուսերէնի ազդեցութեամբ) խորհրդային շրջանից ունենք օրինակ՝ Հոկկայդո: Այդպիսի տառադարձութիւնը կարելի է պահել, առանց անշուշտ հրաժարուելու, այնտեղ որտեղ դա ակելի դիւրին է հնչում, «այի» գրութիւնից:

¹² Յիշեցնենք, որ եթէ «ai»ն տառադարձում ենք «աի», հայերէնում երկուսի միջեւ անհրաժեշտաբար «յ» ենք գրելու՝ «այի»:

Միս ծայնաւորների հետ առաջարկում ենք գրել «ի»՝ «oi» «ոյի», «ui» «ուի»:

Օրինակներ. Itoigawa Իտոյիգաւա, Koike Eiko Քոյկէ Եկո, Hakui Հակուի, Suita Սուիտա:

«Ա-ո» եւ «ո-ա» յօրանջի դէպքում հայերէնը աւանդաբար ներդրում է «ւ/վ» կամ «հ»: Ճապոներէնի համար մենք գերադասում ենք «հ»ն, իբրեւ աւելի «աննկատ» հնչիւն. Aomori Ահոմորի, Nagaoka Նագաօհակա, Toyoake Թոյոհակէ, Oamishirasato Ռհամիշիրասատո:

ե) բաղաձայնների շնչեղութեան հարցը

Ճապոներէնի խոլ բաղաձայնների շնչեղութեան հարցը արժանի է յատուկ ուշադրութեան: Քերականութիւններն ու դասագրքերը յստակ չեն. անգլերէնով գրուած դասագրքերը ասում են թէ «k-t-p» բաղաձայնները հնչում են ինչպէս անգլերէնի համապատասխան բաղաձայնները, իսկ ֆրանսերէնով գրուած դասագրքերը՝ իբր թէ դրանք նոյնն են ինչ եւ ֆրանսերէնի համապատասխան հնչիւնները: Արդ, մենք՝ հայերս խիստ զգայուն ենք շնչեղութեան նկատմամբ. մեզ համար «կ-տ-պ» շարքը նոյնը չէ ինչ «ք-թ-փ»ն: Այլ քերականներ նշում են որ դրանք աւելի «շնչեղ» են քան ասենք սպաներէնի համապատասխան բաղաձայնները, եւ նուազ շնչեղ քան անգլերէնինը: Նոյնիսկ հնչիւնաբանութեանը նուիրուած յատուկ աշխատութիւնները յստակօրէն ոչինչ չեն ասում¹³:

Մեր առաջին տպաւորութիւնն այն էր թէ ճապոներէնի այդ բաղաձայնները շնչեղ են՝ «ք-թ-փ»: Երբ լսում ենք ճապոնացիների «խնամքով արտասանած» վանկերը (ka-ki-ku-ke-ko, ta-chi-tsu-te-to, pa-pi-pu-pe-po), յստակօրէն լսում ենք շնչեղ բաղաձայններ (քա..., թա..., փա...): Սակայն լեզուին աւելի սերտ ծանօթութիւնը ճշգրտեց մեր այդ առաջին տպաւորութիւնը: Սովորական խօսքաշարի մէջ ճապոնացին շնչեղ է արտասանում միայն բառի *առաջին* բաղաձայնը, իսկ մնացածները թողնում է խոլ: Բնիկ զանազան մարդկանց լսելուց յետոյ այս համոզմունքն աւելի ամրացաւ մեր մէջ: Երբ ճապոնացին բառը արտասանում է վանկ առ վանկ, ամէն վանկ դառնում է «բառի» սկիզբ, ուստի նա դրանք շնչեղ է արտաբերում: Բայց այդ նոյն վանկերը սովորական խօսքի մէջ նորից վերածուծ են խոլ բաղաձայնների: Ճապոնիայի մայրաքաղաք Ծոկյօ անունը հնչում է [թոռոկյոռ], իսկ նոյն վանկերից կազմուած (ծայնաւորների երկայնութիւնը մի կողմ թողած) Kyōto քաղաքի անունը՝ [քյոտոտո]: Ասել է թէ՛ միեւնոյն բաղաձայնը պարունակող վանկով ճապոնական գիրը երկու զանազան հնչիւն է արտայայտում, որոնք սակայն միեւնոյն հնչոյթն են ճապոներէնի համար (բայց ոչ հայերէնի): Այս կաղապարը գուցէ բացարձակ չէ (յատուկ վիճակագրութիւն չենք անցկացրել), սակայն գերակշռող է:

¹³ Օրինակ՝ Լորանս Լաբրիւնի վերը նշուած աշխատութիւնը (Labrune, *La Phonologie du japonais*):

Երկար մտածելուց յետոյ որոշեցինք հենց այդ մօտեցումն էլ առաջարկել տառադարձութեան համար. բառասկզբին գրել հայերէնի շնչեղ բաղաձայնները՝ «ք-թ-փ», իսկ բառամիջում՝ խուլերը՝ «կ-տ-պ»: Այսպիսի լուծումը ոչ միայն առաւելագոյնս մօտենում է ճապոներէնի կենդանի արտասանութեանը, այլև նպաստում է արեւմտահայերէն ու արեւելահայերէն այսօր գոյութիւն ունեցող տառադարձութիւնների մերձեցմանը՝ երկուստեք զիջումներով: Այսօր արեւելահայերէնը (ռուսերէնի ազդեցութեամբ անշուշտ) գրում է Տոկիո, արեւմտահայերէնը՝ Թոքիո: Մեր առաջարկած ձեւը կ'ունենայ Թոկիո տեսքը¹⁴:

Անփորձ տառադարձողի համար դժուարութիւնն աննշան է:

Վերոնշեալից բխում է, որ «ch» եւ «ts» բաղաձայնները (որ «t»ի դիրքային այլահնչիւններն են համապատասխանաբար «i» եւ «u» տառերից առաջ) բառասկզբին գրելու ենք համապատասխանաբար «չ» եւ «ց» (իմա՝ շնչեղ), իսկ բառամիջին՝ «ճ» եւ «ծ» (խուլ):

Մնացած բաղաձայնները դժուարութիւն չեն ներկայացնում:

Օրինակներ զանազան բաղաձայնների՝ K – **Kadoma** **Ք**ադոմա, **Kawasaki** **Ք**աւասակի, **Sakuragawa** Սակուրագաւա, **Ibaraki** Իբարակի, **ikebana** իկեբանա, **karate** քարատէ, T – **Toyota** **Թ**ոյոտա, **Tanaka** **Թ**անակա, **Tanemaki** **Թ**անեմակի, **Atami** Ատամի, **Kitamoto** **Ք**իտամոտո, P – **Petegari** **Փ**ետեգարի, **Piratokomi** **Փ**իրատոկոմի, **Apoi** Ապոյի, **Pirika** **Ս**ուրիկա, **Nupuri** **Փ**իրիկա Նուպուրի, G – **Gobo** **Գ**ոբո, **Gosen** **Գ**ոսեն, **Kasuga** **Ք**ասուգա, **Megumi** Մեգումի, D – **Dodo** **Դ**ոդո, **Domoto** **Դ**ոմոտո, **Hamada** Համադա, B – **Bessan** **Բ**եսան, **Biwa** **Բ**իւա, **Abukuma** Աբուկումա, **Kobayashi** **Ք**ոբայաշի, M – **Murakami** **Մ**ուրակամի, **Minamata** **Մ**ինամատա, N – **Ninoto** **Ն**ինոտո, **Numanohara** Նումանոհարա, R – **Rebun** **Ռ**եբուն, **Rutori** **Ռ**ուտորի, **Akabira** Ակաբիրա, **Gamagori** Գամագորի, H – **Hamasaki** Համասակի, **Himi** Հիմի, **Asahi** Ասահի, **Mihara** Միհարա, **Sahoro** Սահորո, Y – **Yuri** **Յ**ուրի, **Yoko** **Յ**ոկո, **Yabu** **Յ**աբու, **Yamagata** **Յ**ամագատա, **Ayaka** Այակա, **Kanoya** **Ք**անոյա, W – **Wada** Վադա, **Warabi** Վարաբի, **Edogawa** Եդոգաւա, **Ginowan** Գինովան, **Iwakuni** Իւակունի, **Warusawa** Վարուսաւա, CH – **Chiba** Չիբա, **Chikuma** Չիկումա, **Chikamatsu** Չիկամածու, **Hitachi** Հիտաճի, **Kawaguchi** **Ք**աւագուճի, **Chichibu** Չիճիբու, **Tsuchida** Տսուճիդա, **Yamaguchi** **Յ**ամագուճի, TS – **Tsushima** **Տ**ոշիմա, **Tsuchiura** **Տ**սուճիուրա, **Karatsu** **Ք**արածու, **Nihonmatsu** Նիհոնմածու, **Matsushita** Մածուշիտա, **Mitsubishi** Միճուբիշի:

զ) «H» եւ «F» բաղաձայնների հարցը

¹⁴ Նոյն տրամաբանութեամբ առաջնորդուելով՝ «Ճապոն/Ճաբոն/Ճափոն» զուգահեռ ձեւերից ընտրեցինք «Ճապոն»ը, պահպանելով բառամիջի պարզ խուլ բաղաձայնը: Իդէպ՝ «Ճաբոն» արեւմտահայերէն ձեւը նոյնպէս դրա կողմնակիցն է, քանզի «բ» գրելով արեւմտահայերէնը ի սկզբանէ արտայայտում էր պարզ խուլ [aj] (IPA [p]) բաղաձայնը:

Ճապոներէն վանկարանի «H» տառի շարքում Հեփբուրնի գրադարձութիւնը «U» տառի համակցութեամբ գրում է «F» («ha-hi-fu-he-ho»): Այսինքն՝ ճապոներէնում «H» տառը «U»ից առաջ ձեռք է բերել [f]ին մօտ մի հնչիւն (IPA [ɸ]): Սակայն դա մեզ ծանօթ շրթնատամնային [ɸ]ն չէ: Ծապոնացիները հնչիւնն արտասանում են միայն շրթունքներով, կարծես լուցկի են փչում: Ակնյայտ է որ սա [h]ի մի ենթահնչիւն է: Իդէպ՝ պաշտօնական լատինագիր գրադարձութիւնը զանց է առնում հնչման այդ նրբութիւնը եւ պահպանում է հնչոյթը՝ «ha-hi-hu-he-ho»: Մենք նոյնպէս առաջարկում ենք ամէնուր գրել միայն «h» եւ բոլորովին չգրել «f»:

«H»ի շարքը պատմականօրէն եղել է «P», եւ այսօր էլ դեռեւս զգալի են դրա մնացուկները, օրինակ՝ խօսակցական *Nihon Ճապոնիա* անունը անելի բարձր ոճում հնչում է *Nippon*: Դա է նաեւ պատճառը, որ քանա գրութեան մէջ, «H» շարքը *ձայնեղացման կէտեր* ստանալով վերածում է «B» շարքի¹⁵:

Օրինակներ՝ Fukuoka **Հուկուկա**, Furano **Հուրանո**, Fushimi **Հուշիմի**, Gifu **Գիհու**, Kofu **Բոհու**, Takafumi **Թակահումի**:

է) «Z» բաղաձայնի «ձ / զ» երկընտրանքը

Ծապոներէնի «sa-shi-su-se-so» շարքին համապատասխանում է ձայնեղ «za-ji-zu-ze-zo» շարքը: Հեփբուրնի եւ պաշտօնական լատինագրութիւնները «s»ի դիմաց դրել են «z»: Կենդանի արտասանութիւնը սակայն միանշանակ [q] չէ. այն կարող է լինել [q], բայց անելի յաճախ [d] է: Քերականութիւնները բոլորն էլ գիտակցում են արտասանութեան այս երկուութիւնը: Թոկիոյի Ginza թաղամասի անունն օրինակ հնչում է [գինձա]: Ռուսերէնը տառադարձում է «дз»: Թէեւ երկու տառադարձութիւններն էլ («ձ» եւ «զ») ճիշտ կը լինէին, մենք որոշեցինք գրել «ձ», ճապոնական անուններին գուցէ եւ արեւելեան ինչ-որ համ տալու միտումով:

Օրինակներ. Zama **Ձամա**, Zushi **Ձուշի**, Zentsuji **Ձենձուջի**, Inazawa **Ինաձաւա**, Kanzaki **Քանձակի**, Bizan **Բիձան**, Suzuki **Սուձուկի**, Kisarazu **Քիսարաձու**, Unzen **Ունձեն**, Yamizo **Յամիձո**, banzai բանձայ:

ը) «shi» եւ «ji» վանկերի տառադարձումը

Ռուսերէնի անսացողութեան տակ գտնուող արեւելահայերէնը «shi» (IPA [ɕi]) եւ «ji» (IPA [dʑi]) վանկերը տառադարձել է «սի» եւ «ձի» (Հիրոսիմա, Ֆուձիյամա): Ռուս քերականներն իրենք էլ են գիտակցում դրա անճշտութիւնը, եւ ռուսերէնը այդպէս է գրում խուսափելու «ши, жи» գրելուց եւ այդ վանկերը կոշտ կարդալուց (քանի որ ռուսերէնում դրանք միշտ կոշտ են)¹⁶: Մենք կողմ ենք այդ վանկերը տառադարձելու ըստ Հեփբուրնի լատինագիր գրադարձութեան, որը եւ ամենամօտն է ճապոներէնի կեն-

¹⁵ Այստեղ չենք խորանայ ձայնեղացման կէտերի դերի եւ դրանց նրբութիւնների մէջ:

¹⁶ Лаврентьев, էջ 21:

դանի արտասանութեանը¹⁷: Արեւմտահայերէնը միշտ այդպէս է տառադարձել (անգլերէնից):

Օրինակներ. **Toshiba** Թոշիբա, **Hiroshima** Հիրոշիմա, **sushi** սուշի, **Shikoku** Շիկոկու, **Fukushima** Հուկուշիմա, **Higashimatsushima** Հիգաշիմա-ժուշիմա:

Ճապոնիայի սրբազան լեռան անունը ճապոնագիր գրում է 富士山, հիրագանայով 富士, Հեփրուրնը՝ Fujisan, պաշտօնական լատինագիրը՝ Huzisan: Ռուսերէնը գրում է Фудзияма, որից էլ սովետահայերէն Ֆուձիյամա: Անգլերէնն ասում է Mount Fuji, ֆրանսերէնը՝ Mont Fuji: Նախ՝ սխալ է «յամա» բառի առկայութիւնը տառադարձութեան մէջ (որ ճապոներէն նշանակում է «սար»): Ճապոներէնը ասում է Fuji-**san** («san» բառը չի նարէնից է. նոյնպէս նշանակում է «լեռ»): Մենք առաջարկում ենք տառադարձել միայն «Fuji/Huzi» անունը՝ Հուջի, իսկ «san»ը թարգմանել «լեռ», ինչպէս անում է մնացած լեզուների մեծ մասը: Ուրեմն հայերէն կը լինի՝ Հուջի լեռ:

Այստեղ ընդգծենք, որ «ji» վանկը ունի [ջի] արտասանութիւն, եւ այն պէտք չէ շփոթել նախորդ կէտի «z» բաղաձայնի [ձ] արտասանութեան հետ (որ շփոթում է ռուսերէնը):

Օրինակներ. **Dogojima** Դոգոջիմա, **Kuji** Բուջի, **Shinji** Շինջի, **Zentsuji** Չենժուջի:

թ) «ն / մ» երկընտրանքը

Ճապոներէնի «N/M» տառը (հիրագանա «ん», քատականա «ン»). միակ հնչիւնն է որ կարող է վանկ փակել) ունի միքանի այլահնչիւն արտասանութիւն: «M-B-P» շրթնայիններից առաջ հնչում է [մ], «K-G» քմայիններից առաջ IPA [ŋ], այլուր եւս՝ զանազան նրբութիւններով (հմմտ. հայերէնում՝ անամօթ, անտարբեր, անպայման, անկատար, անվաւեր, անսասան):

Մի կողմից՝ հնարաւոր է ճապոներէն «N/M» տառը ամէնուրեք տառադարձել «ն» (հայերէն տառերով գրուած բառն այնուհետեւ արտասանելով ըստ հայերէնի օրէնքների), միւս կողմից՝ գայթակղելի է «մ-բ-պ»ից առաջ գրել «մ» (ինչպէս դա անում են երբեմն Հեփրուրնի եւ ռուսերէն գրադարձութիւնները): Մենք գերադասում ենք այս վերջինը: Վերջնական որոշումը թողնում ենք ճապոնագէտներին եւ նախ եւ առաջ հայ լեզուաբաններին:

Օրինակներ՝ **shinbun/shimbun** շիմբուն, **Asahishinbun** Ասահիշիմբուն, **kanpai/kampai** քամպայ, **tenpura** թեմպուրա, **Gunma** Գումմա, **Kanmuri** Բամմուրի/Քանմուրի, **Monbetsu** Մոմբեժու, **Kinpu** Բիմպու:

ժ) բառամիջի ռնգային «զ»ի տառադարձումը իբրեւ «զ»

¹⁷ Վերջին տարիներին ռուսերէնն ինքն է հետեւում Հեփրուրնին. *суши/սուշի, Тошиба/Թոշիբա...*:

Ճապոներէն կենդանի արտասանութիւնը, յատկապէս անելի խնամ-
ուած ու բարձր ոճը, բառամիջի շատ «G»եր հնչեցնում է ոնգային տեսքով
(IPA [ŋ], ինչպէս հայերէն «անգամ» բառի միջի «ն»ն) կամ էլ շատ թոյլ
[ŋ]ին նմանուող արտաբերմամբ: Չենք կարծում սակայն որ այդ հնչումնե-
րը իրենց տեղը պէտք է ունենան մեր տառադարձութեան մէջ (հայատառ
գրութեամբ ոչ էլ կարող են ունենալ): «G» տառը միասնական հնչոյթ է եւ
այն այդպէս էլ պէտք է միշտ գրել: Այս ակնյայտ փաստը անելի շուտ ասում
ենք կենդանի արտասանութեամբ գայթակղուողներին՝ անելորդ բարդու-
թիւններ չներմուծելու համար:

Օրինակներ՝ Nagasaki Նագասակի, Koga Քոգա, Kagoshima Քագոշի-
մա, Kaga Քագա, Nagano Նագանո, Nagoya Նագոյա:

ժա) քմայնացած շարքերը

Ճապոներէն բաղաձայնների քմայնացած շարքերի մէջ հայերէն տա-
ռադարձութիւնն ընդհանրապէս արտայայտում ենք «ի» ձայնաւորի յաւե-
լումով. «կիա, կիու, կիո, գիա, գիու, գիո» են:

Այդուամենայնիւ, «S» եւ «T» բաղաձայնների համապատասխան շար-
քերը (ե՛ւ խու, ե՛ւ ձայնեղ) տառադարձում ենք առանց «ի» տառի յաւե-
լումի, ինչպէս եւ դրանք գրում են Հեփբուրնի գրադարձութեամբ. «sha, shu, sho» «շա, շու, շո» (եւ ոչ թէ «շիա, շիու, շիո»), «cha, chu, cho» «չա (ճա), չու (ճու), չո (ճո)», «ja, ju, jo» «ջա, ջու, ջո»: Իմաստ չունի բարդացնել հա-
յատառ գրութիւնը, մանաւանդ որ Հեփբուրնի լատինագիրն արդէն այդ-
պէս է: Պաշտօնական արդի լատինագիրը գրում է «sya, syu, syo, tya, tyu, tyo, zya, zyu, zyo» (հմմտ. Յաւելուած Ա.):

Քանի որ քմայնացած շարքերը շատ յաճախ չինական ծագման ար-
մատների մէջ են հանդիպում, նրանք անելի սակաւ են ճապոնական աշ-
խարհագրական անունների մէջ (որ անելի շատ բնիկ արմատներով են
կազմուած): Ուստի՝ օրինակների մէջ տալիս ենք նաեւ միքանի հասարակ
անուն (որ ինչպէս նշել ենք մեր առաջին յօդուածում, կարող են ամէն պա-
հի վերածուել յատուկ անունի):

Օրինակներ՝ **kyakuma** (հիւրասենեակ) **քիակումա**, **Kyushu** **Քիուշու**,
Ryukyu **Ռիուկիու**, **Kitakyushu** **Քիտակիուշու**, **Kyoto** **Քիոտո**, **Bunkyo** **Բուն-**
կիո, **gyakuryu** (հանդիպակաց հոսանք) **գիակուրիու**, **gyuniku** (տաւարի
միս) **գիոնիկու** (վառ օրինակ հասարակ գոյականի տառադարձելիու-
թեան – այսօր դարձել է խոհանոցային եզրոյթ), **Gyoda** **Գիոդա**, **Gyoja** **Գի-**
ոջա, **sanmyaku** (լեռնաշղթայ) սամ(ն)միակու, **Myoko** **Միոկո**, **Nyu** **Նիու**,
Ha'nyū **Yuzuru** **Հանիու** Յուծուրու, **ryakujī** (յապաւած գիր) **ռիակուջի**,
Goryu **Գորիու**, **Chiryu** **Չիրիու**, **Ryoko** **Yonekura** **Ռիոկո** Յոնեկուրա,
ryokucha (կանաչ թեյ) **ռիոկուչա**, **Hyakujō** **Հիակուջո**, **Hyuga** **Հիուգա**,
Hyogo **Հիոգո**, **byoin** (հիւանդանոց) **բիոյին**: **Shaka** **Շակա**, **Koshu** **Քոշու**,
Shuzo **Matsuoka** **Շուժո** Մաժուոկա, **Shunsuke** **Nakamura** **Շունսուկէ** Նակա-
մուրա, **Shosha** **Շոշա**, **Shobara** **Շոբարա**, **Chausu** **Չաիսու**, **Shibichari** **Շի-**

բիճարի, Chubu Չուբու, Fuchu Հուճու, Chofu Չոհու, Choshi Չոշի, Jakuchi Ջակուճի, Soja Սոջա, Kuju Բուջու, Okada Junichi Ոկադա Ջունիճի, Sanjo Սանջո, Hachijo-jima Հաճիջո-ջիմա:

Ժբ) կրկնակ բաղաձայններ

Թէեւ կրկնակ բաղաձայնները իմաստորոշ դեր ունեն ճապոներէնում, դրանք (ինչպէս եւ այլ օտար լեզուների պարագայում) աշխատում ենք հնարաւորինս պարզեցնել, այն է՝ գրել մէկ բաղաձայնով:

Օրինակներ. Hokkaido Հոկ(կ)այդո, Shakka Շակա, Nissan Նիսան, Tottori Թոտորի, Settsu Սեժու, Sapporo Սապորո, Beppu Բեպու, Nisshin Նիշին:

Ժգ) բառաբաժանում

Ճապոնացիները, ինչպէս եւ չինացիները, ասանդաբար գրում են առանց բացատների՝ բոլոր բառերը իրար կից (հին ու միջին դարերում՝ Արեւմուտքում էլ բոլոր լեզուներն այդպէս էին վարում): Սակայն քանի որ լատինագիր գրադարձութիւնը բառանջատում ունի, մենք էլ օգտուելով այդ գրութիւնից, մեր տառադարձութեան մէջ բառերն իրարից անջատելու ենք այնպէս, ինչպէս դա անում է Հեփբուրնի գրութիւնը: Բնականաբար չենք կարող, օրինակ՝ անուն-ազգանունը միասին՝ իրար կպած գրել:

Օրինակներ. Shinzo Abe Շինձո Աբէ, Misaki Ito Միսակի Իտո, Satomi Ishihara Սատոմի Իշիհարա, Akio Toyoda Ակիո Թոյոդա, Satoru Iwata Սատորու Իատա, Hiroshi Mikitani Հիրոշի Միկիտանի:

Ժդ) բառի շեշտը

Ճապոներէնում բառի շեշտը շարժական է եւ կարող է զանազան վանկերի վրայ ընկնել: Ինչպէս եւ բոլոր այլ օտար լեզուների պարագայում, հայերէնը անտեսում է դա եւ անունները շեշտադրում ըստ մեր լեզուի կանոնների, այն է վերջին վանկի վրայ:

Օրինակներ (ճապոներէնի շեշտը թաւ տառով է). Toyota, հայերէն՝ Թոյոտա՛, Takahashi Թակահաշի՛, Tanaka Թանակա՛, Watanabe Վատանաբէ՛, Yamamoto Յամամոտո՛, Nakamura [նակա՛մըրա] Նակամուրա՛: Ուստի՝ Hiroshima Հիրոշիմա՛ (եւ ոչ թէ Հիրոսի՛մա), Nagasaki Նագասակի՛ (եւ ոչ թէ Նագասա՛կի), Fukushima Հուկուշիմա՛ (եւ ոչ թէ Ֆուկուսի՛մա):

Ժե) օտար (անգլերէն եւ այլ) բառերի տառադարձումը

Ճապոներէնն ունի օտար բառերի (չինարէն ծագման բառերը չհաշուած) մի զգալի շերտ: Դրանք զանգուածաբար անլազան երկրորդ աշխարհամարտից յետոյ եւ մեծ մասամբ սերում են անգլերէնից: Ճապոներէնը սակայն դրանք յարմարեցրել է իր լեզուի հնչողութեանը եւ անունները շատ դէպքերում դարձել են անճանաչելի. Sumisu (անգլ. Smith ազգանունը), birudingu (անգլ. building «շէնք»), retaa (անգլ. letter «նամակ»), gaaru (անգլ. girl «աղջիկ»), bureddo (անգլ. bread «հաց»):

Հարցը նուրբ է. բառերը թողնել ճապոնակա՞ն հնչողութեամբ եւ ուղղագրութեամբ, թէ՞ դրանք վերածել հայերիս անլի ծանօթ անգլերէնի

(կամ երոպական այլ լեզուների) բնօրինակով: Այսպիսի անունների մեջ մանաւանդ շատ են ներյաւելուած «ու/ը»երը (լատինագիր «Ս»):

Պարզութեան համար՝ մենք կ'առաջարկէինք օտար անունները թողնել ճապոներէնի հնչողութեամբ ու գրութեամբ (այլապէս տառադարձողը պէտք է ամէն անգամ անդրադառնար աղբիւր լեզուին ու ճշտէր դրա գրութիւնը), հարկ եղած դէպքում արտաքսելով միայն աւելորդ «ու»երը:

Օրինակներ. takushii (taxi) թակշի (տաքսի), supootsu (sport) սպոժ (սպորտ), naifu (knife) նայֆ (եւ ոչ թէ նայիու), fooku (fork) ֆոկ (ֆո՛րք), gorufu (golf) գորֆ / գոլֆ, supagettii (spaghetti) սպագետի (ջնջելով յաւելադիր «Ս»ն՝ բառը վերգտնում է մեզ ծանօթ իր կերպարը. նմանապէս եւ յաջորդները), Furansu (France) Ֆրանս, resutoran (restaurant) ռեստորան, gurugupu (group) գրուպ:

ժգ) օտար բառերի համար գործածելի յաւելեալ վանկարան

Նոր օտար բառերը աւելի «հարազատօրէն» արտայայտելու համար ճապոներէն քատականա վանկարանը (որով գրում են նոր օտար բառերը) որդեգրել է վանկերի յաւելեալ մի խումբ (թուով քսան հինգ, որ բնաւ չի նշանակում թէ վաղը նորերը չեն ստեղծուելու): Դրանով փաստօրէն ճապոներէն լեզուն «յարմարեցրել» են օտարներին (նախ եւ առաջ անգլերէնին):

Հետեւեալ «վանկերը» ենթադրում են իբրեւ «նոր» բաղաձայններ՝ フ (fu) [ֆ], テ (te) [թ], ツ (tsu) [ց], チ (chi) [չ], シ (shi) [շ], ク (ku) [կ], ウ (u) [ւ], イ (i) [յ], ヲ (u dakuon – սա նորութիւն է որ չկայ աւանդական վանկարանում) [վ], デ (de) [դ], ジ (ji) [ջ], グ (gu) [գ]: Արանց վրայ աւելացնելով «փոքրատառ» «ア» (a) [ա], «イ» (i) [ի], «ユ» (yu) [յու], «エ» (e) [ե], «オ» (o) [ո]՝ ստանում են նոր հնչիւնակապակցութիւններ: Օրինակ՝ «ファ» [ֆա], «フィ» [ֆի], «フェ» [ֆե], «フォ» [ֆո], «ヴ»ն առանձին համարում է [վու/վը] են.: Այս համակցութիւնները գոյութիւն չունեն բուն ճապոներէն բառերում, ոչ էլ աւանդական չինարէն փոխառութիւններում:

Ճապոնացիները (ի տարբերութիւն չինացիների որոնք ամէն ինչ թարգմանում են) համարում են, որ օտար երեւոյթները աւելի լաւ է հենց օտար բառերով արտայայտել, եւ բնաւ չեն պայքարում անգլերէն բառերի հոսքի դէմ: Լինում են դէպքեր, երբ ճապոներէնը, արդէն ունենալով իր բառը (նոյնիսկ երկու բառ՝ մէկը բնիկ ճապոներէն, միւսը ժամանակին չինարէնից փոխ առած), նորից փոխ է առնում անգլերէն մի բառ եւ դրան իմաստային մի նոր երանգ տալիս: Օրինակ՝ «դուռ» բառը. 扉 (とびら) tobira, որ ճապոներէն բնիկ բառ է, ցոյց է տալիս ճապոնական աւանդական «ծ(դ)խնետոր դուռ» առարկան: Ճապոներէնը ժամանակին փոխ է առել չինարէն 門 (モン) mon բառը, որ նշանակում է «մեծ, ճոխ դուռ, դարպաս»: Զբաւարարուելով այդքանով, վերջին ժամանակներս անգլերէնից փոխ է առել նաեւ ドア doa բառը (անգլ. door), որին տուել է նոր իմաստ՝

«ժամանակակից դուռ՝ ինքն իրեն բացուող, սահող կամ՝ ապակեայ», մի խօսքով՝ եւրոպական ոճի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իբրեւ եզրակացութիւն, մեր մօտեցումը հետեւեալն է: Հաշուի առնելով Հեփբորնի գրադարձութեան լայն գործածութիւնը միջազգային ասպարէզում, կ'առաջարկէինք հիմնուել հենց այդ գրութեան վրայ, այն համեմատելով ու ճշտելով ճապոներէնի քանա վանկարանով, պաշտօնական լատինագրով ու ռուսական գրադարձութիւնով: Քանա գրութեան հետ համեմատելու գաղափարը ուղղուած է բնականաբար միայն ճապոնագէտներին. լայն հասարակութիւնը ի վիճակի չէ այն իւրացնելու:

Այսպիսով՝ ա) առնում ենք ճապոներէն անունների լատինագիր գրադարձութիւնը, բ) անունը տառադարձում ենք հայերէն՝ գրեթէ տառ առ տառ, ըստ վերը նշած սկզբունքների (տե՛ս նաեւ՝ Յաւելուած Բ.), գ) տառադարձուած անունը իվերջոյ «յղկում» ենք եւ դնում հայերէնի կաղապարի մէջ, օրինակ՝ բառասկզբին գրում ենք «յա, վա», իսկ բառամիջին՝ «իա, (ո)ա», բառավերջին «ե»ի փոխարէն գրում ենք «է» եւ այլն՝ համաձայն հայերէնի ուղղագրութեան:

Մեր նախորդ յօդուածների տեսական ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ ճապոներէնին, եւ այստեղ դրանք չենք կրկնում:

Անհրաժեշտ ենք համարում, որ հայ լեզուաբաններ եւ այլ մասնագէտներ վերանայեն ճապոներէնի տառադարձութիւնը եւ ճշտեն ու տարածեն ճապոնական անունների հայերէն միասնական գրելաձեւերը: Օգտակար կը լինէր կազմել համապարփակ մի աղիւսակ (բոլոր հնարաւոր վանկերի համակցութեամբ) եւ այն տրամադրել լրատուական միջոցներին, արտաքին գործոց նախարարութեանը եւ հարցին առնչութիւն ունեցող այլեւայլ կազմակերպութիւնների (աշխարհագրական հիմնարկներ, քարտէզագրական հրատարակչութիւններ, զանազան ուսումնավայրեր...):

Ինչպէս միշտ, ակնկալում ենք Հայաստանի պետական ու գիտական հաստատութիւնների գործուն ներգրաւումը միասնական տառադարձութիւն մշակելու ասպարէզում:

ՅԱԿԵԼՈՒԱԾ Ա. – ԱՂԻԻՍԱԿ ՎԱՆԿԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ
(ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԸՍՏ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՔԱՆԱ ՎԱՆԿԱՐԱՆԻ)

Հիրագանա	Քատականա	Հեփբորն	Նիհոնշիկի	Քունրեշիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
あ	ア	a	a	a	[a]	a	ա
い	イ	i	i	i	[i]	и/й	ի/յ
う	ウ	u	u	u	[u]	y	ու
え	エ	e	e	e	[e]	э	ե
お	オ	o	o	o	[o]	o	ո

Հիրագանա	Քատականա	Հեփբուրն	Նիհոնշիկի	Քունրեշիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
か	カ	ka	ka	ka	[ka]	ка	քա/կա
き	キ	ki	ki	ki	[kʲi]	ки	քի/կի
く	ク	ku	ku	ku	[ku]	ку	քու/կու
け	ケ	ke	ke	ke	[ke]	кэ	քե/կե
こ	コ	ko	ko	ko	[ko]	ко	քո/կո
さ	サ	sa	sa	sa	[sa]	ca	սա
し	シ	shi	si	si	[ɕi]	си	շի
す	ス	su	su	su	[sɯ]	cy	սու
せ	セ	se	se	se	[se]	сэ	սե
そ	ソ	so	so	so	[so]	co	սո
た	タ	ta	ta	ta	[ta]	та	թա/տա
ち	チ	chi	ti	ti	[tɕi]	ти	չի/ճի
つ	ツ	tsu	tu	tu	[tsɯ]	цy	ցու/ծու
て	テ	te	te	te	[te]	тэ	թե/տե
と	ト	to	to	to	[to]	то	թո/տո
な	ナ	na	na	na	[na]	на	նա
に	ニ	ni	ni	ni	[ɲi]	ни	նի
ぬ	ヌ	nu	nu	nu	[nɯ]	ny	նու
ね	ネ	ne	ne	ne	[ne]	нэ	նե
の	ノ	no	no	no	[no]	но	նո
は	ハ	ha	ha	ha	[ha]	ха	հա
ひ	ヒ	hi	hi	hi	[çi]	хи	հի
ふ	フ	fu	hu	hu	[ɸɯ]	фy	հու
へ	ヘ	he	he	he	[he]	хэ	հե
ほ	ホ	ho	ho	ho	[ho]	хо	հո
ま	マ	ma	ma	ma	[ma]	ма	մա
み	ミ	mi	mi	mi	[mʲi]	ми	մի
む	ム	mu	mu	mu	[mɯ]	my	մու
め	メ	me	me	me	[me]	мэ	մե
も	モ	mo	mo	mo	[mo]	мо	մո
や	ヤ	ya	ya	ya	[ja]	я	յա/իա
ゆ	ユ	yu	yu	yu	[jɯ]	ю	յու/իու
よ	ヨ	yo	yo	yo	[jo]	ë	յո/իո
ら	ラ	ra	ra	ra	[ra]	pa	րա
り	リ	ri	ri	ri	[ɾi]	pi	րի
る	ル	ru	ru	ru	[ɾɯ]	py	րու
れ	レ	re	re	re	[ɾe]	pэ	րե
ろ	ロ	ro	ro	ro	[ɾo]	po	րո
わ	ワ	wa	wa	wa	[wa~ɰa]	va	վա/(ն)ա
ゐ	ヰ	(w)i	wi	i	[i]	vi	ի
ゑ	ヱ	(w)e	we	e	[e]	vэ	ե
を	ヲ	(w)o	wo	o	[o]	vo	ո

Հիրագանա	Քատականա	Հեփբուրն	Նիհոն-շիկի	Քունրե-շիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
ん	ン	n-n'(-m)	n-n'	n-n'	[m~n~ŋ~N]	-н	ն/մ
が	ガ	ga	ga	ga	[ga]	га	գա
ぎ	ギ	gi	gi	gi	[gi]	ги	գի
ぐ	グ	gu	gu	gu	[gu]	гу	գու
げ	ゲ	ge	ge	ge	[ge]	гэ	գե
ご	ゴ	go	go	go	[go]	го	գո
ざ	ザ	za	za	za	[za~dza]	дза	ծա
じ	ジ	ji	zi	zi	[zi~dzi]	дзи	ջի
ず	ズ	zu	zu	zu	[zu~dzuu]	дзу	ծու
ぜ	ゼ	ze	ze	ze	[ze~dze]	дзэ	ծե
ぞ	ゾ	zo	zo	zo	[zo~dzo]	дзо	ծո
だ	ダ	da	da	da	[da]	да	դա
ぢ	ヂ	ji	di	zi	[zi~dzi]	дзи	ջի
づ	ヅ	zu	du	zu	[zu~dzuu]	дзу	ծու
で	デ	de	de	de	[de]	дэ	դե
ど	ド	do	do	do	[do]	до	դո
ば	バ	ba	ba	ba	[ba]	ба	բա
び	ビ	bi	bi	bi	[bi]	би	բի
ぶ	ブ	bu	bu	bu	[bu]	бу	բու
べ	ベ	be	be	be	[be]	бэ	բե
ぼ	ボ	bo	bo	bo	[bo]	бо	բո
ぱ	パ	pa	pa	pa	[pa]	па	փա/պա
ぴ	ピ	pi	pi	pi	[pi]	пи	փի/պի
ぷ	プ	pu	pu	pu	[pu]	пу	փու/պու
ぺ	ペ	pe	pe	pe	[pe]	пэ	փե/պե
ぽ	ポ	po	po	po	[po]	по	փո/պո
きゃ	キャ	kya	kya	kya	[k'a]	кя	քիա/կիա
きゅ	キュ	kyu	kyu	kyu	[k'iu]	кю	քիու/կիու
きょ	キョ	kyo	kyo	kyo	[k'o]	кё	քիո/կիո
ぎゃ	ギャ	gya	gya	gya	[g'a]	гя	գիա
ぎゅ	ギュ	gyu	gyu	gyu	[g'iu]	гю	գիու
ぎょ	ギョ	gyo	gyo	gyo	[g'o]	гё	գիո
しゃ	シャ	sha	sya	sya	[ɕa]	ся	շա
しゅ	シュ	shu	syu	syu	[ɕiu]	сю	շու
しょ	シヨ	sho	syo	syo	[ɕo]	сё	շո
じゃ	ジャ	ja	zya	zya	[za~dza]	дзя	ջա
じゅ	ジュ	ju	zyu	zyu	[zu~dzui]	дзю	ջու
じょ	ジョ	jo	zyo	zyo	[zo~dzo]	дзё	ջո
ちゃ	チャ	cha	tya	tya	[tea]	тя	չա/ճա
ちゅ	チュ	chu	tyu	tyu	[teiu]	тю	չու/ճու

Շիրագանա	Քատականա	Հեփբուրն	Նիհոն-շիկի	Քունրե-շիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
ちよ	チヨ	cho	tyo	tyo	[tɕo]	тѐ	չո/ճո
ぢゃ	ヂャ	ja	dya	zya	[za~dza]	дзя	ջա
ぢゅ	ヂュ	ju	dyu	zyu	[zu~dzu]	дзю-	ջու
ぢょ	ヂョ	jo	dyo	zyo	[zo~dzo]	дзѐ	ջո
にゃ	ニャ	nya	nya	nya	[ɲa]	ня	նիա
にゅ	ニュ	nyu	nyu	nyu	[ɲu]	ню	նիու
にょ	ニョ	nyo	nyo	nyo	[ɲo]	нѐ	նիո
ひゃ	ヒャ	hya	hya	hya	[ɕa]	хя	հիա
ひゅ	ヒュ	hyu	hyu	hyu	[ɕu]	хю	հիու
ひょ	ヒョ	hyo	hyo	hyo	[ɕo]	хѐ	հիո
びゃ	ビャ	bya	bya	bya	[bʲa]	бя	բիա
びゅ	ビュ	byu	byu	byu	[bʲu]	бю	բիու
びょ	ビョ	byo	byo	byo	[bʲo]	бѐ	բիո
ぴゃ	ピャ	pya	pya	pya	[pʲa]	пя	փիա/պիա
ぴゅ	ピュ	pyu	pyu	pyu	[pʲu]	пю	փիու/պիու
ぴょ	ピョ	pyo	pyo	pyo	[pʲo]	пѐ	փիո/պիո
みゃ	ミャ	mya	mya	mya	[mʲa]	мя	միա
みゅ	ミュ	myu	myu	myu	[mʲu]	мю	միու
みょ	ミョ	myo	myo	myo	[mʲo]	мѐ	միո
りゃ	リャ	rya	rya	ry	[ɕa]	ря	րիա
りゅ	リュ	ryu	ryu	ryu	[ɕu]	рю	րիու
りょ	リョ	ryo	ryo	ryo	[ɕo]	рѐ	րիո

ՅԱԻԵԼՈՒԾ Բ. – ԱՂԻՒՍԱԿ ՀԵՓՐՈՒՐՆԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՄԲ
 ԼԱՏԻՆԱԳԻՐ ՃԱՊՈՆԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԵՐԻ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹԵԱՆ («Չ-, Ք-, Փ-, Թ-, Յ-» ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ՝
 ԲԱՌԱՍԿՁԲԻ ՀԱՄԱՐ)

Հեփբուրն	Հայերէն
a	ա
b	բ
ch	չ- / ճ
d	դ
e	ե
f	հ
g	գ
h	հ
i	ի / յ
j	ջ
k	ք- / կ
m	մ
n	ն
o	ո

Հեփբուրն	Հայերէն
p	փ- / պ
r	ր
s	ս
sh	շ
t	թ- / տ
ts	ց- / ծ
u	ու
w	վ / (ն)ւ
y	յ / ի
z	ձ
aa, ā, â	ա
ee, ei, ē, ê	ե
ii	ի
oo, ou, ō, ô	ո
uu, ū, û	ու

THE PRINCIPLES OF TRANSLITERATING (TRANSCRIBING) FOREIGN PROPER
NAMES INTO ARMENIAN, PART IX – JAPANESE LANGUAGE
(SUMMARY)

ARMEN MICHAELIAN
armen_michaelian@yahoo.com

This article is one of the series that deals with the transliteration (transcription) of foreign proper names into Armenian (the way to transcribe foreign names in Armenian characters). The references of the previous articles are:

1) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 40, Haigazian University Press, Beirut 2020, pp. 341-64.

2) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part II – Classical Languages (Ancient Greek and Latin) [in Armenian], *Bazmavep*, Year CLXXVIII, Venice 2020, No. 1-2, pp. 304-36.

3) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 41, Haigazian University Press, Beirut 2021, pp. 443-466.

4) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part IV – English Language [in Armenian], *Handes Amsorya*, Year CXXXV, Vienna 2021, pp. 197-246.

5) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part V – German Language [in Armenian], *Bazmavep*, Year CLXXX, Venice 2022, No. 1-2, pp. 277-303.

6) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VI – Italian and Spanish Languages [in Armenian], *Bazmavep*, Year CLXXX, Venice 2022, No. 3-4, pp. 271-300.

7) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VII – Russian (Compared to Other Slav[on]ic Languages) [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 42/2, Haigazian University Press, Beirut 2022, pp. 169-198.

8) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VIII – Chinese Language [in Armenian], *Bazmavep*, Year CLXXXI, Venice, 1-2:2023, pp. 272-305.

The present part of the series is devoted to the transliteration (transcription) of names of Japanese origin. The principle of transliteration is based (as in the whole series) on classical Armenian spelling, definitely ruling out “Soviet” transliteration on one side and “Cilician” transliteration on the other. After a reminder of the phonological and orthographic principles of Armenian transliteration mentioned in the first articles of the series, the author scrutinizes the most problematic sounds and phonemes of Japanese and confirms or proposes (based on numerous examples) a coherent and principled transliteration for each of them.

The series of articles will continue with two other important languages for the Armenian world – Hindi and Georgian.

ՔԵՍԱՊԻ ՈՒՏԵԼԻ ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ՎԱՅՐԻ ԲՈՅՍԵՐԸ¹

ՅԱԿՈԲ ԶՈԼԱՔԵԱՆ
hagopcholakian@hotmail.com

ՄՈՒՏՔ

Քեսապի շրջանի ուտելի հատապտղային վայրի բոյսերը երկու խումբի կարելի է բաժնել.-

ա.- Անտառային վայրի բուսականություն: Շրջանը ունի ծովամերձ տարածություններ, տեղ մը չոր ու արեւոյէմ, ուրիշ տեղ՝ խոնաւ լեռնագօտիներ, ձորեր ու սարատափեր եւ անոնց բնորոշ բուսական ծածկոյթ: Կարգ մը բոյսեր կ'աճին մեծ խտութեամբ ու մեծ անտառներ կը կազմեն, ոմանք ցանցառ են ու կը հանդիպին հոս ու հոն:

բ.- Պարարտ հողերու եւ ցանքատարածքներու մէջ յայտնուած տարատեսակ բոյսեր, որոնց գիւղացին կու տայ թրքերէն «Պոքտան պիթմա» անունը, այսինքն՝ գետին ինկած կորիզներէն, թափառող կենդանիներու կղանքէն ու գաղթող թռչուններու ծիրտէն բուսած բոյսեր:

Գիւղացին թէ՛ անտառային եւ թէ՛ պարտէզին մէջ յայտնուած այս բոյսերը կը ճանչնայ *պըրրի* (վայրի) մակդիրով: Երբ տակաւին երկրին մէջ չկային արդի մասնագիտացուած սածիլանոցները՝ գիւղացին այս վայրի կամ ինքնաբոյս բազմամեայ բոյսերը կ'օգտագործէր իբրեւ սածիլ, կը տնկէր իր պարտէզին մէջ յարմար տեղ մը՝ երկրորդ տարին ընտիր պտղատեսակով մը պատուաստելու համար:

1950ականներէն սկսեալ շրջանի բնակչութիւնը կամաց-կամաց ցանքի եւ արտի մշակութենէն անցաւ պարտիզամշակութեան: Լեռնային վայրի հատապտուղները գրեթէ մոռցուեցան, բայց քանի մը տեսակը միջեւ օրս կը պահեն իրենց կարեւորութիւնը, կը հաւաքուին, կ'արդիւնահանուին եւ կոկիկ եկամուտ մը կ'ապահովեն գիւղացիին:

1.- ԱՂՋԻՐԻՆԱ.- Հայերէն՝ եղջերենի, պտուղը՝ *աղջէր*, հայերէնը՝ եղջիւր: Fabaceae/հաճարագգիներու ընտանիքէն *Ceratonia siliqua*, անգլ.՝ carob tree, արաբ.՝ *խառնուպ*: Ըստ Մալխասեանցի՝ եղջերենին «*Թիթեռնածաղկներու կարգին պարկանող ծառ է՝ մշտականաչ կաշեկերպ փետրաւոր տերեւ-*

¹ Ուսումնասիրութեան համար օգտագործած ենք նաեւ՝ Յակոբ Զոլաքեանի, Քեսապի բարբառը (Երեւան, 2009), Նորայր Ն. Բիւզանդացիի, *Հայ պարտէզ* (Ժնեւ, 2001), նոյնի՝ *Քննադատութիւն Հայրուսակի* (Վիեննա, Մխիթարեան տպ., 1925), Ռուբէն Ս. Ղազարեանի *Բուսանունների հայերէն-լատիներէն-ռուսերէն-անգլերէն-ֆրանսերէն-գերմաներէն բառարան* (Երեւան, ԵՊՀ հրատ., 1981), Armenag K. Bedevianի, *Illustrated Polyglottic Dictionary of Plant Names, Latin, Arabic, Armenian, English, French, German, Italian and Turkish Languages* (Գահիրէ, 1994) գիրքերը:

ներով, ծիրանագոյն կարմիր ծաղիկներով, որ բերում է եղջիր կոչուած պտուղը. *Caratonia siliqua*»²:

Եղջիր>աղջեր բառը բազմանիշ է. կը նշանակէ նաեւ կոտոշ, որ յատուկ է որոճացող կենդանիներուն: Պտղաքարերն ու շթաքարերն ալ *աղջեր* կը կոչուին Քեսապի բարբառին մէջ. ծովադէմին կը գտնուի *Աղջըրնուպ մաղարան*³ Եղջիրոտ քարայրը:

Եղջերենին Քեսապի շրջանին մէջ բաւական խտութեամբ կը հանդիպի ծովամերձ վայրերու մէջ. խնամուածը կրնայ հսկայ ծառի տեսք ունենալ: Ամենամեծ եղջերենին - աւելի մեծ է քան հսկայ ընկուզենի մը - կը գտնուի Գարատուրանի Մանճիկեան թաղին մէջ: Երկարակեաց ծառ է, կ'ապրի աւելի քան հարիւր տարի, կը չորնայ, բայց կոճղէն նոր ծիւր կ'արձակէ: Տնկովի տեսակին չեմ հանդիպած: Ունի որձ ու մատակ տեսակը. որձը կը պատուաստուի ու կը դառնայ պտղատու:

Պտուղը՝ եղջիրը, կ'ըլլայ մինչեւ 20 սմ. երկարութեամբ, 3 սմ. լայնքով, երբեմն՝ փնջածեւ, մէկ կողմին վրայ մինչեւ հինգ-վեց հատ: Կարծր պտուղ է, ելունդաւոր երիզը հիւթեղ բաժինն է, քաղցր, կեղորոնը՝ հունտոտ: Նախ կանաչ է, հասունը՝ շագանակագոյն: Բերքը երկար ատեն կը դիմանայ, չի փճանար:

Բերքը կը հաւաքուի Սեպտեմբերի վերջաւորութեան: Նիհարկեկները կը յատկացնեն կովերուն: Հաստերը կը ճզմուին պաթոսին մէջ կամ լոլի տակ, երբեմն սանդի մէջ կը ծեծուին թակով, խիւսը կը դրուի ջուրի մէջ: Յետոյ խիւսը կը քամուի, ու ջուրը երկարօրէն կ'եռայ մեծ լաղի մէջ, խաղողի հնձանի կրակին վրայ, որմէ կը պատրաստուի *աղջըրը ըռոսպ*⁴ եղջիրի ռուպ՝ տոշաբ, որ հոտաւէտ ու ընտիր քաղցրաւենիք է, սնունդի հիմնական տեսակ:

Եղջիրի ռուպը շատ աւելի թանկ կ'արժէ, քան խաղողինը: Կը վաճառուի Քեսապի շուկային մէջ: Ռուպի արդիւնաբերութիւնը տակաւին եկամտաբեր է:

Տիաս եղջիրը կը խաշեն իբրեւ թէյ, ու շաքարախտաւոր հիւանդներուն կը խմցնեն: Ռուպը դեղ է հագի դէմ, նաեւ դեղնախտով վարակուած փոքրիկներուն համար: Ան փորը կը կակուղցնէ, կուրծքին եւ թոքերուն հանգստութիւն կը պարգեւէ, երբ *գազմիկ* կոչուած բոյսին թէյին խառնելով կը խմուի: Թէյը կը խաշուի քիչ մըն ալ անխոն դնելով:

Կը յիշուի խաղիկներուն մէջ.

Աղջերը թարթէք թարթէք,

Ե՛՛օ մընէցէք Ծուլը թաղէք:

- Եղջիրը ծուռտիկ-մուռտիկ,

Ո՞ր մնացիք Ծուլու թաղիք:

Անցեալին եղջերենի ծառը հոր կողմէ կրնար իբրեւ օժիտ պարգեւուիլ հարսնացող աղջկան: Մինչեւ հիմա ալ շրջանին մէջ կան այդպիսի ծառեր,

² Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացաւորական բառարան*, Ա. հոյր., եղջերենի, բ. տիպ, տպ. Սեւան, Պէյրուօ, 1955, էջ 561:

որոնք սերունդէ սերունդ կ'անցնին կնոջ ժառանգներուն, մինչ կալուածը ուրիշ սեփականութիւն է:

2.- ԱՂՏԸՐԻՆԱ.- Հայերէն՝ աղտորենի, պտուղը՝ *աղտոր*, հայերէնը՝ աղտոր: Anacardiaceae/աղտորազգիներու ընտանիքին պատկանող Sumac՝ սումախ: Ըստ Մալխասեանցի՝ «*Բոյս, որի չորացրած փոշին ցանում են ծուածեղի, ձկան եւ լուլաքաբարի վրայ. կոծոխուր, սմաղ, սօմաք (Rhus coriaria)*»³: Ըստ Աճառեանի՝ «*մի տեսակ թթու բոյս, որի փոշին Կովկասում եւ Պարսկաստանում ծուածեղի, ձկան եւ լուլա քեբարի վրայ են ցանում: Օդար լեզուով՝ սումախ, որ կու գայ ասորերէն՝ սումազա բառէն, որ սկզբնապէս կը նշանակէ կարմիր*»⁴:

Աղտորենին մեծ խտութեամբ կ'աճի գլխաւորաբար գետնասահքի ենթարկուած «խաղցած» գետիններու մէջ, որ մշակելի չեն: Այդպիսի տարածութիւններ շատ կան Գարատուրան գիւղի կեդրոնական շրջաններուն մէջ: Մէկ տարեկանը ունի ուղղաձիգ ցօղուն, որ յետագային կը ճիւղաւորուի ու 2-2,5 մետր հասակով թուփի կը վերածուի: Խնամուածը ծառի տեսք ալ կրնայ ունենալ: Մշակուած արտերուն մէջ եւս արագ կը տարածուի, բայց թաց եղանակին հեշտութեամբ արմատախիլ կ'ըլլայ: Կոթունին վրայ ունի զուգադիր հինգ զոյգ տերեւ եւ հատ մըն ալ ծայրը: Տերեւթափի կ'ենթարկուի: Կայ երկու տեսակ՝ պտղատուն եւ անպտուղը: Պտուղը ողկուածու է: Օգոստոսի երկրորդ կիսուն կը կարմրի: Չափազանց թթու պտուղ է, խէժոտ: Կը քաղեն, կը չորցնեն, սանդի մէջ կը ձեծեն, մաղէ կ'անցընեն, հունտը կը թափեն ու փոշին, իբրեւ ընտիր համեմունք, լայնօրէն կը գործածեն ճաշատեսակներու եւ աղցաններու մէջ: Հունտը ոսպէն քիչիկ մանր է, սակայն շատ կարծր:

Ոմանք աղտորէն թթու մածուկ եւս կը պատրաստեն: Ողկոյզները կը դնեն ջուրի մէջ, ապա ջուրը երկարօրէն եռացնելով կ'ունենան թթու թանձր հեղուկը, որ լայնօրէն կը գործածուի կարգ մը ճաշերու պատրաստութեան մէջ:

Աղտորենին երկարակեաց ծառ չէ, խնամուածը կ'ապրի շուրջ տասը տարի, կը չորնայ, բայց տարածքին մէջ աւելի մեծ խտութեամբ կը տարածուի:

Քեսապի անտառային տնտեսութեան մէջ շատերու բաւարար եկամուտ կ'ապահովեն աղտորի փոշին ու մածուկը: Անպտուղ տեսակը կը պատուաստեն: Պատուաստուած ծառը աւելի մեծ պտուղ կ'ունենայ:

Գարնան հօտաղ տղաք աղտորենիէն թզաչափ ոստ մը կտրելով սուլիչ կը պատրաստեն:

³ Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացաբարական բառարան*, Ա. հոյր., Աղտոր, էջ 50:

⁴ Հր. Աճառեան, *Հայերէնի արմաբարական բառարան*, Ա. հոյր., Աղտոր, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1971:

Որոճացող կենդանիները ցորեն, արմտիք եւ հացեղէն շատ ուտելու պարագային անմարսողութիւն (*համըր*) երբ ունենան՝ աղտորի թթու ջուր կը խմցնեն:

Լուծի դէմ պայքարելու համար աղտորի փոշին առատօրէն կ'ուտեն՝ գլխաւորաբար խաշած հաւկիթին ու գետնախնձորին հետ: Մեղրով խառնուած աղտորի փոշին թութքէն վարակուածները կ'ուտեն, կը բուժէ:

3.- ԲՈՒՎԿԻՆԱ.- Հին հայերէն՝ բեւեկնի, պտուղը՝ *բուվիկ*, հայերէնը՝ բեւեկ, արբ.՝ *պըղըն*: Anacardiaceae/աղտորագգիներու ընտանիքին պատկանող Pistacia terebinthus: Ըստ Աճառեանի՝ «*մի տեսակ սեւ ու փոքրիկ պտուղ, որից պատրաստուած են բեւեկնի իւղը, լյո. Pistacia terebinthus*»⁵:

Բեւեկնին վայրի թութի է, խնամուածը՝ կրնայ ծառի տեսք ունենալ: Կայ երկու տեսակ՝ ործն ու մատակը, պտղատուն եւ ոչ: Բեւեկնին կ'աճի բարեխառն միջավայրի մէջ: Տերեւաթափի կ'ենթարկուի: Գարնան կը ծի. կոթունին հակադիր կողմերուն վրայ կ'ունենայ մինչեւ չորս զոյգ հաւկթածեւ տերեւ: Թարմ մորջը՝ *մուրջէկ*, փնջածեւ է, կարմիր կոթունով: Երկարակեաց ծառատեսակ է:

Պտուղը ողկուածեւ է, հատիկները մանր. նախ ճերմակ է, ապա կը կարմրի եւ Օգոստոսի կիսուն կը կապուտնայ (*կը լըրջանու*), եթէ եղանակը խոնաւ ըլլայ: Հայերէն արմատական բառարանի յիշած սեւ տեսակը անծանօթ է մեր միջավայրին: Քաղը կը կատարուի երկու ասի մէջ ողկոյզը տրորելով՝ *ճրկելով*: Իւէժոտ պտուղ է, քաղի ատեն ձեռքերն ու գլուխը կը ծածկեն, որ խէժ չփակի ու չչորնայ: Մաքրելը դժուար կ'ըլլայ: Նորաքաղ պտուղը կը դնեն ջուրի մէջ, կապոյտը կը նստի յատակին, իսկ կարմիր հատիկները եւ խեղերանքները կ'ելլեն ջուրի մակերեսին: Կապոյտը աղով կը խառնեն ու կը փոռն չորցնելու: Տոպրակով կ'ամբարեն: Պէտք եղած ատեն հիւրերու ներկայութեան իսկ կը խարկէին՝ տապակին մէջ կաթիլ մը ձէթ դնելով: Անուշ կը բուրէ: Բոված բեւեկը կը խառնեն բոված ցորենին, սիսեմին եւ դդումի կուտին եւ այդպէս կը հրամցնեն: Այս աղանձին *գավորմու* կ'ըսեն: Ձմռան երեկոյթներուն գաւաթ մը գինիի հետ փնտոռուած աղանդեր էր: Բովածը կը ծեծեն ու կը գործածեն կարգ մը ճաշատեսակներու մէջ:

Բեւեկի մթերքը կը վաճառուի Քեսապի շուկային մէջ:

Ամէն տուն պարտէզին մէկ անկիւնը անպայման բեւեկնի մը կը խնամէր: Հսկայ ծառ կ'ըլլայ: Պտուղը կը քաղէին կամ ծառը որսատեղ կ'ընէին: Օգոստոսի երկրորդ կիսուն, երբ հատիկները կապուտնան, հոն թռչունները կերի կ'իջնեն: Թռչնորսի համար ծառին վրայ տեղքի ուտեր կը փոռն: Տեղը որսորդական կաշուն մածուկ է: Կայ թռչնատեսակ մը, որ *բըվկա* կը կոչուի: Կայ նաեւ ուտելի խոտ մը *բուվկէօկ* անունով:

Բեւեկնին կարելի է պատուաստել Հալէպի պիստակ: Առաջին փորձը կատարած է Քեսապի Աւետարանական եկեղեցւոյ հովիւ վերապատուելի

⁵ Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Ա. հրր., Բեւեկն:

Տիգրան Գունտաքճեան, 1908ին: Պատուաստը յաջողած է, բայց պիստակի կորիզը չէ ճեղքուած՝ Քեսապի խոնաւ եղանակին պատճառով: Այդ ծառերէն մէկ-երկու հատին տակաւին կարելի է հանդիպիլ շրջանին մէջ⁶:

Պտուղի ողկոյզին կից կ'աճի եղջիւրի նմանող խէժոտ պարապ պարկուճ մը, որուն վրայ սոսինձի պէս հաւաքուած կ'ըլլայ խէժը: Խէժը կը քաղեն, կը չորցնեն, փոշին մեղրով կը կերցնեն թոքախտէ տառապողներուն: Խէժը կը կոչուի *բըվկը ծուօյթ*: Բեւեկնի ձէթի արդիւնաբերութիւն Քեսապի մէջ ծաւօթ չէ ինձի:

Բեւեկէն բացի՝ ուտելի է նաեւ բեւեկնի թարմ մորջը՝ *մուրջէկ*: Այդպէս կ'ուտեն, նաեւ ընտիր աղցան կը պատրաստեն. կը բրդեն, կանաչ կամ չոր սոխ մըն ալ կ'աւելցնեն, կը խառնեն դգալ մը լոլիկի ջուրին, երկու կաթ նոան թթուին եւ ձէթին հետ՝ պտղունց մը աղով:

Բեւեկնի տերեւը ջուրին մէջ տրորելու պարագային՝ կը փրփրի օճառի պէս եւ ունի մաքրելու յատկանիշ: Ծխախոտի տերեւները քաղելու ատեն մարդու մատները եւ ափերը կը ծածկուէին ծխախոտի կաշտուն խէժով: Ափով կը սկրթէին բեւեկնիի ոստի մը տերեւները ու ջուրին մէջ տրորելով կը մաքրէին իրենց ձեռքերը:

4.- ԳԱՍԼԱՊԱ.- Ericaceae/հաւամրգազգիներու ընտանիքին պատկանող *arbutus xalapensis*: Հայերէնը պիտի հնչուէր գասլապի. արբ.՝ *գասլապ*: Գասլապին Քեսապի շրջանին մէջ կը հանդիպի գրեթէ ամէն տեղ, մասնատրաբար ծովափնեայ տարածքներուն մէջ: Թուփ է, տեղ-տեղ բարձր ու բազմաոստ ծառ, հեռուներէն անտառին մէջ ճանաչելի կ'ըլլայ ոչ միայն իր փարթամ կանաչով, այլեւ ցօղունին եւ ճիւղերուն կարմիր ու ողորկ կեղեւով: Ունի մշտադալար հաւկթածե պիրկ ու փայլուն տերեւ: Ճերմակ ծաղկեհոյլերը կու տան փնջածե պտուղ մը, կլոր հատիկներով ու երկար կոթունով: Պտուղը նախ կը կարմրի, ապա հասունը կը դառնայ գինեգոյն: Համեղ, քաղցր պտուղ է: Անտառներէն անցող որսորդներն ու հօտաղները կ'ուտեն, գրպան մըն ալ տուն կը բերեն:

Փայտը դեղին է, լայնօրէն գործածուած է դգալ, շերեփի ու սանր շինելու համար: Ամենէն ընտիր փայտերէն մէկը կը նկատուի:

Գասլապի պտուղը բարբառով կը կոչուի *գասլապը մէթէօզ*: *Մաթէօզ* կը կոչուի նաեւ այլ պտուղ մը, հայերէն՝ ադամաթուզը, նաեւ կ'ըսեն *մոզիկ թուզ*, օտար բառով՝ *քարալիոք*: Կը կարծենք *մաթուզ* բառը ամփոփուած է *ադամաթուզ* բառէն:

Ինձի ծանօթ չէ, թէ այս վայրի ծառը պատուաստ կ'ընդունի՞, թէ՛ ոչ: Ներկայիս՝ գասլապին բակերուն մէջ ալ կ'երեւի՝ իբրեւ զարդածառ:

⁶ Վեր. Կ. Ս. Թիքեան, *Իննսունհինգամեակ Քեսապի Հայ Աւերարանական եկեղեցոյ, 1853-1948*, Շնորհոքեան տպարան, Պէյրութ, էջ 70:

5.- ԼԸՓԹԸՐԸՆՃԻՔ.- անուան ստուգաբանությունը Asparagaceae/ծնեբեկներու ընտանիքին պատկանող *ruscus aculeatus*: Տարօրինակ անունով այս փոքրիկ, հազիւ 30 սմ. բարձրութեամբ թուփը կ'աճի անտառին մէջ, միւս ծառերու ստուերին: Մշտադալար է: Մուգ կանաչ, կոշտ ու փշոտ ծայր ունեցող տերեւներ ունի, մայրիի ծառի նման ձեւաւոր տեսք ունի: Երբեմն կը հանդիպի թփուտի տեսքով: Ունի կլոր փոքրիկ պտուղ ու Հոկտեմբեր-Նոյեմբերին հասուննալով կը սեւնայ: Քաղցրահամ է: Հօտաղներ կը հաւաքեն ու կ'ուտեն:

6.- ԿԱՂՆԱ.- Հայերէն՝ կաղնի: Fagaceae/հաճարագգիններու ընտանիքին պատկանող *Quercus faginea*: Անտառային վայրի ծառ է, երբեմն՝ թուփ: Պտուղը կը կոչուի *կաղնեպ*՝ կաղին: Ծառը կրնայ շատ մեծնալ եւ ունենալ հաստաբետտ ցօղուն: Կաղնիի անտառները կը կոչուին *կաղնէօպ*՝ կաղնուտ: Կայ յատուկ տեղանուն ալ՝ *Կաղնէօպ*, Տունակ լեռան հարաւային ծովադէմ շրջանը: Կայ նաեւ թրքերէնը՝ *մազը*, կայ տեղանուն՝ *Մազըլըք*: Թրքերէնով կայ նաեւ *սարը մազը*. ըստ ընտանեկան գրոյցներու՝ Վերի Պաղճաղագի բնակիչներէն մէկը կը յաջողի տապալել հսկայ կաղնի մը. թուրքերը կ'ըսեն «*Փանո սարը մազըը երքպըր*» (Փանոն կաղնին տապալեց): Անոր սերունդները կը կրեն Սարամագեան/Սարըմագի մականունը⁷:

Կաղնիին տերեւը բլթակաւոր է. տերեւաթափի կենթարկուի: Կաղնիի ծառեր նաեւ կը խնամուին պարտէզներու սահմանագծին վրայ, որպէսզի որթատունկը մագցի վրան: Մեծ կաղնիներէն սոցապանները կը պատրաստէին տանիքի գերանները, տախտակամածի տախտակ: Իսիստ դիմացկուն է: Կաղնիի թարմ ոստերը գարնան կը յօտեն տունը կապած անասունները՝ այծ, կով, կերակրելու համար: Յախը կը դիզէին ցախանոցը, ընտիր վառելանիւթ է:

Կաղինը ուտելի չէ: Իտզերն ու կենդանիները կ'արածին: Ոմանք քաղցր կաղին կը ճարէին անտառէն, կը ճանչնային ծառը, որ սովորական կաղնիէն հնարաւոր չէր զանազանել: Անոր պտուղը քաղցր կ'ըլլայ: Կը խորովէին տաք մոխիրին մէջ թաղելով ու կ'ուտէին:

7.- ՀՈՒՐԿՈՒՄԻԼԻՆԱ.- Հայերէնը պիտի հնչէր՝ հուրկումելնի: Վայրի թուփ կամ խոշոր ծառ: Պտուղը *հուրկումէլ*, վայրի սալոր է, կլոր, դեղին, թթու, դիւրեկան համով: Կորիզը թափելէ ետք կ'աղային, կ'եռացնէին ու մածուկը կը փռէին լաթի վրայ: Այս պաստեղը *չարփանա* կը կոչուէր: Այս պաստեղով կը խաշէին լուիկ կոչուող վայրի խոտը, որպէսզի թոյնը մեռնի: Անկէ լուիկապուր կը պատրաստէին:

⁷ Մարիամ Սարամագեան-Չիրիքեան, «Ինքնակենսագրութիւն», Յակոբ Զոլաքեան, Քեսապ, Գ. հատոր, տպ. Արեւելք, Հալէպ, 2004, էջ 189:

Կան հուրկումելի կարմրաուռն ու սեւ տեսակներն ալ: Բոլորն ալ վայրի: Տեղոյն վրայ կամ տեղափոխելով կը պատուաստուին դամոնի՝ սալորի ընտիր տեսակներով:

8.- ՊԸՐՐԸ ՁԻԹԻՆԱ.- Վայրի ձիթենի: Oleaceae/ձիթենազգիներու ընտանիքին պատկանող *Olea europaea*, անգլ.՝ olive tree:

Վայրի ձիթենին թուփի կամ ծառի կերպարանքով կը հանդիպի Քեսապի վայրի բնութեան մէջ, յատկապէս Կիւնիկ լեռան վրայ, ծովահայեաց լանջերուն, տեղ-տեղ պուրակներ կը կազմէ: Կ'աճի ժայռերու ծերպերուն, քարափներու պռունկին: Մշտադալար է: Այս վայրի տեսակին պտուղը սրածայր է, շատ հասունը կը սեւնայ: Քիչ ձիթոտ է: Կրնայ եւ դառն ըլլալ: Կիրի ջուրին մէջ դառնութիւնը կը կորսնցնէ ու կը մթերուի:

Երբ տակաւին սածիլանոցներ չկային՝ մարդիկ հեռու գիւղերէ ու շրջաններէ կու գային ու վայրի ձիթենիի ոստերը կտրելէ ետք կոճղերը կը հանէին ու կը տնկէին իրենց արտերուն մէջ: Ձիթեստանները *ձիթինկէօր*⁸ ձիթենկուտ կը կոչեն: Ձիթենին կրնար պատուաստուիլ ընտիր տեսակներով: Պատուաստի գլխաւոր եղանակը շին էր: Կը սղոցէին ու կը ճեղքէին ճիւղը, ճեղքին մէջ կ'իջեցնէին պատուաստի շիւղ, կճեպը կճեպին բերելով, ամբողջն կը կապէին, ապա լաւ մը կը ծածկէին ճերմակ հողի ցեխով կամ կովու թարմ թրիքով: Յետոյ տարածուեցան պատուաստի աւելի արդիական միջոցներ եւ կերպեր:

Կոճղը նաեւ կտրելով կրնային քանի մը տունկի վերածել: Կրնային յօտել ծառը ու կոճղը իր ցօղունով տեղափոխել արտ: Ձիթենին այն հազուագիւտ ծառերէն է, որ կոճղը տեղահան ընելով ուրիշ տեղ տնկելով կ'աճի: 1947ին, հայրենադարձ ընտանիքներէն ոմանք իրենց ծառերը վաճառեցին հարաւի դրացիներուն, որոնք ուղտերով ձիթենիի կոճղերը տարին: Հիմա Լաթաքիոյ ճամփուն վրայ Պլլուրանի հովիտին մէջ երեւոյց հին ձիթեստանները այդ օրերուն տնկուած են: Երկարակեաց ծառ է: Մինչեւ 300 տարեկան ձիթենիի մասին զրոյցներ կան շրջանին մէջ:

9.- ՄԱԽԷՕԻ.- Բառացի մախուխ, հայերէնը՝ մամուխ: Վայրի սալոր է, հաւկթաձեւ ու կարմիր: Ունի թթու, դիւրեկան համ: Ջաղջենի սալորին մանր տեսակը: Բոյսը թուփ է, երբեմն միջակ ծառ: Կը հանդիպի ցածրադիր վայրերու մէջ: Արմատախիւլ ընելով կը տնկէին պարտէզին մէջ՝ երկորդ տարին ընտիր սալորի տեսակ մը պատուաստելու համար: Ըստ Մալխասեանի՝ մամուխը «*Մամխի թփի պտուղը, կարմիր ու թթու, որից քաղցրաւենիք են շինում եւ որի հիւթով ներկում են գինին*»⁸:

Կայ նաեւ *խօխ* բառը՝ արաբերէն:

10.- ՋԱԽՁԻՆԱ.- Ջաղացքենի. ջաղջենի: Վայրի դամոնի՝ սալորի տեսակ, միջակ մեծութեամբ ծառ, որ կը հանդիպէր ու թփուտներու կը վերածուէր

⁸ Ստ. Մալխասեան, *Հայերէն բացարական բառարան*, Գ. հրդ., էջ 246:

առուններու եզրին եւ ջրաղացներու մօտիկ: Ատկէ *ջախջինա՝* ջաղաց(ք)ենի անունը: Հաւկթաձեւ, կարմիր, համեղ սալոր է, աւելի մեծ քան մամուխը: Թփուտներէն հանելով գիւղացին իր պարտէզին մէջ կը տնկէ՝ երկրորդ տարին դամոնի ընտիր տեսակով մը պատուաստելով: Ոմանք կը սիրեն ջաղջենի մը պահել պարտէզին մէջ:

11.- ՄԸՐՄԸՆԱ.- Մորմենի. Rosaceae/կարդազգիներու ընտանիքի Rosoideae ենթաընտանիքին պատկանող Rubus: Ամէն տեղ աճող պատատուկ բոյս է, մանր ու կեռ փուշով ու զիկզակ տերեւով: Երկար ոստերը, 2,5-3 մէթր, հողին դաչելով արմատ կը նետեն, ու կամաց-կամաց տարածքը *մըրմինօպի՝* մրտինուտ կը դառնայ: Գիւղացին ամէն տարի քանի մը անգամ անոր տարածման դէմ կը պայքարի: Անխնամ պարտէզի մը ակնարկելով գիւղացին կ'ըսէ «*Մըրմինօպի մը ըղուօժ ի*» (Մրմինուտ մը եղած է): Իսկոթ ֆիուտներու տեսք կ'ունենայ ճամբաներուն եւ արտերուն եզերքը: Կը սիրէ մաքուր հողը: Ունի փնջաձեւ մանր ճերմակ ծաղիկ, պտուղը ողկուզաձեւ է, հասուննալով կը սեւնայ. քաղցր, համեղ պտուղ է, կարմրածը թթու կը մնայ. կը կոչուի *մըրմընթէթ* (մորմենիի թութ, մոշ): Պտուղին հասուննալը՝ սեւնալը, եղանակային պայմաններու հետ կապ ունի, խոնաւ եղանակը նպաստաւոր է:

Մորմենիի ընտիր մէկ տեսակը այժմ կը մշակուի ծաղկանոցներու մէջ: Պտուղը աւելի խոշոր է, բոլորն ալ հասուննալով կը սեւնան: Առատ ըլլալու պարագային անուշ եւ օշարակ կը պատրաստեն:

12.- ՄԸՐՏԻՆԱ.- Մրտենի, մրտի կամ մուրտ, պահլաւերէն murt, յունարէն՝ myrtos: Myrtaceae/մրտազգիներու ընտանիքէն Myrtles communis (common myrtle): Ըստ Մալխասեանի՝ «*մշտադալար թութի, որ ունի 200 տեսակ: Հասարակ մրտենին (myrtos communis) կոթաւոր ճերմակ ծաղիկներ ունի, տանձաձեւ փոքր կապուտագոյն սեւ պտղով, որի վերի ծայրը պարած է բաժակով. բոլոր մասերը համեմաւոր հոյզ եւ համ ունեն: Տերեւներից եւ ճիւղերից պսակներ էին հիսում*»⁹: Ըստ Աճառեանի՝ մուրտը «*մի տեսակ բոյս է եւ նրա պտուղը*»¹⁰:

Քեսապի շրջանին մէջ յատկապէս միջին բարձրութիւններու վրայ մեծ խտութեամբ կը հանդիպինք մրտենիի թփուտներու, որ *մըրտինօպի՝* մրտենուտ կը կոչուին: Բազմամեայ բոյս է: Թուփը խնամուելու պարագային առանձին ծառի տեսք կրնայ ստանալ:

Տերեւն ու ծաղիկը շատ հոտաւէտ են: Իսկոթ ու մանր տերեւներ ունի, տերեւաթափի չ'ենթարկուիր, ծաղկեցողը՝ ճերմակ: Ծաղիկին վրայ մեղու կը նստի: Մեր միջնադարու *հայրէններէն* մէկուն մէջ հայրը պանդխտութեան

⁹ Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացաբրական բառարան*, Ա. հրք., էջ 377:

¹⁰ Հր. Աճառեան, *Հայերէնի արմատական բառարան*, Գ. հրք., Մուրտ, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1977:

մեկնող տղուն կը մաղթէ. «Այն ճամփովն, որ դու երթաս, վարդ ու մուրփա առջեւդ բուսնի»¹¹:

Քեսապի մօտիկ ալաուիները մրտենին կը կոչեն *ռիհան*, այսինքն՝ հոտաւետ, եւ անոր մշտականաչ ոստերով կը ծածկեն իրենց հարազատներուն գերեզմանները: Անոնք նորածին մանչ զաւակին մարմինը կ'օծեն մուրտի տերեւներէ պատրաստուած օծանելիքով, որպէսզի մշտապէս անուշ բուրէ:

Քեսապի մէջ պտուղին երկու տեսակը կայ՝ ճերմակը եւ սեւը, երբեմն՝ կարմրաուունը: Ասոնք ալ իրենց կարգին քանի մը տեսակ ունին: Իրարմէ կը տարբերին իրենց քաղցրութեամբ եւ չափով: Քաղցր ու հունտոտ պտուղ է: Բոլորն ալ ուտելի են: Դպրոցական փոքրիկներուն համար մրտինուտ մը մտնելը ու անոր թաւշեայ ոստերուն վրայ օրօրուիլն ու կուշտ պտուղ մը ուտելը մեծ հաճոյք էր: Պտուղը կը հասուննայ Հոկտեմբերի աւարտին ու ծառերուն վրայ կը մնայ մինչեւ Նոր տարի:

Մրտենին պտուղը կը կոչեն *հընպէլուօս*, արաբերէն է՝ հապ ալաս: Մուրտ պտղանունը մոռցուած է:

Մուրտէն օղի քաշողներ եղած են:

Վայրի մրտենին կարելի է պատուաստել ճերմակ ընտիր տեսակով: Ասիկա յաջողած է Ծովու թաղին մէջ: Պատուաստի պտուղը ունի կրկնակի կամ եռակի մեծութիւն, մսոտ է եւ աւելի քաղցրահամ: Հեռու տեղերէն մուրտ ուտելու երթալը ուխտագնացութեան պէս բան մըն է: Հիւրերը մուրտով կը հիւրասիրուին: Պանդուխտները կարօտով կը յիշեն մրտենին ու մուրտը:

Մուրտը չափազանց հունտոտ ըլլալուն՝ շատ ուտողին պնդութիւն կը պատճառէ: Լոյծէ տառապողներուն կը թելադրեն հնպալաս ուտել:

Մրտենին կ'օգտագործուի նաեւ տարբեր նպատակներով: Անոր ուղիղ ոստերով կը հիւսեն կողով, զամբիւղ, դգալաման, կապարճ. անոնցմով կը պատրաստեն որսորդական տեղքի ուտերը, որոնց վրայ կը դրուի կաչուն մածուկը: Ուշ աշնան այս թփուտներուն մէջ կերի կ'իջնեն գաղթող թռչունները: Թուփերուն մէջ բացուած դարակներուն մէջ կը տեղադրեն որսորդական տեղքը ու ողջ-ողջ կը բռնեն միջակ ու փոքր թռչունները: Որսը կը խորովեն դափնի ծառի թարմ ոստերէն շինուած շամփուրի վրայ:

Ուշ աշնան ամբողջ գիւղը կը բուրէ դափնի, մրտենի եւ խորոված թռչուն:

13.- ՍԸՆԾԻՆԱ.- Սնձենի, պտուղը կը կոչուի *սէնժ*՝ սինճ: *Rosaceae*/ վարդագգիներու ընտանիքին պատկանող *Crataegus azarolus*: Ըստ Աճառեանի՝ կը բացատրուի տարբեր իմաստներով. ա. «Մի տեսակ խիժաբեր ծառ», բ. «Սին, փշատ, ալոճ», գ. «Անուշ խնձոր», դ. «Ուտելի մի տեսակ խոտաբոյս»¹²: Քեսապի սնձենիին եւ սինճին հայերէն *ալոճենի* եւ *ալոճ* հոմանիշ կու գան: Արաբերէն կը կոչուի *զադրուր*:

¹¹ Նահապետ Քուչակ, Գընա՛մ ու գընա՛մ՝ կասէր իմ մանչուկն, ես աստալու չի.

¹² Հր. Աճառեան, *Հայերէնի արմատական բառարան*, Դ. հոյր., Սընճինա, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1979:

Քեսապի մէջ սնձենին թուփի կամ ծառի կերպարանքով ամէն տեղ կ'ըլլայ: Մեծ խտութեամբ կ'երեւի Կիւնիկ լեռան եւ Քեսապի վրայ՝ Խարմանճոյի ժայռոտ բլուրներուն վրայ: Փշոտ ծառ է, ունի մուգ դեղնաւուն մանր տերեւներ: Տերեաթափի կ'ենթարկուի: Ունի մանր սպիտակ ծաղիկ, պտուղը՝ դեղին, կլոր, ծայրը՝ բաժակաձեւ ելունով, թթուաշ է որոշ քաղցրութեամբ: Աշնան կը հասուննայ: Հօտաղները իրիկուան գրպան մը սինձ կը բերէին տնեցիներուն: Ունի տոկուն փայտ: Սնձենիէն պատրաստուած ձեռնափայտը ընտիր է:

Վայրի սնձենին տեղոյն վրայ կամ սեփական արտ տեղափոխելով կարելի է պատուաստել ընտիր տեսակով: Պտուղը նոյն ձեւը ունի, սակայն աւելի խոշոր է, ոստերը՝ առանց փուշի: Բերքը հիմա բաւական բարձր գիներով շուկայ կ'իջնէ:

Շաքարախտէ վարակուածները կը խմեն սինձի տերեւով ու ծաղիկով եռացուած թէյ: Գարնան՝ տերեւն ու ծաղիկը կը հաւաքեն ու կը չորցնեն՝ շաքարախտաւորներու համար: Ծառին կեղեւը կրակի վրայ կը բռնեն, կը ծեծեն ու փոշին այրուցքի վրայ կը դնեն:

14.- ՎԱՐԴԱՊԻՏԻ ՍԸՆԾԷԿ.- Վարդապետի սինձիկ, Rosaceae/ վարդագգիներու ընտանիքին պատկանող Crataegus ovalis: Ալոճի ընտանիքին պատկանող փշոտ թուփ է, խնամուելու պարագային կրնայ ծառի տեսք ունենալ: Կ'ունենայ փնջաձեւ ճերմակ ծաղիկ: Պտուղը դարձեալ փնջաձեւ է, մանր, երկարաւուն, քիչ մսոտ, ունի կորիզ: Հասունցածը կը կարմրի Հոկտեմբերին ու կը մնայ մինչեւ ուշ ձմեռ: Փոքրիկները կը սիրեն ճամփու եզրին կարմրող սնձիկ հաւաքել եւ ուտել. քաղցրաւուն է:

Պարտէզի եզրին երեւոցը թուփը կը պատուաստեն ընտիր սինձ:

Քաղաքներու եւ հանրային պարտէզներու մէջ զարդաբոյս է:

15.- ՊԸՐՐԸ ԴԱՄՄԷՆ.- վայրի դամոն՝ սալոր: Վայրի սալորենիները, առանձին կամ ամբողջ թփուտներ, կ'աճին ամէն տեղ, ինքնաբոյս են, խնամուելու պարագային ծառ կը դառնան: Տերեաթափի կ'ենթարկուի: Կան շարք մը տեսակներ: Պտուղէն եւ անունէն կը զանազանուին՝ *ջաղջինա*, *մէմէօխ*, *հուրկումէլ* եւ այլն:

16.- ՊԸՐՐԸ ՏԷՆԾԻՆԱ.- Վայրի տանձենի. Rosaceae/վարդագգիներու ընտանիքին պատկանող Pyrus nivalis: Վայրի տանձենին թուփ է, երբեմն միջակ ծառ: Կը հանդիպի բարձր լեռնալանջերուն, Ուշնոգի եւ Խարմանճոյի սարահարթերուն վրայ: Տերեաթափի կ'ենթարկուի: Ծաղիկը ճերմակ բոյլ է, պտուղը՝ *պըրրը փունձ*՝ վայրի տանձ, ունի երկար կոթուն, յաճախ պտղա-հոյլերով կ'երեւի, մանր ու կլոր է: Կը հասուննայ Հոկտեմբերէն վերջ: Հիները կը մթերէին յարդանոցին մէջ, ուր մինչեւ Նոր տարի կը դեղներ, կը հասուննար. ուտելու ատեն քիչ մը բերանը կ'արէ:

Կայ նաեւ *մաղվըկ փունծը*՝ մեղուատանձը, որ նոյնպէս ունի երկար կոթուն ու կլոր պտուղ՝ միջակ սալորի չափով: Իւրայատուկ համով ու հոտով պտուղ է: Ամբողջ շրջանին մէջ հանդիպած եմ քանի մը ծառի, հսկայ ծառեր են: Կոծղէն նկատելի է, որ ասոնք պատուաստ են, տանձի ընտիր տեսակներու ընդհանրանալէն առաջ վայրի տանձենիները մեղուատանձ կը պատուաստէին:

Վայրի տանձենին արմատախիլ ընելով կը տնկէին պարտէզին մէջ՝ յաջորդ տարին ընտիր տեսակով մը պատուաստելու համար: Կ'ըսեն տանձենին չի մեռնիր, արմատէն նոր ծիլ կու տայ:

17.- ՓԱՐՓՕՐ.- *Vitaceae*/խաղողագիներու ընտանիքին պատկանող *Vitis*: Որթատունկը բարբառով կը կոչուի *փուլլա*, հին հայերէնը՝ *փոլի*: Շրջանին մէջ կայ ինքնաբոյս տեսակը, վայրի բոյս է: Ամէն տեղ կ'երեւի՝ մշակուած թէ անմշակ գետիններու մէջ: Պատատուկ է, կը մագլցի ժայռերուն ու պատահած ծառին, թուփին ու պատին վրայ, ուստը հողին դպած տեղը արմատ կը նետէ:

Բոլոր ինքնաբոյս որթատունկները պտղատու են: Ունին ողկուզածեւ պտուղ՝ *կուօյզ-ռոկոյզ*: Կուզկապը կը կոչուի *կըզպէթ*, իսկ իւրաքանչիւր ճիւղը՝ *ճըռմէթ<ճոմոյթ*: *Փարփօր* կոչուող խաղողի տեսակները կը գանազանուփն սեղանի ընտիր խաղողներէն (*խաղուղ*) իրենց ողկոյզի եւ հատիկի չափով: Ողկոյզները կ'ըլլան ափաշափէ քիչ ւելի կամ պակաս, հատիկները փոքր, կլոր կամ սրածայր, իրարմէ կը տարբերին նաեւ հատիկներու խտութեամբ, կարծրութեամբ, գոյնով ու քաղցրութեամբ: Ոմանք շատ հիփալի են, ոմանք նուազ: Կան դեղնաւուն, մեղրագոյն, վարդագոյն ու սեւ խաղողներ: Ժողովուրդը ասոնց կու տայ *սպիփուօկ փարփօր*, *սիվ փարփօր*, *խարփէջ փարփօր* (կարմրաւուն) ընդհանուր անունները:

Փարփօր կոչուող այս խաղողները ունին նաեւ առանձին անուններ, որոնք եկած են մականուններէն եւ մարդոց անուններէն: Տեսակը կը յայտնուի այսինչին պարտէզին մէջ, կը հաւնուի, անկէ ջով մը հանելով կը տնկեն իրենց հողին մէջ՝ տեսակն ալ կոչելով այն մարդուն անունը սեռական ձեւով գործածելով ինչպէս՝ *լընդա* (Լընդեան), *գալամփարա* (Գալէմտէրեան), *լըրջը փրղա* (Լուրջի տղայ, Լուրջեան – Լրջիկեան մականունէն), *կէրպիկա* (Կարապետ անունէն), *գուրպիկա* (Գուրտիկ՝ Գուրտէր կոչուած մարդու անունով), *աղճըկա*, որովհետեւ որթի այդ տեսակը յայտնուած է այդ մարդու հողին մէջ:

Նոր արտ բացող գիւղացին որթատունկի ուստերէն մէկը «կը թաղէր» իր ուզած ուղղութեամբ, որպէսզի նոր արմատ նետելով ծայրէն ւելի զօրաւոր ուստեր արձակէ կամ կը տարածէր մօտիկ ծառի մը վրան՝ կաղնի, դափնի, բեւեկնի, թթենի են. կամ մարդակներով յատուկ սարփինայ (*շուք>շէօք*) կը պատրաստէր ու անոր վրայ կը փռէր ուստերը: Ան ամէն Յունուար-Փետրուարին կը յօտէր որթը: Ուստը կրնայ տարեկան չորս մեթր քշել: Մանուկ-

ները այդ ոստերով «պարան ցատկել» կը խաղային: Յօտաճ որթատունկը «կու լայ», գարնանամուտին ջուր կը թափէ: Իբրեւ թէ քոյրերը կու լան, որ վերջին քոյրը պտկի ու առատ բերք տայ:

Փարփօր կոչուող խաղողները երկու նպատակի կը ծառայեն. սեւ խաղողը գինիի համար կը պահեն՝ *գինը խաղող*, իսկ միւսերը կը կոչեն *մասարը խաղող*, այսինքն հնձանի խաղող: Մասարան այն տեղն է, ուր կը հաւաքուի բերքը, աւազանին մէջ կը կոխկռտուի, կը քամուի, հիւթը կը զտուի ու կ'եփի՝ ռուպ (բարբառով՝ *ըռոսպ*, թրք.՝ *պաքմագ*, արաբ.՝ *տրպըս*, այլ տեղ՝ *տոշապ*) պատրաստելու համար: Մասարան՝ հնձանը, առհասարակ թաղային սեփականութիւն կ'ըլլար եւ կը պահանջէր հաւաքական աշխատանք՝ այգեկութիւն, վառելափայտի պատրաստութիւն, ճմլում, հիւթի զտում եւ եփ: Խաղողի հիւթը զտելու համար՝ ճմլարանին մէջ խաղողին վրայ, երկու ափ *հավուրա* կը թափէին: Հավուրան փշրուած կրատեսակ է, որմէ քանի մը հանք կայ շրջանին մէջ: Մէկը կը հսկէր զտող պղինձին: Լաղին գլուխը կեցող մարդը գոնեպով եւ ծակոտկէն շերտփով յաճախ «կը պաղեցնէ» լաղը, որպէսզի եռացող հիւթը դուրս չյորդի բորբ կրակին պատճառով: Այսպիսի պարագաներուն մարդիկ կը կանչէին «*Հասէ, Լընդէ*», իբրեւ թէ ամուսինը կինը օգնութեան կը կանչէ: Իւրաքանչիւր լաղի եփը կը տւէր շուրջ երեք ժամ: Լաղ մը հիւթէն կ'ելլէ մօտաւորապէս 7-10 լիթր ռուպ: Նորեփ ռուպը կը փրփրեցնեն ու «*Փըրփէօր, փըրփէօր*» (փրփուր) կը կանչեն փրփուր ուտելու հրափրելով կամ կ'ըսեն.

Փըրփօր ուրուօր,
Ըոպուօն դէտուօր:

Փրփուր ուտող,
Ռուպով դատող:

Կը գտնուէին ընտանիքի տէրեր, որոնց աշխատանքը ռուպով կը վարձատրուէր:

Հիւրեր, կիներ, աղջիկներ ու մանաւանդ փոքրիկները կը բոլորուէին ռուպի լաղնիկին շուրջ ու դափնի ծառի տերեւով փրփուր կ'ուտէին: Ոմանք տերեւը ճիւղի մը ծայրի ճեղքին անցընելով դգալ շինած կ'ըլլային: Անպայման պնակ մըն ալ փրփուր կը քաղէին այսինչ կամ այնինչ տունը դրկելու համար՝ ծերերուն, հիւանդներուն¹³:

Մասարան մանաւանդ գիշերները բազմամարդ կ'ըլլար: Կրակին դիմաց սեղան կը բացուէր հիւրերուն համար: Երիտասարդներ գիշերային որսի գացած կ'ըլլային՝ *ասսիլը*, ու ձեռք բերուած որսը հոն կը խորովէին: Կ'ըլլային խաղեր, կերուխում: Մինչեւ լոյս մասարայի աշխատողները առանձին չէին ձգեր:

Մասարան քեսապցիներու համար, աշխարհով մէկ, հաւաքական աշխատանքի իւրայատուկ մշակոյթի վերածուած է, «Տոհմիկ օր»ուայ: Աւստրալիա, Քանադա, ԱՄՆ, Հայաստան քեսապցիները տարին մէջ մը կը հա-

¹³ Մասարայի մասին տե՛ս՝ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, հիփր. Ա.*, Հալէպ, տպ. ԱՐեւելք, 1995, էջ 183-86:

աքրուին մասարայի շուրջ՝ իրենց տոհմիկ խաղերով, երգերով, պարով ու բոկեղով:

Խաղողի ռուպը ընտանիքին համար հիմնական ուտեստ էր եւ եկամուտի աղբիւր: Խաղողի հիւթէն կը պատրաստէին նաեւ պաստեղ, ընկոյզի շարոց, կորկոտով եփած *քասմա*: Յանկալի ուտեստ էր *գարսանպած* ըստաճը, որ կը պատրաստուէր ձիւնը ռուպով շաղելով: Ռուպով կը պատրաստէին նաեւ *ըռպուօն գարպա*: Օղիի պատրաստութիւնը մոնոփոլ էր, բայց ոմանք գաղտնօրէն օղի կը թորէին: Օղի կը պատրաստէին նաեւ չոր թուզէն, ճերմակ թութէն ու մուրտէն:

Քեսապցին ռուպ պատրաստած է նաեւ եղջիրէն ու ճերմակ թութէն:

Խաղողի ընտիր տեսակները՝ սեղանի խաղողները, բաւական շատ են: Գիւղացին որթատունկը կը պատուաստէ իր ուզած տեսակով, իր ուզած տեղը: Խաղողի ընտիր տեսակներն ալ կրնան ճամոյթով արմատ նետել: Բոլորն ալ պատատուկ են: Թուփ որթատունկ չկայ շրջանին մէջ. չէ յաջողած: Ասոնք ընդհանրապէս կ'ըլլային բակին մէջ, բակի թթենիին վրայ փաթթուած: Կային շարք մը տեսակներ. *ուզումլուք՝* կարմիր, *պապըր համամ՝* կլոր դեղին, *ձիւ պըրտէօնք՝* երկար դեղին, *սալթը՝* դեղին, հաւկթածեւ, *հալուանի՝* կարմիր, կլոր: Սեղանի խաղողի ընտիր տեսակները կը պատուաստեն ինքնաբոյս որթատունկերու վրայ: Ամենէն ընտիր ու հիւթեղ տեսակը սալթին է, որ կարելի է խառնել նաեւ մասարայի խաղողին եւ ռուպ պատրաստել: Ան նաեւ կ'օգտագործուի չամիչի համար: Ան իր անունը կ'անէ Յորդանանի Սալթ քաղաքէն, ուր 1915-18 տարագրութեան քեսապցիներէն շատեր հասած էին ու անկէ բերած այդ խաղողի տեսակը:

18.- ԻՆՔՆԱԲՈՅՍ ՊՏՂԱԾԱՌԵՐ.- Տեսանք արդէն, թէ որոնք եւ ինչպէս կրնան նկատուիլ ինքնաբոյս պտղածառեր, անոնք բոլորն ալ կը ճանչցուին *պըրրա՝* վայրի մակդիրով, անոնց պտուղը շատ մանր է, ուտելի: Ընտիր տեսակ ունենալու համար կը պատուաստուին, ինչպէս վայրի դեղձը, վայրի կամ թթու խնձորիկը, վայրի սալորները, վայրի ծիրանը, վայրի նշենին, վայրի թթենին, վայրի թզենին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Քեսապի ուտելի հատապտղային վայրի ծառերն ու պտուղները կը կոչուին բարբառային անուններով: Վայրի եւ ոչ վայրի ծառերը կը գատորոշեն *պըրրի* (արաբերէն՝ վայրի) եւ *տանա* (ընտանի՝ տունի) բառերով, իսկ նոյն ծառատեսակի պտղատուն ու ոչ պտղատուն՝ *մէփուօկ* (մատակ) եւ *վըրձ* (որձ) բառերով: Շատերը կը կոչուին հինհայերէնեան բառերու բարբառային տարբերակներով: Քեսապի շրջանի հատապտղային բոյսերէն ոմանք կը գործածուին իբրեւ սածիլ ու կը պատուաստուին ընտիր տեսակի պտուղներ ձեռք բերելու համար, ինչպէս սնձենին, վարդապետի սնձիկը, բեւեկնին, ձիթենին, ինչպէս նաեւ վայրի թթենին, թզենին, որթատունկը, թթու

խնձորիկը, վայրի դեղձն ու ծիրանին են.: Վայրի հատապտուղներէն կ'արդինահանեն ռուպ, օղի ու գինի, նաեւ քացախ ու թթու, ձէթ: Աղտորէն կը պատրաստուի թթու մածուկ եւ փոշի՝ իբրեւ համեմունք, կամ կը գործածեն իբրեւ աղանձ, ինչպէս բեւեկը:

Այսօր, պարտիզամշակութեան արդի պայմաններուն մէջ աղտորը, եղջիւրը, բեւեկը եւ *փարփօր* խաղողները տակաւին լայն գործածութիւն եւ ներդրում ունին տնտեսութեան մէջ:

THE WILD FRUIT TREES OF KESAB (SUMMARY)

HAGOP CHOLAKIAN
hagopcholakian@hotmail.com

The paper focuses on the wild naturally growing edible plants of Kesab and divides them into two categories: a) forest-growing wild plants, b) those grown on cultivated lands and in gardens. Both are considered *berra*, a term in Kesab dialect that means wild.

The author describes the features of each plant, its impact on health, its usage, and whether it can be inoculated and pruned after replanting. The author highlights the perceptions of the peasant regarding these plants and trees, as well as folk traditions related to some of these wild trees.

The wild plants/trees the author discusses in this paper are: the fabaceae, anacardiaceae, anacardiaceae, ericaceae, *asparagaceae*, *fagaceae*, oleaceae, rosaceae, myrtaceae, *crataegus azarolus*, *crataegus ovalis*, wild prune, wild pears (like *makheokh*, *hourgoumilina*), and vitis.

The author notes that some of these plants have totally local names, like the *chakhchina*, as it grew close to waters and next to mills (*chakhch* being the corrupted version of *chaghatsk*, mill).

THE ARMENIAN PARTICIPATION IN THE LEBANESE LEGISLATIVE ELECTIONS OF 2022 DURING THE PRESIDENCY OF MICHEL AOUN (2016-2022) (PART II)¹

ZAVEN MESSERLIAN

After the legislative elections of 2018 some significant events shook Lebanon and its citizens.

Prime Minister Saad Hariri's government, which had taken almost eight months to be formed, on January 31, 2019, soon faced difficulties. Hariri's and the Lebanese Forces' (LF) relationships with the Free Patriotic Current (FPC) leader Gebran Bassil, the son-in-law of president Michel Aoun, gradually deteriorated,² especially after Bassil's visit to Shouf and a shooting incident at Qabr Shmoun. Until the consequences of the incident were settled the cabinet did not meet for a few months.

As early as September 2019, before the October 17, 2019 public uprising, it was clear that the LF and the FPC agreement had failed.³ Geagea declared what mattered for the president's son-in-law, MP and minister Gebran Bassil was the presidential seat, and he had done his best to monopolize Christian representation in the administration of Lebanon.⁴ Thus, the Meerab agreement between the LF and the Aounists had failed.

The economic crisis people feared happened. A slight tax to be placed on WhatsApp was the apex of popular resentment. This intended raise created an uproar and immediate spontaneous demonstrations almost all over Lebanon on October 17, 2019. This was called *sawra* in Arabic (an uprising or a revolution). Local TV stations gave live coverage to the events.

The demonstrators blamed all the political class of corruption, from top to the bottom; "*kellon yaani kellon*" (all, that is all) became a daily slogan. The demonstrators demanded the immediate resignation of the president, the PM and his cabinet and others. A few days later the LF ministers (which included

¹ Part I of this article was published in the *Haigazian Armenological Review*, 39:2019, pp. 647-84.

² Scarlett Haddad, "Sans enterrement officiel, la fin attendue du compromis présidentiel," *L'Orient-Le Jour*, February 14, 2020, p. 2.

³ The agreement known as the Méerab Agreement, was signed on June 2, 2015, whereby it was agreed to elect Michel Aoun as president of the Republic after a mutual agreement on common principles (See part I of this article, p. 65).

⁴ Yara Abi Akl, "Entre le CPL et le FL, rien ne va plus," *L'Orient-Le Jour*, September 7, 2019, p. 3.

Richard Kouyoumjian) resigned, to be followed a short while later by PM Saad Hariri. Hariri's resignation angered president Aoun and minister Bassil, who was thus out of the government.

L'Orient-Le Jour's Scarlet Haddad wrote on February 24, 2020 that Hariri was upset and irritated by what he called the tendency of the president and minister Bassil to step upon the prerogatives of the PM, which weakened his popularity in the Sunnite street.

Later in June 2020 Hariri called the presidency of Aoun a failure. Hariri also criticized Geagea, the LF leader, who had not supported Hariri for his return to the premiership after his resignation.

The demonstrations continued for several months, until the Covid-19 pandemic lockdown in the first trimester of 2020.

Several attempts to appoint a new PM failed, as candidate after candidate was either prematurely "burnt out" or declined to be a candidate. Hariri's Mustaqbal (Future) parliamentary block, the LF, and some allies of theirs refused to take part in a new government. Eventually, a one-sided pro-Aounist cabinet composed of non-politicians headed by Hassan Diab was formed. The opponents of the new government termed it the Hizbollah government. The Armenian minister in the new cabinet was Mrs. Vartiné Kevorkian-Ohanian, nominated by the Tashnag Party. During the days following October 17, the banks in Lebanon were closed. The stability of the Lebanese currency, the pound, in relation to the US Dollar was shaken, and its devaluation started, at first in a slow manner. People rushed to the banks to take their dollar deposits, so banks set a limit to US dollar withdrawals until March 31, 2020. Especially after Diab's government's decision not to honor Eurobond payments, the Lebanese currency's devaluation increased with it eventually losing 90% of its former value by January 2022. The US dollar, which was valued at 1507 LL. for more than two decades, reached 27,500 LL by late April 2022. The Lebanese Central Bank's reserves declined further during 2020-2022 when it subsidized grain, petroleum, medications, some food products, etc. The President and the FPC, led by Bassil, blamed the Central Bank's director Riad Salamé for wrong policies within the bank and towards the economic crisis.

Yeghia Tashjian, in his article "Parliamentary Elections and the Future of the Armenian Community in Lebanon" wrote, Lebanon "is facing record-high unemployment, poverty, an increasing crime rate as well as severe shortages in water, food (mainly bread), gasoline, medicine and electricity. According to ESCWA, around 82% of people in Lebanon live in multidimensional poverty,

compared to 42% in 2019. The economic crisis is considered to be among the three worst in the world since the mid-1800s.”⁵

On August 4, 2020, there were two explosions at Beirut port, one right after the other. These explosions devastated large areas, mainly in East Beirut, where the port is located. There were 214 dead, 7500 wounded, 100 paralyzed, and 300,000 left homeless, as 70,000 homes were severely damaged.⁶ 110 schools were also damaged. The damages were evaluated at 39 billion US Dollars. The port explosion also caused demographic changes. Thousands left the area, some temporarily, others permanently. As most of the populace of East Beirut belonged to Christian denominations, this fact had an effect in the elections of 2022.

After the Beirut port explosions 8 MPs resigned from the parliament, most calling for early legislative elections. These included MPs from Beirut I constituency, Nadim Gemayel, and Paula Yacoubian, and from Metn, Samir Gemayel and Elias Hankash. Two MPs, including Michel Murr, an MP from Metn, had died from Covid-19. Contrary to the constitution, partial legislative elections were not held. President Aoun and PM Diab postponed the partial elections from September 10, 2020 to after January 1, 2021 due to the situation in the country and the Covid-19 pandemic.⁷ Later on, as there was no new government, the caretaker Ministry of Internal Affairs did not organize these partial elections, although the matter was discussed in the newspapers.⁸

After the port explosions, the president of France, Emmanuel Macron, visited Beirut and called for the formation of a new government composed of independent technocrats.

Diab wanted to call for premature legislative elections; the speaker of the parliament, Nabih Berri, rejected the idea and declared he would call the parliament for a vote of confidence in the government. As some ministers had resigned, Diab presented his resignation, and the MPs voted for Hariri in their consultations with the president, against the wishes of the president. All the government lists Hariri presented to president Aoun were rejected by the latter as, by the Taef Agreement, both the PM and the president should form the government. The two of them could not agree on a joint list of cabinet ministers.

⁵ Yeghia Tashjian, “Parliamentary Elections and the Future of the Armenian Community in Lebanon,” *The Armenian Weekly*, Boston, June 22, 2022.

⁶ *Aztag*, August 4, 2021.

⁷ *Ibid*, September 11, 2020.

⁸ Yara Abi Akl, “Les partielles, une échéance aux enjeux à la fois politiciens et éthiques. Les parties concernées font preuve de prudence en attendant d’y voir plus clair,” *L’Orient-Le Jour*, March 13-14, 2021, p. 2.

Finally, when the last list was rejected, Hariri had no choice but to resign in March 2021.⁹

Hariri and Geagea regretted that they had supported the candidacy of Aoun as president of the republic and made his election possible on October 31, 2016.¹⁰

In the media opposed to the president, attacks on him and his political current increased. *L'Orient-Le Jour* published in July an article "Under the Mandate of Aoun, the Descent of Christians to Hell,"¹¹ which explains itself.

Foreign pressure also increased. Particularly strong was the American stand. The Biden Administration put sanctions on Bassil, for "corruption", which was detrimental to his presidential aspirations.

The former PMs' group, composed of Fouad Siniora, Tammam Salam, Najib Miqati and Saad Hariri, recommended Miqati for the premiership. The parliament members nominated Miqati when president Aoun held obligatory consultations. Miqati formed his cabinet after several months in September 2021.¹² The Armenian minister in the cabinet was George Bouchikian, nominated by the Tashnag party.¹³ The opposition did not participate in Miqati's government as it had not in Diab's government.

Miqati's government had to prepare for the legislative elections. He declared that neither he nor any of the ministers of his cabinet would be candidates in the elections.¹⁴ However there was great doubt among politicians, particularly of the opposition, and some spiritual leaders, particularly Maronite Patriarch Cardinal Raii, as well as the public on the holding of elections. For long months this issue was debated in the media and by declarations. Doubt prevailed even when candidacies were being registered and there was the official announcement that the elections would be held.

The opposition formed by the LF, the Socialist Progressive Party of Jumblat, the Kataeb, the reformists and some independents had as their ideal to achieve the sovereignty of the state. In other words, they were against the hegemony of Hizbollah and its armed militia.

⁹ On March 22, 2021 Hariri met Aoun at Baabda, and when no agreement was reached, Hariri published a list of 18 ministers he had presented to the president one hundred days earlier. The list included Garabet Slikhanian as his proposed Minister of Industry and Displaced Persons (*L'Orient-Le Jour*, March 23, 2021, p. 2).

¹⁰ For Geagea's regrets see *L'Orient-Le Jour*, September 6, 2021 and for Hariri's regrets see *L'Orient-Le Jour*, June 12, 2020, p. 2, and *Zartouk*, June 10, 2020, p. 1.

¹¹ Mounir Rabih, "Sous le mandat Aoun, la descente aux enfers des Chrétiens," *L'Orient-Le Jour*, July 7, 2021, p. 3.

¹² *L'Orient-Le Jour*, September 11-12, 2021.

¹³ *Aztag*, September 11, 2021, p. 1.

¹⁴ All the newspapers of Beirut issued on March 14, 2022.

Within the Armenian denominations of Lebanon there were some changes. On March 12, 2020 Catholicos Aram I announced that he had entrusted another mission to the Prelate of the Armenian Orthodox Community, Archbishop Nareg Alyemezian, and appointed former Prelate, Bishop Shahé Panossian, as his Catholicos vicar to lead community affairs.¹⁵ The latter was elected as Prelate by the community's Representative Body on July 24, 2020.¹⁶

The Armenian Catholic Patriarch Krikor-Bedros XX passed away on May 25, 2021, and in September 2021 the Armenian Catholic Synod of Bishops elected in Rome his successor, Rafayel Bedros XXI. The President of the Union of Armenian Evangelical Churches in the Near East, Rev. Mgrditch Karageozian resigned in the Spring of 2022 and an interim locum tenens was appointed in the person of Rev. Dr. Paul Haidostian, president of Haigazian University.

The Tashnag Party of Lebanon held internal elections for a new central committee. *Aztag* announced on February 20, 2019 that the committee was elected and its representative was MP Hagop Pakradouny.¹⁷

The Tashnag Party had a split in California. The District Committee of the West Coast of USA and its organ *Asbarez* acted independently of the Party's Central Bureau (Puro). The latter expelled them on March 8, 2021 and later appointed a new District Committee.¹⁸ However, the membership was divided between the rival committees in California.

The Henchag Party also held elections, re-electing some executive body members and electing new ones as well. Former MP Sebouh Kalpakian was re-elected as chairman of the body.¹⁹

The Ramgavar Azadagan Party (RAP) split became more accentuated. Sevag Hagopian, editor of the party's organ *Zartok*, was elected Lebanese District Committee chairperson. He refused the leadership of Mike Kharabian, elected in the Party's convention held in Yerevan, as the Party's Central Council chairperson. The latter had a committee appointed in Lebanon by Dr. Avedis Dakessian, the party's candidate in the 2018 legislative elections and former co-chair of the Lebanon District Committee, as chairman of a rival District Committee.

The District Committee led by Hagopian and the Ramgavar Azadagan Supreme Council and its organ *Baykar Weekly* became closer to each other. *Baykar Weekly* ran a series of favorable articles on former MP Hagop

¹⁵ The Beirut Armenian newspapers of March 13, 2020.

¹⁶ Ibid, July 25, 2020.

¹⁷ *Aztag*, February 20, 2019.

¹⁸ Ibid., March 9, 2021.

¹⁹ *Ararad*, July 6, 2020.

Kassarjian, who was close to Hagopian, and his party activities.²⁰ All the Ramgavar press of the world, *Azk* (in Armenia), *Abaka* (in Canada), *Arev* (in Egypt), *Nor Ashkhar* (in Greece), *Zartontk* (in Lebanon), *Sardarabad* (in Argentina) and *the Armenian Mirror Spectator* (in the USA) held an online meeting in February 2021 and reached a preliminary understanding on joint or united work.²¹ Only *Nor Or* weekly of California remained faithful to the Central Committee led by Kharabian. A call by party veteran leaders, mainly of the Supreme Council and former MP Kassarjian, for party unity was made and was immediately rejected by Kharabian²² and his colleagues.

The Covid-19 pandemic and the economic crisis along with the devaluation of the Lebanese pound affected the Armenian media. *Aztag* started to publish its newspaper with 4 pages instead of 10 (though some time after it started to publish with 8 pages), *Zartontk* for a time continued normally, then started to publish online only in mid-January 2021 and resumed occasional printed issues as of April 24, 2021. *Ararad* started to publish thrice a week, then went online, publishing printed issues on various occasions. On June 1, 2020 Radio Sevan, directed by Ara Siserian, ceased its broadcasts while maintaining an online presence.

The Covid-19 pandemic caused the deaths of many people in Lebanon. Some Armenians of importance died, such as Bishop Meghrig Parikian, director of the Bikfaya Cilician Seminary, writer and owner of a publishing house Aram Sepetjian, party leaders Karnig Mgrditchian, Dr. Sahag Keshishian, Dr. Vazken Jamgotchian, and the Armenian Orthodox Representative Body member Dikran Kalayjian, to name only a few.

After the Covid-19 pandemic, as well as in the aftermath of the port explosions, special committees were formed. The Tashnag Party had the Extraordinary Conditions Body entitled Gamk; AGBU also was very active as well as the Hunchag Party.

The Beirut Port explosion also had claimed the lives of 14 Armenians and left many wounded. Amongst the dead was Nizar (Nazar) Nadjarian, secretary of the Kataeb Party and candidate in the legislative elections of 2000. A good number of the damaged houses were inhabited by Armenians who lived in the Medawar, Rmeil and Ashrafié quarters of Beirut, as well as in Bourj Hamoud. Archbishop Panossian formed a “Recovery Body” in August of 2020. In it all the major Armenian parties and associations or unions were represented.²³ Dr.

Antoine Shamieh (Greek Orthodox) 105

Rami Abou Hamdan (Shiite) 16539

George Bouchikian (Armenian Orthodox) 2568

ElTaghyir List, 1440 votes

Khaled Younes (Greek Catholic) 99

Rida ElMeys (Sunnite) 1142

Tannous ElKhoury (Maronite) 32

Husein ElKhatib (Shiite) 13

Lina Geokjian (Armenian Orthodox) 102

Zahlé Tantafid List, 7713 votes

Jihad ElTurk (Greek Catholic) 258

Hamze Mita (Sunnite) 2387

Omar ElSaboury (Shiite) 259

¹¹² Ibid., Nakhoul, pp. 150-55.

Armen Isfahani (Armenian Orthodox) 108

Eid Azar (Greek Orthodox) 4516

Qadirin Nuwajih and *Aqwa WaFa'el* Lists, which did not include any Armenian candidates, obtained 1316 and 332 votes respectively.

AlKutla AlSha'biyya List, 12,064 votes

Mariam Skaff (Greek Catholic) 4825

Muhammad Hammoud (Sunnite) 5869

Maroun Makhoul (Maronite) 317

Sami Nabhan (Greek Orthodox)

Fawzat Dalloul (Shiite) 83

Nareg Aprahamian (Armenian Orthodox) 133

Those elected in Zahlé were: Rami Abou Hamdan, George Oqays, Michel Daher, Elias Estephan, Salim Aoun, Bilal AlHashimi, and George Bouchikian.

Aztag indicated that in the afternoon of May 16 information had circulated that other than the Tashnag-Murr, FPC, Kataeb and LF there was a fifth list "*Nahwa Dawla*" that could win. In such a case the Maronite candidate on that list, Jad Ghosn, could get elected, which meant that LF Maronite candidate Razi ElHajj would fail, and this would give a chance to a second LF candidate. In this case their Armenian candidate [Dr. Ara Bardakjian] would pass and H. Pakradouny would fail. Finally, at 7:50 pm., Ghosn's victory was unofficially announced, which "upset the Armenian community". The ballot boxes of Sin ElFil, Bauchrie and Biskanta were taken to the Jdeydé justice palace for recounting. At 8:20pm the official results were announced, and it appeared that Ghosn's list had not secured the required number of votes to be considered for proportional representation. Then H. Pakradouny's victory was secured. In an interview on Voice of Van, he said "an attempt was made to destroy our victory".¹¹³

L'Orient-Le Jour wrote that the list of Ghosn had needed less than 100 votes to pass the threshold and obtain a seat.¹¹⁴

On June 16, Ghosn appealed to the Constitutional Court to cancel the election results of Razi ElHajj and Pakradouny.¹¹⁵ However, on December 22, 2022 the court refuted the arguments raised by Ghosn.¹¹⁶

¹¹³ *Aztag*, May 16, 2022, p. 1.

¹¹⁴ *L'Orient-Le Jour*, May 17, 2022, p. 3.

¹¹⁵ "Des recours à la pelle en gestation après les législatives", *L'Orient-Le Jour*, May 17, 2022, p. 3.

¹¹⁶ *Aztag*, December 23, 2022, p. 1.

Attached at the end of the present article is a list¹¹⁷ of Beirut I votes for the four major lists and the votes they secured per community.¹¹⁸

A study of the results of voting per community indicates the following:

Hasbani got more Maronite votes than Gemayel, more Greek Orthodox votes and more Greek Catholic votes than Sahnaoui. Among the Armenian Orthodox candidates Terzian obtained the highest number of votes from both Armenian Orthodox and Armenian Catholic voters. Talouzian got the highest number of votes from the Sunnites, while the absolute majority of the Shiites voted for Sahnaoui. The highest number of votes of the Lebanese abroad went to Hasbani. Yacoubian received a good number of votes from the Lebanese abroad, Armenian Orthodox and Greek Orthodox communities. She was among the few candidates along with Talouzian who got votes from all communities. One can also see that Jihad Pakradouny got 208 Armenian Orthodox and Catholic votes and 535 Sunnite votes, while Malian had 810 Armenian Orthodox and Catholic votes, but did not score well among other communities, which was not the case with Jihad Pakradouny.

The scores indicated that 1703 Armenian Orthodox and 575 Armenian Catholics had given their preferential votes to non-Armenian candidates, a total of 2278 votes compared to 7201 votes to Armenian candidates.

On May 16 the Association for Democracy (LADE) mentioned “certain irregularities”. The organization considered the election day “deceiving”. It noted that the Ministry of the Interior was lax in the application of laws. There was aggressiveness towards candidates, electors and delegates of candidates, violation of the secrecy of the votes to the degree of accompanying a voter inside the place of isolation, delegates interfering in the counting of the votes and also influence and intimidation by political parties.¹¹⁹

The RFTLA, in a communique published on May 31, mentioned that in the pre-electoral period and on election day there were irregularities, especially in Bourj Hamoud and Anjar. Electors were threatened, sworn at, deprived of electricity and parking lots, and beaten on streets or in clubs. Thousands of electors were brought in from Armenia and other places paying their air-travel tickets. The dominant party (i.e. the Tashnags – Z.M.) also used the highest

¹¹⁷ The list, upon my request, was provided by Baydzig Kalayjian, who was working with Yacoubian.

¹¹⁸ Upon my request Keoshgerian provided a list of the Armenian (Orthodox and Catholic) votes of the majority of the Armenian candidates: Matossian 2019, Terzian 1919, Malian 856, Talouzian 814, Yacoubian 726, Seferian 216, Pakradouny 212, and Semerjian 135 votes. Except for Seferian’s result the votes of the others do not match those provided by Baydzig Kalayjian.

¹¹⁹ “Observateurs, des ‘centaines d’irregularité’ selon la LADE”, *L’Orient-Le Jour*, May 17, 2022.

ranking Armenian Church ecclesiasts to make appeals to voters. On election day efforts were made to attract voters and lead them to the voting centers despite their convictions and many others voted without understanding what was going on.¹²⁰

On May 16, 2022, as soon as the results of the Zahlé constituency were known, in the Tashnag club of Anjar the youth of the Tashnag LEM chapter gave a reception.

The mayor, Vartkes Khoshian (who had not succeeded in the legislative elections of 1992) and the newly elected MP George Bouchikian spoke. It was mentioned that due to 30 years of work and struggle the Bekaa Armenian seat had been given to its rightful owner, the Bekaa Armenians and especially the Tashnag Party.¹²¹

The AGBU leadership was glad Talouzian was elected and, naturally, congratulated him.

On May 23, an AGBU delegation led by the Lebanon District Committee chairperson Gerard Tufenkjian and 5 others, including AYA Central Council Chairperson Vicken Cherchian, visited Hagop Pakradouny and congratulated him on his re-election and stressed the necessity of cooperation between Armenian organizations.¹²² This was the first time AGBU congratulated a Tashnag MP.

On June 10, 2022 a victory celebration was held by the Tashnag Party in Bourj Hamoud in the presence of thousands. In his speech, Hagop Pakradouny thanked the Henchag Party, which had carried out its electoral campaign in a fair and clean competition, but had not reached parliament. However, if elected, it would have been a victory for the Tashnags and the community. He also thanked the Ramgavar Azadagan Party “comrades” for supporting the Tashnag and Henchag candidates in a public declaration. He added the victory put an additional obligation on their shoulders.¹²³

During the Henchag Party commemoration of the 20 party leaders hanged by the Ottoman Turkish government in June 1915, party Central Committee member Alexan Keoshgerian said, “We did not reach parliament but our credit has risen. We had a 30% increase in Armenian votes, while others had a retreat of approximately the same number. He also blamed people who forgot their oath to support comrades of many years in favor of unknown and unprincipled newcomers..”¹²⁴

¹²⁰ *Zartonk*, May 31, 2022, p. 1.

¹²¹ *Aztag*, May 18, 2022

¹²² *Ibid.*, May 24, 2022, p. 1.

¹²³ *Ibid.*, June 11, 2022, p. 1.

¹²⁴ *Ararad*, June 16, 2022.

Once the election results were clear, *Aztag* headlined, “In the Lebanese Parliamentary Elections the Tashnag Party’s three proposed candidates were elected”.¹²⁵

Zartonk headlined “The candidate supported by RAP, Paula Yacoubian, elected deputy of the Lebanese Parliament.”¹²⁶

On May 16, Saad Hariri declared, “Our decision was just”, referring to his and Mustaqbal’s non-participation in the elections.¹²⁷

Zartonk, under the title “There are lessons to be learnt if we are apt to study,” compared the results of the preferential votes of the elected Armenian MPs in the 2018 and 2022 elections.¹²⁸

Name	2018	2022	Difference
Paula Yacoubian	2500	3524	+1024
Hagop Terzian	3431	2647	-804
Jean Talouzian	4166	4043	-123
Hagop Pakradouny	7182	4973	-2209
George Bouchikian	1845	2586	+741

Baykar Weekly headlined “Paula Yacoubian registered a spectacular victory, gathering 3524 voices in the Beirut I electoral district”.¹²⁹ The RAP Supreme Council, in a communique dated May 16, congratulated Yacoubian on her victory. The Council promised its full support for her.¹³⁰

On May 16, *Aztag* wrote “After serious and persistent work, the fruits were gathered today; our people continue to be faithful to their party and club. In parallel with this we faced deceptions, as some Armenians whom we had always supported refused to give their vote to the candidates proposed by the Tashnag Party.”¹³¹

L’Orient-Le Jour headlined on page one, “La Thaoura s’envite en force au parlement” and on page two indicated that Hizbollah was the main loser in the elections. 13 MPs including Yacoubian were named “*Taghyiriyyun*” (change makers).¹³²

¹²⁵ *Aztag*, May 17, 2022, p. 1.

¹²⁶ *Zartonk*, May 17, 2022, p. 1.

¹²⁷ *L’Orient-Le Jour*, May 17, 2022.

¹²⁸ *Zartonk*, May 24, 2022, p. 1.

¹²⁹ *Baykar Weekly*, May 22, 2022, p. 3.

¹³⁰ *Ibid.*, p. 1.

¹³¹ *Aztag*, May 16, 2022.

¹³² *L’Orient-Le Jour*, May 17, 2022, p. 1.

Certain statistics indicated that there were 67 MPs elected from the various opposition lists out of the 128 available seats.¹³³ However, the Iranian ambassador to Lebanon, Mohammad Jawad Firouzina, on the occasion of the 35th anniversary of Imam Khomeyni's passing away said, "The Lebanese parliamentary elections proved that the people rest faithful to the agenda of the resistance."¹³⁴

In a post-election article Yeghia Tashjian wrote in *The Armenian Weekly* of Boston an article entitled "Parliamentary Elections and the Future of the Armenian Community in Lebanon." He wrote this concerning the results of the elections:

Nevertheless, despite this, the voting share of the Armenian political parties has slightly improved. In 2018, Armenian political parties brought 12,924 preferential votes out of the 24,707 total Armenian voters. In 2022 Armenian political party candidates brought 13,567 preferential votes out of the total votes. In an interview with the policy and research specialist at information International, Muhammad Shamseddin, the researcher highlighted that the number of Armenian voters in 2022 was around 21,000. It is worth mentioning that not all of the remaining Armenian votes went toward independent candidates; non-Armenian candidates took a share as well. This trend was new for the Armenians. On the other hand, for the sake of comparison, by counting the sectarian preferential votes for the three ARF (i.e. the Tashnag – Z.M.) elected MPs and the candidates, we see that 70 to 90% of their voters were Armenians. Armenian MPs and candidates who were supported by non-Armenian parties or civil society opposition groups gathered less than 10 to 20 percent of Armenian votes and were elected mainly by non-Armenian voters. In this context, it is important to mention that non-Armenian candidates have also attracted a large number of Armenian voters. This trend has been increasing over time either due to vote buying or political affiliations.¹³⁵

After the elections two separate events are to be noted:

First, the new parliament in its first meeting reelected Nabih Berry as its speaker with 65 votes (which included the votes of Jumblat's party) and Elias Abou Saab of the FPC as vice-speaker with 64 votes (without Jumblat's party votes). The latter's election showed that at least 3 opposition MPs voted for him. In other words, it was not clear then who held the majority, the loyalists of Aoun's regime or the opposition, which included the change makers.

Second, after Michel Aoun's presidential term was over on October 31, 2022 the government of Miqati, which had resigned right after the elections, became a caretaker government. Miqati decided to hold a government meeting on December 5; 9 ministers including George Bouchikian signed a joint

¹³³ The Constitutional Court invalidated the elections of two opposition MPs and gave their seats to the contenders, thus the opposition had only 65 MPs out of 128.

¹³⁴ *Aztag*, June 7, 2022.

¹³⁵ Tashjian.

declaration stating that they would not participate in the meeting.¹³⁶ However, the next day Bouchikian participated in the meeting, thus making a majority of 16 ministers out of 24, against the wishes of the Tashnag Party Lebanon District Committee.

On December 6, the TPLDC decided that Bouchikian had disobeyed the party's decision not to participate in the government meeting. Thus, he was declared to no longer be a member of the Armenian Deputies bloc.¹³⁷ Therefore, from that time the TP had two MPs in the parliament.

¹³⁶ *Aztag*, December 5, 2022, p. 8.

¹³⁷ *Ibid.*, December 7, 2022, p. 1.

Detailed per Community Voting Results in Beirut I															
Candidates	Maronite	Greek Orth.	Greek Cath.	Arm. orth.	Arm. cath.	Syr. Orth.	Syr. Cath.	Latin	Minorities	Protestant	Sunni	Shiite	State officers	Emigrés	Total
Nadim Gemayel	1128	1204	559	265	102	7	111	103	59	28	244	26	2	587	4425
Asma Andraos	113	198	59	28	23	8	32	21	13	1	274	2	2	123	917
Najib Elian	8	40	19	18	0	3	4	1	6	0	262	1	0	29	391
Antoine Syriani	26	46	26	111	23	22	12	4	0	7	260	0	0	21	558
Ani Seferian	5	19	5	185	31	0	2	4	0	10	12	0	0	4	277
Talar Margossian	6	5	2	10	6	0	1	0	1	4	5	0.	0	3	43
Leon Semerjian	7	8	14	108	26	0	3	3	1	1	24	0	1	12	208
Jean Talouzian	434	921	320	618	158	12	120	64	47	60	1160	51	14	64	4043
Nicola Sahnouli	960	1313	459	293	129	41	155	108	52	15	216	585	11	444	4781
Aledxsander Matossian	10	39	9	1175	212	4	3	33	6	75	6	12	0	32	2216
Hagop Terzian	16	42	18	2002	231	17	26	52	7	80	4	11	0	141	2647
George Juvekian	20	65	22	105	17	2	5	6	1	7	16	3	0	17	286
Serge Melkonian	4	10	0	50	17	0	0	4	1	5	3	0	0	1	95
Carol Boutros	22	32	16	6	4	2	3	4	0	0	9	5	0	34	137
Elie Assouad	109	89	23	11	3	7	15	10	4	0	3	2	1	26	303
Shamoun Shamoun	42	101	30	13	4	4	7	6	3	6	3	4	1	6	230
Ghassan Hasbani	1460	2326	803	442	126	56	185	137	59	29	210	11	7	1229	7080
Jihad Pakradouny	332	532	251	169	39	35	101	25	11	10	535	87	6	53	2186
George Shahwan	324	349	135	101	27	33	49	36	17	14	395	13	5	186	1684
Fady Nahhas	34	51	30	9	3	0	0	5	2	1	8	0	0	57	200

Elie Shamassy	98	135	60	37	10	15	225	21	6	6	9	2	0	103	727
Aram Malian	16	35	9	720	90	0	0	14	2	38	101	1	0	42	1068
Paula Yacoubian	308	551	166	662	137	33	55	38	37	45	611	52	4	825	3524
Ziad Absi	52	167	50	253	5	3	21	4	4	3	37	9	1	135	514
Ziad Sahker	537	655	342	144	83	6	66	62	60	16	116	34	1	1020	3142
Cynthia Zarazir	67	129	46	6	12	13	35	18	2	1	56	6	0	95	486
Maggie Nenedjian	2	5	2	38	8	8	1	0	0	1	5	2	0	8	80
Diana Ohanian	10	14	0	27	2	1	2	1	0	4	1	0	0	1	63
Charles Fakhoury	4	11	17	2	4	0	0	1	0	1	9	0	0	15	64
Brigitte Chelebian	9	5	5	29	36	0	4	1	2	10	7	0	0	21	129
Total															42504

ՀԱՅՈՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՇԷԼ ԱՌՆԻ (2016-22) ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ 2022Ի
 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ (Բ. ՄԱՍ)
 (ԱՄՓՈՓՈՒՄ)

ՉԱԻՆ ՄԱՐՈՒՆԵԱՆ

Հեղինակը Հայկական հայագիտական հասնդեհի 39րդ հատորին մէջ անդրադարձած էր նախագահի Միշել Առնի նախագահ-
 հուբեան շրջանի 2018ի ընտրութիւններուն, իսկ այս գրութեան մէջ՝ 2022ի խորհրդարանական ընտրութիւններուն:

Հեղինակը նախ նկարագրէ նախագահի Միշել Առնի վարչակարգին դինաբրաւած կառավարական եւ տնտեսական տաօնաւայնները
 եւ յատկապէս 17 Հոկտեմբեր 2019ի շարժումը, Պէյրութի նաւահանգիստի 4 Օգոստոս 2020ի պայթումը եւ անոնց յառաջացուցած
 հետեանքներն ու մէջտեղ եկած բարեկարգչական շարժումը:

Կլայիսի նախարդեալներով կայացան 15 Մայիս 2022ի երեսփոխանական ընտրութիւնները, գործող հասնատական օրէնքին վրայ:
 Լիբանանիայութիւնը եւս իր յատուկ պայնանները ունէր, որոնց կ'անդրադառնայ հեղինակը, ապա կը ներկայացնէ թեկնածութիւն-
 ներու յառաջարկանքը, ցանկերու կազմութիւնն ու ընտրապայքարը:

ՀՅԴ ներկայացուց հինգ թեկնածուներ, Յը՝ Պէյրութի մէջ, մէկական՝ Մեթնի եւ Չահլէի մէջ, յապով որ ասոնցնէ 4ը կ'ընտրուին:
 Մեթնի մէջ Ան ցանկ կազմեց Մըր ընտանիքին հետ, Պէյրութի մէջ՝ Ագատական հոսաքին հետ, իսկ Պեքայի մէջ՝ այս վերջիններուն եւ

Հըզպալլայի հետ: ՀՅԴ յաջողեցաւ 3 երեսփոխան ունենալ, սակայն, ասոնցմէ մին՝ Ճորճ Պուճիրբեան, դուրս դրուեցաւ Հայկական Երեսփոխանական պլորքէն:

ՄԴՀԿն ունեցաւ սեփական թեկնածու եւ Պէլրուֆի մէջ զինակցեցաւ Լիբանանեան ուժերուն հետ: Վերջինս անդեց ժիհատ Բագ-րատունին նոյն ցանկին վրայ պահել ու վերջինս ընտրուեցաւ, ստանալով նաեւ 208 հայկական քուէներ:

Պատակառուած էր ՌԱԿը: *Հարթօնք* զօրակցեցաւ երեք թեկնածուներու, որոնցմէ Փոլա Եագուպեան, իր անհատական ջանքերով յաջողեցաւ ընտրուիլ: Իսկ «ՌԱԿի Շրջանային վարչութիւն» անունով գործողները հայ կուսակցութիւններուն զօրակցեցան:

ՀԲԸՄի Լիբանանի շրջանակը զօրակցեցաւ Ժան Թալուզեանին, որ յաջողեցաւ 779 հայկական քուէներու կողքին մեծ թիւով քուէներ ապահովել սիւննի համայնքէն եւ երեսփոխան ընտրուիլ:

ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ 2017 ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ
K86Mkrtchyan@gmail.com



1990ականներու սկիզբին, Իրանի իսլամական պետութեան կողմէ
իրապարակուած պաշտօնական դրոշմաթուղթ,
ուր կը վկայաբերուի Քուրանէն համար մը Յիսուսի մասին

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աշխարհի բազմաթիւ ժողովուրդների պատմութեան անբաժան մաս են կազմում տարբեր չափերի եւ բնոյթի տեղաշարժերը: Դրանք ուղեկցուել են տարբեր պատմափուլերում՝ համապատասխանաբար հասարակա-կան-քաղաքական եւ տնտեսական կերպափոխումներով: Հայ ժողովրդի պատմութեան դէպքում տեղաշարժերն ունեցել են պարբերական բնոյթ, իսկ որոշ դարաշրջաններում էլ դրանով է պայմանաւորուած եղել հայու-թեան այս կամ այն հատուածի ապրելակերպն ու գոյութիւնը իր հայրենի սահմաններից դուրս:

Ըստ էութեան հայոց պետականութեան բացակայութեան պայմաններում տեղաշարժերը հնարաւորինս որոշ դէպքերում լուծել են գոյութենա-կան խնդիրներ, իսկ հեռանկարում նպաստել հայ գաղթաշխարհի ձեւա-

տրմանը: Աելին, յայտնի է, որ տեղաշարժերի հետեւանքով ձեւաւորուած մշակութային եւ կրթական կենտրոնները նպաստեցին մասնաւորապէս հայ գրատպութեան¹, ինչպէս նաեւ յետագայում հրապարակախօսութեան եւ առհասարակ հայագիտութեան նորովի ու հիմնարար զարգացմանը: Այդ գործին իր անմնացորդ ներդրումն ունեցաւ հայութեան այն ստուար զանգուածը, որը 1604ին Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետեւանքով ձեւաւորուեց հայկական համայնքներ Իրանում:

Յայտնի է նաեւ այն փաստը, որ յետագայ դարերում իրանահայութեան թիւը զգալիօրէն նուազել է, այլ կերպ ասած՝ տեղի են ունեցել նոր ու միջանի տեղաշարժեր արդէն դէպի Հնդկաստան եւ հարաւարեւելեան Ասիայի երկրներ: Սակայն միշտ էլ, ինչպէս կ'անդրադառնանք ստորեւ, այդ երկրում հայութիւնն իրեն բնորոշ տեղն ու դերն է զբաղեցրել իրանական հասարակական կեանքում: Յիրաւի, նրա այդ դերակատարումը կամ կարգավիճակը եւս ենթարկուել է որոշակի ընկերա-իրաւական փոխակերպումների, այսինքն՝ քարացած վիճակում չի եղել: 19րդ դարավերջին եւ 20րդ դարասկզբներին նրան ուղեկցել են կամ ինքն է յաճախ դարձել հասարակական վայրիվերումների անմիջական մասնակիցն ու նոյնիսկ գլխաւոր դերակատարը, ինչպէս, օրինակ՝ 1905-11ի սահմանադրական յեղափոխութիւնն Իրանում եւ հայ քաղաքական Հնչակեան եւ Դաշնակցութիւն կուսակցութիւնների, Գրիգոր Եղիկեանի, Եփրէմ Խանի եւ այլ անուանի հայ գործիչների մասնակցութիւնը²:

1979ին իսլամական յեղափոխութիւնը, այնուհետեւ Իրան-Իրաք ութամեայ պատերազմը խթանեցին նոր տեղաշարժերի առաջացմանը իրանահայութեան կեանքում: Ըստ այդմ սոյն յօդուածի նպատակն է քննարկել այն խնդիրները, որոնք առկայ են այսօր Իրանի հայօճախում: Դրանք

¹ Յայտնի է, որ տպագրութեան գիտը տեղի է ունեցել գերմանացի Եոհան Գիւտենբերգի ձեռքով 1445ին: Այս գիտից հազիւ 70 տարի անց Վենետիկում Յակոբ Մեղապարտը տպագրում է հայերէն առաջին գիրքը՝ *Պարգապումարը* (1512): Առաջին տպագրիչ Յակոբից յետոյ, Աբգար դպիր Թոխատեցին կամ Երդոկիացին նոյնպէս Վենետիկում 1565ին տպագրում է հայերէն առաջին օրացոյցը: Վենետիկից յետոյ երկրորդ վայրը, ուր հայերէն տպարան է աշխատել, եղել է Կոստանդնուպոլիսը, որտեղ իր տպարանը տեղափոխել ու գրքերի հրատարակութիւնը շարունակել է Աբգար Դպիրը 1567ին: Յետագայում, յաջորդաբար, հայկական տպարաններ են հիմնուել Հռոմում՝ 1594ին, Լվովում՝ 1616ին, Միլանում՝ 1621ին, Փարիզում եւ այլ վայրերում: 7րդ տեղը պատկանում է Նոր Զուղային, ուր տպարան է հիմնուել առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացու ջանքերով 1636-37ին, իսկ առաջին գիրքը տպագրուել է 1638ին:

² Կ. Մկրտչեան, «Հնչակեան կուսակցութեան մասնակցութիւնը 1905-1911 թթ. սահմանադրական յեղափոխութեանը իրանահայ գաղթօջախում», *Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան սրտեղծման 125 եւ Արփիար Արփիարեանի ծննդեան 170 ամեակներին նուիրուած միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2022, էջ 140-47:

սերտորէն կապուած են կրթական, մշակութային եւ հասարակական կեանքի այլ ոլորտների հետ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայ-իրանական յարաբերութիւններն ունեն միջանի հազարամեակի պատմութիւն: Լինելով տարածաշրջանի բնիկ ժողովուրդներ՝ հայերն ու իրանցիները պատմութեան քառուղիներում գրանցել են բազմաթիւ առնչութիւններ հասարակական կեանքի ամենատարբեր բնագաւառներում: Ակնյայտ է, որ այդ պատմամշակութային միջավայրում տեղի են ունեցել նաեւ տեղաշարժեր նրանց միջեւ: Առեւտրական սերտ կապերը եւ այդ գործում հայերի ունեցած փորձն ու հմտութիւնները միշտ էլ գնահատուել են իրանական պետութեան եւ նրա միապետերի կողմից, իսկ 19րդ դարում էլ որոշ հայեր դիւանագիտական ու զինուորական բարձր պաշտօններ են զբաղեցրել իրանական արքունիքում:

Իրանում հայ բնակչութիւն եղել է դեռեւս Ք.ա. 6րդ դարում: Դրանք հիմնականում հայկական զօրամասեր էին, որոնք վասալական պարտաւորութիւն էին կատարում՝ ծառայելով Աքեմենեան պետութեանը: Զգալի թիւ էին կազմում նաեւ առեւտրականներն ու արհեստատուները: Իսկ որպէս բնիկներ՝ հայերը դեռեւս հնագոյն ժամանակներից ապրել են Ատրպատականում կամ պատմական Պարսկահայքում, որը հայկական պետականութեան անկումից յետոյ, 428ին մտաւ պարսից պետութեան կազմի մէջ³: Այսօր, Իրանի հայօճախն ունի աւելի քան 400 տարուայ պատմութիւն:

Ժամանակակից պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին շեշտում է այն իրողութիւնը, որ հայերն Իրանում թէեւ մահմեդական բնակչութեան ծովում կազմում էին չնչին փոքրամասնութիւն, սակայն չնայած դրան, անչափ մեծ աւանդ, դերակատարութիւն ու ներդրում են ունեցել Իրանի հասարակական զարգացման, մշակութային առաջընթացի եւ առհասարակ մտաւորական ու քաղաքական կեանքի բնագաւառում⁴: Այսպիսով, հայօճախը ունեցել է զգալի դերակատարութիւն տարբեր ժամանակաշրջաններում Իրանի պատմութեան մէջ: Աւելին՝ մասնակցել է այդ պատմութեան կերտման գործին եւ փաստորէն սովորական դիտորդի կամ սպառողի դերում հանդէս չի եկել:

Հայ գաղթօջախների պատմութեան մէջ իր ունեցած տեղաշարժերով առանձնանում է Իրանի հայօճախը, որը տարբեր պատմափուլերում ունեցել է ե՛ւ աճող, ե՛ւ նուազող ժողովրդագրական տուեալներ:

³ Գառնիկ Բաղալեան, «Իրանահայ համայնք», «Իրան». *հանրագիտարան*, հեղինակային հրատ., Երեւան, 2011, էջ 396-99:

⁴ Վ. Բայբութեան, *Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ*, «Լուսակն», Երեւան, 2013, էջ 9:

1980ականների իրան-իրաքեան պատերազմը, ապա դրան յաջորդած տասնամեակներին եւ ընդհուպ մինչեւ մեր օրերը Արեւմուտքի կողմից սահմանած եւ պարբերաբար խստացող պատժամիջոցները ընկերա-տնտեսական մեծ վնաս են պատճառել Իրանի բնակչութեանն առհասարակ, ինչպէս նաեւ նրա մի մասը կազմող հայօճախին: Այդ պայմաններում սկիզբ առաւ առ այսօր շարունակող արտագաղթը, որը տեղաշարժերի ներկայ գործընթացներում վճռորոշ նշանակութիւն կ'ունենայ հայօճախի կեանքում:

Վերոնշեալ փաստով պայմանաւորուած՝ արտագաղթի խնդիրն իրենց գործունէութեան օրակարգում են պահում Թեհրանի, Սպահանի եւ Ատրպատականի հայոց թեմերը, համայնքային կառոյցները, ինչպէս նաեւ ազգային գործիչները: Ժողովրդագրական ճգնաժամի հետեանքով փակում են մանկապարտէզներ, դպրոցներ, նուազում է յատկապէս երիտասարդութեան թիւը: Այս առումով, յատկանշական է արեւելագէտ, պրոֆեսոր Վահան Բայբուրդեանի այն դիտարկումը, թէ Իրանի հայօճախի անցեալի պատմութիւնը բաականաչափ ուսումնասիրուած է. մի բան, որ չի կարելի ասել հայօճախի ներկայ վիճակի ու զարգացումների մասին⁵: Յիրաւի, ելակէտ ունենալով նաեւ այս նկատառումը՝ փորձենք յօդուածի շրջանակներում անդրադառնալ հայօճախի որոշ խնդիրների:

1980ականներին, Իրանը լարել էր իր ուժերը շարունակելու համար Իրաքի դէմ ծանր ու հիօժիչ պատերազմը, որը խլում էր հարիւր հազարաւոր մարդկային կեանքեր եւ պատճառում վիթխարի նիւթական վնասներ երկրին⁶: Ակնյայտ է, որ այդ ռազմաքաղաքական իրողութիւններով պայմանաւորուած Իրանի հայօճախը բախուելու էր ընկերա-տնտեսական բարդ խնդիրների, որոնք տարածուելու էին նրա գործունէութեան բոլոր բնագաւառները: Եւ որպէս այդ ամէնի ցայտուն դրսեւորում կարեւորում ենք ժողովրդագրական տուեալները, որոնք հնարաւորութիւն են տալիս պատկերացում կազմել հայօճախի մասին թուերով:

Նախ հարկ է նկատի ունենալ, որ ներկայումս ըստ ՄԱԿի տուեալների՝ Իրանի բնակչութիւնը կազմում է անելի քան 86 մլն, որը աշխարհի բնակչութեան 1,08%ն է⁷: Բնակչութեան թուով երկիրը զբաղեցնում է 18րդ տեղը: Յատկանշական է, որ բնակչութեան 75,5%ը կամ շուրջ 63 մլն մարդ քաղաքաբնակ է եւ միջին տարիքը կազմում է 32, մինչդեռ հայօճախի տարիքային շեմը տարեցտարի բարձրանում է եւ գերակշռում են տարեցները: Այլ կերպ ասած՝ երիտասարդ բնակչութեամբ յայտնի Իրանում հայերը ծերացող կամ ասագ տարիքի մարդկանց թուով գերակշռող հայօճախ են:

⁵ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 11:

⁶ Վ. Բայբուրդեան, *Իրանի պարմութիւն*, «Զանգակ-97», Երեւան, 2005, էջ 730:

⁷ <https://www.worldometers.info/world-population/iran-population/#:~:text=The%20current%20population%20of%20the,year%20according%20to%20UN%20data.> մատչում՝ 28 Օգոստոս 2022:

Իրանահայության թիվ տարբեր ժամանակաշրջաններում					
Տարի	1851	1890	1979	2003	2020
Քանակ	Շուրջ 20,000	80,000	200,000	80,000	Շ. 50,000

Իրանում հայության թուրքապետական վերաբերել կարելի է հաշտի առնել վիճակագրական հետետեալ տուեալները: Այսպէս՝ 1851ին իրանահայերի թիւը մօտ 20 հազար էր, 1890ին՝ 80 հազար⁸, 1979ին՝ 200 հազար⁹, 2003ին՝ 80 հազար¹⁰, ներկայում՝ շուրջ 50 հազար¹¹: Յատկանշական է, որ մինչեւ Հայոց Յեղասպանութիւնը հայրենիքից դուրս ապրող հայության թիւը (չհաշուած Յարական եւ Օսմանեան կայսրութիւնների հայութիւնը) հասնում էր մօտ 200 հազարի, որից 100 հազարը բնակուում էր Իրանում, իսկ մնացածը՝ աշխարհի տարբեր երկրներում¹²: Փաստօրէն, եթէ պայմանական դիտարկենք նախատեղեկեան ժամանակաշրջանի հայ գաղթավայրերը, ապա իրանահայ գաղթօջախը զբաղեցրել է առաջին տեղը:

Ըստ իրանահայ պատմաբան Էդիկ Բաղդասարեանի (Գերմանիկ) տուեալների՝ 1999ի դրութեամբ Իրանում բնակուում է շուրջ 80 հազար հայ: Հայօճախը խիստ շերտաւորուած է: Կան մեծ թուով արհեստաւորներ, արդիւնաբերութեան տարբեր ճիւղերում աշխատող բանուորներ, զգալի թուով մտաւորականներ, բժիշկներ, ճարտարապետներ, ուսուցիչներ, պետական հիմնարկների ծառայողներ են¹³: 1999ի դրութեամբ հայերի թիւը Թարիզում եղել է գրեթէ 2000¹⁴, իսկ Նոր Ջուղայում՝ շուրջ 8000¹⁵:

Իրանահայերի թիւը Իրանում, 1999ին, ըստ Էդիկ Բաղդասարեանի (Գերմանիկ)			
Թարիզ	Նոր Ջուղայ	Թեհրան	Ընդհանուր
2000	8000	70000	80000

Ինչ վերաբերում է Իրանի հայօճախի վերջին 20 տարուայ ժողովրդագրական իրավիճակին, ապա այն անհանգստացնող է, քանի որ մեծացել է

⁸ Բաղդասարեան, էջ 397:

⁹ Կ. Դալլաքեան, *Հայ Սփիւռքի պատմութիւն (համառօտ ակնարկ)*, «Զանգակ-97», Երեւան, 2004, էջ 194:

¹⁰ Հ. Փաիւեանեան, «Իրան», *Հայ Սփիւռք հանրագիտարան*, խմբ.՝ Յովհ. Այվազեան, Ա. Սարգսեան եւ ուրիշ., «Հայկական հանրագիտարան», Երեւան, 2003, էջ 240:

¹¹ <https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-irkniqn-uni-irani.html>, մատչում՝ 29.09.2023:

¹² Ա. Եղիազարեան, *Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները 1918 թուականից մինչեւ մեր օրերը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017, էջ 121:

¹³ Էդ. Բաղդասարեան (Գերմանիկ), «Համառօտ ակնարկ իրանահայ գաղթօջախի պատմութեան», *Լոյս, Դեկտեմբեր*, 65-66:2002, էջ 18:

¹⁴ Էդ. Բաղդասարեան (Գերմանիկ), «Համառօտ ակնարկ իրանահայ գաղթօջախի պատմութեան», *Լոյս, Յունուար-Փետրուար*, 67-70:2003, էջ 14:

¹⁵ Բաղդասարեան, «Համառօտ ակնարկ», 67-70:2003, էջ 15:

արտագաղթողների թիւը, գրանցուել է ծնելիութեան փոքր թիւ, փակուել են որոշ դպրոցներ:

Իրանի հայօճախի ընթացիկ տեղաշարժերի պատճառ դարձած արդի խնդիրները առնչուում են տարածաշրջանի ընկերա-տնտեսական եւ քաղաքական ընդհանուր մթնոլորտի թելադրած գերխնդիրների հետ¹⁶: Դեռեւս 2001 Սեպտեմբերի 11ի Նիւ Եորքի ահաբեկչութեան հետեանքով տարածաշրջանում մեծացաւ լարուածութիւնը¹⁷, որի հետեանքով սկսուեց արտագաղթի նոր ալիք: Այն, ինչ որ կերպ դադար առաւ այն ժամանակ, երբ 2018 Նոյեմբերի 3ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը վերականգնեց Իրանի դէմ պատժամիջոցները¹⁸:

Այսպիսով, կարելի է ասել, որ հայութիւնն Իրանում ապրում է արտակարգ իրավիճակներով պայմանաւորուած գործընթացների ազդեցութեան ներքոյ: 2013 Յուլիսի 3ին ԻԻՀ խորհրդարանի Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան հայազգի պատգամատուր Կարէն Խանլարեանը նշել է, որ հայօճախից որոշակի արտագաղթ է նկատուում՝ դէպի ԱՄՆ ու Կանադա: Ըստ նրա՝ Իրանում ապրում է մօտ 60-70 հազար հայ, որոնց մեծ մասը զբաղում է արհեստով ու առեւտրով¹⁹:

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի տուեալներով Իրանում ապրում է մօտ 70.000-80.000 հայ, որից Թեհրանում՝ գրեթէ 60.000, Սպահանում՝ մօտ 5000, Թաւրիզում՝ ասելի քիչ, իսկ Ուրմիայում՝ մօտ 1200: Թեհրանի հայոց թեմի միւս քաղաքներում ապրում են 15-20ական հայ ընտանիք²⁰: Հարկ է նշել, որ 2005ին, Ատրպատականի հայ համայնքում (ներառեալ Թաւրիզը) հաշուում էր մօտ 2000 հայ²¹: Թուային տուեալների տարբերությունը կարելի է բացատրել այն իրողութեամբ, որ Ազգային առաջնորդարանի տուեալները հիմնուած են պաշտօնական տեղեկատուութեան վրայ:

Իրանահայերի թիւը 2017ին, ըստ առաջնորդ Սեպուհ արք. Սարգիսեանի					
Թեհրան	Սպահան	Թաւրիզ	Ուրմիա	Այլ քաղաքներ	Ընդհանուր
Շ. 60,000	5000	<2000	1200	15-20ական ընտանիք	70-80000

Ժողովրդագրական տուեալներ է ի յայտ բերել 2005 Նոյեմբերի 28ին Իրանի խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամատուր

¹⁶ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 12:

¹⁷ Կ. Վերանեան, *Իսրայէլի քաղաքականութեան վերաբերեալ*, «Նորավանք» ԳԿՀ, Երեւան, 2016, էջ 165:

¹⁸ <https://www.abc.net.au/news/2018-11-03/trump-and-iran-sanctions/10462528> մատչում՝ 30 Հոկտեմբեր 2023:

¹⁹ <https://armenpress.am/arm/news/724867/> մատչում՝ 13 Նոյեմբեր 2023:

²⁰ <http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003> մատչում՝ 02 Սեպտեմբեր 2023:

²¹ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 37:

Գէորգ Վարդանեանի եւ Թեհրանի հայոց թեմի անդամներ Եսայի Աբրահամեանի ու Ժիրայր Նազարեանի այցելութիւնը Սարի եւ Գորգան քաղաքների հայկական համայնքներ: Առաջինում նրանց դիմաւորել է 40 հոգի, իսկ երկրորդ դէպքում բացակայում են թուային տուեալները: Ըստ պատգամաւորի՝ Սարիի հայոց գերեզմանատունն ու շրջափակը մոռացուած տարածքի տպաւորութիւն են թողնում²²: Փաստօրէն, այս շրջաններն արդէն 2000ականների սկզբներին հայաթափուած են եղել:

«ԱՅԱԶ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

Իրանահայութեան տեղաշարժերի հարցը ժամանակ առ ժամանակ գտնուել է հայօճախի գործիչների ուշադրութեան ներքոյ: Իրանի հայկական պարբերական մամուլի էջերում առկայ են այդ հարցի վերաբերեալ քննարկումներ, հարցազրոյցներ, մտահոգութիւններ Իրանի խորհրդարանում հայ պատգամաւորների, հոգեւոր առաջնորդների, ինչպէս նաեւ տարբեր մտատրականների, մշակութային ու կրթական գործիչների հետ, իսկ երբեմն էլ առանձին վերլուծութիւններ: Հարկ է նշել, որ այդ բոլոր նիւթերում էլ առկայ են մի տեսակ ընդհանուր ոճի քննարկումներ, զգուշաւոր ու մեղմ քննադատութիւններ, յաճախ նկարագրական տեղեկութիւններ որեւէ հարցի շուրջ, իսկ երբեմն էլ հանգամանալից անդրադարձներ:

Հարկ է նկատել, որ սկսած 2010ականներից Իրանի հայօճախն իր վրայ կրում է սիրիական իրադարձութիւնների ազդեցութիւնը²³: Հայերի արտագաղթին նպաստող գործոններից մէկն էլ այն է, որ հեռացողներն ազգականներ ունեն շատ երկրներում: Բացի այդ, Իրանում գործունէութիւն է ծաւալել «Հայազ» կոչուող հրէական կազմակերպութիւնը²⁴:

ԱՄՆում կրթութիւն ստացած, 14 տարի այնտեղ բնակուած եւ այնուհետեւ Նոր Զուղա վերադարձած նախային հարցերի մասնագէտ Հայդուկ Վարդեանեանը կարծում է.

«Հայազ» կազմակերպութիւնը²⁵ հրէական է, ինչպէս շատերը գիտեն: Հրեաներն այն հեռակայ ծրագիրն ունեն, որ Հայաստանի մերձակայ երկրները դա-

²² «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 18 Յունուար 2006:

²³ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 39:

²⁴ Նոյն, էջ 40:

²⁵ Իրանահայ հայրենակիցների պատմածի համաձայն, Իրանում գործունէութիւն է ծաւալել «ԱՅԱԶ» կոչուող հրէական մի կազմակերպութիւն, որը մասնագիտացած է յատկապէս հայերի արտագաղթի կազմակերպման հարցերում Միացեալ Նահանգներ: Իրաքանչիւր անձից արտագաղթը դիւրին եւ առանց թղթաբանական քաջքոյքների կազմակերպելու համար, այդ կազմակերպութիւնը գանձել է 5000 ԱՄՆ դոլար, ընդ որում գումարն արտասահմանում ետ վերադարձնելու պայմանով: Որքան էլ որ զարմանալի ու անհաստատի է, չնայած կազմակերպութեան իսրայէլական լինելու մեծ հաւանականութեանը, այն Իրա-

տարկեն հայից: ... Իսկ ինչն է պատճառը, որ արտագաղթը տարածուած է նոյնիսկ այլ փոքր ազգերի մօտ, պիտի ասեն, որ անյարմար քարոզչութիւններն են²⁶:

Փաստօրէն, արտագաղթին նպաստում են ոչ միայն ընկերային խնդիրները, այլ նաեւ քարոզչութիւնը, որն իր բովանդակութեամբ սպառնալիքի կամ գոնէ վախի մթնոլորտ է առաջացնում հայօճախներում:

Ըստ իրանահայ որոշ գործիչների՝ կրօնական փոքրամասնութիւնների հետ կապուած թեմաները դիտարկում են երկրի անվտանգութեան համար բարձր ռիսկայնութեան հարցում՝ «չկայ համայնք, չկայ եւ հնարաւոր խնդիրը» կանխարգել բանաձեւով²⁷: 2010ին Թեհրանի հայոց թեմի պատգամատրական ժողովի եւ Իրան-Հայաստան բարեկամութեան միութեան վարչութեան անդամ Ռուբէն Սարգսրեանի տուեալներով Իրանում բնակուող փոքրամասնութիւնները 3000 դոլարով «Հայագ» կազմակերպութեանը անդամագրուելուց յետոյ մեկնում էին Աստրիա, ետ ստանում վճարած գումարն ու դիւրին պայմաններով մեկնում ԱՄՆ²⁸: Փաստօրէն, կարելի է արձանագրել, որ այդ կազմակերպութիւնը հաաքագրել է միջինը 3000–5000 դոլար, եւ ինչ-որ տեղ սակարկման մեխանիզմ է կիրառել:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ.

Ա. ՀՈԳԵՎԻՃԱԿՆԵՐ ՈՒ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐ ՕՏԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Տ. Սեպուհ արք. Սարգսեանի համոզմամբ արտագաղթի հարցում կայ միտում, եթէ հաշուի է առնում գաղթողների՝ այդ երկրի պայմաններում համեմատաբար բարեկեցիկ ընկերային կարգավիճակը:

Այո, համարում են, որ միտումնաւոր է արում: Որովհետեւ մեր գաղութի գաւակներից շատ-շատերը, ովքեր հեռացել են, ունէին տուն-տեղ, գործարան կամ համալսարանի դասախօսներ էին: Սա ոչ մի կերպ չի բացատրում: Բացի միայն՝ մէկը միւսի ետեւից գնալու սովորութիւնից²⁹:

նում փաստօրէն գործում է անխափան ու անարգել: Շատերն այն կարծիքին են, որ դեռեւս ԺԹ. դարում հիմնուած հրէական այդ կազմակերպութիւնը հայութեան արտագաղթի վրայ մեծ գումարներ է վաստակում: Կան նաեւ տեսակէտեր, որ դա տարածաշրջանի հայաթափման ծրագիր է: Ընդ որում, ուշագրան այն է, որ «ՀԱՅԱԶ»ի ծրագիրը տարածում է միայն կրօնական փոքրամասնութիւնների վրայ, այսինքն մուսուլմանները ներգրաւուած չեն ծրագրի շրջանակների մէջ: Առաւել մանրամասն տե՛ս՝ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 40:

²⁶ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 24 Յունիս 2007:

²⁷ Ա. Փոլադեան, «Իրանի կրօնական փոքրամասնութիւններ», <https://www.Iragir.am/2010/03/27/33471/> մատչում՝ 22 Մայիս 2022:

²⁸ <http://www.aaeurop.com/?p=3606> մատչում՝ 10 Մայիս 2022:

²⁹ <http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003> մատչում՝ 02 Սեպտեմբեր 2023:

Աելին՝ «Արարատ» կազմակերպության Արուեստից միության նախագահ Արմինե Սուքիասեանի խօսքով՝ արտագաղթողների մեծամասնությունը նոյնիսկ պատկերացում չունի արտերկրում առկայ դժուարությունների մասին. միայն լսում են, թե կարճ ժամանակամիջոցում կարող են գնել տուն, մեքենայ են.³⁰ Փաստորէն, արտագաղթի ընթացքում առկայ են եղել չարդարացուած ու անհիմն ակնկալիքներ օտար երկրներում նոր կեանք սկսելու հարցում:

Արտագաղթի հոգեբանական նրբութիւնների ու պատճառների վերաբերեալ ուշագրաւ կարծիք է յայտնել միութենական գործիչ եւ թարգմանիչ Անահիտ Յովսէփեանը.

Մարդիկ գնում են, եւ եթէ գնում են, այն էլ ոչ թէ մէկը, երկուսը, այլ՝ հարիւրաւորներ, ուրեմն՝ իրենց առօրեայի վրայ մի այնպիսի բան կայ ծանրացած, որ նրանց դառնացնում է, նրանց մարդկային արժանապատուութիւնը վիրատրում է, թոյլ չի տալիս, որ լիարժէք ապրեն, այնպէս, ինչպէս ամէն մարդ կը ցանկանար ապրել ըստ իր որդեգրած սկզբունքների, ընդունակութիւնների, հնարաւորութիւնների եւ ապագայի նկատմամբ ունեցած իղձերի:

Նրա մէկ այլ խօսքով՝ «*Լինելով մի փոքրաթիւ համայնք մի բազմամիլիոնանոց ընդհանրութեան մէջ՝ մենք ի վիճակի չենք որեւէ հասարակական իրավիճակ նոյնիսկ իր տեղից շարժել...*»³¹: Ակնյայտ է, որ այդ հարցում ազգային իշխանութիւններից ինչ-որ բան ակնկալելն արդիւնք չի ունենայ, ինչպէս նաեւ համայնքային կառոյցները - յայտնի որպէս ազգային իշխանութիւններ անուամբ - այդ հարցում եւս անզօր են, քանի որ նրանց լիազօրութիւնները տարածուած են միայն ներհամայնքային խնդիրների լուծման տիրոյթում, մինչդեռ ընկերա-տնտեսական մեծ խնդիրները լուծելու իրաւասութեամբ օժտուած են միայն երկրի իշխանութիւնները:

«Գոհար» ուղեցոյց դպրոցի փոխտեսուչ, Հայ Ուսումնասիրաց «Չհարմահալ» միութեան գրասենեակի աշխատակից, երիտասարդական թատերախմբի ղեկավար Հայրիկ Աղանեանի խօսքով՝ արտագաղթող երիտասարդների մօտ հիմնական հարցը եղել է բնակարանը կամ աշխատանք չունենալը: Ըստ նրա տուեալների՝ ամուսնացած զոյգերի մի փոքր մասը արտասահման հասնելուն պէս ամուսնալուծուել է³²: Փաստորէն, արտագաղթի հետեւանքով տեղի են ունեցել ամուսնալուծութիւններ, որոնց թուային տուեալների վերաբերեալ յստակ տեղեկութիւն չկայ, քանի որ արտասահմանում թեմական կառոյցների բացակայութեան կամ դրանց լինելու դէպքում իրանահայութեան անճանաչելիութեան ու անտեղեակութեան պատճառով չեն գրանցուել այդ ցուցանիշերը:

³⁰ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 30 Մայիս 2007:

³¹ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 10 Յունիս 2007:

³² «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 13 Յունիս 2007:

Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» դպրոցի փոխտեսուչ, տեղի «Արարատ» միութեան մշակութային միատրի վարչութեան անդամ եւ «Կռունկ» ասմունքի խմբի պատասխանատու Ռիմա Սիմոնեան-Օհանեանի խօսքով՝

Համաճարակի է նմանում այս արտագաղթը. արդէն իսկ չի կարելի ասել՝ ժողովուրդը ծրագրաւորուած եւ մտածուած է գաղթում, այլ մէկը միւսին նայելով, ակամայ, երբեմն էլ ի զարմանս բոլորի՝ խոր կսկիծով՝ նոյնիսկ չիմանալով պատճառը³³:

Իսկ գրող, բանաստեղծ Վարանդն էլ ընդգծում է.

«Ինչ-ինչ հոգեբանական-հասարակական մեր այս պայմանականօրէն նուագած համայնքում էլ հիւանդութեան ախտանշաններ են երեւում...»³⁴:

Փաստօրէն, այս դէպքում էլ արտագաղթին նպաստել է հայութեան զանգուածային «սարսափը», որն անմիջականօրէն պայմանաւորուած է եղել արտաքին գործօններով: Հենց դա է պատճառը, որ 2000ականների սկզբների դէպքերն ու 2010ականների խուճապը յանգեցրեցին որոշակի եւ ինչ-որ տեղ անկազմակերպ գործողութիւնների՝ արագացուած արտագաղթի կամ անգամ կարելի է կիրառել '«կիսխուստ» երբեմնի բնակավայրերից՝ արտայայտութիւնը: Ընդ որում պէտք է ընդգծենք՝ խաղաղ պայմաններում:

Սպահանի համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան բաժնի դասախօս Հրայր Շահնազարեանը քննարկելով հայօճախի խնդիրները՝ բարձրացնում է մէկ այլ մտահոգիչ հարց.

Պայմանների թելադրանքով նօսրացել է տեսլականով օժտուած մտաւորականների թիւը: Հաղորդակցական հնարաւորութիւնների եւ համացանցի անսանձ ներխուժումը համայնքից ներս ստեղծել են նոր գրաչութիւններ: Հայաստանը, հայ ժողովուրդը եւ հայ մշակոյթը ամէլի քիչ ներշնչանքի աղբիւր են եւ ընդհակառակը այս ակունքներից հեռանալու տրամադրութիւններն են առկայ³⁵:

Ինչ խօսք, համայնքի շարժիչ ուժը մտաւորականներն են, որոնց գործողութիւնները միշտ էլ ընդօրինակելի են եղել նրա շարքային մարդկանց համար: Փաստօրէն, այս դէպքում եւս նրանց գործողութիւնները փոխկապակցուած են եղել:

Այսպիսով, համայնքային գործիչների վերոնշեալ նկատառումները եւ հրապարակի վրայ եղած այլ նիւթերը հիմք են տալիս եզրակացնելու, որ եթէ 2000ականների սկզբներին Իրանում հայութեան թիւը կազմել է 80.000, ապա այսօր այն նուագել է մինչեւ լաւագոյն դէպքում 50.000ի: Արտագաղթի հետեւանքով հայօճախի թիւը 20 տարուայ կտրուածքով

³³ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 20 Յունիս 2007:

³⁴ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 11 Նոյեմբեր 2006:

³⁵ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 06 Նոյեմբեր 2006:

նուազել է բարեկեցիկ պայմաններով ապահովուած մինչեւ ւաւելի քան 30.000 (իսկ որոշ տուեալներով մինչեւ 40.000) մարդով: Այլ կերպ ասած՝ հայօճախը միայն 21րդ դարի առաջին քսանամեակում կրճատուել է մինչեւ 50%: Անկասկած, դա մեծ թիւ է, եթէ հաշուի առնենք այն կարելոր փաստը, որ այդ տոկոսային կազմի մէջ զգալի թիւ են գոյացնում ուսանելու նպատակով արտերկիր մեկնած երիտասարդները եւ դպրոցահասակ երեխաները: Ահա թէ ինչու հայօճախում նկատուում է դպրոցների քանակի որոշակի նուազում³⁶: Ըստ էութեան վերարտադրողական տարիքի բնակչութեան արտահոսքը զգալիօրէն թուլացրել է հայօճախը:

Բ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հարկ ենք համարում ընդգծել, որ ընկերատնտեսական խնդիրներ ունենալով հանդերձ, արտագաղթի ուղին բռնած հայերը Իրանից հեռացել են ոչ թէ կեանքին վտանգ սպառնացող առաջնահերթ ռիսկէ խնդրի կամ փախստականի կարգավիճակ ունենալու պատճառով (ինչպէս որ եղաւ սիրիահայերի պարագայում), այլ դիմել են արտագաղթի տարբերակին ւաւելի լաւ կեանքով ապրելու մղումով դրդուած: Հենց սա էլ 21րդ դարի սկզբին իրանահայերի տեղաշարժերի կարելոր առանձնայատկութիւնն է եւ տարբերակիչը:

2014 Հոկտեմբերի 20ին՝ Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին ընդառաջ, Իրան այցելած Արամ Ա մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսն, անդրադառնալով արտագաղթի մտահոգիչ երեւոյթին, կոչ է ուղղել Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի բակում հաւաքուած հազարաւոր հայորդիներին.

Բանաստեղծին բառերով խնդրելու պէս կը պահանջեմ ու պահանջելու պէս կը խնդրեմ Իրանի մեր ժողովուրդի սիրելի զաւակներէն: Մի՛ հեռանաք Նոր Զուղայէն, Շահնշահրէն, Թեհրանէն, Թարիզէն եւ Ուրմիայէն: Իսկ եթէ ոմանք ինչ-ինչ պատճառներով պարտաւորուած կ'ըլլան հեռանալու այս երկրէն, անոնք միայն մէկ հասցէ պէտք է ունենան՝ Հայաստան, միայն Հայաստան...³⁷:

Այսպիսով, հարցը խորապէս մտահոգում է Հայոց Եկեղեցուն, որն Իրանում իր ներկայութիւնն ապահովում է պատմական մեծ անցեալ ունեցող տեղի երեք թեմերով ու թեմական կառոյցներով: Ընդ որում Ատրպատականի հայոց թեմի հոգեւոր-վարչական սահմանների ներքոյ են գտնուում Հայ Առաքելական Եկեղեցու այնպիսի նուիրական սրբավայրեր, ինչպիսիք են՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգութեան ցանկում գրանցուած Ս. Թադէի վանքը (Մակու, Արեւմտեան Ատրպատական նահանգ), Ս. Ստե-

³⁶ <https://news.am/arm/news/24342.html> , մատչում՝ 20 Մայիս 2022:

³⁷ «Նոր Զուղան հաւատարիմ պէտք է գտնուի իր անցեալին, որպէսզի վերանորոգ հաւատքով կերտէ իր ապագան», Հասկ, Հոկտեմբեր, 2014, էջ 957-59:

փանոս Նախավկայի վանքը (Ջուլֆա-Դարաշամբ, Արեւելեան Ատրպատական նահանգ), Ծործորի Ս. Մարիամ Աստուածածին մատուռը (Մակու, Արեւմտեան Ատրպատական նահանգ)³⁸, ինչպէս նաեւ դեռեւս 1606ին հիմնուած Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքը³⁹, որը ոչ միայն Նոր Ջուղայի ու իրանահայութեան, այլեւ համայն հայ ժողովրդի պարծանքն է:

Կարեւոր է նկատի ունենալ, որ իսլամական միջավայրում հայօճախն իր դիմագիծը պահպանում է կրթօջախների միջոցով, որը ե՛լ դիպրին է, ե՛լ դժուարին: Դիպրին է, քանի որ իսլամական միջավայրում գրեթէ բացառուած են խառնամուսուլթիւնները, իսկ դժուար է, քանի որ հայօճախի կառոյցներն իրենք են հոգում ազգային մշակոյթը եւ ինքնութիւնը վառ պահելու համար նախատեսուած կարիքները: Թեհրանում ուսուցման պետական ծրագրով գործում է 16 դպրոց եւ 4 մանկապարտէզ⁴⁰, որոնք համարում են հայօճախի սեփականութիւնը:

Յիշարժան է 2006 Մայիսի 9ին տեղի ունեցած պատգամատրական ժողովի նիստում Սեպուհ արք. Սարգսեանի ելոյթը: Սրբազանը բարձրաձայնում է արտագաղթի մասին թուերով՝ միաժամանակ քննադատելով այն մարդկանց, ովքեր խուճապ էին ստեղծում հայօճախում: Ըստ այդ մարդկանց՝ հայօճախից հեռացել են 18 հազար, իսկ ոմանք էլ պնդում են՝ 23 հազար մարդ: Մինչդեռ դրանք, ըստ Սեպուհ սրբազանի, չափազանցուած տուեալներ էին, քանի որ մինչեւ 2006 Մայիս ամիսը 2400 կամ 2450 հոգի էին ստացել վկայագիր եւ գրել դիմում: Աւելին, 2005 Հոկտեմբերի 1ից մինչեւ 2006 Մայիսի 9ը՝ 2780 հոգի վերցրել էր իր վկայագիրը: Սակայն նրանցից ոչ-բոլորն են գնացել տարբեր պատճառներով, քանի որ համեմատելով հայօճախի թիւը հայկական դպրոցներում սովորող 5650 աշակերտների հետ, ինչպէս նաեւ պարսկական դպրոցներում սովորող եւս շուրջ 1000 աշակերտների թւի հետ, ստացում է, որ հայօճախն ունէր 6500 կամ 6800 աշակերտ: Հաշուի առնելով, որ հայօճախի թւի 100ից 10ը աշակերտութիւնն է, նշանակում է հայօճախի թիւը կազմել է 60-70 հազար: Ըստ սրբազանի՝ 60 կամ 70 հազար կամ 55 հազար հայօճախի կեանքում 2000ը կամ 3000ը մեծ թիւ չէ, մտահոգիչ թիւ է, բայց խուճապի մատնուելու կարիք չկայ⁴¹:

38

<https://iran.mfa.am/hy/%D5%A1%D5%BF%D6%80%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%A9%D5%A5%D5%B4/> մատչում՝ 12 Դեկտեմբեր 2023:

39 *Քրիստոնէայ Հայաստան հանրագիտարան*, «Հայկական հանրագիտարան» հրատ., Երեւան, 2002, էջ 135-36, 386-87, 805, 917-18:

40 <http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003> մատչում՝ 02 Հոկտեմբեր 2023:

41 «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 15 Մայիս 2006:

Յաջորդ տարում՝ 2007 Մայիսի 10-16ին, տեղի է ունեցել Թեհրանի հայոց թեմի պատգամատրական ժողովի տարեկան նստաշրջանը, որի ընթացքում եւս քննարկուել է արտագաղթի խնդիրը: Սեպուհ արք. Սարգսեանն իր խօսքում ընդգծել է.

Գաղթը մեր ժողովրդի կեանքի անբաժանելի մի երեսոյթ է եղել պատմութեան ընթացքում, սակայն այս օրերում այն, ինչ կատարում է այստեղ, դժուար բացատրելի երեսոյթ է⁴²:

Մտահոգիչ է դարձել համայնքում առկայ այն հարցադրումը, թէ երկիրը թողնելու համար կարծես պատճառաբանութեան կարիք չկայ, ակելին՝ նա, ով չի պատրաստում գաղթել, պիտի պատասխանի, թէ ինչո՞ւ է մնում: Ստացում է՝ գնալը բնական է, իսկ մնալը՝ անբնական, բացատրութեան կարօտ:

Վերջին տարիներին Իրանի հայ կաթողիկէ համայնքի առանձին ներկայացուցիչներ մշտական տեղափոխուել են Հայաստան: Սակայն հայ կաթողիկէների շրջանում եւս առկայ է արտագաղթ, յատկապէս ԱՄՆ, Կանադա, Աստրալիա եւն.: Ինչ վերաբերում է Իրանում Հայ Աւետարանական եկեղեցուն, ապա նրա հետետրոյնների թիւը 300-350 հոգի է⁴³:

Աղիսակ 1. Թեհրանի հայոց թեմի քաղաքացիական գրանցման տուեալները 1995-2006⁴⁴ որպէս տեղաշարժերի հետեանք

	1995	-96	-97	-98	-99	2000	-01	-02	-03	-04	-05	-06
Մկրտթն.	456	476	565	512	562	1067	337	297	282	278	302	410
Պսակ	379	355	297	331	393	350	266	235	261	261	250	310
Ապիրզն.	18	28	23	24	31	27	27	31	41	28	33	40
Մահ	424	499	491	461	495	435	529	480	522	482	545	500

Ըստ վերոնշեալ աղիսակի՝ եթէ 1995ին մկրտուել է 456, ապա 2000ին՝ 1067, որը եղել է ամենամեծ ցուցանիշն առ այսօր: Մինչդեռ դրան յաջորդած տարիներին նուազել է՝ տատանուելով 337-410ի սահմաններում: 12 տարուայ ընթացքում՝ 1995-2006 թթ., Թեհրանի հայոց թեմում մկրտուել է 5544 հոգի: Այդ թիւը բաժանելով նշուած տարիների մէջ ստացում է համայնքում տարեկան միջինը կազմել է 462 ծնունդ:

⁴² http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2376 , մատչում՝ 29 Մայիս 2022:

⁴³ Բայբուրդեան, *Իրանի հայ համայնքը*, էջ 65, 186:

⁴⁴ «Հաղորդագրութիւն դիւան ազգային առաջնորդարանի Թեհրանի հայոց թեմի», *Լոյս*, Օգոստոս, 123:2006, էջ 4: Ամենամեայ հաղորդագրութիւնները հրատարակուել են նշուած օրաթերթի տարբեր տարիների նշուած համարներում նոյն վերնագրով), *Այլք օրաթերթ*, 30 Յունուար 2002, 22 Յունուար 2003, 08 Փետրուար 2004, 23 Յունուար 2005, 01 Փետրուար 2007:

Իրավիճակը մտահոգիչ է նաեւ պսակի հարցում: Այսպէս, նշուած տարիներին պսակադրուել են ընդամէնը 3688 զոյգ, որից 351ը ամուսնալուծուել է: Ընդ որում, եթէ 1995ի դրութեամբ այն կազմել է 18, ապա 2006ին աւելի քան կրկնապատկուել է՝ 40 պարագայ: Ակնյայտ է, որ այս դէպքում եւս հայօճախում աւելանում են ներքին եւ արտաքին որոշ տեղաշարժեր: Ինչ վերաբերում է մահացութեան տուեալներին, ապա եթէ 1990ականներին այն տատանուել է 424-435ի միջեւ, բացի 1999ից, ապա 2001ից այն հատել է 500ի սահմանը, որը կարծես հաւաստում է հայօճախի ծերացման մասին:

Գ. ԻՐԱՆԻ ՀԱՅՕՃԱԽԻ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ինչ վերաբերում է վերջին տարիներին հայօճախի խնդիրներին, ապա 2018 Նոյեմբերի 24ին Թեհրանում լոյս տեսնող *Այլք* ազգային, հասարակական եւ քաղաքական օրաթերթի գլխաւոր խմբագիր Դերենիկ Մելիքեանի գնահատմամբ՝ հայօճախն արդէն ընտելացել է ներկայ պայմաններին եւ շարունակում է իր բնականոն կեանքը⁴⁵: Փաստօրէն, ներկայումս հայօճախում խոշոր տեղաշարժերը դադարել են, իսկ մնացածներն էլ փորձում են յարմարուել նոր ու դժուարին իրողութիւններին: Յիրաւի, նօսրացած թուով հայօճախում այլեւս խնդրայարոյց են բազմաթիւ կառոյցներ, այդ թում՝ առաջնահերթ դպրոցներ պահելը, քանի որ դա ենթադրում է ֆինանսական զգալի միջոցներ, որը հայօճախի կառոյցները դժուարութեամբ են գոյացնում: Ստացում է, որ փոքրաթիւ աշակերտութիւն ունեցող դպրոցների համար այսօր վճարում են նաեւ թափուր մնացած տեղերի համար: Ահա թէ ինչու օրակարգային խնդիր է դարձել տեսականում դպրոցների միաւորումը, որը գործնականում կարող է նոր դժուարութիւններ յառաջացնել աշակերտների ծնողների համար դպրոցների հեռաւորութեան պատճառով:

Միւս կողմից ինչ որ իմաստով հայօճախը կորցրել է նախկինում ունեցած կշիռը տեղաշարժերի հետեանքով: Ուստի, անհրաժեշտ է հայօճախի գործիչներից առաւել ջանքեր ներդնել հայութեան ներուժը համախմբելու համար: Իդէպ, նշենք, որ այս խնդիրը հիմնականում վերաբերում է թեհրանահայութեանը, քանի որ Սպահանի եւ Ատրպատականի պարագայում խնդիրն անհամեմատ աւելի մեղմ է, որոնք միասին լաւագոյն դէպքում կարող են կազմել ամբողջ իրանահայութեան շուրջ 8-10%ը:

Այսպիսով, տեղաշարժերով պայմանաւորուած ժողովրդագրական խնդիրը դարձել է լուրջ մարտահրաւէր Իրանի հայօճախի համար: Այդ պատճառով ոչ միայն թուային ցուցանիշներով է նուազել հայօճախը, այլեւ

⁴⁵ <https://aparaj.am/%d5%ab%d6%80%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%b5%d5%b6%d6%84%d5%ab%d6%81-%d5%b6%d5%b8%d6%80-%d5%a1%d6%80%d5%bf%d5%a1%d5%a3%d5%a1%d5%b2%d5%a9-%d5%b9%d5%ab-%d5%bd%d5%ba/>, մատչում՝ 23 Դեկտեմբեր 2023:

տարբեր մասնագետներով, իսկ հայօճախի բազմաթիւ այլ կառոյցներ պահելը՝ առաջնահերթ կրթօջախները, միութիւնները, դարձել են լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնումներով: Ահա այստեղ է, որ առաջնահերթ են դառնում դպրոցները միատրելու խնդիրը, որ հայօճախի կառոյցները կարողանան դրանք ֆինանսատրել, հակառակ դէպքում ստիպուած են լինում մեր օրերում ընդհուպ 10 հոգի չկազմող դասարանների պատճառով պահել դպրոցներ: Ակնյայտ է, որ այդ դէպքում բազմապատկուում են ծախսերը, մինչդեռ սովորողները սակաւաթիւ են:

Ինչ վերաբերում է երոպական կամ արեւմտեան այլ երկրներ արտագաղթած բազմաթիւ իրանահայերին, ապա տարիների ընթացքում նրանք կարողանում են քիչ թէ շատ վերակազմակերպուել, որոշ դէպքերում շարունակելով զբաղուել համայնքային կեանքով՝ անդամակցելով տուեալ երկրում արդէն իսկ առկայ հայկական կառոյցներին, հիմնականում թեմական-եկեղեցական, իսկ դրանց բացակայութեան դէպքում իրենք են նախաձեռնում եւ ստեղծում այդպիսիք: Այլ խօսքով՝ օտար միջավայրում շարունակուում են պահպանել իրենց ինքնութիւնը:

Խնդրոյ առարկայի շրջանակներում արժէ նշել, որ հայութեան թուային տարբերութիւնը տարբեր գործիչների մօտ պայմանաւորուած է նաեւ այդ երկրի խորհրդարանում երկու պատգամատու ունենալու հանգամանքով: Դեռեւս 1908 Յունուարին Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարեանցը պաշտօնական գրութեամբ դիմել է մեջլիսի նախագահին՝ թոյլատրելու պարսկահայ ժողովրդին այնտեղ ունենալու երկու պատգամատու: Նոյն թուականի Մայիսի կէսերից հարցն սկսել էր շրջանառուել մեջլիսում⁴⁶: Բայբուրդեանը գրում է, որ Իրանի խորհրդարանում իր ներկայացուցիչները ունենալու իրաւունքը իրանահայերը ստացել են 1905-11ի իրանական յեղափոխութեան ժամանակ⁴⁷:

Փաստօրէն, աւելի քան մէկ դար իրանական խորհրդարանում հայութեան ներկայութեան քաղաքական մշակոյթը որոշակիօրէն պայմանաւորուած է եղել նաեւ այդ երկրում հայութեան մեծ թուով լինելու փաստով եւ անհոյոթի ուժը հիմքեր է տալիս նրանց Իրանի խորհրդարանում ունենալ երկու պատգամատու: Նկատենք, որ Իրանի կրօնական փոքրամասնութիւնները՝ հայերը, ասորիները, հրեաները եւ զրադաշտականները միասին վերցրած զբաղեցնում են 5 տեղ, որից երկուսը պատկանում է հայերին:

Տարածաշրջանային նշուած գործընթացներում է իր գործունէութիւնը ծաւալում Իրանի հայօճախը: Դեռեւս 2000ի սկզբին վերահրատարակու-

⁴⁶ Հ. Սիմոնեան, *1905-1912 թթ. պարսկական յեղափոխութիւնը եւ հայերը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017, էջ 167:

⁴⁷ Վ. Բայբուրդեան, *Իրանն այսօր (տեղեկագրու)*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1999, էջ 309:

թեան առթիւ *Արաքս* գրական, մշակութային, հասարակական շաբաթաթերթը իր «Մեր խօսքը» վերնագրով խմբագրական բաժնում գրում է.

Մեր աչքերի առջեւ նստրանում ու մարում է իրանահայ պատմական համայնքը: Այն ենթարկուած է անշարժութեան եւ անգործունէութեան: Ամէնուրեք անտարբերութիւն է, ընկրկում ու նահանջ՝ «նահանջ առանց երգի»: Իրանահայութիւնը չի գտնում իր տեղն ու դերը համահայկական կեանքում...⁴⁸:

Ուշագրաւ է, որ համեմատութեան մէջ է դրում իրանահայութեան դերը համահայկական օրակարգում, մինչդէռ այն նախ եւ առաջ կապուած է իրանական հանրային կեանքի առանձնայատկութիւնների հետ:

Դ. ԻՐԱՆԱԿԱՆ ՌԻԱԼԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԹԱՆԻԶ ԳՈՐԾՕՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻՆ

Յայտնի է, որ իւրաքանչիւր երկրի կենսամակարդակը պայմանաւորուած է նաեւ տուեալ երկրի ազգային դրամի արժէքով եւ տնտեսութեամբ:

Այդ տեսակվտից յաջորդ կարեւոր հանգամանքն այն է, որ Իրանում եօթամսուայ ընթացքում տեղի է ունեցել 70% ազգային դրամի արժեզրկում: Եթէ 2019 Դեկտեմբեր ամսին ԱՄՆ 1 դոլարը համարածք էր 125.000 իրանական դիալի, ապա 2020 Յուլիսի սկզբին այն անցնում է աւելի քան 220.000 դիալը⁴⁹: Մինչդէռ 7 տարուայ ընթացքում (2013-20), արժեզրկումը կազմել է շուրջ 700%, այսինքն՝ շուրջ 33.000 դիալից հասել է վերոնշեալ 220.000 դիալին: Աւելի ակնառու է 10 տարուայ ընթացքի արժեզրկումը. դիալը դոլարի նկատմամբ արժեզրկուել է 2000%ով՝ 220.000 դիալի դիմաց կազմելով 11.000:

Ահա թէ ինչու Իրանի խորհրդարանը 2020 Մայիսի 4ի նիստում հասնութեան է արժանացրել պետութեան դրամավարկային ու բանկային քաղաքականութեան մասին օրէնքում փոփոխութիւններ կատարելու վերաբերեալ նախագիծը: Իրանի Իսլամական հանրապետութիւնը դիալից կ'անցնի թումանին (1 թումանի արժէքը կը համապատասխանի 10.000 դիալի)⁵⁰: Այդպիսով իրանական դրամական նոր միաւորը՝ «թուման»ը՝ 3-4 գրօներով կը հեշտացնի ընդամէնը դրամաշրջանառութեան աստղաբաշխական հաշուարկները, որը բնաւ էլ չի խոստանում երկրի ընկերատնտեսական վիճակի բարելաւում: Ակնյայտ է, որ ֆինանսական ճգնաժամը ազդելու է հայօճախի հասարակական եւ ազգային կեանքի վրայ:

⁴⁸ «Մեր խօսքը», *Արաքս շաբաթաթերթ*, 1(84):2000, էջ 3:

⁴⁹ Հ. Խալոյեան, «Մինչեւ երբ կը դիմանան Իրանն ու իրանահայութիւնը», *Այլք*, 08 Յուլիս 2020, էջ 3:

⁵⁰ Iran changes national currency from 'rial' to 'toman', May 4, 2020, <https://en.irna.ir/news/83774988/Iran-changes-national-currency-from-rial-to-toman>

Ըստ էության հայութիւնն այս երկրում ապրում է արտակարգ իրավիճակներով պայմանաւորուած գործընթացների ազդեցութեան ներքոյ, եթէ հաշուի առնենք, որ դեռեւս մօտ ապագայում փոքր է հաւանականութիւնը նշուած պետութիւնների միջեւ բնականոն յարաբերութիւններ վերանելու ուղղութեամբ: Ուստի, հայօճախի խնդիրները սերտօրէն առնչուում են նաեւ ՀՀ անվտանգային միջավայրին: Աւելին, հաշուի առնելով Իրանի զբաղեցրած ծանրակշիռ տեղն ու դերը Սիրիայի եւ Իրաքի հասարակական-քաղաքական կեանքում, ուրուագծում է նրա անզիջում պայքարը տարածաշրջանում:

2000ի սկզբին *Արաքս* շաբաթաթերթն արտագաղթի հարցի վերաբերեալ գրում է.

Վերջին տարիներին գարնան ձեան նման հալում է համայնքը: Շատ հայ ընտանիքներ կամ միայնակ երիտասարդներ բռնում են գաղթի ճանապարհը: Տարիների տքնաջան աշխատանքով կուտակած ունեցուածքը թափում էք եւ ընկնում անյայտ կեանքի յորձանուտը, հեշտութեամբ հաատում մարդկանց, որոնք իրենց գումատը պատմութիւններով խելքահան են անում ձեզ եւ մի կլորիկ գումարով յանձն առնում ձեզ հասցնել Թուրքիա, այնտեղից Եւրոպա⁵¹:

Յօդուածագիրն արդարացիօրէն կասկածով է վերաբերում այդ հարցում Թուրքիայի շահագրգռութիւնը եւ նրա տարածքով գաղթի կազմակերպումը:

21րդ դարի սկզբին իրանահայութեան տեղաշարժերի եւ դրանց առանձնայատկութիւնների կարեւոր բաղադրիչ են կազմում նաեւ նրա ներկայացուածութիւնը համահայկական նշանակութեան իրադարձութիւններին: Այսպէս, 2002 Մայիսի 27ին տեղի է ունեցել Հայաստան-Սփիւռք երկրորդ խորհրդաժողովը, որին Սփիւռքից մասնակցել է 1500 հոգի: 48 երկրի սփիւռքահայ պատուիրակութիւններից ամենամեծ խումբը պատկանել է ռուսահայերին՝ 300, իսկ երկրորդ տեղը զբաղեցրել են իրանահայերը՝ 163 հոգի⁵²:

2004ին թեիրանահայութեան հասարակական ու քաղաքի թաղային դրուածքի պայմանները նկատի ունենալով՝ թեմական խորհուրդը անհրաժեշտ է համարել հայօճախի բնակչութեան վիճակագրական տուեալները հաւաքագրել եւ ստոյգ տեղեկութիւններ ունենալ քաղաքամասերում բնակող ընտանիքների թուային վիճակի մասին: Այդ նպատակով թեմական խորհուրդը կեանքի է կոչել համայնքային ուսումնասիրական յանձնախումբ⁵³:

⁵¹ Գոհար Խաչատրեան, «Ուր էք գնում, մարդ աստժոյ», *Արաքս շաբաթաթերթ*, 1(84):2000, էջ 9:

⁵² «Հայաստան-Սփիւռք 2-րդ խորհրդաժողովի լուսանցքում», *Արաքս շաբաթաթերթ*, 28(III):2002, էջ 3-4:

⁵³ Հաղորդագրութիւն ԹՀ թեմական խորհրդի գործունէութեան 10 Փետրուարի առ 30 մայիսի 2004 թ., *Այլք օրաթերթ*, 07 Յուլիս 2004:

2004 Հոկտեմբերի 4ին Թեհրանի հայոց թեմի (ԹՀԹ) 13րդ պատգամաւորական ժողովի կենտրոնական յանձնախումբն իր հերթական նիստերի ընթացքում քննարկել է քաղաքամասերում կատարուած բնակչութեան թուալին վիճակագրական տուեալները: Փաստօրէն, ԹՀԹ կանոնադրութեան համաձայն այն նպատակ է ունեցել ճշտելու ընտրուող պատգամաւորների թիւը, որն էլ յանձնուել է թեմական խորհրդին եւ ստացել հաստատում: Ըստ այդմ Թեհրանի հայաբնակ քաղաքամասերի ընտրուելիք պատգամաւորների թիւը մնացել է նոյնը, բացառութեամբ Ձէյթուն քաղաքամասի, որը բնակչութեան աճ արձանագրելու հետեանքով՝ պատգամաւորների թիւը ճից դարձել է 9, մինչդեռ Մաշհադի հայ բնակչութեան թուի խիստ նուազման հետեանքով՝ հնարաւոր չի եղել պատգամաւոր ունենալ այդ շրջանից: Ինչ վերաբերում է Քերմանշահի եւ Համադանի շրջաններին, ապա որոշուել է դրանք միասնաբար ներկայացնեն 1 պատգամաւոր՝ 13րդ շրջանի պատգամաւորական ժողովի համար⁵⁴:

Ըստ 2004ի պատգամաւորական ժողովի Կենտրոնական ընտրական յանձնաժողովի (ԿԸՅ) ատենադպիր Սայեաթ Բաբումեանի՝ ԹՀԹ թեմական խորհրդի կողմից ստեղծուել է կենտրոնական ընտրական յանձնախումբ, որը Թեհրանի քարտէզի հիման վրայ քաղաքամասը բաժանել է 5 մասի՝ Անգալիի, Ռաշտի, Սարիի, Գորգանի, Մաշհադի եւ Քերմանշահի եկեղեցադպրոցական հոգաբարձութիւն: Դրանցից մէկական ներկայացուցիչ է հրաւիրում, որ այդ քաղաքների համայնքները եւս ներկայացուած լինեն: Ըստ համայնքի վերանայուած կանոնադրութեան՝ իւրաքանչիւր 2000 հոգու դիմաց 1 պատգամաւորի ընտրութեան իրաւունք գոյութիւն ունի⁵⁵: Այսպիսով, ստացում է, որ վերոնշեալ քաղաքների ենթօճախները միասին կազմել են 2000 հայ:

Իրանի այլ բնակավայրերում հայութեան թուի վերաբերեալ ժամանակ առ ժամանակ առկայ են վիճակագրական բնոյթի որոշ տուեալներ, որոնք հրապարակուել են առաջնահերթ ոչ թէ այդ խնդրին անդրադառնալու նպատակով, այլ հասարակական մի շարք առօրէական նշանակութեան հարցեր դիպուածաբար քննարկելիս: Այդ մասին են վկայում 2005ի դրութեամբ Ուրմիոյ Ռահուա գիւղում հայ եւ ասորի⁵⁶, իսկ Շիրազում հայ (շուրջ 30 ընտանիք) ենթօճախներին անդրադառնալը⁵⁷:

Իրանահայութեան ժողովրդագրական իրավիճակի, ինչպէս նաեւ այդ հանգամանքով պայմանաւորուած հայկական մամուլի ընթերցանութեան հետաքրքրութեան վերաբերեալ *Արաքս* թերթի գլխաւոր խմբագիր Մովսէս Քեշիշեանը հաստատում է, որ 2002ի դրութեամբ 3000 տպաքանա-

⁵⁴ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 04 Հոկտեմբեր 2004:

⁵⁵ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 05 Հոկտեմբեր 2004:

⁵⁶ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 20 Յուլիս 2005:

⁵⁷ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 10 Սեպտեմբեր 2005:

կից մօտ 2500ը բաժանուել է երկրի ներսում, իսկ այն մասը, որ դուրս է ուղարկուել դրանից քիչ վերադարձ է ունեցել, որպէս դրամական գումար, թէեւ բաժանորդները, որ ունեցել է դրանցից ստացել է գումարներ, բայց համեմատած իր ծախսերին, որ ուղարկուել է, քիչ է եղել: Մէկ թերթի համար աւելի շատ փոստային ծախս է կատարուել, քան եղել է թերթի գինը⁵⁸:

Յիշարժան է 2006 Մայիսի 9ին տեղի ունեցած պատգամատրական ժողովի նիստում Սեպուհ արք. Սարգսեանի ելոյթը: Սրբազանը բարձրաձայնում է արտագաղթի մասին թուերով՝ միաժամանակ քննադատելով այն մարդկանց, ովքեր խուճապ էին ստեղծում հայօճախում: Նշելի է, որ սրբազանին Սասուն թաղամասում հարց ուղղած շարքային մարդկանցից ոմանք յայտնել են, թէ հայօճախից հեռացել են 18 հազար, իսկ ոմանք էլ՝ 23 հազար մարդ եւ մինչդեռ դրանք, ըստ սրբազանի չափազանցուած տուեալներ էին: Հարկ է նշել, որ Սեպուհ սրբազանին համայնքի արտահոսքի հարցով հետաքրքրուել էր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը հանդիպման ընթացքում՝ նկատելով, որ քչերն էին գալիս ՀՀ, իսկ մեծ մասը գնում արտասահման⁵⁹: Այդ օրերին (15 Մայիս 2006), *Արաքս* թերթը տազնապով գրել է «Քահանան փախաւ» վերնագրով մի յօդուած՝ չնշելով, որ փախչողից բացի կային մնացող քահանաներ: Փաստօրէն, տպագիր մամուլի որոշ օրգաններ եւս քննադատաբար են մօտեցել ստեղծուած իրավիճակին, իսկ ինչ որ տեղ էլ ակամայից խուճապային տրամադրութիւններ են տարածել հայօճախում:

Թերեւս նաեւ ի հակադրութիւն վերոնշեալին՝ 2006ին Բէյրութի *Ազդակ* օրաթերթին տուած հարցազրոյցում Սեպուհ արք. Սարգսեանն ընդգծում է, որ Թեհրանում գործում է 8 հայկական եկեղեցի, եւս երկու եկեղեցու վերանորոգման նպատակով պետութիւնը յատկացրել էր 65 հազար դոլար: Հայօճախում գործում էին 28 միութիւններ, մշակութային կազմակերպութիւններ, թատերական, պարային, երաժշտական միատրներ, տեղի էին ունենում դասախօսութիւններ, ուխտագնացութիւններ եւ տարաբնոյթ հանդիսութիւններ: Սրբազանի տուեալներով՝ մէկ տարուայ կտրուածքով արտագաղթող իրանահայերին տրուել է ընդամէնը 2930 վկայագիր, եւ նրանց մի մասը չի մեկնել: Միայն Թեհրանում հաշուում էր 5600 աշակերտ, եւս 1500 աշակերտ յաճախում էին պետական կամ մասնաւոր դպրոցներ: Այդպիսով դա նշանակում էր, որ եթէ աշակերտութեան թիւը սա է, եւ եթէ այն կազմում է համայնքի 100 հոգուց տասը, ուրեմն՝ համայնքի թիւը հասնում էր գոնէ 70 հազարի: Ըստ սրբազանի՝ 70.000ի համար 2500-3000ը թէեւ թիւ է, սակայն այդքան էլ մտահոգիչ չէ:

⁵⁸ «Հայկական ռադիօժամի հարցազրոյցը «Արաքս» ամսագրի գլխատր խմբագրի հետ», *Արաքս ամսագիր*, 28(111):2002, էջ 8:

⁵⁹ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 15 Մայիս 2006:

Բարեբախտութիւնն այն է, որ գաղթողներից շատերը գնում էին ՀՀ եւ հաստատում Երեւանում: Այս մէկը դրական ու քաջալերական երեւոյթ է եւ մենք քաջալերած ենք նման քայլեր⁶⁰:

Ինչ վերաբերում է այլ երկրներին, ապա իրանահայերը գաղթում էին ԱՄՆ՝ Աստրիայի վրայով:

Հարկ է նշել, որ միաժամանակ արտագաղթի ահագնացող սպառնալիքից անհանգստացած Սեպուհ արք. Սարգսեանը մի շարք այցելութիւններ է կատարել Թեհրանի հայոց թեմի տարբեր համայնքներ: 2006 Յուլիսի 21ին Սեպուհ արքայանքանը այցելել է Քերմանշահ քաղաք, որի ենթօճախից մնացել էր 6, իսկ Համադանում՝ 4 հայ ընտանիք⁶¹: Համադանի եկեղեցին գտնուել է տեղի մշակութային ժառանգութեան հիմնարկի խնամքի ներքոյ, իսկ հայ անտարանական դպրոցի շէնքը վերանորոգուել է նշուած հիմնարկի կողմից: Փաստօրէն, զգալի թուով նուազումներ են արձանագրուել հայկական ենթօճախներում:

2006 Օգոստոսի 10ին Սեպուհ արք. Սարգսեանն այցելելով Ռաշտի ենթօճախ, մեծապէս գնահատել է տեղի պատասխանատուներին, որոնք նախանձախնդիր հոգածութեամբ պահում են եկեղեցին եւ ազգապատկան կալուածները: Նշելով, որ ենթօճախի արժէքը ոչ թէ իր թոփ, այլ իր որակի, կատարած նուաճումների մէջ է: Անզալիում էլ տեղի հայոց եկեղեցադպրոցական հոգաբարձութեան նախաձեռնութեամբ յաջորդ օրը տեղի է ունեցել հայոց գրերի գիտի 1600ամեակին նուիրուած յուշակոթողի բացումը⁶²: Իրապէս, ինչպէս ժամանակի մամուլի հրապարակումներից ու լուսանկարներից է պարզ դառնում, այս երկու ենթօճախները չնայած թուային համեստ տուեալներին ապրում էին ազգային աշխուժ կեանքով: Այդուհանդերձ, կարծում ենք, որ նօսրացած ու ցրուած ենթօճախներն ըստ էութեան դարձել էին «համայնքի պատասխանատուներից» կազմուած փոքրաթիւ ու խորհրդանշական հանրոյթ:

Հայ մշակութային «Սիփան» միութեան վարչութեան անդամ Ժողէֆ Մեհրաբեանի խօսքով՝

Արդէն հերթական գաղթը իր 2րդ տարին է ուզում բոլորել: Նոր Ջուղայի թեմը միայն այս վերջերս անդրադարձաւ գաղթին. երկարաշունչ, բայց տեղին: Ճիշտ այդ կոչի աջում՝ «Դիտանկին» սինակում առաջարկուեց, որ միւս թեմերը եւս հանդէս գան նման կոչով, սակայն մինչ օրս՝ ոչ մի կոչ: ... Գաղթի հիմնական պատճառներից մէկը տնտեսական գործօնն է, սակայն չենք խուսափել մեր գաղութի կեանքի բոլոր սակագները մկրտութիւնից մինչեւ մահ թանկացնել⁶³:

⁶⁰ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 09 Յուլիս 2006:

⁶¹ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 31 Յուլիս 2006:

⁶² «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 21 Օգոստոս 2006:

⁶³ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 01 Յուլիս 2007:

2020 Փետրուարից հի՛շ խորհրդարանի 11րդ գումարման պատգամատր, առետրի վարչագիտութեան մասնագէտ Արա Շահվերդեանը կարծում է, որ արտագաղթողների շուրջ 80%ը ծննդավայրից հեռանում է այն պատճառաբանութեամբ, որ իր հարազատներն այստեղ չեն.

Երբ խօսում ենք արտագաղթողների հետ, ասում են, թէ հիմնական պատճառներից է տնտեսական վիճակը, սակայն եթէ տոկոսային առումով հարցը քննարկելու լինենք, կը տեսնենք, թէ արտագաղթողների խոշոր մասը այստեղ ապահովուած է բնակարանով եւ սեփական գործով կամ ունի լաւ աշխատավարձ եւ ընտանիքը գոնէ նիւթական դժարութիւն չունի: Ես հակառակը կ'ասե՛ի՝ մնում են նրանք, ովքեր տնտեսապէս շատ էլ բարուօք վիճակում չեն⁶⁴:

Միւս կողմից նշելի է, որ արտագաղթողները փաստօրէն անուղղակիօրէն պատճառ են դառնում, որ նուազի հայօճախի իրաւունքների պաշտպանութեան հարցը եւ հայօճախը կանգնում է դժարութիւնների դիմաց:

Ըստ ԹՀԹ ազգային առաջնորդարանի քարտուղարութեան գրասենեակի պաշտօնեայ ժամիկ Խեչոյեանի, արտագաղթի պատճառներն են.-

1. Նիւթական, տնտեսական, բնակարանի խնդիրը եւ անապահով վիճակը,

2. Հարազատներից հեռու լինելը եւ իրենց միայնակ զգալը,

3. Կայ նաեւ մի խաւ, որ իրապէս աննպատակ է եւ մէկը միւսին հետեւելով դիմում է արտագաղթի⁶⁵:

Նրա մէկ այլ խօսքով՝ արտագաղթողները խոշոր գումարներ են ծախսում տարբեր բնագաւառներում, մինչդեռ երբ հերթը հասնում է ազգային կառոյցներին, խնայում են: Ստացում է, որ յաճախ բողոքում են նրանք, ովքեր երբեւէ նախկինում չեն աջակցել ազգային կառոյցներին: Փաստացի արտագաղթողները նեղ դրութեան մէջ են դնում մնացողներին, որոնք լինելով կշիռ չունեցող համայնք՝ դժարութեամբ են լուծում այն հարցերը, որոնք պահանջում են վարչական պաշտօնեաների միջամտութիւն, քանի որ վերջիններս այլեւս հայօճախի խնդիրները լուծելու կամ ընդառաջելու համար կարծում են, որ դրանց շահառուները խիստ փոքրաթիւ որեւէ ընկերային խումբ են եւ ոչ թէ նախկինի նման աւելի քան 100.000 հայօճախ:

ԹՀԹ ազգային առաջնորդարանի դիւանապետ Սերոժ Օհանեանի համոզիչ վերլուծութեամբ՝ արտագաղթը ունի տարբեր պատճառներ, որոնք կարելի է այսպէս բնութագրել.- տնտեսական, հասարակական դժարութիւններ եւ ապագայի նկատմամբ լաւ հեռանկարներ չունենալը, ինչպէս նաեւ արտագաղթի համար հեշտ հնարաւորութիւնները, որոշ ընտանիքների՝ միմեանց հետեւելը: Միւս կողմից, որ առաւել զգայուն հասարակական հարցերն են, ինչպէս, օրինակ՝ եթէ մի հայ ուսանողի ինչ-որ

⁶⁴ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 04 Յուլիս 2007:

⁶⁵ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 11 Յուլիս 2007:

համալսարանում ուսումնասիրության թեմա են ներկայացնում, ասենք՝ քրիստոնէութիւնը, առաջին հայեացքով դա լաւ է հնչում, բայց դասախօսութիւնը ներկայացուելուց յետոյ դասախօսը ինչ-որ հակասական եւ վիրաւորական արտայայտութիւններ է թոյլ տալիս քրիստոնէութեան հասցէին, որը վիրաւորում է ուսանողին, դա փոխանցում է ընտանիքին եւ հարցեր ստեղծում: Մէկ այլ հանրային խնդրի օրինակ, ըստ գործչի, կարող է լինել այն, որ յաճախ հայ երիտասարդները, որոնք ցանկանում են միմեանց հետ նոյնիսկ ինքնաշարժով դուրս գնալ, ինչ-որ դժուարութիւնների են հանդիպում, որը նեղացնում է նրանց, իսկ որոշ պատասխանատու անձինք անյարիր արտայայտութիւններով վիրաւորում են հայկական ազգային եւ կրօնական ինքնասիրութիւնը:

Իմ կարծիքով արտագաղթին նպաստող կառոյցը հրէական ու թուրքական ինչ-որ առեւտուր է եւ մեր դրամով, որը 2500 դոլար է մեզ տանում են դէպի անորոշութիւն: Ոմանք ազգային իշխանութիւններից պահանջում են բնակարաններ կառուցել եւ տրամադրել երիտասարդ զոյգերին. համաձայն եմ, որ անենք այդ գործը, բայց պիտի իրատեսութեւն նայենք խնդրին. տարեկան ունենում ենք 300-350 զոյգ ամուսնացողներ, ազգային իշխանութիւնը, եթէ շատ հնարաւորութիւն ունենայ կարող է երկու տարուայ ընթացքում ինչ-որ 20 յարկաբաժիններ դասաւորել, մնացեալ զոյգերին ի՞նչ կարելի է անել: Բայց տեսնում ենք, որ Նոր Ջուլայի հայոց թեմում տարիներ է, ինչ կատարում է բնակարանաշինութիւն եւ դրանք յանձնում են երիտասարդ զոյգերին, բայց զոյգերը վաճառելով բնակարանները՝ հեռանում են⁶⁶:

Փաստօրէն, արտագաղթի տարիներին առկայ են եղել ընկերահոգեբանական լուրջ խնդիրներ եւ:

Յաջորդ խնդիրն, ըստ Օհանեանի, այն էր, որ դժգոհութիւններ կային եկեղեցում ամուսնութեան սակագների շատ բարձր լինելու վերաբերեալ: Մինչդեռ նրա խօսքով՝

Խնդիր չէ. եթէ իրապէս մէկի համար դժուար է, կարելի է նոյնիսկ գումար չգածել, բայց յաճախ զոյգերը միլիոններ են ծախսում հարսանեաց սրահների, երգիչների եւ այլ ծախսերի գծով, բայց երբ հերթը հասնում է ամուսնական եկեղեցական ծախսերին, բողոքներ են ծաւալում:

Փաստօրէն, այս դէպքում էլ հարցն ունեցել է թէական բնոյթ կամ լուծման անհատական հնարաւորութիւն: Ընդ որում, 2004-7ի ընթացքում մօտ 5500 քրիստոնէութեան վկայագիր է տրուել, որոնցից ոչ-բոլորն են արտագաղթել: Հարկ է նշել, որ 2006ին Իրանի տուեալների կենտրոնի համաձայն՝ Իրանում ապրել է 100.000 հայ⁶⁷:

Հետաքրքրական է, որ վերոնշեալ հարցազրոյցում առաջնորդարանի դիւանապետը անդրադառնում է յարակից ոչ-պակաս կարեւոր նշանակութեամբ հարցերի, ինչպիսին՝ սպորտն է: Նրա խօսքով՝

⁶⁶ «Իրանահայ կեանք», *Ալիք օրաթերթ*, 15 Յուլիս 2007:

⁶⁷ Նոյն:

Պիտի դիտարկումներ ստեղծենք մեր մարզիկների համար՝ մասնակցելու համահայկական խաղերին: ԹՀԹ խորհրդի կողմից գնահատուել են այն մարզիկները, որոնք տարբեր մարզածեերում ներգրաուել են Իրանի ազգային հաաքականներում: Նախաձեռնել տարբեր ուխտագնացութիւնների համար դիտարցումներ, որպէսզի մեր համայնքից աւելի շատ հայրենակիցներ մասնակից լինեն նման ուխտագնացութիւնների:

Փաստորէն, արտագաղթի խնդիրը կարելի է ըստ ոլորտների լուծել, եթէ աշխատանքային բարուօք պայմաններ ստեղծուէին:

Չնայած Իրանի հայօճախին պատուհասած տեղաշարժերին, այրուհանդերձ, հարկ է նշել, որ համայնքային գործիչների հաաստմամբ՝ չկայ մի դէպք, որ մի աշակերտ հայոց դպրոցից գրկուած լինի գանձումների պատճառով: Իսկ դպրոցների բարձր թոշակների վերաբերեալ պէտք է նշել, որ դպրոցներն ունեն իրենց ծախսերը, քանի որ լաւորակ ուսում ապահովելու համար անհրաժեշտ են ծախսեր: Ազգային իշխանութիւնը եա տարեկան բարձր կրթանպաստ է տալիս դպրոցներին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այսպիսով, իրանահայութիւնը մուտք է գործել 21րդ դար՝ խոշոր տեղաշարժերով: Այդ տեղաշարժերի սլաքները տանում են արեւմտեան ուղղութեամբ՝ ԱՄՆ եւ ԵՄ, ինչպէս նաեւ Ծոցի արաբական զարգացած երկրներ ու Աատրալիա:

Տեղաշարժերի գլխաւոր առանձնայատկութիւններից է, որ իրանահայերը փնտոում են աւելի լաւ ընկերային կայուն պայմաններով միջավայր: Դրա հետեանքով զգալիորէն փոփոխուել է հայօճախի ընկերային կառուցուածքը, նուագել են բարձրորակ մասնագէտներն ու յատկապէս երիտասարդութիւնը: Նոր պայմաններում խնդրայարոյց են դարձել համայնքային նշանակութեան կառոյցների, առաջնահերթ դպրոցների, պահպանումը, որը պահանջում է ֆինանսական մեծ միջոցներ: Նոյնը վերաբերում է այլ կառոյցներին, որոնք ժամանակի ընթացքում դարձել են սակաաթիւ, իսկ համայնքային կարուածքների պահպանումն այդ պայմաններում դարձել է դժուարին խնդիր: Այդուհանդերձ, հայօճախի կառոյցները աանդոյթի ուժով շարունակում են գոյատեւել, իսկ մշակութային միութիւնները շարունակում են հանդէս գալ տարբեր նախաձեռնութիւններով: Թեմական կառոյցների ու խորհրդարանում երկու հայ պատգամաւորների վերահսկողութեան ներքոյ իրականացում են ընկերային տարբեր ծրագրեր, որոնք ունեն հայապահպան նշանակութիւն:

THE MOVEMENTS OF IRANIAN ARMENIANS AND THEIR CHARACTERISTICS AT
THE BEGINNING OF THE 21ST CENTURY
(SUMMARY)

KAREN MKRTCHYAN
K86Mkrtchyan@gmail.com

The demographic problem caused by displacements has become a serious challenge for the Armenian community of Iran. For this reason, the community has decreased not only according to numerical indicators, but also in terms of various specialists. In addition, maintaining many other community structures, priority being given to educational centers and unions, has become an additional financial burden.

Thus, Iranian Armenians entered the 21st century with major changes. The arrows of these shifts point westward to the US and the EU, as well as the developed Arab countries of the Gulf and Australia.

One of the main features of the movements is that Iranian-Armenians are looking for an environment with better social and stable conditions. As a result, the social structure of the community has changed significantly; high-quality specialists and, especially, the number of young people have decreased. Under the new conditions, the maintenance of community structures, the priority being schools, which require large financial resources, has become problematic. The same applies to other structures, which have become few in number over time, and maintaining community institutions under these conditions has become a difficult task. Nevertheless, community structures continue to survive with the strength of tradition, and cultural associations continue to come up with various initiatives. Under the supervision of diocesan structures and two Armenian Members of Parliament in the Islamic Parliament, various social programs which have an Armenian-protecting significance are implemented.

ԱՄԵՐԿՈՄԻ ԵՒ ՀԽՍՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1920ԱԿԱՆՆԵՐԻՆ

ՍՈՒՐԷՆ ԱԻԵՏԻՍԵԱՆ
suren-avetisyan@mail.ru

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդայնացումից յետոյ Ամերկոմի¹ գործունեությունը Խորհրդային Հայաստանում վերսկսուել է մեծ ծաւալով շարունակուել է: 1920ականների առաջին կեսին այն բաւակա-նին լուրջ եւ դրական ազդեցութիւն է ունեցել Խորհրդային Հայաստանի ըն-կերատնտեսական կեանքի վրայ: Այդ աշխատանքները արդիւնաւէտ եւ բնականոն կազմակերպելու գործում լուրջ գործօն էր խորհրդային իշխա-նութիւնների աջակցութիւնը, որն հիմք հանդիսացաւ Ամերկոմի հետ կանո-նակարգուած յարաբերութիւնների ձեւաւորման համար:

Ամերկոմի աշխատանքներն ընդգրկում էին թէ՛ որբանոցների սաների կեցութեան եւ դաստիարակութեան, թէ՛ գաղթականութեան աջակցման հարցերի, թէ՛ խորհրդային իշխանութիւնների հետ յարաբերութիւնների ձե-ւաւորման ու կարգաւորման տիրոյթները:

Հայաստանի ազգային արխիւում պահպանուող համապատասխան փաստաթղթերի եւ հրապարակուած աշխատութիւնների ուսումնասիրու-թեամբ սոյն յօդուածի շրջանակում վերլուծութեան են ենթարկուել եւ լու-սաբանուել 1920ականներին Խորհրդային Հայաստանում Ամերկոմի գոր-ծունեութեան հիմնական ուղղութիւնները, առանձնայատկութիւնները եւ վեր է հանուել դրանց դերն ու կարեւորութիւնը երկրի հասարակական եւ ընկերային կեանքում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՄԵՐԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատուելուց հաշուած օրեր անց՝ 1920 Դեկտեմբերի 14ին, Յեղկոմի նախագահ Սարգիս Կասեանը եւ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզաղեանը հրահանգում են ՀՍԽՀ քաղաքացիական եւ զինուորական իշխանութիւններին ամէն կերպ աջակցել Ամերկոմի գործունեութեանը.

Ընդունելով Մերձաւոր Արեւելքի Օգնութեան Կոմիտէի գործունեութիւնը գաղ-թականական, որբական եւ ընդհանրապէս խնամատարական գործում օգտա-կար եւ անհրաժեշտ լինելը Խորհրդային Հայաստանում, ՀԽՍՀ յեղկոմը նրա գործունեութեան շարունակութիւնը եւ ընդարձակումը համարելով անպայման

¹ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտէ (Ամերկոմ, Near East Relief) ստեղծուել է 1918ին, ԱՄՆի խորհրդարանի որոշմամբ, մինչ այդ գործող եւ առաջին համաշխարհային պատերազմից տուժած երկրներին օգնութիւն ցոյց տուող Հայաստանի եւ Սիրիայի Նպաստի ամերիկեան կոմիտէի հիմքի վրայ:

ցանկալի, խոստանում է նրան իր լիակատար աջակցութիւնը եւ հաւաստիացնում է բռնագրաւումների դէմ:

Ուստի առաջարկում է ՀԽՍՀ բոլոր քաղաքացիական եւ զինուորական իշխանութիւններին ցոյց տալ նոյն Կոմիտէի վարիչներին հարկ եղած աջակցութիւնը իրենց գործունէութեան ընթացքում²:

Կասեանի կարգադրութեամբ Ալեքսանդրապոլի գաւառի յեղկոմի նախագահ Մաթեոս Տէր Գրիգորեանը լիազօրում է բանակցելու Ամերկոմի ներկայացուցիչների հետ՝ կարգաւորելու Խորհրդային Հայաստանի տարածքում կոմիտէի գործունէութեան յետագայ ընթացքը³:

1920 Դեկտեմբերի 17ին Ամերկոմի ներկայացուցիչ բժիշկ Աշըրը (Clarence Ussher, 1877-1955) շնորհակալական նամակ է ուղարկում Խորհրդային Հայաստանի կառավարութեանը, որի մէջ, ընդգծելով իրենց գործունէութեան մարդասիրական նպատակները, մասնատրապէս նշում է, որ յեղափոխութիւնը եւ երկրի իշխանութիւնների փոփոխութիւնը չպէտք է անդրադառնան Ամերիկայի եւ Ռուսաստանի բարեկամական յարաբերութիւնների վրայ, եւ քանի որ Հայաստանը Ռուսաստանի քոյր հանրապետութիւն է, ուստի նաեւ՝ Ամերիկա-Հայաստան յարաբերութիւնների վրայ: Աշըրն առաջարկում է, որ ցանկալի կը լինէր Հայաստանի եւ Ամերիկայի կառավարութիւնների միջեւ կնքուած տեսնել պաշտօնական համաձայնագրեր, դրանց տալ լայն հրապարակայնութիւն, որից, անկասկած, կը շահէին երկու երկրներն էլ⁴:

1921 Յունուարի 5ին Աշըրը նամակ է ուղարկում նաեւ Նիւ Եորք՝ Ամերկոմի կենտրոնական գրասենեակ՝ նշելով, որ նոր կառավարութեան հետ իրենց յարաբերութիւնները լաւ են, եւ խիստ անհրաժեշտ է, որ Ամերկոմը բանակցի Հայաստանի կառավարութեան հետ, քանի որ

...հազարաւոր նոր գաղթականների, որբերի, իրենց ծնողից բաժանուած սոված մանուկների դրութիւնը սոսկալի է. գաղթականները արագութեամբ ընկնում են անցեալ ճմեռայ դրութեան մէջ: Օգնութեան եւ որբախնամ աշխատանքների շարունակումը Երեւանում, Ալեքսանդրապոլում եւ Ղարաքիլիսայում անհրաժեշտ է⁵:

Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատուելուց յետոյ Ամերիկայի կառավարութիւնը, բնականաբար, ատելի զգուշաւոր էր տարածաշրջանում իր դերակատարման մէջ, քանի որ փոխուել էին մինչ այդ գոյութիւն ունեցող պատմական ու քաղաքական պայմանները: Ընդ որում, այդ զգուշաւոր քաղաքականութիւնը որդեգրել էր նաեւ Խորհրդային Հայաստանը, քանի որ զգում էր, որ որբերին ամերիկացիների բարոյա-

² Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 22, թ. 2:

³ Նոյն, թ. 6:

⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 22, թ. 11:

⁵ ՀԱԱ, ֆ. 114, ց. 22, թ. 13:

հոգեբանական եւ կենցաղային դաստիարակութեան ոլորտում երկար ժամանակ թողնելը կարող էր խորհրդային երկրում հակասական հետեւանքներ ունենալ: Սակայն մի բան նաեւ անուրանալի ճշմարտութիւն էր, որ նորաստեղծ բոլշեւիկեան իշխանութիւնը ոչ մի հնարաւորութիւն չունէր կերակրելու ո՛չ գաղթականների, ո՛չ որբերի տասնեակ հազարների հասնող բանակը, որը համալրում էր անասելի արագութեամբ եւ բազմապատկում օրէցօր: Ուստի միակ ճիշտ քայլը, որ այդ պահին կատարեց կառավարութիւնը, Ամերկոմի գործունէութիւնը երկարաձգելու ուղղութեամբ ընդունած որոշումն էր, մինչեւ որ ինքը կը կարողանար հոգալ իր բնակչութեան կենսապահովումը:

ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

Այս դրական թափին անմիջապէս հետեւում է նաեւ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ 1922 Օգոստոսի 7ին կնքուած համաձայնագիրը, որը 23 կէտից բաղկացած ծաւալուն փաստաթուղթ էր եւ համապարփակ ընդգրկումով ներկայացնում էր փոխադարձ գործակցութեան բոլոր մանրամասները⁶:

Համաձայնագրի առաջին կէտերում նշում է, որ Նպաստամատոյցը բարեգործական հաստատութիւն էր, քաղաքական եւ անձնական կամ նիւթական շահ չի հետապնդում, որ նրա դրամական միջոցները կուտակում են կամաւոր հանգանակութիւնների հաշուին, որի նպատակն է

նպաստ հայթայթել եւ աջակցել հայրենադարձութեանը, օգնել որբերին եւ կարօտեալ ժողովրդին, նպաստել երկրի տնտեսական եւ աշխատանքային բարօրութեանը:

Այնուհետեւ արձանագրուել է, որ Նպաստամատոյցը համաձայն է իր միջոցներով առաւելագոյն չափով շարունակելու նպաստի այս ծառայութիւնը, օգնելու խորհրդային Հայաստանի տարածքի բարգաւաճմանն ու տնտեսական առաջադիմութեանը:

Յետագայում Զէյմն Բարթոնը (1855-1936) եւս յիշատակում էր «խորհրդային պաշտօնեաների կողմից աճող համագործակցութիւնը», որը Ամերկոմի Հայաստան վերադառնալուց յետոյ մէկ տարուայ ընթացքում յանգեցրեց մի պայմանագրի, որով

Կոմիտէին շնորհուեց այնպիսի զիջումներ եւ արտօնութիւններ, որոնց չէին արժանացնում որեւէ այլ օտարերկրեայ ընկերութեան կամ կազմակերպութեան⁷:

Հայաստանի կառավարութիւնն էլ իր կողմից պարտաւորուել է հնարաւորինս աջակցել Նպաստամատոյցին եւ նրան տրամադրել շէնքեր ու տարածքներ, թոյլ չտալ, որ նրա աշխատանքներին միջամտեն տեղական կա-

⁶ ՀԱԱ, ց. 30, գ. 14. թթ. 8, 14:

⁷ Ն. Ներսիսեան, *Որբաքաղաքը*, Աշոտ Յովհաննիսեանի անուան հումանիտար հետազօտութիւնների ինստիտուտ, Երեւան, 2018, էջ 139:

ռավարման մարմինների աշխատակիցները, կոմիտեին պատկանող նպաստի բոլոր պաշարները եւ տեղական արտադրութիւնն ու սարքաւորումներն ազատել որեւէ կարգի տուրքերից կամ հարկերից: Կառավարութիւնը համաձայնել է նաեւ հոգալ Ամերկոմի ջրի, էլեկտրականութեան, հաղորդակցութեան եւ կապի, ինչպէս նաեւ Բաթումի նաւահանգստից բեռնատեղափոխման բոլոր ծախսերը:

Ուշագրաւ են յատկապէս համաձայնագրի 17րդ եւ 18րդ կէտերը.

...17. Կառավարութիւնը ժողովրդին կը ծանօթացնի Ամերկոմի գործելաոճին եւ նպատակներին, որպէսզի երկկողմ վստահութեան եւ համագործակցութեան երաշխիքներ քաջալերի՝ նպաստի գործունէութեան առաւելագոյն արդիւնաւետութիւնը ապահովելու համար:

18. Կառավարութիւնը Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կոմիտէի ամերկացի պաշտօնեաներին տալիս է Անդրկովկասի տարածքում ազատ տեղաշարժուելու եւ բնակուելու իրաւունք, նրանց ազատում է խուզարկումներից, ձերբակալումից եւ արգելափակումից:

Ամերկոմը իր կողմից պարտաւորում է կառավարութեան պահանջով ազատել աշխատանքից եւ անհրաժեշտութեան դէպքում երկրից արտաքսել այն աշխատակիցներին, որոնք կարգազանց կը լինեն եւ կը միջամտեն երկրի քաղաքական կեանքին, կ'ոտնահարեն հանրապետութեան օրէնքները»⁸:

Համաձայնագիրը կազմուել է անգլերէնով եւ ռուսերէնով: Ռուսերէն բնագիրը ուղարկուել է Ռուսաստանի արտգործնախարարութիւն: 1922 Օգոստոսի 30ին Անդրֆեդերացիայի միութիւնների խորհուրդը չեղեալ է համարել այս համաձայնագիրը՝ արձանագրելով, որ Հայաստանը առանց Միութիւնների խորհրդի հետ հարցը քննարկելու իրաւունք չունի որեւէ արտասահմանեան կազմակերպութեան հետ պայմանագիր կնքելու⁹:

Հոկտեմբեր ամսին արտասահմանեան բարեգործական ընկերութիւններում Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչ Կարլ Լանդէրը կազմել է յուշաթերթ, որում մանրամասն շարադրուած է խորհրդային կառավարութեան դիրքորոշումը մարդասիրական օգնութեան ձեւերի եւ մեթոդների մասին¹⁰:

Սրան հետեւել է Նպաստամատոյցի կազմած յուշաթերթը¹¹, որից յետոյ՝ Նոյեմբերի 1ին, մէկ տարի ժամկէտով կնքուել է համաձայնագիր¹² Ռուսաստանի եւ Ամերկոմի միջեւ, որը համարեա ոչնչով չի տարբերում չեղեալ համարուած համաձայնագրից, պարզապէս ստորագրող կողմերից մէկն արդէն Ռուսաստանի խորհրդային հանրապետութիւնն է, իսկ համաձայնա-

⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 30, գ. 14, թ. 12:

⁹ Նոյն, ֆ. 113, ց. 38, գ. 24, թ. 16:

¹⁰ ՀԱԱ, ֆ.113, ց. 38, գ. 27, թթ. 203, 211:

¹¹ Նոյն, թթ. 196, 200:

¹² Նոյն, թթ. 187, 193:

գիրն էլ յանձնարարելի փաստաթուղթ է դարձել նաեւ Անդրկովկասի հանրապետութիւնների համար:

Կառավարութիւնն Ամերկոմի որբախնամ գործունէութիւնը գնահատում եւ ընդունում էր, սակայն արդէն իսկ Սփիւռքի եւ տեղի պարբերական մամուլում տպագրուող յօդուածները, որոնցում քննադատական խօսք էր հնչում Ամերկոմի գործունէութեան՝ մասնաւորապէս կրթադաստիարակչական աշխատանքների եւ որբերի շահագործման մասին, որոշ զգուշաւոր վերաբերմունք էին ձեւաւորել նաեւ կառավարող շրջաններում, եւ թերեւս սա էր պատճառը, որ Ամերկոմի հետ 1922 Նոյեմբերին կնքուած պայմանագիրը դարձեալ վերանայուեց 1923 Յունուարի 24ին¹³, ապա՝ Փետրուարի 10ին¹⁴:

1923 Փետրուարի 10ին Թիֆլիսում Խորհրդային Հայաստանի կառավարութեան եւ Ամերկոմի միջեւ կնքուած նոր պայմանագրում փորձ է արուել շատ աւելի խիստ եւ հնարաւորինս ճշգրիտ ձեւակերպումներ գտնել նախկին համաձայնագրերի որոշակի հարցերի շուրջ:

Ամենակարեւորն այն էր, որ այդ համաձայնագրով որբանոցների երեխաների կրթութեան եւ դաստիարակութեան գործը լիովին ենթարկուում էր Խորհրդային մարմինների հսկողութեանը¹⁵:

Համաձայնագրի 4րդ կէտը ձեւակերպուել է այսպէս.

Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյց Մարմնի գործունէութիւնը խստօրէն պէտք է սահմանափակուի օգնութեան գործով եւ ոչ մի դէպքում չի կարող քաղաքական, առեւտրական եւ կրօնական քարոզչութեան բնոյթ կրել: Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյցի մարմինը պարտաւորում է ԱՍՖԽՀ կառավարութեան պահանջով հեռացնել ծառայութիւնից եւ երբ հարկը պահանջէ Անդրկովկասեան Դաշնակցութեան սահմաններից դուրս վանել այն օտար պաշտօնեային, որ խախտում է այս յօդուածի տրամադրութիւնը եւ հանրապետութեան օրէնքները¹⁶:

Համաձայնագրում քննարկուում էին նաեւ երեխաների կրթութեան, ներմուծուող ապրանքների մաքսային գննման եւ այլ հարցեր:

Հետաքրքիր է յատկապէս պայմանագրի 14րդ կէտը, որով ամրագրուել է Ամերկոմի՝ արտասահմանի հետ թղթակցութիւն ունենալու կարգը.

Փոստի պարկերը քննուում են Թիֆլիսում ներկայացուցչութեան գրասենեակում եւ կնքուում են ներկայացուցչութեան եւ Ամերիկեան մարմնի կնիքներով, ներկայացուցչի ձեռքով կամ նրանից լիազօրուած անձի միջոցով, որից յետոյ թղթակցութիւնը ուղարկուում է Պաթում եւ առանց արգելքի յանձնուում շոգենափին: Այս

¹³ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 112, թթ. 14, 18:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1280, թթ. 1, 6:

¹⁵ Յովիկ Մելիքսէթեան, *Արեւմտահայերի բռնագաղթը եւ սփիւռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան (1915-1940թթ.)*, Երեւան, 1975, էջ 98:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1280, թ. 2:

կերպով կնքուած փոստային պարկերը ճանապարհի տետողութեան ընթացքին անձեռնմխելի են եւ շոգենաւի վրայ երկրորդ անգամ քննութեան չպիտի ենթարկուին: Ամերիկեան կոմիտէն կ'երաշխատորէ, որ ոչ մի մասնաւոր նամակ իր փոստային ծրարներով չպիտի ուղարկէ...¹⁷:

Ստացուող փոստի քննութիւնը կատարելու էր կառավարութեան ներկայացուցիչը եւ նոր միայն յանձնելու Ամերկոմին:

1923 Փետրուարի 10ի համաձայնագրով Ամերկոմի ծառայողների վրայ տարածուած են նաեւ սովետական աշխատանքային օրէնսդրութեան հիմունքները: Եթէ մինչեւ 1922 Սեպտեմբերը Ամերկոմի 4500 ծառայողներից ոչ մէկը արհմիութեան անդամ չէր, ապա դրանից յետոյ նրանք եւս ընդգրկուած են արհմիութիւնների մէջ, եւ Ամերկոմի որբանոցներում ստեղծուած են տեղական կոմիտէներ (տեղկոմ), որոնք իրենց հերթին վերահսկում էին երեխաների հետ տարուող աշխատանքները¹⁸:

Ամերկոմի՝ 1923ի գործունէութեան վերաբերեալ Անդրֆեդերացիայի ժողկոմսորիի ներկայացուցչի կազմած տեղեկագիրը լոյս է սփռում ստեղծուած իրադրութեան վրայ՝ մանրամասն ներկայացնելով այդ օգնութիւնից երկրի շահածն ու կորցրածը: Ըստ տեղեկագրի՝ 1923ի ընթացքում Ամերկոմը Հայաստանում պարէնով օգնել է 103,825 անձի, որբանոցներում պահել 4-17 տարեկան 27,362 որբ: Քննարկելով Ամերկոմի գործունէութիւնը՝ հեղինակը մասնաւորապէս ուշադրութիւն է հրաւիրում մի շարք հարցերի վրայ:

Նախ ընդգծում է, որ Ամերկոմի աշխատակիցների մէջ տիրում էր երկու մտայնութիւն. նրանց մի մասը գտնում էր, որ աշխատանքը Հայաստանում պէտք է շարունակուի, միւս մասը՝ ընդհակառակը: Վերջիններս գտնում էին, որ հիմնական գործունէութիւնը պէտք է ծաւալել Պարսկաստանում, Թուրքիայում, Յունաստանում: Արդէն Յունուար ամսից Ամերկոմը զգալի կրճատել էր իր գործունէութիւնը. 1922ի անձնակազմի 105 անդամներից 50ը վերադարձել էին Ամերիկա, կիսով չափ նուազել էր ներկրուող պարէնի ծաւալը, սրա մի մասն էլ արագօրէն սպառուած էր ներքին շուկայում՝ վաճառուելով մասնաւոր անձանց:

Միւս կողմից էլ Ամերկոմը պահում էր տեղացի աշխատողներից կազմուած հաստիքների ուճացած համակարգ, որի համար միայն ստացուած օգնութիւնից 1923ին ծախսել է 61,000 դոլար: Բացի այդ, իր որբանոցներում գտնուող 15-17 տարեկան 7265 տղաներին եւ աղջիկներին կոմիտէն անվճար աշխատեցնում էր իր արհեստանոցներում եւ ստացած հասոյթը տնօրինում իր հայեցողութեամբ:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1280, թ. 3:


¹⁸ Մելիքսեթեան, էջ 99:

Տեղեկագրի հեղինակը առաջարկում է լուրջ ուշադրություն դարձնել այս ամէնին եւ համապատասխան հետետեւութիւններ անել¹⁹:

ԱՄԵՐԿՈՍԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ

1924ին Ամերկոմը յայտարարում է, որ սկսելու է աստիճանաբար բեռնաթափել որբանոցները եւ կառավարութեանն առաջարկում է մտածել որբերի յետագայ ճակատագրի մասին: Սկսում է անցանկալի քաշքշուք նաեւ գոյքի, բժշկական օգնութեան, փոխադարձ աջակցութեան եւ այլ հարցեր կարգաւորելու ընթացքում²⁰:

Ամերկոմի խնամած որբերի թուաքանակը²¹ (1920-1927)



1924 Մարտի 24ին Անդրֆեդերացիայի ժողկոմխորիը որոշում ընդունեց 1923 Փետրուարի 10ին Ամերկոմի հետ կնքած համաձայնագիրը երկարացնել եւս մէկ տարով (մինչեւ 1925 Փետրուարի 10)՝ նախորդ համաձայնագրի 7րդ կէտում մասնակի շտկում կատարելու պայմանով: Վերջինս արգելում էր Ամերկոմին Խորհրդային Միութեան ներքին շուկայում իրացնել որբւէ ապրանք, զբաղուել առետրական գործունէութեամբ²²: Նոր պայմանագիրը ստորագրուել է Մայիսի 24ին: Ամերկոմի կողմից այն ստորագրել է Էր-

¹⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 30, թ. 98, 105:

²⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 42, թթ. 125, 148, 252, 261: Ֆ. 122, ց.1, գ. 508, թ. 10:


²¹ Ս.Ռ. Աւետիսեան, *Մերձատր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի (Ամերկոմ) գործունէութիւնը Հայաստանում 1918-1930թթ.*, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Երեւան, 2009, էջ 154-68, 178:

²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 42, թ. 128:

նեստ Եարթօն, անդրկովկասեան հանրապետութիւնների եւ Հայաստանի կողմից՝ Նարիման Տէր Ղազարեանը²³:

Սակայն 1924 Յուլիսից Ամերկոմը սկսեց թէ՛ որբանոցների, թէ՛ նրանց կից դպրոցների սաների ցրումը: Այս աշխատանքը կատարուել էր նաեւ 1923ի ամռանը, որի հետեւանքով արձակուել էին 5413 դպրոցական տարիքի երեխաներ: 1924 Յունուար-Յունիս ամիսներին որբանոցներն ու դպրոցները թողել էին 4324 երեխայ, իսկ ամռան ամիսներին նախատեսուում էր կրկնապատկել նրանց թիւը: Կառավարութիւնը փորձում էր իր հովանու տակ վերցնել այս երեխաներին՝ չափահասներին տեղաւորելով գիւղերում եւ փոքր արհեստանոցներում, աւելի փոքրերին ընդգրկելով պետական դպրոցներում: Սակայն արձակուող որբերի քանակը աճում էր անասելի արագութեամբ, իսկ պետութիւնը ուղղակի հնարաւորութիւն չունէր զբաղուելու բոլորի ճակատագրով:

Ամերկոմի մանկատներին կից գործող դպրոցներում ընդգրկուած երեխաների թուաքանակը²⁴ (մինչեւ 1923 Յունուար)



Այն, որ Ամերկոմն արագ եւ հետետողականօրէն կրճատում էր իր գործունէութիւնը, արդէն կասկած չէր յարուցում, մանաւանդ որ Նպաստամատոյցի պաշտօնեաները բազմաթիւ գրութիւններով տեղեկացնում էին, որ Ամերիկան եւ նրա ժողովուրդը եւս յայտնուել են տնտեսական անբարենպաստ պայմաններում, որ կոմիտէն աշխատում է պարտքերով, եւ հանգանակած նպաստը այլեւս բաւարար չէ մեծածաւալ գործունէութիւն վարելու համար:

²³ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 508, թթ. 13, 15:

²⁴ Աւետիսեան, էջ 164:

Հայաստանի կառավարութիւնը սկսում է բանակցել Ամերկոմի հետ, որպէսզի վերջինս ստեղծի յատուկ յանձնաժողով, որը մշակի եւ կառավարութեանը ներկայացնի իր յետագայ գործունէութեան մանրամասն ծրագիրը՝ նշելով ազատութիւնը որբերի ճշգրիտ թիւը եւ արձակման ստոյգ ժամանակացոյցը²⁵:

Խորհրդային կառավարութեան միջոցներով 1923-26 ընթացքում յաջողուեց որբանոցներից դուրս բերել եւ աշխատանքի տեղաւորել աւելի քան 15,000 մեծահասակ որբերի²⁶: Ստանալով անհրաժեշտ նիւթական միջոցներ՝ նրանք տեղաւորուում էին գիւղերում, գործարաններում, ֆաբրիկաներում եւ արհեստանոցներում: Որբանոցներից դուրս եկող մեծահասակ որբերի համար ստեղծուում են նաեւ միքանի աշխատանքային մանկական գաղութներ, որտեղ նրանք զբաղուում էին հողագործութեամբ կամ արհեստագործութեամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, 1920ականների առաջին կէսին Խորհրդային իշխանութիւնների եւ Ամերկոմի յարաբերութիւններն արդէն իսկ 1922ի երկկողմ համաձայնագրերով կանոնակարգուել էին: Նշուած ժամանակաշրջանում Ամերկոմի կողմից խնամուող որբերի թիւը հասնում էր 27,362ի, որը ինքնին վկայում է այդ դժուարին ժամանակաշրջանում կատարուած մեծածաւալ աշխատանքի մասին՝ լուսաբանելով նաեւ մի շարք հիմնախնդրային հարցեր:

Ամերկոմի կողմից գաղթականութեանը եւս տրամադրուել է մեծածաւալ աջակցութիւն, որի պահանջը 1920ականների սկզբին առաջնային հրամայական էր:

Ամփոփելով Ամերկոմի գործունէութիւնը Խորհրդային Հայաստանում, միանգամայն պարզ է դառնում, որ այն իր զգալի դրական ազդեցութիւնն է ունեցել ընկերատնտեսական վիճակի բարելաման գործում:

²⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 98, թ. 93:

²⁶ Մելիքսէթեան, էջ 100:

RELATIONS BETWEEN THE AUTHORITIES OF THE
ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC AND THE AMERICAN COMMITTEE FOR
RELIEF IN THE NEAR EAST (ACRNE) IN THE 1920S
(SUMMARY)

SUREN AVETISYAN
suren-avetisyan@mail.ru

In the first half of the 1920s, the activity of the American Committee for Relief in the Near East (ACRNE) had a relatively serious and positive impact on the internal life of Soviet Armenia. The support of the Soviet authorities was a serious factor in the effective and normal organization of those works, which were the basis for the formation of regulated relations with ACRNE.

ACRNE's work covered the domains of: the living and upbringing of children in orphanages, issues of emigrant support, and the formation and regulation of relations with the Soviet authorities.

The formation of relations with the Soviet authorities was regulated by an appropriate agreement, which had a positive effect on the implementation of activities.

Summarizing the activities of ACRNE in Soviet Armenia, it becomes quite clear that the latter had a positive impact on the improvement of the socio-economic situation.

ԱՂԲԵՐՑ ՎԱՆՔ-ԳԼԱՁՈՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ
karenmatevosian@gmail.com

ՄՈՒՏՔ

Գլաձորի համալսարանը, որը գործել է Վայոց ձորի Աղբերց վանքում՝ 1282-1338ին, միջնադարեան Հայաստանի կրթական, գիտական, մշակութային կեանքի բացառիկ երեւոյթներից է: Այս կենտրոնի պատմութիւնը, գիտակրթական գործունէութիւնը եւ ձեռագրական ժառանգութիւնը բաւարար չափով ուսումնասիրուած են¹: Սակայն Աղբերց վանք-Գլաձորին նուիրուած գրականութեան մէջ առայժմ բացակայում է նրա վերաբերեալ սկզբնաղբիւրներում առկայ պատմատեղագրական տուեալների ամբողջական, համահասարակ ներկայացումը, որն արտում է սոյն հրատարակմամբ՝ հակիրճ տուեալներ պարունակող համապատասխան աղիւսակի եւ դրա վերլուծութեան միջոցով: Այն թոյլ է տալիս յստակ տեսնել, թէ ո՞ր թուականներին եւ ի՞նչ անուններով է յիշատակուում վանքը՝ Աղբերց վանք կամ Գլաձոր (կամ երկուսը միասին), որո՞նք են այստեղ յիշատակուող եկեղեցիները եւ սրբութիւնները (ե՞րբ են յիշատակուում), ի՞նչպիսի լրացուցիչ բնութագրումներ են տրուում վանք-մենաստանին ու կրթարանին եւն.: Այս տուեալները հիմք են դառնում նաեւ որոշակի ընդհանրացումների եւ վեր-

¹ Ղ. Ալիշան, *Սիսական, Վենետիկ, Մխիթարեան միաբանութեան հրատ.*, 1893, էջ 130-38. նաեւ՝ Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պողոտեանք հայոց պարմութեան մէջ*, Բ. հրատ., կաթողիկոսարանի հրատ., Անթիլիաս, 1969, էջ 251-96. նաեւ՝ Լ. Խաչիկեան, «Գլաձորեան համալսարանը եւ նրա սաների աւարտական ատենախօսութիւնները», *Գիտական աշխատութիւններ Երեւանի համալսարանի*, 23:1946, էջ 423-50. նաեւ՝ Լ. Խաչերեան, *Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մրքի զարգացման մէջ, XIII-XIV դդ.*, «Լոյս» հրատ., Երեւան, 1973. նաեւ՝ նոյնի՝ *Եսայի Նշեցին եւ Գլաձորի համալսարանը*, Լոս Անճելըս, 1988. նաեւ՝ Ա. Աւետիսեան, *Հայկական մանրանկարչութեան Գլաձորի դպրոցը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971. նաեւ՝ Ա. Աբրահամեան, *Գլաձորի համալսարանը*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 1983. նաեւ՝ Ի. Ղարիբեան, *Գլաձոր*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 1983. նաեւ՝ Ս. Արեւշատեան, Ա. Մաթոսեան, *Գլաձորի համալսարանը միջնադարեան Հայաստանի լուսատրութեան կենտրոն*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1984. նաեւ՝ Ա. Մաթոսեան, «Գլաձորի համալսարանի ուսումնական ծրագիրը», *էջմիածին*, ԺԱ-ԺԲ:1984, էջ 46-55. նաեւ նոյնի՝ «Նոր վկայութիւններ Գլաձորի համալսարանի մասին», *Պարմաբանասիրական հանդէս*, 4:1984, էջ 20-31. նաեւ՝ Ա. Ղազարոսեան, «Գլաձորի համալսարանի գրիչները եւ ձեռագրերը», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 3:1984, էջ 58-66. նաեւ՝ Տ. Մկրտչեան, *Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած*, «Մուղնի» հրատ., Երեւան, 2016 եւն.:

լուծութեան համար, որոնք յատկապէս կարեւոր են, եթէ նկատի ունենանք, որ Աղբերց վանք-Գլաձորի գտնուելու ստոյգ տեղն առայժմ անյայտ է: Դրա հետեւանքով գիտական հանրութեանն անձանօթ են մնում նաեւ տեղի հնագիտական, ճարտարապետական-կառուցումաճարհին, վիմագրական տուեալները, ուստի այս տեսանկիւնից մատենագրական վկայութիւնների կարեւորութիւնն անելի է մեծանում:

ԳԼԱԶՈՐԻ ՎԱՆՔԸ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

Գլաձորի համալսարանը հիմնուել է Մշոյ Առաքելոց վանքից Սիւնիք եկած հոգեւորականների միջոցով: Ներսէս Մշեցին, որի դպրոցը 1271ից (իր ուսուցիչ Վարդան Արեւելցու մահից յետոյ) գործում էր Առաքելոց վանքում, տեսնելով, որ շրջակայ մահմեդական ցեղերի ճնշումներն անհնար են դարձնում դպրոցի կանոնաւոր գործունէութիւնը, ուսուցիչների ու աշակերտների հետ 1281ին թողնում է վանքը, անցնում Քաջբերունիք գաւառ, սակայն այնտեղ եւս ապահովութիւն չգտնելով՝ 1282ին գալիս է Վայոց ձոր եւ կեցութեան ու գործունէութեան վայրի համար դիմում Խաղբակեան իշխան Պոռշին: Վերջինս նրան է յատկացնում գաւառի փոքր վանքերից մէկը, որը յիշատակարաններում անուանում է Աղբերց վանք, եւ որի գլխաւոր եկեղեցին կոչուել է Ս. Ստեփանոս Նախավկայ: Վանքը կամ մենաստանը յետագայում անելի յայտնի է դառնում Գլաձոր անունով: 1284ին Ներսէս Մշեցին այստեղ կնքում է մահկանացուն եւ նրան փոխարինում է իր աշակերտներից Եսայի Նչեցին (ծնունդով Սասունի Նիչ գիղից), որն էլ համալսարանի ռաբունապետութիւնը վարում է մինչեւ կեանքի վերջը՝ 1338: Դրանից յետոյ նոր ռաբունապետ Տիրատուր Կիլիկեցին համալսարանը տեղափոխում է Օրբէլեան իշխանների հովանաւորութեամբ գործող, նոյն գաւառի Հերմոնի վանքը (համալսարանն այստեղ է մնում մինչեւ 1356՝ Տիրատուր Կիլիկեցու մահը):

Յայտնի է, որ Ներսէս Մշեցու ժամանակ, այսինքն՝ 1282-84ին, Գլաձորում է ուսանել Սիւնեաց ապագայ մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանը (մահ. 1303): Նորավանքում 1297ին ասարտած իր *Պատմութիւն նահանգին Սիսական* կոթողային աշխատութեան մէջ նա այդ մասին գրում է շատ համառօտ՝ «**վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն փառից... առի հրաման յաստուածագգեաց եւ յաշխարհալոյս ռաբունապետէն Ներսիսէ. եւ փհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական**»²: Թէ ինչու Օրբէլեանն իր հանգամանալից *Պատմութեան* մէջ որեւէ տեղ չի նշում Աղբերց վանք կամ Գլաձոր անունները, մնում է անհասկանալի: Այնուամենայնիւ, յայտնի է, որ 1303ին Օրբէլեանը Նչեցուն պատուիրել է Եզեկիէլի մարգարէութեան մասին մեկնողական մի երկ գրել, որն ասարտելով ռա-

² Ստեփանոս Օրբէլեան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Տիգրիս, 1910, էջ 478: Այս եւ յաջորդ մէջբերումներում ընդգծումները մերն են - Կ.Մ.:

բունապետը նախ վերջաբանում, ապա եւ առանձին թղթով, մեծարական արտայայտութիւններով դիմում է պատուիրատուին, իսկ նա էլ շնորհակալական գրութեամբ («Պատասխանի շնորհակալութեան տեառն Ստեփաննոսի առ վարդապետն յեսայեայ») փոխադարձաբար փառաբանում է Գլաձորի ընտանապետին, նամակի սկզբում նրան կոչելով «Յիսուսական համալսարանացն պետք եւ ձիր իմաստից ...»³:

Հարկ է նշել, որ Գլաձորի համալսարանը Խաղբակեան (Պոռոշեան) իշխաններից բացի հովանաւորել են նաեւ Օրբէլեանները: Գլաձորում են ուսանել Ստեփանոս Օրբէլեանին յաջորդած Սիմեաց մետրոպոլիտները՝ Յովհաննէս Օրբէլը (աթոռակալել է մինչեւ 1324) եւ Ստեփանոս Տարսայիճը (աթոռակալել է մինչեւ 1331), որոնք նաեւ մեծապէս նպաստել են համալսարանի գործունէութեանը: Սակայն հետաքրքրական է, որ 13րդ դարի վերջերից (1290ականներ) Օրբէլեանները բարձր տիպի հոգեւոր դպրոց են հիմնել նաեւ իրենց պատկանող վանքերից մէկում՝ Վերին Նորավանքում: Այս գործում նրանք ներգրաւել են Գլաձորի ուսուցիչներից Դաւթին, որը Ներսէս Մշեցու հետ Մշոյ Առաքելոց վանքից Վայոց ձոր եկած վարդապետներից էր:

Այն փաստը, որ Գլաձորի համալսարանն աջակցութիւն է ստացել Օրբէլեաններից, արձանագրում է նաեւ Նչեցին 1323ին իր ստացած Աւետարանի (Մատենադարան, ձեռ. 6289) յիշատարարանում: Նա նախ գրում է գրչութեան վայրի՝ Գլաձորի մասին, հետեւեալ խօսքերով. «Բայց տեղի գրութեան սորա եղև ի գաւառիս Սիւնեաց, **ի նեղ եւ յանձուկ ալթեանիս**»⁴, որը թերեւս մի ակնարկ է համալսարանի տեղի փոքրութեան մասին: Այնուհետեւ Նչեցին նշում է Օրբէլեան մեծ իշխան Բուրթէլին ու նրա ընտանիքի անդամներին, գովաբանելով նրանց եկեղեցանպաստ գործունէութիւնը, որից յետոյ ներկայացնում է իր եւ համալսարանի սաների նկատմամբ Օրբէլեանների հովանաւորչական վերաբերմունքը. «...**եւ մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիւ գութս բարեաց գտաք ի սոցանէ, որ զաւարտութիւնս մեր ժողովեցին, եւ ընկալան զմեզ ոչ իբրեւ զաւարտ, այլ իբրեւ յինքեանց հարազատ ծնեալ մանկունս, գթով եւ սիրով զմեր ստրահակութիւնս ընկալան**»⁵: Ուշագրաւ է, որ Նչեցին նաեւ նշում է, թէ այդ շքեղ Աւետարանը (այն նկարազարդել էր շնորհալի Թորոս Տարօնացին) գրչութիւնից յետոյ ընծայել է Հերմոնի վանքին⁶: Յիշատակարանից պարզ

³ Յովսէփեան, էջ 401:

⁴ Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԴ դար, մասն Ա, կազմ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթեոսեան, Ա. Ղազարոսեան, «Նայիրի» հրատ., Երեւան, 2018, էջ 457:

⁵ Նոյն, էջ 458:

⁶ Յիշատակարանի այդ հատուածը, որտեղ նշուած է՝ «...ընծայեցի զսա Հերմոնի վանաց սուրբ Գրիգորիս», յետագայում ջնջուել էր եւ մենք այն վերականգնել ենք

է դառնում, որ այդ ժամանակ արդէն համալսարանի հովանաւորութիւնն աստիճանաբար անցնում էր Օրբէլեաններին: Իվերջոյ, ինչպէս վերը նշեցինք, 1338ին Նշեցու մահից յետոյ համալսարանը Խաղբակեանների տիրոյթում գտնուող Գլաձորից տեղափոխուած է Օրբէլեանների տարածք՝ նրանց հովանաւորած Հերմոնի վանք: Այս առումով շատ հետաքրքիր է նաեւ 1319ին Հերմոնի վանքում Յովհաննէս գրչի գրած ձեռագրի յիշատակարանը, որտեղ նա նշում է, որ մատեանն ընդօրինակել է **«առ ողորմե՛ծ վարդապետին Եսայայ»**⁷, ինչը նշանակում է, որ Գլաձորի բաբունապետը այդ ժամանակ Հերմոնում էր:



Եսայի Նշեցին եւ Ներսէս Մշեցին շնորհ են ստանում Աստուածածնից եւ Յիսուսից, Աւետարան, 1323 թ. մանրանկարիչ Թորոս Տարծնացի (ՄՄ, ձեռ. 6289, էջ 141ա)

Քանի որ ժամանակակիցների կողմից «երկրորդ Աթէնք» պատուանունը ստացած Գլաձորի համալսարանի ուսումնական գործունէութեանը վերաբերող նիւթերը հիմնականում ուսումնասիրուած են, մենք այստեղ միայն շատ համառօտ միջանի արձանագրում կ'անենք: Գլաձորում կար ե՛ւ քահանայական, ե՛ւ վարդապետական լսարան, այստեղից էլ՝ համալսարան անուանումը: Վարդապետական ծրագիրն ընդգրկում էր հոգեւոր եւ աշխարհիկ կրթութեանը վերաբերող առարկաների մի ամբողջ համակարգ: Ուսանողները պարտաւոր էին ուսումնառութեան 7–8 տարիների

վերջերս, յատուկ հետազոտութեան միջոցով (Մատենադարան, ձեռ. 6289, էջ 283բ):

⁷ Հայերէն ձեռագրերի յիշարկարաններ, ԺԴ. դար, մասն Ա, էջ 362:

ընթացքում, աստուածաբանություն սովորելուց բացի, տիրապետել «արտաքին», այսինքն՝ աշխարհիկ գիտություններին եւ արուեստներին: Դրանք կոչում էին «ազատ արուեստներ» կամ գիտություններ, եւ թուով եօթն էին: Առաջին երեքը՝ քերականությունը, ճարտասանությունը եւ տրամաբանությունը, կազմում էին եռեակ, միւս չորսը՝ թուաբանությունը, երաժշտութեան տեսությունը, երկրաչափությունը եւ աստղաբաշխությունը՝ քառեակ գիտությունները:

Ուսումնառութեան շրջանն աւարտելուց յետոյ Գլաձորի համալսարանի շրջանաւարտը հանդէս էր գալիս ատենախօսութեամբ, որից յետոյ նրան շնորհում էր վարդապետական աստիճան՝ ռաբունապետութեան կողմից ղեկավարուող ու անցկացուող հանդիսաւոր արարողութեամբ: Յայտնի է, որ Գլաձորի համալսարանի 360 շրջանաւարտի Եսայի Նչեցին է վարդապետական աստիճան շնորհել⁸:

Գլաձորի համալսարանի գործունէությունը՝ սկզբից մինչեւ վերջ, կապուած է եղել ձեռագիր մատեանների ստեղծման՝ գրչութեան գործի հետ: Այստեղ գրուած մեզ հասած մատեանների թիւը հասնում է շուրջ հինգ տասնեակի: Այդ մատեանների յիշատակարաններում պահպանուած տեղեկություններով մենք կազմել ենք Գլաձորի ուսուցիչների եւ սաների անուանացանկը՝ իւրաքանչիւրի մասին համառօտ տեղեկություններով, որն ընդգրկում է 73 անուն⁹:

Հայագիտութեան չլուծուած խնդիրներից է այն, որ ժամանակին այդքան մեծ հոչակ վայելած Գլաձորի համալսարանի կամ Աղբերց վանքի ստոյգ վայրն առայժմ անյայտ է, թէեւ այդ մասին եղել են տարբեր ենթադրություններ¹⁰: Գլաձորի տեղին թերեւս առաջինն անդրադարձած Ալիշանն իրեն յայտնի տուեալների հիման վրայ հետեւեալ դիտարկումն է կատարել. «*ի բանից առաջնոցն եւ ի լռութենէ յեպոնոց՝ երեւի ի զանխոյլ ուրեք ջրաբորոյխ վայրի լինել եւ ի բարձու, եւ ի հարկէ ցուրտ ի ձմերանի*»¹¹: Նա նկատի ունի, որ Աղբերց վանքի անունը սկզբնաղբիւրներում չի պահպանուել ոչ համալսարանի այստեղ հաստատուելուց առաջ, ոչ էլ այստեղից հե-

⁸ Ալիշան, էջ 23. նաեւ՝ Յովսէփեան, էջ 256. նաեւ՝ Ա. Մովսիսեան, *Ուրուագծեր հայ դպրոցի եւ մանկավարժութեան պատմութեան*, «Հայպետումանիստատ» հրատ., Երեւան, 1958, էջ 175:

⁹ Կ. Մաթեոսեան, «Գլաձորի համալսարանի ուսուցիչները եւ սաները», *Բանբեր Մատենադարանի*, 36:2023, Երեւան, էջ 5-33:

¹⁰ Գլաձորի վանքի տեղորոշման հարցում եղել են որոշ ենթադրություններ, ուսումնասիրողների մի մասն այն նոյնացրել է Վայոց ձորի Թանատի կամ Թանահատի վանքի հետ (Աշոտ Աբրահամեան, Իգիթ Ղարիբեան), Եղեգիսից հիախ գտնուող «Ճգնատրի քար» («Գէօլում բուլաղ») կոչուող ւեռակ վանքի հետ (Գրիգոր Գրիգորեան), Հերմոնի վանքից հիախ-արետմուտք գտնուող Քարեվանի հետ (Տիգրան Մկրտչեան):

¹¹ Ալիշան, էջ 135:

ռանալուց յետոյ, որից ենթադրում է, թէ «անխուլ», այսինքն անյայտ, անլուր, առանձնացած մի տեղում էր: Նաեւ այն կոչում է «ջրաբուլիս վայր», որը հենց Աբղերց վանք անուան ստուգաբանութիւնն է՝ «աղբիւր» բառից, ըստ որի տեղանունը մեկնաբանուում է որպէս «Աղբիւրների վանք»:

Այդեօ՞ք Ս. Ստեփանոսի անունով եկեղեցի ունեցող այդ փոքր վանքը հնուց ի վեր այդ անունն ունէր, թէ՞ Մշոյ Առաքելոց վանքից այստեղ եկածներն այն այդպէս կոչեցին՝ դժուար է ասել: Յամենայն դէպս, թաւմ է, որ հին, ասանդական անունն այդքան շուտ եւ հեշտութեամբ իր տեղը չէր զիջի մէկ այլ՝ նոր անուան, որն էր Գլաձորը: Այն առաջին անգամ յիշատակուում է 1291ին, որպէս Աղբերց վանքի մականուն՝ **«ի մենաստանս, որ կոչի Աղբերց վանք եւ մականուն՝ Գլաձոր...»**¹², բայց որը յետոյ տիրապետող է դառնում:

Աղբերց վանք անուան «աղբիւր» բառից ծագելու առնչութեամբ հետաքրքրական է Մկրտիչ Թեղենացու 1302ի յիշատակարանի մի հատուածը՝ Նչեցու մասին, որտեղ ասուում է՝ **«եւ զամենայն եկեալսն առ ինքն յաստուածայինն ուղղէր ճանապարհ, աղբիւրաբար բխելով զՀոգւոյն Սրբոյ վարդապետութիւնս ի լսելիս աշակերտելոցն»**¹³:

Գլաձորի յաջորդ խոշոր հետազօտողը՝ Գարեգին կաթողիկոս Յովսէփեանը, հետեւեալ կարծիքն է յայտնում՝ **«Գլաձորը վանք չէր սովորական մտքով, ինչպէս Կեչառոյքն էր, Գեղարդը եւ այլն, ուր նոյնպէս վարդապետներ կային եւ որոնք աշակերտներ ունէին, այլ գերազանցօրէն դպրոց: Այստեղ զայիս էին միայն ուսանելու եւ կատարելագործուելու համար»**¹⁴: Անշուշտ այն նաեւ վանք էր, ընդ որում, յիշատակարաններում յաճախ կոչուում է մենաստան, որն ունէր իր եկեղեցին, հաւանաբար նաեւ մատուռներ, բայց նաեւ՝ առանձին դրոցական շէնք կամ «դպրատուն», որը երեւում է յիշատակարաններից:

ԱՂԲԵՐՑ ՎԱՆՔ-ԳԼԱԶՈՐԻ ՄԱՍԻՆ

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԻԻՍԱԿ

Below in Table 3 you will find statistics on the aforementioned issue. Although, those that lived on Armenian named streets answered just a bit more³⁴ with “I do not know” or said that the name meant “nothing”, and those that lived on foreign named streets answered a bit less³⁵, the numbers are not enough to prove much. With a larger population of respondents living on a foreign named street, the issue might have been different and significant. In any case, the table still shows us that, relatively speaking, those that live on streets with foreign names knew the name’s meaning with a higher ratio than those living on Armenian named streets.

Table 3 - Armenian and Foreign Street Name Comparison Number of Responses to the Open-Ended Question on the Survey Questionnaire on the Meaning of the Street Name		
	Armenian Name	Foreign Name
Don't Know or Meant Nothing	61	11
Different Response	59	14


Another interesting finding was made when analyzing the contents of Table 3. Artists were the fourth largest group with seven respondents in the open-ended question on the survey questionnaire. Below in Bar Graph 2, a simple bar graph revealed an interesting finding while doing analysis.

Bar Graph 2 analyzes the answers of those respondents who lived on a street with a name which had affiliation to an artist. All respondents who lived on

³⁴ 1.03/1.0 ratio.

³⁵ 0.78/1.0 ratio.

those streets answered with “Extremely Proud” (5) when asked the question “How proud are you of Armenian culture and art?” To put this in perspective, the entire population’s mean was computed too. The mean for the entire population of 151 respondents was 4.61 as opposed to a mean on 5.0 for residents who lived on a street with a name meaning Artist to them. Bar Graph 2 and Bar Graph 3 do a fair job in visually showing the difference between the entire population and those living on a street with a name affiliated with an artist. After more analysis, it is understood that this might be an interesting finding, but the sample is too small to make any real arguments. In any case, this was an interesting matter and definitely something to look into in future research.



Regression and Other Analyses

To compare means, show correlations and conduct other types of analyses, different tools and methods were used. Since many questions on the survey instrument, especially those that related to street names, used a nominal level of measurement and those that had to do with national identity issues used an

interval level of measurement, independent t-testing was frequently used. At the same time, regression analysis was used and different variables were measured to find correlations. Table 4 shows the first set of independent t-testing.

	Type of Street Name	N	Mean	Std. Deviation	Std. Error Mean
Other Cultures Have a Negative Impact on Armenia	Armenian Name	120	2.68	1.167	0.11
	Foreign Name	25	3.24	1.23	0.25

Table 4 shows an independent t-test analysis with two categories of street names being tested. The two categories tested were people living on streets with Armenian names and people who live on a street with a foreign name. The statement in the survey which the respondents needed to answer was “Other cultures have a negative impact on Armenia.” The respondents were asked to answer using a Likert scale with one being “Strongly Disagree” and five being “Strongly Agree.”

As Table 4 shows, the independent t-test that was conducted was statistically significant.³⁶ The next two numbers to pay attention to would be the means for both categories of respondents. Those who lived on an Armenian-named street answered from “Disagree” to “No Opinion” to the question.³⁷ Those who lived on a foreign-named street answered from “No Opinion” to “Agree” to the same question.³⁸

With the test being significant and the mean of each category differing by about 0.6 on a 5-point scale, this finding is important to the research topic. It is important to note that with the Armenian street name population being 120 and the foreign named street population being 25, the sample was still large enough to be significant. The test gives the research a clear understanding that those who live on streets with Armenian names are, comparatively, a little more open and accepting of different cultures as opposed to those who live on streets with foreign names.

³⁶ T-test: $p < 0.05$.

³⁷ Mean = 2.68 for respondents living on Armenian named streets.

³⁸ Mean = 3.24 for respondents living on foreign named streets.

	Street Name Category	N	Mean	Std. Deviation	Std. Error Mean
To be Christian	Military Figure or Affiliation	25	2.8	1.68	0.34
	Cultural Figure or Affiliation	60	3.6	1.42	0.18

Table 5 illustrates another independent t-test. This time the two categories have been altered to include those street names which have a military affiliation compared to street names which have a cultural affiliation. In this test, the population of streets with culturally affiliated names was 60 and those on streets with military affiliation was 25. Again, just as in the earlier tables, this test was conducted using nominal measurement for the categories of street names and a Likert scale for the question of “How important is it to be Christian for being an Armenian?” Respondents needed to choose from a one to five scale, one being “Not Important at All” and five being “Extremely Important.”

The independent t-test was statistically significant.³⁹ The population who lived on a street with a name with military affiliation responded very close to “No Opinion” to the question.⁴⁰ Those who lived on a street with a culturally affiliated name answered between “No Opinion” and “Agree.”⁴¹ With a difference of almost an entire number in the mean’s scale, the test result shows that Christianity being a part of Armenian identity is less important for those who live on streets with names with military affiliation compared to those who live on a street with a culturally affiliated name.

Next, the research focused on two variables, one independent and one dependent variable, on which a regression analysis was conducted. It is important to note that while the two variables were, indeed, important for the survey questionnaire, together they might not answer the research question but rather open up an entirely new set of questions for further research to explore and analyze.

When running a regression analysis with the independent variable being length of residency on a single street and the dependent variable being the answer to “Armenia needs a security partner to survive,” the study found a moderately weak, positive correlation⁴² which was statistically significant.⁴³ In any case, this finding is still a positive correlation with the independent variable

³⁹ T-test = $p < 0.05$.

⁴⁰ Mean = 2.8 for respondents living on military affiliated street names.

⁴¹ Mean = 3.6 for respondents living on culturally affiliated street names.

⁴² Pearson’s correlation: $r = 0.262$, $N = 151$.

⁴³ $p < 0.05$.

affecting the dependent variable in one way or another. Translating this finding would mean that the longer a person resides on the same street, the more they think that Armenia needs a security partner to survive. Of course, there are other variables at play too; this is noted in the above-mentioned text before the regression was analyzed. Age is probably another factor at play, older people might feel safer and more secure with a security partner, more so than younger residents. At the same time, the reasons why someone might move from one place to another can be another factor. Students or residents moving throughout the city due to work or new residents coming from different cities throughout Armenia and even outside Armenia might have differing views regarding this question. Again, as mentioned above, this can be a completely different research question, and one this study will not delve into any further. What we have learned from this regression is that residents in Yerevan who have been living on the same street for a longer period of time are more likely to agree with Armenia needing a security partner in order to survive.

FINDINGS

The analysis of the data and statistics above gives the study the necessary information in order to answer the questions that the study started with. Different street names are having an effect on the residents of the city. Though the effect might be miniscule, as we saw in the tables above, the analysis of the findings is significant. With the population surveyed, the study would be able to say that it has a few findings.

First, many people, almost half those surveyed who lived in Yerevan, do not know what their street name means or the name means nothing to them.

Second, those surveyed that lived on a street with an Armenian name were more open to other cultures compared to those surveyed who lived on a street with a foreign name.

Last, residents who live on a street which is named after a military affiliated figure see Christianity as less important to Armenian identity as opposed to residents who live on a street named after a culturally affiliated figure.

With the information mentioned above, the study accepts H_1 : Street names affect the national identity of residents in Yerevan. With street names being the independent variable and national identity being the dependent variable, it is important to understand that street names are not the only variable at play when it comes to shaping national identity. Street names are just a mere fraction in an equation of hundreds, if not thousands, of variables which shape national identity. But with this study, it is safe to say that street names definitely do play a role in shaping national identity.

CONCLUSION

The research study served its purpose of exploring the interesting topic of Yerevan street names. The research question was thoroughly analyzed and a vast amount of data was retrieved in order to answer the questions. Different types of street names affect residents in different ways. Based on the literature studied and the examples we have seen in world history, it comes as no surprise that place names, and with them street names, are one of the first things changed when a new power is in charge of a territory.

All in all, streets and street names are a part of our everyday lives and usually go unnoticed, but they play an integral role in the way a country's and our own identity are shaped. With the hypothesis being accepted, it seems likely that more focus should be put on the names of the streets in Yerevan and in other cities in Armenia.

RECOMMENDATIONS FOR FURTHER RESEARCH

The subject matter needs to be studied further. There were many gaps in this study due to its limitations. A mixed method research study can help fill in these gaps along with a larger population sample used for analysis. A few interesting findings were identified in the open-ended answers on the survey questionnaire. Unfortunately, this study did not address these findings because it did not fit the scope of the research. If a qualitative approach had been taken, further questioning could have been conducted to gain a deeper understanding of how street names were affecting the residents.

ՓՈՂՈՑԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԵՒ
ԱՆՈՆՅ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ՍԵՐՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
serobabrahamian@gmail.com

Յօդուածը կը քննարկէ փողոցներու եւ հանրային հրապարակներու, զբօսավայրերու անուանափոխութեան ընթացքը, պատճառները եւ անուններուն ազդեցութիւնը ազգային ինքնութեան վրայ:

Հեղինակը կը նշէ թէ փողոցներու անուանափոխութիւն տեղի կ'ունենայ երբ նոր վարչակարգ մը իշխանութեան անցնի: Նոր իշխանութիւնը կը ջանայ առկայ տարբեր ձեւերով իր գաղափարախօսութիւնը հաստատել ու տարածել բնակչութեան վրայ: Այս նպատակին հասնելու միջոցներէն կը նկատուի փողոցներու, հրապարակներու, հանրային վայրերու եւ զբօսավայրերու անուանափոխութիւնը:

Հեղինակը ապա կ'անդրադառնայ Հյաստանի Գ. Հանրապետութեան հռչակումէն ետք կատարուած Երեւանի կարգ մը փողոցներու անուանափոխութեան: Ան կը հարցապնդէ տուեալ փողոցներու բնակիչներ եւ կը կատարէ եզրակացութիւններ, որոնք կը վերաբերին բնակիչներուն՝ իրենց բնակած փողոցներուն անուանատիրոջ մասին իրենց ունեցած գիտելիքին: Հեղինակը կը ջանայ նաեւ փոխկապակցութիւններ գտնել օտարանուն, մշակութային կամ զինոտրական դէմքերու անուններ ունեցող փողոցներուն եւ համապատասխան բնակիչներուն պատասխաններուն միջեւ: Հոսակ, հեղինակը կը հաւաստէ թէ ուսումնասիրութիւնը կարիքն ունի ներգրաւելու աւելի մեծ թիւով հարցապնդուողներ, որպէսզի կարելի ըլլայ աւելի հիմնաւոր եզրակացութիւններ կատարել:



ԵՐԵՔ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԺԸ. ԴԱՐԱԿԷՍԻ, ՎԱՆԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ¹

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Այս յօդուածով քննարկման նիւթ կը դարձնենք երեք դիտարկումներ, որոնք կը վերաբերին հայկական պղինձին եւ կ'առնչուին.- 1) ԺԸ. դարու հայ պղնձագործութեան մրցունակութեան, 2) հայկական պղնձեայ դոյլերու որոշ տեսակի մը (փոքր եւ միջին չափի կաթնադոյլերու) Վանի պղնձագործական արտադրութեան եւ 3) Երուսաղէմի մէջ հայ պղնձագործութեան գոյութեան:

Նկատի առնելով որ առկայ ելակէտային նմուշները սահմանափակ

են, մեր եզրակացութիւնները կարիքն ունին յաւելեալ ապացոյցներու, նոր յայտնաբերումներու, որոնք կրնան յառաջանալ տարբեր կամ յաւելեալ նմուշներու հանրայնացումով, ինչպէս նաեւ այլ գրաւոր կամ փաստագրական նիւթերու ի յայտ գալով:

Ա. դիտարկում.-

ՀԱՅ ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐ ԳԵՐԱԶԱՆՅ ԱՐՀԵՏՍԱԻՈՐՆԵՐ ԷԻՆ ԺԸ. ԴԱՐԱԿԷՍԻ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Որոշ վերապահութեամբ այս հետեւութիւնը կատարեցինք, երբ 14 Մարտ 2023ին, դիմատետրի էջին վրայ հանդիպեցանք Հիլմիա Հիլմիի տե-

¹ Իբրեւ զեկոյց ներկայացուած Սարդարապատի ազգագրութեան թանգարանի կազմակերպած «Հայ մշակոյթի, ինքնութեան հարցեր» վերնագրեալ գիտաժողովին, 13 Մայիս 2023ին:

ղադրած պղնձեայ ամանի մը երեք նկարներուն.- 1) պղնձեայ ամանը, 2) անոր հայերէն կնիքը, 3) արաբատառ արձանագրութիւնը եւ թուականը²:

Յատկանշական է այս պնակը այն իրողութեամբ, որ մեզի անձանօթ են հայատառ կնիքով եւ ոչ-հայու սեփականութիւն ըլլալու արաբատառ արձանագրութիւնը կրող նման պնակներ՝ ԺԸ. դարակէսէն:

Հայերէն կնիք-ստորագրութիւնը ընդամէնը երկու գլխագիր տառեր ունի՝ **Ա** եւ **Գ**: Այս տառերը ազուցուած են իրարու այն աստիճան որ **Գ** տառին գլխիկը մխրճուած է Աի երկու սիւներուն միջեւ, մինչ **Գ** տառին ոտքը նոյնացած է **Ա** տառին երկրորդ ուղղահայեաց սիւնին եւ միայն **Գ** տառին դուրս ցցուած պոչիկը կ'երեւի **Ա**էն դուրս: Այս երկու տառերը տեղաւորուած են կլոր հարթակի մը վրայ, ուստի եւ կնքուելու պարագային կը գոյանայ կլոր շրջանակի մը մէջ դուրս ցցուած վերոյիջեալ երկու տառը: Որոշ է, որ հայ արհեստաւորը հպարտ է իր արտադրութեամբ եւ չի ջանար պարտկել իր հայկական ինքնութիւնը: Ասիկա կ'եզրակացնենք որովհետեւ հայ արհեստաւորը իր վերոյիջեալ ազուցուած **ԱԳ** միացեալ կնիքով բազմաթիւ (շուրջ տաս) անգամներ դրոշմած է իր արտադրած այս պնակին արտաքին յատակին կեդրոնական բաժինը՝ կլոր շրջանակ մը յառաջացնելով այդ կնիքներուն շուրջ:

Պնակը ունի արաբատառ հետեւեալ արձանագրութիւնը՝

صاحبه اسماعيل بن سيد قوميش 1155

Այսինքն՝ իր տէրը՝ Իսմայիլ պըն Սէյիտ Քոմիշ, 1155 (=1742-43):

Թուականէն մեկնելով անվարան կը հաստատուի թէ գործ ունինք 1740ականներուն պատրաստուած պղնձեայ հայագործ պնակի մը հետ: Դժբախտաբար արձանագրութիւնները ոչինչ կ'ըսեն արհեստանոցին կամ պնակատիրոջ գտնուած վայրին մասին: Այդուհանդերձ, այս պնակը հաստատ ապացոյց է որ ԺԸ. դարակէսին ոչ-հայեր (այս պարագային Իսմայիլ պըն Սէյիտ Քոմիշը) պղնձեայ իրեր կը գնէին հայ պղնձագործներէ:

Հարց է, թէ ինչո՞ւ մահմետական այս Իսմայիլը կատարած է այսպիսի գնում մը, նախընտրելով հայու կամ հայկական պղնձեայ արտադրութիւնը: Տրամաբանութեան չի համընկնիր մտածել թէ Իսմայիլ բռնութեամբ (հետեւաբար ճրի) տիրացած է 'իր' պնակին: Որովհետեւ այդ պարագային դժուար է բացատրել թէ ինչո՞ւ ան պահպանած է հայկական կնիքները, որոնցմէ ուրեւ մէկը չի կրեր հետքերը խաթարման կամ եղծումի:

² Այս յօդուածին մաս չի կազմեր ամանին կեդրոնական գծանկարին քննարկումը, որ շատ կը նմանի մեր ունեցած Ուրֆայի հայ պղնձագործ Յակոբ Մանէրեանի ափսէին (տե՛ս՝ Անդրանիկ Տազեսեան, «Յեղասպանութեան զոհ՝ Ուրֆայի պղնձագործութիւնը եւ արհեստագէտ Յակոբ Մանէրեան», ՀՀՀ, 35:2015, էջ 375-98):



Հայերէն դրոշնուած եւ արաբատառ արձանագրութիւն ունեցող պնակը



Պնակին արաբատառ արձանագրութիւնը

Միքանի ենթադրութիւններ կարելի է ընել.-

ա) ոչ-հայերը (այս պարագային մահմետական Իսմայիլը) նախընտրած է հայկական արտադրութիւնը իր որակին, գինին, կամ աղուորութեան պատճառով: Ուստի եւ կրնանք հետեւցնել թէ հայկական արտադրութիւնը անելի մրցունակ էր քան ոչ-հայուն (թերեւս մահմետական կամ յոյն պղնձագործին՝ նայած թէ ու՛ր կ'ապրէին անոնք) արտադրութիւնը:

բ) չկային ոչ-քրիստոնէայ պղնձագործներ: Ասիկա արդեօ՞ք կերթոյլատրէ հետեւցնել, թէ ոչ-քրիստոնէայ պղնձագործները, որոնց կը հանդիպինք ԺԹ. դարու Օսմանեան կայսրութեան Փոքր Ասիոյ տարածքին,

նոր մտած էին արհեստին մէջ, թերեւս ԺԸ. դարակէսին սորվիլ սկսելով հայ, յոյն, կամ հրեայ պղնձագործներէն³:

Մեր դիտարկումը կը նկատենք իրաւացի վարկած, որ սակայն հիմնուած է մէկ ցուցանմուշի վրայ: Այս վարկածը, կրնայ չեղարկուիլ, եթէ կարելի ըլլայ ի յայտ բերել նոյն շրջանի պղնձեայ այլ կամ նման իր մը, ուր արձանագրութիւններուն եւ կնիքին տէրերը հակառակն են: Միւս կողմէ, սակայն, կրնայ մեր այս վարկածը ամրապնդուիլ՝ եթէ ի յայտ բերուի այլ պղնձեայ իրեղէն մը, մեր բնօրինակին նման, թէկուզեւ տարբեր հայ արհեստաւորի կնիքով:



Պնակին հայատառ դրոշմը

Բ. դիպարկում.-

ՈՐՈՇ ՏԱՌԱԴՐՈՇՄՈՎ ՎԱՆԻ ԿԱԹՆԱԴՈՅԼԵՐ

Պէյրուֆի հնավաճառներու մօտ, նաեւ հնութեան ու ժողովրդային շուկաներու մէջ երբեմն տակաւին կարելի կ'ըլլայ հանդիպիլ պղնձեայ կաթնադոյլերու, որոնց մէկ կամ երկու ականջակալներուն դրոշմուած⁴ ըլլայ հայերէն իսկ գլխազիր միակ տառ մը՝ **Ա**, **Ե**, **Թ**, **Մ**, կամ **Ո**: Երբեմն այս տառերը

³ Մեր երկրորդ դիտարկումը նուազ հաւանական կը թուի, որովհետեւ կան ուսումնասիրութիւններ, ուր խօսք կ'ըլլայ ԺԶ.-ԺԷ. դարերու Փոքր Ասիոյ իսլամ, յոյն, հրեայ եւ հայ պղնձագործներու մասին (տե՛ս օրինակ՝ Suraiya Faroghi, *Crafts and the Craftspeople under the Ottomans*, London-New York, I.B.Tauris, 2012):

⁴ Կը գործածենք «դրոշմուած» եզրը, որովհետեւ ասոնք չի թուիր որ ձեռամբ փորագրուած արձանագրութիւններ ըլլան, այլ ականջակալներուն արհեստագիտական բծախնդրութեամբ տպուած-դրոշմուած տառեր են:

դրոշմուած են գլխիվայր: Տարբեր մեծութեամբ այս դոյլերը բացառապէս կարմիր պղինձէ պատրաստուած են: Հանդիպեցանք երկու բացառութեան՝ դեղին փոքրաչափ նմուշներու, մին Երեւանի Լուսիկ Ագուլեցիի տուն-թանգարանին մէջ⁵, միւր օրերս ձեռք ձգեցինք Պէյրութի հնութիւններու շուկայէն⁶: Հանդիպած ենք վերոյիշեալ ականջակալներուն դրոշմուած հայերէն միակ գլխատառի շատ յաճախ մաքուր, երբեմն ալ մաշած (բայց ոչ խաթարուած) նմուշներու:

Հայերէն այս տառերուն ներկայութիւնը անտեղիտալի ապացոյց է, որ ասոնք արտադրուած են հայ արհեստանոցներու մէջ: Դժբախտաբար, ընդհանրապէս պղնձեայ իրերու բացարձակ մեծամասնութիւնը ոչ մէկ արձանագրութիւն ունի. փոքրաթիւ են այն պղնձեղէնները որոնց վրայ կան պատկանողին անունը, կամ թուական մը: Առաւել հազուադէպ են պատրաստող արհեստատրին կամ արհեստանոցին անունը կրող պղնձեայ կաթնադոյլերը:

Մեր երկարատեւ որոնումները կաթնադոյլերու այս տեսակի ծագումին վայրին մասին՝ ապարդիւն անցան, մինչեւ որ Հայաստանի Հանրապետութեան մէջ, հաւաքորդներ տէր եւ տիկ. Նարեկ եւ Արմինէ Դալթեաններու հաւաքածոյին մէջ գտանք միակ օրինակ մը⁷:

Հաւաքածոյին այս կաթնադոյլը կափարիչ ալ ունի, ուր դրոշմուած է «ՎԱՆ 1874» արձանագրութիւնը: Նոյն այս արձանագրութիւնը դրոշմուած է նաեւ կաթնադոյլին բռնակին (կոթին) վրայ: Դեռ ւաւելին, կաթնադոյլին երկու ականջակալներուն վրայ դրոշմուած է **Մ** տառը:

Կը կարծենք, ասիկա անտեղիտալի ապացոյց է որ այս դոյլը արտադրուած է Վանի մէջ, 1874ին, տեղի արհեստանոցներէն մէկուն մէջ:

Կարելի է հետեւցնել թերեւս, որ ականջակալներու վրայ դրոշմուած տարբեր գլխագիրերը կը համապատասխանէին Վանի պղնձագործութեան տարբեր արհեստատրներու/արհեստանոցներու անուններուն:

Մատնանշել պէտք է նաեւ այն, որ գլխագրով դրոշմուած այս ականջակալները ընդհանրական նմանութիւններ ունենալով հանդերձ, կը տարբերին իրենց մանրամասնութեանց մէջ. ոմանք ւաւելի ռճատրուած են, որիշներ ունին ձեւի կամ հարթ տարածութեան մշակման տարբերութիւններ (տե՛ս՝ համապատասխան նկարները):

⁵ Թանգարան մեր այցելութեան (6 Մարտ 2023), մենք հանդիպեցանք այս կաթնադոյլին, որ ունէր 10 սմ հասակ, 11 սմ տրամագիծ եւ կը կշէր 260 կրամ: Անոր ականջակալին դրոշմուած էր **Մ** տառը:

⁶ Մեր ձեռք բերած կաթնադոյլը շատ նման է Ագուլեցիի ցուցանմուշին, դրոշմուած ունի նաեւ նոյն՝ **Մ** տառը:

⁷ Այս նմուշին հանդիպած էինք Յունիս 2022ին: Սակայն Մարտ 2023ին էր որ առիթն ունեցանք ւաւելի մօտէն քննելու զայն եւ ամոլին արտօնութեամբ օգտագործելու այս փաստը:



Կաթնադոյլին կափարիչին դրոշմը՝ «ՎԱՆ 1874» եւ ականջակալին Մ տառը



Նարեկ եւ Արմինէ Դափեաններու հաաքածոյին այլ նմուշ մը,
որ կ'երեւի «Վան» դրոշմը

Մեր այս դիտարկումը առիթ կու տայ ենթադրել-հետեւցնելու թէ դոյլերու ականջակալներուն հայերէն միակ գլխագիր տառով դրոշմուած նման կաթնադոյլերը շատ հաւանաբար պատրաստուած ըլլան Վանի մէջ:

Մեր այս վարկածը կարիքն ունի յաւելեալ փաստարկներու, այլ խօսքով՝ յայտնաբերելի նմուշներու, որոնք ունին Վան տեղավայրի արձանագրութիւնը, որով կարելի ըլլայ ամրապնդել այս վարկածը: Կրնանք ակնկալել նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի այլ տեղավայրերու անունով դրոշմուած կաթնադոյլեր եւս կրնան յայտնաբերուիլ: Մինչեւ այդ, սակայն, որոշ փաստացիութեամբ ամրացուած ենթադրութիւն կը մնայ մեր այս վարկածը:

Գ. դիտարկում.-

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ ԳՈՐԾԱՊԵՆ ԵՆ ՀԱՅ ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐ

Այս հարցադրումը կատարեցինք, երբ ի ձեռի ունեցանք պղնձեայ հինգ նոյնանման փոքրաչափ ամաններ, որոնք կը կրեն նոյն արձանագրութիւնը պնակին կոնակին՝ ՄՂՏՍԻ ՂՈՒԿԱՍ: Հինգ ամաններուն արձանագրութիւններուն մէջ **Ս** եւ **Ի** տառերը ազուցուած են (**Ս**): Իսկ հինգ ամաններէն չորսին պարագային **Ո** եւ **Ի** տառերը եւս ազուցուած են (**Ո**):

Այս պնակները կը կշռեն 1173, 226, 232, 251 եւ 278 կրամ: Անոնց արտաքին տրամագիծը կը տարուբերի 16 եւ 17,5սմ.ի միջեւ, իսկ մետաղին հաստութիւնը՝ 0,8 եւ 1,5 մլմի միջեւ:

Հարց է, թէ ինչո՞ւ ուխտաւոր Ղուկասը իր ծննդավայրէն Երուսաղէմ պիտի բերէր 5 (կամ աւելի) ամաններ եւ ետ տանէր իրեն հետ: Յիրաւի, ան այս պնակները ետ տարած է, այլապէս պնակները պէտք էր արձանագրէին թէ կը նուիրաբերուին Երուսաղէմի (ըսենք՝ «Յիշատակ է ի դուռն Ս Յակոբայ» եւն.) Ս. Յակոբայ վանքին, մանաւանդ որ նման նուիրաբերման արձանագրութեանց յաճախ կը հանդիպինք պնակներու վրայ:

Մեր ենթադրութիւնը հետեւեալն է.-

ա) Ուխտաւոր Յակոբը այս հինգ պնակները իր հետ բերած է իր ծննդավայրէն (կամ զանոնք գնած է ուխտագնացութեան ճանապարհին) եւ անոնց օրհնումէն առաջ կամ ետք պատուիրած սաղէմաբնակ պղնձագործի մը, որ փորագրէ իր անունը, եւ կամ՝

բ) Ուխտաւոր Յակոբը այս հինգ պնակները (թերեւս ալ ուրիշներ) պատուիրած եւ գնած է Երուսաղէմի մէջ, հայ պղնձագործէ մը, կամ ալ սաղիմաբնակ հայ պղնձագործներէ՝ իր ուխտը իրագործելէ ետք:

Մեր երկրորդ ենթադրութիւնը աւելի տրամաբանական կը հնչէ: Արդարեւ, մինչեւ այսօր տակաւին Երուսաղէմ այցելող հայ ուխտաւորներ կրնան իրենց թելը, կամ մարմնի այլ մաս մը դաջել՝ ի յիշատակ իրենց ուխտագնացութեան: Ուրիշ հայ ուխտաւորներ այլ ձեւով կը ջանան 'յաւերժացնել' յիշարժան իրենց ուխտագնացութիւնը, գնելով (կամ յատուկ պատուիրելով) տեղի հայ խեցեգործներէն գաւաթ մը, կամ որեւէ այլ խեցեղէն: Ինչպէս

գիտենք, այսօր, տակալին կան հայ խեցեգործներ Երուսաղեմի մէջ⁸: Մեր երկրորդ ենթադրութիւնը կը հաստատուի նաեւ այն փաստով որ այս հինգ պնակներուն չափագրութիւնները այնքան մը կը տարբերին իրարմէ, որ դժուար թէ ուխտաւոր Յակոբը զանոնք գնած ըլլայ Երուսաղեմի մէջ, հայ տարբեր պղնձագործներէ: Այս պնակներուն տարբեր հայ պղնձագործներէ գնուած ըլլալը, կը հաստատուի նաեւ պնակներուն աշխատելաճոճի նկատառելի տարբերութիւններով:

Արդ, կարելի է վիճարկել. եթէ հայ ուխտաւորներ Երուսաղեմի հայ խեցեգործներէն կրնային եւ կրնան տակալին պատուիրել ու գնել իրենց ուխտագնացութիւնը յիշատակող, անձնականացած (կամ չանձնականացած) խեցեղէն մը, ինչու՞ անհնար պիտի ըլլար խեցեղէնի փոխարէն պղնձեղէն պատուիրել եւ գնել զայն Երուսաղեմի մէջ:

Մենք շատ հաւանական կը նկատենք որ Երուսաղեմի մէջ գործած ըլլան հայ պղնձագործներ, որոնք ուխտաւորներուն համար պղնձեղէն արտադրէին: Այդ պղնձեղէնը կրնար նախապէս պատրաստուած եւ ցուցադրուած ըլլալ արհեստանոցին մէջ, պատուիրատուն կրնար ընտրել չափը ամանին կամ իրին, պատուիրել արձանագրութիւնը եւ աւելի ետք ստանձնել իր պատուէրը: Բնական պիտի ըլլար որ նուազ քան 10,000 մնայուն բնակչութիւն ունեցող օսմանեան Երուսաղեմի մէջ, ուր դարաւոր ներկայութիւն էին հայ ուխտաւորները եւ ուր, օսմանեան շրջանին կը գործէին 45 համքարութիւններ (որոնց շարքին աւելի քան մէկ հատ՝ պղնձագործներու), հայ պղնձագործներու համքարութիւն չգտնուէր⁹:

Եթէ հաստատուի շատ հաւանական թուացող այս փաստը, ապա կարելի է Երուսաղեմի հայ պղնձագործները դնել հայոց պատմական բնօրրանէն եւ Փոքր Ասիոյ տարածքէն դուրս գործած (Հալէպի, Պէյրութի, թերեւս նաեւ ուշ միջնադարու Արեւելեան Եւրոպայի հայկական գաղութներու մէջ գործած հայ պղնձագործ արհեստաւորներու դաշտին մէջ:

Բայց եւ այնպէս, սաղիմաբնակ խեցեգործ Յակոբ Անդրէասեան¹⁰ չկրցաւ հաստատել հայ պղնձագործներու գոյութիւնը Երուսաղեմի մէջ: Հաւանաբար անոնք արդէն անհետացած էին իր մանկութեան, գուցէ եւ աւելի առաջ: Անդրէասեանի դրական հաւաստումը կրնար առաւել ամրապնդել մեր ենթադրութիւնը: Սաղիմաբնակ ուրիշ բարեկամի մը եւս դիմեցինք, որ անանունութեան պայմանով վերահաստատեց Անդրէասեանի ըսածը, աւելցնելով թէ սաղիմաբնակ մեծահասակներ եւս չեն յիշեր հայ պղնձագործներու գոյութիւնը Երուսաղեմի մէջ, բայց կը յիշեն սաղիմաբնակ հայ

⁸ Օրինակի համար նշանաւոր Պալեանները, Յակոբ Անդրէասեան եւն.:

⁹ Suraiya Faroqhi, *Crafts and the Craftspeople under the Ottomans under the Ottomans*, I.B. Tauris, London-New York, I.B.Tauris, 2012, էջ 180-81:

¹⁰ Հաղորդակցութիւն 17 Մարտ 2023:

կլայագործներ¹¹: Իդէա, չենք հանդիպած նոյնանման այսպիսի պնակներու այլ խմբաքանակի, որ առաւել ամրապնդէր մեր ենթադրութիւնը: Չենք հանդիպած նաեւ Երուսաղէմի հայ արհեստանոցի կնիքի, որ կրնար արդէն իսկ աւելորդ դարձնել մեր այս հարցադրումը:



Սաղիմաբնակ Պալեաններու արտադրութեան խոհանոցի պատի սալիկներ

Միւս կողմէ, սակայն ի պատասխան մեր այս յօդուածին, Յակոբ Չոլաքեան, իր 25 Նոյեմբեր 2023 թուակիր ելմակին մէջ կը գրէ. «Իմ լսածներուս համաձայն շատ ուսուցիչներ Երուսաղէմէն իրենց հետ յուշանուէրներ կը բերէին: Ասոնց մէջ կ'ըլլային պղնձեայ պնակներ, արձանագրութեամբ: Կ'ըսուի որ պնակները 12 հատ կ'ըլլային»:

Կարելի է միայն հետեւցնել, որ շուկայի մրցակցութեան չզիմանալով, հայկական պղինձի Երուսաղէմի արտադրութիւնները տեղի տուած ըլլան այլատեսակ (ալիմին, կերպընկալ, խեցեղէն են.) արտադրութիւններու: Թերեւս, վերոյիշեալ կլայագործները վերջին մոտիկաններն էին սաղիմաբնակ հայ պղնձագործներուն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամփոփելով՝ մեր այս քննարկումով, մենք հաւանական կը գտնենք, որ.-
ա) ԺԸ. դարուն հայկական պղինձը կը գերազանցէր Փոքր Ասիոյ ոչ-հայ, մանաւանդ մահմետական պղնձագործներու արտադրութիւնը,
բ) Կաթնադոյլեր, որոնց ականջակալներուն արձանագրուած են հայկական **Ա, Ե, Թ, Մ**, կամ **Ո** գլխազերէն որեւէ մին, Վանի հայ պղնձագործներու արտադրութիւններ են.

գ) Երուսաղէմի մէջ ապրած եւ գործած են հայ պղնձագործներ, թերեւս մինչեւ Ի. դարասկիզբ:

¹¹ Հաղորդակցութիւն 18 Մարտ 2023:



Պղնձեայ հինգ նոյնանման փոքրաչափ ամանները, որոնք կը կրեն նոյն արձանագրութիւնը պնակին կոնակին՝ ՄՂՏՍԻ ՂՈՒԿԱՍ

THREE OBSERVATIONS ON
MID-18TH CENTURY, VAN, AND JERUSALEM ARMENIAN COPPERSMITHS
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN

adakessian@haigazian.edu.lb

Based on unique, single samples, the article infers that a) 18th century Armenian coppersmiths of Asia Minor were competitive in the market to the extent that even Muslims would prefer to buy their handmade plates, b) a certain type of Armenian bucket which had an Armenian capital letter imprinted on the ears of the handles was produced in Van, and c) most probably Jerusalem had a number of Armenian coppersmiths who lived and produced in that pilgrims' city until perhaps the mid-20th century.

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԿԱՐՄԻՐ ՄԱԿԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՐԻԿԵԱՆ
hovhkor78@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայոց պատմության մէջ թերեւս դժուար է գտնել երկրորդ մէկին, ով այնքան սիրուած լինի, ինչքան Վարդան Մամիկոնեանը: Հայ Եկեղեցին հայոց սպարապետին, նրա զինակիցներին ու ապստամբ ժողովրդին հռչակեց յանուն քրիստոնէական հաւատի զոհուած նահատակներ: Սակայն Վարդան Մամիկոնեանի եւ ապստամբների գլխաւոր նպատակը հայոց պետականութեան վերականգնումն էր, եւ Աւարայրի ճակատամարտին Վարդան Մամիկոնեանը մասնակցում է որպէս հայոց թագաւոր: Վարդան Մամիկոնեանի, այնուհետեւ Վասակ Սիւնու՝ հայոց թագաւոր լինելու իրողութիւններին սկզբնաղբիւրների բազմակողմանի քննութեամբ անդրադարձել է Բաբկէն Յարութիւնեանը¹: Կիսելով մեծանուն հայագէտի կարծիքը՝ ստորեւ փորձենք նրա տեսակէտը հիմնաւորել այլ փաստարկներով:

ԿԱՐՄԻՐ ԳՈՅՆԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՎ

Հայոց միջնադարեան մատենագրութեան մէջ Վարդան Մամիկոնեանը, բացի Քաջ, Սուրբ եւ այլ մականուններից, մեծարուել է նաեւ Կարմիր² մականունով: Խօսքը, իրօք, մեծարման եւ պատուանունի մասին է, քանի որ կարմիր գոյնի խորհրդապաշտական-նշանագիտական խորհուրդը հայ միջնադարեան մտածողութեան ու աշխարհընկալման մէջ ունի բացառիկ կարեւորութիւն:

¹ Բ. Յարութիւնեան, «Մովսէս Խորենացու "Պատմութիւն հայոց" երկն ունեցել է "Չորրորդ գիրք"», *Վէմ համահայկական հանդէս*, 3:2012, էջ 169-85: Նոյնիսկ *a priori* կարող ենք հարց տալ, թէ ինչու Վարդան Մամիկոնեանը չպէտք է համարձակուէր թագաւոր լինել, եթէ արդէն Աւարայրի դաշտում դուրս էր եկել սասանեան հզօր բանակի դէմ: Հազիւ թէ Վարդան Մամիկոնեանն ու իր զինակիցները Աւարայրում պաշտպանէին երկրի ներքին այն ինքնավարութիւնը, որի մէջ նրանք գտնուում էին: Աւարայրի ճակատամարտում հայոց բանակը պաշտպանում էր վերականգնուած հայոց թագաւորութիւնը, ինչը Վարդան Մամիկոնեանի մահով նպատակին չհասաւ:

² Կարմիր բառն իրանական փոխառութիւն է (Հրաչեայ Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հղ. Բ, Ե-Կ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1973, էջ 558):

Հայ մատենագիրներից Սեբեոսն է, որ 450-451ի ժողովրդաազատագրական պատերազմի առաջնորդ Վարդան Մամիկոնեանին անուանում է Կարմիր.

Արդ՝ զժամանակս թագաւորութեանն չարագործին Յազկերտի. եւ եթէ ո՛րպէս նա կամեր զաստուածայինն եղծանել կարգս, եւ կամ ո՛րպէս քաջ նախարարացն հայոց եւ նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւքն եւ զաւրաւք իրեանց կազմեալ զինեցան ի պատերազմ, առեալ ի ձեռն զվահանն հաւատոյ, եւ զգեցեալ իբրեւ զզրահ ամրութեան զնախանձն աստուածային բանին, գոգցես թէ առաջի աչաց իսկ ականատես դէմ յանդիման տեսանելով զ՛ի վերուստ առաքեալ նոցա զպսակն...³:

Ալբերտ Մուշեղեանը ժամանակին ցոյց է տուել, որ Սեբեոսը Կարմիր Վարդան է կոչում միայն Աւարայրի հերոսին՝ ի տարբերութիւն 572ի ապստամբութեան առաջնորդ Վարդան Մամիկոնեանի⁴: Սեբեոսի այս տեղեկութիւնը կարեւոր է այն առումով, որ Կարմիր պատուանունը յատուկ է տրուել Վարդան Մամիկոնեանին՝ ընդգծելով նրա առանձնայատուկ կարգավիճակը հայոց աւատատիրական աստիճանակարգում:

Հայոց մէջ կարմիր գոյնի իմաստաբանական, հիմնականում դրական նշանակութիւններին մենք մանրամասն չենք անդրադառնայ, քանի որ հարցը բաւականին լուրջ ուսումնասիրուել է⁵: Կարմիրը նախատիպային (արքետիպային) գոյն է, առաջին գոյնը, որը մարդը ենթարկեց իրեն⁶: Բանահիւսական կենցաղում, ժողովրդական հաւատալիքներում կարմիր գոյնն առաջին հերթին խորհրդանշել է կեանքը՝ որպէս արեան գոյն: Ընդ որում՝ նահատակի արիւնը համարուել է «մաքուր»՝ ի տարբերութիւն «անմաքուր», օրինակ, սպանութեան արեան: Զատկի կարմիր ձուի մէջ խտացուած է բնութեան վերարտադրութեան, կեանքի յարատեւման գա-

³ Պարմութին Սեբեոսի, աշխ.՝ Գէորգ Աբգարեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 64-65. նաեւ՝ Սեբեոս, Պարմութին, արեւելահայերէն թարգմ., առաջ. եւ ծանօթ.՝ Գ. Խաչատրեան եւ Վ. Եղիազարեան, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2005, էջ 43. նաեւ՝ հայր Ներսէս Ալիսեան, Կարմիրն Վարդան եւ Աւարայրի ճակատամարտը ըստ Ղազար Փարպեցու, Մխիթարեան տպ., Վիեննա, 1951, էջ 4:

⁴ Ա. Մուշեղեան, «Վարդանանց պատմութիւնը Եղիշէի եւ Փարպեցու հակընդդէմ մեկնութեամբ», *Գրականագիտական հանդէս*, 15:2014, էջ 41:

⁵ Տե՛ս, օրինակ՝ Ա. Իսրայէլեան, «Գոյնի մոզական ուժը հայ ժողովրդական հաւատալիքներում», *Պարմաբանասիրական հանդէս*, 2:2017, էջ 125-42:

⁶ Мишель Пастуро, *Красный. История цвета, Новое литературное обозрение*, (Միշէլ Պաստուրո, Կարմիր. գոյնի պատմութիւնը), Մոսկուա, 2022, էջ 7:

ղափարը⁷: Կարմիր (ծիրանի⁸) հագուստը, ըստ էության, ցոյց է տուել հասարակական բարձր, արքայական ու ազնուական կարգավիճակ⁹:

Յայտնի է, որ քրիստոնեական խորհրդաբանությամբ առաջացել է անելի վաղ ժամանակների գոյնի խորհրդաբանական պատկերացումների հիման վրայ: Օրինակ, ուշ անտիկ մշակոյթում կարմիրը կապուած էր արեւի, կրակի, ամռան եւ պատերազմի աստուած Մարսի հետ¹⁰:

Ծիրանին արքայական գոյն էր նաեւ Աքեմէնեան Պարսկաստանում, սակայն Քսենոփոնի որոշ տեղեկութիւններից կարելի է ենթադրել, որ պատմիչի համար ծիրանին նաեւ կարմիրի հետ է նոյնացուել¹¹, քանի որ

⁷ Ա. Ստեփանեան, «Հայ ժողովրդական տարագի զարդանախշերը (ծիսային, գունային եւ նշանային համակարգեր)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիստութիւն, պր. 22*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 31, 39:

⁸ Ծիրանի ու կարմիր զգեստը որպէս արքայականութեան նշան յայտնի էր հնագոյն, օրինակ, մարական, արեմէնեան, հելլէնիստական ժամանակներից (Xenophon, *Cyropaedia*, Vol. I, with an English translation by W. Miller, Harvard University Press, Cambridge-Massachusetts, London, 1960, Loeb Classical Library, I, III, 2, էջ 26. նաեւ նոյնի՝ *Cyropaedia*, Vol. II, with an English translation by W. Miller, Harvard University Press, London, New York, 1914, Loeb Classical Library, VIII, III, 3; 13, էջ 348, 354. նաեւ՝ Rufus Curtius Quintus, *History of Alexander*, Vol. I, with an English transl. by John C. Rolfe, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1971, Loeb Classical Library, III, III, 17, էջ 84. նաեւ՝ Элиас Бикерман, *Государство Селевкидов*, (էլիաս Բիկերման, Սելեւկեանների պետութիւնը), «Գիտութիւն» հրատարակչութեան արեւելեան գրականութեան գլխ. խմբ., Մոսկուա, 1985, էջ 33): Հին եգիպտացիների ու յոյների համար ծիրանին աստուածների, հերոսների ու թագաւորների գոյնն էր (Homer, *The Odyssey*, Vol. II, with an English translation by A. T. Murray, G.P. Putnam's Sons, London-New York, 1919, Loeb Classical Library, XIX, 225, էջ 244. նաեւ՝ *Herodotus*, with an English translation by A. D. Godley, Vol. I, Books I-II, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1975, Loeb Classical Library, II, 132, էջ 434. նաեւ՝ *Herodotus*, with an English translation by A. D. Godley, Vol. II, Books III-IV, William Heinemann, New York, London, 1928, Loeb Classical Library, III, 20, էջ 26):

⁹ Հայր Վարդան Հացունի, *Պատմութիւն հին հայ փարագին*, Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 165, 169, 171:

¹⁰ Николай Котанджян, Цвет в раннесредневековой живописи Армении (Анализ памятников VI-VII вв.) (Նիկոլայ Բոթանջեան, Գոյնը Հայաստանի վաղ միջնադարեան գեղանկարչութիւնում (VI-VII դդ. յուշարձանների վերլուծութիւն), «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1978, էջ 18:

¹¹ Xenophon, *Cyropaedia*, Vol. II, VI, IV, 1; VII, I, 2, էջ 190, 202. նաեւ՝ Xenophon, *Anabasis*, with an English translation by Carleton L. Brownson, Vol. III, Books I-VII, Harvard University Press, Cambridge-Massachusetts-London, 1980, Loeb Classical Library, I, V, 8, էջ 50: Ե՛ւ հին յունարէն πορφύρεοςը (ծիրանի, վառ կարմիր, վարդագոյն), ե՛ւ φοινικεόςը (կարմիր) իմաստային առումով ուղղակիօրէն կապուած

զինուորականության գոյնը կարմիրն է եղել, յատկապես եթե նկատի ունենանք, որ *Կիրոսպեդիայից* մեջքերուած հատուածներում յիշատակուած Կիրոս Բ. Մեծն իր բանակի միջավայրում ներկայանում է որպէս ռազմիկ, զորավար: Հերոդոտոսի տեղեկութիւններից պարզուած է, որ կարմիր թիկնոցը, որը կրել է Դարեհ Ա.ն, խորհրդանշել է թագաւորական եւ զինուորական իշխանութիւնը¹²:

Ծիրանագոյն զգեստով էր մարաց Աժդահակ թագաւորի երագում յայտնուած կինը՝ Հայկազեան Տիգրանի մայրը¹³, ինչը խօսում է այն մասին, որ հայ իրականութեան մէջ եւս ծիրանին արքայականութեան խորհրդանիշ է: Ինչ վերաբերում է կարմիր գոյնին, ապա դատելով Վահագնի «հուր մազերից, բոց մօրուսից»¹⁴, կարմիրը եղել է ռազմի աստծոյ, զինուորական դասի գոյնը, ինչը համապատասխանում է այլ աղբիւրների տեղեկութիւններին: Խորենացին նաեւ հաղորդում է, որ կարմիր կօշիկը արքայական իշխանութեան խորհրդանիշ է, ընդ որում՝ Արտաշէս Ա.ն մէկ ոտքին կարմիր կօշիկ կրելու իրաւունքը տալիս է միայն Արգամին¹⁵: Խորե-

են կարմիրն՝ լինելով վերջինիս տարբեր երանգները, անկախ այն հանգամանքից, որ այդ բառերի իմաստներից մէկը նաեւ ծիրանին է (*Древнегреческо-русский словарь, Том II, составил И. X. Дворецкий* (Հին յունարէն-ռուսերէն բառարան, հտր. Բ), կազմ.՝ Իոսիֆ Խանանովիչ Դուրեցկի, Օտար եւ ազգային բառարանների պետական հրատ., Մոսկուա, 1958, էջ 1358, 1740. նաեւ՝ Юлия Викторовна Норманская, *Генезис и развитие систем цветообозначений в древних индоевропейских языках* (Եուլիա Վիկտորովնա Նորմանսկայա, Գունանշանների համակարգերի ծագումը եւ զարգացումը հին հնդեւրոպական լեզուներում, ՌԳԱ Լեզուաբանութեան ինստիտուտ), Մոսկուա, 2005, էջ 29): Չմոռանանք, որ ծիրանին ստացուել է կարմիր գոյնի հետ կապոյտի կամ մանուշակագոյնի խառնումից:

¹² *Herodotus, Vol. II, III*, 139, էջ 173:

¹³ Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց*, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1991, էջ 75: Մէկ այլ տեղում ծիրանին համարում է կայսերական իշխանութեան խորհրդանիշ (էջ 236):

¹⁴ Նոյն, էջ 86: Հմմտ. նաեւ՝ Վահագնի խարտեաշ-դեղնակարմիր լինելն ու ծիրանի ծովը (կամ արին-ծովը), կարմիր եղէգնիկը (Հ. Աճառեան, *Հայերէն արմազական բառարան, հպր. Բ*, էջ 349), որով ներկայացում է Վահագնի ծննդի միջավայրը:

¹⁵ Խորենացի, էջ 174: Ելնելով այն իրողութիւնից, որ Արտաշէս Ա.ն իր դայեակ Սմբատին չի արժանացնում կարմիր կօշիկ կրելու պատուին, ենթադրում ենք, որ Խորենացու՝ մէկ ոտքին կարմիր զգեստ կրելը վերաբերում է կարմիր կօշիկին, չնայած բացառուած չէ, որ, բացի կօշիկից, խօսքը վերաբերուի նաեւ անդրավարտիքի մէկ ոտքը կարմիր գոյնով ներկուած լինելուն: Ստեփանոս Օրբէլեանը եւս յայտնում է, որ Սինեաց իշխանները հին ժամանակներից կարմիր կօշիկ

նացու տեղեկություններից մեկից պարզում է, որ պլանների թագաւորի հետ խնամհացող Արտաշէս արքան Սաթենիկի համար պլանների թագաւորին տալիս է նաեւ կարմիր մորթ¹⁶, այսինքն՝ տուեալ դէպքում կարմիրն արքայական իշխանութեան գոյն է: Ընդ որում, Խորենացու տուեալ տեղեկութիւնում յիշատակուած ոսկեօղ շիկափոկ պարանը (ոսկեգոյն, շէկ գոյնը) եւս խորհրդանշում է արքայական կարմիր գոյնը, որով գերեվարում է արքայադուստր Սաթենիկը:

Հետաքրքիր է, որ եւրոպական միջնադարում կարմիրը բացասական իմաստով խորհրդանշում էր ասպետների որոշակի դասը, ինչը երեւում է Արթուր թագաւորի մասին պատմող ԺԲ.-ԺԳ. դարերի վէպերից¹⁷:

Ընդհանրապէս, Խորենացու տեղեկութիւններից երեւում է, որ արքայական իշխանութեան գլխաւոր գոյնը ոսկեգոյնն էր, այսինքն՝ կարմիրի տարբերակներից մէկը, եւ ոսկու հետ կապուած իրերը¹⁸: Ըստ էութեան, ոսկին եւ արծաթը համարուել են նաեւ զինուորականութեան գոյներ, քա-

հագնելու իրաւունք են ունեցել (*Պատմութիւն նահանգին Սիսական*, տպ. Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1910, էջ 15): Սիւնեաց պատմիչի այս տեղեկութիւնը ճիշտ է թէ՛ սխալ՝ այնքան էլ էական չէ, կարեւորն այն է, որ կարմիր կօշիկ կրելու մասին յիշատակութիւնը կրկին խօսում է գոյգ կօշիկ կրելու իրաւունքը միայն հայոց թագաւորի մենաշնորհ լինելու մասին: Կարմիր կօշիկներ կրելու իրաւունքը պատկանում էր նաեւ բիզանդական կայսրերին, ընդ որում՝ կարմիր հագուստներ կրում էին նաեւ կայսրուհիները (B. Kiilerich, “Attire and Personal Appearance in Byzantium,” in *Byzantine Culture: Papers from the Conference ‘Byzantine Days of Istanbul’ held on the occasion of Istanbul being European Cultural Capital 2010*, Istanbul, May 21-23 2010, ed. by D. Sakel, Türk Tarih Kurumu, Ankara, 2014, էջ 445): Ըստ էութեան, Մօրիկ կայսեր կօշիկը, որի մասին հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, կարմիր գոյն է ունեցել (Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ գիտութիւնների ակադեմիայի հրատ., Երեւան, 1961, էջ 48): Պատմիչը կայսերական թագը եւ կօշիկը բարձրագոյն իշխանութեան խորհրդանիշեր է համարել:

¹⁶ Խորենացի, էջ 179:

¹⁷ Мишель Пастуро, *Символическая история европейского средневековья* (Միշէլ Պաստուրօ, Եւրոպական միջնադարի խորհրդաբանական պատմութիւնը), «Ալեքսանդրիա» հրատ., Սանկտ-Պետերբուրգ, 2019, էջ 217:

¹⁸ Խորենացի, էջ 174, 190. նաեւ՝ *Փառաբանի Բիզանդացոյ պատմութիւն հայոց*, բնագիրը՝ Բ. Պատկանեանի, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, էջ 354, 375. նաեւ՝ Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիր եւ ներած.՝ Վ. Առաքելեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1983, էջ 198. նաեւ՝ Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, աշխատ.՝ Վ. Մ. Վարդանեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1985, էջ 442. նաեւ՝ *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերպոցոյ պատմութիւն հայոց*, աշխարհ. թարգմ. եւ ծանօթ.՝ Գ. Բ. Թոսունեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1996, էջ 200, 286 են.:

նի որ Ձիրաւի դաշտում հռոմէացիները զինուած էին ոսկեայ եւ արծաթեայ զէնքերով¹⁹, ինչը, բացի հռոմէական զօրքի հզօրութիւնից, այլաբանօրէն ցոյց է տուել պարսիկների դէմ քրիստոնէական արդարացի կռիւը, աստուածային լոյսը²⁰, քանի որ ոսկէ²¹ եւ արծաթէ զէնքերով չեն կռուում (զինուորների հանդերձանքի եւ սպառազինութեան որոշ մասեր կարող էին ոսկուց ու արծաթից պատրաստուած լինել²²):

Այն, որ ոսկին իր գոյնով խորհրդանշել է արքայական իշխանութիւն, պարզ երեւում է նաեւ Վասակ Սիւնու արքայական զգեստից, որով ներկայանում է Յազկերտ Բ.ին: Եղիշէն Վասակի հանդերձների մասին գրում է.

Եւ եղեւ յաւոր միոջ մեծի զամենայն երեւելի զպատուականսն հրամայէր յընթրիս կոչել: Կոչեցին եւ զուրացեալն. եւ նա ըստ առաջին կարգի արինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր եւ զպատուաւորսն եւ զխոյրն ոսկեղէն դներ ի վերայ, եւ զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդերուզեալ մարգարտով եւ ակամբք պատուականաւք ընդ մէջ իր ածէր, եւ զգինդսն յականջսն, եւ զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն

¹⁹ Խորենացի, էջ 303:

²⁰ Сергей Сергеевич Аверинцев, *Поэтика ранневизантийской литературы* (Սերգէյ Սերգէեւիչ Աւերինցեւ, Վաղ բիզանդական գրականութեան պոետիկան), «Ազրուկա-կլասիկա» հրատ., Սանկտ-Պետերբուրգ, 2004, էջ 410-11:

²¹ Միջնադարի քրիստոնէական նշանագիտութեան մէջ ոսկին համարուել է հոգեւոր անապակութեան ցուցիչը: Բիզանդական իրականութեան մէջ ոսկին, արտացոլելով Աստուծոյ փառքը, ուղղակիօրէն յարաբերում է այդ փառքի անձնաւորումը հանդիսացող հրեշտակներին: Ծիրանիի նման, ոսկին եւս արքայական արժանապատուութեան խորհրդապատկերն է (< Քէսուէան, *Հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութիւն*, «Մատենադարան» հրատ., Երեւան, 2021, էջ 141-42): Հին Հռոմում դեղինը սրբազան գոյն էր (Пастуро, *Символическая*, էջ 218), ինչը նշանակում է, որ, ըստ Խորենացու, քրիստոնէայ հռոմէացիներն ու հայերը կռուում էին անհաւատ պարսիկների դէմ:

²² Հմմտ.՝ Համլէտ Պետրոսեան, «Ոսկին հայ միջնադարեան աշխարհընկալման համակարգում», *Հին Հայաստանի ոսկին*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 63: Պետրոսեանը, անդրադառնալով Ձիրաւի ճակատամարտում հայերի ու հռոմէացիների սպառազինութեանը, գրում է.

ոսկէ, արծաթէ եւ պղնձէ զանազան մակերեսները արելի ճառագայթների անդրադարձումներով եւ իրենց սեփական փայլով ոչ միայն թշնամու համար ճնշող հոգեբանական մթնոլորտ են ստեղծում, այլեւ կռուին տալիս են տիեզերական ակտի պլեգորիա» (անդ, էջ 64):

Նկատենք, որ արեմէնեանների՝ անմահների բիւր կոչուած ընտիր զօրամասի հանդերձանքը եւս շողշողում էր ոսկու առատութիւնից (*Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V-VII*, Harvard University Press, London-Cambridge-Massachusetts, 1938, Loeb Classical Library, VII, 83, էջ 390):

զգիկամբքն. եւ զամենայն արէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս. շքեղ եւ երեսելի քան զամենեսեան երեսէր բազմութեանն²³:

Ինչպէս տեսնում ենք Վասակի զգեստներն ու պատիւներն իրօք արքայական են եղել, ու պատահական չէ, որ ոսկեղէն խոյրը, ոսկեծոյլ կամարը, գինդերը համադրելի են վերետում մէջբերուած հայոց թագաւորների իշխանութեան գոյների հետ: Այս առումով, Եղիշէի տեղեկութիւնը որոշակիօրէն համադրելի է Խորենացու՝ վերետում մասամբ մէջբերուած այն տեղեկութեանը, թէ Արտաշէս արքան Արգամին տալիս է երկրորդական գահը՝ նրան պատուելով յակինթներով զարդարուած պսակով, երկու ականջներին գինդերով, մի ոտքին կարմիր կօշիկով, ինչպէս նաեւ թոյլ է տալիս գործածելու ոսկէ գդալ եւ պատառաքաղ ու ոսկեղէն գաւաթներով գինի խմել²⁴: Արգամը թագաւորից յետոյ երկրորդ կարետոր անձն էր պետութեան մէջ: Նոյն կերպ, Վասակն իր պատիւները կարող էր ստացած լինել միայն Սասանեան Իրանի արքայից արքայ Յակերտ Բ.ի կողմից, այսինքն՝ Վասակը Սասանեան Իրանի տիրակալի կողմից ժամանակին ճանաչուել էր ստորակայ թագաւոր²⁵: Վասակը աւատատիրական յարաբերութիւնների պայմաններում չէր կարող առանց իր տիրոջ՝ Յակերտ Բ.ի թոյլտուութեան կրել նման զգեստներ ու պատիւների արժանանալ²⁶ (հմմտ. «Եւ նա [Վասակը] ըստ առաջին կարգի արինացն

²³ Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին», *Մատենագիրք Հայոց, Ա. հատոր, Ե. դար*, Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 680-81:

²⁴ Խորենացի, էջ 174: Աբասեանների արքունիքում կարմիր կօշիկներ կրելու իրաւունքը պատկանում էր միայն խալիֆին (Dj. Khaleghi-Motlagh, BĀR. i. From the Achaemenid Through the Safavid Period, <https://www.iranicaonline.org/articles/bar-audience?fbclid=IwAR31VVQ3h-eV5SFSShkLymgWk4fkAjBml7AzpbVz26JWewXTyS6rR6cvH1vE> մատչում՝ 25 Ապրիլ 2023): Ըստ Ստեփանոս Ասողիկի՝ ոսկեճամուկ ծիրանիով արաբ խալիֆներն են պճնազարդուել (*Սրտեփանոսի Տարօնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական*, հրատ. Ստ. Մալխասեանց, տպ. Ի. Ն. Սկորոխոբով, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 104):

²⁵ Հմմտ.՝ Յարութիւնեան, «Մովսէս Խորենացու», էջ 177:

²⁶ Համեմատութեան համար նշենք, որ Սասանեան Խոսրով Բ. Փարուէզ արքայից արքան իր իօր՝ Որմիզդի գօտիով ու սուսերով, թագաւորական հանդերձներով, ոսկի անօթներով, ոսկեզօծ արտախորակներով (խոյր, ապարօշ), մարգարիտներով ու թանկագին քարերով հիւսուած զանգապանակով, բեհեզեայ գդակով, ոսկեզօծ պատմուճանով, ականակապ վարսակալով ու մանեակով, արծաթեայ գահերով, նժոյգով՝ արքունական սանձով ու թամբով է պատում Վրկանի մարգպան Սմբատ Բագրատունուն, որը պարսից արքունիքում երրորդ նախարարն էր (Սեբէոս, *Պատմութիւն*, էջ 112, 118, 122, 126, 128): Սեբէոսի տեղեկութիւններից

արքունի»), առանց Սասանեան շահնշահի թոյլտուութեան Վասակի իշխանութիւնը Հայաստանում օրինական չէր համարուի, այսինքն՝ հայ նախարարները Վասակի իշխանութիւնը չէին ընդունի:

Շարունակելով կարմիր գոյնի իմաստաբանութեան քննութիւնը՝ նշենք, որ միջնադարեան եկեղեցական խորհրդաբանութեան մէջ եկեղեցու կարմիր վարագոյրը, որ «Աստուածային գոյր» սահմանազատում է «ստորադաս արարածներից», իր այդ գոյնով Աստծոյ գաղափարի կրողն է²⁷: Կարմրի հետ աղերսուած է ծիրանին, որ ակնարկում է Քրիստոսի արքայական հանգամանքը²⁸, ընդ որում՝ պատահական չէ, որ ծիրանի կրելը վերապահուած էր բացառապէս քիզանդական կայսրերին:

Միջնադարի աստուածաբանական միտքը կարմիրը (Աստուած) բարձր էր դասում միա գոյներից, այդ թւում նաեւ կապոյտից (հրեշտակներ)²⁹:

ակնյայտ է, որ Սմբատ Բագրատունին բացառիկ, կարելի է նոյնիսկ ասել արքայական պատիւների է արժանացել Սասանեան հզօր տիրակալի կողմից, սակայն Սմբատ Բագրատունու պատիւները չեն կարող Աւարայրի ճակատամարտից 150 տարի յետոյ վկայել նրա թագաւոր լինելու մասին: Հայոց մեծանուն զօրավարը նման փառքի էր արժանացել միայն իր ռազմական փայլուն յաղթանակների համար:

²⁷ Քէօւէեան, էջ 136: Հետաքրքիր է Գ. Նալբանդեանի այն կարծիքը, որ Աշտարակի Կարմրատր, Սպիտակատր, Ծիրանատր եկեղեցիների անունները հնարատր է կապ ունեն ոչ թէ շինաքարի գունանունների, այլ անտարանիչներ Մարկոսի, Ղուկասի եւ Մատթէոսի համապատասխանաբար կարմրագոյն, սպիտակագոյն եւ ծիրանագոյն թիկնոցների կամ կենդանապատկերների հետ, այսինքն՝ ծիրանատր նշանակել է ծիրանի կրող են. (Գ. Նալբանդեան, «Աշտարակի եկեղեցիների անուանումների խորհրդանշական ստուգաբանման շուրջ», *Հայոց սրբերը եւ սրբավայրերը*, «Հայաստան», Երեւան, 2001, էջ 192-99):

²⁸ Քէօւէեան, էջ 136: Ծիրանի պատմուճան կրում էին հին Հռոմի թագաւորները (Ն. Մաշկին, *Հին Հռոմի պայմանութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1951, էջ 152): Նկատենք, որ հնագոյն ժամանակներից սկսած ծիրանին շատ թանկարժէք էր, բարձրորակ եւ պատրաստում էր շատ մեծ դժուարութեամբ, հետեւաբար ծիրանի գործուածքներ կրելը ցոյց էր տալիս տուեալ անձի հասարակական բարձր կարգավիճակը, իսկ ժամանակի ընթացքում միայն ծիրանի գործուածքներից պատրաստուած հագուստ կրելը դառնում է հռոմէական եւ քիզանդական կայսեր մենաշնորհը, քանի որ ծիրանի զգեստը խորհրդանշում էր բացարձակ իշխանութիւնը եւ աստուածային էութիւնը (Մ. Պաստրո, *Красный*, էջ 31-33): Օրինակ, Պլուտարքոսը նշում է, որ Մարկոս Անտոնիոսի ծիրանի թիկնոցը շատ թանկարժէք էր (*Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, Vol. IX, Harvard University Press, London- Cambridge-Massachusetts, 1959, Loeb Classical Library, Antony, XXII, էջ 184*):

²⁹ Քէօւէեան, էջ 137:

Կարմիր գոյնը խորհրդանշում է կեանքն ու մահը³⁰, Քրիստոսի արհմը, մարտիրոսական չարչարանքը³¹, եւ այս առումով - գոնէ նախնական – կարող ենք մտածել, որ Վարդան Մամիկոնեանին Կարմիր մակդիրը գուցէ տրուել է եկեղեցու կողմից՝ որպէս քրիստոնէական հաւատի համար նահատակուած հերոս³²:

Բայց նկատի ունենանք, որ կարմիրը (նաեւ ծիրանին), օրինակ հին Իրանում, հնագոյն ժամանակներից հասարակութեան ռազմական դասի հագուստի գոյնն էր, որը նաեւ արքայական հագուստի (անաքսիրիդ-պարսկական երկար ու նեղ անդրավարտիք) գոյներից մէկն էր³³:

Գոյների խորհրդաբանութեան մասին խօսելիս, պէտք է նկատի ունենանք, որ նոյն կարմիր գոյնի իմաստաբանութիւնը ժամանակի ընթացքում ենթարկում էր որոշակի փոփոխութիւնների: Օրինակ, անտիկ մշակոյթի ընկալման մէջ կարմիրը դեղինի հետ անտիկ գոյներն են. կարմիրը

³⁰ Անիում՝ «փոքրիկ իշխանուիտ» դամբարանում, աճիւնը դրուած է եղել ասեղնագործ մետաքսեայ կարմիր կտորի վրայ (Иосиф Абгарович Орбели, *Избранные труды*, Իոսիֆ Աբգարովիչ Օրբելի, Ընտիր երկեր, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1963, էջ 44-46), ինչը տուեալ դէպքում մահուան խորհրդանիշն էր:

³¹ Նահատակութեան կարմիր գոյնով ոտնամաններ կրում էին նաեւ կաթոլիկ եկեղեցու պապերն ու եպիսկոպոսները (E. Panou, “Colour in Byzantine Historiography (13th–15th Centuries),” *Βυζαντινά Σύμμεικτα*, 29:2019, Athens, էջ 204-5): Քրիստոնէական իմաստաբանութեան տեսանկիւնից (ծնունդ ու մահ) պէտք է բացատրել սրբերի կառքի նկարագրութեան վերաբերեալ Մովսէս Դասխուրանցու կարմիր գոյնի մասին (սպիտակ ձիերի պոչերը կարմիր ներկելը, կարմրագոյն ընդելուզուած կերպասներ) միքանի տեղեկութիւնները (Կաղանկատուացի, էջ 62, 69): Չնայած կարող ենք ենթադրել, որ այդ նկարագրութեան մէջ կարմիրը կապուած էր նաեւ Հայոց Արեւելից կողմերում արքայական իշխանութեան իմաստաբանութեան հետ:

³² Հմմտ.՝ *Ղազարայ Փարպեցոյ պատմութիւն հայոց*, «թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիր՝ Գ. Տէր Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց, ԵՊՀ հրատ., Երեւան, 1982, էջ 80:

³³ Бободжан Гафурович Гафуров, *Таджики. Древнейшая, древняя и средневековая история*, (Բորոջան Գաֆուրովիչ Գաֆուրով, Տաջիկներ. հնագոյն, հին եւ միջնադարեան պատմութիւնը), Գիրք Ա, 2րդ հրատ., «Իրֆոն» հրատ., Դուշանբէ, 1989, էջ 38-39. նաեւ՝ Sh. Shahbazi, Clothing ii. In the Median and Achaemenid periods (https://www.iranicaonline.org/articles/clothing-ii?fbclid=IwAR10_cvmR-6QXlZBgWU356fjZlFQw1RcbTwDbIzZZ1futl1UWQHAI4aAJ20o , մատչում՝ 18 Ապրիլ 2023); Xenophon, *Cyropaedia*, Vol. II, VIII, III, 13, էջ 354. նաեւ՝ J. Rose, “Sasanian Splendor: The Appurtenances of Royalty,” *Robes and Honor: The Medieval World of Investiture*, ed. by S. Gordon, Palgrave Macmillan, New York, 2001, էջ 37:

զգայականության իրական գոյնն է³⁴: Իսկ մենք վերետում տեսանք, որ քրիստոնէութեան մէջ կարմիրի խորհորդն այլ էր՝ կապուած լինելով աստուածաբանական իրողութիւնների հետ: Միջնադարեան Երոպայում Հռոմի պապը եւ կարդինալները հագնում էին կարմիր կամ կարմիր ու սպիտակ զգեստ: ԺՁ. դարից սկսած Հռոմի պապի հանդերձանքի մէջ սպիտակը սկսում է գերիշխել եւ մեր ժամանակներում պապի միայն կօշիկներն են կարմիր մնացել³⁵:

Պէտք է նշել, որ գոյների իմաստաբանութիւնը կարելի է մեկնաբանել ե՛ր դրական, ե՛ւ բացասական տեսանկիւնից: Կայ վատ եւ լաւ կարմիր գոյն: Միջնադարեան Երոպայում այսպէս ասած վատ կարմիրը հակադրում էր աստուածային եւ քրիստոսաբանական սպիտակին եւ ուղղակիօրէն կապում էր սատանայի, դժոխքի ու Յուդայի հետ: Կարմիրը դժոխքի կրակի եւ սատանայի դէմքի գոյնն է, եւ ԺԲ. դարից յետոյ Երոպայում սատանան անելի յաճախ է պատկերում այլ վարսերով ու կարմիր դէմքով³⁶:

ԿԱՐՄԻՐ ԳՈՅՆԻ ՆՇԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՅԼ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Ելնելով մեր առջեւ դրուած նպատակից, բնականաբար, պէտք է ցոյց տանք, թէ կարմիր գոյնն ի՛նչ նշանակութիւն է ունեցել Հայաստանի հարեան երկու հզօր տէրութիւնների՝ Բիւզանդիայի (Արեւելահռոմէական կայսրութիւն) եւ Սասանեան Իրանի հասարակական-քաղաքական եւ գաղափարախօսական կառոյցներում: Ակնյայտ է, որ կարմիր գոյնի նշանա-

³⁴ Освальд Шпенглер, *Закат Европы*, (Օսվալդ Շպենգլեր, Երոպայի մայրամուտը), «Տենիկս» իրատ., Դոնի Ռոստով, 1998, էջ 356: Օրինակ, իին սլաւոներէնում կարմիր-«красный» բառը նախապէս ունեցել է «красивый»-գեղեցիկ նշանակութիւնը (Николай Максимович Шанский, Валерий Васильевич Иванов, Тамара Васильевна Шанская, *Краткий этимологический словарь русского языка*, (Նիկոլայ Մաքսիմովիչ Շանսկի, Վալերի Վասիլիւիչ Իւանով, Տամարա Վասիլիւնա Շանսկայա, Ռուսաց լեզուի համառօտ ստուգաբանական բառարան), «Լուսատրոյութիւն» իրատ., Մոսկուա, 1971, էջ 219): Անտիկ խորհրդաբանութեան մէջ կարմիրի եւ ծիրանի ընկալման մասին մանրամասն տե՛ս՝ L. Llewellyn-Jones, “Body and Clothing,” *A Cultural History of Color in Antiquity*, ed. by D. Wharton, Bloomsbury Academic, London, 2021, էջ 90-95:

³⁵ Пастуро, *Красный*, էջ 51: Ամբողջովին կարմիր հանդերձանք էին կրում Կարոլինգեան արքայատոհմի կայսրերը: Կարմիր պատմուճան էին կրում Երոպայի բազմաթիւ թագաւորներ: Երոպայի ամբողջ ազնուական դասն էր կրում կարմիր գոյնի հագուստներ, թագաւորների, ազնուականների դրօշների ու զինանշանների գոյների մէջ կարմիրը գերիշխող էր (անդ, էջ 51-53): Կարմիր գոյնի նման տիրապետութիւնը ցոյց է տալիս, որ այն ուղղակիօրէն զուգորդում էր իշխանութեան գաղափարի հետ:

³⁶ Пастуро, *Символическая*, էջ 217. նաեւ նոյնի՝ *Красный*, էջ 17-18, 45-46:

գիտական կարեւորութիւնն ընդգծուած է նաեւ Սասանեան Իրանի մտահոգեւոր պատկերացումներում: Այսպէս, կարմիր-սպիտակ-կապոյտ (տարածուած էր նաեւ կարմիր-կապոյտ համադրութիւնը) համադրութեամբ զգեստներն արտացոլել են օրինակ տիեզերքի երեք՝ վերին, միջին, ստորին շերտերը, համապատասխան որոնց բաժանուած էր հասարակութիւնը: Վերին շերտը սպիտակն է (վերնաշապիկը), միջին շերտը՝ կապոյտը (անդրավարտիքը), ստորինը՝ կարմիրը (կօշիկը): Խոսարով Բ. Փարուէզի վերնաշապիկում այս երեք գոյներն առկայ են³⁷: Աւելի վաղ ժամանակներում կարմիր գոյնը տիրապետող է եղել, յատկապէս երբ այն ազնուականութեան գոյնն է եղել: Պարսկական բանակում եղել է հագուստի աստիճանակարգ՝ ըստ կարմրի չորս երանգների³⁸: Կարմիր պատմունճան է կրել Սասանեան Բահրամ Բ. արքայից արքան³⁹, ինչը համադրելի է Հռոմի, Բիզանդիայի կայսրերի եւ հայոց թագաւորի հանդերձանքի հետ: Անկասկած, կարմիրը Սասանեանների համար, անկախ սեռից, եղել է արքայական գոյն, չնայած նրանցից ոմանք, ինչ-ինչ քաղաքական հանգամանքների բերմամբ, կարող էին այդ գոյնը չօգտագործել⁴⁰: Իրանի հասարակ ժողովրդի հագուստի մէջ եւս կարմիր գոյնը շատ էր տարածուած: Կարմիրի նման տարածումը պայմանաւորուած էր արեան, բնութեան վերածննդի, թաղման ծիսակատարութեան առնչուած իրողութիւններով⁴¹:

³⁷ S. Yatsenko, “Colour Combinations in the Costume of three Pre-Islamic Dynasties of Iran against the Background of the Synchronous Iranian World,” *Proceedings of the 7th International Congress on the Archaeology of the Ancient Near East, 12 April – 16 April 2010*, the British Museum and UCL, London, Vol. 2, *Ancient & Modern Issues in Cultural Heritage Colour & Light in Architecture, Art & Material Culture Islamic Archaeology*, ed. by R. Matthews and J. Curtis, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2012, էջ 175-76:

³⁸ Aeliani, *Varia Historia, Heraclidis Pontici et Nicolai Damasceni quae supersunt*, ad optimorum librorum fidem accurate edita, Sumtibus et typis Car. Tauchnitii, Lipsiae, 1829, IX, III, էջ 125:

³⁹ E. Haerinck, Overlaet B., “The Sasanian Rock Relief of Bahram II at Guyum (Fars, Iran),” *Iranica Antiqua*, XLIV:2009, էջ 534: Ստեփանոս Օրբէլեանի տեղեկութիւնից երեւում է, որ Սասանեանների համար ծիրանին արքայականութեան խորհրդանիշ է եղել (*Պարմութիւն նահանգին Միսական*, էջ 33):

⁴⁰ H. Emrani, “Like Father, Like Daughter: Late Sasanian Imperial Ideology & the Rise of Bōrān to Power,” *e-Sasanika*, 5:2009, էջ 6-7. նաեւ՝ Rose, էջ 37:

⁴¹ Yatsenko, էջ 176-77. Կարմիր գոյնի խորհրդի տարբեր ժամանակային ընկալումների մասին տե՛ս՝ Элеонора Игоревна Григорьева, *Анализ развития цветовой символики в христианской культуре* (Էլէոնորա Իգորենա Գրիգորեւա, Գոյների խորհրդարանութեան զարգացման վերլուծութիւնը քրիս-

Պահլաական բնագրերից եւս երեւում է, որ կարմիր զգեստներ կրել են զինուորները, ընդ որում՝ հետաքրքիր է, որ կարմիրը կապուած է եղել արեւմուտքի հետ (խորհրդանշելով կարմիր մայրամուտը), որտեղից յայտնում էին հոռմէացի, քրիստոնէայ թշնամի զինուորները՝ կարմիր զէնքերով ու հանդերձանքով⁴²: Հնդկական քշատրիների՝ ռազմիկների դասը եւս կրել է կարմիր հագուստ ու, բացի զինուորական գործից, զբաղուել է նաեւ պետութեան կառավարմամբ⁴³: Իրանցիների համար կարմիրը խորհրդանշել է արիւնը, ուժը, եռանդը: Իրանական դիցաբանութեան մէջ Որմիզը գտնուել է վերելում՝ դրախտում, ինչը կապուել է սպիտակ լոյսի հետ, իսկ ներքեւը, որտեղ դժոխքն էր՝ Ահրիմանի կեցավայրը, կապուած էր մթի, այսինքն՝ սեւ գոյնի հետ: Որմիզդի եւ Ահրիմանի աշխարհների միջեւ ընկած միջնաշխարհի գոյնը կարմիրն էր, քանի որ միջնաշխարհի կենտրոնում գտնուող եւ մինչեւ երկինք հասնող Հարբուրզ (Ալբուրզ) լեռն Աւեստայում անուանուած է ոսկէ, իսկ ոսկին կարմիրի տարբերակներից է⁴⁴:

Բիզանդական կայսրութիւնում *έρυθρός*-կարմիր գոյնը (թանաք, ոտնաման) ծիրանի պատմուճանի հետ խորհրդանշում էր կայսերական իշխանութիւնը⁴⁵: Յանկացած մէկը, ով կը կրէր արքայական ծիրանի զգեստ, պետական դաւաճանութեան համար մահապատժի կ'ենթարկուէր⁴⁶:

տոնէական մշակոյթում), *Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիայի Սամարայի գիտական կենտրոնի տեղեկագիր*, 13(2):2011, էջ 1477-78:

⁴² Ольга Михайловна Чунакова, “Цветовая символика в пехлевийских текстах,” (Օլգա Միխայլովնա Չունակովա, Գոյների խորհրդաբանութիւնը պահլաական բնագրերում), *Պետերբուրգեան արեւելագիտութիւն*, 6:1994, «Պետերբուրգեան արեւելագիտութիւն» կենտրոն, Սանկտ-Պետերբուրգ, էջ 195-96. նաեւ՝ Ռ. Նիկողոսեան, *Պահլաական ուսումնասիրութիւններ: Մենագրութիւն Ջրադաշտի կրօնի եւ միջին պարսկական գրականութեան վերաբերեալ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2018, էջ 274, որտեղ «քրիստոնէական չարքը»՝ հոռմէացիները, նոյնացում են խաչակիրներին, քանի որ «Վահման յասնի մեկնութիւն» երկը վերջնական տեսքի է բերուել ԺԲ. դարում: Սակայն կարմիր գոյնի նոյնացումը արեւմուտքի, հոռմէացիների հետ ունէր շատ անէլի հին պատմութիւն:

⁴³ Նոյն, էջ 196. նաեւ՝ Борис Мысыккаты, “Арийские (индоиранские) истоки аланского триколора,” (Բորիս Միսիկկատի, Ալանական եռագոյնի արիական (հնդիրանական) ակունքները), *Պարմաբանասիրական արխիւ*, 9:2019, Վլադիկաւկազ, էջ 29:

⁴⁴ Чунакова, էջ 198:

⁴⁵ Սանրաման տե'ս՝ Panou, էջ 195-230. նաեւ՝ Kiilerich, էջ 439-40: Բիզանդիայի կայսր Միքայէլ Է. Դուկասի՝ Հունգարիայի թագաւորին ուղարկած թագում կայսեր անունը գրուած է կարմիր գոյնով, իսկ Հունգարիայի թագաւորի անունը՝ կանաչ գոյնով (Андре Грабар, *Император в византийском искусстве*, (Անդրէ

Երկու գերիզոր հարեանների՝ Հռոմէական կայսրութեան եւ Սասանեան Իրանի միջեւ գտնուող Մեծ Հայքի թագաւորների համար եւ ծիրանին եղել է արքայական խորհրդանիշ: Այս մասին հաղորդում է Ագաթանգեղոսը, ըստ որի՝ Հռոմի կայսրը Տրդատ Մեծին պատում է թագով եւ ծիրանի պատմունաններով: Ընդ որում՝ Ագաթանգեղոսի տեղեկութիւններից երեւում է, որ ծիրանին նաեւ կայսերական իշխանութեան ու քրիստոնէայ սրբերի խորհրդանիշ էր⁴⁷: Անկախ այն իրողութիւնից, որ Տրդատի՝ Հռոմի կայսեր կողմից ստացած թագը եւ ծիրանի⁴⁸ պատմունանը ցոյց են տուել հայոց արքայի վասալական կախաւածութիւնը Հռոմից: Մեզ համար էականն այն է, որ Մեծ Հայքի թագաւորների համար եւ ծիրանին արքայական իշխանութեան խորհրդանիշ է եղել:

Դասխորանցու տեղեկութիւնից պարզում է, որ արաբ խալիֆ Մուաւիան «արեւելքի իշխան» Ջուանշիրին պատում է նաեւ վառ գոյնի ծիրանիներով («զուարճատեսիլ ծիրանիս»)⁴⁹, ինչը խօսում է այն մասին, որ խալիֆը Աղուանք-Առանի իշխանին պատում է արքայական հանդերձներով:

Մեր քննութեան համար որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցու տեղեկութիւնները: Պատմիչի տեղեկութիւններից երեւում է, որ իշխանաց իշխան, յետոյ թագաւոր դարձած

Գրաբար, Կայսրը բիւզանդական արուեստում), «Լադոմիր» գիտահրատարակչական կենտրոն, Մոսկուա, 2000, էջ 35-36), ինչը վկայում է կայսերական իշխանութեան անելի բարձր հեղինակութեան մասին:

⁴⁶ Аверинцев, էջ 119. նաեւ՝ Пастуро, *Красный*, էջ 33-34:

⁴⁷ *Ագաթանգեղայ պատմութիւն հայոց*, քննական բնագիր՝ Գ. Տէր Մկրտչեան եւ Ս. Կանայեանց, աշխարհաբար թարգմ. եւ ծանօթ.՝ Ա. Տէր Ղեւոնդեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 1983, էջ 36, 98, 428: Թովմա Արծրունին յայտնում է, որ արաբ ոստիկան Եուսուֆը Վասպուրականի Գագիկ Արծրունուն թագադրում է ոսկեայ թագով եւ հագցնում ոսկեզարդ պատմունան (Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 442): Այս տեղեկութիւնից կարող ենք եզրակացնել, որ ծիրանի ու ոսկեզարդ պատմունանները նոյնն են, կամ ծիրանի պատմունանն անելի բարձր գերակայ դիրք ունեցող գահակալի համար է եղել: Ամէն դէպքում ծիրանին եւ ոսկեզոյնը կարմիրի երանգներից կամ տարբերակներից են: Մասնագիտական գրականութեան մէջ կայ տեսակէտ, որ ոսկու գոյնը կարմիրն է, արծաթի գոյնը՝ սպիտակը (Мысыккаты, էջ 33, ծնթ. 10):

⁴⁸ Նշենք, որ «*ծիրանի ասելով [միջնադարի] հայ մեկնիչները նկարի ունեն կարեւակ կարմիրը, որն իր արժանիքների համար արքայական է համարում... Ծիրանի գոյնը թագաւորական է: Այն բառացի համընկնում է պուրպուր գոյնին...*» (Վիգէն Ղազարեան, «Գոյնի ուսմունքը խորանների մեկնութիւններում», *Գանձասար հանդէս*, Բ:1992, Երեւան, էջ 328-340):

⁴⁹ Կաղանկատուացի, էջ 198:

Աշոտ Ա. Բագրատունին անջնջ արեան կէտեր ունէր, որոնք Դրասխանակերտոցին համեմատում է կարմիր յակինթի հետ⁵⁰: Պատմիչի այս տեղեկութիւնը համադրելի է Խորենացու Տիգրան Երուանդեանի եւ Սմբատ Բագրատունու նկարագրութեան հետ⁵¹, բայց, ըստ էութեան, արիւնը, կարմիր յակինթը խօսում են Բագրատունեաց թագաւորի զինուորական լինելու մասին⁵²: Մէկ այլ տեղեկութիւնից իմանում ենք, որ արաբ ոստիկան Եուսուֆին Սմբատ Ա. Բագրատունին ի թիա այլ նուէրների ուղարկում է նաեւ կարմիր որդանով ներկուած իրեր⁵³: Այս պարագայում կարմիր գոյնը նշանակում է, որ Բագրատունի թագաւորն ընդունում է արաբ ոստիկանի գերակայութիւնը: Դրասխանակերտոցու վկայութիւններից մէկից տեղեկանում ենք, որ Բիւզանդիայի կայսրը Սմբատ Ա.ի որդուն՝ արքայորդի Աշոտին, զարդարում է ծիրանագգեստ փառքով⁵⁴, ինչը հաստատում է, որ ծիրանին եւս Բագրատունիների արքայական իշխանութեան խորհրդանիշերից էր:

Վարդան Մամիկոնեանի թագաւոր լինելու հարցը քննելիս պէտք է ուշադրութիւն հրաւիրել նաեւ Խորենացու հետեւեալ տեղեկութեանը: Պարսից արքունիքում գտնուող Սահակ Պարթեւին, եթէ վերջինս ամբաստանէր հայոց Արտաշէս-Արտաշիր արքային, Բահրամ կամ Վոսան Ե. արքայից արքայի հրամանով պարսից հազարապետը խոստանում է «*եւ զթոռն քո զՎարդան կարգեսցէ ի վերայ հայոց զուգահաւասար թագաւորին եւ համապատի*»⁵⁵, այսինքն՝ պէտք է նկատի ունենալ, որ Վարդան Մամիկոնեանի հեղինակութիւնը Սասանեանների արքունիքում շատ բարձր է գնահատուել դեռ այն ժամանակ, որպէսզի նրան թագաւորին հաւասար պատիւներ խոստանային: Հետեաբար, պատահական չէ, որ 428ին հայոց պետականութեան անկումից 23 տարի յետոյ Վարդան Մամիկոնեանը հայոց թագաւոր լինելու լաւագոյն թեկնածուն էր՝ Աւարայրի ճակատամարտին մասնակցելով արդէն որպէս հայոց արքայ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեր քննութիւնը կարմիր գոյնի իմաստաբանութեան մասին ցոյց է տալիս, որ Վարդան Մամիկոնեանի Կարմիր մականունը հենց այնպէս չի

⁵⁰ *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտոյ պատմութիւն հայոց*, էջ 140:

⁵¹ Խորենացի, էջ 72-73, 181:

⁵² Ստեփանոս Ասողիկը յայտնում է, որ Կարսի Աբաս թագաւորի զօրագունըը կարմրագգեստ էր (*Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական*, էջ 252):

⁵³ *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտոյ պատմութիւն հայոց*, էջ 200:

⁵⁴ Նոյն, էջ 286:

⁵⁵ Խորենացի, էջ 348:

տրուել Ե. դարի հայ ամենանշանաւոր պատմական գործչին: Վարդան Մամիկոնեանի դէպքում «Կարմիր» մականուան առաջացումը կապել կարմիր գոյնի քրիստոնէաբանական նշանակութեան հետ⁵⁶ թերեւս պարզունակ կը լինի, քանի որ Ասրայրի ճակատամարտում բոլորը նահատակուեցին՝ թափելով մարտիրոսութեան արիւնը: Ըստ էութեան, Վարդան Մամիկոնեանի «Կարմիր» պատուանունը սկզբում այլ իմաստ է ունեցել, եւ միայն յետոյ է, որ հայ եկեղեցական պատմիչները «Կարմիր» անունը կապել են նահատակութեան հետ եւ նրան անուանել նաեւ Սուրբ, Երանելի⁵⁷:

Վերեւում կատարուած վերլուծութիւնը թոյլ է տալիս առաջարկել մի վարկած, որը կարող է այլ ուսումնասիրութիւնների համար յետագայ քննութեան նիւթ դառնալ: Հնագոյն ժամանակներից կարմիր գոյնը կապուած է եղել տարբեր հասարակութիւններում ռազմական դասի կարգավիճակը ցոյց տալու հետ: Պետական կազմաւորումների առաջացման ժամանակ ռազմական դասի ներկայացուցիչները (ցեղապետ) դառնում էին թագաւորների՝ պահպանելով ռազմիկի նշանային յատկանիշերը: Աստիճանաբար թագաւորների հանդերձանքի մէջ կարմիր գոյնն իր երանգներով (ծիրանին նոյնպէս) խորհրդանշում էր բարձրագոյն արքայական իշխանութիւնը: Կարմիր մականունը ստացած մարդը սովորաբար շիկակարմիր մօրուք կամ արնագոյն դէմք է ունեցել, բայց այդ մականունը կարող էր տրուել նաեւ ցասկոտ, դաժան, արիւնարբու լինելու պատճառով⁵⁸: Հայոց սպարապետի դէպքում այս հանգամանքները չկան: Վարդան Մամիկոնեանը հայոց սպարապետն էր, հետեաբար միայն զինուորական լինելու համար նրան կարմիր անուանելը պարզունակ ու անիմաստ կը լինէր: Վարդան Մամիկոնեանը պէտք է թագաւոր լինէր, որ նրա Կարմիր պատուանունն ընկալուէր արքայականութեան խորհրդանիշ. կարմիրն իշխանութեան գոյնն էր: Հայոց սպարապետը թագադրուել է հայրենասիրական ուժերի կողմից եւ ըստ երեւոյթին կրել է կարմիր ու ծիրանի հանդերձանք: Հնարաւոր է՝ այդ արքայական հանդերձանքի⁵⁹ պատճառով հենց ժողո-

⁵⁶ Խօսքը Քրիստոսի եւ յանուն Քրիստոսի թափած արեան մասին է (Мишель Пастуро, *Желтый. История цвета*, (Միշէլ Պաստուրօ, Դեղին. գոյնի պատմութիւնը), *Նոր գրական հանդէս*, Մոսկուա, 2022, էջ 53):

⁵⁷ Տե՛ս, օրինակ՝ *Ղազարայ Փարպեցոյ պատմութիւն հայոց*, էջ 84, 134, 140, 168. նաեւ՝ Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 128:

⁵⁸ Пастуро, *Красный*, էջ 41:

⁵⁹ Հետաքրքիր է, որ գեղանկարիչ Գրիգոր Խանջեանի «Վարդանանք» ստեղծագործութեան մէջ Վարդան Մամիկոնեանը պատկերուած է կարմիր ու ոսկեգոյն թիկնոցով: Ի՞նչ խորհուրդ է դրել կարմիր գոյնի մէջ գեղանկարիչը՝ ինձ յայտնի չէ: Թերեւս, նա էլ նկատի է ունեցել նահատակութեան արիւնը:

վորդն է Վարդան Մամիկոնեանին անուանել Կարմիր՝ նկատի ունենալով նրա թագաւոր լինելը: Ժողովրդի կողմից տրուած Կարմիր մականուան մէջ աւելի ուշ հայոց եկեղեցին այլ (թէկուզ անուղղակի, թաքնուած) իմաստ պէտք է դնէր: Ամէն դէպքում, մենք չգիտենք՝ Սեբէոսը Վարդան Մամիկոնեանի Կարմիր մականուան մէջ քրիստոնէական խորհուրդ տեսե՞լ է, թէ՞ ոչ, բայց որպէս հոգեւորական՝ կարող էր նկատի ունենալ, որ հայոց սպարապետի մականունը կապուած է յանուն Քրիստոսի թափուած արեան հետ:

Ընդամենը 23 տարի առաջ անկախութիւնը կորցրած ժողովրդի համար 451ին պետականութեան վերականգնումը խիստ հրատապ էր՝ յատկապէս պարսկական ճնշումներից յետոյ: Նկատենք նաեւ, որ Վարդան Մամիկոնեանը եւ նրա համախոհ նախարարները պետականութեան շրջանի ծնունդներ էին, ըստ այդմ էլ՝ պետականութեան վերականգնումը նրանց համար սոսկ գաղափար չէր, այլ՝ իրական նպատակ, եւ նրանք պայքարում էին յանուն պետականութեան վերականգնման:

Նաեւ ուշադրութիւն հրաւիրենք մի իրողութեան վրայ, որը հաւանաբար թոյլ կը տայ կրկին հաստատել Վարդան Մամիկոնեանի թագաւոր լինելը: Եղիշէն Աւարայրի ճակատամարտում ընկած նախարարներին ընդհանրական անուանում է քաջ նահատակներ, բայց միայն հայոց սպարապետին է անուանական Քաջ Վարդան կոչում⁶⁰: Քաջ ածականով հայ պատմիչներն անուանել են հիմնականում նահապետերին ու թագաւորներին, օրինակ քաջ Հայկ, քաջ Տրդատ, պարթեւաց Արշակ Քաջ թագաւորը են.⁶¹: Քաջ ածականն ունի տարբեր իմաստներ. «լաւ, ընտիր, ազնիւ, առաքինի, պատուական, արի, կորիճ», նաեւ «դիւցազն, հսկայ» են.⁶²: Յատկապէս բառի «դիւցազն, հսկայ» նշանակութիւնները պատմական խոշոր անհատներին տրուել են ռազմական մեծ գործերի համար, եւ շատ թագաւորների համար տիտղոսի պատուանուններից են եղել: Քաջը Վահագնի մակդիրն է. նա է երկրային քաջերի դիցաբանական անձնաւորումը եւ առաջնորդը, այսինքն՝ քրիստոնէական աւանդոյթում Քաջ Վարդանը Վահագնի փոխակերպութիւնն է⁶³:

⁶⁰ Եղիշէ, էջ 240:

⁶¹ Խորենացի, էջ 44, 101-2, 225. նաեւ՝ *Սղեպիանոսի Տարօնեցոյ Ասողկան*, էջ 32, 60 եւ այլք:

⁶² Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Հտր. Դ., Պ-Ֆ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1979, էջ 554-55:

⁶³ Ա. Պետրոսեան, *Հայկական էպոսի հնագոյն ակունքները 2*, ՀԱԻ հրատ., Երեւան, 2020, էջ 71: Քաջերը միայն քաջ ռազմիկները չեն: Այդպէս է կոչում եւ առասպելական արարածների մի ամբողջ դաս, նոր հայերէն՝ քաջքեր: Նոր բանահիւսութեան մէջ քաջքերը, շատ առումներով, կարծես նոյնական են վիշապ-

Հարկաւ, Վարդան Մամիկոնեանն արժանի էր Քաջ մականունանը, եւ վերջին մականունն իմաստային-նշանային առումով հոմանիշ ենք համարում Կարմիր պատուանունանը, այսինքն՝ հայոց սպարապետի Քաջ ու Կարմիր ածականներով ցոյց է տրուել նրա արքայական կարգավիճակը: Սակայն Վարդան Մամիկոնեանի հերոսական վախճանից յետոյ, երբ հայոց պետականութեան վերականգնման հարցն այլեւս օրակարգում չէր, Հայ Եկեղեցու համար Վարդան Մամիկոնեանը դառնում է յանուն քրիստոնէական հաւատի ընկաճ նահատակ, *հաւատի զինուոր*, որով պէտք է դաստիարակուէին յաջորդ բոլոր սերունդները: Եկեղեցական պատմիչների ազդեցութեամբ աստիճանաբար մոռացութեան է տրուում 451ի ժողովրդաազատագրական պատերազմի իրական նպատակը՝ հայոց պետականութեան վերականգնումը, պատերազմը վերափոխելով կրօնական ազատութեան, կարմիր գոյնը դարձնելով քրիստոնէական դասանանքի պայքարի խորհրդանիշ:

ON VARDAN MAMIKONYAN'S NICKNAME 'RED'
(SUMMARY)

HOVHANNES KHORIKYAN
hovhkor78@mail.ru

According to the viewpoint of some specialized literature, Vardan Mamikonyan was the king in the Battle of Avarayr in 451. We have made an attempt to confirm this view. In our opinion Vardan Mamikonyan's nickname 'Red' has a specific meaning. In the case of Vardan Mamikonyan it would be very simple to connect the origin of the nickname 'Red' to the red color that has a Christological meaning since in the Battle of Avarayr everyone was martyred in the holy blood of martyrdom. In fact, the honorary name of Vardan Mamikonyan had a different meaning at first. Later on, our church historians connected the 'Red' nickname with martyrdom and Vardan Mamikonyan was called a Saint, and Blissful as well. With reference to our research, red clothing was a symbol of royal power from ancient times, and Vardan Mamikonyan wore red royal clothing. For this very reason he was given the nickname 'Red'. Since then the Armenian church has associated 'Red' with the blood of those martyred for the sake of the Christian faith.

ներին ու չար ոգիներին՝ չարքերին: Բայց հնում այդպէս չի եղել: Քաջ(ք)երը պիտի լինէին Վահագնի հետետրոդները, վիշապներին հակադրուած կերպարներ (նոյն, նաեւ՝ Армен Егишевич Петросян, “Эволюция героев армянского эпоса,” (Արմէն Եղիշէի Պետրոսեան, Հայկական էպոսի հերոսների եղափոխութիւնը), Բանահիւսութիւն. կառուցուածք, տիպաբանութիւն, նշանագիտութիւն, 4(3):2021, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան, էջ 102-3):

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՇԽԱՐ ԵՐԳ՝ ԱՅՆՃԱՐԷՆ ԵՒ 1940ԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԷՅՐՈՒԹԷՆ ՈՒ ՄԻՔԱՆԻ ԱՅԼ ՅԱՆԳԱԻՈՐ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ/ԵՐԳԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Ա.- Հարսնցուի ծնողական տունն էն հարս ելլելու երգ

Մուսա լեռ-Այնճարը, արեւմտահայութեան այն հազուադիպ բնակավայրերէն է, որոնց ազգագրական հարուստ ամանդէն համեմատաբար բաւական բան փրկուած՝ կը շարունակէ կենցաղավարել մերօրեայ այնճարցիներու կեանքին մէջ: Մուսալեռցիք, վերահաստատուելով Այնճար, գիւղական նոր պայմաններուն պատշաճելով, ներամփոփ կեանքով շարունակած են իրենց պապենական կենցաղի, ամանդութեանց եւ ազգագրական բնոյթի որոշ պարագաներ կիրառել առօրեայ կեանքին մէջ: Միաժամանակ, անոնք հետզհետէ թուղթին յանձնած են մուսալեռեան խոհանոցին, բառ ու բանին, երգ ու պարին, ազգագրական անցեալի ամանդին նշխարներնէն շատ բան¹: Հուսկ, անոնք հիմնած են ազգագրական թանգարան՝ իրենց գիւղին մէջ²:

Ստորեւ կը հրատարակենք մուսալեռեան ազգագրական երգերէն մին, որ կը վերաբերի հարսնցուի ծնողական տունն էն հարս ելլելու արարողութեան:

Այս երգը մասնակիօրէն հրատարակուած է³, սակայն նկատի առնելով որ տպագրեալ տարբերակին մէջ հրատարակուած է երգին միայն մէկ տունը, այստեղ զայն կը հրատարակենք աւելի ծաւալուն բնագրով եւ այլ՝ Վիք-

¹ Մուսա լեռն եւ Այնճարի փոհմիկ ճաշեր, հրատ.՝ Ս. Պօղոս եկեղեցոյ տիկնանց միութիւն, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, Պէյրութ, 2009:

² Թանգարանին բացումը կատարուած է Սեպտեմբեր 2019ին:

³ Տե՛ս՝ Մուսա լեռն եւ Այնճարի երգարան (Յաւերժ Մուսալեռ Մուսա լեռն եւ Այնճարի երգարան), խմբ. Շաղիկ Գէորգեան, [ա.տ.], 2019, էջ 10:

թորիա Գէորգեանի կատարմամբ ներկայացուած երաժշտութեամբ⁴: Երաժշտութեան վերծանումը կատարեցին Աստղիկ Սահակեան եւ Հեղինէ Սարգսեան (Երեւան):⁵

Ստորեւ՝ երգը:

Հէյ եատա Հէյ եամա	Հէյ հայրս, հէյ մայրս ⁶
Թմկընէն կու զարկըվէն ոյու զոտնիւնէն Աշգօար ձէնը սա՛գուծ կա՛պուծ՝ տնիւնէն:	Թմբուկներն ու զուռնաները կը հնչեն, Դեղնաւուն զարդարուած ձին կապուած է նուննիւն:

⁴ Երգը արձանագրեցինք 24 Յունիս 2023ին, Այնճար, Վիքթորիա Գէորգեանի տան մէջ: Վիքթորիա Քենտիրճեան-Գէորգեան ծնած է Այնճար, Պիթիաս թաղամաս, Յունիս 1959ին պիթիասցի ծնողքէ: «Մայրս՝ Ռուբինա Քերքէզեան (Պիթիաս, 1935–Այնճար, 2021), շար լաւ ձայն ունէր: ...Չորս փարեկանին գաղթական ելեր է Մուսա լեռնէ: [Այնճարի մէջ], դրացուիին իրեն ըսեր է որ "շար լաւ կ'երգեսկոր, եկուր քեզի այս երգը սորվեցնեմ, երբոր մէկը հարս պիտի ելլէ՝ դուն կ'երգես": Մայրս կը պատմէր որ զինք կը կանչէին՝ "ես ալ համարձակ-համարձակ կ'երթայի կ'երգէի": Երգելէն ետք կու գար հայարփ-հայարփ կը պատմէր [մեզի]: Անգամ մը պատմեց որ մէկու մը համար երգեր է, բայց հարսը այնքան դժգոհ է եղեր իր ծնողական փունէն (որովհետեւ խորթ մօր մը ձեռքը մնացեր է), որ կ'ըսէր՝ "3 անգամ պերիցի իրեն՝ չլացաւ": Ինք երբ երգէ եղեր հարսնցուն կու լայ եղեր, այս հարսնցուն չէ լացած: **Պիրել** կը նշանակէ երգը երգել որ լա՛յ: Մեծմայրս շար լաւ կ'երգէր. ժառանգական է, Տէր Մեսրոպ քահանան (Քերքէզեան) քեռիս է, շար լաւ կ'երգէ, անոր ալ ձայնը շար լաւ է: Ընտանիքով, բոլորը լաւ կ'երգէին, բայց մայրս թէ՛ միութենական եւ թէ՛ եկեղեցական երգեր կ'երգէր: Մայրս [երգչախումբէ] չէ [երգած], բայց ես երգած եմ Համազգայինի Այնճարի Կոմիտաս երգչախումբէն, մենակապար եղած եմ, մեր Ս. Պօղոս եկեղեցին դպրութիւն ըրած եմ 12 փարեկանէս իվեր»:

«...Մօրմէս խնդրեցի որ ինձի սորվեցնէ ասի, որպէսզի եթէ պէտք ըլլայ՝ [երգեմ]: ...Ամուսինս [Մուսալեռան ազգագրական երգ ու բանը հաւաքող] խումբին մէջն էր, կը հաւաքէիկոր այս երգերը, ըսի [մօրս] վաղը պէտք կ'ըլլայ, գոնէ սորվեցուր ինձի, առիթ մը ըլլայ եթէ՛ փեղը կրնամ լեցնել: Այդպէս ալ եղաւ: Մամաս միշտ երգ կը մրմնջէր՝ ասան լուացած, ճաշ եփած, գործ ըրած արեւը: Ուրիշ երգեր ալ կ'երգէր, «Խնկի ծառի»ը իր ամենասիրած երգն էր: Ամէն առօրու, կէսօր, իրիկուն շարական ալ կ'երգէր, բայց ասանկ բաներ ալ [կ'երգէր]»:

⁵ Այս առթիւ յատուկ շնորհակալութիւն Չաքար Քէշիշեանին:

⁶ Թարգմանութիւնը՝ Եսայի Հաւթեանին, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Հաւթեան վերստուգեց նաեւ բառերն ու բարբառային հնչիւնները:

⁷ **Ծնթ. թարգմանիչին.**– ա՛ր արաբերէն ՝ հնչիւնը, գօ արաբերէն կոկորդային օ հնչիւնը:

<p>Հէյ եամա-եամա, էմ հիքէն եամա, Գիշորնէւէր քննիդ մնացիր, Յիրըկնէւէր բանիդ մնացիր, Քը նազը աշկընէն խաթըրն իրիդ Բա՛րը մնուս, շին մնուս:</p>	<p>Հէ՛յ մայրս, մա՛յրս, ի՛մ հոգին մայրս, Գիշերուան քունէդ մնացիր, ցերեկուան գործէդ մնացիր, Քու քնքուշ աղջկանդ փափաքը ըրիր, Բարով մնաս, շէն մնաս:</p>
<p>Հէյ եափա-եափա, էմ հիքէն եափա, Գիշիրը-ցիրէյը միմը իրիդ, Քը նազը աշկընէն խաթըրն իրիդ, Բա՛րը մնուս շին մնուս:</p>	<p>Հէ՛յ հայրս, հա՛յրս, ի՛մ հոգին հայրս, Գիշերը-ցերեկը մէկ ըրիր, Քու քնքուշ աղջկանդ փափաքը ըրիր, Բարով մնաս, շէն մնաս:</p>
<p>Հէյ ախբար-ախբար, էմ հիգէն ախբար, Շեքութ մը եարանջ Սուլթանը պազուրը Գէցիր, ծունտը-ծունտը գօումաշնէն կարըցուցիր, Քը նազը քորըր խաթըրն իրիդ, Բա՛րը մնուս, շին մնուս:</p>	<p>Հէ՛յ եղբայր, եղբա՛յր, ի՛մ հոգին եղբայր, Շաքաթ մը առաջ Սուլթանի շուկան Գացիր, ծանր-ծանր կտանները կտրեցուցիր, Քու քնքուշ քորջդ փափաքը ըրիր, Բարով մնաս, շէն մնաս:</p>
<p>Իլ ֆա՛րճի եամա, Ֆա՛րճի եշիլ պայրաքնէն, Շա՛քրու, միդրու ծարուծ, Վուրդիդ առէն կու տա՛նէն:</p>	<p>Ելիր տես, մա՛յրս, Տես կանաչ դրօշակները, Շաքարով-մեղրով մեծցուցած Վարդիդ առին կը տանին:</p>
<p>Խմի եամա, խմի քիւղցր գինիներն, Թըղ ուղայի իչուցիդ ա՛րը արցնքնէն:</p>	<p>Խմե՛ մա՛յրս, խմե՛ քաղցր գինիները, Թող հոսին աջքերէդ աղի արցունքները:</p>
<p>Խմի եափա խմի, քիւղցր սիկարիներն, Թըղ կտրա միջուցիդ ա՛լիպա՛ պա՛քերիներն:</p>	<p>Ծխե՛ հա՛յրս, ծխե՛ քաղցր սիկարէթները, Թող կտրուին մէջքիդ միացած՞ ողները:</p>
<p>Խմի եափա խմի, քիւղցր գինիներն, Ծարիցիր միջուցիդ, առէն կու տա՛նէն:</p>	<p>Խմե՛ հա՛յրս, խմե՛ քաղցր գինիները, Կերակրեցիր-մեծցուցիր առին կը տանին:</p>
<p>Թմկընէն կու զարկըվէն ույու զուռնիներն, Աշգար ձէնը սա՛գուծ կա՛պուծ նոնիներն:</p>	<p>Թմբուկներն ու զուռնաները կը հնչեն, Դեղնաւուն զարդարուած ծին կապուած է նոնենիէն:</p>


Բ.- Մուծեղին երգը (Մալարիա) եւ այլ երգեր

Այս երգը լսած էի մօրմէս՝ Վարդուհի Գազանճեան-Տազետեանէն (1933-2016), 1960ականներու վերջ-70ականներու սկիզբին: Իր լուսաբանութեամբ, կ'ենթադրէի որ ան տարածուած պէտք է ըլլայ Լիբանանի որբանոցային միջավայրերուն մէջ: Վերջերս, մուսալեռցի այնճարաբանակ Վարդ-

⁸ **Ծնթ. թարգամսիչին.**- Ա՛լիտա՛, հաւանաբար՝ միացած:

շաքէ Չախչախեան⁹ ինձի ներկայացուց իր աշակերտական յուշատետրը¹⁰, ուր գտայ «Մալարիա» երգին բառերը: Ան երգեց երգը՝ ինձի ծանօթ եղանակով: Երգին առկայութիւնը Պէյրութի եւ Այնճարի մէջ, կը խօսի Լիբանանի հայաբնակ այլեւայլ վայրերու մէջ անոր տարածումին մասին:

Տետրին մէջ կային միքանի բանաստեղծութիւններ եւս: Դժբախտաբար, ան չկրցաւ երգել զանոնք, բայց հաստատեց թէ անոնք եւս կ'երգուէին: Ստորեւ կը հրապարկենք այդ բոլորը, ընդգծելով որ ասոնք ճաշակ մը կու տան 1950ականներու լիբանահայ ընկերային-հաւաքական միջավայրին մէջ տարածուած երգերու, անոնց բնոյթին եւ արծարծած խնդիրներուն մասին:



Վարդշաքէ Չախչախեանի ձեռագրով գրուած «Մուծեղին երգը»

⁹ Վարդշաքէ Չախչախեան (ծն. Մուսա Լեռ, Խտըրպէկ, 1935): Իրեն հանդիպեցանք 1 Մայիս, 2022ին:

¹⁰ Չախչախեան ներկայացուց երկու տետր: Տետրերէն առաջինին մասին ան ըսաւ. «1953ին, Այնճարի հայ ատեր. վարժարանի երրորդ դասարանի աշակերտ էի, այր. Ճորճ Սեպէեանը Կիպրոսէն եկած էր մեզի իբրեւ ուսուցիչ: Ան թելադրեց որ դասագիրքէն մեր սերտած որեւէ հայ բանաստեղծի բանաստեղծութիւններէն փաս հարգենք մեր տետրին մէջ, իր կենսագրութեան կողքին»: Իսկ երկրորդ տետրին մասին ան բացատրեց. «ասիկա յուշատետր է. դպրոցական փարիներու (մինչեւ ծրոյ դասարան գացած եմ դպրոց), սովորութիւն էր, դասընկերներ այսպիսի տետրերու մէջ յիշատակներ կը գրէինք իրարու» (անձնական հարցազրոյց, Այնճարի իր տան մէջ, 20 Յունուար 2024ին):

Մուծեղին երգը (Մալարիա)¹¹	
Օր մը ես դուրս նստած Կը դիտէի մեր պարտէզ: Ամառ էր, հով չկար Արեւը մտած էր մար:	Յանկարծ գլխուս վերեւէն Վըզ, վըզ, վըզ, վըզ ձայն մ'եկաւ Մուծեղ մը ինքնահոգ Քըթիս վրայ փակաւ:
Վերջըլն ալ տեսայ որ Բոլոր մարմինս կտորի կոր Կարծես թէ, վրաս ծիւնեց Զիս սաստիկ դող մը բռնեց ¹² :	Զընկըր, զընկըր դողացի, Վերմակիս տակ սողացի վերջըլն ալ քրտինքին Մէջը լողացի:
Հարցուցի տոքթորին, Մեծապատուութեան ¹³ նորին, Ըսաւ որ ասիկա Կը կոչուի մալարիա:	Ինծի տուաւ լեղի դեղ Եւ միքանի ասեղներ ¹⁴ Ըսաւ որ ասիկա Կը բերէ մուծեղ:

Զինուորին կորուստը	
Այս ինչ կորուստ, ինչ մեծ ցաւ Փանթալոնիս կոճակը Կոճկելիքէն փրթեցաւ Գնաց մտաւ ո՞ր ծակը: Թէ որ տեսաք զայն տեղ մը Իմացուցէք ո՞ր ծակն է Երթամ հանեմ զայն շուտով:	Ոչ պզտիկ էր, ոչ մեծ էր, Զափաւոր ալ չէր ըսուեր Ի՞նչ գոյն ըլլալն ալ մոռցայ Կարմիր էր թէ՞ սեւի վրայ: Ահ, կ'աղաչեմ պարոններ:
Այս կորուստը քիչ բան չէ Յիսնապետս որ իմանայ Վերջը բանիկս բուսած է: Գտէք, գտէք կոճակս գտէք:	Միտքս կու գայ թէ վրան Թոչուն մը կար խոշորկեկ Եւ կորուսեալ այդ կոճակն Գամուած էր հոս ամրկեկ:
Խանութները չեն ծախեր Երոպայէն չեն բերեր Շունշանորդի կոճակին	Զինափործին ատենը Կը դիտեն մեր չորս կողմը, Ոտքէս բռնէ մինչեւ վեր

¹¹ Մալարիան բաւական տարածուած էր 1930-50ականներու լիբանահայ ու - ըստ երեւոյթին սուրիահայ միջավայրերուն եւ թերեւս տեղաբնիկներուն մէջ եւս: Մալարիան մեծաթիւ զոհեր խլած է մուսալեոցիներէն՝ անոնց Այնճար հաստատման առաջին տարիներուն: Մալարիայի չարիքը այնքան մեծ եղած է որ անհրաժեշտ դարձած է բնակչութիւնը զգօս եւ զգուշ պահել անկէ: Այս առնչութեամբ ալ հրատարակուած է բժիշկ Յ. Յակոբեանի պատրաստած եւ Հայ ազգային բժշկական վերին մարմնին կողմէ հրապարակուած *Մալարիա*, 25 էջանի ուսումնասիրութիւնը (Ժողովրդական առողջապահական մատենաշար թիւ 1, Տպ. Նայիրի, Հալէպ 1946): Իղէպ, այս գրքոյկը ճանաչողական արժէք ունի եւ չ'ընդգրկեր մեր վերոնշեալ երգը:

¹² Այլ տարբերակ՝ «պատեց»:

¹³ Այլ տարբերակ՝ «վեհափառութեան»:

¹⁴ Այլ տարբերակ՝ «ետեւէն չորս հինգ ասեղ»:

Ծառն ու արմատն է չորցեր:	Կր խառնեն տեղ չեն ձգեր:
Կու տան ձեռքս հրացան, Կ'ըսեն շալկէ ուսիդ վրայ Ի՞նչպէս կայնիմ, դուք ըսէք՝ Փանթալոնս վար կ'իյնայ:	Բարեկամացս հանդիպիմ՝ Հարկաւ պիտի բարեւ տան Ձեռքս հոսկէ պակաս չէ: Պիտի տեսնեն ու խնդան
Աղջկանց ալ բան պէտք է Երբոր տեսնան կը խնդան Ճամբաս հարաւ փոխելով Թոչելու է պալոնով:	Պառաւ կանանց բերանն ալ Թէ կրնաս գոցել՝ գոցէ Անանկ բաներ կը մաղեն Որ կոճակս բամբասեն:
Սիրուիիս ալ Աստուած տայ Այս կորուստը չիմանայ Քանզի գիտեմ վախկոտ է Պզտիկ բանէ մը դող կ'ելլէ:	Կեցէք, միտքս բան մ'եկաւ Վազեմ երթամ ճար չկայ Դիոգինէսն ու՛ր որ է Գուցէ կոճակս ան գտնէ:
Կրկն. Ահ կ'աղաչեմ պարոններ Չըլլայ երբեք զիս ծաղրէք	Օր կ'ըլլայ որ փրցընէք. Դուք ալ կոճակի տէր էք:

Տանտիկին կ'ուզենք¹⁵

¹⁵ Չախչախեսանի նոթատետրին մէջ այս երգին մասին գրուած է թէ «գրի առնուած է մայրերու օրուան առթիւ, 1955 Մայիս»: Այս երգը կը գտնենք նաեւ Արմենակ Արըզեանի (Տատեր) հեղինակութեամբ *Հագար ու մէկ ծաղիկ* վերնագրեալ գիրքին մէջ (Պոստոն, տպ. Հայրենիք, 1913, 132 էջ): Գիրքը կազմողը՝ Արմենակ Արըզեան, որ գիրքին մէջ հանդէս կու գայ նաեւ Տատեր (=ընկեր) գրչանունով, 1 Դեկտեմբեր 1913 թուականը կրող իր «Յառաջաբան»ին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ Հալէպի առաջնորդ Ներսէս եպս. Դանիելեանի աջակցութեան, կը նշէ թէ գիրքին հատոյթին 25%ը պիտի յատկացուի «Ձէյթունի հայ վարժարանաց», անցնելով որ գիրքը դրուած է Թրոյի Հայ Առաքելական եկեղեցիի հոգաբարձութեան տրամադրութեան տակ:

Գրքոյկը կ'ընդգրկէ Արըզեանէն թրքերէն բանաստեղծութիւններ, տեսքաններ, հանելուկներ, խրատներ եւ այլ գրութիւններ՝ բոլորը թրքերէն: Գիրքին երկրորդ մասին մէջ կը հանդիպինք Դանիելեան եպիսկոպոսի կաղանդչէքներուն, նաեւ այլոց հայերէն ու թրքերէն չափածոյ գրութիւններուն: Այս խումբին մէջ կը հանդիպինք նաեւ Վեր. Կոստան Մոմճեանի գրած միքանի բանաստեղծութիւններուն, որոնցմէ մին է «Տանտիկին կ'ուզենք»ը, տպուած գրքոյկին 77-78 էջերուն: Շահեկան է այն որ 1910ականներուն շրջանառութեան դրուած բանաստեղծութիւն մը, որ շատ հաւանաբար երգուած ալ է, երգուած է նաեւ Այնճարի մէջ, 1950ականներուն: Բաղդատելէ ետք գրքոյկին բնագիրը այս ձեռագրին հետ, ի յայտ եկաւ որ ձեռագիրէն կը պակսի մէկ տուն:

Գրքոյկը մեր ուշադրութեան յանձնեց դոկտ. Արմէն Իփնէշլեան որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Գրքոյկը մատչելի է համացանցի վրայ, հետեւեալ հասցեով.-

<https://books.google.com.lb/books?id=0odCAQAAIAAJ&pg=PA77&lpg=PA77&dq=%D5%8D%D5%A1+%D5%A4%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D6%80+%D5%B4%D5%A8%D5%B6+%D5%A7+%D5%A1%D5%A6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A1%D5>

[Վեր. Կոստան Մոմճեան]
<p>Սա դուստրը մ'է ազնուատոհմ մեծատան Ուսած՝ ապրիլ կեանք մը փափուկ, պճնազարդ Ծնողք իր հետ մեծ գումարներ օժիտ տան, Թէ կամենամ կեանքի ընկեր ընտրել զայն: Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ձայն՝ Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ձայն՝</p> <p>Կրկ. Մենք չենք ուզեր օժիտաւոր մ'օրհորդ. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:</p>
<p>Եւ սա մին է գեղեցկադէմ, գեղանի Վեհ բնութիւնն կարծես օժտած է զանի Ահա քեզի գեղեցկութեան մի պատկեր Ալ ի՞նչ պակսի ընտրել զնէ ինձ ընկեր: Իսկ այն ձայնը կը փսփսայ ականջիս՝ Իսկ այն ձայնը կը փսփսայ ականջիս՝</p> <p>Կրկն. Մենք չենք ուզեր սոսկ դէմքի փայլ սիրելի... Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:</p>
<p>Սա աղջիկ մ'է դպրոցական ուսանող, Ճարտար, խօսող, գրող, թէւ չունի փող Դասատան մէջ փայլի որպէս մի արեւ, Ինձ ամէնէն յարմար կինը արդարեւ: Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ձայն՝ Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ձայն՝</p> <p>Կրկն. Մենք չենք ուզեր գրել կարդալ միմիայն Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:</p>
<p>Սա աղջիկ մ'է դիրքով, տեսքով ինչ խոնարի, Ոչ ուսանող, ոչ գեղանի, ոչ քնարահար Թէ՛ւ՝ բայց նէ ընտանեկան Սուրբ յարկին Տակ՝ լաւ գիտէ ապրիլ որպէս տանտիկին: Չգիտեմ արդեօք ընտրելու՞ եմ նէ թէ՞ ոչ: Չգիտեմ արդեօք ընտրելու՞ եմ նէ թէ՞ ոչ: Յայնժամ այն ձայն մեղուկ մ'առնէ, ինձի կոչ՝</p>

[%BF%D5%B8%D5%B0%D5%B4+%D5%B4%D5%A5%D5%AE%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6&source=bl&ots=WYNiyqX6kF&sig=ACfU3U3U0Gmk2ofLn0bvQlbk1dsKj-FDqw&hl=en&sa=X&ved=2ahUKFwjQg8_oI4uGAXQUKQEHTG9CDcQ6AF6BAglEAM#v=snippet&q=%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A5%D5%AC%D5%AB&f=false](#) :

Յայնժամ այն ծայն մերուկ մ'առնէ ինձի կոչ.
Կրկն. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք
 Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:

ՀԷՅ ԵԱՏԱ, ՀԷՅ ԵԱՍԱ

3
 6
 9
 12
 15
 18
 21
 24

Թըմ - կը - նեն կու գար - կը - վեն
 ու գուր - նի - նեն աշ-գար ձե - նը
 սա - գուծ կա - պուծ նըր - նի - նեն:
 Հէ եա-մա, եա - մա, էմ հի-բես եա-մա
 գի - շըր - նե-ւեր քըն-նիդ մը-նա - ցիր գի - րըկ - նե-ւեր
 քա-նիդ մը-նա-ցիր քը նագ-ըր աշ - կը-նեն խա - թըրն ի -
 ըիր քարը մը-նուս շին մը - նուս
 Հէ եա-տա, եա - տա, էմ հի-բես եա-տա
 գի - շըր ցի-րկըր մլամ ի - ըիր քը նագ-ըր աշ - կը-նեն

27
 28
 29
 30
 31
 32
 33
 34
 35
 36
 37
 38
 39
 40
 41
 42
 43
 44
 45
 46
 47
 48
 49
 50
 51
 52

խաթընն ի-րիր քեր մը-նուս շին մը-նուս
 Հի ախ-բար, ախ-բար, եմ հի-զև ախ-բար
 շն - բուգ մը եա-րուց Մուղ - թա-նը արս-զս-րը զի-ցիր
 ծուն-տոր ծուն-տոր գու-մաշ եեն կրտ - րը - ցու-ցեր
 զը նազ-ր քար խաթընն ի-րիր քարը մը-նուս շին մը-նուս:
 Իլ ֆար-մի եա-մն, ֆար - մի ե - զի պա - բար
 նեն շար-րու միշ-րու ծա - րած փար - դիդ
 ա - բն կու տա - նն: Խր - մի եա-մա.
 Խը - մի բխղ - ցար զի - նի - նն

55 թրդ ու- դա-յի չա - ցիդ ա - դը ար - ցընք-
 58 նն: հը- մի ես - սա, խը - ճի
 61 քուդ - ցըր սի - նա- յի - նն թըր կու-րա մի -
 64 ջու - ցիդ է - ր սյե- ըե - յի - նն:
 67 հը - մի ես-սա. խը - ճի քուդ - ցըր սի - նի -
 70 նն ձու - ըն-ցուր մի՞ն - ցու - ցիք
 73 ա - ընե կա աա - նն: թըն-կը - նն կա զար-կը - վն
 77 ա զար- նի - նն աշ-զար ձն - կը
 80 սա - զուժ կա - սուժ կը - կը - նն:

Երգ Մը Ազգագրական

Նորագրութիւնը՝
Կարո Աւետեանի

$\text{♩} = 80$

5

9

13 Առաջին Համար

Օր մը էս դուրս նըս- տած Կը դի- տէ- ի մեր պար- տէգ:

15 Ա- մառ էր, հով շը- կար Ա- թե- ւը մը- տած էր մար:

17 Յան- կարծ գըլ- խոս ւե- թէ- ւեն վըգ, վըգ, վըգ, վըգ, ձայն մ'է կաւ

19 մու- ժեղ մը հնը- նա հոգ թը- թիս վը- ըայ փա- կաւ:

21

25 Երկրորդ Համար

Վեր- ջըն ալ տե- սայ որ բո- լոր մար- մինս կոտ- թի- կոր

27 կար- ծես թէ վրաս ձի- նեց Զիս սաս- տիկ թող մը բըռ- նեց:

2

29



Զըն-կըր, զըն-կըր դո- դա-ցի, վեր-մա-կիս տակ սո- դա-ցի

31



վեր-ջըն ալ բըր-տին-քին մե-ջը յո-դա-ցի:

33



Երրորդ Համար

37



Հար-ցուցի տըր-թո-րին, մե-ծա-պատ-ուութ-եան նո-րին,

39



ը-սաւ որ ա-սի-կա կը կոչ-ուի մա-լա ըր-ա:

41



ին-ծի տըր-ուաւ լե-դի դեղ եւ մի քա-նի ա-սեղ-նէր

43



ը-սաւ որ ա-սի-կա կը բե-րէ մութ-եղ:

Տանտիկին կ'ուզենք¹⁶
[Վեր. Կոստան Մոմճեան]
Սա դուստրը մ'է ազնուատոհմ մեծատան Ուսած՝ ապրիլ կեանք մը փափուկ, պճնազարդ Ծնողք իր հետ մեծ գումարներ օժիտ տան, Թէ կամենամ կեանքի ընկեր ընտրել զայն: Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ձայն՝ Բայց ականջիս տակ խօսի ինձ մի մեղմ ձայն՝ Կրկ. Մենք չենք ուզեր օժիտատր մ'օրհորդ. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:

¹⁶ Չախչախեանի նոթատետրին մէջ այս երգին մասին գրուած է թէ «գրի առնուած է մայրերու օրուան առթիւ, 1955 Մայիս»: Այս երգը կը գտնենք նաեւ Արմենակ Արըզեանի (Տատեր) հեղինակութեամբ *Հազար ու մէկ ծաղիկ* վերնագրեալ գիրքին մէջ (Պոստոն, տպ. Հայրենիք, 1913, 132 էջ): Գիրքը կազմողը՝ Արմենակ Արըզեան, որ գիրքին մէջ հանդէս կու գայ նաեւ Տատեր (=ընկեր) գրչանունով, 1 Դեկտեմբեր 1913 թուականը կրող իր «Յառաջաբան»ին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ Հալեայի առաջնորդ Ներսէս եպս. Դանիելեանի աջակցութեան, կը նշէ թէ գիրքին հատոյթին 25%ը պիտի յատկացուի «Ձէյթունի հայ վարժարանաց», անցնելով որ գիրքը դրուած է Թրոյի Հայ Առաքելական եկեղեցիի հոգաբարձութեան տրամադրութեան տակ:

Գրքոյկը կ'ընդգրկէ Արըզեանէն թրքերէն բանաստեղծութիւններ, տեսթաններ, հանելուկներ, խրատներ եւ այլ գրութիւններ՝ բոլորը թրքերէն: Գիրքին երկրորդ մասին մէջ կը հանդիպինք Դանիելեան եպիսկոպոսի կաղանդէքներուն, նաեւ այլոց հայերէն ու թրքերէն չափածոյ գրութիւններուն: Այս խումբին մէջ կը հանդիպինք նաեւ Վեր. Կոստան Մոմճեանի գրած միքանի բանաստեղծութիւններուն, որոնցմէ մին է «Տանտիկին կ'ուզենք»ը, տպուած գրքոյկին 77-78 էջերուն: Շահեկան է այն որ 1910ականներուն շրջանառութեան դրուած բանաստեղծութիւն մը, որ շատ հաւանաբար երգուած ալ է, երգուած է նաեւ Այնճարի մէջ, 1950ականներուն: Բաղդատելէ ետք գրքոյկին բնագիրը այս ձեռագրին հետ, ի յայտ եկաւ որ ձեռագիրէն կը պակսի մէկ տուն:

Գրքոյկը մեր ուշադրութեան յանձնեց դոկտ. Արմէն Իւրնէշլեան որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Գրքոյկը մատչելի է համացանցի վրայ, հետեւեալ հասցեով.-

https://books.google.com.lb/books?id=0odCAQAIAAJ&pg=PA77&lpg=PA77&dq=%D5%8D%D5%A1+%D5%A4%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D6%80+%D5%B4%D5%A8%D5%B6+%D5%A7+%D5%A1%D5%A6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A1%D5%BF%D5%B8%D5%B0%D5%B4+%D5%B4%D5%A5%D5%AE%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6&source=bl&ots=WYNiyqX6kF&sig=ACfU3U3U0Gmk2ofLn0bvQlbk1dsKj-FDqW&hl=en&sa=X&ved=2ahUKewjOg8_oI4uGAXQUKQEHTG9CDcQ6AF6BAglEAM#v=snippet&q=%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A5%D5%AC%D5%AB&f=false :

<p>Եւ սա մին է գեղեցկադէմ, գեղանի Վեհ բնութիւնն կարծես օժտած է զանի Ահա քեզի գեղեցկութեան մի պատկեր Ալ ի՞նչ պակսի ընտրել զնէ ինձ ընկեր: Իսկ այն ծայնը կը փսփսայ ականջիս՝ Իսկ այն ծայնը կը փսփսայ ականջիս՝</p> <p>Կրկն. Մենք չենք ուզեր սոսկ դէմքի փայլ սիրելի... Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:</p>
<p>Սա աղջիկ մ'է դպրոցական ուսանող, Ճարտար, խօսող, գրող, թէեւ չունի փող Դասատան մէջ փայլի որպէս մի արեւ, Ինձ ամէնէն յարմար կինը արդարեւ: Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ձայն՝ Բայց ականջիս միշտ կը զարնէ այն խոլ ձայն՝ Կրկն. Մենք չենք ուզեր գրել կարդալ միմիայն Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:</p>
<p>Սա աղջիկ մ'է դիրքով, տեսքով ինչ խոնարհ, Ոչ ուսանող, ոչ գեղանի, ոչ քնարահար Թէեւ՝ բայց նէ ընտանեկան Սուրբ յարկին Տակ՝ լաւ գիտէ ապրիլ որպէս տանտիկին: Չգիտեմ արդեօք ընտրելու՞ եմ նէ թէ՞ ոչ: Չգիտեմ արդեօք ընտրելու՞ եմ նէ թէ՞ ոչ: Յայնժամ այն ձայն մեղուկ մ'առնէ ինձի կոջ՝ Յայնժամ այն ձայն մեղուկ մ'առնէ ինձի կոջ: Կրկն. Տանտիկին կ'ուզենք, տանտիկին կ'ուզենք Տանտիկին, տանտիկին, տանտիկին կ'ուզենք:</p>

Հայր Ամերիկայում¹⁷	
<p>Էս հակոտնեայ աշխարհում Ամենայն ինչ է փոխուել Կրօնք, լեզու, ազգութիւն Մոտայի է վերածուել: <i>Էս ի՞նչ է սա մոտա է:</i></p>	<p>Հայ պատանին որ ըսեմ Նա գիտէ ամէն բան Դատարկ գլխով փաթաթէս Խօսքով փրկի Հայաստան: <i>Էս ի՞նչ է սա մոտա է:</i></p>
<p>Եկեղեցի գնալիս Քաֆէ Շանթան է կարծում Ոտքը ոտքը վրայից Նա երբեք վար չի առնում:</p>	<p>Մէկն էլ տեսնես փողոցում Ոսկի ականցը քթին Անգլիերէն է ջարդում Քծնող ժպիտն երեսին:</p>

¹⁷ Գրութեան տակ դրուած է Անժէլ Էմմօլլեան անունը, որ հաւանաբար ընդօրինակողին, կամ արձանագրողին անունն է:

<i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	<i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Հայ տիկինը իր զակին Անգլիերեն է խօսում Փափա, մամա, կուտ մորնինկ Անտեր թութակ ես դարձնում: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Հայ քարոզիչ պատուելին՝ «Հայաստանն է ոռուսցել» Վարդան Ներսէս Սահակին Նա բնաւ չի քարոզել: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Հայիոյում է Րաֆֆին Նրան սրիկայ է կոչում Դրանց փոխան Հիջքրից Իտոտ ոռոհիկ է գանձում: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Դուք չէք տեսնի վարդապետ Լայն մօրուքով ու վեղար Հագած ունի փրինս Ալպերթ Ու սիլինտըր ¹⁸ : <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Նա չի պահում եւ Մեծ Պահք Ա՛խ, ստամոքսն է տկար Բայց ամբիոնից պահում ծոմ Քարոզում է անդադար: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Հայ օրիորդ նազելի Օ՛, շատ սիրում է թոման Սենեակումը հայելի Դէմքն է զննում անպայման: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Նա չի սիրում հայ տղայ Ասի՛ կարճ է, միւսը՝ ցած, Սա տգեղ է, նա՛՝ աղքատ: Աչքն օտարին է տնկած <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Թէ ուզում ես բախտ շինել Ճաշարանապետ կը լինես Բայց քիչ օրից անպատճառ Շունչդ եգիպտոս կը քաշես: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Ճաշարանում շիք պարոն, Կոկոզավիզ, թեթեփկ Հոն պառկում է, հոն ուտում Վճարում է ապառիկ: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>	Եւ խօսում է ¹⁹ Պոնժուր միսիւ քեզ կ'ըսէ Բայց հենց իր պարտքն ուզես Քիթն ու բերանը կը կախէ: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>
Մի էլ տեսնես երկու հայ Ընկերութիւն են կազմել Բայց հաշիւներ քննելիս	Իրար գլուխ են պատռել: <i>Էս ի՞նչ է սա մոտրա է:</i>

¹⁸ Մէկ անընթ. բառ:

¹⁹ Մէկ անընթ. բառ:

TWO ETHNOGRAPHIC-FOLK SONGS FROM ANJAR AND BEIRUT OF THE 1940S,
AND A FEW OTHER RHYMED WRITINGS/SONGS
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

The paper introduces a number of songs and rhymed writings which were sung and recited among the Lebanese Armenian circles of the 1940s and 1950s.

The first is an ethnographic song from Musa Ler/Anjar. It is the song sung during the departure of the bride from her paternal home. Both the lyrics and music of the one published here are a variation of the one published in the ethnographic song book of Musa Ler/Anjar.

The second song, which is an unpublished song sung in the Jibeil Birds' Nest Orphanage and indeed in Anjar, too, during the 1940s and 1950s, is about the bite of the mosquito which causes malaria. The song describes the consequences of the bite of the mosquito and how the victim suffered and had no choice but to seek the advice of the doctor, who prescribed a number of injections, which eventually improved the health of the victim. The music of the song has been retrieved and published alongside the lyrics.

One of the three other rhymed writings, named "Dandigin Guzenk" (We Want a Housewife), was published in a book in 1913 in Boston. The last two, however, seem to be heretofore unpublished. The music for these three poems has not been retrieved so far.

The paper notes that all five of these songs were frequently sung in the 1940s and the 1950s in Lebanese Armenian circles.

ՎԱՋԳԷՆ ՇՈՒԶԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԻՄՈՆ ՎՐԱԳԵԱՆԻՆ (1927-31)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

«Վազգէն Շուշանեանի հետք եւ առնուազն փասնեակ փարիներ մօտ եմ եղել: Չեմ ասում «մտերիմ» որովհետեւ Վազգէնը իր բնատրուութեամբ չունէր եւ չէր կարող մտերիմ ունենալ, որքան այլասէր եւ այլախոհ էր երեւում, խորքում եսակենսորոն էր, դժուար հանդուրժող ու դժուար հանդուրժելի: Խիստ շեշտուած անհատականութիւն էր»¹:

Այս տողերուն հեղինակի՝ Սիմոն Վրացեանի (1882-1969), եւ իր կրտսեր ժամանակակիցի՝ Վազգէն Շուշանեանի (1903-1941) յարաբերութեան մեր գլխաւոր աղբիւրներն են 1963ին Վրացեանի հրատարակած յուշագրութիւնը եւ Շուշանեանէն ստացած նամակները, որոնք ի պահ դրուած են Պէյրութ, Համազգայինի գրական արխիւի՝ Սիմոն Վրացեանի թողօնին մէջ²:

Յայտնի չէ, թէ արդեօք անոնք հանդիպա՞ծ էին Հայաստան 1920-21ին, երբ Շուշանեան հոն գտնուած է անկախութեան վերջին ամիսներու եւ խորհրդայնացման սկիզբի դարձակէտին՝ Արմաշի երկրագործական վարժարանի իր դասընկերներուն հետ: Ամէն պարագայի, պէտք է ենթադրել, որ անոնց յարաբերութիւնը սկսած ըլլալու է 1922-23ի շուրջ, երբ երկուքն ալ արդէն հաստատուած էին Փարիզ:

22-27 Օգոստոս 1925ին, Հ.Յ.Դաշնակցութիւնը մասնակցած է Ընկերվար միջազգայնականի Մարսէյի համագումարին³: Հինգ հոգիւնց պատուիրակութեան կողքին (Շաւարշ Միսաքեան, Լեւոն Շանթ, Արշակ Զամալեան, Ռուբէն Տէր Մինասեան եւ Սիմոն Վրացեան), կը մասնակցէին նաեւ շրջանէն երեք երիտասարդներ՝ Պ. Զամարեան, Հ. Ժամկոչեան եւ Վազգէն Շուշանեան, որ ներկայ եղած է Բ. յանձնախումբի նիստերուն («Աշ-

¹ Սիմոն Վրացեան, *Կեանքի ուղիներով. դէմքեր, դէպքեր, ապրումներ, Գ. հատոր*, տպ. Մշակ, Պէյրութ, 1963, էջ 215:

² Համազգայինի գրական արխիւ, Սիմոն Վրացեանի թողօն, պահարան Ե/Ա-8: ԺԴ. եւ Ի. նամակները Շուշանեանի ձեռագիրով են, թէւ Լեւոն Գրիգորեանի ստորագրութիւնը կը կրեն:

³ Տե՛ս՝ «Ընկերվար միջազգայնականի համագումարը», *Յանուար*, 23 Օգոստոս 1925. նաեւ՝ Շ., «Արիսպագոսը», *Յանուար*, 26 Օգոստոս 1925. նաեւ՝ «Աշխատատարական ընկերվարական ընդհանուր ժողովը», *Յանուար*, 30 Օգոստոս 1925. նաեւ՝ Շ. «Մղձաւանջը», *Յանուար*, 30 Օգոստոս 1925. նաեւ՝ «Աշխատատարական համագումարին որոշումները Խորհրդային Միութեան եւ ազգերու ինքնորոշման մասին», *Յանուար*, 2 Սեպտեմբեր 1925:

խատուութեան կեանքի պայմանները եւ գործազրկութիւնը»⁴): Նոյն տարին, կուսակցութեան պաշտօնաթերթը՝ *Դրօշակ*, վերսկսած էր իր հրատարակութիւնը Վրացեանի խմբագրութեամբ: Վերջինս վկայած է, թէ Շուշանեան «մտերիմ էր երէց ընկերների շարքի հետ, եռանդով մասնակցում էր «Դրօշակ»ի կուսակցական աշխատանքին, մօտ էր խմբագրութեան, որին, ի վերջոյ, գործօն աշխատակից դարձաւ, մանաւանդ, ընկերվարական նիւթերով»⁵: Ինչպէս ցոյց կու տայ առաջին նամակը, Մարտ 1927ին Վրացեան աշխատակցութեան հրաւեր ուղղած է Շուշանեանին⁶:

«Ես մինչեւ 1933, ուրեմն երեսուն տարեկանիս, օրական 16 ժամ աշխատած եմ, Աստուծոն օրը, նոյնիսկ արձակուրդներու: Բանուորութիւն ըրած եւ նախնական ուսումնաւորակած, տեղ մը հասնելու համար: Վալայր, Կրընուպ, Փարիզ: Օր մ'իսկ պարապի չեմ անցուցած: Մինչեւ այդ թուականը դերձակի մը հագուստ մը կարել չեմ տուած. կ'երթայինք «Մառշէ օ փիւս»էն (պիթ պագարի) կը գնէինք մեր հագուստները: Ծխախոտիս եւ գիրքերուս դրամը եւ կտոր մը հաց, ուրիշ բան չեմ ուզած, չեմ փափաքած: Այդ քիչը սակայն շահուած՝ արդա՛ր վաստակով»⁷:

Կարօ Փօլատեանի գրի առած այս տողերը խօսուն վկայութիւն մըն են Շուշանեանի՝ ֆրանսական կեանքի առաջին տասնամեակին մղած ապրուստի պայքարին: Վրացեանին ուղղուած նամակներու թղթածրարը կը վերաբերի այդ շրջանի մէկ քանի տարիներուն՝ 1927-31ին, հանդիսանալով խօսուն վկայութիւն մը Շուշանեանի ապրած դժուարութիւններուն եւ յամառ հետապնդումներուն՝ ո՛չ միայն իրեն, այլեւ իր կարգ մը ընկերներու համար նիւթական օժանդակութիւն ձեռք բերելու: 1930ին նոյնիսկ հետամուտ եղած է Միացեալ Նահանգներ գաղթելու:

Ըստ Վրացեանի վկայութեան, իր եւ Շուշանեանի խօսակցութեան գլխաւոր նիւթը գրականութիւնն էր. «Նա ապրում էր գրական հարցերով: Ազահութեամբ լսում էր ամէն բան որ կապ ունէր գրականութեան, մանաւանդ, հայ գրականութեան հետ: Անյագ՝ բայց անկարգ ընթերցող էր: Կարդում էր, Նիկոլ Աղբալեանի պէս, ամէն բան, որ ձեռքն ընկնէր»⁸: Նա-

⁴ «Հ. Յ. Դաշնակցութիւնը Բ. ինտերնասիոնալի համագումարին», *Դրօշակ*, Սեպտեմբեր 1925, էջ 95: Հմմտ.՝ Վրացեան, էջ 216: Համագումարի նկարագրութիւնը տե՛ս՝ «Մարտէլիի համագումարը», *Դրօշակ*, Սեպտեմբեր 1925, էջ 86-93: Հետաքրքրական է, որ մամուլին մէջ միայն յիշուած են հինգ աւագները իբրեւ ներկայացուցիչ (հմմտ.՝ «Հայկական լուրեր», *Հայրենիք*, 2 Սեպտեմբեր 1925):

⁵ Վրացեան, էջ 212:

⁶ *Դրօշակի* աշխատակցութեան մասին, տե՛ս՝ Կ. Յովհաննէսեան, «Անկեղծ ընկերվարականը», *Բագին*, Յունուար 1983, էջ 131-145:

⁷ Կարօ Փօլատեան, «Գրագէտը, որ իր հոգոյն խորը Արարատ ունէր», *Բագին*, Յունուար 1983, էջ 23:

⁸ Վրացեան, էջ 210:

մակներուն մէջ չեն պակսիր գրական եւ մտաւորական հարցերու արծարծումներ, թէեւ անոնք տիրական դերակատարութիւն չունին:

Նամակներուն երկրորդ կարեւոր նիւթը Նահատակ գրագէտներու բարեկամներու (ՆԳԲ) գործունեութիւնը եղած է: Սեպտեմբեր 1929ին հիմնուած հրատարակչականը, ինչպէս իր անունը կը յուշէր, նպատակ դրած էր «*հաւաքել եւ հրատարակութեան տալ արեւմտահայ նահապետական մեծ գրողներուն երկերը*»: Վրացեան ու Շուշանեան քանիցս գրուցած են Մեծ Եղեռնի զոհ գրողներուն երկերու հրատարակութեան հարցին շուրջ: Ըստ Վրացեանի, երիտասարդ գրագէտն էր, որ զինք առաջնորդած է առաջին հաւաքոյթին, որ 10-12 հոգիի ներկայութեամբ տեղի ունեցած է փարիզեան արուարձաններէն Սէն-Քլուի սրճարանի մը վարի յարկին մէջ: Նախագահ ընտրուած է Վրացեան, քարտուղար՝ Մկրտիչ Պարսամեան, իսկ գանձապահ՝ Լեւոն Գրիգորեան: Միւս անդամներն էին Վազգէն Շուշանեան, Լեւոն Մոզեան, Կարօ Սասունի, Շաւարշ Նարդունի, Մկրտիչ Երիցանց եւ Օհան Կարօ: Ընկերութիւնը գործի ձեռնարկած է 4-500 ֆրանքի դրամագլուխով, որ գոյացած էր քանի մը անդամներու տուած գումարէն իբրեւ փոխառութիւն⁹: Ըստ ամենայնի, արդարացի էր մահէն երկու ամիս առաջ՝ 4 Փետրուար 1941ին, Շուշանեան գրածը իր օրագրին մէջ.

Մարդ ստիպուած է ամչնալ նոյնիսկ այն բոլոր ազնիւ ձեռնարկներէն՝ որոնց համար երիտասարդութիւն վատնած է:

Օրինակ այդ Ն. Գ. Բ.ը:

Կրնամ գէթ այս էջերուն վստահիլ թէ այդ միութեան գաղափարը յղացողը ես եմ եղած ու ես է, որ առաւելապէս աշխատած եմ զայն կեանքի կոչելու¹⁰:

Վրացեան գրած է Շուշանեանի աշխատանքին մասին.

Շուշանեանը նախանձախնդիր եւ հոգածու էր առհասարակ, դէպի հայ գրականութիւնն ու հայ հեղինակները: Այդ ես տեսայ Նահատակ Գրագէտների Բարեկամների Ընկերակցութեան հիմնադրութեան եւ հետագայ աշխատանքների նրա բերած մասնակցութիւնից: Նահատակ Գրագէտների Բարեկամների ընկերակցութիւնը կարճատեւ, բայց հետաքրքրական երեւոյթ էր Սփիւռքահայ կեանքում: Իբրեւ համեստ, բայց գնահատելի ձեռնարկ, նա արժանի է յիշատակութեան: Ինչ չափով ես մաս ունեցայ այդ ձեռնարկում՝ որոշ չափով պարտական եմ Վազգէն Շուշանեանին¹¹:

Արձագանգելով ընկերութեան հիմնադրութեան, Յ.Ճ.Սիրունի արձանագրած է. «*Եւղծի խա՛յթն է արդեօք որ քով քովի բերեր է Փարիզի սաքանի մը սրտցաւ տղաքը: Տեսեր են անոնք որ հայ ժողովուրդի համապարած թշուառութեան, ընթացիկ հոգերու ու պանդուխտ կեանքի բազմաթիւ դժուարութեանց հետեւանքով, հայ մտաւորականութիւնը, պանդուխտ ու ցանուցիր ինք ալ, պատերազմի դադարումէն ահա՛ տասը տարի յետոյ*

⁹ Նոյն, էջ 219-20:

¹⁰ «Վազգէն Շուշանեանի օրագիրը», *Նայիրի*, 14 Հոկտեմբեր 1956, էջ 9:

¹¹ Վրացեան, էջ 219:

տրակալին հաւաքական որեւէ ձեռնարկ չ'ընեն՝ ամփոփելու եւ հրատարակելու համար հայ գրչի այդ ազնիւ աշխատատեղերուն ցրուած էջերը: Համեմատական հանգստի օրեր են այսուհանդերձ, ու պէտք է որ այլեւս կատարուի այդ աշխատանքը, մտածեր են անոնք»¹²:

Ծրագրուած էր, առաջին հերթին, 12 հատորներու լոյս ընծայումը (Ռուբէն Զարդարեան, Մելքոն Կիրճեան, Մշոյ Գեղամ, Գեղամ Բարսեղեան, Արփիար Արփիարեան, Գրիգոր Զօհրապ Տիգրան Զէօկիւրեան, Երուանդ Օտեան, Արտաշէս Յարութիւնեան, Երուանդ Սրմաքէշխանլեան, Ռուբէն Սեակ, Տիրան Զրաքեան), որոնցմէ առաջին եօթը լոյս տեսած է 1930-33 ժամանակաշրջանին (1930ին՝ մէկ, 1931ին՝ չորս, 1932ին՝ մէկ, 1933ին՝ մէկ)¹³:

1930ի սկիզբին Վրացեան տարի մը մեկնած է Ամերիկա կուսակցական գործով¹⁴: Տարեվերջին, Նիւ Եորքի մէջ կազմած է ՆԳԲի մասնաճիւղ մը, որուն նպատակն էր թէ՛ նիւթապէս սատարել Փարիզի հրատարակչական գործին եւ թէ՛ օգնել գիրքերու սպառումին¹⁵: Մասնաճիւղին մաս կը կազմէին բժ. Յովհ. Գ. Էրկանեան (ատենապետ), Եղուարդ Սահակեան (ատենադպիր), Ղազար Ե. Պոյաճեան (գանձապահ), բժ. Լեւոն Մ. Աճէմեան, Յակոբ Անտոնեան, Յակոբ Խաչմանեան, Ասատուր Խտրեան, Յովհան Կարապետեան, Պետրոս Կէօճիկ, Յ. Պարոյրեան, պատ. Ա. Ա. Պետիկեան եւ Յովսէփ Փուշման (անդամներ): Նիւ Եորքի մասնաճիւղը 1931ի սկիզբին հաղորդագրութիւն մը հրատարակած է, յայտնելով, թէ արդէն Զարդարեանի հատորը լոյս տեսած էր, Կիրճեանի հատորը մամուլի տակ

¹² Շրջիկ, «Նահատակ գրագէտներու բարեկամներ». նօթեր հին աշխարհէն», *Հայրենիք*, 15 Նոյեմբեր 1929, էջ 1-2:

¹³ Ռուբէն Զարդարեան, *Ամբողջական երկեր*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 1, Փարիզ, Imprimerie de Navarre, 1930. նաեւ՝ Հրանդ (Մելքոն Կիրճեան), *Ամբողջական երկեր. Ա. Պանդուխտի կեանքէն*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 2, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Գեղամ Տէր Կարապետեան (Գեղամ), *Տարօնի աշխարհ. պարկերներ ու պարմուածքներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 3, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Գեղամ Բարսեղեան, *Ամբողջական գործը. արձակ էջեր, պարմուածքներ ու զանազանք*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 4, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Արփիար Արփիարեան, *Պարմուածքներ ու վիպակներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 5, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Գրիգոր Զօհրապ, *Ծանօթ դէմքեր եւ պարմուածքներ* «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 6, Փարիզ, Imprimerie de Navarre, 1932. նաեւ՝ Տիգրան Զէօկիւրեան, *Վանքը. հերոսը*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 7, Փարիզ, Imprimerie de Navarre, 1933:

¹⁴ Վրացեան, էջ 221:

¹⁵ Նոյն, էջ 220:

էր, իսկ Բարսեղեանի հատորը՝ տպարան ուղարկուելու պատրաստ: Բաժանորդագրութեան գինը սահմանուած էր 10 տոլար՝ 12 հատորի դիմաց, եւ ըսուած է, թէ 12րդ հատորը պիտի ըլլար «*հաւաքածոյ մը հաւորները երկերու այնպիսի հեղինակներէ որոնց գործը առանձին առանձին վերցուցած բաւական չէ հաւոր մը լեցնելու*», ինչ որ շեղում մըն էր սկզբնական նախագիծէն, եթէ երբեւէ նման ծրագիր եղած էր: Ինչպէս նամակները ցոյց կու տան, չափազանցութիւն մըն էր, սակայն, այն յայտարարութիւնը, թէ Փարիզի յանձնախումբը որոշում կայացուցած էր «*մինչեւ Դեկտեմբեր, 1931, հրատարակութեան տալու մնացեալ հաւորները եւ այսպիսով լրացնելու այս առաջին շարքը*»¹⁶: Հաւանաբար միջոց մըն էր՝ յաւելեալ հետաքրքրութիւն ստեղծելու հնարաւոր բաժանորդներու շրջանակին մէջ: Հայրենիք եւ Ասպարէզ խմբագրականներով անդրադարձած են նախածեռնութեան¹⁷:

Վրացեան, որ 1931ի սկիզբը վերադարձած է Փարիզ, վկայած էր, որ Շուշանեան «*«Յառաջ»ի հետ յարաբերութիւնները գրեթէ խզել էր, չեմ յիշում, ի՞նչ պատճառով: «Հայրենիք»ից դառնացած էր, խմբագրական, իր կարծիքով, անտեղի կրճատումների համար: «Յուսաբեր»ի հետ էլ հաշիւ չէր*»¹⁸: Հաւանաբար այս մեկնակէտով, 1931ի վերջերուն, Շուշանեան գաղափար յղացած է գրական թերթ հրատարակելու Մետրոպ Գոյումճեանի եւ Լեւոն Մոզեանի քաջալերանքով: Վրացեան հրաւիրուած է խորհրդակցութեան՝ Café d'Harcourt (Place de la Sorbonne, փակուած՝ 1940ին), 10-15 հոգիի ներկայութեամբ: Վրացեան մերժած է իրեն եղած առաջարկը՝ պատասխանատու խմբագիր ըլլալու եւ խորհուրդ տուած՝ հրաժարիլ այդ միտքէն, կասկածելով, որ խորհրդային աղբիւր մը կար անոր ետին: Այդ առիթով, գրած է «Առակ մեծ փոքրերի համար» (8 Յունուար, 1932)¹⁹:

ՆԳԲԻ 1933ի հաշուետուութիւնը կը նշէր, թէ «*տնտեսական տագնապը քիչ մը կասեցուցած է «Բարեկամներու» աշխատանքի ընթացքը, բայց յուսալի է, որ նիւթական պայմաններու բարելաւումով, նորէն կ'արագանայ գործին թափը*»: Մատենաշարի առաջին վեց գիրքերը տպուած էին 1500 տպաքանակով, իսկ Չէօկիւրեանի հատորը՝ 1000 օրինակով: Տպուած 10.000 օրինակէն ծախուած էր 5.081ը: Նախնական բաժանորդագրութիւնը արձանագրած էր 131 բաժանորդ: Մուտքը 78.587,95 ֆրանք էր,

¹⁶ «Կոչ ամերիկահայ գրասէր հասարակութեան», Հայրենիք, 18 Յունուար 1931, էջ 1 (արտատպուած՝ Ասպարէզ, 23 Յունուար 1931, էջ 1 եւ 3): Տե՛ս նաեւ Ե. Ս. [Եդուարդ Սահակեան], «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ Նիւ Եորքի մէջ (տեսակցութիւն մը ատենապետին հետ)», Հայրենիք, 4 Ապրիլ 1931, էջ 1-2:

¹⁷ «Նահատակ գրագէտներու գործեր», Հայրենիք, 24 Յունուար 1931, էջ 4. «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ», Ասպարէզ, 23 Յունուար 1931, էջ 2:

¹⁸ Վրացեան, էջ 213: Տե՛ս նաեւ՝ նոյն, էջ 217: Ամսագրի կրճատումներուն մասին, տե՛ս՝ նամակ ԺԹ.:

¹⁹ Տե՛ս՝ Վրացեան, էջ 212-15:

իսկ ելքը՝ 78.546,80 ֆրանք: Նախատեսուած յաջորդ հեղինակներն էին Օտեան, Երուխան, Արտաշէս Յարութիւնեան, Չրաքեան եւ Ռուբէն Սեալ²⁰:

Միայն տնտեսական տագնապը չէր, որ հրատարակչական թափը կասեցուցած էր, այլեւ 1932-33ի Մարտկոցական շարժումը, որուն մասնակիցներէն էին Շուշանեանը, Մոզեանը եւ Երիցանցը, որոնք բնականաբար դուրս եկած են ՆԳԲի կազմէն²¹: Վրացեանի վկայութեամբ, Շուշանեան «*դժգոհ էր, ինչպէս ինքն էր ասում, դաշնակցական մամուլի մէջ, իր կարծիքով, իշխող մենապիրութիւնից*»: Այս դժգոհութեան պատճառը, ըստ յուշագրին, հիներու եւ նորերու պայքար մըն էր, քանի որ «*դաշնակցական թերթերի գլխին ամուր նստել էին հները, նորերուն տեղ չէր մնում: Խմբագիր, գործիչ, պատուիրակութիւն, ազգային իշխանութիւն, կուսակցական ղեկավարութիւն հների ձեռքն էր*»: Վրացեան նորերու այսօրինակ դժգոհութեան վերագրած է *Մենք* պարբերականի հրատարակութիւնը, «*որ առակի թոչունի նման խոստացաւ ծովը այրել, բայց իսկապէս ինք այրեցաւ*», իսկ նոյն հոգեբանութեան հետեանք համարած է Մարտկոցական շարժումը²²:

1933ին, ՆԳԲի ծրագիրը շեղում մը արձանագրած է. ութերորդ հատորը նուիրուած է հրատարակչականի անդամ, նոր մահացած արձակագիր Օհան Կարոյին (1890-1933)²³: Ծրագրով նախատեսուած հեղինակներէն յաջորդաբար լոյս տեսած են Օտեանի (1935) եւ Յարութիւնեանի (1937) հատորները²⁴:

Բ. աշխարհամարտի նախօրեակին, հրատարակչատունը որդեգրած է նոր անուն մը եւ նոր գործելակերպ մը, որուն մասին «Կարետոր յայտարարութիւն» մը կատարած է 1939ին՝ *Արդի հայ գրականութիւն* հաւաքածոյի առաջին հատորի կողքի ներքին կազմին վրայ.

Արդ, կը գտնուինք գործունէութեան նոր շրջանի մը սկիզբը: *Նահապակ կամ մեռած* գրագէտներուն հրատարակութիւնը վերջացած չէ անշուշտ: Մէկէ աւելի դէմքեր իրենց կարգին կը սպասեն: Եւ սակայն մեր նոր կեանքը ունի նաեւ իր նոր պարտադրութիւնները: Անցեալի անսպառ նիւթերու կարգին, արդէն կազմուած է *Արտասահմանի նոր գրականութիւն մը*, գրական բոլոր սեռերով: Հրատարակչական ուրիշ որ եւ է մարմին գոյութիւն չունի այն նոր հոգը ստանձնելու

²⁰ «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ», *Վէմ*, 2:1933, էջ 141-43:

²¹ Վրացեան, էջ 220:

²² Նոյն, էջ 212:

²³ Օհան Կարո, *Խրճիթներէն մինչեւ խորհրդարանը. արձակ էջեր եւ քերթուածներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 8, Փարիզ, Imprimerie de Navarre, 1933:

²⁴ Երուանդ Օտեան, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 9, Փարիզ, Imprimerie de Navarre, 1935. նաեւ՝ Արտաշէս Յարութիւնեան, *Արձակ էջեր եւ քերթուածներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 10, Փարիզ, Imprimerie de Navarre, 1937:

համար: Նկատի ունենալով ուրեմն օրուան պահանջները, *Նահապակ գրագետներու բարեկամներ* հրատարակչական մարմինը նպատակայարմար կը գտնէ ինքզինքը կոչել ասկէ յետոյ

ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

իր գոյութեան տալով ատելի ընդհանուր եւ ընդարձակ իմաստ մը: Առանց երբեք շեղելու իր հիմնական նպատակէն, կ'ընդարձակէ իր գործունէութեան դաշտը, եւ կ'առաջադրէ հրատարակել նաեւ երիտասարդ կամ տարէց, *կենդանի* հեղինակներու գործերն եւս, պահանջին եւ իր կարելիութիւններու սահմանին մէջ²⁵:

Հին անդամներէն Վրացեանի, Պարսամեանի, Գրիգորեանի եւ Նարդունիի կողքին, յայտարարութիւնը ստորագրած են նոր անդամները՝ Հրաչ Սարգիսեան եւ Արշալոյս Խանէտանեան:

Անունի փոփոխութենէն ետք, հրատարակչականը լոյս ընծայած է *Արդի հայ գրականութիւն* եռահատոր շարքը, որ կ'ընդգրկէր Սփիւռքի եւ Հայաստանի գրականութեան նուիրուած ժողովածուներ: Շուշանեանի վերոյիշեալ գրառումը Սփիւռքի գրականութեան երկրորդ հատորին առիթով նաեւ քննադատութիւն մը կը պարունակէր.

Փոխած են միութեան սկզբնական անունը, շեղած նպատակէն, ընդգրկած աշխատանքի էն դիրին եղանակները,- յանգելու համար այս սնանկութեան:

Արդի հայ գրականութիւն, - Աւելի քան քառասունըհինգ անուններ, այլ հազիւ տասնըհինգ հոգի, որ իրապէս արժանի ըլլան ժողովածուին մաս կազմելու²⁶:

Նոյն հատորի նախաբանին մէջ, հրատարակիչները կը յայտնէին, թէ կարգով լոյս պիտի տեսնէին Սրմաքէշխանլեանի, Չրաքեանի եւ Սեւակի հատորները, որոնցմէ միայն լոյս տեսած են Սրմաքէշխանլեանին (1942) եւ Սեւակին (1946) նուիրուածները²⁷: Անոնք ատելցուցած են, թէ այնուհետեւ

²⁵ *Արդի հայ գրականութիւն (ժողովածու)*, Ա. հատոր. *արքայասահմանի գրողներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 11, Փարիզ, տպարան «Արաքս», 1939. նաեւ՝ *Արդի հայ գրականութիւն (ժողովածու)*, Բ. հատոր. *արքայասահմանի գրողներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 12, Փարիզ, տպարան «Արաքս», 1941. նաեւ՝ *Արդի հայ գրականութիւն (ժողովածու)*, Գ. հատոր. *արքայասահմանի գրողներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 13, Փարիզ, տպարան «Արաքս», [1944]: Վերջին հատորը թուագրած ենք հիմնուելով անոր ետեւի կողքը տպուած հաշուեկշիռին վրայ, որ կը ներկայացնէ 1 Յունիս 1942-30 Ապրիլ 1944 հաշուետուութիւնը, ուր ներառուած է 13րդ հատորի տպագրութեան ծախսը: Ասիկա կը փաստէ, որ անյայտ պատճառներով, թերեւս նիւթերը մէկտեղելու դժուարութեամբ, վերջինս լոյս տեսած է 14րդ՝ Սրմաքէշխանլեանին նուիրուած հատորէն ետք: 1942ին լոյս տեսած հատորը հաւանաբար տպուած է տարուան առաջին կէսին, քանի որ անոր տպագրութեան ծախսերուն ակնարկութիւն չկայ հաշուետուութեան մէջ:

²⁶ «Վազգէն Շուշանեանի օրագիրը», էջ 9:

²⁷ Օտեան, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 9, Փարիզ, Imprimerie de Navarre, 1935. նաեւ՝ Արտաշէս Յարութիւնեան, *Արձակ էջեր եւ*

կարգ մը հեղինակներու սպառած գործերը մատենաշարին մաս պիտի կազմէին եւ թուարկած են արեւմտահայ ու արեւելահայ 14 անուններ²⁸: Այդ ցանկէն միայն լոյս տեսած են Գարեգին Սրուանձտեանցի²⁹ եւ Եղիա Տէմիրճիպաշեանի հատորները³⁰ (վերջինիս գործերը երբեք առանձին գիրքով հաւաքուած չէին): Վրացեան վկայած է, որ «Փարիզի հայ գաղութի խամրումով, այս ընկերակցութեան եւս վերջ տրուեց եւ գրքերի մնացորդը փոխանցուեց Համազգային Մշակութային Ընկերութեան»³¹:

Շուշանեանի գրական ստեղծագործութեան մասին, Վրացեան արձանագրած է տողեր, որոնց ցուցումը կը տեսնենք իրեն ուղղուած նամակներուն մէջ.

Հիանալի հայերէն էր գրում, ինքնատիպ ոճ, ճոխ երեակայութիւն, ասելու բովանդակալից խորք ու ձեւ: Երկարապատում էր, երբեմն շատախօս լինելու աստիճան, մտքերն ու պատկերները յորդում էին նրա գրչից, եւ ինչ որ ասում էր՝ անկեղծ էր, իսկ անկեղծութիւնը առաջին պայմանն էր ոչ միայն կեանքի յարաբերութիւնների մէջ, այլեւ գրականութեան եւ արուեստի գործերում³²:

1993ին, հայրենի վաղամեռիկ գրականագէտ Սարգիս Փանոսեան (1955-94) ուսումնասիրած է Վրացեան-Շուշանեան նամակային թղթածրարը եւ հրատարակութեան պատրաստած՝ ՆԳԲի առնչուող եօթը նամակ (Թ., Ժ., ԺԱ., ԺԴ., ԺԹ. Ի. եւ ԻԱ.), որոնք խորհրդահայ ուղղագրութեամբ յետմահու լոյս տեսած են՝ անոր ներածական ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով, *Նորք* հանդէսին մէջ³³: Չորս նամակ (ԺԳ., ԺԵ., ԺԶ.

քերթուածներ, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 10, Փարիզ, Imprimerie de Navarre, 1937. նաեւ՝ Եր. Սրմաքէշխանլեան (Երուխան), *Պարմուածքներ ժողովրդական կեանքէ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 14, Փարիզ, տպ. Տէր Յակոբեան, 1942. նաեւ՝ Ռուբէն Սեւակ, *Բժիշկին գիրքէն փրցուած էջեր եւ քերթուածներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 15, Փարիզ, տպ. Արաքս, 1946:

²⁸ Արդի հայ գրականութիւն, Բ. հատոր, էջ 2:

²⁹ Գարեգին Սրուանձտեանց, *Համով-հոպով, Ա. հատոր*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 16, Փարիզ, տպ. Արաքս, 1949. Նոյն, *Համով-հոպով, Բ. հատոր*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 17, Փարիզ, տպ. Արաքս, 1950:

³⁰ Եղիա Տէմիրճիպաշեան, *Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 18, Փարիզ, տպ. Արաքս, 1955:

³¹ Վրացեան, էջ 220: Ընկերութեան 20 տարուան գործունէութեան հաշուետուութիւնը տե՛ս՝ Սկրտիչ Պարսամեան, «Քսանամեայ բարոյական եւ նիւթական համարատուութիւն «Հայ գրագէտներու բարեկամներ» հրատարակ[չ]ական ընկերութեան», *Հայրենիք*, 12 Յունիս 1949, էջ 1-2:

³² Վրացեան, էջ 218:

³³ Սարգիս Փանոսեան, «Վազգէն Շուշանեանը եւ «Նահատակ գրագէտներու բարեկամներ» ընկերակցութիւնը», *Նորք*, 3:1996, էջ 146-48. նաեւ՝ «Վազգէն Շուշանեանի նամակները Սիմոն Վրացեանին», *Նորք*, 3:1996, էջ 148-52:

եւ ԺԹ.) լոյս տեսած է 2009ին *Բազին* հանդէսին մէջ՝ առանց ներածութեան կամ ծանօթագրութիւններու³⁴:

Ներկայ հրապարակումը կը ներկայացնէ մեր օրերուն հասած Սիմոն Վրացեան-Վազգէն Շուշանեան ամբողջական թղթածրարը՝ 21 նամակ, ինչպէս եւ Ը. նամակին բովանդակած հարցումներուն Վրացեանի պատասխանները: Նամակները լոյս կը տեսնեն նոյնութեամբ:

Ա.

13 Մարտ 1927 Մամիրօլ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Ստացայ ձեր 8 [Մարտ] թուակիրը: Շնորհակալ եմ Ձեր աշխատակցութեան հրաւերին համար³⁵: Ընկերվարական երիտասարդական շարժման մասին դժբախտաբար անհրաժեշտ նիւթերը չունիմ: Անտարակոյս երիտասարդներու միջազգայինը պարբերական հրատարակութիւններ ունի բայց այստեղէն դժուար է ձեռք բերել: Ծանօթ եմ ֆրանսական երիտասարդական շարժման ուրին [sic] չարժեք յօդուած մը գրիել: Ի հարկէ կարելի է Ձեր ցանկացած նիւթ մասին յօդուած մը գրել բայց կ'ըլլայ վերիվարոյ. պիտի աշխատիմ աղբիւրներ փնտռել: Նիւթը զիս ալ շատ կը շահագրգռէ բայց իմ հետեւած պարբերականներուս մէջ մեծ բան մը չիկայ:

«Դրօշակ»ի³⁶ Մայիսի թիւին համար պիտի ղրկեմ յօդուած մը՝ Յունուարի, Փետրուարի, Մարտի եւ Ապրիլի ընկերվարական կեանքի մասին³⁷: Մինչեւ այդ փոքրիկ յօդուած մըն ալ Աշխատանքի Միջազգային Գրասենեակի մասին³⁸:

«Դրօշակ»ի No. 3ը տակաւին չստացանք հոս³⁹: Կ'երեւի ընկերուի Յակոբեանը⁴⁰ դարձեալ Վալսպարը⁴¹ ղրկած է զայն, թէւ իրեն ղրկեցի նոր հասցէս խնդրելով որ հինը փոխէ:

³⁴ «Վ. Շուշանեանէն երկու նամակ՝ Ս. Վրացեանին», *Բազին*, 2:2009, էջ 38-42. նաեւ՝ «Վ. Շուշանեանէն եւս երկու նամակ՝ Ս. Վրացեանին», *Բազին*, 3:2009, էջ 54-57:

³⁵ Սիմոն Վրացեան *Դրօշակի* խմբագիրն էր:

³⁶ *Դրօշակ*, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ (1891-1914, 1925-33, 1969-96՝ «Ազգակ Շարաթօրեակ-Դրօշակ» անունով, 1999էն մինչեւ օրս):

³⁷ Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական քրոնիկոն», *Դրօշակ*, Յունիս 1927, էջ 171-78:

³⁸ Վազգէն Շուշանեան, «Աշխատանքի միջազգային գրասենեակը», *Դրօշակ*, Մայիս 1927, էջ 143-46:

³⁹ Տե՛ս՝ Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական տարին», *Դրօշակ*, Մարտ 1927, էջ 76-82:

⁴⁰ Սաթենիկ (Սաթօ) Յակոբեան (1900-65), հանրային գործիչ: Ֆրանսահայ Կապոյտ Խաչի հիմնադիրներէն:

⁴¹ Շուշանեան 1923-26 ուսանած է այժմ Կարտան (Մարսէլի մօտ) գտնուող Վալսպարի երկրագործական վարժարանին մէջ: Երկրորդ հանդիսացած է՝ 25 շրջանաւարտներու շարքին, ստանալով երկրագործական նախարարութեան պրոնզէ շքադրամը («Նորաարտ հայ գիւղատնտեսներ», *Հայրենիք*, 10 Սեպտեմբեր 1926):

Քեֆիս մասին բարեհաճեր էիք հարցնել: Մենք, տաճկահայերս «քեֆ» ընել չենք գիտեր հետեաբար միշտ «քեֆերնիս խարափ⁴² ա» բայց սիրով «կ'աշխատինք»:

Միշտ՝ ՎԱԶԳԷՆ Գ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

Բ.

1 Մայիս 1927 Մամիրոյ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Ահա նոր վերջացուցի խոստացածս յօդուածը: Աշխատեցայ հնար եղածին չափ ամփոփ ըլլալ ու մանրամասնութիւններէ խուսափիլ՝ որովհետեւ ինծի կը թուի թէ ամէն ընթերցող մասնաւոր ճաշակ չունի նման յօդուածներ կարդալու: Աշխատեցայ նաեւ պարզ ըլլալ, դիրահասկնալի, յաճախ կրկնելով շատ մը սովորական բաներ՝ որովհետեւ «Դրօշակ»ի ընթերցողներուն մեծ մասին մտաւորական մակարդակը կը պարտադրէ ատիկա: Շատ չի ծանրացայ ֆրանսական հատուածի համագումարին վրայ՝ որովհետեւ հայ աշխատաւորութիւնը այնքան ալ չի շահագրգռուիր ատով եւ յետոյ յօդուածը տեղեկագրական ըլլալէ կը դադրէր: Շնորհակալ պիտի ըլլամ եթէ գրէք առհասարակ Ձեր դիտողութիւնները: Ես կ'ուզեմ հասկնալի ըլլալ՝ դասակարգ մը ընկերներու զոր ես կը ճանչնամ (եթէ կարելի է ըսել մեր կուսակցական գանգուածին) որ գիտեմ «Դրօշակ» կը կարդան եւ որ չեն կրնար մարսել զուտ տեսական ծանր յօդուածներ: Կը խնդրեմ խորագիրը նոյնութեամբ պահել: Chronique-ին ճշգրիտ հայերէն համապատասխանը *քրոնիկոն* է կամ *օրալուրք*:

Միջազգայինի⁴³ քարտուղարութիւնը պարբերաբար կը հրատարակէ “Informations Internationales”ը⁴⁴: Պէտք է գրել՝ Int[ernationale] Ouv[rièrè] Soc[ialiste] 41 Stockerstrasse, Zurich հասցեով: Կը ստանա՞ք. ի՞նչ լաւ կ'ըլլար եթէ ստանայիք, մէկ օրինակ միայն ձեռքս անցաւ: Սուղ է՝ 30 զուիցերիական ֆրանք բաժնեգինը:

Յուլիսին կլ'ուզեմ համառօտ կամ ընդարձակ ուսումնասիրութիւն մը գրել Ժօռճի մասին⁴⁵: Նիւթը երկու տարիէ ի վեր կ'որոճամ: «Դրօշակ»ը յարմար է նման նիւթերու:

Ընկերական յարգանքներով՝
ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Գ.

4 Յունիս 1927 Մամիրոյ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Ձեր Մայիս 27 թուակիրը շնորհակալութեամբ ստացայ: Ձեր յանձնարարութիւններէն մէկը ահա կատարեցի⁴⁶: Կը կարծեմ որ այս անգամ յօդուածս քիչ

⁴² Փուճ (թրքերէն):

⁴³ Կ'ակնարկէ Ընկերվար միջազգայնականին, որուն լիիրաւ անդամն էր Հ.Յ.Դաշնակցութիւնը:

⁴⁴ *Information Internationales* պարբերաթերթը լոյս տեսած է 1927-31ին:

⁴⁵ Ժան Ժոռճ (1859-1914).- ֆրանսացի նշանաւոր քաղաքական գործիչ ու հայասեր: Ֆրանսայի ընկերվարական կուսակցութեան պարագլուխներէն:

⁴⁶ Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական քրոնիկոն», *Դրօշակ*, Յուլիս 1927, էջ 203-10:

մը երկար եղաւ: Եթէ կ[']ուզէք չափ մը տուէք ու անոր համեմատ շարժիմ: Երիտասարդական շարժման մասին նախկին յօդուածիս մէջ եղած ծանօթութիւնը կրկին կրնաք դնել: Հետաքրքրուողներուն միշտ կրնամ օգտակար ըլլալ՝ թէեւ կը վախնամ որ հետաքրքրուող չըլլայ:

Չարժէր գիտ «Informations Internationales»-ի եւ կամ ուրիշ պարբերականներու բաժանորդագրել՝ որովհետեւ չորս ամիսէն կը վերջացնեն այս վարժարանը եւ կու գամ Փարիզ: Մինչեւ այդ Ձեր ստացած համարը կրնաք դրկել, եթէ ծանծարալի չըլլայ:

Գալով՝ ժողովի մասին գիրք մը գրելու Ձեր առաջարկին, երկար ատենէ ի վեր իմ ալ մտադրութիւնս էր՝ բայց հրաժարած էի՝ որովհետեւ հրատարակելը դժուար էր: Ուրեմն՝ պիտի աշխատիմ այդ գործին՝ բայց միայն այստեղը ասարտելէ յետոյ⁴⁷:

Այստեղը կ'աւարտեմ Հոկտեմբերի 10ին՝ ամբողջ ամառը հոս եմ որով ու աշխատանքի⁴⁸: Կը փափաքէի տարի մը այդտեղ Ecole des hautes études sociales[ին]⁴⁹ կից Ecole de journalisme⁵⁰ յաճախել ու նաեւ հետեւիլ *Уоруюсн* որոշ դասախօսութիւններու՝ բայց ձեռք քաշեցի: Միւս կողմէ՝ շատ մը յարմարութիւններու տեսակէտէն (ինքնագարգացման հնարաւորութիւններ, դասախօսութիւններ, գրադարաններ եւայլն) կ'ուզեմ տարիս Փարիզ անց[ը]նել որով պիտի աշխատիմ Ս[էն] Միշէլի մօտ՝ Montroug[e]ի մետաղի գործարաններէն մէկուն մէջ (ուր նախապէս աշխատած եմ) աշխատանք ճարել⁵¹: Կը յուսամ որ պիտի յաջողիմ:

Կը բարեւեմ Ձեզ եւ յաջողութիւն կը մաղթեմ Ձեր աշխատանքներուն:

Ընկերական յարգանքներով՝
ՎԱՁԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Դ.

11 Օգոստոս 1927 Մամիրօլ

Յարգելի ընկ. Վրացեան,

Ահաասիկ Ձեր ուզած յօդուածը⁵²: Աշխատեցայ որքան կարելի է սեղմ ընել որպէսզի «քրոնիկոն»ս շատ երկար չըլլայ: Կը խնդրեմ որ միւս մասէն հատուածներ կամ մասեր չի վերցնէք: Կ'աշխատիմ՝ ընկերվարական կեանքի մասին ամփոփ պատկեր մը տալ, այնպէս որ նոյնիսկ Պուկարիոյ մասին այդ թռուցիկ նօթը կը լրացնէ պակաս մը ու կ'օգնէ որ յետագային եթէ անելի երկար գրեմ՝ ընթերցողը կարենայ մարսել, պատրաստուած ըլլայ:

Ընթերցողներուն համար դժուար է միակտուր, մէկ նիւթի մասին, երկար ու միապաղաղ յօդուածներ կարդալը: Ատոր համար է որ կ'աշխատիմ «քրոնիկոն»ը

⁴⁷ Ըստ երեւոյթին, Շուշանեան չէ իրագործած իր ծրագիրը:

⁴⁸ 1926-27ին, Շուշանեան ուսանած եւ աւարտած է Մամիրօլի (Պուրկոնյի շրջան) կաթնատնտեսական վարժարանը:

⁴⁹ Ընկերային բարձրագոյն ուսմանց վարժարան (Փարիզ):

⁵⁰ Լրագրութեան վարժարան:

⁵¹ Շուշանեան 1922-23ին աշխատած էր Ռընոյի ինքնաշարժներու եւ Մոնրուժի մետաղագործական գործարաններուն մէջ:

⁵² Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական քրոնիկոն», *Դրօշակ*, Օգոստոս 1927, էջ 238-43:

պատաններու վերածել: Խորագիրները կարելի է անել մեծ տառերով դնել: Մաս է մաս՝ այդ դադարները կը դիտարկեն ընթերցումը: Հոգեբանական է: Յետոյ կը խնդրեմ որ աշխատիք զիս ազատել այդ բազմաթիւ վրիպակներէն: Վերջինին մէջ բաց ինկած տողեր կային, նոյնիսկ հատուած մը եթէ չեմ սխալիր:

Ժտէսի գիրքը դեռ չեմ սկսած գրել: Քննութիւններ ունիմ ու յետոյ Սեպտեմբերին պէտք է ելլի քննութիւններս պատրաստեմ ու մտատանջութիւններ: Պիտի սկսիմ այստեղը աւարտելէս յետոյ:

Կը բարեւեմ Ձեզ եւ կը մաղթեմ յաջողութիւն ձեր աշխատանքներուն:

Յարգանքներով՝
ՎԱՂԳԷՆ

Ե.⁵³

V. Chouchanian
33 Rue des écoles
Paris (5e)

17 Յուլիս 1928
Փարիզ

Սիրելի ընկ. Վրացեան,

Մեր ընկերներէն Յովհաննէս Մահտեսեանը որ այս տարի յաջողութեամբ կ'աւարտէ Վալապրի երկրագործական վարժարանը՝ 1928-29 տարեշրջանին պիտի յաճախէ Մամիրոյի կաթնատնտեսական վարժարանը: Աւարտելէ յետոյ, ինչպէս մեր միւս ընկերները՝ Սիսակը⁵⁴ եւ Գարեգին Սարգիսբէգեանը⁵⁵, կրնայ ապահովաբար, իր կեանքը լաւագոյն կերպով շահիլ եւ միւս կողմէն՝ գործնական եւ փորձառու պանրագործ-կաթնատնտես մը դառնալ: Մահտեսեանը, անշուշտ կը յիշէք, Լիօնի շրջանային ժողովին՝ Կարտանի պատգամատրն էր: Լուրջ եւ վստահելի տղայ մըն է[,] աշխատանքը սիրող եւ հաւասարակշռուած:

⁵³ Բացիկը հասցէագրուած է՝ Monsieur S. Veratzian

Poste Restante
Bagnes de Bigorre
(Basses-Pyrenées)

⁵⁴ Սիսակ Սիսլեան՝ Շուշանեանի Արմաշի գիւղատնտեսական վարժարանի դասընկեր: 1926ին, միասին աւարտած են Վալապրի երկրագործական վարժարանը, իսկ յետոյ՝ միասին ուսանած են Մամիրոյի մէջ («Նորաւարտ գիւղատնտեսներ»։ «Գաղութներ», *Հայաստանի կոչնակ*, 11 Սեպտեմբեր 1926, էջ 1306): Շուշանեան իր «Անկարելի օրագիր» գործը (*Յուսաբեր*, 1930) ձօնած է Ս. Սիսլեանին. «Սիսակին՝ որ անձնուէր ընկեր է եւ քաջ կուսակցական, այս դառնութեամբ թաթխուած էջերը՝ ի յիշատակ մեր երկարամեայ բարեկամութեան, մեր թշուառութեան՝ որ կիսած ենք միասին, մեր անզօր ուրախութիւններուն եւ մեր խանդավառութեանց որ պէտք չէ մաշին բնաւ, որքան որ կեանքը դժուար ըլլայ, դառն...» (Վազգէն Շուշանեան, «Անկարելի օրագիր», *Յուսաբեր*, 28 Փետրուար 1930, էջ 2):

⁵⁵ Գարեգին Սարգիսբէկեան (1888-1953) եղած էր սպայակոյտի պետը Փետրուարեան ապստամբութեան ընթացքին: Այնուհետեւ, հաստատուած է Ֆրանսա:

Թէւ միջակ մտատրական կարողութեան տէր⁵⁶ բայց հաստատրիմ դաշնակցական, ահա՛ երկու տարիէ շուրջ՝ քարտուղարն է Կարտանի մեր ենթակոմիտէին: Վերջին երկու տարին՝ *Վալապրի* մէջ նիւթական դժուար պայմաններու մէջ կ'ուսանէր: Ս[եպտի] Ստեփանեանի⁵⁷ եւ Լ[եւոն] Բաշալեանի⁵⁸ միջոցաւ յաջողած էի որոշ չափով օգտակար ըլլալ իրեն: *Մամիրօ*ի դասընթացքը երկու վեցամսեայ է առանց արձակուրդի: Ինծի կը թուի թէ ուսանողներու յատուկ Ձեր քով գտնուած գումարէն՝ կ'արժէ որ 300 ֆր. ամսական յատկացնէք իրեն: Զուր տեղը ծախսուած չըլլար: Հոս՝ ես դիմեցի արդէն ընկ[եր] Շաւարշին⁵⁹: Շատ կը խնդրեմ որ դուք որ կը ճանչնաք Մահտեսեանը, Ձեր ազդեցութիւնը գործ դնէք որպէսզի դիմումս չի մերժուի: Յամենայն դէպս կը խնդրեմ որ անմիջապէս պատասխանէք որովհետեւ դեռ չէ դիմած նախարարութեան ու կը սպասէ ինձմէ պատասխանի մը: Շատ շնորհակալ կ'ըլլամ եթէ չի մերժէք: Ձեր յօդուածաշարքը կարդացի⁶⁰: Ինչո՞ւ այդքան անարդար էք ընկ[եր] Ահարոնեանի հանդէպ⁶¹: Իր վերջին գործերը՝ «Ճամբորդ»⁶², «Իմ գիրք»⁶³ եայլն որակով անհամեմատ լաւ են առաջիններէն, շատ աւելի լաւ: Որքան ալ ժամանակը զտէ ու հինցնէ իր գործը՝ այսուհանդերձ էջեր ունի որոնք բացառիկ գեղեցկութիւն մը ունին («Արիւնտ թթխմոր»ը, «Խայ»ը, եայլն)⁶⁴: Ժամանակը

⁵⁶ Յովի. Մահտեսեան բանաստեղծութիւններով աշխատակցած է *Հայրենիք* ամսագրի Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր 1928ի թիւերուն:

⁵⁷ Սեպտի Ստեփանեան (1881-1944), եգիպտաբնակ գիւղատնտես, հրապարակագիր:

⁵⁸ Լեւոն Բաշալեան (1868-1943), արձակագիր, հանրային գործիչ: 1920ականներուն հաստատուած է Փարիզ, ուր անդամակցած է Հայկական բարեգործական ընդհանուր միութեան:

⁵⁹ Շաւարշ Միսաքեան (1883-1957), լրագրող, հանրային գործիչ: Փարիզի *Յասաջ* օրաթերթի հիմնադիր ու խմբագիր (1925-57):

⁶⁰ Շուշանեան ակնարկած է Վրացեանի յօդուածաշարքին (Ս. Սուրեան, «Գաղութահայ գրականութիւնը եւ Հայաստան (գրական խոհեր)», *Հայրենիք*, 23, 24, 26, 27, 28, 29 Յունիս 1928): Ս. Սուրեան ծածկանունը կը թուի բխած ըլլալ Վրացեանի *Ս. Մասուրեան* վաղաճանօթ ծածկանունէն, որ գործածուած է այս յօդուածաշարքէն անմիջապէս ետք տպուած յօդուածին մէջ (Ս. Մասուրեան, «Հայ որբերը եւ խորհրդային կառավարութիւնը. «հերթական պրովոկացիան», *Հայրենիք*, 1 եւ 3 Յովիս 1928): Ս. Սուրեան ծածկանունը չկայ Յովակիմեանի բառարանին մէջ (տե՛ս՝ Բախտիար Յովակիմեան, *Հայոց ծածկանունների բառարան*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 2005):

⁶¹ Աւետիս Ահարոնեան (1866-1948).- արձակագիր, քաղաքական գործիչ:

⁶² Աւետիս Ահարոնեան, *Ճամբորդը (հայրենի գրոյցներ)*, «Հայրենիք» տպարան, Պոսթըն, 1926:

⁶³ Աւետիս Ահարոնեան, *Իմ գիրքը, հայր. Ա. Մանկութիւն*, Imprimerie de Navarre, Փարիզ, 1927:

⁶⁴ Տե՛ս՝ Ղարիբ [Աւետիս Ահարոնեան], *Ազգայութեան ճանապարհին. պատկերներ հայ յեղափոխական կեանքից, Ա. գրքոյկ, Դաշնակցութեան տպարան, Ժընեւ, 1903:*

կուտար արդէն այդ հարուածները որ դուք այնքան անգթութեամբ շոայլած էիք իր ծեր գլուխին⁶⁵:

Կը ներէք որ Ձեր հանգիստը խանգարեցի: Յարգանքով՝ ՎԱԶԳԷՆ

Զ.⁶⁶

V. Chouchanian
33 Rue des écoles
Paris (5e)

25 Յուլիս 1928
Փարիզ

Սիրելի ընկ. Ս. Վրացեան,
Ձեր 21 Յուլիս թուակիր բացիկը ստացայ. շնորհակալ եմ որ շուտով պատասխանած էք: Կը ներէք որ կրկին անհանգիստ կ'ընեմ Ձեզ: Բ[աշախտան]ի պատասխանէն կախում ունի՝ Մահտեսեանի դիմելը՝ դպրոց ընդունուելու համար կամ ոչ: Մեծ բան մը չէ. տարի մը միայն ամսական 300-350 ֆր. կամ քիչ մը պակաս: Կը կարծեմ որ ընկ[եր] Շաւարշին մօտ դեռ դրամ կայ այն գումարէն, իսկ եթէ ըլլայ իսկ, կրնաք խոստանալ՝ գալ տարուան համար գալիք գումարէն՝ Մահտեսեանին ի հաշիւ գումար մը տալով՝ որպէսզի կարենայ փոխադրուիլ ու առաջին ամիսը անց[ը]նել: Ոչ թէ հիմա հապա երկու ամիսէն (Մամիրօլի տարեշրջանը կը սկսի Հոկտեմբերին): Շաւարշը շատ կողմնակից չի թուիր: Ամէն տեղ՝ ճառասաններու եւ էջ մրոտողներու կուտան: Ի՞նչ կայ որ, անգամ մըն ալ խոնարհ տղայ մը թո՛ղ օգտուի: Եթէ դուք սրտանց ուզէք՝ կը յուսամ որ կը յաջողի: Եթէ խօսք տաք յաջողցնել՝ ես իրեն կը գրեմ որ դիմէ: Ո՛չ մէկ կտակէ կամ հիմնադրամէ՝ մեզի խեր չկայ: Մեր տղոցը չեն տար: Բարակի հոտառութեամբ կը ճանչնան դաշնակցականը դեռ հեռուէն:

Սպասելով Ձեր դրական պատասխանին ու ցանկալով առողջութիւն:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ

Է.

21 Նոյեմբեր 1928

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,
Մահտեսեանը կրկին գրեր է ինձի եւ կ'ըսէ որ եթէ կարելի չըլլայ կարգադրութիւն մը ընել ստիպուած պիտի ըլլայ դպրոցը ձգել: Անցեալները Շաւարշը կ'ըսէր որ երեք ամսուան համար առաքում մը կրնայ ընել: Շատ կը խնդրեմ որ

⁶⁵ Տե՛ս՝ Ս. Սուրեան, «Գաղութահայ գրականութիւնը», *Հայրենիք*, 24 Յունիս 1928, էջ 3. «Այդպէս էր առաջ այդպէս է այժմ: Ահարոնեանը չի փոխուել, մինչդեռ հայ կեանքը փոխուել է հիմքից»:

⁶⁶ Բացիկը հասցէագրուած է՝ Monsieur
S. Veratzian

7 avenue de la Fontaine Ferrugineuse 7
Bagneres de Bigorre

կարգադրութիւն մը ընէք, որպէսզի տղան չստիպուի վերադառնալ: Լերան վրայ տեղ մըն է. մարդ որ նեղ մնայ՝ հայու շունչ չկայ⁶⁷: Ներփակ քանի մը բացիկներ կան, մէկը Ձեզի ուղղուած, միւսները ընկ. Շանթին⁶⁸ եւ Խատիսեանին⁶⁹: Կը խնդրեմ իրենց յանձնել:

Յարգանքով՝ ՎԱԶԳԷՆ

Ը.⁷⁰

Haratch
235 Rue de Faub. St. Martin
Paris (10e)

Փարիզ 4 Սեպտեմբեր 1929

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

«Յառաջ»ը բացած է հարցարան մը⁷¹ գաղթահայ երիտասարդ գրականութեան շուրջ ու կը խնդրէ որ դուք ելըս [sic] պատասխանէք յետագայ հարցումներուն:

1° 1914էն ի վեր բազմաթիւ երիտասարդ գրողներ եկած են: Գաղթահայ թերթերն ու պարբերականները մեծ չափով տեղ կուտան անոնց գրական արտայայտութիւններուն: Ըստ ձեզ՝ որչափով մնայուն արժէք կը ներկայացնէ երիտասարդներու կողմէ մշակուած այդ գրականութիւնը: Կարելի՞ է գայն բնական շարունակութիւնը համարել նախապատերազմեան հայ գրականութեան: Եթէ այո՝ որչափով եւ ինչո՞ւ համար: Եթէ ոչ՝ հինին եւ նորին միջեւ գոյութիւն ունեցող խզումը ինչպէ՞ս կարելի է բացատրել:

2° Ի՞նչ բնորոշ յատկանիշեր, բացասական եւ դրական գծեր ունի այդ նոր գրականութիւնը՝ բաղդատած հինին: Ընդհանուր առմամբ միթէ ան կը պատասխանե՞ապրելու անխախտ կամք ունեցող ժողովուրդի մը պահանջներուն եւ մտահոգութիւններուն:

3° Որո՞նք են ըստ ձեզ՝ այն երիտասարդ գրողները որ լաւագոյն կերպով կը ներկայացնեն այդ գրականութիւնը:

⁶⁷ Մահտեսեանի մասին ուրիշ տեղեկութիւն չունինք: 1937ին, Քոնկո էր (Ափրիկէ), ուրկէ բանաստեղծութեամբ մը աշխատակցած է Պոլկարիոյ *Ազար խօսք* օրաթերթին («Հայաստանին», *Ազար խօսք*, 28 Մայիս 1937):

⁶⁸ Լեւոն Շանթ (1869-1951).- գրագէտ, մանկավարժ, քաղաքական գործիչ: Պէյրութի Հայ ճեմարանի համահիմնադիր եւ առաջին տնօրէն (1930-51): 1920ականներուն ապրած է Փարիզ:

⁶⁹ Ալեքսանդր Խատիսեան (1874-1945).- քաղաքական գործիչ, Հայաստանի Հանրապետութեան երկրորդ վարչապետ (1919-20):

⁷⁰ Նամակը գրուած է *Յառաջ* նամակաթուղթին վրայ:

⁷¹ Հոկտեմբերի վերջերուն, *Յառաջ* սկսած էր հրատարակել Յ.Ճ.Սիրունիի յօդուածաշարքը «Գրական ասուլիս» վերտառութեամբ եւ «“Յառաջ”ի հարցարանին առթիւ» ենթախորագրով, եւ խմբագրական ծանօթութիւն մը նշած է, թէ «հարցարանը պիտի հրատարակենք առանձին» (Յ.Ճ.Սիրունի, «Սերունդը որ գնաց», *Յառաջ*, 27 Հոկտեմբեր 1929. նաեւ՝ «Սերունդը որ չեկա», *Յառաջ*, 3 Նոյեմբեր 1929. նաեւ՝ «Քանի մը գիծեր սերունդէն որ կայ ու չկայ», 10 Նոյեմբեր 1929. նաեւ՝ «Քանի մը դէմքեր որ կը բանան սերունդը», *Յառաջ*, 17 Նոյեմբեր 1929): Սակայն, հարցարանը լոյս տեսած չէ, իսկ «Գրական ասուլիս»ն ալ չէ շարունակուած:

Սպասելով պատասխանի եւ կանխայայտ շնորհակալութեամբ
Յարգանքներով՝ ՎԱՁԳԷՆ
ՇՈՒՇԱՆԵԱՆ

Թ.⁷²

23 Նոյեմբեր 1929
Փարիզ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,
Ահա նամակը երկրորդ անգամ ըլլալով: Ինձ համար հանելով մնաց սակայն
միա նամակին կորուստը: Հաւանաբար պիտի գտնէք զայն եթէ ընկ[եր] Հա-
նըմեանի⁷³ կամ միա սեղաններուն շուրջ փնտռուող մը կատարել տաք:
Միա նամակը հրաժարեցայ գրելէ՝ ձեր նամակը չխաչաձեւելու համար: Ի՞նչ
հարկ քանի որ դուք գրած էք արդէն. կը սպասենք պատասխանի:
Առիթն օգտուելով ձեզ կրնամ իմացնել որ Վիեննայի յարգելի մատենադարա-
նապետը⁷⁴ արտագրութիւններ դրկած է որոնց [մէկ] մասը կը պատկանի Մուշի
Գեղամին⁷⁵: Բարի մարդը շփոթեր է երկու Գեղամներն⁷⁶ ու իրենց ոճը՝ հակա-
ռակ մեր յստակ նամակներուն: Արտագրած է նաեւ Գեղամ Բարսեղեանն⁷⁷
կարգ մը կտորներ:

Ձերդ՝ ՎԱՁԳԷՆ

Ժ.⁷⁸

Փարիզ 26 Դեկտեմբեր 1929

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,
Քանի մը օր առաջ ընկ. Վ[արդան] Սարգսեանն (Պրիսէ)⁷⁹ նամակ մը ստա-
ցայ՝ ի պատասխան Ն.Գ.Բ.ի դիմումին տիար Վ[ահան] Խօրասանճեանին
մօտ: Յայտնելէ յետոյ որ տիար Խօրասանճեանը Պրիսէլ պիտի ըլլայ յառաջի-
կայ ամսու կէսերուն՝ կ'ըսէ որ յարմար չէ դատած մեր նամակը դրկել Եգիպտոս
եւ մեր դիմումի յաջողութեան համար եւ ան վերապահած է զայն անոր վերա-

⁷² Այս նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի նամակները», էջ 149:

⁷³ Արտաւագդ Հանըմեան (1875-1945).- քաղաքական գործիչ, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան քարտուղար:

⁷⁴ 1920ին, հայր Ներսէս Ակինեան կարգուած էր Վիեննա Մխիթարեան միաբանութեան մատենադարանի վարիչ (Հ. Պ. Տէր Պօղոսեան, «Հ. Ներսէս Վ. Ակինեան, 1883-1963», *Հանդէս ամսօրեայ*, 10-12:1963, էջ 451-52):

⁷⁵ Գեղամ Տէր Կարապետեան (Մշոյ Գեղամ, 1865-1918).- արեւմտահայ արձակագիր, օսմանեան հանրային գործիչ:

⁷⁶ Կ'ակնարկէ Մշոյ Գեղամին եւ Գեղամ Բարսեղեանին:

⁷⁷ Գեղամ Բարսեղեան (1874-1915).- արեւմտահայ արձակագիր: Մեծ Եղեռնի զոհերէն:

⁷⁸ Նամակը գրուած է Koubok Barի (հասցէ՝ Place de la Sorbonne) նամակաթուղթի վրայ: Նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 149-50:

⁷⁹ Վարդան Սարգսեան (1892-1978).- խմբավար եւ երգահան, Կոմիտասի հինգ սաներէն մէկը: Այդ ժամանակ, Վահան Խօրասանճեանի քարտուղարի պաշտօնը կը վարէր Պրիսէլի մէջ:

դարձին: Չափազանց լաւատես է դիմումի արդիւնքի մասին եւ կը յուսայ որ կարետոր գումար մը կարելի պիտի ըլլայ ապահովել, քանի որ գործնական եւ շատ համակրելի է մեր ձեռնարկը: Այլեւ կ'աւելցնէ որ շատ արդիւնաւէտ պիտի ըլլայ մեր դիմումը եթէ դուք ալ անձնապէս գրէք տիար Խօրասանճեանին: Կը բարեւէ ձեզի մասնաւորապէս:

Անշուշտ կը յիշեմ որ դուք մեր վերջին ժողովին մէջ չուզեցիք գրել անձնապէս որոշ նկատումներով, բայց հիմա անտարակոյս պիտի ուզէք զիջիլ, քանի որ գործին յաջողութիւնը որոշ չափով կախուած է նաեւ ձեզմէ: Հիմա մանաւանդ երբ Զարդարեաններուն հետ⁸⁰ վերջնապէս համաձայնած ենք՝ կրնաք առաջարկել որ մեր առաջին հատորին ամբողջ ծախքը ստանձնէ, յետագային վերապահելով անշուշտ երկրորդ հատորին ծախքերուն համար մեր դիմումը: Եթէ կ'ուզէք կրնաք նաեւ գրել ընդհանուր ձեռով եւ ես՝ մեր յառաջիկայ ժողովէն յետոյ կը գրեմ մանրամասնօրէն, ինչպէս որ կ'ուզէք:

Այս նամակը կը գրեմ որովհետեւ դժբախտաբար կը վախճան որ ձեր մեկնումէն առաջ առիթ չպիտի ունենամ ձեզ տեսնելու: Վաղը պիտի մեկնիմ՝ տասը-տասներկու օրուան համար Rethel. կրնայ ըլլալ նաեւ որ մնամ: Եթէ չկարենամ երթալ վաղը կամ շաբաթ օր կը հեռախօսիմ [sic] ձեզ ու կը պայմանաւորուիմք մեր յառաջիկայ ժողովին համար, այլապէս ձեզ կը մնայ ժողով հրաւիրել:

Գալով իմ անձնական խնդրիս ու մեր անցեալ օրուան խօսակցութեան՝ ինձ համար շատ ցաւալի է որ չպիտի կրնամ ձեզ տեսնել՝ մեկնելէ առաջ: Երկարօրէն կը գրեմ ձեզ՝ Պոսթըն, «Հայրենիք»ի⁸¹ խմբագրութեան հասցեով:

Միշտ Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ
ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԱ.⁸²

5 Յունվար 1929 [1930]⁸³

Յարգելի ընկ. Վրացեան,

Մեր վերջին ժողովը պարտք դրաւ վրաս որ Ձեր Մ[իացեալ] Նահանգներ մեկնումին առթիւ, բոլորին կողմէ կարգ մը յանձնարարութիւն-խնդրանքներ ընեմ: Մտածեցի որ աւելի լաւ է որ գրաւոր ընեմ եւ նամակս ձեզ այդտեղ գտնէ:

Ուրեմն մեր ընկերները ջերմօրէն կը խնդրեն որ ձեր ճամբորդութեան ընթացքին, ո՛ր ալ ըլլաք, չմոռնաք աշխատիլ նաեւ մեր միութեան համար⁸⁴: Մասնաւորապէս կը խնդրեն սակայն՝

Ա) Կազմել Նիւ-Եօրքի մէջ եռանդամ յանձնախումբ մը, որ մեզ հետ անմիջապէս մտնէ հաղորդակցութեան: Բացատրել իրենց մեր գործը: Այս յանձնա-

⁸⁰ Կ'ակնարկէ գրագէտներ Ռաֆայէլ (1896-1985) եւ Հրաչ (1897-1986) Զարդարեաններուն՝ Ռուբէն Զարդարեանի երկու աւագ որդիները:

⁸¹ Հայրենիք, ամերիկահայ օրաթերթ (հիմնուած՝ 1899ին), 1991էն՝ շաբաթաթերթ:

⁸² Նամակը գրուած է ՆԳԲի նամակաթուղթին վրայ: Առաջին հրատարակութիւնը տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 148-49, ուր պահպանուած է 1929 տարեթիւը:

⁸³ Նամակին տարեթիւը ճշտած ենք ըստ նամակի բովանդակութեան. 1929 թուականը տարեթիւի սովորական սխալ մըն է, որ յաճախ կը պատահի տարուան փոփոխութեան սկիզբը: ՆԳԲը հիմնադրուած է Սեպտեմբեր 1929ին:

⁸⁴ Կ'ակնարկէ ՆԳԲին:

խումբը պիտի հսկէ մեր բոլոր գործերուն Մ[իացեալ] Նահանգներու մէջ: Որպէս հաւանական անդամներ ձեզ կ'առաջարկենք ընկերներ Յ[ակոբ] Խաշմանեանը⁸⁵ եւ Արամ Հայկազը⁸⁶:

Բ) Իրաքանչիւր հայաշատ քաղաքի մէջ յարմար մարդիկ գտնել գրքերու սպառման համար ու յանձնախումբին հետ համախորհուրդ շուտով մեզ հասցնել այդ ընկերներու լիակատար ցանկն ու հասցէները:

Գ) Յանձնախումբին եւ այդ ներկայացուցիչ ընկերներուն շնորհիւ անմիջապէս ճշդել թէ իրաքանչիւր քաղաքի մէջ մտատորապէս ո՞րքան նուիրատուս կրնանք սպառել:

Դ) Մեզ դրկել Ռ[ուբէն] Զարդարեանի⁸⁷ խնդրոյ առարկայ գրուօթինը որքան կարելի է շուտ:

Ե) Նամակ մը ուղղուած Զարիէվիին⁸⁸ ներկայացնելով մեր գանձապահը եւ քարտուղարը ու խնդրելով որ դիւրացնէ մեր աշխատանքը:

Ձ) Նամակ մը ուղղուած տիար Վ[ահան] Խօրասանճեանի⁸⁹ ծանօթ խնդրին առթիւ:

Յայտնելով կանխաւ շնորհակալութիւն ու սպասելով պատասխանի:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Յ. Գ.- Գալով իմ անձնական «անկարեա»ներուն⁹⁰ ձեզ պիտի յիշեցնեմ կրկին հոդ գալու ցանկութիւնս ու պիտի խնդրեմ որ որեւէ կարգադրութիւն ընէք յառաջիկայ Օգոստոսին համար: Եթէ շուտով գրէք կը սկսիմ աչքերուս բուժման⁹¹: Մինչ այդ պէտք է լրջօրէն աշխատիմ *թէզըս*⁹² ներկայացնելու համար: Տարաբախտաբար երկու ամիս է նիւթական դժուարութիւններու հետեանքով հարկ եղածին չափով չկրցայ աշխատիլ: Յառաջիկայ ամիսներու ընթացքին՝ ամբողջովին պիտի նուիրուիմ դպրոցիս: Ատոր համար պէտք է գոնէ 800-900 ֆր[անք] մնայուն ամսական մը ունենամ: «Հայրենիք» ամսագրին դրկած ձեռագրիս⁹³ փոխարէն արդէն 60 տօլար ստացայ, որպէս կանխավճար: Վճարելէ

⁸⁵ Յակոբ Խաշմանեան (1888-1968).- ամերիկահայ մտատորական, հանրային գործիչ:

⁸⁶ Արամ Հայկազ (Չէքէմեան, 1900-86).- ամերիկահայ արձակագիր:

⁸⁷ Ռուբէն Զարդարեան (1874-1915).- արեւմտահայ արձակագիր եւ խմբագիր: Մեծ եղեռնի զոհերէն:

⁸⁸ Յովհաննէս Զարեան (1869-1945).- իրաւագէտ, բանասէր: Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք, հաստատուած է Փարիզ, ուր ամուսնացած է մեծահարուստ Աբրահամ Ղուկասեանի քրոջ աղջկան՝ Նունէ Բէգլարեանի հետ, եւ երկար տարիներ վարած՝ Ղուկասեանի հիմնած Imprimerie de Navarre բազմալեզու տպարանի տնօրէնութիւնը:

⁸⁹ Վահան Խորասանճեան (?-1945).- պելճիքահայ բարերար: Հովանատորած է Մարսէլի Ս. Թարգմանչաց մայր եկեղեցւոյ շինութիւնը:

⁹⁰ Առօրեայ մանր գործեր (թրքերէն):

⁹¹ Հաւանաբար կ'ակնարկէ այն իրողութեան, որ արգիլուած էր աչքերու վարակիչ *թարքումա* հիւանդութիւնը ունեցողներուն մուտքը Միացեալ Նահանգներ:

⁹² Ֆր. *thèse* (աւարտաճառ):

⁹³ Հաւանաբար կ'ակնարկէ «Օրերը գեղեցիկ չեն» գործի երկրորդ մասին (Վազգէն Շուշանեան, «Օրերը գեղեցիկ չեն», *Հայրենիք ամսագիր*, Բ. մաս (Ապերջանիկ

յետոյ *Մարտէլ* ճամբորդութեանս, սենեակիս եւ այլ մանր պարտքեր գրպանս 100 ֆր[անք] կը մնայ: Կը խնդրեմ, որ շուտով կարգադրութիւն մը ընէք եւ եթէ համաձայնին դրկել՝ թող փոխադրեն հեռագրով: Պարտքեր ունիմ ձեզ (700 ֆր[անք]), Գե[ւորնեանին]⁹⁴ (800) եւ ուրիշ ընկերներու: Եթէ նախորդ ամիսներու համար բան մը չընեն շատ գէշ կացութեան մը պիտի մատնուիմ: Ահա՛ թէ ինչու անձկութեամբ կը սպասեմ ձեր պատասխանին:

Վ.Շ.

ԺԲ.

11 Յունվար 1930 Փարիզ

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Առանց սպասելու նամակիս պատասխանին, ահա՛ կրկին կը գրեմ ու կը ծանծարացնեմ: Կը ներէք: Վերջին նամակս անշուշտ ստացած էք: Այս երկտողը կը գրեմ ձեզմէ ջերմագին կերպով խնդրելու համար որ եթէ կարելի է մինչեւ այս ամսու 20ը Հ[այ] Կ[արմիր] Խ[աչ]ի⁹⁵ կողմէ փոքր գումար մը դրկել տաք ինձ: Եթէ սկզբունքով համաձայնած ըլլան տալ, երկու օր առաջ թէ երկու օր յետոյ, մեծ տարբերութիւն չըներ: Կրնան *հեռագրով* դրկել ու անմիջապէս կարծեմ, կամ մէկ երկու օրուան ընթացքին, այստեղ կը ստացուի:

Եթէ ձեզ յանձնեն ու դուք դրկէք լաւագոյնն է: Փոքրիկ երիտասարդական արկած մը պատահեցաւ, բան մը որ պէտք չէ պատահէր, բան մը որ մինչեւ հիմա չէ պատահած: Անշուշտ յուսահատելու բան չկայ բայց հաճելի ալ չէ: Եթէ կարենաք բան մը ընել ուրեմն, դրկեցէք Շաւարշի հասցէին 235 Faubourg St. Martin⁹⁶, որովհետեւ հասցէս պիտի փոխեմ:

Անշուշտ լաւ ճամբորդեցիք: Հին տեղեր, նախապէս ծանօթ մարդիկ ու փոխուած բաներ տեսաք: Ծամբորդութիւնը միշտ տեսակ մը փախուստ է առօրեայէն, մեր ծանծրոյթէն եւ մեր սովորութիւններէն, թէեւ միշտ ամէն տեղ մարդ միշտ ինքզինքը կը գտնէ, իր անխուսափելի *ինքզինքը* որուն հետ պատրաստ է ապրիլ: - Հեռանա՛լ, հեռանա՛լ, մոռանա՛լ... կ'ըսէր բանաստեղծը⁹⁷: Ո՞ր հեռանալ եւ ո՞ր յանգիլ սակայն, երբ ամէն տեղ մարդ իր *ինքզինքը* պիտի գտնէ:

Կանխայայտ շնորհակալութեամբ ու յարգանքներով՝

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԳ.⁹⁸

23 Փետրվար 1930

V. Ch.

մարդոց պատմութիւն), Փետրուար-Յուլիս 1930): Առաջին մասը լոյս տեսած էր 1929ին (Նոյն, «Օրերը գեղեցիկ չեն», *Հայրենիք ամսագիր*, Ա. մաս (Բարի մարդոց պատմութիւն), Յունիս-Հոկտեմբեր 1929):

⁹⁴ Լեւոն Գեւորնեան (1880-1965).- *Յառաջի* երկարամեայ վարչական պատասխանատու եւ աշխատակից:

⁹⁵ Հայ Կարմիր Խաչ՝ այժմու Հայ Օգնութեան Միութեան սկզբնական անունը:

⁹⁶ *Յառաջի* խմբագրութեան հասցէն այդ տարիներուն:

⁹⁷ Կ'ականարկէ Վահան Տէրեանի «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամէն ինչ...» տողով սկսող բանաստեղծութեան:

⁹⁸ Այս նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ «Վ. Շուշանեանէն երկու նամակ», էջ 38-40:

6 place de la Sorbonne 6
Paris (5e.)

Յարգելի ընկ. Վրացեան,

Ձեզ գրելու համար կը սպասեի որ մեր գիրքը յանձնէիք տպարան: Տակաւին չենք յանձնած թէւ բայց գրեթէ ամէն բան վերջացած է: «Տիար» Խորասանճեանը 5000 ֆր[անք]ը դրկեց շատ սիրալիր նամակով մը որ մեծ յոյսեր կը ներշնչէ ապագային համար: «Տիար» Ջաւրեանը եւս մեզ ընդունեց շատ սիրալիր կերպով: Այլ յոյսեր ապագային համար: Չորեքշաբթի գիրքը պիտի տանիմ տպարան: Միայն թէ կ'ուզենք – վստահութիւն ներշնչելու համար «տիար» Ջաւրեանին եւ «մերովսանն» քաւելու համար ուրիշներու մեղքը – փակագիծ B (Ամէն մարդ, առաւել կամ նուազ չափով կը քաւէ մէկ ուրիշին մեղքը. բոլորս մեր հայրերուն մեղքը, մեր սերունդը պիտի քաւէ «եղեր» ձեր սերունդին մեղքը) փակագիծ C (Ականջը խօսի «հընկեր» Խոնդկարեանին⁹⁹, եղբայր ի քինախնդրութիւն - որեւէ մէկուն հետ կարելի է եղբայրութեան եզր մը գտնել - որ կրնայ ուսերը թօթուել այս նախադասութեան առջեւ, փնտռել տէր-բային ու սխալի խնդիրը) ո՛վք revenons à nous moutons¹⁰⁰, ինչպէս պիտի ըսէր միւսը – առաջին գրքին համար գոնէ յարգել վճարման պայմանները: Ասոր համար կարծեմ պէտք պիտի ունենանք տակաւին 3000 ֆրանքի: Այդ երեք հազար ֆրանքը - հակառակ գործազրկութեան եւ այլն եւ այլն ... - կը յուսանք որ պիտի կրնաք հայթայթել մեզ... այդտեղէն: Շուտով ուրեմն ձեզ պիտի դրկենք մեր նուիրատոմսերէն մաս մը, որպէսզի ձեր կազմած կամ կազմելիք յանձնախումբին միջոցաւ աշխատիք գտնոնք բաժնէ: Որոշ հասցէ մը չունենալով՝ պիտի դրկենք «Հայրենիք»ին միջոցաւ: Ուրեմն Ն.Գ.Բ.ի կողմէ եւ յաղագս հայ գրականութեան *expressement*¹⁰¹ ձեզմէ կը խնդրուի՝

Ա) Տարածել դրկուած նուիրատոմսերը ու փոխարժէքը շուտով դրկել, որպէսզի կարենանք «ի կատար ածել» մեր խոստումը - Օ՛ր Խոնդկարեան, խոստում կը յարգեն եւ ոչ թէ կը կատարեն - գոնէ մինչեւ երկու ամիս:

Բ) Կազմել Նիւ-Եորքի յանձնախումբը ու մեզ դնել յարաբերութեան մէջ՝ իրենց հետ¹⁰²:

Գ) Մեր ձեռնարկին շուրջ երկու յօդուած գրել «Հայրենիք» շատ ազգօգուտ թերթին մէջ: Առանց առարկելու ձեր բազմազբաղ վիճակը, որովհետեւ ամէն մարդ միշտ բազմազբաղ է, պիտի ըսէր միւսը:

Ահա ինչ որ ունէի գրելիք Ն.Գ.Բ.ի մասին: Աւելցնեմ որ երկրորդ գրքին համար շուտով կարգադրութիւններ պիտի ընենք ու յարեմ (Օ՛ my God!¹⁰³ բոլոր հնաբոյր բառերը գրչիս տակ կուգան այսօր) որ ընկերները շնորհակալութիւն կը

⁹⁹ Արշամ Խոնդկարեան (1888-1965).- քաղաքական գործիչ, հրապարակագիր: Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի անդամ (1919-20) Ընկերվար յեղափոխական կուսակցութեան կողմէ, արդարութեան նախարար (1920): Յետագային՝ վտարանդի Ֆրանսա:

¹⁰⁰ Վերադառնանք մեր ոչխարներուն (ֆրանսերէն):

¹⁰¹ Յատակօրէն (ֆրանսերէն):

¹⁰² Յանձնախումբը հրապարակ իջած է Յունուար 1931ին:

¹⁰³ Աստուած իմ (անգլերէն):

յայտնեն որ Ն.Գ.Բ.ը չէք մոռցած ու կ'ըսեն որ - ինքզինքը միշտ պետք է գործօն նախագահ համարէ Ն.Գ.Բ.ի ու ըստ այնմ աշխատի - հակառակ ձեր բազում զբաղումներուն: Ու թո՛ղ հոգւոյն, որդւոյն եւ սուրբ հոգւոյն - միասնական երրորդութեան - օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ, ամէն...

* * *

Օ՛՛ ձեր պզտիկ ու վտանգաւոր նախադասութիւնը - à part ça qu'est qu'il y a de nouveau? Mais rien, "à l'Est il y a rien de nouveau"¹⁰⁴. C'est toujours la même histoire. On marche à reculons et on propose... l'émancipation du peuple a...¹⁰⁵

Անշուշտ շատ մը ուրիշ մարդոց պէտք ունիմ քիչ մը լրջութեան. կը ներէք նամակիս «անլուրջ» ոճը: Վայե՛՛լ է միթէ ասիկա մարդու մը որ մերձ է երեսունի հրուանդանին եւ որ փառասիրութիւնը ունի օր մը չորրորդ դասակարգը ներկայացնելու Հայաստանի խորհրդարանին մէջ... իմա՛ խորհուրդներու համագումարին (It est ambitieux, le petit...)¹⁰⁶

Et puis vous avez tort de me prendre pour un bavard, vous savez et de me poser la dite question, peut-être je suis plus silencieux et plus fermé que les autres. Seulement j'ai ma manière à moi d'être silencieux et discret. Je dis souvent plus que je veux dire. J'ai la prétention d'avoir cette petite qualité, si c'est une qualité...¹⁰⁷

Est-ce que j'interprète mal votre question? Ça ne peut... Seulement comme les petites femmes qui écrivent des longues lettres pour ne dire rien et mettent l'essentiel dans un petit postscriptum, mais aussi... nous gardons le silence!¹⁰⁸

Donc, à l'Est il y a rien de nouveau...¹⁰⁹

Il y a des questions sans réponses et de réponses sans questions¹¹⁰ (խնդիրք կարդալու «Յուսաբեր»ի մէջ հրատարակուող գրքիս երրորդ մասին որոշ էջերը¹¹¹)

¹⁰⁴ «Արեւելքի մէջ նորութիւն չկայ»: Բառախաղ մըն է՝ 1929ին լոյս տեսած գերմանացի գրագէտ Էրիխ Մարիա Ռեմարքի (1898-1970) «Արեւմուտքի մէջ նորութիւն չկայ» (Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ "A l'Ouest, rien de nouveau") հակապատերազմական վէպի խորագրին հետետողութեամբ:

¹⁰⁵ «Ասկէ զատ, ի՞նչ նորութիւն կայ: Ոչինչ, "Արեւելքի մէջ նորութիւն չկայ": Միշտ նոյն պատմութիւնն է: Շարժելով յետընթաց, կ'առաջարկեն... ժողովուրդի ազատագրումը...» (Ֆրանսերէն):

¹⁰⁶ «Պզտիկը փառատենչ է» (Ֆրանսերէն):

¹⁰⁷ «Յետոյ, սխալ էք, երբ զիս շողակրարի տեղ կը դնէք, դուք գիտէք ճիշդ հարցումը դնել ինձի, թերեւս ես ւսելի լուռ եւ ւսելի ինքնամփոփ եմ, քան միւսները: Միայն թէ ես իմ ձեռք ունիմ լուռ եւ զուսպ ըլլալու: Յասկնութիւնը ունիմ այս պզտիկ արժանիքը ունենալու, եթէ արժանիք մըն է» (Ֆրանսերէն):

¹⁰⁸ «Ձեր հարցումը սխալ կը մեկնաբանեմ: Չի կրնար... Միայն ինչպէս պզտիկ կիները որ երկար նամակներ կը գրեն ոչինչ ըսելու համար եւ էականը կը մտքնեն փոքրիկ յետգրութեան մէջ, բայց նաեւ... մենք կը լռե՛նք» (Ֆրանսերէն):

¹⁰⁹ «Հեղեղաբար, Արեւելքի մէջ նորութիւն չկայ» (Ֆրանսերէն):

¹¹⁰ «Առանց պատասխաններու հարցումներ կան եւ պատասխաններ՝ առանց հարցումներու» (Ֆրանսերէն):

որ խօսք կ'ըլլայ մարդու մը մասին որ սովորութիւն ունի իր ծանր ձեռքը դնելու մարդոց ուսին ու ըսելու - եւ առհասարակ, ի՞նչ կայ չկայ...):

Il y a des tristesses sans limites, tristesse de vivre dans une grande ville, tristesse d'aimer des gens qu'on ne doit pas aimer... tristesse de ne pas pouvoir haïr des gens qu'on doit haïr, tristesse d'être un sale petit bourgeois, un faux-intellectuel, un petit bonhomme sans importance, quoi!¹¹²

Que faire, que devenir?¹¹³ Պիտի ըսէր միւսը...

Ու յետոյ կը ներէք այս ֆրանսերէն տողերուն միամտութիւնը: Ձեզ յիշեցնելու համար է այս մեծ բոզը որ Ֆրանսասն է: Tout de même, elle est gentille la Marianne, rieuse, avec son air moqueur, avec le petit train-train de sa vie, avec sa trahison...¹¹⁴

Ի դէպ փոքրիկ պատմութիւն մը: Եթէ արդէն գիտէք - Tant pis...¹¹⁵

Խօսքը կը վերաբերի ծերունի «Վագր»ին¹¹⁶ որ այն ատեն իշխանութեան գլուխ էր ու ժամանակ չունէր իր մարդատեցութիւնը որոճալու: Այսուհանդերձ մարդիկ կան որ ընդունակ են խանգարելու ամենէն հաւասարակշիռ մարդոց ջղախին դրութիւնը - Il me tape sur les nerfs¹¹⁷ - կ'ըսէ ֆրանսացին: Ուրեմն պզտիկ եւ աղտոտ ծերուկը որ կը կոչուի Չօպանեան¹¹⁸ - աւա՛ղ, աւա՛ղ եղբայր ի գրականութիւն - այնքան կը զգուեցնէ «Վագր»ը որ օր մը երբ մանկլաւիկը կը յայտարարէ զայն «Վագր»ը կը մրթմրթայ - Il me emmerde ce Tobanian¹¹⁹... Խեղճ Թօպանեան, որակեալն *ցայլքոջի*: Կը տեսնէք որ հակառակ ճեմարանական ջըլլալու¹²⁰ աղօտ ու աննշան ծանօթութիւններ ունիմ գրաբառի [sic] մասին -

¹¹¹ Վագգէն Շուշանեան, «Անկարելի օրագիր», *Յուսաբեր*, 28 Փետրուար-17 Յունիս 1930 (ընդմիջումներով):

¹¹² «Առանց սահմաններու տխրութիւններ կան, տխրութիւնը՝ մեծ քաղաքի մը մէջ ապրելու, տխրութիւնը՝ սիրելու այն մարդիկը, զորս պէտք չէ սիրել... տխրութիւնը՝ արեւ չկարենալու այն մարդիկը, որ պէտք է արեւ, տխրութիւնը՝ ըլլալու աղպոր մանր քաղքենի մը, կեղծ մտատրական մը, փոքրիկ մարդ մը առանց կարեւորութեան, ի՞նչ» (ֆրանսերէն):

¹¹³ «Ի՞նչ ընել, ի՞նչ դառնալ» (ֆրանսերէն):

¹¹⁴ «Այսուհանդերձ, Մարիանը բարի է, խնդուն, իր ծաղրական հայեացքով, իր կեանքի մանր տաղտուկով, իր դաւաճանութեամբ» (ֆրանսերէն): Marianne (Մարիան)՝ Ֆրանսայի խորհրդանշական անունը:

¹¹⁵ «Աւելի վատ» (ֆրանսերէն):

¹¹⁶ Կակնարկէ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօլոս Նուպարին (1852-1930):

¹¹⁷ «Ջիղերս կը խանգարէ» (ֆրանսերէն):

¹¹⁸ Արշակ Չօպանեան (1872-1954).- ֆրանսահայ գրագէտ, հանրային գործիչ:

¹¹⁹ «Այս Թօպանեանը զիս կը զայրացնէ» (ֆրանսերէն):

¹²⁰ Վրացեան շրջանաւարտ էր Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանէն:

ականջը խօսի Դուրեան (Սրբազան)ին¹²¹ եւ իր գրքին - *ընթացք ի գրոց բարբառ...*¹²²

Գրաբառէն՝ Դուրեան, Դուրեանէն՝ յոբելեան¹²³...

Յոբելեանէն՝ յոբելեաններ¹²⁴...

Ça aussi, ça tape sur les nerfs...¹²⁵

Երէկ կը մտածէի հետեւեալը - ինչո՞ւ այս յոբելեանները: Իմաստութիւնը, տաղանդն ու այլ ընդունակութիւններ բնատուր ու ընդոծին ձիրքեր են, հետեւաբար ո՛չ մէկ պարագայի տակ առանձին ուշադրութեան ու աշտուութեան արժանի: Ի՞նչ որ մարդ մը անլի բարձր կը դասէ միւսէն, այդ իր յարատեւ, վայրագ ու անդու ճիգն է բարձրանալու, ամէ՛ն բան տալու եւ սրբագրուելու: Այդ իր յարատեւ ու չարագործ աշխատանքն է: Եթէ այս այսպէս է ինչո՞ւ չտօնել օրինակ որեւէ բանուորի մը, գիւղական ծեր ուսուցչի մը, ութսունամեայ արհեստաւորի մը յոբելեանը եւ տօնել «մեծ» մարդոցը: Կը հասկնամ Դաշնակցութեան քառասնամեայ յոբելեանը: Ժողովրդի մը հաւաքական ճիգին, յուսահատ ընդդիմութեան, թափած տաք արինին յոբելեանը, որ կրնայ նոյնիսկ ինծի պէս «լիրք»ի մը աչքերուն արտասուք բերել...

Բայց միւս յոբելեանները ո՛չ, այդ մասնաւոր ուշադրութիւնը կը զայրացնէ զիս...

* * *

Երկու բառ եւ: «Երիտասարդական արկած»ը կը վախնամ որ վատ մեկնած էք, *aventure*¹²⁶ իմաստով պէտք է առնել, կը յիշե՞ք «Սիրոյ եւ արկածի տղաքը»¹²⁷, այդպէ՛ս արկած:

- Տիկին Զաւօ Շանթէն¹²⁸, ձեռամբ Աշոտի¹²⁹, ստացայ խնդրոյ առարկայ գումարը: Պայմանադրական չլլալու համար կը վերապահեմ շնորհակալութիւններս: Պարտք մը եւ: Ամուր ուտեր պէտք է ունենալ ապրելու համար:

¹²¹ Եղիշէ արք. Դուրեան (1860-1930).- գրող ու բանասէր: Պոլսոյ հայոց պատրիարք (1909-10), Երուսաղէմի հայոց պատրիարք (1921-30):

¹²² Եղիշէ վրդ. Դուրեան, *Ընթացք ի գրոց բարբառ, Ա. ցարի, տպ. Յովսէփ Գաւաֆեան, Կ. Պոլիս, 1880*:

¹²³ Եղիշէ արք. Դուրեանի քահանայութեան յիսնամեայ յոբելեանը նշուած էր 25-28 Հոկտեմբեր 1929ին, Երուսաղէմի մէջ:

¹²⁴ Կ'ականարկէ Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանին, որուն կազմակերպութիւնը սկսած էր Դեկտեմբեր 1928ին («Ա. Ահարոնեանի յոբելեանը», *Յաւաջ, 7* Դեկտեմբեր 1928) եւ պիտի նշուէր համագաղութային կերպով (Փարիզի մէջ՝ 10 Մայիս 1930ին), եւ Հ.Յ.Դաշնակցութեան քառասնամեակին, որ նոյնպէս նշուած է համագաղութային կերպով (Փարիզի մէջ՝ 21 Դեկտեմբեր 1930ին):

¹²⁵ «Այս ալ նոյնպէս, ջիղերը կը խանգարէ» (Ֆրանսերէն):

¹²⁶ Արկածախնդրութիւն (Ֆրանսերէն):

¹²⁷ Վազգէն Շուշանեան, «Սիրոյ եւ արկածի տղաքը», *Հայրենիք ամսագիր, Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս եւ Յունիս 1928*:

¹²⁸ Զաւօ (Զաւահիր) Ներսէսեան-Շանթ (1882-1945).- Լեւոն Շանթի կինը, մանկավարժ, հանրային գործիչ:

- Իմ հող գալուս հարցը լուրջ է: Յառաջիկայ ծմեռ, ի՛նչ ալ պատահի հոս չկամ, մորթ պիտի փոխեմ: Այնպէս ո՛ր հետաքրքրուեցէք: «Աստծոյ հաց»ը բոլորին համար է եւ մեծ է տիրոջը զօրութիւնը: Բարեւներ ծանօթ ընկերներու:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԴ.¹³⁰

25 Փետրվար 1930

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Այսօր իսկ «Հայրենիք»ի հասցէով ձեզ դրկեցինք 150 նուիրատոմս 1էն 150 թուագրուած եւ 150 հատի չափ «կոչ» իւրաքանչիւր տոմսի հետ տրուելու համար: Ինչպէս գիտէք մեր առաջին հատորը արդէն մամուլի յանձնեցինք ու որպէսզի կարենանք վճարման պայմանները յարգել 3500 ֆրանքի եւս պէտք ունինք: Այս 150 նուիրատոմսերը եթէ յաջողիք զետեղել՝ մեծ չափով դիւրացուցած կ'ըլլաք մեր աշխատանքը:

Ձեզմէ կը խնդրենք ուրեմն՝

Ա) Կազմել Նիւ-Եորքի մէջ կեդր[ոնական] յանձնախումբ մը ու անմիջապէս յարաբերութեան մէջ դնել իրենց հետ: Յանձնել այս նուիրատոմսերը իրենց ու զանոնք լծել աշխատանքի: Ի դէպ ըսենք որ տոմսերը ծախուելէ յետոյ՝ կտրօնները մեզ պէտք է վերադարձնել անմիջապէս:

Բ) «Հայրենիք»ի մէջ երկու յօդուած նուիրել մեր ձեռնարկին: Ատիկա լաւ տպատրութիւն կրնայ գործել:

Գ) Տալ մեզ Ջարդարեանի ձեռագիրները ունեցող ընկերոջ հասցէն՝ հարկ եղած պարագային կապ հաստատելու համար իրեն հետ:

Յայտնելով ձեզ շնորհակալութիւն որ անգամ հող կը շարունակէք աջակցիլ մեզ ու սպասելով պատասխանի:

Ձերդ սիրով ի դիմաց Ն.Գ.Բ.ի

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐԵԱՆ¹³¹

ԺԵ.¹³²

17 Մայիս 1930 Փարիզ

V. Ch.

6 place de la Sorbonne 6

Paris (5e.)

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Ձեր վերջին նամակը ստացանք ժամանակին ու ըրինք ինչպէս որ ըսուած էր: Բոլորին կողմէ պաշտօն տրուած է ինձ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել

¹²⁹ Աշոտ-Արծրունի (Արծրունի Դուլեան, 1902-79).- հանրային գործիչ, խմբագիր: Կինը՝ մանկավարժ Լիա Ներսէսեան-Սիրուեան (1908-2000), Զաւօ Շանթի եղբոր աղջիկն էր:

¹³⁰ Առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 150:

¹³¹ Ստորագրութեան կողքին դրուած է ՆԳԲի կնիքը:

¹³² Այս նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ «Վ. Շուշանեանի երկու նամակներ», էջ 41-42:

ձեզ եւ խնդրել որ շարունակէք ներշնչողն ըլլալ Նիւ-Եորքի մասնաճիւղին: Հեռուէն գրուած նամակները՝ այնքան արժէք չունին որքան կենդանի խօսքը: Մեր ամբողջ յոյսը ուրեմն ձեր վրայ է աշխոյժ ու աշխատունակ մասնաճիւղ մը՝ ոտքի վրայ դնելու համար:

Գրքին վիճակը լաւ է: Որոշեցինք, փոխադարձ համաձայնութեամբ տպել 1000 օրինակ պարզ թղթի վրայ, 500 անելի ընտիր թղթի վրայ եւ 150 օրինակ ալ ազնիւ թղթի վրայ: Գրքին *textեր*¹³³ շարուած է ու սրբագրելու վրայ ենք: Յառաջաբանը Մ. Պ.Ն¹³⁴ գրեց: Շատ լաւ չէ, պէտք ունի հիմնական փոփոխութեան, բայց... կը ճանչնաք մարդիկը՝ դիւրագգաց եւ բժախնդիր: Կը կարծեն որ ստիպուած պիտի ըլլանք ընդունիլ՝ նոյնիսկ եղածին պէս:

Երկրորդ գրքի մասին՝ մեր կարելին ըրինք: «Բանից դուրս է գալիս» որ Հրանդի¹³⁵ տողըը մօտ մեծ բան մը չկայ ու կրկին հաւաքման գործը մենք է որ պիտի ընենք: Աշխատանք մըն է որ բաւական ժամանակի եւ ծախքի կը կարօտի: Գալով Գեղամ Բարսեղեանի գործերուն, որոնք որպէս ամբողջութիւն, անելի արժէքատուր են քան Զարդարեանի էջերը, տակաւին չունինք: Վարդապետէն¹³⁶ ձայն չկայ եւ այս անտէր ձեռքը, որ անտարակոյս ուրիշ զբաղումներ կրնայ ունենալ, յօգնեցաւ անպատասխան մնացած նամակներ գրել: Թրքերէն առածը կ'ըսէ – *էլ էլիէն երլան թութ...*¹³⁷ Արդարեւ ուրիշի ձեռքով՝ օձ կարելի է բռնել, բայց ոչ լուրջ գործ կատարել:

Բաց աստի նիւթական դժուարութիւններ կան: Գրքին կողքին դրամը կը պահանջէ յարգելի զարդանկարիչը¹³⁸: Կողքն ալ բոլորիս սրտովը չեղաւ, բայց... գիտէք մարդիկը, ստիպուեցանք ընդունիլ, իր վերջնագրին հետ մասին: Ահա՛ ինչ որ կար ըսելիք Ն.Գ.Բ.ի գործերուն մասին: Կը յուսամ որ այս տեղեկութիւնները շատ համառօտ չէք գտներ:

* * *

Անցնինք յաջորդ գլուխին:

Խոնարի անձնատրութեամբս կրկին ձեզ պիտի զբաղեցնեմ: Սիրելի *Տասրորդ*¹³⁹ Շուշանեանի գործերը «վատ են գնում»: Նախ՝ երկու ամիսը... «չի ստացուել»: Երեւի պիտի ստիպուինք գործածել յայտնի տարազը (ֆորմուլա եմ ասել ուզում) – *Մի քիչ փող ուղարկեցէք...*¹⁴⁰ «Սա շատ տխուր մի բան է»: Մարդիկ գաղափար չունին թէ ի՞նչ ըսել է Փարիզի մէջ տան վարձքի համար դրամ չունենալ: Ասիկա առ ի տեղեկութիւն ըսի ձեզ:

¹³³ Բնագիրը (ֆրանսերէն):

¹³⁴ Մկրտիչ Պարսամեան (1886-1965).- ֆրանսահայ գրադատ, խմբագիր:

¹³⁵ Հրանդ (Մելքոն Կիրճեան, 1859-1915).- արեւմտահայ արձակագիր: Մեծ եղեռնի զոհերէն:

¹³⁶ Կակնարկէ Արսէն վրդ. Ղազիկեանին (1870-1932), Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ, բանասէր:

¹³⁷ Թրք. el elilen yilan tut (ուրիշի ձեռքով օձ բռնել):

¹³⁸ Գիրքին պատկերազարդումը կատարած է նկարիչ Մելքոն Քեպապճեանը (1880-1949):

¹³⁹ Ընկեր (ռուսերէն):

¹⁴⁰ Երուանդ Օսեանի *Ընկեր Փանջունի*ի հերոսի յայտնի խօսքը իր նամակներուն մէջ:

Լաւ չեն նաեւ միա գործերը: Կարգ մը գրքեր ձեռք անցուցի ու սկսայ համառօտ աշխատանք մը պատրաստել հայ մամուլի մասին: Բայց չեմ կարծեր որ պիտի շարունակեմ, նիւթի պակասը կը ստիպէ որ ուրիշ բանի ձեռք զարնեմ: Աշխատանքիս կէսին հասած՝ նկատեցի որ լաւ չէ, բնա՛ւ լաւ չէ... Իսկ ես, այս երեք տարուան ընթացքին գոնէ վկայականի համար չեմ աշխատած¹⁴¹: Ի՞նչ պիտի ընեմ վկայականը: Երկու հատ ունիմ¹⁴², Երկր[ագործական] նախարարութենէն «ջքանշան»ով մը միասին: Ինչ որ ինձ պէտք է, հիմնական ծանօթութիւն մըն է որ հնարատրութիւն տայ յետագային՝ մինակ շարունակելու: Յոյսս ամրան վրայ է աշխատելու համար: Աշնան պիտի գամ ուրեմն հոս՝ ամէն բան վերջացնելու ու Նոյեմբերի սկիզբները կրկին մեկնելու համար: Կարելի՞ է որ մինչեւ Հոկտեմբերի վերջ, հոգ չէ թէ անկանոն, այդ 700 ֆր.ը շարունակեն տալ: Կրնա՞ք միջամտել այս ուղղութեամբ... Այս մասին, առաջին առթիւ, եթէ գրէք շնորհակալ կ'ըլլամ:

Ամերիկա գալուս խնդիրը՝ ուրեմն այդպէս ջուրը ինկաւ: Այսուհանդերձ պէտք ունիմ անգիտելէն: Ի՞նչպէս ընել: «Հայրենիք»ի մասին ու հոն աշխատելու հնարատրութիւններու մասին՝ ձեր գրածէն տպատրութիւնս այն էր՝ որ դուք ալ շատ չէք հաւատար որ կարելի է ատիկա: Եթէ կարելի ըլլայ՝ ես սիրով կուգամ: Անգամ մը լուծի տակ մտնելէ յետոյ՝ կարգապահութիւնը՝ օրէնք է ու խղճամիտ աշխատանքը՝ պարտադրութիւն: Եթէ կրնաք կարգադրել՝ կարգադրեցէք: Այդ պարագային Հոկտեմբերի վերջերը պատրաստ եմ այստեղէն հեռանալու: Կը կարծեմ որ կրնամ օգտակար ըլլալ իրենց: Կը կարծեմ նաեւ որ կրնամ աշխատիլ ընկ. Ռ. Դարբինեանի¹⁴³ հետ: Կը բաւէ որ կատարելիք աշխատանքս պարզ ըլլայ, մեկին: Ինձ կը թուի որ եթէ կարենաք այս գործը կարգադրել՝ լաւագոյն լուծումը եղած կ'ըլլայ, հակառակ ձեր կարծիքին: Յետոյ այդ երկիրը գիս շատ չի վախցներ: Յետոյ վերջապէս՝ քիչ մը կ'ազատիք այս աղքատութենէն որ տարիներէ ի վեր մեր բաժինը եղաւ, գէթ մասամբ: Անընդհատ հաշուե՛լ գրպանիդ դրամը, անընդհատ մտածե՛լ վաղուան մասին, սենեակի վարձքին, ծակած կօշիկներուդ, ամէն գիշեր քնանալ զանազան պարտքերու հոգը սրտիդ մէջ ու միշտ երկմտիլ ճաշարանի դրան առջեւ: Ի վերջոյ քիչ մը յոգնեցուցիչ է ու գուցէ նաեւ քիչ մը անբարոյացուցիչ, երբ չափը կ'անցնի: Երեւակայեցէ՛ք անցեալ գիշեր, երազիս մէջ՝ բոլոր պարտքերս վճարած էի, մարդու բան պարտական չէի, ազատ մարդ մըն էի ու երջանիկ taxi մը կ'անչեցի, պայուսակներս նետեցի ներս ու ըսի - Gare de Lyon¹⁴⁴: Առաւօտը մարմնիս մէջ տարօրինակ ուրախութիւն մը կար: Յիշեցի երազս ու կարծես թէ բոլոր պարտքերս ետ վերադարձան: Իսկ անցեալ օր կատակով ընկերոջ մը կ'ըսէի,

¹⁴¹ 1927-30ին, Շուշանեան հետեւած էր Ընկերային բարձրագոյն ուսմանց վարժարանի դասընթացքներուն:

¹⁴² Կ'ակնարկէ Վալապրի երկրագործական վարժարանէն եւ Մամիրոյի կաթնատնտեսական վարժարանէն ստացած վկայականներուն:

¹⁴³ Ռուբէն Դարբինեան (Արտաշէս Չիլինկիրեան, 1888-1968).- հանրային գործիչ, խմբագիր: Արդարադատութեան նախարար Հայաստանի Հանրապետութեան մէջ (1919-20): Հայրենիք օրաթերթի (1922-48) եւ ամսագրի (1922-68) երկարամեայ խմբագիր:

¹⁴⁴ Փարիզի երկաթուղիի գլխաւոր կայարաններէն մէկը:

*Մայաքովսկի*¹⁴⁵ անձնասպանության առթիւ որ - Մարդիկ կան որ անձնասպան ըլլալու իրաւունք չունին... - Ո՞վ... - Անոնք որ պարտք ունին[,] ըսի լրջութեամբ, tout de même¹⁴⁶ կարելի չէ գլուխդ առնել երթալ առանց պարտքերդ վճարելու: Երկուքս ալ խնդացինք, բայց ծիծաղներ կան որ գէշ կը հնչեն:

Հասանք հոս, էջին տակը ու ձեր «ի՞նչ կայ, չկայ»...ն միտքս են, կան: Օ՛ ձեր «ի՞նչ կայ, չկայ»ն: Երեւակայեցէ՛ք: Անցեալները Աշտուղ քիչ մը տկար էր, *տամարս*¹⁴⁷ բռնեց, գացի զինքը տեսնելու: Ի՞նչ կրնար ըլլալ նոր տեսած առաջին բանս: Նամակի մաս մը ու ձեր հարցումը՝ ձեր գրիչովը - ի՞նչ կայ, չկայ... Շատ բան ու ոչինչ նոյն ատեն:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԶ.¹⁴⁸

Փարիզ 16 Յունիս 1930

V.Ch.

6 Place de la Sorbonne

Paris (5e)

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Սկսիլը միշտ դժուար է, իսկ վերջացնելը համեմատաբար աւելի դիւրին, երեւի ատոր համար է որ, կարգ մը գրողներ հակառակ կողմէն կը սկսին իրենց պատմութիւնները ու չեն հասնիր սկզբնաւորութեան: Նամակ մը սկսիլը մասնաւորաբար դժուար է, որովհետեւ մարդ միշտ կը մտածէ, որ այս անիծեալ թղթի կտորները՝ անգամ մը նամակատուի ձգուելէ յետոյ, կը սկսին ինքնա-յատուկ ու առանձին կեանքով մը ապրիլ ու ճիշդ շատ մը ապրող բաներու պէս կ'ունենան իրենց ճակատագիրը, կեանքն ու վախճանը: Եթէ մարդ ժամանակ ու տրամադրութիւն ունենայ ու անշուշտ նաեւ քիչ մը լրջութիւն - ինչ որ, ըստ ընկերներու, միշտ կը պակսի ինձ - կրնայ յուզիչ! տողերով բանաստեղծութիւն մը գրել բոլոր նամակներու մասին, անոնց որ կարելի է գրել եւ միասնորոն որ պէտք չէ գրուին բնաւ - ինչպէս պէտք չէ որ գրուէր իմ Անկարելի Օրագիրս - եւ կամ մնան առանց ղրկուելու: Ինչպէս բանաստեղծութեան այս ծաղրանկարը: Գրել հեռաւոր մէկուն, անձնատուութեան ժամու մը ընթացքին, նամակներ որ կրնան կարդացուիլ, ոտքի վրայ կամ կառաշարի մէջ, Երբ աճապարանքի մէջ է մարդ, կամ տագնապի, ծանծրոյթի անծայր տափարակի վրայ

Կամ ուրախութեան - ի՞նչ որ նոյն բաները չեն -

Գրել հեռաւոր մէկու մը որ կրնայ կարդալ՝ ո՛չ միայն գրուածը, այլեւ ինչ որ կայ՝

Լուսանցքի վրայ կամ տողընդմէջ եւ որ մարդ՝

Անիութեամբ, գիտուն մեղսակցութեամբ կամ ակամայ կը ձգէ հող...

¹⁴⁵ Վլատիմիր Մայաքովսկի (1893-1930).- ռուս խորհրդային նշանաւոր բանաստեղծ: Անձնասպան եղած է 14 Ապրիլ 1930ին:

¹⁴⁶ Այսուհանդերձ (ֆրանսերէն):

¹⁴⁷ Յամառութիւնս (թրքերէն):

¹⁴⁸ Նամակը գրուած է Koubok Barի (Place de la Sorbonne) նամակաթուղթի վրայ: Առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ «Վ. Շուշանեանէն եւս երկու նամակ», էջ 55-57:

Գրել հեռաւոր մէկու մը որ կրնայ՝
 Հետեւելով բառերուն, գործածելով զանոնք
 Կառուցանել հոգեկան վիճակներ, տեսնել վանկերուն ետին
 Մարդը՝ գրիչը ավիին մէջ,
 Գրել՝ հեռաւոր մէկուն - Օ՛ր անցուցէք ինձմէ այս տկարութիւնը -
 Թունաւոր սլաքներ նետելու ասդին անդին, որ վաղ կամ ուշ
 Կը վերադառնան իրենց մեկնումի կէտին...
 Ձգուած տուփի մը մէջ, յանձնուած իրենց ճակատագրին
 Նամակներ
 Որոնց մարդ պիտի ուզէր հետեւիլ, նոր տողեր կցելու համար իրենց,
 Հերքելու համար, կամ իրենց ներքին ուժը տկարացնելու...
 Նամակներ որ կը տեւէք՝ գրողին կեանքէն անդին,
 Մխալմամբ կ'երկարածէք զայն, կ'ամբողջացնէք զայն կամ կը խեղա-
 թիրէք...
 Նամակներ որ կը հանդիպիք գէշ օրի,
 Մերժումի գուցէ, գաղջ ընդունելութեան, սիրոյ...
 Որ կը յարուցանէք փոթորիկ, մախանք, տենդ: Կը քրքրէք առկայծ կրակ...
 Նամակներ՝ որ կը մնաք որպէս պատանդ, որպէս գերութիւն...
 Աղտոյի, գէշ հետքերու պէս, վտանգաւոր բաներու պէս՝ որ մարդ մոռնայ
 սեղանին վրայ, անկողպ սենեակի մէջ: Որ կը բացուիք, յանկարծ կեանքի
 մը վրայ
 Որպէս անփափկանկատ, դաւադիր վարագոյր...
 Քառակուսի, գունաւոր, հոտաւէտ թղթերու վրայ,

Ուրիշ թղթերու վրայ տակաւին: Երբ կը մտածեմ, թէ ձեր բոլոր տեսակները
 Անցած են գրչիս տակէն, կարծես թէ
 Անորոշ մտահոգութիւն մը կը քսուի հեռուէն ինձ: Կարծես թէ՝
 Հոգիս է, որ բեկոր առ բեկոր ձգած եմ գէշ պահնորդներու մօտ, գէշ
 ընկերներու...

Կարծես թէ մարմնիս բոլոր մասերուն վրայ՝ խոցելի կէտեր կան ու շուտով
 Պիտի բազմաթիւ վերքեր բացուին...
 Սթօբ!¹⁴⁹ Ով շատգրիկ մուսայ, այսքանը կը բաւէ նամակներու մասին: Իրաւ է
 որ քաղաքացի Ա. Խոնդկարեանը չկայ որ կճէ քեզ, տհաճ ակնարկութիւններ
 ընելով եւ ո՛չ ալ ուրիշներ որ մտածեն թէ էջը՝ տօլար մըն է, վերջապէս պէտք է
 հասնիլ վերջաւորութեան, վերջապէս...
 Վերջապէս պէտք է սկսիլ սկիզբէն կարծեմ եւ Ն.Գ.Բ.ի գէշ երկիր ինկած նա-
 խագահին, գործի վերաբերեալ նամակ գրել:
 - Գիրքը գրեթէ շարուած վերջացած է: Կը մնան կարգ մը սրբագրութիւններ
 միայն: Եթէ պահանջենք արագացնել, կը կարծեմ որ մէկ ամիսէն կրնան յանձ-
 նել: Մինչեւ հիմա չէինք աճապարեր մտածելով որ լաւ էր հրատարակ հանել
 յրբեմնական հանդիսութիւններէն (!) յետոյ:
 - Նախատոմսերէ եկած գումարները անելի քան բաւարար պիտի ըլլան՝ ամբող-
 ջովին մեր պարտքը վճարելու տպարանին: Բայց ինձ կը թուի որ առաջին

¹⁴⁹ Կանգ առ (անգլերէն):

առթիւ 300էն աւելի սպառում չպիտի կրնանք ունենալ, ինչ որ լուրջ դժուարութիւններ պիտի ստեղծէ մեզ համար:

- Գեղամ Բարսեղեանի գործին սրբագրութիւնը չի յառաջանար: Գրուած նամակներուն չեն պատասխաներ: Այս մասին որոշում չենք տուած:

- Կը թուի թէ մեր երկրորդ գիրքը պիտի ըլլայ *Հրանդի Պանդուխտի նամակներու* հաւաքածոն: Իր զաւակները վերջապէս ծայն տուին ու համաձայնեցան, բայց ինչպէս օրէնք է, որպէս գէշ որդիներ, ոչինչ ունին իրենց հօրմէն: Կրկին մենք պիտի հաւաքենք: Այս առթիւ, երեակայեցէք, առնուազն 15-20 նամակ գրուած է Ռումանիա, Սուրիա եւ Վենետիկ: Արդիւնքը հետեւեալն է: Հայր Արսէն Ղազիկեանը, հաւաքիչ՝ ուրիշ գործերու, յանձն կ'առնէ լրիւ կերպով հաւաքել *Հրանդի* գործերը, բայց վարձատրութիւն կ'ուզէ: Կ'ըսէ որ *չըրախ*¹⁵⁰ չէ եւ իր ժամանակը սուղ է եւ դեռ ուրիշ բաներ, որոնցմէ կը պարզուի որ հայր-սուրբը 75 տօլարէն աւելի գումար մը կ'ուզէ արտագրելու համար: Մեր պատկառելի ընկերները, մէջը հաշուելով անպատկառս, կը կարծեն որ այդ գումարը պէտք է տալ եւ կը հաւատան որ Հայր Արսէնը խղճամտութեամբ կրնայ կատարել այդ աշխատանքը: Իր վերջին նամակը կը ներփակեմ¹⁵¹: Ձեր վզին տարապարհակ պարտք կայ՝ ափ առնել որեւէ հայ մեծատունի կամ կէս-մեծատունի դուռ ու պահանջել այդ գումարը, յանուն հայ դպրութեանց: Մեր պատկառելի Ն. Գ. Բ. ականները, այդ դրամը իրենց ձեռքով տեղատրածի պէս, կը կարծեն գտնել որեւէ հայ ջոջի գրպանը: Այլեւս ձեզ կը մնայ՝

Ա) իրապէս որեւէ մարդ ճարել որ տայ այս գումարը:

Բ) կամ գտնել 2-3 նուիրատու, որոնց անունները կը յիշատակուին եւ ստանալ իրենցմէ 150-200 տօլար, ի հաշիւ տպագրական ծախքերու:

Գ) եւ կամ հարցը տանիլ Ն. Գ. Բ.ի Նիւ-Եօրքի մասնաճիւղին:

Ինձ կը մնայ հայցել ձեր ներողամտութիւնը՝ նման թղթի վրայ նման նամակ գրած ըլլալու համար: Կը յուսամ արժանանալ ատոր՝ քանի որ արդարացում մը ունիմ - լրջութեան ի՞նչ ըլլալը չգիտնալս:

- Նիւ-Եօրքի մասնաճիւղէն լուր չկայ: Համաձայն ձեր խորհուրդին գրեցինք, ինչպէս կ'ըսէիք, շնորհատրեցինք, քաջալերեցինք, շատ մը բաներ ըրինք վերջապէս, բայց ձայն չելաւ: Երեւի իրենց խանդավառութիւնը հանգչեցաւ ի Տէր: Ձէք կրնա՞ր թօթուել զիրենք այդ մահաթմբիրէն:

* * *

Գործածելով ասանդական տարազը (էս էլ ձեր ֆօրմուլային հայերէնը)՝ կը հաստատեմ, չեմ գիտեր ո՞ր թուակիր, նախորդ նամակս: Ճշմարտօրէն կը յիշեմ ինչ որ գրած եմ: Նոյնպէս որ կրկնելու հարկ չեմ տեսներ: Օրերը գեղեցիկ չեն, այդ մենք վաղուց է գիտենք, բայց հակառակ փոթորիկին, ովկիանոսին վրայ թէ հոս, կը սպասենք մեր նամակի պատասխանին: Կը խնդրեմ որ չորս ամիս եւս շարունակեն դրկել ինձ տրուածը, այսինքն յովիս, օգոստոս, սեպտեմբեր եւ հոկտեմբեր, եւ այս անգամ կը կարծեմ որ այլեւս ոչ ոք չեմ անհանգստացներ: Եթէ կարելի չէ, շատ կը խնդրեմ որ երկտողով մը իմացնէք, որպէսզի գիտնամ ընելիքս:

¹⁵⁰ Աշակերտ (թրքերէն):

¹⁵¹ Նամակը պահպանուած չէ:

Գալով իմ հող գալու խնդրիս, կը տեսնե՞ք որ ձեր առաջարկած ձեռով կարելի չէ: Ես հիմա բազմաթիւ արկածախնդրութեանց պատրաստ եմ սակայն, մանաւանդ հող գալու հակառակ վերջին ընթերցումներու: Ի դէպ, թոյլ տուէք, ձեզ գիրք մը յանձնարարել՝ Georges Duhamelի¹⁵² *Scènes [sic] de la vie future*¹⁵³: Բայց պէտք է կարդաք զայն այդտեղ, բաղդատելու ու կարենալ հակակշռելու համար: Անտվոր ու իրեն համար բացառիկ խորութեամբ մը, գրեթէ բոռն, կարելի է ըսել նոյնիսկ ծածկուած ատելութեամբ՝ ան, ամենամանրամասն մեղադրագիրն ու պարսաւը կ'ուղղէ Միացեալ Նահանգներու դէմ: Մարդ մը՝ որ միշտ կէս-գոյնէրու, զուսպ ու արդար բառերու, ճշմարտութեան մեծագոյն բեկորին, մարդէ մարդ, ազգէ ազգ եւ քաղաքակրթութիւնէ քաղաքակրթութիւն՝ սիրոյ եւ հանդուրժողութեան կուսակից է եղած՝ չի կրնար զսպել իր զայրոյթը ու վայրագ հաճոյքով մը, ուր կայ ցաւ եւ դառնութիւն: Կը յարձակի աշխարհի մեծագոյն երկրին վրայ: Էջեր կան, ուր հակառակ իր զայրոյթին, ան կը հասնի մարդկայնութեան այնպիսի չափի մը, ճշմարտութեան այնպիսի բաբախուն ու սրտագրաւ շեշտի՝ որ իր գործը կը դառնայ կարծես արդարութեան գեղեցիկ ու զօրեղ արարք, տեսակ մը խաղաղ այլ վաւերական հերոսութեան: Իրական գիրք մը վերջապէս, որուն էջերուն ետին, մարդ կը տեսնէ *մարդ մը*, որ կ'ապրի ազնիւ լրջութեամբ մը, նուիրումով ու գուցէ տառապելով, հակառակ իր պնդումներուն:

Այստեղ ո՛չ մէկ նորութիւն: Կան միայն մարդիկ, որոնց պատմութիւնը դժուար է գրել: Որովհետեւ ի՞նչ անելի կարեւոր նորութիւն՝ քան մարդիկը (որ կարծես միշտ նոյնն են եւ որ միշտ տարբեր են սակայն, անընդհատ կապի մէջ՝ իրենց շուրջիններուն եւ ինքզինքնուն հետ. անընդհատ որեւէ տառապանքի կամ դժուարութեան հետ գիրկընդխառն, անընդհատ պատրանքի մէջ) որոնցմէ մէկը պատիւր ունի ձեզ բարեւելու ու այս բոլոր տողերուն տակ այս անգամ լրջութեամբ տեղաւորելու իր անունը, որ ամբողջ պատմութիւն մըն է, շատ մը ուրիշ պատմութիւններու պէս՝ քիչ մը երգիծական ու քիչ մըն ալ տխուր՝ **ՎԱԶԳԷՆ**

ԺԷ.

23 Յունիս 1930 Փարիզ

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Անշուշտ նախորդ նամակս ստացած կ'ըլլաք: Այսօր ձեզի նոր ներդրութիւն մը պիտի պատճառեմ: Եթէ խնդրածս իրապէս չըլլայիք բան է՝ պատռեցէք նամակս... Հակառակ պարագային շատ շնորհակալ պիտի ըլլամ եթէ երկտող մը գրէք: Զանազան պատճառներով՝ չափազանց նեղ նիւթական կացութեան մը մէջ եմ. բացի ուրիշ բաներէ, այս վեց-եօթը ամսուան ընթացքին, ամիսը 400 ֆր. բաց մը հաշուելով շուրջ 2000-2500 ֆր. պարտք ըրի: Այս կամ այն ձեռով 1300-1400 ֆրանքի պէտք ունիմ, մինչեւ որ ինքզինքս գտնեմ: Ձեզմէ պիտի խնդրեմ, որ ձեր երաշխաւորութեամբ, եթէ կարենաք ինձ 50-60 տօլարի փո-

¹⁵² Ժորժ Տիւհամէլ (1884-1966).- ֆրանսացի գրագէտ:

¹⁵³ Georges Duhamel, *Scènes de la vie future*, Paris, Mercure de France, 1930: Գիրքը գրուած է 1929ի վերջաւորութեան Տիւհամէլի Միացեալ Նահանգներ կատարած ուղեւորութենէն ետք:

խատուութիւն մը գտնէք: Կը խոստանամ անպայման մինչեւ (...)»⁵⁴ վճարել: Երկուստարդ եմ, կրնամ աշխատիլ, ծրագիրներ ունիմ: Եթէ կրնաք այս ծառայութիւնը մատուցանեցէ՛ք ինձ: Հոդ երկու ընկերներ ունէի, որ կրնային օգտակար ըլլալ՝ բայց վիճակնին լաւ չէ: Յամենայն դէպս՝ կը ներէք պատճառած ծանծրոյթիս համար: Ձեր վիճակին տեղեակ եմ, գիտեմ որ՝ ըրած դիմումս քիչ մը տեղին չէ, բայց... կը խնդրեմ կրկին որ փորձէք բան մը ընել: Յիմար կացութիւն է, ես ալ չեմ գիտեր թէ ի՞նչպէս պատահեցաւ այս բոլորը:

Բարեւներով ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԸ.

24 Յունիս 1930 Փարիզ

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Ընկ. Զամալեանի¹⁵⁵ խորհուրդին վրայ է որ այս երկտողը կը գրեմ, խնդրելու համար որ միջամտէք Հայ Կարմիր Խաչի մօտ՝ որպէսզի ինձ տրուած նպաստը, եթէ կարելի է, երկարաձգեն 4-5 ամիս եւս: Ատիկա մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ ինձ: Եւ կը յուսամ որ ուրիշ առթիւ այլեւս չպիտի ծանծրացնեմ զիրենք:

Առիթն օգտուելով շնորհակալութիւն կը յայտնեմ Կեդր[ոնական] Վարչութեան ընկերուիկներուն որ այնքան բարեացակամ եղան դէպի զիս: Վերջերս ձեր հասցէին երկու նամակ ձգեցի, անշուշտ ստացած կ'ըլլաք: Վերջինն պատասխանին մանաւանդ՝ կը սպասեմ անհամբերութեամբ:

Ընկերական յարգանքներով ձերդ՝

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

V. Ch.

6 place de la Sorbonne 6
Paris (5e)

ԺԹ.¹⁵⁶

11 Օգոստոս 1930 Փարիզ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

- Այս երկտողը կը գրեմ աճապարանքով՝ ձեզ հաղորդելու համար որ շուտով լոյս կը տեսնէ Ռ[ուբէն] Զարդարեանի գիրքը¹⁵⁷: *Պատրաստ* կայ քովերնիս Հրանդի «Պանդուխտի կեանքէն» պատմութեանը հատորը եւ շուտով պիտի ունենանք ամբողջական գործը. *պատրաստ* են նաեւ Գեղամ Բարսեղեանի արծակ էջերը: Ռ[ուբէն] Զարդարեանի արծակ էջերը կը ձգձգենք որովհետեւ ձեզմէ եւ միաներէն ձայն-ձայտուն չելաւ: Գիրքը եթէ լոյս տեսնէ որո՞ւ, քանի հա-

¹⁵⁴ Զնչուած:

¹⁵⁵ Արշակ Զամալեան (Իսահակեան, 1882-1940).- քաղաքական գործիչ, գրագէտ: Հայաստանի Հանրապետութեան շրջանին՝ դեսպան Վրաստանի մէջ, խորհրդարանի անդամ, հաղորդակցութեան նախարար:

¹⁵⁶ Այս նամակին նախընթաց հրատարակութիւններու համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 150-51. նաեւ՝ «Վ. Շուշանեանէն եւս երկու նամակ», էջ 54-55:

¹⁵⁷ Զարդարեան, *Ամբողջական երկեր*:

տոր պիտի դրկենք, չենք գիտեր: Կը խնդրեմ որ գէթ Մ. Նահանգներու զանազան քաղաքներուն մէջ, վստահելի մարդոց եւ ընկերներու հասցէները դրկէք ինձ, յիշելով թէ իրաքանչիւրին քա՞նի օրինակ պէտք է դրկել, որպէսզի գէթ առաջին առաքում մը կարենանք ընել:

* * *

- Կ[արմիր] Խ[աշ]էն Յուլիսի հաշուոյն ինձ որեւէ բան չտուին եւ ո՛չ ալ Օգոստոսի: Կը յիշե՞ք, ինձ գրած էիք թէ կարելի է երկարածգել: Ընկ[եր] Զամալեանի խորհուրդին վրայ ժամանակին գրեցի ձեզ: Ձեզ գրած էի նաեւ ուրիշ անձնական նամակ մը, պատասխան չառի¹⁵⁸: Հակառակի պէս «Հայրենիք»էն այս ամիս, «Յուլիս»ի աշխատավարձքն ալ չդրկեցին: Խիստ գէշ դրութեան մը մատնուեցայ:

- Եթէ տեսնէք ընկ. Ռ[ուբէն] Դարբինեանը, կը խնդրե՞մ, ըսէք որ բոլոր ըրած յայտարարները նկատած են¹⁵⁹: Հատուածներ, էջերու ամբողջ մասեր... բաց ինկած են. չպատահի որ կարծէ, թէ աննկատ անցած են իր... սրբագրութիւնները: Աաշտութիւնս - չգործածելու համար ուրիշ բառ մը - այնքան մեծ է, որ ամիսներէ ի վեր կը մտածեմ թէ ի՞նչ կարելի է ընել, կամ ի՞նչ կարելի է գրել, քանի որ յանուն ո՛չ մէկ իրաւունքի կարելի է խօսիլ խմբագիրներու հետ, քանի որ խմբագիրները մարդիկ են՝ անխտելի ճաշակով ու աստուածօրէն գեղագէտ: Խօսի՛լ գրուած բանին հանդէպ յարգանքի անհրաժեշտութեան մասին՝ այլեւս շատ անելորդ է: Ըսե՛լ որ երկ մը որ գեղարուեստական ըլլալու յաւակնութիւնը կը տածէ կամ որպէս այդպիսին հիւրընկալուած է՝ իրաւունք ունի անձեռնմխելիութեան: Յառաջիկայ անգամին կ'առաջարկեմ գրածիս վրայ դնել.- Գրեց՝ Վազգէն Շուշանեան, սրբագրեց՝ Ռ[ուբէն] Դարբինեան: Ասիկա գոնէ ուղղամիտ բան մը կ'ըլլայ: Ռ[ուբէն] Զարդարեանի գիրքը սրբագրած ատեն, Լ[ետոն] Մօզեանը¹⁶⁰ եւ ես կը զարմանայինք թէ ի՞նչպէս ստուգապէս գեղեցիկ էջերու կողքին՝ կան այնքան գէշ էջեր: Ատիկա պատճառ մը չէ եղած սակայն որ այլ խմբագիրներ էջերով յայտարար ընեն: Բայց ի՞նչպէս որ ըսի՝ բանականութիւնը չէ որ կարելի է օգնութեան կանչել այստեղ, խմբագիրներու դէմ պաշտպանուելու համար: Միայն թէ՛ ամէ՛ն մարդ իրաւունք ունի մարդոց երեւալու այնպէս ինչպէս որ է: Ենթադրելով որ բոլոր սրբագրութիւնները յօգուտ գրածիս են, կ'առարկեմ - թո՛յլ տուէք ընկ. խմբագիր, երեւալ հասարակութեան առանց սիրամարգի փետուրներու...

Թէեւ յանցաւորը իրապէս ես եմ՝ որ այնքան վատ եղայ, անըմբռնելիօրէն վատ: Լաւ կը ճանչնայի ընկ. Ռ. Դ.ն: Ի՞նչ որ պէտք էր՝ բ. գիրքը ետ ուզելն էր, ատիկա չըրի: Հիմա, ինչպէս որ առաձը կ'ըսէ, գնա՛ ու տէրտղ Մարքօ փաշային հասկցուր... Բայց տխուր է մեր ընկերներուն մօտ այս արքայական անբարեխղճութիւնը՝ ուրիշներու գործին հանդէպ: Գիրքը երկար ատեն քովը մնաց¹⁶¹, կրնար կարդալ, ըսել - ընկե՛ր, չեմ կրնար լոյս ընծայել, կամ հարկ է հետագայ

¹⁵⁸ Տե՛ս՝ 23 Յունիս 1930ի նամակը:

¹⁵⁹ Կ'ակնարկէ *Օրերը գեղեցիկ չեն...* վէպի երկրորդ մասին, որ լոյս տեսած է *Հայրենիք* ամսագրի 1930ի Փետրուարէն մինչեւ Յուլիս:

¹⁶⁰ Լետոն Մօզեան (1890-1958).- ֆրանսահայ գրագէտ, հրապարակագիր:

¹⁶¹ *Օրերը գեղեցիկ չեն...* վէպի առաջին մասը լոյս տեսած էր *Հայրենիք* ամսագրին մէջ յաջորդական չորս թիւերու մէջ՝ Յունիսէն մինչեւ Սեպտեմբեր 1929:

փոփոխությունները ընել... Առաջին անգամը չէ, կարծեմ, որ ձեռագիր մերժած է, ամիսներ պահել է յետոյ ու վշտացող չէ եղած... Եւ այս բոլորը քանի մը թշուառ տօլարներու համար - որ իրա՛ւ որ արդարութեամբ շահած ենք եւ որ ժամանակին հասնելու առաքինութիւնը անգամ չունին...

Յարգանքներով ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Ի.¹⁶²

8 Սեպտեմբեր 1930

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Մեծ գոհունակութեամբ ընդունեցինք ձեր նամակը ու մեր առաջին ժողովին մէջ իսկ, համաձայն ձեր թելադրութեանց, հարկ եղածը կարգադրեցինք՝ անմիջապէս հատորի պատրաստութեան սկսելու համար, զոր կը յուսանք լոյս ընծայել մինչեւ 1930 Յունիս¹⁶³ ամենէն ուշը:

Մեր երկրորդ հատորը պիտի ըլլայ՝ *Հրանդի Պանդուխտի նամակները*, զոր շուտով պիտի յանձնենք տպարան¹⁶⁴: Առ այդ, ուրախութեամբ ստացանք բժ[իշկ] Երկանեանի¹⁶⁵ նամակը, որով ան կը խոստանայ 100 տօլարի նուէր մը ընել մեզ, ձեռագրի հաւաքման ծախքերուն համար: Հարկ եղածը գրեցինք իրեն, բայց եթէ պատահի որ հանդիպիք իրեն՝ բերանացի ես, կը խնդրենք հաղորդեցէք մեր ջերմ շնորհակալութիւնը:

Արձակուրդի առթիւ, կարճ ժամանակուան մը համար մեր ընդհատուած աշխատանքները՝ վերսկսանք եւ յոյս ունինք որ 1931ի ընթացքին, պիտի կրնանք լոյս ընծայել *Հրանդէն*, *Գեղամ Բարսեղեանէն*¹⁶⁶ եւ *Գեղամ Տէր Կարապետեանէն*¹⁶⁷ մէկ-մէկ հատոր:

Շնորհակալութիւն կը յայտնենք ձեզ՝ ձեր թափած ջանքերուն համար ու կը խնդրենք որ ընդունիք մեր լաւագոյն բարեւները:

Ի դիմաց Ն.Գ.Բ.ի՛

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Յ. Գ.- Ստացանք ձեր դրկած 100 տօլարը, ի հաշիւ Գ. Տէր Կարապետեանի գրքի հրատարակութեան համար՝ Տարօն-Տ[ուրութեանի] Հ[այրենակցական] Միութեան կողմէ վճարուելիք 400 տօլարին:

¹⁶² Նամակը գրուած է ՆԳԲի նամակաթուղթին վրայ՝ Շուշանեանի ձեռագրով: Առաջին հրատարակութիւնը տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 151-52:

¹⁶³ Կենթադրենք, որ վրիպակ է եւ պէտք է ըլլայ 1931:

¹⁶⁴ Հրանդ, *Ամբողջական երկեր*: Տե՛ս՝ Շրջիկ [Յ. Ճ. Սիրունի], «Մելքոն Կիրճեան», *Հայրենիք*, 30 Օգոստոս 1931, էջ 1:

¹⁶⁵ Բժ. Յովհաննէս Էրկանեան յետագային եղած է Նիւ Եորքի յանձնախումբին ատենապետը:

¹⁶⁶ Բարսեղեան, *Ամբողջական գործը*: Գիրքը լոյս տեսած է Օգոստոս 1931ին: Այդ առիթով, *Յառաջ* թիւ մը նուիրած է Բարսեղեանին, որուն աշխատակցած է Շուշանեան եւս (Վազգէն Շուշանեան, «Գեղամ Բարսեղեան քաղաքացի, բանաստեղծ ու տեսլահար», *Յառաջ*, 16 եւ 18 Օգոստոս 1931):

¹⁶⁷ Տէր Կարապետեան, *Տարօնի աշխարհ*:

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Պզտիկ բարոյութիւն մը: Արփիարեանի գիրքը¹⁷⁰ ամբողջովին կազմուած, յանձնեցինք ընկ. Մ[կրտիչ] Պարսամեանին հետ տպարանին: Անցեալ օր իմացայ Գերասիմէն¹⁷¹ որ բժիշկը¹⁷² հեռախօսեր է, որպէսզի գիրքը իր անուան չարձանագրուի: Նախապէս երկուքիս ըսած էր իր մտադրութիւնը ու մենք աշխատած էինք տարիամոզել զինքը: Քիչ առաջ հեռախօսեցի՝ կը պնդէ որ իր անունով չըլլայ:

Ու որովհետեւ տպարանին առջեւ մէկը վերջիվերջոյ պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ, մտածեցի ձեզի գրել: Կամ Ձեր կամ ընկ[եր] Պարսամեանի անուան կարելի է արձանագրել: Լաւ է անշուշտ, որ որպէս նախագահի Ձեր անունը դրուի: Դուք ի՞նչ կը մտածէք:

Գիրքը խոստացան տալ Սեպտեմբերի վերջերը:

Բարեւներով՝ ՎԱՋԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ձեր տած հարցերի պատասխանը կը ջանամ խտացնել հետեւեալ տողերի մէջ:

Պատերազմը ամբողջ մարդկութեան կեանքում առաջ բերեց սուր բեկում՝ քաղաքակրթութեան զարգացումը բաժանելով նախապատերազմեան եւ յետպատերազմեան մասերի: Տասն եւ հինգ տարի է անցել պատերազմի սկզբից, բայց նախապատերազմեան աշխարհը այլեւս անսահման հեռու է մեզանից: Պատերազմը ծնունդ տուեց նոր աշխարհի, նիւթական եւ հոգեւոր կեանքի նոր կառուցուածքի, նոր կենսահայեցողութեան, նոր զարգացման, նոր կենցաղի: Ստեղծեցին կեանքի նոր ձեւեր, նոր մտածողութիւն, նոր բարքեր: Հնի ու նորի միջեւ օրգանական կապ եւ ժառանգական անմիջական յաջորդականութիւն գրեթէ չկայ: Պատերազմի վիճի է կանգնած երկու եզերքների միջեւ: Այստեղից եւ աշխարհայեացքի ու աշխարհագիտակցութեան տարբերութիւնը, ցաւագին անհասկացողութիւնն ու ներհակութիւնը նախապատերազմեան եւ այսօրուայ անդունդների միջեւ:

Այս երեւոյթի արտայայտութիւնը մեզ մօտ ւելի ցաւագին է, քանի որ պատերազմի գործած ւերներն էլ հայ հաւաքականութեան կազմի մէջ անհունօրէն ւելի ահաւոր են:

Պատերազմի անմիջական ծնունդ է արեւմտահայոց ջարդն ու Հայաստանի ւմայացումը եւ արեւելահայերի բոլշեւիկեան քայքայիչ մտրակին ենթարկւելը, ո-

¹⁶⁸ Նամակը գրած է Շուշանեանը ու ստորագրած՝ բժ. Լեւոն Գրիգորեանը, որ գրած է յետգրութեանը:

¹⁶⁹ Նամակը գրուած է ՆԳԲի նամակաթուղթին վրայ: Առաջին հրատարակութիւնը տե՛ս Վանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 152:

¹⁷⁰ Արփիարեան, *Պարմուածքներ ու վիպակներ*:

¹⁷¹ Գերասիմ Բալայեան:

¹⁷² Կ՛ականարկէ բժ. Լեւոն Գրիգորեանին:

րոնք բոլորովին նոր կացութիւն ստեղծեցին հայ հաւաքականութեան համար: Տասն եւ չորս տարի է, որ գոյութիւն չունի արեւմտեան Հայաստան, արեւմտահայութիւնը, քանակով եւ որակով կրճատ՝ դարձել է տարագիր: Միւս կողմից Արեւելեան Հայաստանը ենթակայ է բռնութեան եւ ընկերա[յ]իին արհեստական փորձերի որոնք քայքայում են նրա տնտեսական եւ մտաւոր-բարոյական կազմածքը, ազգային մշակոյթը ճնշած է անհեթեթ երկանաքարի տակ եւ հազիւ պլպլում է ժողովուրդի ու բոլշեփկեան ապականութեանց զերծ մնացած երիտասարդութեան հոգում: Երկու մասերում էլ հայ ազգային մշակոյթի զարգացման ընթացքը խախտուել է՝ մի կողմ ամէլի, միւս կողմ պակաս:

Եթէ այս բնորոշումը, ընդհանուր առմամբ, ճիշդ է, ապա պարզ է, որ պատերազմից ասդին հրապարակ եկած «բազմաթիւ երիտասարդ գրողները» իրենց ապրումներով ու մշակած գրականութեամբ չեն կարող լինել բնական շարունակութիւնը «նախապատերազմեան հայ գրականութեան»: Եւ, ի հարկէ, չեն էլ համարում:

Միայն չհասկանաք: Երիտասարդ գրագէտներից ոմանք, առանձին առած շարունակում են ապրել նախապատերազմեան ամենօրեայիններով, բայց գրականութիւնը, իբրեւ այդպիսին, չի ներկայանում հնի աստիճանական մէկ փուլը, որովհետեւ (խօսքը, գաղթահայերի մէջ մշակած գրականութեան մասին է) արեւմտահայ գրական յառաջընթացութիւնը կանգ է առել կամ, լաւագոյն դէպքում, կանգ առնելու վրայ է, ազգային կենդանի գրականութիւն չի կարող յարաժտուել զաղութներում:

Պատերազմից յետոյ, հրապարակ եղած կամ հրապարակ եկող «բազմաթիւ երիտասարդ գրողները» - եւ նրանց մէջ կան անպայման տաղանդաւոր ուժեր - արեւմտահայ գրականութեան բնականոն զարգացման պտուղ չեն, այլ արձագանգները նախորդ ժամանակների կամ տխուր առկայծումները ցան եւ ցիր եղած հայ մտաւորականութեան: Ամենաշնորհալիները նրանց մէջ կամ ապրում են նախապատերազմեան օրերի յուշերով (Համաստեղ)¹⁷³ կամ ներշնչման նիւթ են որոնում հեռաւոր անցեալում (Եղիա) Գասպարեան)¹⁷⁴ կամ, վերջապէս, անդէկ եւ անառագաստ, տարուբերում են անօդ տարածութիւնների մէջ (Վլադգէն) Շուշանեան): Օսմանեան Սահմանադրութեան յաջորդ օրն իսկ Համիտեան կացնի տակ ջախջախած հայ գրականութեան բոյնը արձակեց անհաշիւ ծիւեր, որոնք աճեցին արագօրէն եւ կենդանացրին մայր ծառը: Համաշխարհային պատերազմից յետոյ, այստեղ թէ այնտեղ, օտար հողի մէջ, երեւան եկան առանձին ծիւեր, բայց հայ գրականութեան բոյնը չծլած ջարդուեց, որովհետեւ չկայ նրան սնունդ տող կենդանի հողը՝ հայ երկիրն ու երկրի ժողովուրդը, առանց որոնց չի կարող գոյութիւն ունենալ կենդանի գրականութիւն: Սա ողբերգութեան յատուկ աղբիւր է մեր երիտասարդ գրողների համար, որոնց մեծ մասը ըստ ձեփ մնում է կապած հնի հետ, ըստ էութեան՝ կտրւած է նրանից:

Մինչեւ այժմ ասածից հետեւում է, ուրեմն խօսքը միշտ գաղութահայութեան մասին է, որ «Նոր Գրականութիւն» գոյութիւն չունի կամ գոյութիւն ունի պայմանական իմաստով, որպէս նոր գրողների երկերի պայմանական հաւաքա-

¹⁷³ Համաստեղ (Համբարձում Կէլէնեան, 1895-1966).- ամերիկահայ արձակագիր:

¹⁷⁴ Եղիա Գասպարեան (1893-1948).- ամերիկահայ նկարիչ եւ թատերագիր:

կանութիւն: Կան գրողներ, կան գրածքներ եւ կայ բանական միութիւն այդ գրածքների միջեւ: Ասպարէզը բաւական հարուստ է հեղինակների ու նրանց արտադրութիւնների քանակով, բայց որպէս մի ժողովրդի հոգեկան ապրումների ամբողջական արտայայտութիւն, ազգային մշակոյթի օրգանական մի միութիւն հայկական գաղութներում չկայ եւ չի էլ կարող լինել եթէ գաղութների կապը Մայր երկրի հետ չվերականգնւի: Ուստի եւ չի բաղդատուի հնի հետ ու չի կարող համապատասխանել «ասպրելու անխախտ կամք ունեցող ժողովրդի մը պահանջներուն եւ մտահոգութիւններուն»:

Գաղութահայ գրականութեան ամենայատկանշական կողմը, ըստ իս, արտաքինի մէջ է, ձեւի կատարելագործման ձգտումն է, որ անմիջական հետեւանք է օտար վարպետների ազդեցութեան, մեր երիտասարդ գրողների մէջ նկատուում է որոշ լեզվի ու ոճի յղկման, գրական ճարտարապետութեան զարգացման [1 բառ պակաս]: Ընդհակառակը գրածքների բովանդակութիւնը, գրական խորութիւնն ու բազմակողմանիութիւնը ակնյայտնի կերպով կաղում են: Չկայ որեւէ կենդրոնական գաղափար, որ յափշտակէ ու զբաղեցնէ գրական հանրային միտքը, որ առհասարակ, արտակերպողն է, անիտէպ, ոստոստուն, շարժապատկերային, բարոյական ներքին զսպանակներից զուրկ, հետեւանք միշտ միեւնոյն պատճառի, հողի բացակայութեան:

Գաղութներում ծնունդ առած երիտասարդ գրողների մէջ կան մի շարք հրապուրիչ անուններ, որոնց տաղանդը, ուրիշ պայմաններում, բոլորովին այլ հետեւանքներ կարող էր տալ հայոց գրականութեան: Դրանցից երեքն են առաջին տեղը բռնում - Համաստեղը, Եղիա Գասպարեանը, Վազգէն Շուշանեանը: Առաջին երկսի զարգացումը գնում է ամանդական ուղիներով: Մարմնապէս ասպրելով գաղութահայ միջավայրում, հոգով բոլորովին հեռու են այդ միջավայրից: Նրանք հետեւում են հայ ու օտար լաւագոյն վարպետների օրինակին, լուրջ աշխատում են իրենց զարգացման համար հրապարակ դրած ամէն մի գրածքի վրայ, նշմարում են յամառ աշխատանքի հետքեր, չեն շտապում շատ բան տալ հասարակութեան, բայց ինչ որ տալիս են՝ լաւ են տալիս:

Գաղութահայ գրականութեան ամենատիպար արտայայտիչը ըստ իս Վ. Շուշանեանն է, որ «լաւագոյն կերպով կը ներկայացնէ այդ գրականութիւնը»: Եւ հէնց այդտեղ է նրա տկար կողմը, գրում է արագ ու շատ եւ ամէն բանի մասին, եւ անվիճելի շնորհքը վատնում է ապարդիւն անցողական հետաքրքրութիւն ներկայացնող նիւթերի վրայ: Իր գրական խոշոր աշխատութիւնների մէջ էլ, մնայուն արժէք ունեցող հիանալի կտորների զուգընթաց թափած են եւ անեփ ու անմշակ էջեր, որոնք փճացնում են ընդհանուր գեղարուեստական շէնքի ամբողջական տպաւորութիւնը: Լրագրողն ու արուեստագէտը կատաղի պայքարում են նրա մէջ, եւ շատ ցաւալի պիտի լինի, եթէ յաղթական դուրս գայ առաջինը:

VAZKEN SHUSHANIAN'S LETTERS TO SIMON VRATSIAN
(1927-31)
(SUMMARY)

VARTAN MATIOSSIAN
varny1@yahoo.com

Two members of the Armenian Revolutionary Federation, French Armenian writer Vazken Shushanian (1903-1941) and Simon Vratzian (1882-1969), last prime minister of the first independent Republic of Armenia, corresponded actively in the period 1927-1931. Only a set of 21 letters written by Shushanian has reached us, along with Vratzian's response to a questionnaire submitted by him. The letters are kept in the archives of the Hamazkayin Cultural Society in Beirut.

The letters, which are published with a detailed introduction and endnotes, offer interesting glimpses about literary and political views, as well as Shushanian's personal struggle to make ends meet while finishing his studies. The letters also offer many details about the early activities of both correspondents on behalf of the Society of Friends of Martyred Writers, founded in 1929 to undertake the publication of the works, both unpublished and/or scattered in the press, of writers murdered during the Armenian genocide.

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻՑ ՀԱՅԵՐԻ 1949Ի ԱՔՍՈՐԻ ՄԱՍԻՆ

ՍԵՂԱ ԳԱԼՍԵԱՆ
sedagalstyan@yahoo.com

Հայաստանի պատմության թանգարանի (ՀՊԹ) ֆոնդերում պահուող ՀԿԿ Ա. քարտուղար Անտոն Քոչինեանի արխիվի ուսումնասիրության ընթացքում նկատեցինք կարելի էր մի փաստաթուղթ՝ Քոչինեանի ստորագրությամբ, որը կարծում ենք լոյս կը սփռի նաեւ Բ. համաշխարհայինից յետոյ առաջացած իրավիճակի, ատելի որոշակի՝ 1946-48ի հայրենադարձության եւ 1949ի աքսորի ժամանակահատուածի վրայ: Փաստաթղթի ուրոշ մասեր տպուել են ամսագրերում, սակայն ամբողջական նիւթը գտնուում է ՀՊԹում: Նիւթի համակողմանի ուսումնասիրության ընթացքում պարզուեց՝ շատ քիչ ուսումնասիրողներ են անդրադարձել այս թեմային: ԽՍՀՄ քաղաքական ճնշումների՝ որոշ ժողովուրդների բաժին հասած աքսորների հետազոտութիւններում «հայկական բռնաքսոր»¹ սովորաբար չի քննարկուել: Ինչպէս ազգագրագէտ Հրանուշ Խառատեանն է նշում «գործնականում չուսումնասիրուած այս խոշոր բռնաքսորը, որին ենթարկուեց հայ ժողովուրդը 1949թ. մնում է խորհրդային ռեպրեսիաների չբացայայտուած էջերից մէկը»²: 1949ի զանգուածային աքսորմանը առաջին անգամ անդրադարձել է պատմաբան Ամատունի Վիրաբեանը, ում վկայութեամբ «Հայաստանից այդ տարիներին արտաքսուել է 2754 ընտանիք, ատելի քան 12000 մարդ»³: Ուշագրաւ է, որ 1949ին Հայաստանից աքսորման ենթարկուածներից միայն 17ն է այլազգի՝ 6 ասորի, 4 ադրբեջանցի, 4 յոյն, 2 ռուս, 1 քուրդ⁴: Վիրաբեանի պնդմամբ, այդ զանգուածային աքսորի վերաբերեալ փաստաթղթեր ընդհանրապէս քիչ են պահպանուել, չի ընդունուել նոյնիսկ ՀԿ(Բ)Կ կենտկոմի կամ ՀԽՍՀ նախարարների խորհրդի համապատասխան որոշում աքսորուածների, այսինքն՝ նախապատրաստական աշխատանքներն իրականացում էին խիստ գաղտնի պայմաններում: Պետանվտանգութեան նախարարութեան շրջանային բաժանմունքների պետերին, ովքեր անձամբ կազմում էին նիւթեր, ցուցակներ, որեւէ գրաւոր հրա-

¹ Հր. Խառատեան, «1949 թ. հայկական բռնաքսորը. էթնիկ դեպորտացիա, թե՛...», <https://www.Iragir.am/2014/10/20/105544/>:

² Գ. Խարատյան, *Выселение армян навечно 1949 года, анализ и архивные документы* (1949ի հայերի ընդմիջտ աքսորը, վերլուծութիւն եւ արխիւային փաստաթղթեր), Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 2020, էջ 33:

³ Ա. Վիրաբեան, «Փաստաթղթեր բռնագաղթի մասին», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 3:1990, էջ 68. նաեւ՝ *Երեկոյեան Երեւան*, 20 Յունիս 1988:

⁴ Ա. Մանուկեան, *Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ.* «Առերեսում»-Անի հրատ., Երեւան, 1999, էջ 232:

հանգ չէր տրուել տեղեկանքներ կազմելու մասին, ստացել էին միայն բանաւոր ցուցումներ⁵: Ըստ պատմաբան Արմենակ Մանուկեանի, նման փաստաթղթեր 1998ի դրութեամբ չեն գտնուել նաեւ ՀՀ Ազգային անվտանգութեան նախարարութեան եւ ներքին գործերի նախարարութեան (ԱԱՆ, ՆԳՆ) արխիւներում: Պարզ է դառնում, որ դեռեւս «1937թ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանամերձ շրջաններից Ղրղզստան եւ Ղազախստան են արքորուել քրդեր եւ հայեր, իսկ 1939թ Ադրբեջանից քրդեր, հայեր եւ յոյներ են արքորուել Ղազախստան»⁶: Հետաքրքիր տուեալներ է հաղորդում Պաւլ Դոլեանը՝ ԽՍՀՄում իրականացուած ժողովուրդների արքորների մասին: Նա նշում է. «Ղրիմից բուլղարների եւ յոյների հետ մէկտեղ հայեր են արքորուել 1944թ Ուզբեկստան, 92000 մարդ՝ թուրք, մեսխէթցի, քուրդ եւ համշէնցի հայեր արքորուել են Վրաստանից՝ Ուզբեկստան, Ղազախստան եւ Ղրղզստան»⁷:

Ղրիմից արքորուածների խնդիրը որոշ չափով լուսաբանում է 1949ի Մայիսի 29ի Ստալինի ստորագրութեամբ ԽՍՀՄ նախարարների խորհրդի «N 2214-856 յուժ գաղտնի որոշումը՝ «Վրացական, Հայկական եւ Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական հանրապետութիւններից, ինչպէս նաեւ Սեւ ծովի առափնեայ տարածքներից արտաքստողների տեղափոխութեան, վերաբնակեցման եւ աշխատանքի տեղաւորման ապահովման մասին»⁸: Մանուկեանի վկայութեամբ, այդ փաստաթղթից յայտնի է դառնում, որ պետական անվտանգութեան մարմինների կողմից անց էր կացում վերոյիշեալ տարածքներում բնակուող «...դաշնակցականների, թուրքական քաղաքացիների, քաղաքացիութիւն չունեցող թուրքերի եւ խորհրդային քաղաքացիութիւն ընդունած նախկին թուրքական քաղաքացիների, յունահայատականների» արտաքսումը: Ընդ որում, ինչպէս ընդգծում է Մանուկեանը, որպէս «տարաբնակեցման վայր «դաշնակցականների» համար նախատեսուում է Ալթայի երկրամասը, թուրքերի համար՝ Տոմսկի մարզը, իսկ յոյների՝ Ղազախստան ԽՍՀ հարաւորապէս ստանան եւ Ջամբուլի երկրա-

⁵ Российский гос. архив социально-политической истории (РГАСПИ) (Ռուսաստանի ընկերա-քաղաքական պատմութեան պետական արխիւ (ՌՍԲՊԴԱ) ֆ.17,գ.162,գ.40), էջ 140-41:

⁶ В.Н. Земсков, *Спецпоселенцы в СССР. 1930-1960* (Վ. Ն. Չեմսկով, Բռնաքսորի ենթարկուածները ԽՍՀՄում. 1930-1960), Մոսկուա, 2003, էջ 82 (<https://www.pereplet.ru/history/Author/Russ/Z/Zemskov>):

⁷ П. Полян, *Не по своей воле...история и география принудительных миграций в СССР*, (Ոչ կամովի... հարկադիր միգրացիայի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը ԽՍՀՄում), Մոսկուա, 2001, էջ 247:

⁸ Այս փաստաթուղթը Մոսկուայից բերել եւ տրամադրել է Վիրաբեանը: ՀԱԱ. ֆ. 1, ց. 39, գ.65, թ.35, «Դէպի Սիրիո» hayrenadardz.org/hy/page/aksor Հայրենադարձութեան թանգարան:

մասերը»⁹: Հետաքրքիր եզրայանգման է եկել Ալթայի երկրամաս արքունիության ցուցակների հետազոտող Նատալիա Աբլաժեյը. ըստ նրա անփոփոխ է մնացել միայն «դաշնակ» արտայայտչաձևեր՝ դաշնակներ՝ 3620 ընտանիք, միաները էթնիկացել են դառնալով՝ «յոյն», «թուրք»¹⁰:

Բ. աշխարհամարտում տարած յաղթանակը ոգեւորել էր սփիւռքահայութեանը, բարձրացել էր ԽՍՀՄի եւ Խորհրդային Հայաստանի հեղինակութիւնը: Հայաստանի ղեկավարութեան դիրքորոշումը հետեւեալն էր. բարձրացնել Թուրքիայի բռնազաւթուած հայկական տարածքների (Կարսի մարզ, Սուրմալուի գաւառ) Խորհրդային Հայաստանին վերադարձնելու¹¹ եւ սփիւռքահայերի հայրենադարձութեան խնդիրները¹²: Դա իրականացնելու համար մշակուեց յատուկ ծրագիր¹³, որտեղ կարեւորում է նաեւ կաթողիկոս Գէորգ Չէօրեքչեանի նամակը՝ Ստալինին՝ 1945 Յունիսի 26ին¹⁴, որում իր դերն ունէր նաեւ Սփիւռքը¹⁵: Հասկանալի է, որ առանց միութենական կառավարութեան որոշման, Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ոչինչ չէր կարող ձեռնարկել: Հիմք ընդունելով նաեւ արտասահմանից ստացուող հազարաւոր դիմումները, նամակները (տե՛ս՝ Քոչինեանին գրութիւնը ստորեւ), հաշուի առնելով տիրող իրավիճակը ՀԿ/ԲԿ կենտկոմի Ա. քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը այս հիմնախնդիրը ներկայացրել է կենտրոնական իշխանութիւններին: «1946-1948թթ ներգաղթած հայերի քանակը կազմում էր մօտ 90000»¹⁶: Սակայն 1948 Սեպտեմբերին դադարեցուեց ներգաղթը, Ստալինը հրաժարուեց իր մտադրութիւնից. «...*խորհրդային կառավարութիւնը յայտարարում է, որ Խորհրդային միութիւնը ոչ մի տարածքային պահանջ չունի Թուրքիայից*»¹⁷: Կարծում ենք Ստալինի վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ սառը պատերազմը եւ ԱՄՆի հովանաւորութիւնը՝ Թուրքիայի հանդէպ:

Չնայած Հայաստանը պատերազմից յետոյ գտնուել է ծանր վիճակում, սակայն արուել է ամէն ինչ՝ հայրենադարձներին օգնելու, բարուօք պայ-

⁹ Մանուկեան, էջ 230:

¹⁰ Н. Аблажей, “Депортация армян в Алтайский край в 1949г.,” (1949ի հայերի արքունի Ալթայի երկրամաս), *Гуманитарные науки в Сибири* (Միբրիի հումանիտար գիտութիւններ) 1(93):2011, էջ 47-48, (www.lragir.am/2014/10/20/105544/):

¹¹ Ա. Վիրաբեան, «Հայաստանի հասարակական քաղաքական կեանքը յետպատերազմական ժամանակաշրջանում (1945-1957թթ) ատենախօսութիւն, Երեւան, 2001, էջ 68-69 (ՀԱԱ կուսարխիւ, Ֆ.1,գ.28, գ. 135, էջ 11-14):

¹² *Հայոց պատմութիւն, հլր. 4, գիրք 2*, Չանգակ հրատ., Երեւան, 2016, էջ 98:

¹³ ՀԱԱ, Ֆ.1 գ. 26,գ. 44, թթ 176, գ. 45, թթ 407-410:

¹⁴ Գաբրիէլ Լազեան, *Հայաստանը եւ հայ դպրոցը հայ եւ ռուս յարաբերութիւններու լրջին տակ*, Ադանա հրատ., Երեւան, 1991, էջ 349-53:

¹⁵ ՀԱԱ, Ֆ. 1, գ. 25, գ. 49, թ. 34:

¹⁶ *Հայոց պատմութիւն, հլր.4, գիրք 2*, «Չանգակ» հրատ., Երեւան, 2016, էջ 98:

¹⁷ ՀԱԱ, Ֆ.1, գ. 28, գ. 74, թ. 113:

մաններ ստեղծելու համար: Բնականաբար թոյլ են տրուել նաեւ սխալներ, բացթողումներ, որն էլ ազդել է ներգաղթողների թոփ կրճատման վրայ: ՀԿԿ կենտկոմի ատենի ղեկավարութեան «մեծագոյն սխալներից մէկը» համարուեց թոյլ պայքարը բուրժուական գաղափարախօսութեան, մասնատրապէս բուրժուական ազգայնականութեան դէմ, քննադատուեց նաեւ «արեւմուտքի առջեւ խոնարհուելու» գործելակերպը: Այդ մասին մանրամասներ է հաղորդում ձեռագիր փաստաթուղթը¹⁸, որը ՀԿԿ Ա. քարտուղարը յիշողութիւնների տեսքով յանձնել է թղթին մահուանից միքանի ամիս առաջ՝ 6 Փետրուար 1989ին, իր իսկ ստորագրութեամբ, հայերէնով: Ձեռագիրը կը ներկայացնենք հատուածաբար.-

...թում էր մեր կուսակցութիւնն ու նրա ղեկավարները պէտք է ըստ արժանույն գնահատեն սովետական հիանալի ժողովրդի սխրանքը, ինտերնացիոնալիստական միասնութիւնն ու համախմբուածութիւնը, ինչը դարձաւ յաղթանակի անսասան պատուարը: Սակայն նոր էին լուել հրանօթների համազարկերը, երբ երկրի ղեկավարները, առաջին հերթին Ստալինն ու Բերիան արդէն սկսել էին ազգերից ընտրել այսպէս կոչուած անվստահելի անձանց՝ նրանց հետ հաշուեյարդար տեսնելու համար.: Պատերազմից անմիջապէս յետոյ հարց է դրուել կազմակերպել սփիւռքահայերի հայրենադարձութիւնը: Հայ բնակչութիւնը զանգուածաբար ցուցակագրում էր հայրենիք վերադառնալու համար: Յանկութիւն էին յայտնել ւելի քան 800 հազ[ար] մարդ տարբեր երկրներից, Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Յունաստանից, Ամերիկայից ու Ֆրանսիայից... Այն ժամանակուայ ղեկավարութիւնը Գրիգոր Յարութիւնովի գլխատրութեամբ աներեակայելի ռիսկի դիմեցին՝ խնդրելով թոյլ տալ հայրենադարձութիւնը¹⁹:

ՀԿԿ առաջին քարտուղար Յարութիւնովը քաջ գիտակցել է, որ պատերազմում զոհերի թիւը բացասաբար կ'անդրադառնայ բնակչութեան վերարտադրութեան աճի վրայ եւ պէտք է այս առիթը օգտագործել հայ եղբայրներին ու քոյրերին հայրենիք վերադարձնելուն:

...Այստեղ կայ նաեւ մի ուրիշ հանգամանք, դա այն է, որ Սովետական երկրում, արտասահմանում գտնուած հայերին համարում են էմիգրանտներ, ոչ իրենց երկրից բռնի ուժով տեղահանուածներ, հայրենադարձութիւնը պատասխանում էր նաեւ այս հարցին: 1946թ սկսուեց հայրենադարձութիւնը, գրեթէ աշխարհի բոլոր երկրներից: Անասելի ծանր պայմաններում էր ընթանում եղբայրների ընդունելութեան գործը, գիտէրում պատրաստած բնակարաններից հրաժարում էին, բոլորը ցանկանում էին տեղատրուել Երեւանում, որոշ չափով Լենինականում ու Կիրովականում, իսկ այս քաղաքներում գրեթէ ոչ մի հնարատրութիւն չկար: Այնուամենայնիւ հայրենիքը դժուար պայմաններում ընդունեց շուրջ 100 հազ[ար] հայ: ՀԿԿ կենտկոմի քարտուղար Գ. Յարութիւնովը դիմեց ՍՄԿԿ քաղքիւրոյին՝ հայրենադարձութեան առիթով Հայաստանին վերադարձնել Լեռնային Ղարաբաղը, որտեղ հնարատր կը լինէր բնակեցնել մեծ թուով հայերի: Երբ այդ մասին զեկուցում են Ստալինին, նա կարգադրում է հարցնել

¹⁸ Տե՛ս՝ ՀՊԹ, նգպֆ մմ18816, ք/մ 3451:

¹⁹ ՀՊԹ, նգպֆ մմ 18816, ք/մ 3451, էջ 4:

Ադրբեջանի կենտրոնի քարտուղար Բադիրովի կարծիքը: Վերջինս նամակով պատասխանում է, որ ինքը համաձայն կը լինէր, եթէ Ղարաբաղի փոխարէն Հայաստանը Ադրբեջանին տար Բասարգեչարի, Կրասնոսելսկի, Վեդիի եւ Չանգիբասարի շրջանները: Բնական է, որ Հայաստանի ղեկավարութիւնը չէր կարող համաձայնուել Բադիրովի ասանտիդիստական նկրտումների հետ: Հայաստանի ղեկավարութիւնն առաջարկեց՝ թողատրել Հայաստանի ադրբեջանցիներին տեղափոխուել Ադրբեջան, իսկ նրանց բնակավայրերում տեղաւորել հայրենադարձներին: Հարկ է նշել, որ այդ ժամանակ Մուղանի դաշտի հսկայական տարածութիւնները դարձրել էին ոռոգելի, իսկ Ադրբեջանական հանրապետութիւնը աշխատուժի խիստ կարիք էր զգում, ստիպուած էր հաշտուել...²⁰:

Երկու հանրապետութիւնների ղեկավարները սկզբունքորէն համաձայնութեան են գալիս: «Գ. Յարութիւնեանը տրալիս է իր համաձայնութիւնը, եւ 1947թ Դեկտեմբերի 3ին երկու քարտուղարների սպորագրութեամբ նամակ է յանձնում Սփալինին...»²¹, որի հիման վրայ Սովետական Միութեան կառավարութիւնը թողատրում է Հայաստանից ադրբեջանցիներին տեղափոխուել Ադրբեջան: Մեծ աշխատանք է տարուել հնարաւորինս արագացնելու տեղափոխումը, որպէսզի դատարկուող գիւղերը նախապատրաստէին հայրենադարձների բնակութեան համար: «Այդ ժամանակ ես աշխատում էի ՀԿԿ կենտրոնի երրորդ քարտուղար, որոշ չափով գիտէի ադրբեջաներէն, այդ պատճառով յաճախ էի մեկնում ադրբեջանական գիւղեր՝ տեղափոխումը կազմակերպելու նպատակով: Շատ յաճախ գալիս էին Ադրբեջանի ղեկավարները, 2 անգամ Հայաստան եկաւ Բադիրովը եւ ելոյթ ունեցաւ Չանգիբասարի շրջանի ադրբեջանցիների առջեւ»²²: Նրա հանդիպումից յետոյ տեղափոխումը շատ արագացաւ: Նշենք նաեւ, որ այդ առիթով մի տարուց ատելի Հայաստանում էր գտնուում Ադրբեջանի մինիստրների խորհրդի նախագահի տեղակալը՝ մի խումբ աշխատակիցների հետ: Ադրբեջանցիները տեղափոխում էին կոլխոզներով ու սովխոզներով, իրենց հետ տանելով ամբողջ ունեցուածքը: Նոյնիսկ քանդում էին տները, տեղափոխում շինանիւթը, չնայած տների համար պետութիւնն արդէն վճարել էր: Ըստ Քոչինեանի՝ «...Այդ տարիներին Հայաստանից Ադրբեջան տեղափոխուեցին մօտ 40,000 մարդ, իրենց հետ տանելով մօտ 800,000 ոչխար ու այծ, 300,000 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն»²³: Յետագայում, երբ Յարութիւնովին փոխարինել է Սուրէն Թովմասեանը, նախկին ղեկավարութեանը մեղադրել են ազգայնականութեան, ազգային քաղաքականութեան լեւիներեան սկզբունքների խախտման մէջ, կոչ է արուել ադրբեջանցիներին վերադառնալ Հայաստան, վերահաստատուել իրենց բնակավայրերում: Ադրբեջանցիները գրեթէ բոլորը վերադարձել են, այս անգամ

²⁰ ՀՊԹ, նգաֆ մմ 18816, ք/մ 3451 էջ 5:

²¹ Հայոց պատմութիւն, հր 4, գիրք 2, էջ 101:

²² ՀՊԹ, նգաֆ մմ 18816, ք/մ 3451, էջ 6:

²³ Նոյն, էջ 7:

առանց ունեցուածքի՝ հանրապետութեան համար մեծ դժուարութիւն ստեղծելով: Նախկին բնակավայրերի մեծ մասը զբաղեցուած էր, միւսները վերածուել էին աներակներ: Վերաբնակները յամառօրէն պահանջում էին վարկ, անասուն եւ անասնազոմեր, դպրոցներ եւ այլ մշակութային օջախներ: Այդուհանդերձ արուել էր ամէն ինչ, պայմաններ ստեղծելու հայրենադարձների համար, սակայն ստացուել է հակառակը: Թողնելով տուն ու տեղ, անհամեմատ բարեկեցիկ կեանք, մարդիկ գալիս էին հայրենիք՝ նուիրաւծութիւն դրսեւորելով խորհրդային կարգերի հանդէպ:

Սակայն ինչ կարելի էր սպասել ստալինեան բռնապետութեան ահեղ ժամանակաշրջանից: Դահճապետ Լ. Բերիան հայ լեզունների փաստն օգտագործելով, պատերազմի ամառից անմիջապէս յետոյ կարգադրեց պետանվտանգութեան մինիստրութեանը լայնօրէն ստուգել հանրապետութեան բնակչութեանը, յայտնաբերել անվտանգութեան անձանց՝ քստորելու նպատակով...: Այդ ժամանակ պետանվտանգութեան մինիստրը Ն. Կրիմեանն²⁴ (Քրիմեան) էր, ով այդ սեւ գործի հիմքը դրեց, «ստուգման» ենթարկուեցին տասնեակ հազարաւոր մարդիկ: Հարկ է նշեմ, որ Կրիմեանն իր հակաժողովրդական, իրօք դաժան գործերի համար յետագայում դատապարտուեց գնդակահարութեան: Աքսորման եւ առհասարակ «քննութեան գործի» մեծ մասը կատարուեց Սերգէյ Կորխմազեանի²⁵ օրօք, ով իր կատարած յանցագործութիւնների համար բանտարկուեց: Յաւալին այն է, որ ստուգողների մեծ մասը այլազգից էին եւ Արեւմտեան Հայաստանում ծնուած բոլոր մարդկանց համարում էին արտասահմանում ծնուած եւ շատ անելի խիստ էին մօտենում, քան միւսներին: Այդ տեսակէտից ահաւոր էր Լենինականում, որի բնակչութեան մեծամասնութիւնը Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերից էին, յատկապէս դարսեցիները, նրանց նկատմամբ անելի խիստ էին վարում: Դաժանաբար էին վարում այն ընտանիքների հետ, որոնցից մէկն ու մէկը բանտարկուել էր երեսնական թուականներին: Յիշում եմ Յունիսի 11ի Կիրակի օրը կենտկոմից մեքենան ուղարկեցին իմ հետեւից՝ շտապ ներկայանալու կարգադրութեամբ (նոյնիսկ դեռ չէի սափրուել): Վարորդի հետ եկած կենտկոմի աշխատողը ասաց, որ խորհրդակցութիւն է սկսում, պէտք է շտապել: Այդ ժամանակ ես աշխատում էի կենտկոմի կադրերի գծով քարտուղար: Արագ հագնուեցի եւ ներկայացայ կենտկոմի բիւրոյի նիստերի դահլիճ, որտեղ հաւաքուած էին չեկիստի համազգեստով անձանօթ մարդիկ եւ հանրապետութեան ակտիւր՝ քաղկոմ շրջկոմների առաջին քարտուղարների մասնակցութեամբ: Խորհրդակցութիւնն անցաւ յուժ գաղտնի²⁶:

Խորհրդակցութիւնում ելոյթ է ունեցել նաեւ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յարութիւնովը, ով նշել է «մաքրման» միջոցառման այսպէս կոչուած քաղաքական եւ պետական նշանակութեան մասին: Այս «մաքրման» միջոցառմանը գումարուել են «1937ի քստորից նոր-նոր հայրենիք վե-

²⁴ Նիկիտա Արկադիի Քրիմեան (1913–55), պետանվտանգութեան ժողկոմ, նախարար (1945–47), գնդապետ:

²⁵ Սերգէյ Արկադիի Կորխմազեան (1912–74), պետանվտանգութեան նախարար (1947–52), գնդապետ:

²⁶ ՀՊԹ, նգպֆ, մմ18816,բ/մ3451, էջ 9:

րադարձածները, գերմանական լեգեոններում ծառայած նախկին զինուորականները, ռազմագերիները, սովետական իրականությունից դժգոհ հայրենադարձները»²⁷: Խորհրդակցության ժամանակ ելոյթ է ունեցել նաև ՀՍՍՀ պետանվտանգության նախարար Կորխմազեանը, ով «...մանրամասն բացատրեց, որ արդեն հանրապետություն է ժամանել յաբուկ զորամասերի ստորաբաժանումներ, որոնք մէկ գիշերուայ ընթացքում կուսակցության ակտիվի օժանդակությամբ պէտք է աւարտեն իրենց աշխատանքները: Նախօրօք պատրաստուած էին ցուցակները, թէ ակտիվից ով որ շրջանը, քաղաքը պէտք է մեկնի»²⁸: ՀԿ/Բ/Կ Կրասնոսելսկի շրջանի քարտուղար Ս. Մարտիրոսեանը գրել է. «Ամէնուրեք կազմուել է համապատասխան ակտեր եւ արտաքսման ենթակայ անձնատրոսությունների կողմից տրուել է լիազօրագիր իրենց բարեկամների շարժական եւ անշարժ գոյքի վերաբերեալ»²⁹:

Բռնադատուածների վերաբերեալ կարճուած գործերը³⁰ գտնուում են Հայաստանի ազգային արխիւի \$.1191ում, որը հաստատուել է ՀԱԱի 01. 08. 05թ. թիւ 4 նիստի արձանագրութեամբ: Ֆոնդի 6րդ ցուցակում կան 2998 գործ՝ բոլորի անուն-ազգանուն-հայրանուններով, վերջինը՝ Յովհաննիսեան Խանահ Կարապետի: Քոչինեանը յիշուում է. «Ինձ ամբացրել էին Լենինականին: Խորհրդակցությունը վերջանալուց յետոյ խնդրեցի տուն գնալ հազնուել համապատասխան, քանի որ եկել էի անպատրաստ: Կորականապէս արգելեցին: Մեկնեցինք անմիջապէս 2 զինուորական ջոկատների ղեկավարների հետ, ովքեր կցուած էին Լենինականին: Ամէն ինչ կատարուում էր խիստ գաղտնի, մեկնեցինք Յունիսի 12ին, Լենինականում քաղկոմի քարտուղարն էր Արմօ Հարենցը»³¹: Այդ օրը իրաւիրել են կուսակցութեան գործուն անդամների խորհրդակցութիւն, որտեղ հաղորդուում է տրուել պետանվտանգութեան նախարարութեան ներկայացուցչի կողմից: Բացի բոլոր փաստերից, անելացուել է, որ աշխարհում սկսուած սառը պատերազմը պակաս կարեւոր չի նման «անվստահելի» տարրերից ազատուելու համար: Ըստ Վիրաբեանի՝ «Արտաքսման պաշտօնական պատճառը, իբր «սառը պատերազմն» էր: Հնարաւոր հակամարտութեան դէպքում վախ կար, որ վերոյիշեալ մարդիկ կարող էին ծառայել թշնամուն: Իսկ իսկական պատճառ՝ Մեր խորին համոզմամբ դա ստալինեան դաժան քաղաքականութեան մի նոր դրսետրուում էր»³²: Յունիսի 14ի առաւօտեան Հարենցի հետ Քոչինեանը որոշել է տեսնել աքսորավայր ուղարկուողներին:

²⁷ Armtimes.com/hy/article/23984, 5.04.2021 :

²⁸ ՀՊԹ, նգպֆ, մմ18816,բ/մ3451, էջ 9:

²⁹ ՄԼԻ, ՀՄԿԱ (այսօր՝ ՀԱԱ) \$. 1, ց. 29, գ. . 125, թ. 3, քնագիր:

³⁰ Բռնադատուածների վերաբերեալ կարճուած գործեր, \$.1191, ց. 6:

³¹ ՀՊԹ, նգպֆ, նոյն, էջ 9:

³² Ա. Վիրաբեան, « 1949ի ցուրտ ամառը», Երեկոյեան Երեան, 20 Յունիսի 1988:

Ջինտորական պահակը չթողատրեց մօտենալ ապրանքատար վագոնների շուրջը հաւաքուած բազմութեանը: Ի վերջոյ հրամանատարի թոյլտուութեամբ մօտեցանք այդ կատարեալ մղձաւանջին: Ամէնուր լաց ու կոծ, երեխաների ճիչ, զարմանք ու զայրոյթ, թէ ինչու են իրենց աքսորում...մի խօսքով՝ աննկարագրելի տեսարան: Երբ անցնում էինք վագոնների մօտով, մէկը բարձրաձայն տուեց իմ ազգանունը: Ետ նայեցի մի դեռահաս աղջիկ փորձում էր մօտենալ ինձ, զինուորականն արգելում էր: Մօտեցայ եւ հարցրեցի ինչ է պատահել: Աղջիկը յուզուած ասաց, որ իր եղբայրը՝ Մանասն է, որ ինքն ինձ տեսել է իրենց տանը դեռեւս կոմերիտական աշխատանքում եղած ժամանակ: Մանասին լաւ էի յիշում, պարզուեց նրանց ընտանիքը աքսորում էին, իսկ Մանասը 1 տարի առաջ զոհուել էր ատովթարից³³:

Աղջիկը յուզուած պատմել է, որ հայրը չի թողել որեւէ իր վերցնեն, ուրովիտեւ վստահ էր, որ թիւրիմացութիւն է եղել: Ինչպէ՞ս կարող են անմեղ մարդուն աքսորեն: Այդ օրը Քոչինեանին դիմել են շատ-շատերը, սակայն ոչնչով չի կարողացել օգնել: Այնուամենայնիւ 3 ընտանիքների ազգանուններն ու տուեալները վերցրել է: Կուսակցութեան Լենինականի քաղկոմում պետանվտանգութեան ներկայացուցիչն ու Լենինականի բաժանմունքի պետը՝ Մ. Կարապետեանը կտրականապէս մերժել են այդ 3 ընտանիքներին ազատելու խնդրանքը: «Ստիպուած հեռախօսով դիմեցի կենտրոնի Ա. քարտուղար Գ. Յարութիւնովին: Նա շարժապարտացաւ, թէ ինչու եմ գնացել կայարան եւ խօսել աքսորականների հետ: Ապա ասաց, որ ինքը ոչինչ անել չի կարող, «դու ես ամբացուած Լենինականին, ինքդ էլ հարցերը լուծիր՝ քաղաքի ղեկավարների հետ խորհրդակցելով»: Նորից ստուգել են տուել այդ 3 ընտանիքի տուեալները: Նախկին քարտուղարը խոստովանում է, որ ցաւօք արդէն մոռացել է ազգանունները: Իսկ ստուգումները պարզել են, որ նրանք միանգամայն անմեղ, աշխատատու մարդիկ են եղել: «Իմ (Քոչինեանի - Մ. Գ.) պատասխանատուութեամբ կարգադրուեց երեքին էլ վերադարձնել իրենց տները»³⁴: Մարդիկ աքսորում էին, գնացքի բեռնատար վագոններում մօտ երկու շաբաթ ճանապարհ անցնում, տեղատուում Ալթայի երկրամասի անտառային տնտեսութիւններում եւ սովխոզներում՝ չիմանալով ոչ իրենց մեղքը, ոչ էլ աքսորի պատճառը: Զանգուածային տեղահանութիւնն օրինականացուել է աւելի ուշ՝ 1949 Նոյեմբեր-1950 Յունիս ամիսներին: Աքսորուած ընտանիքի աւագի (կամ ընտանիքի այն անդամի ով աքսորի պատճառն էր) անունով ԽՍՀՄ ՊԱՆ առընթեր յատուկ խորհրդակցութիւնը կազմում էր հիմք համարուող փաստաթղթեր: «...Բոլոր աքսորեալների մեղադրանքները գրեթէ նոյնութեամբ կրկնում էին: Դա կամ նախկինում դաշնակցութեան կուսակցութեան անդամ լինելն էր, կամ «Հայկական լեզգիներ» ծառայելը»³⁵: Հետաքրքիր մի դրուագ էր եղել, որը

³³ ՀՊԹ, նգաֆ, մմ18816, ք/մ 3451, էջ 11:

³⁴ Նոյն:

³⁵ Մանուկեան, էջ 233:

զարմացրել է Քոչինեանին. երբ ստուգողները զեկուցել են, որ նրանք լիովին անմեղ են, բաժանմունքի պետը՝ Կարապետեանը զայրացած ասել է. «Երեւում է՝ լաւ չեն ստուգել, չէ՞ որ նրանք ծնուել են արտասահմանում: Պարզուեց, որ ընդհանրի տարեց անդամներից մէկը՝ ծնունդով սարիղամիշցի է, միւս երկուսը՝ ղարսեցիներ են: Միայն այդ պահին իմացայ, որ Արեւմտեան Հայաստանում ծնուածների նկատմամբ առանձնակի խիստ վերաբերմունք է դրսեւորուել: Իմ ինքնագլուխ որոշումը էժան չնստեց: Ղեկավարութիւնը լրջօրէն կշտամբեց իմ արարքը, որակելով օպորտունիստական»³⁶: Յետագայում պարզուել է՝ նախարարութեան աշխատակիցները դաժանաբար են վարուել այն ընտանիքների հետ, ում անդամներից մէկն ու մէկը բանտարկուել էր 1930-40ականներին: Ահա այսպիսի գաղափարական ու գործնական սկզբունքներով էին ղեկավարում պետանվտանգութեան նախարարութեան այն ժամանակուայ հայ աշխատակիցները, ստալինեան վարչադրոյթի դաժան պայմաններում օրինականացնելով իրենց գործողութիւնները:

Միայն Հայաստանում չէր, որ կատարուեց մաքրման «օպերացիա». բազմաթիւ անվստահելի հայեր յայտնաբերուեցին Ադրբեջանում, մասամբ էլ Վրաստանում: Երեք հանրապետութիւններից աքսոր ուղարկուեցին միքանի տասնեակ հազար անմեղ մարդիկ, ներառեալ կանայք, երեխաներ, ծերեր, տղամարդիկ: Ադրբեջանի ատենի կուսակցութեան կենտկոմի առաջին քարտուղար Բադիրովը, ով հանդիսանում էր Բերիայի աջ ձեռքը, անգամ առանց ստուգումների աքսորավայր ուղարկեց բոլոր նրանց, ում չէր սիրում, կամ «իւրային» չլինելով՝ զբաղեցնում էին կարետր պաշտօններ: Այդ քայլով բացում էր աշխատատեղեր՝ իր մարդկանց տեղատրելու համար:

Ձարմանալի մի դէպք էր եղել Լենինականում, որտեղ աշխատում էր Միշա Կարապետեանը: Նա պատմում էր, թէ ինչպիսի մեծ սխրագործութիւն է կատարել Լենինականում «թշնամիներին» յայտնաբերելու ժամանակ. պատկերացրէք Լենինականի այս մարդիկ չեն թաքցնում, իրենք ծնուել են արտասահմանում՝ Ղարսում, Վանում, Սարիղամիշում եւ այլն: Երբ զրուցակիցը առարկում է, թէ դա մեր հայրենիքն է, ինչպէս թէ նրանք ծնուել են արտասահմանում, Կարապետեանը պատասխանում է, թէ ես հնարատրութիւն ունենայի գիտես քեզ էլ կը կցէի այս ցուցակի մէջ: Այդ (զրուցակիցը – Ս.Գ.) նուաստս՝ ես էի, ահա այսպիսի գաղափարական եւ պրակտիկ սկզբունքներով էին ղեկավարում պետական անվտանգութեան կոմիտէի այն ժամանակուայ աշխատողները, դրանք աշխատողներ չէին, դրանք հայ անուըր կրող ներքին դաւաճաններ էին, որոնք ստալինեան ռեժիմի տարիներին սրբապիղծ գործողութիւններ էին կատարում:


Յիսնական թուականների սկզբներին հայրենադարձ հայերից գտնուեցին մարդիկ, որոնք չդիմանալով ստեղծուած ծանր պայմաններին, խախտելով պետական սահմանը, անցան արտասահման, վերադարձան իրենց նախկին բնակավայրերը: Այս փաստը շատ մեծ աղմուկ էր հանել հանրապետութեան աշխա-

³⁶ ՀՊԹ, նգաֆ, մմ 18816, ք/մ 3451, էջ 11բ:

տատրոյութեան շրջանում. նրանք դատապարտում, անարգանքի սինին էին գամում փախստականներին: Պարզ է, որ այս երեւոյթի հանդէպ իրենց խօսքը պէտք է ասէին մեր կուսակցութեան ղեկավար մարմինները:

1953ի սկզբներին ՍՄԿԿ կենտկոմի քաղքիւրօն քննութեան առաւ սահմանախախտման դէպքերը: Հրաւիրել էին կուսակցութեան կենտկոմի քարտուղար Գրիգոր Յարութիւնովին եւ ինձ (այդ ժամանակ մինիստրների խորհրդի նախագահն էի): Քաղքիւրոյի նիստը ղեկավարում էր Բերիան, իսկ Ստալինը կողքի սեղանի մօտ կանգնած՝ զբաղուած էր իր ծխամորճով:

Բերիան կարդաց որոշման նախագիծը, որտեղ նախատեսում էր խիստ նկատողութիւն յայտարարել Յարութիւնովին եւ ինձ՝ համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար: Նախագիծը կարդալուց յետոյ միքանի թուպ տիրեց քար լոտօին, քաղքիւրոյի անդամներից ոչ ոք ձայն չհանեց: Բոլորը սպասում էին Ստալինի խօսքին: Յանկարծ նա մօտեցաւ Բերիային, ապա Յարութիւնովին եւ հարցրեց (Յարութիւնովին), որքա՞ն մարդ էք ընդունել: Յարութիւնովը պատասխանեց. «Շուրջ 100,000 ընկեր Ստալին», Ստալինը նորից մօտեցաւ իր սեղանին, լցրեց տրուպկան ծխախոտով, վառեց ու մօտեցաւ Բերիային (սեւագրութեան մէջ նշել է Մոլոտովին – Ս.Գ.)՝ ասաց. «Եթէ դժոխքից 100,000 մարդ է տեղափոխուել դրախտ, կը գտնուեն այնպիսիք, ովքեր կը ցանկանան ապրել դժոխքում»: Ստալինի այս արտայայտութիւնից անմիջապէս յետոյ Բերիան առաջարկեց հարցը հանել քննարկումից, բաւարարուել առաջնորդի դիտողութիւններով: Մենք ազատուեցինք պատժից: Վերադառնալով Երեւան, ՀՀԿ կենտկոմը լուրջ միջոցառումներ մշակեց հայրենադարձների շրջանում քաղաքական-մասսայական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով³⁷:



Ս. Քոչինեան ստորագրութիւնը 6 Փետրուար 1989, Երեւան³⁸

1953ին, Ստալինի մահից յետոյ Հայաստանի ղեկավարութիւնը հարց է յարուցել 1949ին աքսորուածներին արդարացնելու մասին: «Մինչեւ 1955թ Օգոստոսի 15ը յանձնաժողովը վերանայում է 1015 գործ եւ որոշում ընդունում «Յարուկ վերաբնակեցումից» ազալել 3074 մարդու»³⁹: Արտաքստաւածների արդարացման գործերը անլի արագացուել են Բերիային գնդակահարելուց յետոյ: 1955ին սկսուել է նրանց վերադարձը հայրենիք: «1956թ. Փետրուարի 25ին ԽՍՀՄ XXրդ համագումարի օրերին, ՀԿ/ԲԿ կենտկոմի ղեկավարութիւնը խնդրանքով դիմեց ԽՍՀՄ կենտկոմ՝ քննար-

³⁷ ՀՊԹ, նգաֆ., մմ18816, ք/մ 3451, էջ 12:

³⁸ ՀՊԹ, նգաֆ., մմ18816, ք/մ 3451, էջ 14:

³⁹ «Հայաստանից՝ Ալթայ, 5/04/2011, armtimes.com/hy/article/23984 :

⁴⁰Կելու բոլոր բնագաղթածների արդարացնելու հարցը»: «Արդէն նրանցից շափ-շափերը չկային: Կլիմայական դաժան պայմաններին չդիմանալով նրանք բախտ չունեցան նորից փեսնելու իրենց արեւային հայրենիքը»:

Կարծում եմ այս ամէնի ականատեսը լինելով պէտք է բացառուէին այլեւ անարդարութիւնները եւ բնութեան ամենաթանկ դրամագլխի՝ մարդու իրաւունքների ոտնահարումը մնար անցեալում: Աւա՛ղ.....:

NEW DETAILS ON THE EXILE OF ARMENIANS FROM TRANSCAUCASIA IN 1949
(SUMMARY)

SEDA GALSTYAN
sedagalstyan@yahoo.com

'Արմենիա' փողոցի համեստ մէկ անկիւնը, մաշած սանդուխներով մուտքի մը ճակատին կը կարդանք «Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոց» փոքր ցուցատախտակ մը: Զգուշաւոր բայց հաստատակամ կը բարձրանանք սանդուխներէն, հասնելու համար այն յարկը՝ ուր փեթակի մը կեանքով երաժշտասէր նոր սերունդ մը կը սնանի ուսուցչական աշխուժ կազմով մը: ... Կը նային շուրջս, ծնողներ իրենց զաւակներով կը ժամանեն, պարման ու պատանի տղաք երաժշտական գործիքներով... ու պատերազմը կը մոռնանք պահ մը, կանգնած՝ խաղաղութեան սեմին պատուաբեր հաստատութեան մը, օգտաշատ իր կեանքով: Հարիւր վաթսունէ աւելի աշակերտներու ձայնական հնչեղ խաղերը կը պարուրեն մթնոլորտը: Կը հիանանք, կ'ոգեւորուինք, հրճուանքի մը ամբիոնէն կը դիտենք կեանքը, պատերազմը ... կը գօտեպնդուինք վտանգներուն դէմ՝ արուեստին նուրբ խաղերով մեր սերունդները կը սնանին դիմաւորելու ռումբերու ու զէնքերու պայթումները...: Բախտաւորութիւն է ունենալ հայկական երաժշտանոցի մը մթնոլորտը, թէկուզ քաղաքի լեցուն շէնքերու մէջէն այս կէս յարկաբաժինը վիճակուած ըլլայ մեզի: Շատ շէնքեր ունեցողներ չունեցան նման անկիւն մը, զոր ունեցան [մեր այս] հայ մանկտիքը...⁴:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ,
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՅԹՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոց կ'ընդունուին հայ թէ ոչ-հայ աշակերտներ անխտիր: Երաժշտանոցը կը բաղկանայ եօթը դասարաններէ՝ Նախապատրաստական Ա. եւ Բ. կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններ եւ հինգերորդ ասարտական դասարան: Աշակերտը ասարտական դասարանէն ետք, հրապարակային ձեռնարկի մը ընթացքին, դատական կազմի ներկայութեան, քննութիւն կու տայ պատրաստած ծրագիրով: Յաջողութեամբ ասարտող աշակերտը կը ստանայ պաշտօնական վկայական՝ «լա», «շատ լա», «բացառիկ լա» գնահատականներով:

Երաժշտանոցը սկիզբէն կ'որդեգրէ Լիբանանի Պետական երաժշտանոցի լրիւ ծրագիրը եւ կ'ունենայ Պետական երաժշտանոցին տնօրէնութեան քաջալերանքն ու գործակցութիւնը: Ուսումնաշրջանի վերամուտը Հոկտեմբեր ամսուն է: Ընդունման պայման չկայ. 6 տարիքը բոլորած աշակերտը կրնայ արձանագրուիլ: Ծրագիրը կ'ընդգրկէ պարտադիր *սոլֆեժի* եւ *թէորիի* դասերը: Որեւէ նուագարանի ծրագիր անպայման կ'ընդգրկէ *gamme, arpege, e'tude* եւ Bach, նաեւ՝ իր դասարանին համեմատ պատշաճ դժուարութեամբ *sonate* կամ այլ յօրինում մը: Այս ծրագիրը տարուէ տարի կը դժուարանայ՝ քանի աշակերտը դասարան կը բարձրանայ: Աշակերտը իւրաքանչիւր դասի համար ունի շաբաթական մէկ պահ, 45 վայրկեան տետողութեամբ: Սակայն բարձր դասարաններու աշակերտներուն դասապահերը աւելի երկար են, վաթսունէն եօթանասունհինգ վայրկեան:

⁴ Նոյն:

Երաժշտանոցին առաջին տարիներուն դասաւանդուած նուագարաններն են.- դաշնամուր, թաւջութակ, կիթար, ջութակ եւ սրինգ: Երաժշտանոցը սկիզբի տարիներուն ունեցած է աշակերտական երգչախումբ, զոր կազմած է երաժշտանոցին հիմնադիրը: Մինաս Թեքէլեանի մտադրութիւնը եղած է նաեւ դասաւանդել վիոլա, օպուա, քոր, թրոմպէթ, թրոմպոն, թիպա, թեմպանի եւ քոնթրապաս: Ան սկիզբի շրջանին անձամբ դասաւանդած է փողային գործիքները, սակայն իր առողջական վիճակին վատթարացումը, ապա մահը եւ ուսուցիչներու երկրէն մեկնումը պատերազմի տարիներուն, պատճառ կը դառնան որ այդ գործիքներու դասաւանդութիւնը դադրի: Մինաս Թեքէլեան, հայկական դիմագիծը պահպանելու մտադրութեամբ, կը ծրագրէ կազմել փոքրիկներով կազմուած **քանոնի** խումբ մը, Երեւանի մէջ գոյութիւն ունեցող քանոնահարներու խումբին օրինակով, եւ յատուկ պատուէրով Երեւանի մէջ պատրաստել տալ մասնաւոր չափի քանոններ փոքրերու համար: Սակայն այս մտադրութիւնը չ'իրականանար բազում դժուարութիւններու եւ պատերազմին պատճառով:

Երաժշտանոցին մէջ կանոնաւոր դասաւանդութիւնները կը շարունակուին հակառակ պատերազմին: Տարեկան տեղի կ'ունենան երկու քննութիւն՝ կիսամեայ եւ ամապերջի, Պետական երաժշտանոցէն հրաւիրուած դատական կազմի ներկայութեան: Ընդհանրապէս դատական կազմին մէջ կ'ըլլան հայագգի վարպետ երաժիշտներ՝ Ալիս Մանուկեան, Պօղոս Ճելալեան եւ Մատլէն Փեհլիւանեան-Մըտաուար (այսօր բոլորն ալ մահացած):

Ընդհանրապէս շրջանաւարտի մը ներկայացուցած հրապարակային քննութեան ծրագիրը կ'ընդգրկէ պարոք շրջանի Պախի ստեղծագործութիւններէն մին, դասական շրջանէն *սոնաթա* մը Մոցարթէն, Հայտընէն կամ Պեթովէնէն եւ յօրինում մը 19րդ կամ 20րդ դարու երաժիշտներու յօրինումներէն: Օրինակի համար շրջանաւարտի մը հրապարակային ելոյթի նուագացանկը եղած է Պախի՝ *Partita No. 1 (Allemande, Courante, Menuet I & II, Gigue)*, Մոցարթ՝ *Sonate No. 8, A min. KVV310, (first mov. Allegro Maestoso)*, Ճելալեան՝ *Sonate Breve (Allegro, Andante, Allegro)*:

Երաժշտանոցին հրապարակային աշակերտական առաջին ձեռնարկը տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Փետրուար 1975ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի Էսեմպլի հոլին մէջ: Աննախընթաց այս համերգին աննախընթաց կ'ըլլայ նաեւ ներկայութիւնը ունկնդիրներուն, որոնց համար սրահին 750 աթոռները քիչ կու գան: Յայտագիրը կը սկսի սկսնակ աշակերտներու նուագներով եւ կը շարունակուի հետզհետէ աւելի բարձր դասարաններու աշակերտներու աւելի դժուար եղանակներու նուագներով: Այսպէս, 16 հայ աշակերտներ ելոյթ կ'ունենան, մեծամասնութիւնը՝ դաշնամուր, իսկ երեքը՝ ջութակ: Նուագուած եղանակներու հեղինակներն են՝ Բաչատուրեան, Կոմիտաս, Պօղոս Ճելալեան, Մոցարթ, Յարութիւնեան, Շոփէն, Պախ, Պեթովէն, Ռախմանինոֆ, Սայց, Վան Տը Վելտ, Տիպպելի եւ Քիլո: Ելոյթ ունեցող աշակերտներուն ուսուցիչներն են Սալբի Իշխանեան, Սօնա Ճապաղջուր-

եան-Խոշաֆեան, Կիրեղ Մանկրեան, Թաթիանա Մարտիկեան, Նորա Ռումեան: Զուգակահարներուն դաշնակի վրայ կ'ընկերակցին դաշնակի ուսման մէջ յառաջացած աշակերտներ: *Օ քլէր փրլլա լիւն* մանկական եղանակով սկսած յայտագիրը իր աւարտին կը հասնի Պախի դաշնամուրի *Ռէ մինէօր քոնչերթոյով*:

Մէկ ամիս անց, 25 Մարտ 1975ին, դարձեալ նոյն սրահին մէջ, այս անգամ Թեքէլեան երաժշտանոցի ուսուցիչներ՝ Իշխանեան, Խոշաֆեան, Մարտիկեան, Ռումեան եւ Ֆայէզ Օլապի, կու տան բարձրորակ համերգ մը: Յայտագիրին առաջին կատարողն է դաշնակահարուհի Մարտիկեան, որ կը մեկնաբանէ Տեպիսիէն երեք *փրեյլիտ*⁵՝ *Le vent dans la plaine, Ce qu'a vu le vent d'Ouest, Feux d'artifices*: Ապա բեմ կը բարձրանայ Օլապի եւ Ռումեանի ընկերակցութեամբ կը նուագէ Պախի *Adagio in C Major* եւ Յարութիւնեանի *Էմփրոմթին*: Յաջորդը կ'ըլլայ Իշխանեանը, որ կը մեկնաբանէ Կրիկի *Սոնաթա op. 7*: Ապա դարձեալ Մարտիկեան հանդէս կու գայ այս անգամ Ռաւէլի *Ondine* ստեղծագործութեամբ: Համերգը իր աւարտին կը հասնի Մենտրլընի չորս մասերէ բաղկացած *Trio in D minor. Op. 49*ով, մեկնաբանուած Ռումեան (դաշնամուր)-Խոշաֆեան (ջութակ)-Օլապի (թաւջութակ) երրեակին կողմէ:

Այնուհետեւ տեղի ունեցան նաեւ այլ համերգեր եւ:

Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցի ուսուցչակազմի բոլոր անդամները շրջանաւարտ են Պէյրութի Պետական երաժշտանոցէն. ումանք ապա շարունակած են իրենց երաժշտական մասնագիտութիւնը Փարիզի Էքոլ նորմալի մէջ կամ այլուր: Սկիզբի շրջանի ուսուցչակազմը կը բաղկանայ հետեւեալ երաժիշտներէն.- դաշնամուր՝ Արաքսի Ալթունեան, Ռուպինա Արթիւնեան, Պելլա Էսմէրեան, Սալբի Իշխանեան, Թաթիանա Մարտիկեան⁶, Նորա Ռումեան, Արփի Սաղպազարեան, Անի Սարաֆեան: Զութակ՝ Յակոբ Էսմէրեան, Լուսինէ Պալիկեան, Սարգիս Քսաճըքեան: Թաւջութակ՝ Զուարթ Սարգիսեան, կիթար՝ Ռաֆֆի Սափուրզեան:

ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻՆ ՇՐՋԱՆԱՎՈՐՏՆԵՐԸ⁶

1972-2022 շրջանին, երաժշտանոցը ունեցած է 110 շրջանաւարտ, որոնց 25ը՝ ոչ-հայեր: Շրջանաւարտներէն 104ը ստացած են դաշնամուրի վկայական, չորսը՝ ջութակի, իսկ երկուքը՝ կիթարի: Առաջին շրջանաւարտն է Լեւնա Քիրքճեան, դաշնամուր, 1976ին: Ան յետագային Վիեննայի մէջ իր երաժշտական ուսումը շարունակած է եւ դարձած օփերայի երգչուհի:

⁵ Թաթիանա Մարտիկեան ծնած էր Պէյրութ, 1948ին: Ան մահացաւ 2022ին, Համպուրկ:

⁶ Ային Պուտաքեան-Թեքէլեան՝ ներկայ տնօրէնուհին հայթայթեց շրջանաւարտներու այս ցանկն ու տուեալները. անոր կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Չորս ջութակի շրջանաւարտներէն Հրաչ Սարգիսեան (1980) եւ Փիէր Գարակէօզեան (1980) շարունակած են իրենց երաժշտական ուսումը Միացեալ Նահանգներու մէջ, երրորդը՝ Կարօ Պասամճեան (1988) Երեւանի մէջ շարունակած եւ մասնագիտացած վերադարձած է Պէյրութ, ուր Պետական երաժշտանոցին մէջ ջութակ կը դասաւանդէ եւ մաս կը կազմէ Լիբանանի ֆիլիարմոնիք նուագախումբին, իսկ չորրորդը՝ Ծալի Թորիկեան (2019) շարունակած է իր երաժշտական ուսումը Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ:

Երաժշտանոցի կիթարի երկու շրջանաւարտներն են՝ Հրաչ Թորթաթեան (1988) եւ Մարք Մելքի (2008):

Երաժշտանոցի 110 շրջանաւարտներէն 55ը իրենց երաժշտական ուսումը շարունակած են Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ⁷, չորսը՝ Միացեալ Նահանգներու մէջ, երեքը՝ Երեւանի մէջ, երկու հոգի Վիեննա մեկնած են, մէկ հոգի՝ Ֆրանսա, ուրիշ մը՝ Քալիֆոնի (Լիբանան) Սենթ Էսփրի համալսարանի երաժշտագիտութեան բաժինը եւ մէկ հոգի՝ Լիբանանի Նոթթըրը տամ տը Լուայզէ համալսարանը:

Եղած են տարիներ, երբ Թեքէլեան երաժշտանոցը շրջանաւարտ չէ ունեցած: Ստորեւ՝ երաժշտանոցին շրջանաւարտներու բերքը ըստ տարեթիւի:

1976ին մէկ շրջանաւարտ, 1978ին երկու շրջանաւարտ, 1979՝ երկու, 1980՝ չորս, 1981՝ չորս, 1982՝ երկու, 1983՝ երկու, 1984՝ ինը, 1985՝ վեց, 1986՝ ինը, 1987՝ հինգ, 1988՝ ինը, 1991՝ մէկ, 1992՝ մէկ, 1993՝ երկու, 1994՝ ինը, 1995՝ մէկ, 1996՝ մէկ, 1997՝ չորս, 1998՝ երեք, 1999՝ չորս, 2000՝ մէկ, 2001՝ չորս, 2002՝ երեք, 2004՝ չորս, 2006՝ երկու, 2007՝ հինգ, 2008՝ երեք, 2012՝ մէկ, 2016՝ մէկ, 2019՝ մէկ, 2021՝ երկու, 2022՝ երկու:

Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցի շրջանաւարտները									
Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.
1976	1	1984	9	1993	2	2000	1	2008	3
1978	2	1985	6	1994	9	2001	4	2012	1
1979	2	1986	9	1995	1	2002	3	2016	1
1980	4	1987	5	1996	1	2004	4	2019	1
1981	4	1988	9	1997	4	2006	2	2021	2
1982	2	1991	1	1998	3	2007	5	2022	2
1983	2	1992	1	1999	4				

Շրջանաւարտներու քննութիւնները տեղի ունեցած են հրապարակային ձեռնարկներով, հանրութեան եւ դատական կազմի ներկայութեան, Պէյրութի զանազան հանդիսասարահներու մէջ, ինչպէս՝ Ամերիկեան համալսարանի Էսենայի հոլ, Պուրճ Համուտի Յակոբ Տէր Մելքոնեան սրահ, Էշրեֆիէի Հայ կաթողիկէ պատրիարքութեան Արարատեան սրահ: Երբ շրջանա-

⁷ Ասոնցմէ երեքը շրջանաւարտած են ուսուցիչ ունենալով Պօղոս Ճելալեանը:

արտոններու թիւը չորսէն ասելի եղած է, հրապարակային երկու անջատ ձեռնարկներով տեղի ունեցած են քննութեան հրապարակային ելոյթները:

Թեքէլեան երաժշտանոցի շրջանաւարտներէն հինգը Լիբանանի Պետական երաժշտանոցի ուսուցչական այժմու կազմին մէջ են.- 1980ի շրջանաւարտներ՝ Հուրի Սարաֆեան-Սաթեան եւ Լիզա Թիֆինճեան (դաշնամուր), 1984ի շրջանաւարտ՝ Սանտրա Չոլաքեան (դաշնամուր)⁸, 1985ի շրջանաւարտ՝ Ալին Պուտաքեան-Թեքէլեան (դաշնամուր) եւ 1988ի շրջանաւարտ՝ Կարօ Պասմաճեան (ջութակ):

Երաժշտանոցի իմ ուսուցչական 15 տարիներու ունեցած եմ 12 շրջանաւարտ: Անոնց չորսէն եւ երկու ուրիշ շրջանաւարտներէ խնդրեցի իրենց գրաւոր վկայութիւնը, թէ՛ երաժշտանոցը ինչ ազդեցութիւն ունեցած է իրենց ապագայ երաժշտական ասպարէզին վրայ: Անոնք սիրով ընդառաջեցին խնդրանքիս: Այս վեց շրջանաւարտներն ալ դարձած են ասպարէզով երաժիշտներ: Ստորեւ կը ներկայացնենք անոնց վկայութիւնները:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ⁹

Ա. 1980ի շրջանաւարտ Հուրի Սարաֆեան-Սաթեան¹⁰

Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանին դրացիի մը խրախուսումով՝ տարիներ անձնական ուսուցչուհիի հետ (Սեդա Գարակէօզեան) աշխատելէ ետք, ուղղուեցայ Թեքէլեան երաժշտանոց, ուր բախտը ունեցայ ծանօթանալու երաժշտանոցին տնօրէն, հիանալի երաժիշտ եւ մանկավարժ՝ պրն. Մինաս Թեքէլեանին, չիմանալով ինչպիսի հետաքրքիր ուղի էր վիճակուած ինձի անցնելու այնտեղ: Անմոռանալի էր առաջին հանդիպումս նոր ուսուցչուհիի՝ Ռուպինա Արթինեանին հետ: Բանիմաց անձնաւորութիւն, անկեղծութեամբ խանդավառուող, գրկաբաց ընդունեց զիս, իր ընդունակութիւններն ու գիտելիքները փոխանցելու մէջ շոյլ էր... այս բոլորին գումարելով պրն. Մինասի յստուկ ուշադրութիւնը եւ հաւատքը իմ ...նկատմամբ խթան հանդիսացան ասելի հաստատակամօրէն քալելու՝ օրէ օր յստակօրէն ուրուագծուող երաժշտական ուղիիս մէջ: Սքանչելի մթնոլորտ կը տիրէր դպրոցէն ներս պրն. Մինասի առաջնորդութեամբ. ան գիտէր աշակերտին հոգուն մէջ սէր սերմանել դէպի երաժշտութիւնը, ուսուցիչն ու աշակերտը հասասարապէս քաջալերել ու մղել՝ երկուստեք ձգտելու գերազանց արդիւնքներու: Եւ այսպէս, խստապահանջ ղեկավարի եւ կարող դասատուներու աշխատանքը անպայման իրենց բեղմնաւոր արդիւնքը պիտի տային բազմաթիւ աշակերտական համերգերու ընդմէջէն: Բեղմնաւոր պիտի ըլլար նաեւ երկար տարիներու վրայ տարածուած իրենց հարուստ հունձքը, որոնցմէ մէկն էի ես... Յաջողութեամբ ասարտելով Թեքէլեան երաժշտանոցը, նոյնպիսի յաջողութեամբ ընդունուեցայ Լիբանանի Պետական երաժշտանոց՝ ի բախտա-

⁸ Մաթիլտ Սանտրա Չոլաքեան 1992-2023 դաշնամուր դասաւանդած է Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ: Ան 2012-23՝ երաժշտութիւն դասաւանդած է նաեւ Լիբանանեան համալսարանին մէջ:

⁹ Վկայութիւնները կու տանք յապաւումներով:

¹⁰ Իր վկայութիւնը կը կրէ 14 Մարտ 2024 թուականը:

տրուֆին ինձի, յաջորդ վարպետ ուսուցիչի՝ Արփի Ջրոյեանի¹¹ դասարան: Ջրոյեան վառ անհատականութիւն ունէր, խնամքով կը մատուցէր իր գիտելիքներն ու ցուցմունքները:

Բ. 1984ի շրջանաւարտ Մաթիլտ Սանտրա Չոլաքեան¹²

I attended Tekelian Preparatory Music School from 1978 to 1983. I was taught by Mrs. Roubina Artinian who worked meticulously with great passion and dedication so that I was admitted to the Lebanese National Conservatory of Music, which by that time was difficult. Students were admitted after undergoing an entrance exam for selection of the top few students.

Tekelian music school had high standards, having excellent teachers and collaborated with the Lebanese National Conservatory.

After I graduated from the Lebanese Conservatory, I was privileged to teach and present student concerts that were of such a high level that the students were admitted to the Lebanese Conservatory without presenting entrance exams.

I feel great gratitude and appreciation to the Tekelian Preparatory Music School, which was founded by the great artist Minas Tekelian and was managed by his wife Ovsanna Tekelian, after he passed away.

Գ. 1985ի շրջանաւարտ Ալինա Կիվանէսեան-Տազէսեան¹³

Հինգ տարեկանիս, դաշնակի ուսուցչուհի օր. Արտեմիս Պոյաճեանին հետ սկսայ դաշնամուրի դասերո: Իր ծննդաբերութենէն ետք սկսայ Թեքէլեան յաճախել, ուր ուսուցիչ ունեցայ Նորա Ռումեանը: Կը յիշեմ՝ սիկարէթ կը ծխէր դաս ըրած ատեն. մոխրամանը ստեղնաշարին ծայրը դրած կ'ըլլար, կամ ալ փիանոյին վրայ. երբեմն, երբ նոր կտոր մը պիտի նուագէր՝ սիկարէթը բերանը կը նուագէր, տեղ մը կը կենար, կը մարէր սիկարէթը, յետոյ կը շարունակէր նուագը: ... Ես ալ կ'երագէի որ օր մը պիտի մեծնամ, փիանոյի ուսուցչուհի պիտի ըլլամ եւ սիկարէթ պիտի ծխեմ դաս տուած ատենս...: Երաժշտանոցին դասագիրքերս գրատուն Ապաճեանէն կը գնէինք: Իսկ փիանոն գնեցինք պատուելի Աբարդեանէն, որ ընտանեօք Հալէպ պիտի փոխադրուէր, հովութեան:

Թեքէլեանի հանրային համերգերը Կիրակի օրերը կ'ըլլային: Այդ օր տիկին Ովսաննան մագերը շինած կ'ըլլար: Նուիրուած կին էր: Ինք եւ պրն. Մինասը միասին կու գային երաժշտանոց ու միասին կը վերադառնային տուն: Երբեմն տիկին Ովսաննան շուկայ կ'իջնէր տնային գնումները ընելու: Կը յիշեմ պրն. Մինասը՝ Թեքէլեանի երկար աստիճաններէն յոգնած վեր կը հասնէր: Պզտիկները կը քաջալերէր, հոգածու էր, ժպտուն, պապայի պէս էր:

Հին շէնք մըն էր Երաժշտանոցը: Տեղ-տեղ սալայատակ գետինը խորտուբորտ էր: Դռնէն նախասենեակ մը կը մտնէինք, յետոյ մեծ սենեակ մը կար բարձր առաստաղով եւ հին կահոյքով... խոշոր գրասեղան մը, որուն ետին միշտ նստած կ'ըլլար պրն. Թեքէլեանը, իսկ իր ետին պատշգամն էր: Այդ մեծ սենեակէն

¹¹ Արփի Թէլեան-Ջրոյեան շրջանաւարտ է Պէյրութի ապա եւ Հռոմի Սանթա Չիչիլիա երաժշտանոցներէն:

¹² Վկայութիւնը կը կրէ 3 Մարտ 2024 թուականը:

¹³ Վկայութիւնը կը կրէ 2 Ապրիլ 2024 թուականը:

միջանի դռներ կը բացուէին դէպի դասարանները: Քննութիւններուն, այս մեծ սենեակը ձեւափոխուած կ'ըլլար. աթոռներ դրուած կ'ըլլային, փիանոներէն մէկը սենեակէ մը դուրս հանուած կ'ըլլար, պետական երաժշտանոցէն կու գային դատակազմի անդամներ (Պօղոս Ճելալեան, Մատլէն Մըտաուար, Արփի Զրոյեան), մեր ուսուցիչները ներկայ կ'ըլլային: Քննութեան արդիւնքները շաբաթ մը ետք, նախասենեակին պատին դրուած կ'ըլլային: Հոն կը դրուէին յայտարարութիւնները:

Կանոնաւորաբար Թեքէլեան կ'երթայինք բան մը սորվելու, բան մը իրագործելու, շատ լուրջ էր մեզի համար, ժամանց չէր, չէինք մտածեր ընեւ-չընելու մասին: Թեքէլեանի երաժշտանոցէն անմոռանալի կը մնայ իմիջիպայլոց երկու քոյրերու եւ 2 հօրեղբօրորդիներու հետ, Թեքէլեանի մուտքին հինգ փոքրիկներու խմբանկարը:

Պատերազմին սկիզբը, 1975ին, Հալէպ գացինք: Վերադարձանք երբոր՝ փիանօն չշարունակեցի, մինչեւ ՀԲԸՄ Դարուիի Յակօբեան աղջկանց երկրորդական վարժարանը ւաւրտելու: 1983ին վերսկսայ, այս անգամ օր. Անի Սարաֆեանին հետ, որուն հետ ալ ւաւրտեցի Թեքէլեան երաժշտանոցը 1985ին: Ռումեանը ձգեր էր երկիրը: Յետոյ անցայ Քասիքի Սենթ Էսփրի համալսարանի երաժշտագիտութեան բաժինը, ուր ուսուցչուի ունեցայ աննման տիկ. Սոնա Քիւփէլեանը: Համալսարանը ւաւրտելէ առաջ իսկ սկսայ դաշնամուր դասուանդել Համազգայինի Բարսեղ Կանաչեանի անուան երաժշտական դպրոցին մէջ, աւելի քան քսան տարի եղած եմ երգ-երաժշտութեան ուսուցիչ եւ կազմակերպած եմ աշակերտներու հրապարակային համերգերը: Այսօր՝ կու տամ դաշնամուրի անձնական դասեր:

Թեքէլեան երաժշտանոցը Մար Մըխայէլի շրջանին մշակութային ինքնութիւն տուող կառոյց էր: Իմ երաժշտական ասպարէզիս մէջ Թեքէլեան երաժշտանոցը ուղղորդող դեր ունեցաւ:

Դ.- 1987ի շրջանաւարտ Նեկտար Թիւմպերեան-Փալազեան¹⁴

Փոքր հասակէն մարմաջը եւ մեծ սէրը ունեցած եմ երաժշտութեան հանդէպ, մանաւանդ՝ դաշնամուրի, սակայն Այնճարի մէջ չկար միջոցը եւ առիթը՝ երաժշտութեան հանդէպ ունեցած սէրս զարգացնելու եւ երազս իրականացնելու:

Առաջին քայլերս դէպի երաժշտութեան ոլորտ կը պարտիմ Էմիլի Թիլքեանին. կարճ ժամանակի ընթացքին իր դաշնամուրային դասընթացքներով եւ ինքնաշխատութեամբ կարողացայ դաշնամուր նուագել ու Այնճարի Հայ ւաւետարանական եկեղեցոյ Կիրակի օրուան պաշտամունքի երգեցողութեան դաշնամուրի նուագողը ըլլայ: Այդպէս սկսաւ իմ երաժշտական կեանքիս սկիզբը, ուր բարեբաստիկ օր մը հանդիպեցայ տիկին Ռուպինա Արթինեանին, եւ երբ ան տեղեկացաւ պատուելի Յովհաննէս Սարմազեանէն, թէ որքան կը փափաքէի երաժշտանոց յաճախել, իր առաջարկը եղաւ՝ Թեքէլեան երաժշտանոց գալ: Այսպիսով Թեքէլեանը եղաւ երաժշտութեան օճախս, իսկ տիկին Ռուպինան՝ ուսուցչուիս: Այդ օրերուն տիկին Ռուպինան եւ ես մեծ դժուարութեամբ կը հասնէինք երաժշտանոց, որովհետեւ պատերազմ էր: Սակայն ոչ մէկ դժուարութիւն կրցաւ ընկճել շարունակելու եւ պայքարելու կամքս:

¹⁴ Վկայութիւնը կը կրէ 14 Մարտ 2024 թուականը:

Չորս տարի յաճախեցի Թեքէլեան երաժշտանոց եւ վկայուեցայ: Առանց հօրս ու մօրս քաջալերանքին եւ Թեքէլեան երաժշտանոցին, պիտի չկարենայի իրականացնել երազս: Ուստի Թեքէլեան երաժշտանոցը եղաւ բանալին իմ երաժշտական գործունէութեանս:

...Երբ աղջիկս 5 տարեկան եղաւ, ինք ալ բախտը ունեցաւ Թեքէլեան երաժշտանոց յաճախելու, ուսուցիչ ունենալով Ալին Թեքէլեանը: Ստանալէ ետք Թեքէլեանի վկայականը, ան իր ուսումը շարունակեց Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ, ապա Լոնտոնի մէջ ստացաւ իր երաժշտական մագիստրականը:

Ասիկա մեծ վկայութիւն է, որ Թեքէլեան երաժշտանոցը եղած է եւ կը շարունակէ ըլլալ հայ երաժշտասէրներու դարբնոց:

Թեքէլեան երաժշտանոցին շնորհիւ այսօր հայ երգն ու երաժշտութիւնը կը փոխանցեմ հայ աշակերտին՝ հայկական դպրոցներէ ներս, որպէս երաժշտութեան դասատու եւ խմբավար:

Երախտագիտութեան եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներս Թեքէլեան երաժշտանոցին: Վարձքը կատար բոլոր ուսուցիչներուն եւ տնօրէնութեան:

Ե. 1988ի շրջանաւարտ Քրիսթիան Քարամ¹⁵

My musical journey began in 1980 at Tekelian Music School. Apparently since a very young age, I greatly enjoyed rhythms and sang nonstop, so my mother, an accomplished pianist herself, signed me up for piano lessons. It was the height of the Lebanese civil war, and Tekelian School was walking distance from our home, and manageable. Also, most other musical institutions were shut down in light of the prolonged armed conflict.

I awaited Saturday mornings with bated breath. My brothers and I all had piano lessons with the wonderful Mrs. Artinian, and I would conscientiously practice every day so I could show her my progress from week to week. I still remember like it was yesterday the first time she drew middle C on the bottom staff and showed how to connect the notes on the page to the notes on the piano. I will never forget the excitement of the first time I could play with both hands together, 'at the same time!' and showing off to a relative who was visiting us that I was now able to do that. My first public recital, that same year, I played a Streabbog waltz in the Assembly Hall of the American University of Beirut, which to this day fills my heart with joy. I remember the dress, the shoes, the stage fright and then the applause. I was hooked. It was miraculous that Mrs. Artinian could make it to her lessons every week, crossing checkpoints and risking being separated from her family to mentor our musical talent. This continued for many years, with many ups and downs, recitals, final exams, pauses necessitated by war and then on again. I remember understanding at that very young age how resilient and brave we were, to dare to keep moving forward and playing and learning music, with so much devastation around. It very quickly became a safe haven, and having that school and everything it stood for in the midst of raging civil war was nothing short of a blessing. One particularly difficult moment I remember was a recital we had planned, also at the Assembly Hall, in 1988 - and we had to cross to the other side of the city the night before, with sniping all around

¹⁵ Վկայութիւնը կը կրէ 27 Փետրուար 2024 թուականը:

us so we wouldn't jeopardize the event. The stress was so intense that the next day I froze on stage for the first time and was devastated. It was a great lesson, though, and it helped me present my graduation recital with flying colors a short few weeks later.

War, and later college, took a toll, and I soon had to prioritize healing from it all and picking a career path. I was very passionate about music, and while I pursued a Bachelor of Science at AUB and a degree in Psychology at Saint Joseph University, I couldn't leave it behind. I knew I wanted to write music, so I embarked on several years of composition studies with the late Maestro Boghos Gelalian, who helped give me the confidence I needed to take the leap and commit to a musical career. I was accepted at the prestigious Berklee College of Music in Boston and began a double major in Film music/Song writing and Piano/Vocal studies in 1998. In 2003 I was accepted at the New England Conservatory of Music, where I graduated with a Masters in Contemporary Improvisation.

I have been on the faculty of Berklee College of Music since 2007, where I now serve as a full professor. While I perform, write and produce as well, my most important calling has been to educate and to help our young believe in themselves and their dreams. It has been my privilege to also create and teach the Middle Eastern as well as the Music and Social Change curriculum, to encourage artists to use their voice for the higher good. I founded the Berklee Annual Middle Eastern Festival in 2009, a dream that emerged after I experienced firsthand the rampant prejudice against Arabs and the misinformation that mainstream media disseminated about our part of the world. We have just celebrated the 15th Anniversary of this festival, which has become one of the most celebrated festivals of Middle Eastern music in the country - and we have hosted many prestigious artists from the region over the years, and of course from Armenia (Kevork Mourad, Zulal Trio, Tigran Hamasyan).

I also released a piece named Beirut in late 2021, which was written in the immediate aftermath of the August 4, 2020 explosion and which was a tribute to everyone who continues to struggle against violence and injustice around the world.

None of this would have been possible without my formative years at Tekelian School of Music. The discipline, the affection, the laughs, the encouragement we got from the teachers, but also the rigorous lessons and curriculum all greatly contributed to my skills and confidence as an artist, performer and composer. When I went back many years ago to visit the neighborhood and saw the building had been demolished, a piece of my heart broke with it. But I will cherish the memories forever.

2. 1988ի շրջանաարտ, ջութակահար Կարո Պասմաճեան¹⁶

1982-88 շրջանին յաճախած եմ Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցը, Ովսաննա Թեքէլեանի տնօրէնութեամբ: Այդ տարիները երկրի քաղաքացիական պատերազմի անհանգիստ եւ մռայլ տարիներ էին, մարդիկ ապահովութեան եւ անվտանգութեան որոնումով բռնած էին գաղթի ճամփան: Հետեւաբար իմ ուսման ժամանակ, յաճախակի էր երաժիշտ ջութակահար դասատուներու փոփոխութիւնը: Ոմանք գաղթեցին, իսկ ուրիշներ ծերութեան կամ առողջական

¹⁶ Վկայութիւնը կը կրէ 24 Մարտ 2024 թուականը:

տարբեր պատճառներով, միայն կարճ ժամանակ մը կրցան դասաւանդել: Անոնցմէ ոմանք այժմ պատկառելի տարիքի են, իսկ միւսները՝ այս աշխարհէն հեռացած, թող որ իրենց յիշատակը մնայ միշտ անթառամ: Ինծի համար մեծ պատիւ է հիմա յիշատակել ամէնուն անունները, որոնցմէ իրաքանչիւրը իմ մէջ դրոշմած է ջերմագոյն յիշողութիւններ: Կարգով կը նշեմ Սարգիս Քաւորեան, Լուսինէ Պալիկեան, Օննիկ Սիւրմէլեան, Տիգրան Ապաճեան, Յակոբ Էսմէրեան: Թեքէլեան երաժշտանոցը այն ժամանակ գործող միակ հայկական երաժշտական դպրոցն էր Լիբանանի պետական ճանաչումով, ուրկէ շրջանաւարտ եղած են 1988ին որպէս ջութակահար: Պէյրութի սրտին մէջ գտնուող Մար Մըխայել թաղամասի այս խորհրդատու շէնքը, ուր կը գործէր երաժշտանոցը արժանի է ամէն բարձր գնահատանքի: Սփիւռքի մէջ երաժշտական դպրոց հիմնելու գաղափարը, իրագործել զայն եւ պահպանել մինչեւ այսօր յանձնիս պրն. Մինաստիկ Ովսաննա-տիկ. Ալին Թեքէլեաններու, ինքնին ազնուական ու հերոսական գործ է:

Անշուշտ տարբեր դերակատարութիւններ ունեցած է երաժշտական դպրոցը, բայց անձնապէս ինծի համար կարեւոր է որ նշեմ՝ Թեքէլեանը **օճախ** է որ իր երդիքին տակ հաւաքած է որակեալ երաժշտական հասարակութեան խումբ մը մարդիկ, որուն մէկ վկան ալ ես եմ: Գիտելիքներ, յուսալի մարդկային շփումներ եւ նոր ծանօթութիւններ, առողջ ու խորհրդատուութեամբ լեցուն մթնոլորտ պարունակող վայր մը, որ կարելի չէ չսիրել եւ չյիշել: Մանկութեան յիշողութեանս անբաժան մասն են նաեւ աշակերտական համերգերը, ...որոնք քանակաբար կազմակերպուող եւ ամենայն բժախնդրութեամբ տեղի ունեցող երեկոներ էին տիկին Ովսաննայի շնորհիւ: Անոնք խանդավառութիւն, ինքնավստահութիւն ներշնչող, յետագայ յաջողութիւններու խթան դարձող պահեր էին:

ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻՆ ԵՐԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մինաս Թեքէլեան մեծ բժախնդրութեամբ տնօրինած է իր հիմնած երաժշտանոցը իր տիկնոջ օգնութեամբ մինչեւ իր մահը՝ 1981: Իր մահէն ետք իր տիկինը՝ Ովսաննա Թեքէլեանը կը ստանձնէ երաժշտանոցին տնօրէնութիւնը, եւ օգնութեամբ զինք շրջապատած որակաւոր ու հաւատարիմ ուսուցչակազմին, ձեռնհասութեամբ կը շարունակէ տնօրինել մինչեւ 1995, որմէ ետք հարսը՝ դաշնակահարուհի Ալին Պուտաքեան-Թեքէլեան (Թեքէլեան երաժշտանոցի 1985ի շրջանաւարտ), կը ստանձնէ տնօրէնութիւնը ու զայն կը վարէ մինչեւ այսօր:

1992ին, յատուկ համերգով մը կը տօնուի երաժշտանոցին 20ամեակը: Այդ տարին, Լիբանանի Պետական երաժշտանոցին հետ կայացած համաձայնութեամբ, մինչեւ օրս երաժշտանոցին քննութիւնները եւ վկայականները Պետական երաժշտանոցը կը հովանաւորէ:


Թեքէլեան երաժշտանոցը 12 տարիէ իվեր փոխադրուած է Անթիլիաս, Սիմֆիթեան շէնքեր, «Գառնի» շէնքին գետնայարկը:

Երաժշտանոցը կը գործէ 12 ամիս, Երկուշաբթիէն Շաբաթ, առտուան ժամը ութէն մինչեւ երեկոյեան ժամը ութ: Ալին Պուտաքեան-Թեքէլեանի

աշխատանքով բարգաաւաճած է ան, ուր մեծաթիւ ուսուցչակազմ մը կը գործէ: Բազմատեսակ նուագարաններու ուսուցումը կը յարմարի մեր օրերու աշակերտներու պահանջներուն: Պարտադիր սուֆէժի դասերու կողքին, կը դասաւանդուին դասական, հայկական եւ արաբական երաժշտական գործիքներ՝ աքորտէն, դաշնամուր, եուքուլելէ, թաւջութակ, թիմփանի, թմբուկ, կիթար, մանտոլին, մարիմպա, նայ, ուտ, պաղլամա (թրքական փոքր սագ), պինկո, պուզուքի, ջութակ, սագ, սաքսոֆոն, սրինգ, վիոլա, տէֆ (տափ), տուտուկ, տրպաքքէ, քաժու, քլարինէթ, հայկական եւ արաբական քանոն, ձայնամարզութիւն: Կայ նաեւ ... ճատրակի դասընթացք՝ բոլոր տարիքներու համար...:

Մինաս Թեքէլեանի երազը կը շարունակէ իրականացած մնալ 54 տարիներէ իվեր:

Ստորեւ կը կցենք Մինաս Թեքէլեանի կենսագրականը:



Մինաս Թեքէլեան (1910-1981)¹⁷

Ծնած է Գերմանիկ, Մարաշ, 1910ին: Երգի սերը բնատուր էր իր մէջ: Չորս տարեկանին սկսած է փողահարել՝ ձեռքին ու շրթներուն մէջէն ձայներ հանելով, երգելով, թաղի տղաքը իր ետեւէն տողանցել [տալով]: Բայց երկար չի տեսեր [ասիկա]. միքանի ամիս յետոյ կը պայթի առաջին համաշխարհային պատերազմը: Շնորհիւ հորեղբոր (որ զինուորական ծառայութեան բերումով կը մնայ երկիր), կը փրկուի Մինասի կեանքը: Մինասի կը վիճակուի որբութիւն եւ Մարաշի գերմանական որբանոց: Փողը ձեռքէն չի ձգեր: Որբանոցին մէջ կը հետեւի սուֆէժի:

1920ին որբանոցը կը փոխադրուի Պէյրութ, Ճիպէյլ գիւղը: Որբերը իրենց ձեռքերով կը շինեն որբանոցին շէնքը: Հիմնաքարին տակ կը զետեղեն շիշ մը, որուն մէջ կը գտնուի շինութեան մասնակցող որբերուն անունները, որուն մէջ փոքրկ Մինասին անունն ալ կայ: Որբանոցին մէջ իր առաջին դաստիարակ ուսուցիչը կ'ըլլայ ... Կոստան Պատիկեան: Միեւնոյն ժամանակ կը հետեւի երաժշտութեան, շնչաւոր գործիքներու վրայ աշխատելով: Կը մտնէ որբանոցի նուագախումբին մէջ: Իր առջեւ կը բացուի երաժշտական արուեստի ճամփան, որ կը դառնայ կեանքի նպատակ: Պէյրութէն որբանոց կը հրաւիրուի երաժշտագէտ եւ երգահան ... Յակոբ Իւվէզեան, որ կը քաջալերէ զինք: Մինաս կ'ուզէ ամէն շնչային գործիք նուագել սորվիլ: ...Միքանի ամիս յետոյ նուագախումբը կ'ունենայ

¹⁷ Կենսագրութիւնը - մեր փափաքին հիմամբ - գրուած է իր կնոջ Ովսաննա Թեքէլեանի կողմէ եւ մեզի յանձնուած 1982ին: Զայն կու տանք յայտումներով ու մանր հպումներով:

մնայուն ղեկավար մը, Յարութին Պիլպիլեան: Մինաս կը սկսի թրմւոյն նուագել շատ յաջող: Իսկզեանի քաջալերանքով Մինաս սկսած է նոթաները կարգալ եօթը բանալիներով: 1924ին որբանոցը կը հիւրընկալէ ֆրանսական բանակի նուագախումբին քափիթէնը, որ մտիկ ընելէ ետք որբանոցին նուագախումբին կատարումը, շատ գոհ մնալով՝ կ'առաջարկէ որ Մինաս գինուորական նուագախումբին միանայ իբրեւ թրմւոյնիստ: Զինուորական նուագախումբին մէջ մտնելու համար ...կը ստիպուին իր տարիքը չորս տարիով մեծցնել: Այդ տարիներուն [Մինաս] հետեւած է Փարիզի երաժշտանոցի դասընթացքներու: Վկայականի տարին քափիթէնը վկայագիր մը տուած է, Փարիզի երաժշտանոցի վկայականին համազօր, եւ խնդրած իրմէ որ Փարիզ երթայ եւ վկայականը ստանայ: Սակայն Մինաս որբ է, ու՛ր երթայ: Կ'ըսէ՝ «երբ ես նուագել գիտեմ վկայական ի՞նչ պիտի ընեմ, կարելորը նուագելն է»:

Մինաս մասնակցած է Պէյրութի Կրան թէաթրի բացումին, Լիտոյի բացումին, նուագած օտար նուագախումբերու մէջ: 1930ին պայմանագրութիւն կնքած է Հալէպի գինուորական նուագախումբի հետ իբրեւ թրմւոյնիստ: 1934ին մեկնած է Պաղտատ, Պասրա ապա Պարսկաստան, մինչեւ 1937ի սկիզբը: 1937 Մարտ 14ին հրաւիրուած է Հնդկաստան, Մատրաս քաղաքը, ուր աշխատած է մինչեւ 1940ի վերջը, ապա եկած է Պէյրութ: Արդէն կատարելագործած է նուագել թրմւոյն, քոր, քլարինէթ, թրմփէթ եւ քոնթրապաս:

Իր հետ աշխատակից ունենալով թաւջութակահար Mr. Dal, եւ դաշնակահար Mr. Tcheskinof, միասնաբար պայմանագրութիւններ կը կնքեն օտար երկիրներու հետ: Պէյրութի մէջ հինգ տարի աշխատելէ ետք, անոնք 1945ին կը մեկնին Ամման, յետոյ Դամասկոս, մինչեւ 1959: Dal, 1959ին կը հրաւիրուի Պէյրութի Պետական երաժշտանոց իբրեւ տնօրէն: 1960ին Մինաս եւ Tcheskinof կը հրաւիրուին Պէյրութի Պետական երաժշտանոց, իբրեւ ուսուցիչներ. Մինաս՝ ուսուցիչ թրմւոյնի եւ քորի, միեւնոյն ատեն կը միանայ երաժշտանոցի նուագախումբին: Տասնամեակ մը ամբողջ կը գործակցի լիբանանցի երաժշտական հանրաժանօթ ընտանիք Րահպանիներուն հետ, իբրեւ թրմւոյնիսթ միանալով անոնց նուագախումբին: Աշխատակցած է նաեւ լիբանանցի նշանաւոր յօրինող Ռոմիօ Լահուտին, երգիչ-յօրինող Ուատիի Սաֆիին եւ ուրիշ շատերու հետ:


Ամբողջ տասնամեակ մը ան պատրաստած է փչողական գործիքներու որակատուր աշակերտներ: Իր աշակերտուիներէն երկուքը՝ Մարօ Փարթամեան եւ Աստղիկ Էսմէրեան, իրենց աշակերտական տարիներուն իսկ սկսած են նուագել երաժշտանոցի նուագախումբին մէջ իբրեւ քորիսթներ: Մինաս յաճախ իր աշակերտ-աշակերտուիները կը պտտցնէր դպրոցներու մէջ նուագելու, որպէսզի նուագելու ինքնավստահութիւն ունենան:

Մինաս Թեքէլեան 1970ին հանգստեան կը կոչուի. իր ծառայութեան իբրեւ գնահատութիւն, կ'արժանանայ լիբանանեան «Մայրիներու արժանեաց» շքանշանին, 24 Յունիս 1974ին: Կը հրաւիրուի օտար երկիրներ, բայց կընախընտրէ չհեռանալ Լիբանանէն:

Ան քոնթրապաս նուագած է 1 Մայիս 1962ին լիբանանահայ Վերածնունդ Միութեան ներկայացուցած «Լեպլեպիճի Հորհոր աղա» օփերէթի համերգի նուագախումբին հետ (երգչախումբի խմբավար՝ Օննիկ Ասատուրեան): Եղած է Լիզպոն, 1965ին Լիբանանահայ երգի պարի անսամպլով, նոյն խումբով մեկնած է Պաղտատ եւ Կիպրոս:

Մինաս յաճախ մտքին մէջ կը ծրագրէր երաժշտանոց մը բանալ: Երբ հանգստեան կոչուեցաւ, ձգտեցաւ անձուկ պայմաններով ու բազում դժուարութեամբ ձեռնարկել իր երաժշտանոցի հիմնադրութեան: Երկու տարիներու տենդագին եւ ցաւատանջ երկունքէ մը ետք հիմնուեցաւ երաժշտանոցը, որուն բացումը կատարուած է ներկայութեամբ Պետրոս Ալահայտոյեանի¹⁸, հայր Կոմիտաս Օհանեանի, տէր եւ տնօրէն Մինաս Թեքէլեանի, առաջին աշակերտուի Սիւզի Փարթամեան, առաջին ուսուցչուի Նորա Ռումեանի:

Երաժշտանոցը առաջին տարին ունեցաւ շատ քիչ թիով աշակերտ-աշակերտուիներ: Տարուէ տարի [թիւը] աւելցաւ, եղաւ մինչեւ 150..., հայ եւ ոչ-հայ: Առաջին շրջանաւարտը Անի Աշճեանն է (դաշնակ): [Այնուհետեւ երաժշտանոցը], 1978-79ին կ'ունենայ երկու վկայեալ՝ Մարիա Թաթեան եւ Սոնա Գրգռշեան (դաշնակ), 1979-80՝ չորս վկայեալ՝ Լիզա Թիւթիւնճեան (դաշնակ), Հուրի Սարաֆեան (դաշնակ), Հրաչ Սարգիսեան (ջութակ), Փիլի Գարակէօզեան (ջութակ), 1980-81 չորս վկայեալ՝ Յասմիկ Մելքոնեան (դաշնակ) Հուրի Մանուկեան (դաշնակ), Շուշան Թաթեան (դաշնակ), Զելա Կոստանեան (դաշնակ): Իր մահէն յետոյ 1981-82 տարեշրջանին երկու վկայեալ ունեցանք՝ Ռաֆֆի Մուրատեան (դաշնակ), Յովիկ Սարգիսեան (դաշնակ)¹⁹:



1985 համերգի յայտագրին առաջին էջը եւ ...այժմու երաժշտանոցի մուտքին, Ալին Թեքէլեան եւ Ռուպինա Արթինեան

¹⁸ Երաժշտագետ Պետրոս Ալահայտոյեան սկիզբէն եւեթ զօրավիզ կանգնած է Մինաս Թեքէլեանին եւ իր հիմնած երաժշտանոցին ու նուիրած է շուրջ վեց ջութակ առ ի քաջալերանք երաժշտանոցին:

¹⁹ Ներկայիս Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցը ունի իր Facebook, Instagram, Tictoc ընկերային ցանցերը, հետեւեալ հասցեով.- Tekelian. music, school , իսկ հեռաձայնի թիւերը՝ 04 413165 եւ 03 796755:



Ա. Կարգ, ծախեն աջ՝ Քիւփէլեան, Ճելայեան, Զրոյեան, Ուալիտ Ղըլմիէ (պետական երաժշտանոցի տնօրէն), Փեիլիանեան-Մըտաուար, Արթինեան, Ալին Մանուկեան, տորթ. Անդրանիկ Մանուկեան եւ...աջէն ծախ՝ Մըտաուար, Ովսաննա Թեքէլեան, Ճելայեան ու Պօղոս Բանճարեան



Մինա Թեքէլեան կը ղեկավարէ իր կազմած երգչախումբը ...եւ Ովսաննա Թեքէլեան փոքրիկ աշակերտներու հետ



Ձախենաց՝ Ռաֆֆի Սափսրզեան, Ճելալեան եւ Թեքլեան... եւ 1983ի համերգէն
ետք, ուսուիչ-շրջանաւարտ խմբանկար. ձախէն այժ՝ Օ. Թեքլեան,
Սաղպազարեան, Արթինեան, Քսանդրեան, շրջաւարտ Արլէթ Յովսէփեան,
Սափսրզեան, Սարաֆեան Արփի Քեշիշեան եւ Նորա Ռումեան





1974. Մինաս Թեքելյան կը ստանայ «Մայրիներու արժանեաց» շքանշանը եւ...Ո. Թեքելյան աշակերտուհիի մը հետ, իին երաժշտանոցին մուտքի պատշգամին



Երաժշտանոցի հիմնադրութան 20ամեակի հանդիսութան խմբանկար, 1992

MINAS TEKELIAN AND THE
TEKELIAN PREPARATORY MUSIC SCHOOL HE FOUNDED IN BEIRUT IN 1972
(SUMMARY)

ROUBINA ARTINIAN
roubina.alahaydoyan@gmail.com

Minas Tekelian, an orphan who grew up to become a well-known musician in Lebanon and the Middle East, in 1972, by his own initiative, without the help of any association or the state, founded the first preparatory music school of Lebanon, in Beirut, for beginners, to help them learn solfeggio, theory of music and to play an instrument before entering the National Conservatory of Music. A few years later, in 1975, the civil war broke out in Lebanon, which lasted till 1990, but the Tekelian Preparatory School of Music kept open its doors against all odds.

The author of this paper narrates briefly the 15 years of the school (1975-1990) during which she taught at Tekelian music school as a piano teacher. The paper also highlights the echoes of the Armenian press about the newly founded music school; it describes its curriculum, programs of public auditions, teachers, and graduates. The paper includes testimonies of six graduates who became professional musicians. The paper includes an overview of the graduates, photos of documents and auditions, and finally Minas Tekelian's biography, written by his wife Ovsanna.

**ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԸ ՈՐՊԷՍ ՍՏՈՐԻՆ
ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ՝ ՄԱՍԻՆ
ԶՐՈՅՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՌՈՂ ՈՒ ՄԵԿՆԱԲԱՆ
(Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ
ժողովածուի հրատարակութեան 150ամեակին առթիւ)**

ՅԱՍՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ
hasmikgalstyan1979@gmail.com

ՄՈՒՏՔ

ԺԹ. դարի առաջին տասնամեակներից սկսած առաջատոր Երուպայի մի շարք երկրներում ժողովրդական բանահիստութեան հաւաքման եւ ուսումնասիրման հարցերն առաջնային են դառնում եւ շատ ու շատ գիտնական-բանահաւաքներ յաջորդաբար հրատարակում են բանահիստութեան տարբեր ժանրերին վերաբերող նիւթեր ու ժողովածուներ: Այս ազդեցութեան ներքոյ հայկական գաղութներում (Վենետիկ, Վիեննա, Մոսկուա, Պետերբուրգ, Թիֆլիս են.) եւ բուն Հայաստանում սկսում է հայ ժողովրդական բանահիստութեան հաւաքումն ու ուսումնասիրութիւնը:

ԺԹ. դարը կարելի է պայմանական ընդունել, քանի որ, հայ բանահիստութեան առաջին նմուշները տեսնում ենք պատմահայր Մովսէս Խորենացու (Ե. դար *Պատմութիւն հայոց*), Ագաթանգեղոսի (Ե. դար, *Պատմութիւն հայոց*), Եզնիկ Կողբացու (Ե. դար, *Եղծ աղանդոց*), Փաւստոս Բուզանդի (Ե. դար, *Պատմութիւն հայոց*), Ղեւոնդի, (Ը. դար, *Պատմութիւն*), Յովհան Մամիկոնեանի (Ժ. դար, *Տարօնի պատմութիւն*), Արիստակես Լաստիվերցու (ԺԱ. դար, *Պատմութիւն*) Կիրակոս Գանձակեցու (ԺԳ. դար, *Հայոց պատմութիւն*), Առաքել Դարիժեցու (ԺԷ. դար, *Պատմութիւն*), Զաքարիա Քանաքեռցու (ԺԷ. դար, *Պատմագրութիւն*) եւ այլ մատենագիրների վկայութիւններում, միջնադարեան առակագրութեան մէջ՝ Մխիթար Գօշ (ԺԲ. դար), Վարդան Այգեկցի (ԺԳ.ԺԴ. դարեր):

Բանագէտ Արամ Ղանալանեանի բնութագրմամբ՝

¹ Ստորին առասպելաբանութիւնը բազմագործառութային համակարգ է ազգագրութեան եւ բանագիտութեան մէջ, որը համակողմանիօրէն ուսումնասիրում է չար եւ բարի ոգիների մասին հաւատալիքներն ու պատկերացումները: Ստորին առասպելաբանութեան մէջ են մտնում աստուածների կարգավիճակ չունեցող առասպելաբանական արարածներ, տարատեսակ դէտեր եւ ոգիներ, որոնք միջամտում կամ խառնում են մարդկային կեանքին, հանդիպում են մարդկանց հետ, վերածում մարդկանց:

ժողովրդական բառ ու բանի նկատմամբ հետաքրքրությունը 19րդ դարի 70-80-կաններին դառնում է գիտակցում անհրաժեշտություն, եւ ի յայտ է գալիս բանագիտությունը՝ որպէս ուրոյն ու կարեւոր մի բնագաւառ²:

Եւ այս բնագաւառի կայացման ու հիմնադրման առաջամարտիկը Գարեգին վարդապետ Սրուանձտեանցն էր: Բնագաւառի երախտաւորներից են նաեւ Խաչատուր Աբովեանը, Միքայէլ Նալբանդեանը, Ստեփանոս Պալասանեանը, Գէորգ Ախվերդեանը, Միքայէլ Միանսարեանցը:

Հոգեւոր հովուի եւ ուսուցչի պարտականութիւններին զուգընթաց՝ Սրուանձտեանցը խորապէս լծում է իր ժողովրդի բառ ու բանին, կենցաղին ու սովորոյթներին, հոգեւոր ու նիւթական մշակոյթին առնչուող նիւթերի գրառմանն ու ուսումնասիրմանը: Բանահաւաքներից նա առաջինն էր, ում ուշադրութիւնից չվրիպեց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող եւ նրա կենցաղի ու առօրեայի մաս կազմող հաւատալիքները, նախապաշարումները: Նա նկատեց, որ ժողովրդի մէջ կան տարածուած բազմաթիւ սնտիապաշտական զրոյցներ ու սովորոյթներ, որոնք կարօտ են գրառման եւ ուսումնասիրման:

ԴԵՒԵՐԻ, ԴԻՒԱՀԱՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԴԻՒԱՀԱԼԱԾՈՒԹԵԱՆ ԾԷՍԻ ՄԱՍԻՆ
ԶՐՈՅՏՆԵՐԸ ԳՐՈՅ ՈՒ ԲՐՈՅ ԵՒ ԹՈՐՈՍ ԱՐԲԱՐ
ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Ժողովրդի մէջ առկայ հաւատալիքային պատկերացումներին ու դրանց հետ կապուած զրոյցներին Սրուանձտեանցը չէր կարող այլ բնութագրում տալ, քան «սնտիապաշտութիւն», «աւելորդապաշտութիւն», «անգիտաբար պահպանուող սովորոյթներ» եւն.: Նա բարձրաստիճան հոգեւորական էր, եւ որքան էլ իր մէջ կրում էր ժողովրդականը, ժողովրդական խօսքի, բառ ու բանի գրառողն էր ու մեկնիչը, այնուամենայնիւ, վերապահումներով էր մօտենում այս խնդրին: Նա համարում էր, որ գրի ու գրականութեան պակասից է, որ ժողովուրդը համատարած խաւարի ու մոլորութեան մէջ է: Երանի է տալիս այն ազգին, «որոյ մայրերը ուսեալ են եւ անոնց զաւակներն ալ իրենց արգանդէն ուսեալ կը ծնանին»³:

Սկզբնաղբիւրային նշանակութիւն ունեն բանահաւաքի գրառած զրոյցները դեւերի, դիաբոնակ վանքերի, դիախարների ու դիախալածութեան ծէսի մասին: Գրոց ու բրոցում Սրուանձտեանցը նախ ներկայացնում է հեքիաթներում հանդիպող դեւերի ընդհանուր բնութագիրն ու հիմնական գործառոյթները: Նրա բնորոշմամբ «Դեւը սովորաբար ժողովրդական վէպերու մէջ դիւցազնի նշանակութիւն ունի կամ հսկայի, փիտանի: Այսօր եւս եթէ յաղթող եւ հսկայ մէկի մը նկարագիրն ընեն, դեւ կամ աժպահար բառերը

² Ա. Ղանալանեան, Դրուագներ հայ բանագիտութեան պատմութեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 18:

³ Գ. Սրուանձտեանց, Երկեր, հտր. 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 158:

կը գործածեն եւ միշտ այսպէս հասկցուած է, թէ դեւերը լեռներ ու այրերը կը բնակին, անոյս գրերը, անջուր հորերը եւ անջրդի անապատները: Թէ անոնցմէ մեկը հազար մարդու կրնայ յաղթել, լեռներու չափ քարեր կրնայ վերցնել դնել, մարդու միս կ'եփեն, կ'ուտեն» են.⁴: Ստուգաբանելով «դեւ» բառը՝ բանահաւաքն այն համարում է «դիւցազն» բառի արմատ⁵:

1878 եւ 1879ին Սրուանձտեանցը երկու անգամ Կ. Պոլսից մեկնում է Արեւմտեան Հայաստան, շրջում գրեթէ ողջ տարածքով: Ազգագրագէտ Վարդ Բդոյեանի բնութագրմամբ՝ «նա իր ուղեւորով է գծել Հայաստանի 19րդ դարի երկրորդ կէսի քարտէզը»⁶: Այս ուղեւորութիւնների ընթացքում հաւաքած նիւթի հիման վրայ գրում է *Թորոս Աղբար* գրքի երկու հատորները:

*Գրոց ու բրոց եւ Թորոս Աղբար*ում հեղինակը ներկայացնում է Մշոյ Սուրբ Կարապետ եկեղեցում բնակուող Կաղ դեփ, Կոնոնոսի վանքում կարասների մէջ գմռած դեւերի բանակի, Վասպուրականի Անձեաց գաւառի Հոգուոց Վանքի Ղուդրաթ Խաթուն դեփ մասին գրոյցները, որոնք իրենց գործառոյթներով ու բնաւորութեամբ խիստ տարբերում են Սրուանձտեանցի նկարագրած հեքիաթային դեւերից: Հրաշապատում հեքիաթներում դեւերը սովորաբար նկարագրում են իբրեւ երեք, հինգ, եօթ, քառասուն գլխանի հսկայ, գերբնական ուժի տէր արարածներ: Նրանք հեքիաթային բարիքների, գեղեցիկ արքայադուստրերի յափշտակողներ են, աւազակութեամբ զբաղուողներ, մարդկային ցեղի թշնամիներ: Հեքիաթներում հանդիպող դեւերի կամ վիշապների գործառոյթներն ու յատկանիշերը Սրուանձտեանցը բնութագրում է՝ ասելով. «թէ՛ անոնցմէ մեկը հազար մարդու կրնայ յաղթել, թէ՛ լեռներու չափ քարեր կրնան վերցնել դնել, թէ՛ մարդու միս կ'եփեն, կ'ուտեն, թէ թագաւորի աղջիկ կը գողնան, կը տանին իրենց կին ընելու համար եւ այդ աղջկանց առջեւ շատ անձնանուէր եւ հպատակ կը մնան»⁷: Ժողովրդական գրոյցների ենթախորքում քննուող դեւը *դեմոն* է եւ օժտուած է չար ոգիներին բնորոշ բոլոր յատկանիշերով: Դեւը ստորին առասպելաբանական կերպարներին տրուող ընդհանուր անուանում է, որն իրականացնում է չարի մարմնաւորում ընկալուող սատանայի գործառոյթները⁸: Կաղ դեփ մասին նրա գրառած վիպերգը, որի բազմաթիւ տարբերակներ բանահաւաքների կողմից գրառուեցին յետագայում, լատգոյններից մէկն է, եւ միակ տարբերակը, որտեղ դիւամարտիկ հերոսը Գրի-

⁴ Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հյր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 59:

⁵ Նոյն, էջ 60:

⁶ Նոյն, էջ 7:

⁷ Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հյր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 59-60:

⁸ Յասմիկ Գալստեան, «Դեւը հայ ժողովրդական սնահաատական գրոյցներում», *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատ., Երեւան, 2019, էջ 186:

գոր Լուսաւորիչն է: Միւս տարբերակներում, որպէս դիւանարտիկ, հանդէս են գալիս Ս. Կարապետն⁹ ու Յիսուս Քրիստոսը:

Լուսաւորիչը ժողովեց դիւան լըցեց զնդան:

Կաղ Դեն եկաւ ասաց, եաման.

Ձիւ մի դներ զնդան.

Ես կ'եղնիմ Սուրբ Կարապետու փոշեհան,

Տանիմ թափեմ Փրեբաթման,

Մինչ օր Քրիստոս գայ դատաստան¹⁰:

Մշոյ Ս. Կարապետ եկեղեցու Կաղ դեփ ասանդութիւնը ներկայացնելուց յետոյ Սրուանձտեանցը այն համարում է «ազգի պարզամտութեան արգասիք»: Ինչպէ՞ս կարող է սոսկ Քրիստոսի անունից սարսափող, սրբերի անունը յիշատակելիս՝ կործանուող, խափանուող դէը (սատանան) ապրի Աստծոյ տանը եւ «Սրբոց վկայարանից» մէջ: Ճառով ու ափսոսանքով հարցնում է, թէ վանքեր այցելող ուխտաւորներից կամ թեմականներից քանի՞սը գիտեն կամ ուզում են իմանալ տաճարների մէջ ննջող մեր ազնիւ նախնիների գերեզմանների մասին, իսկ կաղ դեփ մասին բոլորը գիտեն եւ վերջինիս չգոյութիւնն ապացուցելն ուղղակի պարապ զբաղմունք է¹¹:

Յատկապէս ուշագրաւ են Սրուանձտեանցի՝ դէպի Չարսանճաք կատարած ուղեւորութեան ժամանակ դիւահարութեան եւ դիւահալածութեան ծէսի մասին կատարած գրառումները. «Գաւառիս հայն տղայ լինելով հանդերձ՝ իր պահքին, հաւատքին եւ աղօթքին պինդ է: Ինչպէս բնական է այսպիսի տեղեաց, կախարդական բաներու վրայ շատ կը խօսին, եւ թուղթ նայելու, գրելու շատ կը հաւատան»¹²: Ըստ բանահաւաքի գրառումների՝ չարսանճաքի ֆրանգ Կարապետի հիւանդ հարսին համայնքում «դիւանական» (դիւահար) են ախտորոշում: Որոշում են, որ ջին ունի: Թիլ գիւղի մուլային են բերում, որ ջիներին հաւաքի: Վերջինս դանակի շեղով գետնից «հաւաքում է ջիներին» ու լցնելով եղէգի մէջ՝ զմոսում: Պնդելով, որ հաւաքել է բոլոր ջիներին՝ մոլլան եղէգը տալիս է ֆրանգ Կարապետին, որ տանի, մի տեղ հորի եւ գումար վերցնելով՝ հեռանում է: Արդիւնքում հարսը չի բուժում: Ներկայացնելով իր գրառած գրոյցը՝ բանահաւաքը որակում է այն որպէս «խաբերայ բաներ»¹³: Սրուանձտեանցը խղճահարութեամբ է խօսում պարոն Գասպարի «զոհերի» մասին, ովքեր ախ ու վախով են անցկացնում իրենց կեանքը: Վերջինս «Գիր Սողոմոնի» կոչուող մատեանով գուշակութիւններ է անում, «բժշկում» մարդկանց, «դեւերից ազատում»:

⁹ Ար. վրդ. Սեդրակեան, *Քնար մշեցոց եւ վանեցոց*, Վաղարշապատ, 1874, էջ 7:

¹⁰ Սրուանձտեանց, *Երկեր, հպր. 1*, էջ 75:

¹¹ Սրուանձտեանց, *Երկեր, հպր. 2*, էջ 93-95:

¹² Նոյն, էջ 388:

¹³ Նոյն:

Միջնադարեան ձեռագրերում առկայ նիւթի եւ ժողովրդական գրոյցների համաձայն՝ մարդու մէջ բոյն դրած դեւերը նախընտրում են անյայտ մնալ եւ ամէն ինչ անում են իրենց անունը գաղտնի պահելու համար: Դիւահալածի համար կարեւոր նախապայման է դելի անունը իմանալը, որպէսզի կարողանայ վերջինիս հանել կամ վռնդել մարդու միջից: Ժողովրդի մէջ տարածուած էր այն հաւատալիքը, որ «անունը անհատի մի մասն է: Տիրել մի մարդու անունը՝ միեւնոյն է, թէ փրկել նրա էութեան մի մասին, եւ այն փալիս է փրկողին իշխանութիւն՝ վնաս հասցնելու այդ անձին. եւ սրանից առաջանում է շատ ժողովուրդների մէջ փրկող սովորութիւնը՝ խստութեամբ ծածկել անունը»¹⁴: Այս «օրէնքը» գործում է նաեւ դեւերի յարուցած հիւանդութիւնների բուժման ժամանակ: Սրուանձտեանցը մէջբերում է. «Կոչեաց Սողոմոն զդեւսն եւ ասէ. Ասա ինձ զի՞նչ է անուն քո: Ասէ դեւն, անունն իմ Սէրլիք է, եւ մեք թուով բազում եմք: Ասէ Սողոմոն, զի՞նչ չարիք առնէք մարդոց: Ասէ՛ դեւն, մենք բնակիմք ի ջուրս եւ ի ջրհորս, հարկանեմք զմարդ եւ զարհուրեցուցանեմք, խաւարեցուցանեմք զաչս եւ ցաւեցուցանեմք զմէջս եւ զգլուխս, երեւիմք երբեմն ի ձեւ աղջկան, երբեմն ի կերպարանս անասնոց: Ասէ Սողոմոն, ասա ինձ, ով պիղծ, զի՞նչ է ճար եւ դարման այդ ցաւոց: Ասէ դեւն. Սեւ ազլոր զենույ, արհիւնով գրել զայս թիսմ, ի ջուր դնել եւ խմել, չորս գլուխ Աւերարան կարդալ, եւ Ս. Յակոբայ մոմ վառել, եւ հարիւր ծունր դնել»¹⁵: Ժողովրդի պատկերացմամբ՝ մարդու բոլոր հիւանդութիւնները դեւերից ու սատանաներից են եւ տարատեսակ մոգական հնարքներ են գործադրում բուժման համար: Բանահաւաքը նկատում է, որ, այնուամենայնիւ, «բարեպաշտօրէն կը յայտնեն, որ այսինչ ախտով բռնուածն այնինչ վանքն երթայ, Անարծաթ բժշկաց գերեզմանը յուխար կը խրկեն ծննդկանն, ուրքի ցաւէ բռնուողն՝ Ս. Խաչի վանքը, սրտի ցաւէ բռնուողը Նարեկ թող կարդալ փայ, եւ գլխացան՝ Աւերարանը են.»¹⁶:

Սրուանձտեանցը մարդկանց «երեւակայութեան պտուղ» է համարում «աներեւոյթների» կամ «սեւ արաբների»¹⁷, Քեղուա գետից ջուր խմելու եկած վիշապների մասին իր լսած ու գրառած գրոյցները: Ափսոսանք է յայտնում, որ իր պաշտօնը թոյլ չի տալիս գնալ այն բոլոր վայրերը (ծորեր, լեռների խորշեր են.), որոնց մասին անհաւանական գրոյցներ են պատմում մեծ հաւատով ու զգուշութեամբ:

¹⁴ Ե. Լալայեան, «Ծիսական կարգերը հայոց մէջ», *Ազգագրական հանդէս*, գ. XXI, 1911, էջ 176:

¹⁵ Սրուանձտեանց, *Երկեր, հտր.* 2, էջ 390:

¹⁶ Նոյն:

¹⁷ Նոյն, էջ 392:

ՍՏՈՐԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑՆԵՐԸ
ՄԱՆԱՆԱՅԻ ԷՋԵՐՈՒՄ

1876ին հրատարակած *Մանանա* ժողովածուի «Համ եւ հոտ հայրենեաց» բաժնում Սրուանձտեանցը ներկայացնում է ժողովրդի նախապաշարմունքներն ու սովորոյթները: Որպէս մանանա, որպէս «Հայաստանի գագային»՝ բանահաւաքն ընթերցողին մատուցում է իրենցից իսկ գրառած գրոյցները: Արժեւորելով բանահիւսակաւ նիւթերի գրառման կարեւորութիւնը՝ Սրուանձտեանցը վստահօրէն ասում է, թէ «այսպիսի գործ մը պատրաստել եւ ի լոյս ածել՝ ասելի վաստակ կ'առթէ գրասիրի մը, քան ՚ի նորոյ բան մը հեղինակել»¹⁸: Րաֆֆու բնորոշմամբ՝ «Մեր գրականութեան մէջ ոչ ոք Սրուանձտեանցի չափ չէ ուսումնասիրել եւ չէ հաւաքել մեր ժողովրդական ասանդութիւնները, սովորութիւնները, մեր նախապաշարումները»¹⁹:

Ստորին առասպելաբանութեանն առնչուող նիւթը *Մանանայում* կարելի է խմբաւորել երկու հիմնական բաժիններով.

1. Զրոյցներ չար եւ բարի ոգիների մասին,
2. Ոգիների յարուցած հիւանդութիւններ եւ դրանց բուժման ժողովրդական միջոցներ:

Առաջին բաժնի մէջ կարելի է ընդգրկել ձիերի բաշը հիւսող փերիների, մեղաւոր հանգուցեալներին տանջող չար ոգիների՝ գոռնափշտիկների, դեւերի եւն.ի մասին գրոյցները: Այս բնագրերում Սրուանձտեանցը միեւնոյն ժամանակ տալիս է ոգիների անուանումների բարբառային տարբերակները (գոռնափշտի (Մուշ), գոռնադաբ (Վան) եւն.):

Երկխօսութիւնների ու անմիջական գրոյցների միջոցով²⁰ Սրուանձտեանցը շարունակում է պատմել, ընթերցողին ներկայացնել սատանաների ու գրողների, ջաղի եւ սեւ պառուլների, դժոխքի ու դրախտի բնակիչների մասին գրոյցներ:

Երկրորդ բաժնում խմբաւորում են ժողովրդական նախապաշարումների, չար աչքի, հիւանդութիւնների եւ դրանց բուժումների ժողովրդական տարբերակների մասին բազմաթիւ յիշատակումներ (օրինակ՝ զոյգ փոշտաւը ջախտ է, յաջողութիւն գուշակող, իսկ կենտը՝ սաբր է, սկսած գործը պէտք չի շարունակել: Ճանապարհ գնացող հեծեալի գործի յաջող կամ անյաջող ասարտը գուշակում էին նրա ձիու տրամադրութիւնից եւն.): Չար ոգիների ներգործութիւնը, որի հետեանքով մարդիկ զանազան հիւանդութիւններ են ձեռք բերում, ըստ Սրուանձտեանցի գրառումների՝ կոչւում են «աչք առնել», «չարոց պատահել», «հրեշտակակոխ լինել», «գրողի զարկած», «թալ-

¹⁸ Սրուանձտեանց, *Երկեր, հպր. 1*, էջ 119:

¹⁹ Փաստոս, «Պ. Հայկունու կրիտիկան եւ "Կայծերը"», *Մշակ*, 1883, № 144, էջ 2:

²⁰ Բանահիւսակաւ եւ ազգագրական նիւթերի գրառման խմբային եղանակը կիրառեց նաեւ Աղեքսանդր Մխիթարեանցը՝ Շիրակում (Աղ. Մխիթարեանց, *Էմիներան ազգագրական ժողովածու, հպր. Ա.*, «Փշոանք Շիրակի ամբարներից», Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901):

կացած»²¹ են.: Եթէ վախից առաջացած հիանդութիւն է, ապա «վախերակ» կը բռնէ (մամիկը), կ'աղօթէ, եւ կը պատուիրէ, որ ժամը տանի, եօթն գլուխ Աւետարան կարդալ տայ վրան եւ եօթն դոյլ ժամի ջրհորէն ջուր թափէ վրան, եօթն մոմ վառէ, կամ տղու հասակի չափով մոմ մը տանի Նարեկայ, կամ Տիրամօր, կամ Ս. Նշանայ»²²:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցն առաջինն էր, ով գրառեց ստորին առասպելաբանական կերպարների՝ ոգիների մասին գրոյցները եւ հաւատալիքային դրսեւորումները ժողովրդի մէջ: Մանկուց հետաքրքրուած լինելով տարբեր պատմութիւններով ու գրոյցներով՝ յետագայում ինքն էր վերապատմում իր ընկերներին իր մեծերից լսածները:

2. Տուեց ոգիների բնութագիրը ու փորձեց բացատրել ժողովրդի մէջ դրանց առկայութեան պատճառներն ու հանգամանքները:

3. Ազգագրական տարբեր շրջաններում առկայ գրոյցների սիւժէների նմանութիւնն ու տարբերութիւնը բացատրեց աշխարհագրական եւ բնակլիմայական պայմանների հանգամանքով: Նրա կատարած գրառումների եւ արած հպանցիկ դիտարկումների հիման վրայ յետագայ ուսումնասիրողները՝ Մանուկ Աբեղեան, Արտաշէս Նազինեան, Ալվարդ Ղազինեան, փորձեցին կատարել ոգիների դասակարգում՝ անտառների, ջրերի, լեռների, հողմի, ծառերի, բոյսերի, սուրբ ջրերի են.:

4. Տուեց միեւնոյն ոգու տարբեր անուանումները՝ ըստ ազգագրական շրջանների (Վանում գոռնադաբ, Մուշում՝ գոռնափշտիկ), կատարեց որոշ անուանումների ստուգաբանութիւն (դեւ-դից):

5. Քաջատեղեակ լինելով հայ պատմագիրների գործերին՝ իր գրառած գրոյցներին զուգադրում է պատմիչների վկայութիւնները՝ չար ասքի մասին գրոյցները ներկայացնելիս համեմատում է Երուանդի առասպելի հետ՝ մէջբերում կատարելով Խորենացուց, դեւերի մասին խօսելիս՝ յիշում է Պապ թագաւորին, գոռնադաբների մասին պատմելիս՝ Ղարաչորակի պատմութիւնը Առաքել Դարիժեցու պատմութիւնից են.:

6. Սրուանձտեանցի *Գրոց ու բրոց...*, *Մանանա*, *Համով-հոյով*, *Թորոս Աղ-բար* ժողովածուները դարձան այն սկզբնաղբիւրները, որից մինչեւ այսօր օգտուում են հայագիտութեամբ զբաղուող գիտնականներն ու հետազօտողները:

²¹ Սրուանձտեանց, *Երկեր, հպր. 1*, էջ 141, 159:

²² Նոյն, էջ 141:

BISHOP KAREKIN SRVANTSZIANTS AS THE FIRST WRITER AND COMMENTATOR
OF STORIES ABOUT MYTHICAL CHARACTERS OF THE LOWER WORLD
(DEDICATED TO THE 150TH ANNIVERSARY OF THE FIRST EDITION OF THE *GROTS
OO BROTS YEV SASSOONTSI DAVIT GAMMHERI DUR* COLLECTION)
(SUMMARY)

HASMIK GALSTYAN
hasmikgalstyan1979@gmail.com

Bishop Garegin Srvantsdztiants in his folk and ethnographic writings allocated a significant place to Armenian folk beliefs and prejudices. In the books he published, like *Grots Oo Brots*, *Manana* and *Toros Aghbar*, he repeatedly referred to folk stories about spirits, belief manifestations, rituals and customs.

Srvantsdztiants was the first among the Armenian folklorists who did not disregard the beliefs and prejudices that existed among the people and constituted a part of the folk's everyday life. He observed that "there are many superstitious stories and customs prevalent among the people, which long for recording and study."

Based on his written materials, Srvantsdztiants gives the characteristics of the spirits and explains the origins, reasons and circumstances of these beliefs. Furthermore, by presenting specific tales, Srvantsdztiants highlights folk beliefs about mythological characters who lived in the lower world. Scattered throughout his writings are numerous references to superstitions, the evil eye, diseases and folk versions of their cures.

Emphasizing the role of education among the common people, Srvantsdztiants attributes the variety of popular stories about spirits, living rooted beliefs and prejudices to the lack or complete absence of education among the people.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՂՕԹԱԳՈՐԳԵՐԻ ՀԱԻԱՔԱԾՈՒՆ

ԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ
amkhitaryan89@gmail.com

Առաջատրաստական գորգերի շարքում առանձնայատուկ տեղ ունի խորանագորգը՝ կրօնաժխական նշանակութեան առարկայ, որը բնորոշում է գեղազարդման համակարգի իրայատուկ կառուցումը: Արդարեւ, խորան գծաձեւով ներկայացող գորգերը ճանաչում ունեն որպէս աղօթքի գորգեր, կամ աղօթագորգեր¹, որոնք յայտնի են նաեւ *սեճապոլէ* անունով²: Սեճատախալի բառը յիշատակուած է Սիմէոն Դպիր Լեհացու (ԺԷ դար) վկայութիւնում³: Այս տիպի գորգերը առանձնանում են ներյատուկ զարդայօրինումով՝ ճարտարապետական եւ զարդային տարրերով: Սրանք լինում են սինազարդ եւ առանց սինների, վերջիններս աւելի ուշ շրջանում են ստեղծուել՝ պահպանելով միայն խորանախորշի ուրուագիծը: Ըստ Վոլֆգանգ Գանցհորնի՝ գորգերի այս անցումը տեղի է ունեցել 18րդ դարի առաջին կէսերում, երբ սկսում են աստճանաբար անհետանալ սինները⁴: Այդուհանդերձ, սիններով գորգեր յետագայում նոյնպէս գործուել են: Սինազարդ գորգերի պատկերման ձեւերը մօտ են եկեղեցիների ներքին կտրուածքին՝ սիներով, շղթայակախ կանթեղով: Աղօթագորգերի երկրորդ տարբերակում՝ տարբեր գորգատեսակներ են, շրջանակուած կամարաուրուագի մէջ, որտեղ հիմնականում բացակայում են սինները:

Խորանաւոր աղօթքի գորգերը մահմեդական աշխարհում յայտնի են *նամազլիկ* անունով⁵: Այս գորգերը համարում են յատուկ գորգ, որի վրայ մուսուլմանները կատարում են իրենց աղօթքը՝ նամազը: Կառուցումաբանական ձեւը համապատասխանում է նպատակին: Ունեն կամարածեւ խորշ՝ մահմեդական աշխարհում յայտնի *մեհրաբ* անուանումով՝ սլաքածեւ

¹ Յարութիւն Քիրտեան, *Գորգը հայոց մօտ*, Վենետիկ-Ս.Ղազար, 1947, էջ 45:

² *Սեճապոլէ*՝ գորգ, որի վրայ աղօթում են մահմեդականները (Մ. Աբիկեան, *Գործնական բառարան փաճկերենէ հայերէն*, փորագրիչ Սերվիչէն տպագրութիւն եւ վիճակագրութիւն, Կ.Պոլիս, 1893, էջ 282. նաեւ՝ Մխիթար աբբա, *Բառգիրք հայկազեան լեզուի, հպր. երկրորդ*, 1769, Վենետիկ, տպ. Անտոնի Պոռթոլի): *Սեճապոլէ*, *Սեթճապոլէ*՝ ազնիւ խալի, օթոց: Սեճուէ՝ երկրպագութիւն բառից է առաջացել, էջ 571-72:

³ Քիրտեան, էջ 45:

⁴ Վ. Գանցհորն, *Քրիստոնեայ-արեւելեան գորգը, ակունքներից մինչեւ XVIII դարն ընկած պարկերագրական եւ պարկերագիտական զարգացման ուրուագիծ*, Աստղիկ, Երեւան, 2013, էջ 484:

⁵ John Kimberly Mumford, *Oriental Rugs*, Charles Scribner's Sons, New York, 1900, էջ 94:

ելա-տով դէպի մուսուլմանական աշխարհի հոգեւոր կենտրոն՝ Մեքքա քաղաքն ուղղուած⁶: Մզկիթում այն տեղադրում է անմիջապէս աղօթախորշի (Qibla) դիմաց՝ ցոյց տալով Մեքքայի ուղղութիւնը, եւ այդ ուղղութեամբ էլ հաատացեալները պէտք է աղօթեն⁷: Զարդարում են կրօնական, ծիսական խորհրդանիշերով՝ սանր, ջրի սափոր, որոնք մուսուլմաններին յիշեցնում են, որ պէտք է ձեռքերը լուանալ ու սանրել մօրուքը նախքան աղօթքը սկսելը, իսկ կովկասեան գորգերում երբեմն ձեռքեր են պատկերուած, որ ի ցոյց տրուի որտեղ դնել ձեռքերը: 17-18րդ դարերի աղօթագորգերը (այսօր յայտնի որպէս թուրքական) յաճախ կոչուում են նաեւ տրանսիլվանեան կամ զիբենբուրգեան, քանի որ բազմաթիւ գորգեր պահպանուում են Տրանսիլվանիայի եկեղեցիներում. երկիր, որը երկար ժամանակ գտնուել է Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ⁸:

Աղօթագորգերը որպէս տեսակ շրջանառուում էին կրօնական խստութիւններով եւ գործառոյթներով, դրանք մեծ տարածք են ընդգրկել եւ հետեաբար դրսեւորուել են տարբեր ազգերի եւ գորգագործների մատուցած ոճերի բազմազանութեամբ: Աղօթագորգերը հնարաւոր չէ շփոթել այլ գորգերի հետ: Պարսկական գորգերում կամարը աչքի է ընկնում կորագիծ ձեւերով, իսկ կովկասեան ու փոքրասիական գորգագործական կենտրոններում ստեղծուածներում՝ ուղղագիծ, սրածայր: Փոքրասիական աղօթագորգերին բնորոշ է հարթ դաշտը, մինչդեռ կովկասեան եւ թիւրքմէականներին՝ զարդանախշերով լցուած դաշտը⁹: Չնայած այս աղօթագորգերը մեր օրերում ճանաչում են գտել որպէս մահմեդական կրօնական արարողակարգի մասնիկ՝ նրանց ստեղծման ակունքներում քրիստոնէական մշակոյթն է հիմնաւորուած:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հայկական բազմադարեայ մշակոյթում հիմնաւորուած կամարագիծը, որն այդչափ առատօրէն իր տեղն է գտել խաչքարերի, եկեղեցու ներքին ու արտաքին յարդարման, շքամուտքերի, վարագոյրների, հանդերձանքի, մանրանկարչութեան մէջ՝ անմասն չէր թողնի նաեւ գորգը: Ըստ ճարտարագէտ Սարգիս Ճեաւհիրճեանի՝ Հայաստանի մէջ կամարի գործածութիւնը գոյութիւն ունէր հեթանոսական շրջանում, երբ հայկական մեհեաններ

⁶ Dr. G. Griffin Lewis, *The Mystery of the Oriental Rug*, J.B. Lippincott Company, Philadelphia and London, 1914, էջ 34:

⁷ A. F. Kendrick, *Hand-woven Carpets Oriental and European, Vol 1*, Charles Scribner's Sons, New York, 1922, էջ 53:

⁸ Dr. Maurice S. Dimand, *Peasant and nomad rugs of Asia*, Asia house gallery, New York, 1961, էջ 16:

⁹ Dr. G. Griffin Lewis, *The Practical Book of Oriental Rugs*, printed by J.B Lippincott company at the Washington square press Philadelphia, Philadelphia & London, U.S.A., 1913, էջ 322-23:

րը ծածկուած էին քարաշէն կամարակապ տանիքներով: Արտաքին սիւնաշարերի վրայ հայ վարպետները դնելով աղեղներ, կամարներ, ստեղծում են սինազարդ ծածկոցի հայկական կամարակապ դրոսիւնը¹⁰: Յետագայում որմերի կամարակապ սինազարդումը անցաւ քրիստոնէական ճարտարապետութեան մէջ: Չնայած որ քրիստոնէական ճարտարապետութեան պահանջները կտրատեցին, ձեւափոխեցին մեհեանները, բայց թողեցին որոշ ձեւեր¹¹: Ճարտարապետութեան մէջ կենսահիմք հանդիսացող այս կորագիծը իր գեղարուեստական ազդեցութիւնն ունէր հարեան այլ ժողովուրդների մշակոյթի վրայ: Այդ փոխազդեցութիւնների զարգացման ընթացքում, բնականաբար օտարները կը դնէին իրենց կնիքը, երանգը, որով, այսպէս ասած, սեփականաշնորհում է փոխառութիւնը:

Հայկական ճարտարապետական կամարի ազդեցութիւնը այլ ժողովուրդների արուեստների վրայ նկատել են մի շարք գիտնականներ: Հինգերորդ դարից Հայաստանում սովորական էին պայտածեւ աղեղները եւ կամարները, եօթերորդ դարում օգտագործում էին նաեւ *ogive* (հայկական աղեղախորձ) կոչուած ձեւերը: Հնագիտական աշխարհի մէջ ընդունուած կարծիք էր պայտածեւ աղեղները համարել արաբական ոճի ծնունդ: Բայց ֆրանսիացի ճարտարապետ, հնագետ Շարլ Թեքսիէն տեսնելով Տեկորի եկեղեցու կամարները՝ արդարացի կերպով յեղաշրջեց այդ կարծիքը բացատրելով, որ տասներորդ դարում ծաղկող արաբական կարծուած աղեղների նախատիպը Հայաստանի մէջ գոյութիւն ունեցել է դեռ հինգերորդ դարում, հետեւաբար՝ հայերն են այդ ոճը տուել արաբներին¹²: Ճեւահիրճեանը յօդուածաշարքով նաեւ խօսում է գոթական ճարտարապետութեան մէջ հայկական աղեղախորձերի ազդեցութեան մասին՝ օրինակ ունենալով մի շարք հայկական եկեղեցիների՝ Հռոմոսի, Հաղպատի վանքերի ներքին կամարախորձերը¹³: Պատմական Հայաստանում հայկական ոճով կառուցուած շէնքերն ու եկեղեցիները վերածուել են մզկիթների (օրինակ՝ Ախլաթում գտնուող թուրքական գերեզմանը եւ Իքի Դուրբէ երկու շէնքերը՝ կառուցած հայկական ոճով)¹⁴:

¹⁰ Ա. Ճեւահիրճեան, «Սինազարդ ծածկոցի դրոսիւնը եւ կամարակապ զարդասիւները հայկական ճարտարապետութեան մէջ», *Բազմավէպ*, 1-12:1942, էջ 43, 36:

¹¹ Ա. Ճեւահիրճեան, «Սինազարդ ծածկոցի դրոսիւնը եւ կամարակապ զարդասիւները հայկական ճարտարապետութեան մէջ», *Բազմավէպ*, 1-6:1943, էջ 19:

¹² Թ. Թօրամանեան, «Հայ ճարտարապետութեան շրջանները», *Անահիպ*, 1-2:1911, Փարիզ, էջ 20, 2:

¹³ Ա. Ճեւահիրճեան, «Հայկական կամարը գոթական ոճին մէջ», *Բազմավէպ*, 2-3:1940, էջ 43. նաեւ նոյն՝ 8-12:1940, էջ 173. նաեւ նոյն՝ 1-12:1941, էջ 17:

¹⁴ Գէորգ-Մեսրոպ, «Հայ ճարտարապետութիւնը եւ իր ազդեցութիւնը դրացի ազգերու վրայ», *Հայ գրականութիւն*, 4:1913, էջ 6-7:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցական գորգերի կիրառության մասին գոյություն ունեցող պատմական սկզբնաղբիւրներից վաղագոյնը վերաբերում է չորրորդ դարին, իսկ ընդհանուր առմամբ՝ աղօթագորգերի մասին տեղեկութունները սակաւաթիւ են, չնայած՝ թանգարաններում ու մասնատր հաւաքածուներում պահպանուող բազում նմուշների, ինչը փաստում է դրանց գոյութիւնը հայկական արուեստում եւ հայերի ունեցած դերը աղօթագորգերի արտադրութեան գործում: Այս տեսակի գորգերը ծառայում էին «Ամենասրբազնագոյնի» վարագուրման համար, ինչպէս Գանցհորն է նշում: Դա կարող էր լինել հայկական խորանային ասանդատունը, կամ էլ «Սրբութիւն սրբոց»ի Սեղանի խորհրդանոցը՝ նախկինում յաճախ նշուած որպէս տաճարիկ, կամ խորանի տարածքում եղած որմնախորշը, որոնք Ս. Սահակի կանոնագրքի ցուցմունքների համաձայն, ենթակայ էին արժանավայել զարդարման¹⁵:

Հայկական եկեղեցական ճարտարապետութեան անբաժանելի մաս է դիտում մկրտութեան աւազանը: Միջնադարեան եկեղեցիներում աւազանները հիմնականում գտնուում էին խորանի աջ կողմում՝ հիւսիսային պատի մէջ տարբեր խորանածեւ փորուածքներով¹⁶: Առանձին դէպքերում որոշ օրինակներ - ինչպէս Շինուհայրի Կուսանաց անապատի եկեղեցու մկրտութեան աւազանը¹⁷ - ունեն ուղղանկիւն տեսք, աղեղնանածեւ խորշով՝ նման գորգի: Հայ Առաքելական Եկեղեցու կարեւոր խորհուրդներից է մկրտութիւնը. այն կրում է հոգեւոր վերածննդի խորհուրդը: Ուստի՝ մկրտութիւնից յետոյ դէպի յափտենական կեանք տանող այս դուռ յիշեցնող տարածքը պէտք է զարդարուէր ըստ արժանուոյն: Ենթադրում ենք, որ հայոց մէջ խորանաւոր գորգերը ծածկել են մկրտութեան աւազանը:

Հայկական գորգագործական մշակոյթում խորարանապատկեր գորգի պահպանուած հայատառ յիշատակարանով ամենավաղ օրինակներն են 1202ին գործուած «Եռախորան» եւ Գանձասարի՝ Ներսէս Յրդ կաթողիկոսին վերագրուող 1731ի գորգերը¹⁸: Չնայած որ Եռախորան գորգի ժամանակաշրջանի առնչութեամբ կան տարակարծութիւններ մասնագէտների մօտ, այդուհանդերձ այս օրինակները լաւագոյն վկայութիւնն են հայ մշակոյթում դրանց հնամենի կիրառութեան շուրջ: Նշենք որ, Հռիփսիմէի յի-

¹⁵ Գանցհորն, էջ 479, 484:

¹⁶ Ա. Յարութիւնեան, «Կիմագրական նոր վկայութիւն Մելիք Հայկազ Բ.ի գործունէութիւնից», *Սիոն*, 1-3:2021, Երուսաղէմ, էջ 126:

¹⁷ Նոյն, էջ 132:

¹⁸ Քիւրտեան, էջ 64, 68: Արձանագիր խորանագորգեր հանդիպում ենք նաեւ մասնատր հաւաքածուներում (տե՛ս՝ L.Der Manuelian, M. L. Eiland, *Weavers, Merchants and Kings, The Inscribed Rugs of Armenia*, Kimbell Art Museum, 1984, էջ 172, 186):

շատակարանով գորգը հնագոյն արձանագրութեամբ պահպանուած խորանագորգն է¹⁹:

Քիւրտեանն օգտուելով իր ձեռքի տակ եղած աղբիւրներից, մասնաւորապէս ճանապարհորդ Վ. Կ. Տուաթի 1835ին գրի առած մի վկայութիւնից, նշում է, որ Կարինի հայկական եկեղեցիներից մէկում տղամարդկանց հարուստ խաւը ծնրադրում է եկեղեցու աջ կողմում գտնուող գորգերի վրայ: Հեղինակը նաեւ մէջքերում է Նոր Զուղայի վաւերաթղթերից, որտեղ խօսուում է եկեղեցական գորգերի մասին: 1721ին Նոր Զուղայի դիւանից գրուած նամակում՝ ուղղուած Երնջակի Ս. Կարապետ եկեղեցու աթոռակալ վարդապետին, նամակագիրը նշում է ստացուած բազմաթիւ իրերի մէջ նաեւ «սկու խալիչայ...մէկ քարոզի խալիչայ»: Հեղինակի կարծիքով քարոզի գորգը քարոզողի ոտքերի տակ էր փռուում, իսկ սկիւի գորգ՝ սկիւի տակ, խորանի վրայ²⁰: Քարոզի գորգի յիշատակութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ այն յատուկ յարգարանքով զանազանուող եկեղեցական գորգ է եղել:

13րդ դարի արաբ պատմագիր Ալֆիֆտիի պատմագրութեան մէջ տեղ գտած մի երկխօսութիւնում յիշատակուած է ծրոգ դարի վերաբերող հայկական մի աղօթագորգ (*նամաղ*), որը ներկայացնում էր պարտէզային տեսարան՝ պատկերուած ծաղկուն այգի եւ զբօսանքի դուրս եկած բարձրախաւ տիկնայք²¹: Վաղ շրջանից հայկական արուեստի պահպանուած օրինակներից է 13րդ դարում Կիլիկիայում ծաղկած (1286) Հեթում Բ. թագաւորի Ճաշոցը (ՄՄ 979-6բ), որտեղ մանրանկարիչը Բարսեղ Կեսարացուն պատկերել է սինազարդ կամարագորգի մէջ: Այս պատկերը կրում է 13րդ դարի գեղարուեստական մշակոյթի ընկալման ու ընկերային գործառնան իւրայատկութիւնը:

19րդ դարում գորգերը մաս են կազմել եկեղեցական արարողակարգերի, պատարագի ժամանակ ժամարարը բենի առջեւ գորգ է դրել²²: Երուսաղէմում Ս. Ծննդեան ճրագալոյցի երեկոյեան, ըստ սովորութեան, հայոց պատրիարքը միաբանութեամբ հանդերձ Բեթղեհէմ է գնում, իջնում Ս. Այրը, խաչով, աւետարանով զարդարում, լցնում ամենայն կանթեղով, ջահով, մոմերով եւ արկանում գորգ թէ՛ սուրբ Ծննդեան Տեղի առջեւ եւ թէ՛ Մսուրի մօտ՝ ուխտ ու երկրպագութիւն անելով²³: 20րդ դարասկզբին Երու-

¹⁹ Գանցհորն, էջ 481, 484:

²⁰ Քիւրտեան, էջ 43-46:

²¹ Ա. Պողոսեան, «Եռախորան գորգի ծագումնաբանութեան հարցի շուրջ», *Էջմիածին*, Զ:2017, էջ 83:

²² *Կարգացոյց ըստ ասնդութեանց Հայաստանեայց Եկեղեցոյ*, տպ. Մ. Կ. Սարդեան, Կ. Պոլիս, 1888, էջ 11:

²³ Մկրտիչ վարդապետ Արծրունեան, *Սրորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի, քննութեամբ համառօտելալ ի Հաննա եւ ի Մարինոս պապմագրաց ընդ որս եւ յաւելելալ բազում բանս հանդերձ կարեւոր ծանօթութեամբք*, տպ. Ս.

սաղէմի Ս. Յակոբ վանքում եկեղեցական արժէքատու իրեղէնների, ձեռագործ հնագոյն գորգերի շարքում կային թանկարժէք մետաքսեայ *սեճճապիւններ*, որոնք դժբախտաբար այրուել են 1911ի հրդեհից²⁴:

ՀԱՅԵՐԸ ԽՈՐԱՆԱԳՈՐԳԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՒ ԻՐԱՅՈՒՄՆԵՐ

19-20րդ դարասկզբին Արեւմտեան Հայաստանի խոշոր քաղաքների եւ յատկապէս Փոքր Հայքի գորգագործական կենտրոններում տարատեսակ գորգերի կողքին մեծ թիւ են կազմում հիստաճ խորանագորգերը: Աղօթագորգերի արտադրութիւնը ոչ միայն կապուած էր հայ իրականութեան մէջ կիրառելով²⁵, այլ նաեւ մահմեդականների շրջանում սպառելու, իրացնելու հետ: Եւ քանի որ 19-20րդ դարասկզբին մեծ զարգացում ապրեց գորգի առեւտուրը²⁶, բնականաբար, գործելու էին գորգեր առաջնորդուելով նաեւ շուկայի պահանջներով: Հետեւաբար, սա պատճառ էր նաեւ որ հայ կանանց ձեռամբ հիստաճ գորգերի զարդարման մէջ օգտագործուէին հարեան ժողովուրդների մշակութային զարդատարրեր: Կեսարիայում, որտեղ ընդարձակ գործի վերածուցեց այս արհեստը, հայ վաճառականների շնորհիւ գորգերը դուրս էին բերում մեծ քաղաքների՝ Կ. Պոլսի, Եգիպտոսի, եւ Իզմիրի հրապարակներ վաճառքի²⁷: Այստեղ արտադրուող ճաշակատու գորգերի մէջ աչքի են ընկնում յատկապէս *սեճճապիւնները*, որոնք, փաստօրէն, աւելի նուրբ ու կենդանի գոյներով էին քան պարսկական գորգերը²⁸: Կեսարիան մետաքսեայ գորգերի արտադրութեան կենտրոնն էր Թուրքիայում. «*Մեծամասամբ այսպեղ աղօթա-*

Յակովբեանց, Երուսաղէմ, 1859, էջ 236. նաեւ՝ *Բովանդակութիւն ազգային սեպհականութեանց ընկերովի իրաւանց արարողութեանց եւ սովորութեանց ի տնօրինական Ս. Տեղիս*, տպ. Ս. Յակովբեանց, Երուսաղէմ, 1890, էջ 121:

²⁴ Յ. սարկաազ Մանասեան, «Երուսաղէմին վանքին հրդեհը», *Բիզանդիոն*, Կ. Պոլիս, 1911, 4441, էջ 1:

²⁵ Յունահայ համայնքում պահպանուել է Պլեճեան ընտանիքին պատկանող սինանագարդ մի խորանագորգ, որը ժամանակին Սեբաստիայում առանձին սենեակում է իր տեղն ունեցել, որտեղ առանձնացել են աղօթելու համար (Պլեճեան Հաւաքածոյ-Սելանիկ <https://www.houshamadyan.org/arm/oda/europa/blejian-coll.html>);

²⁶ Այս երեսոյքը պամանատրուած էր երոպական երկրներում եւ ԱՄՆում ձեռագործ գորգերի պահանջարկի կտրուկ աճով (Ա. Պօղոսեան, «Գորգագործութիւնը Փոքր Ասիայում (XIX դ. երկ. կէս, XX դ. առ. քառորդ)», *Հայ ժողովրդական մշակոյթ XVI, աանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում, Դերենիկ Վարդումեանի ծննդեան 90 ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան, 2014, էջ 102:

²⁷ Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հայտոր*, Hagob Papazian press, Գահիրէ, 1937, էջ 1501-7:

²⁸ Յ.Պ.Թ., «Կեսարացիք եւ գորգաշինութիւնը», *Բիզանդիոն*, 1899, թիւ 707, էջ 1:

գորգեր են գործում, հարթ, միագոյն կենտրոնով, եւ այդ գորգերի վաճառքով, ընդհանուր առմամբ, զբաղում են հայերը»²⁹:

Փոքր Ասիայի յայտնի գորգագործական կետրոններում՝ Գիորդեսում (Ghiordes), Լադիկում, Ուշակում³⁰, Պերգամա³¹ գործուած աղօթագորգերը մասնագիտական գրականութեան մէջ յայտնի են այդ քաղաքների անուններով: Նշուած տարածքներում ամէն տուն ունեցել է իր դագգահը: Շատ տեղերում գործարանները հիմնուել են եւրոպական եւ ամերիկեան կապիտալիստների կողմից, գորգագործները գրեթէ բոլորը հայ կանայք ու աղջիկներ են եղել: Ըստ օտար հեղինակների հաղորդումների՝ մուսուլման կանայք չպէտք է աշխատէին գործարաններում³²: Գորգագէտ Է. Միրէյը նկատում է, որ Թուրքիան զրկուեց իր հմուտ գորգագործներից, երբ հայերը լքեցին Թուրքիան, նշելով, որ վերջիններս միշտ գործել են եւ հաւանական է համարում անատոլիական գորգերի մեծ մասը գործուել են հայերի եւ յոյների կողմից³³: Իսկ ամերիկացի միսիոնարները նշում են, որ Թուրքիայում արտադրուած գորգերի մեծ մասը պատրաստել են հայ, յոյն կանայք, իսկ թուրք կանայք գրեթէ համընդհանուր հրաժարուել դրանք գործելուց³⁴: ««Թուրքական» գորգ ասուածն իր մէջ ներառում է բոլոր գորգերը, որոնք արտադրուել են Օսմանեան կայսրութեան ներսում, արտադրողները կարող էին լինել քրդեր, չերքէզներ կամ քրիստոնեաներ, վերջիններս՝ հայերը, յոյներն էին»³⁵: Մէկ այլ աղբիւր նշում է. «Թուրքական կայսրութիւնում գորգերի առեւտուրը հայերի, յոյների ու հրեաների ձեռքում է, գեղազարդումը, որը մի ժամանակ ասորական, բաբելոնեան էր, հիմա՝ արաբական, օսմանեան»³⁶:

Թուրքիայի մզկիթները զարդարող հայկական գորգերի մասին տեղեկութիւն է թողել 1912-18ին Պոլսի Էլքաֆի թանգարանի վարչական խորհրդի անդամ Արմենակ Սազըզեանը: Նա գրում է որ թանգարանը մահմե-

²⁹ Eliza Dunn, *Rugs in their Native Land*, Dodd, Mead and company, New York, 1916, էջ 80-81:

³⁰ Այս քաղաքների գորգերի եւ դրանց առեւտրի մասին տե՛ս՝ Գ. Հալէպեան, «Ուշագի, Քէօթահիայի, Սիմափ, Կէօրտէսի գորգերը», *Քիւրակն*, 1907 թիւ 28, էջ 1076:

³¹ «Պերկամա տեսակի փոքրագորգերը (սեթճատէ) այնչափ յարգի չըլլալով արժէքը չնչին է, բայց այս ապրանքի մեծ տեսակները սենեակի գետնի մերկութիւնն են գոցում, պայմանով, որ զոյգ լինեն» (Ա.Ն. Գաբունեան, «Հնամեայ գորգերը եւ անոնց արժէքը», *Մանգումէի էֆքեար*, 1905 (1325) էջ 1:

³² Lewis, *The Practical*, էջ 217:

³³ E. Murray, *Oriental Rugs*, USA, 1976, էջ 106:

³⁴ "Woman's Work in Foreign Lands," *Mission Studies*, 6(XXII):1904, էջ 181:

³⁵ Rosa Belle Holt, *Rugs, Oriental and Occidental Antique and Modern*, A. C. McClurg & Co, Chicago, 1901, էջ 52:

³⁶ C. R. Clifford, *Rugs of the Orient*, Glifford & Lawton, New York, 1911, էջ 59:

դական կրօնական հաստատութիւնների հին գորգերը ստանալու համար դիմել է երկու հայկական կենտրոնների՝ Էրզրում եւ Վան: Կարինից ստացած գորգերի մէջ եղել են խաչապատկեր հայկական գորգեր³⁷: Հայկական գորգերը եկեղեցիներից վերցնում եւ իրացնում էին օտարները, այդպիսին էր նաեւ արձանագրութեամբ յայտնի Գոհար գորգի (Արցախ, 1700) ճակատագիրը, որն ինչպէս օտար հեղինակներն են նշում թուրքերն են վերցրել հայկական եկեղեցուց, ապա եւ Սեւ ծովով տարուել է Լոնդոն³⁸: Եկեղեցական իրերի կողոպուտը յայտնի էր անլի վաղ արաբական շրջանից: Ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու մի վկայութեան՝ արաբները Ը. դարում կողոպտում են եկեղեցական սպասքի հետ նաեւ արկանելին (գորգ) եւ առագաստը (խորանի վարագոյր) (Բագուանայ գիւղի Ս. Գրիգոր վանք)³⁹:

Այս վկայութիւնները կարեւոր աղբիւրներ են, որոնք ապացուցում են հայերի ունեցած մեծ ամանըլ օսմանեան շրջանում գործուած գորգերի գործում: Մեզ ժառանգել են արուեստի գործեր, որոնցում դրոշմուած են իրենց աշխարհընկալումը, փիլիսոփայական ու գեղագիտական հայեացքները: Այս գորգերի ձեւերի գինանոցը հայ մշակոյթն է, որում վերամշակուած են կեցութեան բոլոր պատկերացումները մարդկութեան փորձով եւ այդ մշակութային ձեւերի կիրառումը, մշակումը, նոր բնագաւառ փոխադրելով այս ազգային առանձնայատկութիւնները միասնական հանգոյցով կապուել են հոգեւոր ու նիւթական մշակոյթին եւ նորարական մեծարդիւնք փոխակերպումներ հաղորդել գորգարուեստին:

ԱՂՕԹԱԳՈՐԳԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԿԱՄԱՐԱԶԵԻԵՐԻ. ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՐԴԱՐԱՆՔԸ

Հայոց ազգագրութեան թանգարանում պահպանուում են մօտ երեք տասնեակ (29) խորանաւոր աղօթագորգ (հաշտի մէջ չեն մտնում սինազարդ գորգերը, որոնց անդրադարձել ենք⁴⁰): Հաւաքածուի նմուշները ունեն ճարտարապետական կամարների տարբեր լուծումներ: Ըստ կամարների փորձել ենք տարբերակել՝ **գմբէթաձեւ, կիսագմբէթ, ուղղանկիւն գլխազարդ, աստիճանաձեւ եւ կորաշար-աղեղնաձեւ** կողերով տեսակ-

³⁷ Ա. Սազըզեան, «Հայկական գորգերը ԺԵ.Էն ԺԹ. դար», *Անահիպ*, 5-6:1932, էջ 74:

³⁸ A. F. Kendrick, *Hand-woven Carpets Oriental and European*, New York, 1922, էջ 16:

³⁹ Յ. Քիրտեան, «Հայ եւ արաբ գեղարուեստի յարաբերութիւնը», *Անահիպ*, 1-2:1932, էջ 60:

⁴⁰ Ա. Մխիթարեան, «Հայոց ազգագրութեան թանգարանի խորանաւոր գորգերը», *Հայկական հանգոյց, հայոց գորգագործական մշակոյթը, հանրապետական երկրորդ գիտաժողով*, «Նոր տպագրիչ» ՍՊԸ, Երեւան, 2016, էջ 53:

ներ, իսկ որպէս առանձին տեսակ ենք համարել ձեռնապատկեր գորգերը:

Գմբէթածեւ գլխազարդով գորգերը պահանջմունքին համապատասխան ճարտարապետութեան ու գեղագիտական բովանդակալից ձեւերի միասնութիւն ունեն: Առանձնանում են ուղղանկյին դաշտի վրայ սրածայր գմբէթի պատկերագրութեամբ, որի ճակատամասի պատկերային ձեւն ունի հայկական եկեղեցու սուրանկյին գմբէթի տեսք: Փոքրասիական աղօթագորգերն աչքի են ընկնում գմբէթածեւ վերջաւորութեամբ ու չնայած այսօր ներկայացում են որպէս թիրքական, այդուհանդերձ հայկական պաշտամունքային ճարտարապետութեան ազդեցութիւնն ու դրոշմն են կրում: Գմբէթն այստեղ ամբողջ դաշտի երկայնքով է կամ պահպանում է միայն վերին գօտեզարդ խորանի հատուածը՝ նեղ գօտու տեսքով: Վերջինս կարող է լցուած լինել խաչապատկերներով (ՀՎԹ3549, 3592, 3776), շերտագծերով (ՀՎԹ1254), քառաթերթ ծաղիկներով (ՀՎԹ5343, 6970): Իսկ կենտրոնական դաշտում տեղ են գտնում տարբեր գորգատեսակներին բնորոշ զարդայօրինումներ, երկրաչափական ու բուսական զարդանախշեր: Հանդիպում ենք գորգեր, որտեղ կողք կողքի ներկայացում են զոյգ գմբէթներ (ընդունուած է համարել, որ բազմախորշ գորգերը նախատեսուած էին - նախանշում էին աղօթողի տեղը - ընտանիքի համար)⁴¹: ՀԱԹ ՀՎԹ3549 (19րդ դարի կէս) օրինակում գորգը զարդագօտով բաժանուած է երկու մասի, որոնց վրայ առանձին պատկերուած է զոյգ գմբէթախորշ:

Ոճաւորուած բուսական զարդարանք ունի ՀԱԹ ՀՎԹ3592 (*Շիրվան, 19րդ դարի կէս*) գորգը, որի ողջ հիմնադաշտը կենաց ծառերով է պատկերուած: Վերջիններս ամփոփուած են խաչապատկերներով հատուղ ցանցի մէջ: Իսաչերով են լցուած նաեւ ոճաւորուած ծառերի կենտրոնները, գորգի արտաքին ու ներքին եզրագօտիներից մէկը, ինչպէս նաեւ գմբէթի գօտին: Բուսածաղկային ոճաւորմամբ մեծ խաչ է հիւսուած ՀԱԹ ՀՎԹ 6970 (*Խարբերդ, 19րդ դարի առաջին կէս*) (**նկ. 1**) գորգի դաշտի կենտրոնում: Իսկ խորանը ձեւաւորուած է խաչահիմք ութաթերթ ծաղիկներից կազմուած շղթայով:

Սիւնազարդ խորանագորգերի պատկերագրութեան մնացուկ է պահպանուել ՀԱԹ ՀՎԹ 3776 (20րդ դարի սկիզբ, Շիրվան) գորգի դաշտում: Գմբէթածեւ կամարի տակ տեղ է գտել կանթեղի կամ սափորի ուրուագիծ ունեցող յօրինուածք, որը նաեւ կրկնուում է կենտրոնում զիգագաձեւ ելուստ ունեցող նախշերի մէջ: Կախուած կանթեղով պատկերումը տարածուած էր Փոքր Հայքի գորգերում, յաճախ է հանդիպում Գիորդէս եւ հազուադէպ՝ Kulah գորգերում⁴²:

⁴¹ Lewis, *The Mystery*, էջ 36:

⁴² Lewis, *The Practical*, էջ 323:

Կիսագմբէթ գորգերն ի համեմատ նախորդ օրինակների տարբերում են կամարի կառուցուածքով սուր անկիւնը գագաթամասում հատուած, կտրուած է ուղիղ գծով: Կորնթարդ այս կամարները նոյալէս նեղ գօտու տեսքով են: Ինձորեակ տիպի վիշապագորգի զարդայօրինուածքով է յարդարուած ՀԱԹ **Հ^մ 1158.3** (*Միւնիք, 20րդ դարի սկիզբ*) գորգը: Հատած գմբէթի աջ եւ ձախ անկիւններում խաչապատկերներ են, իսկ կենտրոնական դաշտն ընդգրկում է խնձորեակ գորգերին յատուկ մեղալիոն: Բուսածաղկային լուծումներ են կրում ՀԱԹ **Հ^մ 3484** (*Վան, 20րդ դարասկիզբ*) (**նկ. 2**) եւ **Հ^մ3598** (*1894, Շիրվան-Ղուբա*) գորգերը: Ոճական սերտ ընդհանրութիւններ ունեն եւ հաւանաբար նոյն տարածաշրջանում են գործուել 3598 եւ վերոնշեալ 3592 համարի գորգերը: Այն արտայայտում է ողջ դաշտի մակերեսում ճաւորուած կենաց ծառերով եւ եգրագօտիների նոյն զարդային լուծումներով, տարբերութիւնը գմբէթների ձեւատրման մէջ է: 3598 գորգի գմբէթարդը լայն է ու վերելում հատած, նոյնալէս լցուած է խաչերով, ունի արաբատառ թուագիր արձանագրութիւն (1894): Խաչերով է յարդարուած նաեւ 3484 գորգի գմբէթի գօտին, իսկ դաշտի գոյն ընդգրկող մակերեսի վրայ կողք կողքի դասատրուած ծաղկանախշեր են:

Կենաց ծառերի պատկերումը ոչ միայն տեղ է գտնում հիմնական դաշտի վրայ, այլ որոշ օրինակներում այն գորգի վերին անկիւններում է՝ գմբէթի աջ եւ ձախ կողքերին: Այս ձեւով են յարդարուած այս խմբի ՀԱԹ **Հ^մ1292** (*Կ.Պոլիս, 19րդ դար*) եւ **Հ^մ68-1** (*Գանձակ, 1921*) եւ ուղղանկիւնածեւ գլխագարդով Հ^մ3559 գորգերը: 1292 կենաց ծառն ունի եղեւնածեւ տեսք, որի գագաթն աւարտում է շեղանկիւն նախշով, իսկ 68-1 եւ 3559 օրինակներում դրանց ճիւղերը կեռանախշերով են ձեւատրուած: Կենաց ծառերի պատկերումն իր մէջ ամփոփում է յաւերժութեան գաղափարը: Այդ մասին՝ ստորեւ: 1292 եւ 68-1 գորգերը զարդարուած են երկրաչափական զարդանախշերով, 68-1 գորգի գմբէթի ներսում արաբատառ թուագիր արձանագրութիւն է՝ 1921: Ոճական ընդհանրութիւններ ունեն 68-1 եւ **ՀԱԹ Հ^մ7638** (*Վայոց ձոր, 19րդ դար, արաբատառ արձանագրութիւն՝ 1844*) եւ գմբէթածեւ գլխագարդով **Հ^մ1254** (*Եղէգնաձոր, 20րդ դար*) համարի գորգերը: Սրանց բնորոշ է դաշտի վրայ ելուստատր ուղղանկեան պատկերների դասատրուածութիւնը:

Այս գորգերի եւ, առհասարակ, աղօթագորգերին բնորոշ զարդայօրինուածքային առանձնայատկութիւններից է գմբէթի ներսում, կամ շուրջը տեղատրուած սանրի պատկերները՝ որպէս յիշեցում մահմեդականներին մօրուքը սանրելու⁴³: Սակայն նկատենք, որ նման սանրածեւ կամ կտուտիչ յիշեցնող զարդանախշ յաճախ ենք հանդիպում հայկական կարպետներում ու գորգերում: Դրանք հանդէս են գալիս տարբեր ձեւերով՝ ուղղանկիւն, ուղղանկիւն սեղանածեւ՝ ատամնաշարով: Որոշ օրինակներում՝ 68/1,

⁴³ Lewis, *The Mystery*, էջ 38:

1292 անմիջապես խորանի տակ պատկերում են խոշոր չափի եւ ուղղանկյուն սեղանի տեսք ունեն, հաւանաբար սա ոչ թէ սանր է, այլ՝ եկեղեցու խորանի հարթակ: Նախորդ խմբի՝ 3776 համարում երկու ձեւն էլ պատկերուած է: Որոշ օրինակներում նրա անմիջապէս վերեւում փոքրիկ գորգ յիշեցնող պատկերներ են, ինչը եւս խօսում է սեղանի ու նրա վրայ փռուող գորգ, կամ ծածկոցի մասին: Այսպէս, 68/1 գորգում, այն ւելի յստակ է պատկերուած, փոքրիկ գորգիկ է՝ կենտրոնական դաշտով, եզրագօտով, փորձ է արուած զարդանախշեր տալ՝ քառակուսի հանգոյցներին տարբեր երանգներ հաղորդելով: 1292 գորգում զուգահեռ երկու հորիզոնական զարդաշերտեր են, իսկ 7638 համարում քառակուսի շրջանակ է՝ եզրագօտով եւ կենտրոնի շեղանկինաձեւ զարդանախշով: 1254 համարում գմբէթի կողմնային հատուածներում երկու միանման շախմատի դասաւորութեամբ գորգիկներ են:

Խորանաւոր գորգերը համադրութեան մէջ են հայ մանրանկարչութեան հետ եւ նրա հիմքի վրայ են ձեւաւորում: Ոճական իւրատեսակութիւն ունեն, կցում են կենցաղային տարրեր՝ սափոր՝ բնորոշ դարձնելով զարդարանքի ու կառուցուածքի զուգակցումը: Սափորի պատկերագրութիւնը հանդիպում է հայկական ձեռագրերում վաղ շրջանից՝ Աւետման, Ռտնլուայի տեսարաններում, լուսանցագրողներում: ՀԱԹ Հ^մ 7501 (1901-2) (նկ. 3) գորգի վերին գմբէթի աջ ու ձախ անկիւններում են պատկերուած: Գմբէթի տակ արաբատառ թուագիր արձանագրութիւն է՝ (1901-2):

Խաչքարի լուծումներ են տրուած ՀԱԹ Հ^մ 7258 (20րդ դարի սկիզբ) գորգին. կենտրոնական դաշտի ուղղանկյուն զարդայօրինուածքի մէջ խոշոր խաչ է, որից ներքեւ վարդեակ է, ինչպէս խաչքարերում: Հաւանաբար գորգը նախօրինակ է ծառայել ւելի ուշ գործուած 5294 գորգին:

Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում **կիսագմբէթ** տեսակի գորգերը, որոնք մօտ են այսպէս կոչուած «Բելլինի» տիպին: Սրանք նոյն ճակատամասով են, տարբերութեամբ, որ Բելլինի տիպում Գանցհորնը օրինակներ է բերում ստորին հատուածում բացուածքով կամ բանալու անցքի նմանուող յօրինուածքով: Մեր օրինակներում ստորին հատուածն ունի դէպի գորգադաշտ ուղղուած բացուածք՝ մուտք յիշեցնող նախադուռ, որը կարող է լինել փակ կամ բաց: Հեղինակը «բանալու անցքը» ենթադրում է որպէս մկրտութեան աւազան, որը յետագայում դառնում է «Սուրբ տաճար» մուտք⁴⁴: Մեր օրինակներում դրանք յիշեցնում են եկեղեցու յատակագիծ՝ ճակատամասի խորանով եւ ստորին մուտքով: ՀԱԹ Հ^մ 455/5, (Կարս, 19րդ դարի վերջ), Հ^մ 5343, (20րդ դարասկիզբ), Հ^մ 6777 (Ախալցխա, 19րդ դարի վերջ) գորգերի կամարախորշերի ստորին հատուածները ներձգուած են՝ մուտք յիշեցնող, տարբերում են ճակատամասի կամարների ձեւերով: 455/5 օրինակում կամարը հատած գմբէթի ձեւ ունի,

⁴⁴ Գանցհորն, էջ 504:

5343 սուրանկին գմբէթածե է, կողքերին՝ արաբատառ արձանագրութիւն՝ «Ալլահ», այս երկու օրինակներում էլ հիմնական դաշտը զարդարում են խոշոր խաչաստղի կամ Որոտան գորգերի զարդայօրինուածքները՝ ութաթեւ աստղերը: Տարբերող օրինակ է 6777 գորգը, որի ճակատամասը բոլորովին նման չէ միա օրինակներին. գորգագործուիին ներշնչուելով վահանագորգերից, այն հետաքրքիր ոճով ներկայացրել է կամարի հատուածը այն նմանեցնելով մարդու գլխի՝ շնորհիւ ներսում օգտագործուած զարդանախաշերի, որոնք դիմագիծ են յիշեցնում: Ամենայն հաւանակա՜նութեամբ նախնական օրինակները եղել են բանալու անցքով, այնուհետեւ հանդէս են եկել տարբեր լուծումներով, ինչպէս՝ մեր օրինակներում: Պատահում են գորգեր, որ հանդէս են գալիս ներքեւի փակ եզրով՝ **ՀԱԹ Հ՞ր6769** (Ախալցխա, 1899), որն ունի արաբատառ գրութիւն:

Գեղարուեստական առանձնայատուկ յարդարում ունեն այս շարքի ՀԱԹ Հ՞ր **3884/1** (*Խարբերդ-Բալու, 19րդ դար*) (**նկ. 4**) եւ Հ՞ր **7658** (20րդ դարի սկիզբ) գորգերը. հաւանաբար նոյն վարպետի աշխատանք են⁴⁵: Գորգերի կարմիր հիմնագոյնի վրայ տեղ են գտել գմբէթածե կամարով, ներքեւի ստորին եզրի բաց դռան մուտքով խորշեր: Կամարը լայն գօտու տեսքով է, որը երկու օրինակում էլ զարդարուած է նոյն կեռագարդ ատամնանախաշով, վերջիններս մուտքի երկու եզրագծում ասարտում են ծառ յիշեցնող բուսանախաշով: Յատուկ նշանակութիւն ունի պատկերամոտիային իմաստաբանութիւնը: Հիմնադաշտը, որն այստեղ, ըստ էութեան, սուրբ տարածք է ընկալում, տեղ են գտել պաշտամունքային ճարտարապետական կառոյցներ, ամենայն հաւանականութեամբ սուրբ շինութիւններ՝ նման եկեղեցու, քանի որ կտուրներին խաչի պատկերներ են: Սրանք տեղաւորուած են անմիջապէս կամարի տակ մէկական օրինակով եւ դաշտի վրայ, պատկերուած են եռաշերտ ֆասադով՝ լցուած **S**-ածեւ վիշապ նախշերով եւ կտուրով՝ ասարտող փոքրիկ ու մեծ խաչերով: Շինութիւնները շրջապատուած են ծառերով⁴⁶, որոնք 7658 գորգում պատկերուած

⁴⁵ Այս գորգերը գրականութեան մէջ յայտնի են որպէս Քըրշեհիր (Kir Shehr) աղօթագորգ, անունը ձեռք են բերել Անկարայի վիլայեթում գտնուող Քըրշեհիր տեղանունից (Lewis, *The Practical*, էջ 220):

⁴⁶ Հոգեւոր եւ աշխարհիկ համակարգերում կեանքի ծառը շեշտում է կեանքի վերընթաց գիծը՝ ծննդից մինչեւ պտղաբերում: Նրա բարձրագոյն նպատակը յանրժական կեանքն է՝ անմահութիւնը: Ծառը նաեւ իր մէջ կրում է կորուսեալ դրախտի իմաստը, այն ինչը կորցրեցին Ադամն ու Եւան՝ ճաշակելով դրախտի ծառի պտուղը: Եսայի մարգարէն ծաղկած գաւազանի մասին յիշատակում է. «Հեսսէի արմատից գաւազան պիտի ընձիտրփի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից: Նրա վրայ պիտի իջնի Աստուծոյ Հոգին, իմաստութեան եւ հանճարի Հոգին» (Եսայի 11:1-2), քանի որ Հեսսէն Դաւիթ մարգարէի հայրն էր, եւ Քրիստոսը Դաւիթի թագաւորական ցեղից էր (<http://www.surbzoravor.am/post/view/avetman-patkeri-khorhurdy>):

են յստակ ուրուագծով, անգամ նշմարում են նաեւ բարդու պատկերներ, իսկ 3884/1 գորգում դրանք ոճատրուած են, երկրաչափականացուած⁴⁷: Սրբազան կառոյցների պատկերումը բնականաբար ստեղծում էր կրօնական-գաղափարական միջավայրում, ունենալով պաշտպանական նշանակութիւն: Ծառի պատկերումը պարտադիր էր թաղման ձէսի համար նախատեսուած գորգերում: Վերջիններս դազաղը ծածկելու համար էին, միշտ ունենում են ծառի պատկեր, կենտրոնում՝ մեծ կամ դաշտը ծածկող փոքր բազմաթիւ ծառեր: Սովորաբար ամենաշատ պատկերուող ծառը նոճին է, որը եւ տնկում են արեւմտահայ (ապա նաեւ սփիւռքահայ) թէ թիրքական գերեզմանոցներում: Նոճին կրում է յաւերժութեան խորհրդանիշը⁴⁸: Սգոյ յատուկ խորհրդանիշերի, ծառի պատկերումը, թէ՛ ազգային, թէ՛ անձնական նշանակութիւն ունեն: Աղօթագորգերում զրադաշտական նոճու, հնդկական լոտուս ծաղկի, չինական բուդդայական խորհրդանիշերը վկայում են հաւատքների խառնուելու մասին⁴⁹:

Աստիճանածէ կողերով ձեւատրուած կամարով է առանձնանում յաջորդ խումբը: Աստիճանների սիմետրիկութիւնը երբեմն կարող է խախտուել գծերի թերութեան հաշուին: Սովորաբար այս տեսակը բաւականին տարածուած է Փոքր Հայքի քաղաքներում: Կամարը երկու կողմերում սկսում է զիկկորատներով եւ գազաթում ձգում-ստանում սուրանկին գմբէթի տեսք, աւարտում է տարբեր զարդածեւերով: **ՀԱԹ Հ՞ 455.2 (Սեբաստիա, 19րդ դարի սկիզբ)** գազաթը շեղանկին ելուստով է: Կենտրոնական դաշտն աչքի է ընկնում ութաթեւ աստղերի զարդարմամբ, եզրագօտու խաչաձիւղ կեռանախշերի ձեւատրմամբ: Կեռանախշ ելուստով է աւարտում **ՀԱԹ Հ՞ 4026.2 (Խարբերդ, Օւաջըկ, 20րդ դարի սկիզբ) (նկ. 5)** գորգը, որի կենտրոնական դաշտը ազատուած է յարդարանքից: Անկանոն կողային կտրուածքներ ունի **ՀԱԹ Հ՞ 3612 (1916) (նկ. 6)** գորգը, որի գազաթն աւարտում է փոքրիկ շեղանկինով, ուր ամփոփուած է խաչ: Ի տարբերութիւն միա օրինակների գորգի լայնակի երկու կողմերում են կամարախորշեր պատկերուած: Վերջինիս նախօրինակ են ծառայել սինազարդ, կանթեղազարդ գորգերը: Խորշերից կախուած են երկու խոշոր, շղթայակապ կանթեղներ՝ յարդարուած խաչապատկերներով: Ունի հայատառ արձանագրութիւն, վերին ձախ անկիւնում թուագիր՝ 1916, իսկ ստորին լայնակի եզրում հայերէն գրութիւն է՝ **«1816 (1916) թ(վ)ին Զաւա Ի-**

⁴⁷ Ծառերի եւ խաչագմբէթ շինութիւնների պատկերագրութիւնը տարածուած է հայկական գործածքի գեղազարդման համակարգում. դրանք տարածուած են Ուրֆայի ասեղնագործ, Վանի «Հացալնըխ» կոշտող ծածկոցներում, ինչպէս նաեւ սրբիչներում: Ծառեր հանդիպում ենք նաեւ Սասունի կանանց գոգնոցներում, եկեղեցու գմբէթ՝ Բարձր Հայքի տարազի մետաքսայ գօտիներում:

⁴⁸ Dunn, էջ 79:

⁴⁹ Churchill Ripley, էջ 16, 19:

սախանով այս խալին անունն տէրա(մ)բ», այսինքն՝ անուամբ Տիրոջ, Տիրոջ կամօք գործուեց:

Ուղղանկինաձեւ գլխազարդով օրինակ է **ՀԱԹ Հ^մ3559** (*Շիրվան-Ղուբա, 20րդ դ. սկիզբ*) գորգը, զարդարուած կեռանախշերով: Ուղղանկին գլխազարդը յայտնի է որպէս կովկասեան ձեւ՝ kazak: Գօտին լցուած է խաչերով, երկու կողքերին ոճաւորուած կեռազարդ կենաց ծառեր են: Գմբէթի տակ ամփոփուած է ուղղանկին սեղանաձեւ սանր կամ հարթակ, վերեւում՝ երկու զուգահեռ գծեր:

Չնայած որ աղօթագորգերի գեղազարդման համակարգը ներյատուկ գեղարուեստական մոտիւններով է ձեւաւորուած՝ ենթարկուած կրօնակա-նին, այդուհանդերձ, հանդիպում ենք գորգերի, որտեղ պատկերուած են համակարգուած բոլոր զարդատարրերը, բայց չափերով համեմատաբար մեծ են, իսկ աղօթագորգերի բնորոշ յատկանիշերից է փոքրաչափ լինե-լը⁵⁰: Ըստ էութեան, գորգագործները փոխել են գեղարուեստական ար-տադրանքի կառուցուածքը եկեղեցական կիրառումից շեղելով՝ իրենց անձնական ծառայութեան համար: Երկու գաղափարները ծուլուած են մէ-կում, նորը ներկայացնում են որպէս հնի առանձին փոխակերպում: Այդ-պիսի օրինակ է **ՀԱԹ Հ^մ7193** (*Արցախ, 1912*) գորգը. կենտրոնում այն խո-շոր խաչաձիւղ գարդաշրջանակ ունի, որի վերին ու ներքին թեւերից դէ-պի գորգի լայնակի կողերը ձգուած են սրածայր գմբէթներ, որոնք իրենց մէջ ամփոփում են սանր, զոյգ ձեռքեր⁵¹ եւ սափոր: Գմբէթների շուրջը կե-նաց ծառեր են, դաշտը լի է խաչերով: Ունի հայատառ արձանագրութիւն՝ «1912 վկ . րտ»:

ՀԱԹ Հ^մ7489 (*Արցախ, 19րդ դարի վերջ*) (**տկ. 7**) գորգի պատկերները ցուցում են ոչ միայն ձեռքի, այլեւ գլուխը խոնարհելու տեղը: Դաշտի վրայ երկրաչափական զարդայօրինուածքներ են, վերեւում վերածուած են գլխի ուրուագիծ ունեցող զարդաձեւի՝ կողքերին ձեռքեր (նմանօրինակ լուծում ունէր 6777 գորգը): Յատկանշական է, այն իր մէջ ամփոփում է խաչա-պատկեր փոքրիկ գորգիկ՝ եզերուած զարդագօտիներով: Գորգից վար պատկերում է սանր: Եթէ գորգիկը յիշեցնում էր, որ աղօթողը չմոռանար իր գորգը, ինչպէս միւս պարագաները, ապա ինչո՞վ էր պայմանաւորուած խաչապատկերների այդչափ առատութիւնը մի տեսակ գորգերի գեղա-զարդման համակարգում, որը նախատեսուած չէր քրիստոնէայ հայերի համար: Խորհրդաբանութիւնը այն հիմնական բանալին է, որով հնարա-ւոր է ճշտօրէն ընկալել գորգագործի աշխատանքը: Գրեթէ բոլոր օրինակ-ներում խաչի պատկերներ կան, որոնք, ըստ էութեան, քրիստոնէայի ձեռ-

⁵⁰ Լայնութիւնը տատանում էր 76-121սմ, իսկ երկարութիւնը՝ 121-182սմ (Mumford, էջ 94):

⁵¹ Որոշ հեղինակներ ձեռքերի պատկերները նոյնացնում են Մուհամէդի ձեռքերի հետ (Holt, էջ 93):

քի աշխատանք են: Ինչպէս օտարներն են նկատում՝ «Թուրքերը երբեք չեն զարդարել իրենց գորգերը խաչով, այն հայկական է»⁵²: «Հայերը թիրքմենական բոխարա թեքէ (Tekke Bokhara) աղօթագորգերն անուանում են խաչի բոխարա (Khatchli) նրա համար, որ կենտրոնի զարդագօտիները չորս մասի էին բաժանում դաշտին խաչի տեսք տալով, իսկ խաչին հայկական խաչ բառից էր ծագում»⁵³: Եթէ նախորդ օրինակում խորանին փոխարինում է գլխի տեղը մատնանշող յօրինուածը, ինչը յուշում է գորգի գործառոյթի մասին, ապա ՀԱԹ Հ^մ5824 գորգում (Իգդիր, Կաղզուան, 1910) բացակայում է կամարը. միայն ձեռքերի պատկերներ են պահպանուել դաշտի մէջ, դասաւորուած դիմահայեաց: Սա եւս հաստատում է այն տեսակէտը, որ այն բուն գործածութեան նպատակից դուրս է մղուել ու անձնական կիրառութեան համար օգտագործուել՝ պահպանելով որոշ տարրեր: Ունի արաբատառ արձանագրութիւն՝ 1910:

Հաւաքածուում պահպանուում են նաեւ պարսկական աղօթագորգեր, որոնց կամարը յստակօրէն տարբերուում է ոճով, այն **կորաշար-աղեղնածեւ** է: ՀԱԹ Հ^մ7517 (Թաւրիզ, 17-18րդ դարեր) եւ Հ^մ7241 (Թաւրիզ, 19րդ դար) գորգերի գեղարուեստական կառուցուածքը բնորոշ է արեւելեան ոճին, առատօրէն օգտագործուած են բուսածաղկային մոտիւներ⁵⁴: «Պարսկաստանում, գլխաւորապէս Սպահանում երկու դար առաջ պատրաստուում էին փոքրիկ ասեղնագործ աղօթքի գորգեր: Այս աղօթագորգերից իւրաքանչիւրի վրայ, ծայրին մօտ ասեղնագործուած փոքրիկ նշան կար, որ ցոյց էր տալիս Մեքքայից բերուած սրբազան հողակտորը դնելու տեղը: Համաձայն Ղուրանում տեղ գտած օրէնքի՝ գլուխը պէտք է խոնարհել աղօթագորգի վրայ, այն դիպչում էր ճակատին, երբ երեսն ի վայր ծնկի էին գալիս, այսպիսով օրէնքի ամէն տառը կատարելով: Սովորոյթը դեռ պարածուած է մինչեւ հիմա»⁵⁵: Հայկական մշակոյթում նոյնպէս ասեղնագործուել են խորանագարդ գորգեր⁵⁶, եկեղեցական վարագոյրներ⁵⁷:

⁵² «Թուրքերը երբեք չեն գործում թռչնի, կենդանիների եւ մարդկային ֆիգուրներ, քանի որ իրենց կրօնը դա արգելում է» (Lewis, *The Practical*, էջ 218):

⁵³ Dunn, էջ 130:

⁵⁴ Այսօրինակ ոճատրմամբ աղօթագորգեր Նոր Զուղայում գործել են նաեւ հայուհիները. մեզ է հասել հայատառ արձանագրութեամբ մի աղօթագորգ (Ի. Աագեան, *Հայերէն արձանագրութեամբ գորգեր*, Հայաստանի պատմութեան թանգարան, Երեւան, 2010, էջ 71):

⁵⁵ Holt, էջ 94:

⁵⁶ Պահպանուել են Վանի ասեղնագործութեան դպրոցից հայատառ արձանագրութեամբ, սինելով ու կանթելով զարդարուած եկեղեցական ծածկոցի լուսանկար եւ 17-18 դարերով թուագրուող, Սուզանի կարատեսակով ասեղնագործուած խորանագարդ սրահակ (Մխիթարեան, էջ 61-62):

⁵⁷ Embroidered Armenian liturgical curtain, 1763, <https://archive.org/details/clevelandart-2014.13-embroidered-armenian> :

Այս կամարակապ գորգերը մեզ յիշեցնում են փոքրիկ տաճար: Դարերի սահունով կրօնը տեղաւորուեց մարդկանց կեանքում, եւ բնականաբար, կրօնի հանդէպ ըմբռնումը, կրօնական ոգին իր բացատրութիւնն է գտնում շրջապատող իրերում: Այս խորանապատկերով անհուն հեռապատկեր է ստեղծուել մարդու ընկալումներում: Դէպի վեր ձգուած կամարագծով նրանք արտայայտում էին մարդկային յոյսերի կապը երկնքի հետ:

Վերոնշեալ գորգերի բոլոր կամարածեւերն իրենց տարածեութեամբ հանդիպում ենք հայկական մանրանկարչութեան տարբեր դպրոցների ու ժամանակաշրջանների խորանապատկերներում: Դրանք նախօրինակ են ծառայել ու արտացոլում են գտել գորգերի գեղարուեստական յարդարման համակարգում: Այսպիսով, այս գորգերն իրենց մէջ բովանդակում են ազգային որոշ տարրեր՝ վերցնելով միջնադարեան քրիստոնէական մշակոյթի՝ ճարտարապետական եւ իմաստաւորուած զարդային ձեւերը, խորհրդանշական, գեղագիտական եզրերը:

Խորանազարդ աղօթագորգերն ունեն ծագումնաբանական, կիրառական, խորհրդաբանական եւ գեղագիտական դիտանկիւններ: Խորանները, որոնք գորգի բաղկացուցիչ ու առաջնային մասն են կազմում, չեն կարող միայն գորգանախշ ընկալուել, դրանք ունեն ճարտարապետական ծագում եւ ըստ ճարտարապետական ձեւերի՝ սիւների, կամարների համար կրում են անուանումը: Դրանց պատկերային նախատիպ դիտուել են եռանաւ եկեղեցիների ներքին կտրուածքը, սիւնազարդ կամարները, մանրանկարների խորանները, կամարախորշերի ուրուագծերը: Ճարտարապետութեան, մանրանկարչութեան եւ գորգարուեստի փոխադարձ կապը հիմք է տալիս գորգարուեստում որոնել մեզ համար կարեւոր հարցեր: Ինչպէս մանրանկարչութեան մէջ, այնպէս էլ գորգարուեստում պահպանուած են բազմաձեւ ճարտարապետական կամարներ, այստեղ եւս խորանների ձեւերը եւ պատկերային մոտիւնները փոփոխուած, կրճատուած կամ հարստանում են ըստ տարածքի, ժամանակաշրջանի:

Պատկերազարդման գեղագիտական կողմից աւելի յարդարանքային են դարձել, երբեմն կամարներին փոխարինում են ուղղանկիւն գլխազարդերը՝ լցուած զանազան զարդանկարներով, դաշտի ներքին յարդարանքը հարստացուած է երկրաչափական, հիւսածոյ եւ բուսական զարդանախշերով, ինչպէս նաեւ որոշ խորհրդաբանական պատկերներով՝ բնորոշ միայն այս գորգերին: Խորանները պարզեցուած են՝ ստացել են գծագրական պարզ յարդարանքային տեսք:

Յիրաւի, այս գորգերը կրում են քրիստոնէական ճարտարապետութեան գեղայարդարման կնիքը:



Նկարներ 1.- Խարբերո, 19րդ դարի առաջին կես, 2՝ Վան, 20րդ դարասկիզբ



Նկարներ 3՝ 1901-2 թուականի աղօթագորգ, 4՝ Խարբերո-Բալու, 19րդ դար




Նկարներ 5՝ Խարբերդ, Օաջըկ, 20րդ դարի սկիզբ, 6՝ 1916

THE PRAYER RUGS OF THE NATIONAL MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY
(SUMMARY)

ANI MKHITARYAN
amkhitaryan89@gmail.com

Due to their artistic decoration and particularly their design, prayer rugs are classified as alter rugs. They have a ritual significance. Today they are common in the Muslim world and are used during *namaz* prayers (*Aghotagorg* in Armenian). *Aghotagorgs* were widespread in Armenian carpet weaving culture and were made in large quantities. In fact, in addition to being used in churches, these were also used for commercial purposes. The Museum of Armenian Ethnography preserves about thirty *Aghotagorgs* (without columns) enriched with Armenian ornaments with symbolic significance. They differ in their types, variety of architectural arches and symbolic images. The paper divides the *Aghotagorgs* into two major groups: a) those having the interior design of an Armenian Church and b) those which have pillar designs. The paper focuses on the first group of *Aghotagorgs* and categorizes them according to their design.



Նկար 7՝ Արցախ, 19րդ դարի վերջ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿԸ

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ

armanmaloyan1976@gmail.com

Հայոց կանոնական (եկեղեցական) իրաւունքի յուշարձանների շարքում, որպէս արժէքաւոր իրաւայայտ աղբիւր, իր առանձնայատուկ տեղն ունի հայոց կաթողիկոս (1166-1173) սուրբ Ներսէս Դ. Կլայեցու (Ներսէս Դ. Պահլաւունի, Ներսէս Շնորհալի) *Թուղթ ընդհանրական* երկը:

ԺԲ. դարի նշանաւոր հոգեւոր ու քաղաքական գործիչ, մեծ մտածող, մանկավարժ, բանաստեղծ ու երաժիշտ Ներսէս Շնորհալին հայ մշակոյթի երեւելի, անզուգական ներկայացուցիչ է: Նա մեծագոյն շարականագիր է, դասաւորել ու ամբողջացրել է հոգեւոր երգերի ժողովածուն՝ *Շարակնոցը*, ստեղծել պատմական պոէմի ժանրը՝ գրելով *Կիպասանութիւն*, *Յիսուս Որդի*, *Ողբ Եղեւսիոյ* պոէմները: Շնորհալին հայ միջնադարեան քնարերգութեան ու արձակի մի շարք նոր ուղղութիւնների հիմնադիրը կամ առաջին ներկայացուցիչն է (չափածոյ պատմութիւն, պատմահայրենասիրական ողբ, պատմական պոէմ, չափածոյ ներբողեան, ուղերձ ու մաղթանք, մանկական բանաստեղծութիւն, մանկավարժական-ուսուցողական բանաստեղծութիւն, հանելուկ): Հայ եւ համաշխարհային հոգեւոր գրականութեան գոհարներից են Շնորհալու «Առաւօտ լուսոյ», «Նորահրաշ պսակաւոր» շարականները, «Հաւատով խօստովանիմ» աղօթագիրքը: Շնորհալու երկերը հարուստ են նաեւ արժէքաւոր փիլիսոփայական դատողութիւններով: Մեծ բարեբախտութիւն է, որ Շնորհալու հեղինակած գրեթէ բոլոր գործերը հասել են մեզ: Նրա արձակ գործերը, ըստ բովանդակութեան, բաժանուում են երեք խմբի՝ հրապարակախօսական, դաւանաբանական թղթեր եւ անձնական նամակներ: Արձակ գործերի առաջնեկն է «Ատենաբանութիւն» վերնագրուած հրապարակախօսական ընդարձակ ճառը, որը Շնորհալին արտասանել է 1166 Ապրիլի 17ին՝ Ծաղկազարդի կամ Արմաւենեաց տօնի օրը, երբ Հռոմկլայում հրաւիրուած եկեղեցական ժողովում իր եղբօր՝ Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսի (1113-66) կողմից հոչակուել է աթոռակից կաթողիկոս¹: Սակայն Շնորհալու արձակի գագաթը *Թուղթ ընդհանրական* երկն է, որը նրո՞ծ հայոց կաթողիկոս Ներսէս Դ. Պահլաւունու՝ 1166ին տուած անդրանիկ կոնդակն է՝ ուղղուած համայն հայ ժողովրդին: Կիլիկիայի պետութեան եւ իրաւունքի պատմու-

¹ Գրիգոր Յակոբեան, *Ներսէս Շնորհալի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1964, էջ 71:

թեան իրաւայայտ աղբիւրների թում աչքի է ընկնում Ներսէս Շնորհալի կաթողիկոսի *Թուղթ ընդհանրականը*, որը նաեւ իրաւունքի աղբիւրի նշանակութիւն ունի²: Թղթում խրատների ձեւով արծանագրուած են բնակչութեան բոլոր խաւերի մարդկանց վարքագծի նորմեր³:

«Թուղթ ընդհանրական»ը բաղկացած է երկու հիմնական հատուածից, որոնցից առաջինն ուղղուած է հոգեւոր դասի, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասի ներկայացուցիչներին⁴:

Միջնադարում յաճախակի արծարծուող հիմնախնդիրներից մէկը՝ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների գերակայութեան կամ առաջնայնութեան հարցը, Շնորհալին լուծում է յօգուտ հոգեւոր իշխանութեան եւ հենց հոգեւոր դասի ներկայացուցիչների վրայ էլ դնում է աշխարհականների մտաւոր ու բարոյախրատական դաստիարակութեան խնդիրները⁵:

Թղթի ներածականում անդրադառնալով քրիստոնէական հաւատքի հիմնարար ճշմարտութիւններին՝ Շնորհալին ներկայանում է որպէս ներողամիտ ու մխիթարող հայր եւ դէպի փրկութիւն առաջնորդող քաջ, մշտարթուն ու զգօն հովիւ: Նա ուսուցանում է, որ քրիստոնէութեան ճշմարիտ դաւանութիւնը⁶ մեր ներսի աստուածային տաճարի հիմքն է, որի վրայ բարձրացած շէնքը մեր գործած բարի գործերով է ամբողջանում⁷: Ե-

² Ա. Գ. Սուքիասեան, *Կիլիկիայի հայկական պեպրութեան եւ իրաւունքի պատմութիւն (XI–XIV դդ.)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1978, էջ 203:

³ Ա. Ասլանեան *Հայաստանի պեպրութեան եւ իրաւունքի պատմութիւն. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար*, «Վան Արեան» հրատ., Երեւան, 2009, էջ 156:

⁴ Է. Վ. Պօղոսեան, *Հայաստանի պեպրութեան եւ իրաւունքի պատմութիւն*, Հեղինակային հրատ., Երեւան, 2009, էջ 191:

⁵ Գառնիկ Սաֆարեան, *Միջնադարեան հայ իրաւունքը եւ իրաւաբաղաքական միտքը (X–XIII դդ.)*, ԱՌՏ հրատ., Երեւան, 2008, էջ 213:

⁶ «Պարտ է արժանի է Քրիստոսի երկրպագուաց եւ յանուն սուրբ Երրորդութեանն մկրտելոց խօստովանել համագոյ գերիս անձնաւորութիւնն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ, մի բնութիւն եւ մի աստուածութիւն եւ մի իշխանութիւն՝ համապարտի եւ զուգամիտ: Ոչ յումեքէ եղեալ եւ ոչ յեւոյր սկսեալ եւ ոչ ի խոնարհութենէ ի բարձրութիւն ամբարձեալ, կամ ի տկարութենէ ի զօրութիւն փոփոխեալ, այլ յառաջ քան զամենայն յափտեանս էր եւ յայժմուս է եւ յանվախճան յափտեանսն եղիցի՝ անեղ եւ անմահ էութիւն, աներեւոյթ ի բնութենէ եւ երեւելի վասն արարածոցս, տեսող ամենայնի եւ անտես յամենայնէ...»: Աւելի ընդարձակ տե՛ս՝ Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, աշխատ.՝ Է. Մ. Բաղդասարեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1995, էջ 64-67:

⁷ «Եւ արդ՝ այս դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ՝ հիմն է աստուածայնոյ տաճարիս որ ի մեզ: Իսկ գործք բարեաց՝ շինուածն է ի վերայ այսր հիման...»: Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 67: Հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», գրաբարից աշխարհաբարի վերած.՝ տէր Մեսրոպ քահանայ Ա-

թէ մէկն այս հիմքի վրայ «ոսկով» կառուցի, որն արդարութիւնն ու ճշմարտութիւնն է, «արծաթով» կառուցի, որը մտքի մաքրութիւնն ու սրտի սրբութիւնն է, «թանկարժէք քարերով» կառուցի, որոնք բազմապատիկ առաքինութիւնների տեսակներն են, ինչպիսիք են՝ սէր, խոնարհութիւն, ողորմածութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն. սրանք եւ սրանց նմանները արդար հոգիների կողմից հաւատքի հիմքի վրայ դրուած թանկարժէք քարերն են: Հետեւաբար՝ նա, ով ունի կենդանի հաւատք, այսինքն՝ ճշմարիտ դասնութիւնը եւ հաւատքի գործերը, երբեք չի յանդգնում սրտում չարութիւն խորհել կամ բերանով անիրաւութիւն խօսել եւ կամ հոգով մեղք գործել: Եւ ինչպէս գլուխը, առանց մարմնի հետ կապուելու, չի կարող կենդանի մնալ, ոչ էլ մարմինն՝ առանց գլխի, նմանապէս՝ հաւատքն առանց գործերի եւ գործերն առանց հաւատքի՝ երկուսն էլ մեռած են: Քանզի ինչպէս մեռած անդամները մարմնի գործունէութեանը ոչնչով պիտանի չեն, այնպէս էլ մեռած հաւատքը հոգուն զօրութիւն չի տալիս: Ապա մեծ աստուածաբանը յաւելում է, թէ ոչ ոք թող չմտածի, թէ մենք, մեզ մեղքի ախտերից ազատ համարելով, բժշկական այս դեղը ձեզ ենք մատուցում որպէս հիւանդների, այլ ամէն ոք թող գիտենայ, որ մենք ամէնքից աւելի կարիք ունենք հոգու բժշկութեան: Բայց եթէ յիմար հիւանդը մերժում է իր առողջութեան դեղը, որն իրեն մատուցում է մի հիւանդ բժիշկ՝ տեսնելով նրա մարմնի ցաւերը, ապա իմաստուն մարդը չի հետաքրքրում բժշկի բնութեամբ՝ առո՞ղջ է, թէ՞ հիւանդ, այլ քննում է դեղի օգտակարութիւնը՝ առողջարա՞ր է, թէ՞ վնասակար: Արդ, դուք էլ մեր անարժանութեան եւ հոգեւոր պարտականութիւնների թերութիւնների պատճառով մի՛ արհամարհէք եւ ընդունէ՛ք ձեր անձերում հոգիների օգտակար դեղը, որը ձեզ ենք մատուցում: Աղաչում են, ընդունեցէ՛ք այն սիրով եւ յօժարութեամբ... Քանզի թէեւ մենք անարժան ենք, սակայն մեր խօսքը, քանի որ աստուածային է, արժանի է ընդունուելու: Եւ ընդունելն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ գործով կատարելը: Ուստի աղօթենք միմեանց համար, մենք՝ ձեզ համար, իսկ դուք էլ՝ մեզ համար:

Ամփոփելով ներածական մասը՝ իմաստուն հայրապետն իր խօսքն ուղղում է հայ հասարակութեան տարբեր դասերի ներկայացուցիչներին:

Վանքերի խարազնազգեստ կրօնաւորներին համարելով աշխարհի սիւներ եւ թշնամու դէմ պարիսպ, մարմնաւոր հրեշտակներ եւ երկրի վրայ լուսատու աստղեր, որոնց բարի ու լուսաւոր վարքով միշտ փառաւորում է երկնային Հայրը, Շնորհալին աղաչում է նրանց չպակասեցնել իրենց հաւատքի լապտերների լոյսը, չնուազեցնել ողորմութեան ու սրբութեան իւղը,

րամեան, Տիգրան Խաչատրեան, Սեդա Ստամբուլցեան, *Գանձասար հանդէս*, 1991, էջ 31:

այլ իրենց հոգիներում մշտավառ առաքինութեամբ անշէջ պահել աստուածութեան ճառագայթները⁸: Նրանց յորդորում է նիւթական սիրոյ պատճառով չստեղծել իրենց հոգիները Քրիստոսի սիրոյ հրից, չվերադառնալ աշխարհիկ ախտերին՝ հեշտասիրութիւններին ու նիւթեղէն ցանկութիւններին, խոստովանութեամբ մաքրուել անմաքուր խորհուրդներից ու գործերից: Օտարների առջեւ վատթար խօսքերով կամ անպատշաճ գործերով առիթ չտալ հայոց սուրբ հաւատքն ու կարգը հայիոյելու, ազահութեան ախտի պատճառով չհեռանալ միաբանակից եղբայրներից, որպէսզի իրենց վաստակածը ոչ թէ ամբողջ եկեղեցու, այլ միայն իրենց համար ամբարեն, գիւղերում ու քաղաքներում աշխարհականների հետ չբնակուեն, որպէսզի բերանի խօսքերի գարշութիւն, վատթար գործեր, անպատկառ որովայնամոլութիւն, անառակ արբեցութիւն եւ ամէն տեսակ անկարգութիւններ չգործեն: Իսկ եթէ պատահի, որ աշխարհի մէջ (իմա՝ վանքից, անապատից դուրս – Ա.Մ.) բնակուեն, պէտք է իրենց պատշաճ, աստուածային եւ ուղիղ վարքով լուսատու լինեն, որ Աստծոյ անունը փառաւորուի: Այդուհետ Շնորհալիւն Աստծոյ եւ իր հրամանով կանոնական օրէնք է սահմանում, որ խարազնագգեստ կրօնաւորներն այսուհետ վանքի մէջ բնակութիւն հաստատեն եւ մինչեւ իրենց վախճանը ապաշխարութեամբ եւ պարկեշտութեամբ կենցաղավարեն՝ համաձայն վանական կարգի ու կերպի: Իսկ եթէ նրանցից մէկը չանսայ հայոց հայրապետի գրած աստուածային օրէնքներին եւ չհեռանայ աշխարհից, այլ մինչեւ իր մահը յամառօրէն մնայ նոյն վիճակում, ապա Շնորհալիւն իրեն անպարտ է համարում այդպիսի կրօնաւորի կորստեան խղճմտանքից, Աստծոյ առջեւ հենց այդ վանականը պարտական կը լինի իր սեփական արեան համար: Միաժամանակ քահանաներին պատուիրում է այդպիսի կրօնաւորներին չարժանացնել ո՛չ հաղորդութեան, ո՛չ էլ օրինաւոր թաղման, մանաւանդ նրանց, որոնք մինչ ի մահ կը մնան անզոյցութեան մէջ⁹:

Մէկ անգամ եւս շեշտելով, որ կրօնաւորը չպէտք է ստացուածք ու եկամուտ ունենայ, որպէսզի, նիւթականի մասին մտածելով, աստուածային առաքինութիւնների աննիւթական հոգսերից չկտրուի ու իրեն գցի բազմաթիւ վնասների ու հոգսերի ծանրութեան տակ: Աշխարհականների պէս այգեգործութեամբ զբաղուող կրօնաւորներին Շնորհալիւն պատուիրում է այգեկութիւն իրենց ստացած բերքի մի մասը Աստծուն տալ՝ աղքատներին ու կարօտեալներին բաշխելու միջոցով, իսկ պտուղ խնդրողներին էլ դատարկ ու ձեռնունայն ետ չդարձնել, որպէսզի Աստուած էլ իրենց Իր

⁸ *Շնորհալի, Թուղթ ընդհանրական*, էջ 75, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, 1991, էջ 38:

⁹ *Շնորհալի, Թուղթ ընդհանրական*, էջ 77-78, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 40-41:

տնկած դրախտից ունայն ետ չդարձնի: Բերքը տալիս էլ խրատում է, որ խոժոռ դէմքով, զայրացած սրտով ու դժկամ խօսքերով չտան՝ Կայենի մատուցած զոհաբերութեան պէս, որը հաճելի չեղաւ Աստծուն, այլ զուարթառատ կամքով մատուցեն: Գինու ժամանակ էլ պէտք է գինուց բաժին հանեն Աստծուն: Իսկ երբ իրենց պէտք եղածից աւելի գինի ստանան, եւ հարկ լինի վաճառել, ապա վաճառքի դրամից աւելի պէտք է պտղաբերեն Քրիստոսին՝ բաժանելով տառապեալներին ու գերեալներին: Երկրի վրայ չպէտք է գանձեր ամբարել եւ յուսալ, թէ մահից յետոյ ուրիշների ձեռքով այդ ունեցուածքը Աստծուն կը տրուի հանգուցեալի հոգու փրկութեան համար: Ուստի Շնորհալին, ուսուցանելով Սողոմոն Իմաստունի խօսքով («Ով ողորմում է աղքատին, փոխ է տալիս Աստծուն», Առակաց ԺԹ. 17)՝ թախանձում է՝ ոչ որքի մի՛ վստահեցէք, այլ դուք ձե՛ր ձեռքով փոխ տուէք Աստծուն: Ապա մի անգամ եւս յորդորում է աղքատներին ողորմել՝ համաձայն Տիրոջ հետեւեալ խօսքի. «Երանի ողորմածներին, քանի որ նրանք ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս, Ե. 7)¹⁰: Միաժամանակ Շնորհալին կրօնաւորներին կրկին յիշեցնում է, որ պէտք է սակաւապետ, ժուժկալ ու չափաւոր կենցաղով ապրեն, քանզի որովայնամոլութեամբ շատակերութեան կամ գինեմոլութեան տրուելով՝ մեղանշման մէջ կը յայտնուեն: Յորդորում է զգուշանալ եւ հեռու մնալ սպանութիւնից, շնութիւնից, գողութիւնից, գողութեան համար ստութիւնից, սուտ երդումից, ուրացումից, ծուլութիւնից, բամբասանքից, դատարկաբանութիւնից, չարախօսութիւնից, անէճքից, վիրաւորելուց, ընկերոջը դատելուց, պատուիրում, որ իրենց շրթունքներին ու լեզուին դուռ ու դռնապան դնեն, որպէսզի միայն օգտակար ու բարի խօսքերն ազատ ելք ունենան, իսկ չար, վնասակար ու անօգուտ խօսքերը սրտի մէջ բանտարկուեն, միաժամանակ խրատում, որ շահաւէտ ու օգտակար խօսքերը յաճախակի ու անտեղի չարտաբերեն, չլինի թէ լսողները ձանձրանալով նողկան: Ամփոփելով խարազնազգեստ կրօնաւորներին՝ «մաքրագոյններիդ երամին», ուղղուած իր խօսքը՝ Շնորհալին նրանց պատգամում է, որ իրենց խորհուրդները, խօսքերն ու գործերը, հոգու եւ մարմնի ամէն շարժում պարկեշտ ու աստուածավայել լինեն, որպէսզի Աստծոյ անուան եւ կրօնաւորութեան իրենց կարգին հայիոյանքի եւ պարսաւանքի պատճառ չլինեն, այլ տեսնողներին եւ լսողներին գովասանքի եւ փառաւորման առիթ տան, միով բանի՛ «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի՛ տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՎայրն ձեր, որ յերկինս է» (Մատթէոս Ե. 16)¹¹:

¹⁰ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 83, 86, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 46, 49:

¹¹ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 93, 95, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 56, 58:

Յաջորդի Շնորհալին իր խօսքն ուղղում է վանական սուրբ ուխտերի առաջնորդներին՝ նրանց համարելով եկեղեցու մարմնի աչքերի դերն ու սպասաւորութիւնը կատարողներ, քանզի ինչպէս աչքն է անձին առաջնորդում ամէնայն լաւ ու վատ շարժման, նմանապէս էլ առաջնորդները՝ առաջնորդողներին: Շնորհալին նրանցից պահանջում է անփոյթ չլինել աշակերտող հոգեւոր եղբայրների նկատմամբ, նրանցից պահանջել ոչ միայն նիւթական գործերի, այլև հոգեւոր գործերի անթերի կատարում, խտրական վերաբերմունք չդրսեւորել, այլ, ըստ սուրբ Բարսեղի կանոնադրութեան¹², սէրը պէտք է լինի ամէնքի հանդէպ, իսկ պատիւը՝ արժանաւորների: Պէտք է պատուել ծերերին, հոգ տանել նրանց մասին, խնամել տկարներին, եկեղեցի եկած նուէրը չսեփականել, ջլափշտակել վանքի առաջնորդութիւնը: Խօսքի ամարտին Շնորհալին Աստուծոց խնդրում է, որ յաջողութիւն տայ առաջնորդներին ու առաջնորդողներին՝ իր հետ երկնային ճանապարհով ընթանալու, որպէսզի բոլորով հանդերձ արժանանան խոստացած բարիքներին, որոնք Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մէջ են¹³:

Ապա Շնորհալին իր յորդորական խօսքն է ասում աշխարհի մէջ գտնուող եկեղեցու առաջնորդներին՝ եպիսկոպոսներին՝ թախանձելով, որ սթափուեն ու իմաստութեամբ ճանաչեն իրենց աստիճանի բարձրութիւնն ու դերը, քահանաներին ու ժողովրդին գլուխ եւ հրամանատար լինեն, մտքի աննիրի աչքերով բոլորի վրայ հսկեն, խտորութիւններին ուղղեն եւ ուղիղներին իրենց ուղղութեան մէջ հաստատուն պահեն: Պօղոս Առաքելայից մէջբերելով՝ թէ «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել» (Ա. Տիմոթէոս, Գ. 2), յաւելում է, որ նաեւ «որպէս Աստուծոյ տնայրեսի, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ, ո՛չ արծաթասէր, մի՛ կռուող, մի՛ հարկանող, այլ հանդարտ եւ այլն եւս»¹⁴ լինի:

Շնորհալին ցաւով է արձանագրում, որ ներկայ թշուառ ժամանակներում եպիսկոպոսներն այնքան են հեռացել առաքելական ժամանակների եպիսկոպոսների բարի նմանութիւնից, որ այժմ եպիսկոպոսական աթոռ ստանձնել ցանկացողների միակ նպատակն է զանազան հնարքներով հարստութիւն հաւաքել հաւատացեալներից եւ փառք որսալ փառաւորողներից, ինչն իրապէս անարգանք է եւ ոչ թէ փառք: Եւ զանազան հնարքներով ու բռնութեամբ հաւատացեալներից յափշտակած ու կորզած դրա-

¹² Խօսքը տասներկու տիեզերական վարդապետներից սուրբ Բարսեղ Կեսարացու կամ Բարսեղ Մեծի մասին է. նա է կազմակերպել Արեւելեան վանական կեանքը՝ գրելով վանական կեանքին վերաբերող գործեր եւ առանձին կանոնադրութիւն:

¹³ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 99, 101, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 62, 64:

¹⁴ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 104, հմմտ.՝ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 67:

մը, որը պէտք էր եկեղեցու պայծառութեան եւ աղքատների կարիքների համար գործածել, մաքսատուների պէս հաւաքում են ու նուիրում մեր՝ հայոց աշխարհի բռնակալներին: Ուստի այդպիսիք, ինչպէս նաեւ հոգեւոր պատճառներով աթոռազուրկ եղած եպիսկոպոսները, որոնք ցանկանում են այլազգիների բռնութեամբ եւ տուրքերի յաւելումով դարձեալ յափշտակել եպիսկոպոսութիւնը, ոչ միայն քրիստոնէական հաւատքին ու կարգին, այլեւ օրինաւոր քահանայական թաղման եւ սուրբ պատարագի մէջ յիշատակման արժանի չեն: Իսկ ճշմարտութեան ջատագով ու բարիքներին հետեւող եպիսկոպոսներին յորդորում է լիովին պատրաստ լինել հոգեւոր հովութեան իրենց գործին, որպէսզի դատաստանի օրը համարձակ ու պարզերես ներկայանան մեր Տէր Յիսուս Քրիստոսին¹⁵:

Այնուհետեւ Շնորհալիւն իր խօսքն է յղում քահանաների դասին, նշում, որ աստիճանով եպիսկոպոսներից յետոյ երկրորդն են ու իրենց պաշտօնով սահմանուած են բոլոր հոգիներին Աստծուն նուիրելու համար՝ սուրբ աւագանի մկրտութեամբ ծնելով բոլոր մարդկանց որպէս երկնաւոր Հօր որդեգիրներ եւ Քրիստոս Աստծոյ ժառանգակիցներ:

Ապա քահանաներին զգօնութեան ու զգաստութեան է կոչում, որպէսզի բանան իրենց մտքի աչքերը, արթնանան այս կենցաղի մահահրաւէր թմրութիւնից եւ ճանաչեն իրենց երկնաւոր գործի զօրութիւնը, որին հրափրուեցին եւ որը հրեշտակային գերաշխարհիկ զօրութիւններից աւելի վեր է նրանց համար, ովքեր անարատութեամբ եւ սրբութեամբ են կատարում այն: Քահանաներից պահանջում է, որ արհաբար եւ յօժարամիտ սրտով, առանց ծուլութեան, ամէն ժամին համապատասխան սուրբ հայրերի սահմանած աղօթքները անթերի կատարեն եւ մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հաւատքով, մեծ յոյսով, պարզ մտքով, կատարեալ սիրով, երկիրով սպասաւորեն աստուածային խորհրդին, հովուեն Աստծոյ ժողովրդին, միշտ բարի գործեր սովորեցնեն, բարի օրինակ տան բոլորին¹⁶:

Հայոց բազմաշնորհ հայրապետը քահանաներից պահանջում է, որ առանց Պատարագամարտոյցում նշուած սուրբ հանդերձներով զգեստաւորուելու՝ սուրբ պատարագ չմատուցեն, Աւետարան չկարդան, խաչ չվերցնեն իրենց ձեռքը կամ այլ սրբութիւնների չմերձենան: Խոտելի ու դատապարտելի է համարում առանց ճշմարիտ խոստովանութեան, ծածկելով մեղքի գործերն իրենց հոգում, այսինքն, անարժանութեամբ աստուածային խորհրդին սպասաւորելը, ժողովրդից որեւէ մէկին առանց քննելու, առանց մարդու հաւատքի եւ գործերի խոստովանութիւնը լսելու հաղոր-

¹⁵ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 114-117, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 76-79:

¹⁶ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 118-120, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 80-82:

դուփին տալը: Քահանաներին ուսուցանում է, որ իրենց աչքերը, ականջները, լեզուն եւ մարմնի բոլոր անդամները կրթեն ի բարին շարժուելու եւ չարի հանդէպ անշարժ մնալու համար, իրենց միտքը ողջախոհութեամբ եւ սրբութեամբ աշխարհիկ ցանկութիւններից ու զբօսանքներից հեռու պահելուց յետոյ միայն մօտենան երկնային խորհրդի սպասաւորութեանը, որպէսզի ոչ թէ իրենց անձի դատապարտութեան համար ուտեն եւ ըմպեն Տիրոջ մարմինն ու արիւնը, այլ իրենց ու իրենց ժողովրդի մեղքերի քաւութեան եւ հոգիների մաքրութեան համար: Միաժամանակ թախանձագին աղաչում է, որ քահանաները դժուարաշարժ լինեն վիճաբանութեան ու կռուի մէջ ու դիւրաշարժ՝ հաշտութեան եւ խաղաղութեան մէջ, չջանան զրկել եւ անիրաւել ընկերոջը: Յորդորում, որ քահանաներից աւագներն ու իմաստութեամբ հաստատունները ներողամտութեամբ ու համբերութեամբ սիրաշահեն կրտսերներին ու տկարամիտներին, իսկ կրտսերներին էլ պատուիրում է, որ խոնարհ եւ հնազանդ լինեն աւագների եւ իմաստուն քահանաների նկատմամբ: Պահանջում է չծուլանալ, տգիտութեան կուրուփինը չնախընտրել քահանայական ուսումից, եկեղեցական գրքերը ճիշտ կարդալ, սաղմոսներն ու պատարագի խօսքերն անգիր իմանալ, երկիրով կատարեն պատարագն ու սուրբ խորհուրդները, կնքահայրերը լինեն Քրիստոսի ճշմարիտ երկրպագուներ: Քահանաներին սաստում է, որ, ըստ հարկի, դրամ չպահանջեն մկրտութեան անգին շնորհի կամ մահամեծին հաղորդութիւն տալու համար, քանզի նրանցից, ովքեր ունեն եւ սիրով տալիս են որպէս եկեղեցու նուէր՝ վերցնեն, իսկ նրանց, ովքեր աղքատ են, չբռնադատեն: Իստագոյնս պահանջում է այլազգիների մանուկներին դժուարութեամբ եւ բացառիկ՝ հարկադրուած դէպքերում մկրտել, ինչպէս նաեւ ծածուկ, գաղտնի պսակ չկատարել, այլ եթէ ծնողներ ունի, եւ միասին են ապրում, նրանց գիտութեամբ եւ կամքով թող լինի, իսկ եթէ ծնողների հետ չի ապրում, բոլորի ներկայութեամբ թող յայտնապէս դրուի պսակը, որպէսզի բոլորը վկայեն, թե ուղիղ է եւ Աստծոյ օրէնքներին ո՛չ հակառակ, կնաթող այրերին ու այրաթող կանանց թող ոչ ոք առանց կանոնական հրամանի չպսակի, որպէսզի, ըստ կանոնի, քահանան չլուծարուի, չզրկուի քահանայական կարգից, իսկ դրուած պսակն էլ քանդուի, առեանգման դէպքում պսակ չկատարել, քանզի դա Աստծոյ օրէնքներին հակառակ է եւ բիրտ չարիքների պատճառ, պսակուելու համար հասուն տարիք պէտք է ունենան, տղաները՝ 15ը լրացրած, իսկ աղջիկները՝ 12ը կամ ավելին, որպէսզի կարողանան բանականների նման հաճութեամբ զուգուել իրար հետ, եւ հաստատուն լինի զուգաւորումը¹⁷: Շնորհալու հե-

¹⁷ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 122, 124, 129-31, 133-34, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 84, 86, 90-92, 94-95:

տետողութեամբ՝ Մխիթար Գօշն իր *Դատաստանագրքի* ՃՂԲ. գլխում արգելում է անչափահաս տղային պսակելը. «Տղայոց պսակ մի՛ որ իշխեսցէ դնել, մինչեւ ի չափ հասեալ... եւ թէ որ յանդգնի՛ լուծցի ի քահանայութենէն ու հարիւր դրամ փուզանս փացէ յեկեղեցին...»¹⁸: Անուանի օրէնսգէտը ՄԽԹ. գլխում էլ գրելով, թէ «Կանոնական հրամանաւ է փողայոց պսակ ոչ արհնել մինչեւ ի գիտել զկարիս բնութեանն», արգելում է սեռահասուն մեծ տղամարդուն պսակել փոքրահասակ աղջկայ հետ¹⁹: Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի* ՃԺԱ. յօդուածը եւս տղամարդու համար ամուսնութեան նուազագոյն տարիք է սահմանում 15 տարեկանը²⁰:

Ուշագրաւ է, որ Շնորհալին կողմնակից է, որ ամուսնացող այրը աւելի մեծ պէտք է լինի տարիքով, քան կինը: Որպէս այս պահանջի հիմնատրուում, նա նշում է այն փաստը, որ «որպէս զԱդամ նախ ստեղծեալ Աստուծոյ եւ ապա զԵւայ»²¹: Որ ամուսնացող այրը աւելի մեծ պէտք է լինի տարիքով, քան կինը՝ ձեւակերպուած ենք տեսնում նաեւ Գօշի *Դատաստանագրքում*. «Յարմարումն առն եւ կնոջ ըստ պատշաճի ցուցեալ է՝ ժամանակաւ երէց լինել առն, եւ կրտսեր՝ կնոջն, որպէս ի ստեղծմանն ցուցաւ նախաստեղծիցն, զի ամենայնիւ իշխան լիցի այրն ի վերայ կնոջն, որպէս յայլսն, նմանապէս յամուսնանալն»²²:

Շնորհալին քահանաներից նաեւ պահանջում է, որ ստիպողաբար, բռնատրոնների հարկադրմամբ, առանց տղամարդու եւ կնոջ կամքի, պսակադրութիւն չկատարեն: Նման պսակի լուծարումը նա համարում էր խղճից ազատ, քանզի այդ պսակը Աստուծոյ պատուիրանի համաձայն չի կատարուել, այլ մարդկանց բռնութեամբ ու հարկադրանքով: Այսինքն՝ պսակադրութեան անհրաժեշտ նախապայման էր համարում ե՛ւ տղամարդու, ե՛ւ կնոջ համաձայնութիւնը, ազատ կամարտայայտութիւնը: Պսակի համար չհասութիւն է համարում, եթէ երկու կողմերի ազգակցութեան աստիճանը կատարելապէս չորրորդ սերնդի չէ, ուստի քահանաներից պահանջում է չօրհնել այդպիսի պսակը: Շնորհալին քահանաներից պահանջում է նաեւ Բուն Բարեկենդանից մինչեւ Հոգեգալստեան շաբաթապահքի աւարտը, ինչպէս նաեւ տարուայ բոլոր կիրակիներին, պսակ չկատարել²³,

¹⁸ Մխիթար Գօշ, *Գիրք դատաստանի*, աշխ.՝ Խոսրով Թորոսեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 110:

¹⁹ Նոյն, էջ 153:

²⁰ Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք*, փոխադրութեան հեղինակ եւ խմբագիր՝ Մաքսիմ Ոսկանեան, Իրաւունք, Երեւան, 2008, էջ 97:

²¹ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 134:

²² Գօշ, էջ 37, հմմտ.՝ էջ 309:

²³ Ըստ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանած կարգի՝ ներկայումս պսակի համար արգելուած օրեր են՝ տարուայ բոլոր Կիրակի օրերն ա-

քանզի քառասնօրեայ պահոց շրջանը Տիրոջ չարչարանքը խորհրդանշող սզոյ եւ տրտմութեան օրեր են, ոչ թէ գինարբուքի եւ հարսանեկան ուրախութիւնների: Նաեւ պահանջում է, որ քահանաները խօսքով կամ գործով չընդդիմանան եպիսկոպոսներին, եկեղեցու դատաստանը այլազգի կամ քրիստոնեայ մարմնաւոր իշխանների մօտ չտանեն, քաղաքի կամ գիւղի հոգաբարձու չլինեն, աշխարհական իշխանների գաւառապետ կամ հարկեր եւ սակեր գրող չլինեն կամ աշխարհիկ այլ գործակալութեամբ, ինչպէս նաեւ զինուորականների նման ծիավարութեամբ կամ զինավարժութեամբ չզբաղուեն, ուրիշ քահանայի կողմից պատուիրանազանց բանադրուածներին էլ եկեղեցի չընդունեն²⁴:

Ներսէս Շնորհալիւն ընդունում էր մարդկանց հաւասարութեան գաղափարը²⁵, իսկ որպէս պետականամէտ գործիչ՝ խորապէս մտահոգուած էր

նանց բացառութեան, իրաքանչիւր Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, հինգ տաղաւար տօների մեռելոցի օրերը, Ս. Ծննդեան, Անուանակոչութեան, Տեառնընդառաջի, Աւետման, Ս. Համբարձման օրերը, ամբողջ Մեծ պահքի եւ Զատիկ առաջին ութ օրերը՝ այսինքն, Բուն Բարեկենդանից մինչեւ Նոր կիրակի, Առաջաւորաց, Վարդավառի, Վերափոխման, Խաչվերացի, Յիսնակի շաբաթապահքերի հինգ եւ Ս. Ծննդեան պահքի ու Ճրագալոյցի եօթ օրերը: Պսակի արարողութիւն կատարելու արգելեալ օրերը վերջանում են, ըստ եկեղեցական օրերի կանոնի, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, ուստի ներելի է երեկոյեան ժամերգութեան աւարտից ու օրը երեկոյեանալուց յետոյ պսակ օրհնել, եթէ յաջորդ օրը արգելուած օր չէ: Վերոյիշեալ տեղեկատուութիւնը սիրայօժար մեզ տրամադրելու համար մեր շնորհակալութիւնն ենք յայտնում հոգեշնորհ Զաքարիա Ծ. վրդ. Բաղումեանին:

²⁴ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 135-40, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 97-101:

²⁵ Գ. Սաֆարեան, «Մխիթար Գօշի պետաիրաւական հայեցակարգը (մահուան 800ամեակի կապակցութեամբ)», *Մխիթար Գօշի գիտական ժառանգութիւնը. պատմութիւն եւ արդիականութիւն (գիտաժողովի նիւթերի ժողովածու)*, Գիրք 3, Երասխա միջազգային համալսարան, Երեւան, 2014, էջ 18: Շնորհալիւն հետեւեալ կերպ է շարադրում մարդկանց հաւասարութեան մասին իր կարծիքը. «...զի ոչ թէ այլ բնութիւն է նոցա, եւ այլ՝ ձեր. այլ ի միոյ կաւոյ եւ ի խառնուածոյ, քանզի նմանապէս է տէրանց եւ ծառայից, փարթամաց եւ աղքատաց, սկիզբն գալոյ յաշխարհի եւ կարարած ելիցն յաշխարհէ: Վասն զի զուգահաւասար ամէնայնքն ծննդեամբ մտանն յերկիր եւ մահուամբ ելանն ի սմանէ, իսկ մեծութիւն եւ փոքրութիւն, բարձրութիւն եւ խոնարհութիւն, բարեբախտութիւն եւ պանդխտութիւն, ի մէջ ծննդեանն եւ մահուանն պարտաւոր մարդկան, որ են իբրեւ զերազք զարթոցելոց, որպէս ի փորձոյ անտի յայտնի է ամէնեցուն իմաստնոց եւ տգիտաց, զի ոչ ինչ ի սոցանէ ունի զհաստատութիւն: Վասնորոյ մի՛ վասն անցաւորիս կենաց կորուսանէք զպիտեանական զկեանսն... » (Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 145):

իրաւակարգի եւ օրինականութեան պահպանման ու հասարակութեան առողջացման հարցերով:

Ներսէս Շնորհալու վերոյիշեալ յորդորների ու կանոնների յետագայ զարգացմամբ տեսնում ենք իրաւական ձեւակերպումներ Գօշի *Դատաստանագրքի* հետեւեալ գլուխներում.- Գլուխ Գ. *Յաղագս դատաստանաց հարց անապատաց եւ նոցունց եղբարց*, Գլուխ Դ. *Յաղագս դատաստանաց վարդապետաց*, Գլուխ Ե. *Յաղագս դատաստանաց քահանայից*, Գլուխ ԼԶ. *Յաղագս դատաստանաց, որք չիցեն քահանայք եւ իրս ինչ գործիցեն, եւ կամ քահանայք՝ անիրաւ ինչ*, Գլուխ Խ. *Յաղագս դատաստանաց իշխելոց եպիսկոպոսին եկեղեցականացն իրաց*, Գլուխ ԽԱ. *Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց եւ քահանայից, որ զպէս ժառանգաւորացն ոչ տայցէն*, Գլուխ ԽԳ. *Յաղագս դատաստանաց երկրորդ ձեռնադրելոց*, Գլուխ ԽԴ. *Յաղագս դատաստանաց գողոց յեկեղեցոյ*, Գլուխ ԽԵ. *Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց չձեռնադրել զոր յիւրոցն արտաքոյ կամաց եւ միաբանութեան այլոցն*, Գլուխ ԽԸ. *Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց, որ արկանէ զանձն յերկրաւոր հոգս*, Գլուխ ԾԼԵ. *Յաղագս դատաստանաց ձեռնադրութեան եպիսկոպոսաց*, Գլուխ ԾԼԸ. *Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց եւ քահանայից, որ զայլոց վիճակ եւ զժողովորդ յափշտակեն*, Գլուխ ԾԼԹ. *Յաղագս դատաստանաց անկարգապէս եկեղեցականաց*, Գլուխ ԾԽԸ. *Յաղագս դատաստանաց քահանայից պղծութեան*, Գլուխ ԾԾԱ. *Յաղագս դատաստանաց գաւառի երիցանց*, Գլուխ ԾԾԲ. *Յաղագս դատաստանաց քորեպիսկոպոսաց*, Գլուխ ԾԾԹ. *Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց չձեռնադրել յայլոյ վիճակէ*, Գլուխ ԾԿԴ. *Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց, որ զայլոյ եկեղեցեաց առեալ զիրն զարդարիցէ* եւն.²⁶: Շնորհալու վերոյիշեալ յորդորների ու կանոնների վերաբերեալ առանձին յօդուածների տեսքով իրաւական ձեւակերպումներ ենք գտնում նաեւ Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի* հետեւեալ օրէնքներում.- Ը. Այն մարդու մասին, որ քահանայ չէ, բայց ներկայանում է իբրեւ քահանայ, Ժ. Նրանց մասին, ովքեր Աստծոյ իրաւունքները կաշառքով ծախեն, ԺԳ. Այն հոգեւորականի մասին, որ եկեղեցու ձէթը կամ մոմը իր տուն տանի, ԺԶ. Այն մասին, թէ կարո՞ղ են եպիսկոպոսները եկեղեցու կողմից հայրենական կալուածք ունենալ, ԺԷ. Այն մասին, որ եպիսկոպոսները աշխարհական գործով չպէտք է զբաղուեն, Ի. Վարդապետ լինելու իրաւական սահմանի մասին, ԻԱ. Այն մասին, որ եպիսկոպոսները պարտաւոր են հնազանդ լինել արքեպիսկոպոսին, ԻԲ. Երբ եպիսկոպոսը դատում է հոգեւորականին կամ կարգալոյծ

²⁶ Գօշ, էջ 33-34, 34-36, 36-37, 49, 51, 52, 53, 54, 88, 89-90, 93-94, 94-95, 98, 99:

անում, ԻԳ. Եպիսկոպոսների եւ նրանց թեմերի մասին, ԻԵ. Առաջնորդ եկեղեցիների եւ նրանց ժողովրդի մասին, Լ. Քահանաների հպարտութեան եւ ամբարտաւանութեան մասին, ԼԱ. Այն երէցի մասին, որին ժողովուրդը չի հաւանում, ԼԲ. Աագերէցների եւ եկեղեցապահների մասին, ԼԳ. Վանական արեղանների մասին, ԽԴ. Վանքերը եպիսկոպոսների կողմից դեկավարուելու մասին, ԽԾ. Սուտ քահանաների մասին, Ծ. Աբեղաների մասին, որոնց ծովս չի տրում, ԾԳ. Այն մասին, երբ եկեղեցու գլխատորը ջանում է իր ընկերոջ աստիճանը խլել, ԾԴ. Այն մասին, որ եկեղեցականներին արգելում է վաշխով դրամ տալ, ԿԲ. Եկեղեցական կենցաղավարութիւնը կարգաւորելու մասին, ԿԵ. Անապատականների եւ նրանց եղբայրների մասին, ԿԷ. Այն անգէտների մասին, որ անարժանաբար են հաղորդութիւն տալիս, ՀԴ. Ուխտատեղիների մասին, ՀԷ. Եկեղեցականներին վերաբերող այլ կարգերի ու պարտաւորութիւնների մասին եւ այլ յօդուածներում²⁷:

Թողթի երկրորդ հատուածում Շնորհալին իր ազդու խօսքն է ուղղում աշխարհիկ դասի վերնախաւին՝ իշխաններին, պատուիրում, որ հնազանդ լինեն Աստուծոյ օրէնքներին, երկիւղով ու հնազանդութեամբ ծառայեն Տիրոջը, որպէսզի չպատժուեն իբրեւ Տիրոջ դէմ ապստամբներ, այլ որպէս մտերիմ ծառաներ պատիւ ընդունեն երկնաւոր Թագաւորից: Ապա յանձնարարում անիրաւութեամբ չվարուել հպատակների հետ, ծանր ու անտանելի հարկեր չպահանջել, իւրաքանչիւրին օրէնքով եւ ըստ իր կարողութեան չափի դատել, ոչ ոքի չգրկել, տնանկներին ու աղքատներին չնեղել՝ համաձայն աստուածային պատուիրանի, թէ. «*Մի՛ տար պատճառս աղքատին անիծանել զքեզ, զի մի՛ արարիչ նորա լուսիցէ նմա եւ հապուցէ քեզ չարիս*» (Առակաց, Լ. 19)²⁸: Շարունակելով իշխաններին տրուող հրահանգները՝ Շնորհալին պահանջում է, որ իրենց երկրի (տիրոյթների - Ա.Մ.) վրայ չար ու անիրաւ գործավարներ եւ գաւառապետեր չնշանակեն, այլ արդարամիտ ու արդարադատ պաշտօնեաներ նշանակեն, որեւէ մէկին անիրաւութեամբ չդատեն, այլ ուղիղ, արդար դատաստան անեն, չանտեսեն այրու եւ աղքատի իրաւունքները, այլ որբի դատը տեսնեն եւ այրու իրաւունքը տան, իրենց ենթականերին չծառայեցնեն անբան կենդանիների պէս, այլ քաղցրութեամբ ու ներողամտութեամբ նրանց վերաբերուեն, չափից ատելի չծանրաբեռնեն, աշխատաժամերը պակասեցնեն, աշխատողների վարձը բռնութեամբ չկտրեն, չխաբեն եւ չստեն՝ ո՛չ հպատակներին, ո՛չ էլ օտարներին, իրենց զինուորների ու բոլոր ծառայողների համար

²⁷ Սմբատ Սպարապետ, *Դատարանագիրք*, էջ 41, 43, 44, 45, 46, 47, 48, 51, 52, 64, 65, 67, 70, 75, 77, 80, 82:
²⁸ Շնորհալի, *Թողթ ընդհանրական*, էջ 143, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թողթ ընդհանրական*, էջ 103:

սահմանուած թոշակը չպակասեցնեն (քանզի մեծ զրկանք ու անիրաւութիւն է դա), եթէ մէկը չցանկանայ այլեւ ծառայել, բռնութեամբ ու խստութեամբ արգելք չլինեն, այլ ջանան սիրով ու կամքով պահել, եթէ չկայ ծայրայեղ անիրաժեշտութիւն, ապա չերդուեն, աններելի յանցանքով՝ երդմնազանցութեամբ կամ երդումն ուրանալով, չմեղանչեն, տուած երդումը սրբութեամբ պահեն կամ կատարեն, բարկութիւնից դրդուած եւ անարդար իրաւունքով որոշում չկայացնեն՝ պատժի ենթարկելու կամ մահուան դատապարտելու, քանզի Նոր օրէնքը դա չի արտօնում, իսկ Հին օրէնքը թէեւ թոյլատրում է պատժի կամ մահապատժի ենթարկել, սակայն ո՛չ անտեղի, այլ ըստ յանցանքների արժանի լինելու, ուստի, եթէ իշխանութիւն ունենալով՝ Նոր օրէնքով շարժուելը անկարելի են համարում, թող շարժուեն Հին օրէնքի հրամաններով՝ այդ դէպքերի համար սահմանուած, բայց առանց օրէնքի չդատեն, մարդկանց անիրաւաբար չպատժեն կամ չսպանեն, վրիժառու եւ քինախնդիր չլինեն, այլ Քրիստոսի պատուիրանի համաձայն՝ իրենց դէմ մեղանչողների նկատմամբ ներող ու համբերող լինեն, որպէսզի Աստուծոց քաղցրութիւն ու բարերարութիւն ընդունեն²⁹:

Շնորհալու՝ աշխարհիկ դասի վերնախաւին՝ իշխաններին ուղղուած վերոյիշեալ յորդորների ազդեցութեամբ իրաւական ձեւակերպումներ ենք տեսնում Գօշի *Դատաստանագրքի* հետեւեալ գլուխներում. *Գլուխ Ի. Յաղագս դատաստանաց յանցաւոր իշխանաց առ թագաւորս, եւ այլոց՝ առ նոսա, Գլուխ ԼԵ. Յաղագս դատաստանաց վնասելոց շինականաց ի տէրանց առաւել, քան զսովորականն լեալ հրաման, Գլուխ ԿԱ. Յաղագս դատաստանաց ծառայից եւ աղախնաց, սպանելոց ի տէրանցն, Գլուխ ԿԴ. Յաղագս դատաստանաց ծառայից եւ աղախնաց հարուածոց ի տէրանց*³⁰ եւ Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի* հետեւեալ յօդուածներում. Է. Երբ մէկը հալածում է իր մշակին եւ ուժից վեր ծանր բեռներ վերցնել տալով՝ սպանում նրան, ՃԽԸ. Մարդու մասին, որ հարուածում է իր ծառային եւ ծառան մեռնում է, ՃԽԹ. Ճորտի մասին, որ փախել է իր պարոնից, ՃՀԱ. Տարբեր դասերի մարդկանց եւ հեծեալների մասին³¹ են.:

Կիլիկեան հայկական պետութեան մէջ իր արտօնեալ դիրքով առանձնանում էր զինուորականութիւնը, որը պետութեան հիմքն էր ու անվտանգութեան երաշխաւորը, ուստի պատահական չէ, որ Շնորհալին իր *Թղթում* հարկ է համարել առանձին խօսք ուղղել նաեւ զինուորականութեանը: Վերջիններիս համարելով իշխանութիւնների ու պետութիւնների ենթականեր՝ Շնորհալին նրանց պատուիրում է ամէն ինչում հնազանդ

²⁹ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 144-52, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 104-13:

³⁰ Գօշ, էջ 44, 49, 58, 59:

³¹ *Սմբատ Սպարապետ*, էջ 40, 116, 125:

լինել իրենց տէրերին, ցուցադրաբար չծառայել, տիրոջ անձի, նրա ամրոցի կամ ունեցուածքի հանդէպ խօսքով կամ գործով նենգութիւն չանել, արդարութեամբ եւ իրաւունքով վարուել հպատակների հետ, անխղճօրէն եւ անիրաւաբար որեւէ մէկին չնեղել, չզրպարտել, ողորմութեամբ ու սիրով վարուել բոլորի հետ, աղքատների ունեցուածքը չյափշտակել, անմեղ արին չհեղել, հասարակ ժողովրդից անելի՝ երկիւղել Աստուծոց, Նրա պատուիրանները պահել, քանզի ամէն ժամ թշնամիների սրի դէմ են պատերազմում, հետեւաբար մարմնական զէնքերից առաւել՝ հաւատքի զէնքերով պէտք է սպառազինուեն՝ այսինքն, աստուածապաշտութեամբ, արդարութեամբ, սրբութեամբ, պահքով, աղօթքով եւ ողորմածութեամբ, որպէսզի պատերազմներում Աստուած լինի իրենց թշնամիների ախոյեանն ու ոսոխներին հալածի իրենց առջեւից³²:

Զինուորականներից յետոյ իր խօսքն ուղղելով քաղաքացիներին (քաղաքաբնակներին - Ա.Մ.)՝ առետրականներին եւ արհեստաւորներին, Շնորհալին նրանց յորդորում է ուղիղ եւ անարատ կենցաղավարութեամբ ապրել, խաբէութեամբ ու նենգութեամբ ապրանքներ չվաճառել անմեղ գնողներին, ստախօսութեամբ եւ սուտ երդմամբ չխաբել ռամիկին ու տգէտին, այլ արդարութեամբ ու շիտակութեամբ վաճառել իրենց ձեռքի գործերը եւ վաճառքի նիւթերը, իրենց պարզամտութեան համար չարհամարհել շինականներին իբրեւ տգէտների, վաշխերի շահով չկեղեքել կարիքաւորներին, այլ որպէս եղբայրներ կարեկից ու օգնական լինել նրանց, ինչ որ փոխ են տալիս, այն միայն պահանջեն պարտապաններից, քանզի Քրիստոս հրամայում է ոչ միայն առանց վաշխի տալ, այլեւ՝ անհատոյց. «*փութ այնցիկ, յորոց ակն ոչ ունիցիք առնուլ*» (Ղուկաս, Զ. 34), ինչպէս նաեւ իրենց ունեցուածքից ողորմութիւն տալ կարօտեալներին ու աղքատներին, որպէսզի փոխարէնը դատաստանի օրը Քրիստոսից հատուցում ստանան³³:

Այնուհետեւ Շնորհալին իր խօսքն ուղղում է երկրագործներին ու համայն ժողովրդին՝ համարելով, որ իրենց հոգիները բժշկելու եւ մեղքերի հիւանդութիւնից առողջանալու համար առաւելաբար նրա՛նք ունեն հոգեւոր սպեղանիների կարիք: Վերջիններիս Շնորհալին թախանձում է, որ անցաւոր կեանքի մարմնական հեշտութեամբ չտարուեն ու կորցնեն հոգիների յաւիտենական հանգիստը, որը երկնքի արքայութեան մէջ վայելում են սրբերը: Ապա պատուիրում է չտրուել գինեմոլութեան ու հարբեցողութեան, որ մայր է ամէն տեսակ պղծութիւնների, պոռնկութեան, անիրա-

³² Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 153-55, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 114-16:

³³ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 156-57, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 117-18:

ութեան, վէճի, անարգալից աղտոտ խօսքերի, իսկ եթէ որեւէ յանցանքով մեղանչել են Աստծոյ դէմ, ապա խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ թող քաւեն իրենց մեղքերը, այդուհետ չարի փոխարէն միայն բարիք գործեն, լեզուն սատանայի գործիք չդարձնեն՝ տեղալով չար ու դառը հայիոյանքներ, որոնցով անարգում է թէ՛ հաւատքը, թէ՛ հոգին, թէ՛ ասագանի մկրտութիւնը, թէ՛ խորհրդակատար քահանան, թէ՛ անձը, թէ՛ բերանը, քանզի այս անարգանքը աւելի մեծ յանցանք է, քան ուրացումը: Նաեւ ժողովրդի լայն զանգուածներին ամենդում է, որ իրենց մանուկներին Աստծոյ երկիւղով սնուցեն, խրատեն, որպէսզի մանուկ հասակից լինեն աստուածասէր, ողորմած ու աղօթասէր, աղտոտ խօսքեր ու հայիոյանքներ չսովորեն, քանզի վաղ մանկական հասակում ծնողական խրատն աւելի անջնջելի յիշողութեամբ է դրոշմուում մանուկների մտքում: Բարիքների գլխաւորը համարելով սէրը՝ պահանջում է, որ բոլոր մարդիկ իրար հանդէպ սէր տածեն, իսկ աղքատների, մերկերի, հիւրերի, բանտարկեալների ու հիւանդների նկատմամբ՝ կարեկցութիւն եւ ողորմածութիւն, որպէսզի դրանց փոխարէն բարիքների վարձք ընդունեն Տիրոջից ու Յիսուս Քրիստոսով երկնային արքայութեան ժառանգորդ դառնան³⁴:

Թողթի վերջում Շնորհալին իր խրատական խօսքն է ուղղում կանանց, նրանց պատուիրում ամէն ինչում պարկեշտ ու բարեձեւ լինել, ինչպէս վայել է քրիստոնէաներին, ոսկուց եւ արծաթից առաւել՝ իրենց անձերը ամօթխածութեամբ ու պատկառանքով զարդարեն, ներկերով չչպարեն իրենց դէմքը՝ անմիտ երիտասարդների համար մեղքի գայթակղութեան պատճառ դառնալով, սատանայական կախարդութեան եւ աղանդաւոր դեղատուութեան չհետեւեն, հեռու մնան այդպիսի մեծ ու աններելի չարիքներից, որպէսզի սատանայի հետ գեհենի հրին չդատապարտուեն, գործակից չլինեն սատանային՝ կախարդութեան չար գործերով եւ նրա հետ գեհենի հրում յաւիտեան չայրուեն, զգուշանան մեղքերից ու տարատեսակ չար գործերից: Շնորհալին խոստանում է աղաչել Տիրոջը, որ կանանց միջից հանի քարեղէն սիրտը եւ տայ մարմնեղէն սիրտ, որը արգանդ հող կը լինի ու կ'արդիւնաւորի Աստծոյ խօսքի սերմը նրանց հոգիներում եւ բազմապատիկ՝ մէկի փոխարէն հարիւր, կը պտղաբերի ու, նրանցով հանդերձ, աջակողմեանների հետ Յիսուս Քրիստոսով կը դասուեն յաւիտենական կեանքում³⁵:

Ներսէս Շնորհալու՝ զինուորականութեանը, քաղաքաբնակներին, զիւղացիութեանը եւ կանանց ուղղուած յորդորների ու կանոնների յետագայ

³⁴ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 158-60, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 119-21:

³⁵ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 161-62, հմմտ.՝ Ա. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 122-23:

զարգացմամբ բաւական մեծ թուով իրաւական ձեւակերպումներ կան Գօշի *Դատաստրանագրքի*³⁶, ինչպէս նաեւ Սմբատ Սպարապետի *Դատաստրանագրքի*³⁷ մի շարք գլուխներում ու յօդուածներում:

Շնորհալու *Թուղթը* ծրագրային փաստաթուղթ է համարուել եւ դարեր շարունակ ուղեկցել է հայ հոգեւորականութեան բազմաթիւ սերունդների: Երկն այնքան է կարեւորուել, որ 1268ին այն երկրորդ անգամ բազմացրել ու իր առաջնորդող նամակով Հայ Եկեղեցու բոլոր թեմերին է ուղարկել հայոց կաթողիկոս Յակոբ Ա. Կլայեցին (1268-86): Շնորհալու այս երկի նմանողութեամբ է գրուել Յովհաննէս Պլուզ Երզնկացու *Խրատը հասարակաց քրիստոնէից* երկը եւ նմանաբնոյթ այլ աշխատութիւններ³⁸:

Այսպիսով՝ *Թուղթը ընդհանրականը* բաղկացած է երկու հիմնական հատուածից, որոնցից առաջինն ուղղուած է հոգեւոր դասի, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասի ներկայացուցիչներին: *Թուղթը ընդհանրականում* Շնորհալին մատնանշում ու նշաւակում է հասարակական կեանքում դրսեւորուած անառողջ, յոռի բարքերը, մեղքերն ու արատները, ահազանգում դրանց վնասակար հետեւանքների մասին, իր ազդու խօսքն ուղղում հայ հասարակութեան բոլոր դասերի ու խաւերի ներկայացուցիչներին: Միաժամանակ, խորապէս մտահոգուած լինելով հասարակութեան առողջացմամբ, ականաւոր աստուածաբանը, մարդասէրն ու ազգանուէր գործիչը տալիս է այդ աղտերից ազատուելու դեղատոմսեր եւ ուղիներ: Շնորհալու յորդորները վերացական չեն, չունեն կեանքից ու իրականութիւնից կտրուած բնոյթ, այլ փաստարկում ու հիմնաւորում են որոշակի պատմական իրադարձութիւններով, սուրբգրային յղումներով ու առօրեական օրինակներով:

Այսպիսով՝ Շնորհալին հասարակութեան տարբեր դասերի ու խաւերի ներկայացուցիչների համար սահմանելով վարքագծի ու ապրելակերպի նորմեր՝ արգելքների ու խրատների միջոցով ձգտել է հայ հասարակութեան առողջացմանը: *Թուղթը ընդհանրականի* կարեւորագոյն առանձնաշատկութիւնն այն է, որ այն սոսկ հայ միջնադարեան ականաւոր մտածողներից մէկի գրական երկ կամ պատմաիրաւական փաստաթուղթ չէ, որում արտացոլուած են ժամանակի հասարակական համակեցութիւնը կարգաւորող բարոյախրատական յորդորներ ու ցուցումներ, իրաւական յարաբերութիւնների նորմեր, կամ ընդհանրապէս կիլիկեան հասարակութեան

³⁶ Գօշ, էջ 39-41, 44, 45-49, 54-56, 57, 80-84, 95-96, 103, 130, 146 եւ այլն:

³⁷ Սմբատ Սպարապետ, էջ 83-99, 103-104, 107-111, 117-142:

³⁸ *Սահմանադրական մշակոյթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամեայ տարեգրութեան ծայրերում*, խմբ.՝ Գ. Յարութիւնեան, Ա. Մովսիսեան, Տ. Արարատ քահանայ Պօղոսեան, Ս. Մելքոնեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրատ., Ս. Էջմիածին, 2020, էջ 315:

տարբեր դասերի ու խաւերի միջեւ իրաւայարաբերութիւններն ու փոխյարա-երութիւնները կարգաւորող նորմեր, այլ այն, որ Շնորհալու այս երկը հայոց կաթողիկոսի կողմից պաշտօնական միջավայրում՝ կաթողիկոսա-րանում, իրաւասու անձի՝ հոգեւոր բարձրագոյն դատարանը գլխատրող, Մեծ դատաւորի գործառոյթներն իրականացնող պաշտօնեայի ստեղծած իրաւայայտ աղբիւր է, նորմատիւ փաստաթղթի արժէք ձեռք բերած պաշ-տօնական իրաւաբանական ակտի նշանակութեամբ՝ կանոնական իրա-ւունքին բնորոշ յորդորի, նախազգուշացման, արգելանքի, դատապարտ-ման, պատժի ու յատուցման, թողութեան-ներման ձեւակերպումներով: *Թուղթ ընդհանրական*ում Շնորհալու առաջ քաշած առաջադիմական գա-ղափարները, յորդորներն ու արգելանքները, անշուշտ նաեւ գործնական նշանակութիւն եւ կիրառութիւն են ունեցել: Ըստ այդմ էլ՝ *Թուղթ ընդ-հանրականը* ոչ միայն պատմական արժէքաւոր վաւերագիր ու գրական երկ է, այլեւ բարոյախրատական գործ է, իրաւագիտական յուշարձան, իրաւայայտ աղբիւր եւ նորմատիւ փաստաթղթի արժէք ձեռք բերած պաշ-տօնական իրաւաբանական ակտ, որն այսօր էլ չի կորցրել իր արդիակա-նութիւնն ու աղբիւրագիտական արժէքը: Ուստի եւ ամէնեւին էլ պատահա-կան չէ, որ *Թուղթ ընդհանրական*ում Շնորհալու առաջ քաշած առանցքա-յին իրաւական գաղափարներն ու ձեւակերպումները դրուել են յետագա-յում ստեղծուած հայ ազգային դատաստանագրքերի հիմքում, իսկ *Թուղթ ընդհանրական* երկն էլ դարձել է հայ միջնադարեան իրաւական մտքի պատմութեան լաւագոյն աղբիւրներից մէկը:

AN OVERVIEW OF SAINT NERSES SHNORHALI'S
GENERAL EPISTLE (*TOOGHT ENTHANRAGAM*)
(SUMMARY)

ARMAN MANUK MALOYAN
armanmaloyan1976@gmail.com

The General Epistle (Encyclical letter) of Catholicos Nerses IV Shnorhali (1166-1173) occupies a unique place among the monuments of Armenian canonical (ecclesiastical) law. Spiritual and political figure of the 12th century, great thinker, teacher, poet and musician, Nerses Shnorhali is a prominent representative of Armenian culture. Shnorhali is the founder of a number of new directions in medieval Armenian lyricism and prose (story in verse, historical-patriotic mournful chant, historical poem, panegyric in verse, message and wish, children's poem, pedagogical and educational poem, riddle). The literary heritage of Nerses Shnorhali (*sharakans, taghs, gandzs, meghedi*, liturgies, as well as chants) is one of the peaks of Armenian spiritual literature; its significance goes beyond the scope of national monody art. It is not a surprise that already during his lifetime Nerses Shnorhali was named the Sweet Singer (*Ergetsokh*).

The prayer "I confess with faith" has a special place among the poetic works of Nerses Shnorhali, yet the pinnacle of his poetic legacy is the poem "Jesus the Son."

The works of Nerses Shnorhali are also rich in deep philosophical judgments. The pinnacle of Shnorhali's prose is the work "Conciliar (General) Epistle," which is the first kontakion of the newly ordained Armenian Catholicos Nerses IV Pahlavuni (1166), which was addressed to the entire Armenian nation.

The "General Epistle" ("Encyclical letter") consists of two main sections: the first is addressed to the clergy, and the second to the secular class. In it, addressing representatives of all classes and estates of Armenian society, Shnorhali pinpoints unhealthy relationships, arrogance, sins and vices manifested in public life, and warns about their harmful consequences. At the same time, deeply concerned with the restoration of society, Shnorhali, a prominent theologian, philanthropist and national figure, gives recipes and ways to get rid of these evils. Shnorhali's exhortations are not abstract, they are not detached from life and reality, but are argued and supported by specific historical events, biblical references and everyday examples.

Thus, by establishing norms of behavior and lifestyle for representatives of different estates and classes of society, Shnorhali tried to improve the health of Armenian society through prohibitions and exhortations. These also had practical significance and application.

In accordance with this, the "General Epistle" is not only a valuable historical document and literary work, but also a moral work, a source of knowledge of law, which has not lost its relevance and value in our days.

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Սերոբ Աբրահամյան

serobabrahamian@gmail.com

Ծնած է Լոս Անճելըս, 1989ին: 2017ին աւարտած է մագիստրականը՝ Հայաստանի ամերիկեան համալսարանին քաղաքական գիտութիւններու եւ միջազգային յարաբերութիւններու բաժինէն: Եղած է Ամերիկահայ ազգային մարմնի (Armenian National Committee of America) արեւմտեան շրջանի պետական յարաբերութիւններու բաժնի տնօրէն: Կ'աշխատակցի *Armenian Weekly*ին, *Ասպարէզ*ին եւ *Հայրուկ* պարբերականին:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը միջազգային յարաբերութիւններն ու արտաքին քաղաքականութիւնն է:

Ռուպինա Ալահայտոյեան Արթինեան

roubina.alahaydoyan@gmail.com

Ծնած է Պէյրութ, 1943ին: 1966ին իբրեւ դաշնակահարուի վկայուած է Պէյրութի Պետական երաժշտանոցէն, իսկ 1967ին Ֆրանսայի Նիս քաղաքի Ամառնային միջազգային արատեմիայէն ստացած մասնագիտական վկայական՝ դաշնամուրի եւ սենեկային երաժշտութեան: 1982ին վկայուած է Հայկազեան համալսարանի հայագիտութեան եւ անգլերէն գրականութեան բաժնէն, իսկ 1997ին ստացած է մագիստրականը Պէյրութի Ամերիկեան համալսարանէն՝ անգլերէն լեզուի մանկավարժութեան մասնագիտութեամբ: 1975-90՝ դաշնամուր դասաւանդած է Թեքէլեան երաժշտանոցին մէջ, 1985-2005՝ անգլերէն լեզու եւ երաժշտութիւն՝ Պէյրութի Ամերիկեան համալսարանին, Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանին (1986-92, 1999) եւ Հայկազեան համալսարանի մէջ, ուր 1997-2017 վարած է ընդունման եւ արձանագրութեան գրասենեակի տնօրէնութիւնը: Ան հեղինակն է *Լիբանանահայ խմբերգային արուեստը 1920-2020* հատորին (2023):

Սուրէն Աւետիսեան

avetisyansuren40@gmail.com

Ծնած է 1981ին, Արագածոտնի մարզի Կարբի գիւղը: 2004ին աւարտած է Երեւանի Պետական համալսարանի, միջազգային յարաբերութիւններու ֆակուլտէտի մագիստրականը: 2007ին պաշտպանած է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի թեկնածուականը՝ «Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի գործունէութիւնը Հայաստանում 1918-1930» նիւթով: 2008էն ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի նորագոյն պատմութեան բաժնի աւագ գիտաշխատող է: 2008-16 դասախօս՝ ԵՊՀ միջազգային յարաբերութիւններու եւ դիւանագիտութեան ամբիոնի, 2012էն դասախօս՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կեդրոնի պատմութեան եւ միջազգային յարաբերութիւններու ամբիոնի: 2018էն ՀՀ կրթութեան տեսչական մարմնի հանրակրթութեան վարչութեան պետ: Հեղինակ է չորս մե-

նագրութիւններու, մէկ բուհական ուսումնամեթոդական ծրագրի եւ տասնեակ գիտական յօդուածներու:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը Հայաստանի նորագոյն պատմութիւնն ու միջազգային յարաբերութիւններն է:

Յասմիկ Գալստեան

hasmikgalstyan1979@gmail.com

Ծնած է 1979ին, ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գիւղը: 2021ին պաշտպանած է թեկնածուական՝ ԳԱԱ Մ. Աբեղեանի գրականութեան հիմնարկին մէջ՝ «Չար ոգիները հայ ժողովրդական զրոյցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառոյթների» նիւթով: Ներկայիս ԳԱԱ ՀԱԻի բանահիւսութեան տեքստաբանութեան բաժնի գիտաշխատող է, հեղինակ՝ գիտական յօդուածներու:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ բանագիտութիւնը, առասպելաբանութիւնը, մասնաւորապէս՝ հայ ստորին առասպելաբանութիւնը: 2022էն կ'աշխատակցի ՀՀԿին:

Սեդա Գալստեան

sedagalstyan@yahoo.com

Ծնած է Երեւան, 1957ին: 1980ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը: 1992էն ցայսօր Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի վարիչն է: Հրատարակութեան պատրաստած է Ա-Դոյի, *Հայութեան երկունքը* (2014) հատորը, համահեղինակն է (Սահակ Թորոսեանի հետ) *Հայաստանի առաջին հանրապետութեան Երեւանի նահանգապետը* մենագրութեան (2007) եւ *Կոչեմ ապրողաց* գիրքալսումին (2015), հեղինակն է *Սարդարապատի հերոսը, մահապարտների հոգին*, *Կարսի դաւաճանութեան զոհը* (2019), *Վերածնունւած Հայաստան՝ Տէր Զօրից Սարդարապատ* (2020) հատորներուն, ինչպէս նաեւ *Հայոց պետականութեան վերածննդի 100 էջերը* լուսանկարային-ալպոմ դասագիրքին (2018): 2022ին արժանացած է «Հայաստանի նոր եւ նորագոյն պատմութիւնը ճանաչելի դարձնելու» պատուոգրին:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի Ա. հանրապետութիւնը, Խորհրդային շրջանը:

Արմենակ Եղիայեան

armenag@gmail.com

Ծնած է 1939ին, Պուրծ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն ժոզէֆ համալսարանի ֆրանսական գրականութեան եւ լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ ատամնաբուժութեան բաժանմունքները: Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մեսրոպեան տառերու ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95):

Գիտական հետաքրքրություններուն ծիրը կ'ընդգրկէ հայոց լեզուի կառոյցն ու շարահիւսութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Յովհաննէս Խորիկեան

hovhkor78@mail.ru

Ծնած է 1978ին, Լենինական (ներկայիս՝ Գիւմրի): 2002ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժնի մագիստրականը: 2021էն կ'աշխատի դոկտորակա-նին վրայ: 2007էն կ'աշխատի «Շիրակի Մ. Նալբանդեանի անուան պետա-կան համալսարան» հիմնադրամի պատմութեան եւ իրաւագիտութեան ամբիոնը, իբրեւ դոցենտ: 2007-19՝ աշխատած է ՀՀ ԳԱԱ արեւելագիտու-թեան ինստիտուտին մէջ: Հեղինակ է գիտական բազմաթիւ յօդուածներու: Հրատարակած վերջին մենագրութիւնը կը կոչուի *Աքեմենեան Պարսկաս-տանի վարչական բաժանումը* (2021):

Գիտական հետաքրքրություններուն ծիրը կ'ընդգրկէ հին եւ վաղ միջնա-դարեան Հայաստանի, Իրանի, Այսրկովկասի, Առաջաւոր Ասիայի էթնիկ եւ քաղաքական պատմութիւնը, պատմական աշխարհագրութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արման Մալոյեան

armanmaloyan1976@gmail.com

Ծնած է 1976ին, Երեւան: 1996ին աւարտած է ԽԱՀՊՄՀի պատմութիւն եւ մանկավարժութիւն բաժինը: 2011ին պաշտպանած է թեկնածուական՝ «Ա-րեւմտեան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրութիւնը ԺԸ. դարի երկ-րորդ կէտին» նիւթով: 2007-19՝ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարա-րութեան մէջ հայագիտական եւ ընկերամշակութային դասանիւթերու բաժ-նի գլխաւոր մասնագէտ, 2014-19՝ պատասխանատու քարտուղար *Հայագի-տութիւնը դպրոցում* ամսագրին, 2021էն՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան «Կրթութեան զարգացման եւ նորարարութիւնների ազգային կենտրոն» հիմնադրամին վերապատրաստման ծրագրերու մշակման եւ վերապատ-րաստումներու արդիւնաւէտութեան գնահատման բաժնի պետ է: Հեղինակ է գիտական յօդուածներու, նուիրուած՝ ԺԸ.-ԺԹ. դարերու Արեւմտեան Հա-յաստանի վարչատարածքային բաժանումին, առեւտուրին, քաղաքական ի-րավիճակին, ԺԸ. դարու Պոլիսին, Ուրֆային, Էրզրումին, Կարսին, Տրա-պիզոնին, Մարտինին:

Գիտական հետաքրքրություններուն ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի ԺԸ.-ԺԹ. դարերու պատմութեան աղբիւրագիտութիւնը, պատմագրութիւնը, պատ-մութեան դասաւանդման խնդիրները, հայ մշակոյթի եւ դպրոցի պատ-մութիւնը, հայ գաղթավայրերու պատմութիւնը, Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը եւ տեղագրութիւնը: 2016էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Կարէն Մաթեոսեան

karenmatevosian@gmail.com

Ծնած է 1958ին, Երեւան: 1989ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «Անի քաղաքի գրչութեան կեդրոնը» նիւթով, 2008ին՝ դոկտորականը՝ «Սամուէլ Անեցու *Ժամանակագրութեան*

ձեռագիրերու աղբիւրագիտական քննութիւն» նիւթով: 2015ին՝ ստացած է պատմութեան փրոֆեսորի կոչում: 1980-2004՝ գիտաշխատող, 1995էն՝ գիտքարտուղար Հայաստանի Ազգային պատկերասրահին: 2005էն կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը, եղած է գիտաշխատող, բաժնի վարիչ, գիտական գծով փոխստորէն (2018-23): Այժմ Մատենադարանի «Արուեստի պատմութեան եւ գրչութեան կեդրոնների ուսումնասիրութեան բաժին»ի վարիչն է: 2019ին պարգևատրուած է Հայ Առաքելական եկեղեցիի «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանով: Հեղինակ է շուրջ հարիւր գիտական յօդուածներու, քսանեակ մը գրքերու, որոնց վերջինը՝ *Անին եւ անեցիները* (2021):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ միջնադարեան Հայաստանի պատմութիւնը, մատենագիտութիւնը, մշակոյթն ու արուեստը, Անիի պատմութիւնն ու մշակոյթն ու շարք մը վանքերու պատմութիւնը, ձեռագրերու գրչութեան արուեստը, յիշատակարանները, մանրանկարչութիւնը: 2004էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վարդան Մատթէնսեան

varny1@yahoo.com

Ծնած է 1964ին, Մոնթեվիտէ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը: Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն, որոնց վերջինն են *The Politics of Naming the Armenian Genocide: Language, History, and "Medz Yeghern,"* 2022ին, եւ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shamakha,"* 2022ին (Արժուի Բախչինեանի հետ): 2023ին արժանացաւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոս Արամ Ա. վեհափառի «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմէն Միքայէլեան

armen_michaelian@yahoo.com

Ծնած է 1960ին, Երեւան: 1982ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժանմունքը, 1982-91՝ աշխատած է Հայաստանի ԳԱ պատմութեան հիմնարկը, 1993ին աւարտած է Ֆրանսայի գործարարներու եւրոպական ուսումնավայրի դասընթացքը: Հրատարակած է գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ, հեղինակ է ապագայագիտական, գիտափիլիսոփայական եւ լեզուաբանական աշխատութիւններու: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անի Մխիթարեան**amkhitaryan89@gmail.com**

Ծնած է 1989ին, Թալինի Աշնակ գիւղը: 2013ին պաշտպանած է մագիստրականը՝ «Հայկական տարազը գեղանկարիչների գործերում» նիւթով: Ներկայիս կը պատրաստէ իր թեկնածուականը: 2014-17՝ աշխատած է Հայոց Ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանը, աշխատակցած է *Էջմիածին* ամսագիրին:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ միջնադարեան հայ արուեստը, հայկական ազգային տարազը, հայկական գորգագործութիւնը, հայկական զարդարուեստը, գործուածքը:

Կարէն Մկրտչեան**K86Mkrtchyan@gmail.com**

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-իրանական յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով: Ներկայիս ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի հայ գաղթածախներու եւ Սփիւռքի պատմութեան գիտաշխատող է: Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ համաշխարհային նոր համակարգը, ՀՀ-Իրանի ԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, դարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Յեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Ջաէն Մսրըլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ: Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի Հայ ասետ. գոլէճի տնօրէնը, իսկ այնուհետեւ՝ պատուակալ տնօրէն: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *For the Armenian Cause* (2023): 1971էն կ'աշխատակցի ՀՀԳին:

Անդրանիկ Շահինեան**shahinyanandr90@gmail.com**

Ծնած է 1990ին, Գիւմրի: 2013ին աւարտած է Գիւմրիի Մ. Նալբանդեանի անուան պետական մանկավարժական հիմնարկի պատմաբանասիրական ֆակուլտէտի մագիստրականը: Ներկայիս կ'աշխատի իր թեկնածուականին վրայ: 2017էն կը դասախօսէ Երեւանի Հայքուսակ համալսարանի Շիրակացի մասնաճիւղին, միաժամանակ՝ Շիրակի Մ. Նալբանդեանի անուան պետական համալսարանի հիմնադրամի, հասարակական գիտութիւնների ֆակուլտէտի «Հոգեբանութեան եւ սոցիոլոգիայի» ամբիոնին: 2017-19՝ եղած է Հայքուսակ համալսարանի Շիրակացի մասնաճիւղին իրաւաբանական ֆակուլտէտի վարիչը: 2019էն անդամ է Հայկական սոցիոլոգիական ընկերակցութեան, 2020էն՝ Հայաստանի սոցիալական աշխատողներու ընկերակցութեան, 2023էն՝ Հոգեկան առողջութեան հայկական ըն-

կերակցութեան: 2021էն ընկերաբան-փորձագէտ է Անտրէյ Սախարովի անուան Մարդու իրաւունքներու պաշտպանութեան հայկական կեդրոնին: Հեղինակ է բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններու: Ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Աշխատանքային միգրացիան որպէս երիտասարդների հասունութեան եւ կարգավիճակի փոփոխութեան նախաձեռնութիւն. սոցիոլոգիական ուսումնասիրութիւն, Գիտամեթոդական ձեռնարկ* (2023):

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ մարդաբանութիւնը, ընդհանուր ընկերաբանական տեսութիւնները, պանդխտութեան, կրթութեան, մշակոյթի, ձեռներէցութեան ընկերաբանութիւնը, ընկերային վերահսկողութեան եւ շեղող վարքի ընկերաբանութիւնը, ընկերային աշխատանքը:

Յակոբ Չոլաքեան

hagopcholakian@hotmail.com

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին պաշտպանած է դոկտորականը՝ «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» նիւթով: 2014էն ՀՀ ԳԱԱ ՀԱԻի գլխաւոր գիտաշխատող է: Տասնամեակներ աշխատած է իբրեւ հայերէնի ուսուցիչ եւ դասախօս: Հեղինակ է հայերէնի դասագիրքերու, գիտական յօդուածներու եւ ազգագրական, բանագիտական, պատմագիտական եւ լեզուաբանական հատորներու, որոնց վերջինը՝ *Պատմական Անպիտքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականութիւնները* (2023):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ Անտիոքի շրջանի հայոց պատմութիւնը, ազգագրութիւնը, բանահիւսութիւնը, բարբառը, արեւմտահայերէնը, Սփիւռքի կրթական վիճակը: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վարուժան Պօղոսեան

varuzhan.poghosyan@bk.ru

Ծնած է 1955ին, Երեւան: 2009ին պաշտպանած է դոկտորական՝ «Հայոց Յեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան եւ հասարակական մտքի գնահատմամբ (1895-1918թթ.)» նիւթով: Հեղինակ է հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն մենագրութիւններու եւ յօդուածներու: Հրատարակած է նաեւ հայ մեծանուն պատմաբաններ՝ Աշոտ Յովհաննիսեանի եւ Աբգար Յովհաննիսեանի անտիպ գիրքերը: 2001էն առաջատար գիտաշխատող է ԵՊՀ հայագիտական հետազոտութիւններու հիմնարկին մէջ: 2014-22՝ եղած է ԵՊՀ Հայագիտութեան հարցեր հանդէսի պատասխանատու քարտուղարը:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ ԺԸ. դարու ֆրանսական յեղափոխութիւնը, հայ-ֆրանսական յարաբերութիւնները, Հայոց Յեղասպանութիւնը, ինչպէս նաեւ խորհրդային եւ ժամանակակից ռուսական պատմագրութիւնը: 2007էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Կարինէ Ռաֆայէլեան**karine.rafaelyan@mail.ru**

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական մանկավարժական հիմնարկի (այժմ համալսարան) հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: 1994էն Գրականութեան եւ արուեստի թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ գրականագիտութիւնը, թանգարանագիտութիւնը, մշակութաբանութիւնը: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Անդրանիկ Տազէտեան**adakessian@haigazian.edu.lb**

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ “Democracy and Integration in Multicomunal Polities: The Armenians and the Kurds in Lebanon” նիւթով: 1993-2017՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէսին*: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Ցեղասպանագիտական հանդէս* (2018), *Բանբեր Հայաստանի արխիւների* (2023) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Այդ հանգամանքով կազմակերպած է ամէնամեայ գիտաժողովներ: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Հայերը Ծոցի արաբական երկիրներուն մէջ գիտաժողովի նիւթեր* (2024), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Կրեկոր Փելչինսքի**grzegorz.pelczynski@uwr.edu.pl**

Ծնած է 1962ին, Փոզնան, Լեհաստան: Աւարտած է Փոզնանի համալսարանին ցեղագիտութեան բաժինը: Դասախօս է Վրոցլաւի համալսարանի ցեղագիտութեան եւ մշակութային մարդաբանութեան բաժնին: Հեղինակած վերջին գիրքն է *Mniejsze mniejszości i inne szkice* (փոքրաթիւ փոքրամասնութիւններ եւ այլ նիւթեր):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ ազգային փոքրամասնութիւնները, մանաւանդ հայերն ու քարէմները, նաեւ՝ գրականութեան եւ շարժանկարի մշակութային երեսակները:

Աշխատակիցներու Ուշադրութեան

Հայկազեան հայագիտական հանդէս (ՀՀՀ) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն ի վեր, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ: 2022էն սկսեալ ան լոյս կ'ընծայուի վեցամսեայ դրութեամբ:

ՀՀՀն կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան ազգագրական, աշխարհագրական, բանասիրական, գրական, իմաստասիրական, իրաւագիտական, լեզուագիտական, կրօնական, հնագիտական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), պատմական, տնտեսագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

ՀՀՀն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազոտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու ՀՀՀի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւ:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 10,000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 5000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 4000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ հետեւեալ կառոյցը-մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով շաղկապուած), եզրակացութիւն:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթի:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն* եւ *հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթի:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն* եւ *հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթի:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցագրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները, հարցագրոյցին վայրն ու թուականը:

Կայքէջի պարագային՝ լրի հասցեն եւ մատչումի թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն ամփոփում մը, շուրջ 250 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուական-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը, նկար մը եւ ելեկտրոնային հասցեն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լատրակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակներուն տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀի խմբագրութեան յղել հատորէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքերուն վրայ.-

<http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx> .

<http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html> .

<https://www.flib.sci.am/> .

Notes to Contributors

Haigazian Armenological Review (HAR) has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University. Since 2022 it is being published twice a year.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with archaeology, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, ethnography, geography, history, linguistics, literature, philology, philosophy, politics, religion, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *HAR* should preferably be not more than 10,000 words (including the footnotes), for investigative articles and briefings not more than 4000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Footnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a 250 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and

publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the *HAR*'s style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *HAR* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *HAR*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:

<http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx> .

<http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html> .

<https://www.flib.sci.am/> .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ/TABLE OF CONTENTS

Խմբագրական	Արխիվը՝ հայագիտության առատ հումք	5-6
Editorial	The Archive: A vast Source For Armenian Studies	7-8

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ARTICLES

Արուեստ եւ Արհեստ Arts and Crafts

Կարինէ Ռաֆայէլեան	Դերենիկ Դեմիրճեանի երգիծանկարները	9
Karine Rafayelyan	The Caricatures of Derenik Demirchian	

Գրականութիւն Literature

Grzegorz Pelczyński	Armenians in Józef Łobodowski's <i>The Ukrainian Trilogy</i>	27
Կրեկոր Փելչինսքի	Հայերը՝ Եղէֆ Լոպոտովսքիի <i>Ուքրանական եռագրութեան (the Ukrainian trilogy)</i> մէջ	

Ընկերաբանութիւն Sociology

Անդրանիկ Շահինեան	ՀՀ երիտասարդների աշխատանքային գաղթ. փորձագիտական ընկերաբանական ուսումնասիրութիւն	41
Andranik Shahinyan	The Issue of Youth Labor Migration (Experimental Sociological Research)	

Լեզու Linguistics

Արմենակ Եղիայեան	Հայերէնի փոխառութիւնները թրքերէնէն	57
Armenag Yeghiayan	Armenian Lexical Borrowings from Turkish	
Արմէն Միքայէլեան	Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները. Մասն Թ. – Ճապոներէն	85
Armen Michaelian	The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part IX – Japanese Language	

Յակոբ Չոլաքեան	Քեսապի ուտելի հատապտղային վայրի բոյսերը	107
Hagop Cholakian	The Wild Fruit Trees of Kesab	

Պատմություն-Հնագիտություն History-Archeology

Zaven Messerlian	The Armenian Participation in the Lebanese Legislative Elections of 2022 During the Presidency of Michel Aoun (2016-2022) (Part II)	121
Ջալեն Մսրրլեան	Հայոց մասնակցությունը Լիբանանի նախագահ Միշել Աունի (2016-22) նախագահության շրջանի 2022ի խորհրդարանական ընտրություններուն (Բ. մաս)	
Կարէն Մկրտչեան	Իրանահայության տեղաշարժերը եւ դրանց առանձնայատկությունները 21րդ դարի սկզբին	159
Karen Mkrtchyan	The Movements of Iranian Armenians and Their Characteristics at the Beginning of the 21 st Century	
Սուրէն Աւետիսեան Suren Avetisyan	Ամերկոմի եւ ՀԽՍՀ իշխանությունների փոխյարաբերությունները 1920ականների Relations Between the Authorities of the Armenian Soviet Socialist Republic and the American Committee for Relief in the Near East (ACRNE) in the 1920s	183
Կարէն Մաթեոսեան Karen Matevosyan	Աղբերց վանք-Գլաձորի մասին պատմական եւ տեղագրական վկայությունների քննություն Examination of Historical and Topographical Evidence about Aghberts Vank-Gladzor	193

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ INVESTIGATIVE ARTICLES

Serob Abrahamian	Street Names in Yerevan and Their Effect on National Identity	213
Սերոբ Աբրահամեան	Փողոցի անունները Երեւանի մէջ եւ անոնց ազդեցությունը ազգային ինքնութեան վրայ	
Անդրանիկ Տազէսեան	Երեք դիտարկում ԺԸ. դարակէսի, Վանի եւ Երուսաղէմի հայկական պղնձագործութեան մասին	231
Antranik Dakessian	Three Observations on Mid-18 th Century, Van, and Jerusalem Armenian Coppersmiths	
Յովհաննէս Խորիկեան Hovhannes Khorikyan	Վարդան Մամիկոնեանի 'կարմիր' մականուան շուրջ On Vardan Mamikonyan's Nickname 'Red'	241

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ UNPUBLISHED DOCUMENTS

Անդրանիկ Տազէսեան	Ազգագրական-ժողովրդական երկու նշխար երգ՝ Այնճարէն եւ 1940ականներու Պէյրութէն ու միքանի այլ յանգաւոր գրութիւններ/երգեր	259
Antranik Dakessian	Two Ethnographic-Folk Songs From Anjar and Beirut of the 1940s, and a Few Other Rhymed Writings/Songs	
Վարդան Մատթէոսեան Vartan Matiossian	Վազգէն Շուշանեանի նամակները Սիմոն Վրացեանին (1927-31) Vazken Shushanian's Letters to Simon Vratsian (1927-31)	275
Սեդա Գալստեան Seda Galstyan	Նոր մանրամասներ Անդրկովկասից հայերի 1949ի աքսորի մասին New Details on the Exile of Armenians from Transcaucasia in 1949	313
Varoujean Poghosyan Վարուժան Պօղոսեան	Les Massacres Arméniens de 1919 1919ի հայկական կոտորածները	325

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ INVESTIGATIVE ARTICLES

Ռուպինա Արթինեան Roubina Artinian	Մինաս Թեքէլեան եւ Պէյրութի մէջ 1972ին իր հիմնած Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցը Minas Tekelian and the Tekelian Preparatory Music School He Founded in Beirut in 1972	339
Յասմիկ Գալստեան Hasmik Galstyan	Գարեգին Սրուանձտեանցը որպէս ստորին առասպելաբանական կերպարների մասին գրոյցների առաջին գրառող ու մեկնաբան Bishop Karekin Srvantsdians as the First Writer and Commentator of Stories About Mythical Characters of the Lower World	361
Անի Մխիթարեան Ani Mkhitaryan	Հայոց Ազգագրութեան թանգարանի աղօթագորգերի հաւաքածուն The Prayer Rugs of the National Museum of Armenian Ethnography	369

Արման Մալոյեան	Սուրբ Ներսէս Շնորհալու <i>Թողթ ընդհանրական</i> երկը	389
Arman Manuk Maloyan	An Overview of Saint Nerses Shnorhali's General Epistle (<i>Tooght Enthanragan</i>)	
Համառօտ կենսագրութիւն հատորին աշխատակիցներուն		407
Աշխատակիցներու ուշադրութեան		415
Բովանդակութիւն		419

Հայկազեան հայագիտական հանդես, հար. 44/1. տպաքանակ՝ 125
Գին՝ Լիբանան 250,000L. ոսկի, արտասահման 30 տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
Haigazian Armenological Review, Vol. 44/1
P.O.Box 11-1748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@haigazian.edu.lb